ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ: ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ



9(53)
Ա-11
5843

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԾՎԻ ԹԱԽՉԻՆՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ: ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

阿尔茨维巴赫齐尼扬

亚美尼亚人在中国

亚美尼亚与中国的历史和文化关系

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
169

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
169

埃里温，2017

ԵՐԵՎԱՆ - 2017

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Բ 216

Գրքի հրատարակությունը մասամբ հովանավորել է «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական հիմնադրամը

Փյունիկ մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական հիմնադրամ

Տպագրության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայկական գաղթօջախների և սփյուռքի բաժինը

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Ստեփանյան
Գրախոս՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հովհաննես Ալեքսանյան

Քախչինյան Արծվի

Բ 216 Հայերը Չինաստանում: Հայ-չինական պատմամշակութային առնչությունները: Ամփոփումը՝ չինարեն/ Ա. Քախչինյան. - Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2017. - 358 էջ:

Աշխատությունը ներկայացնում է հայերի և չինացիների միջև եղած բազմադարյան կապերը, Չինաստանում հայության ներկայության պատմությունը: Հատուկ ուշադրություն է դարձված Չինաստանի հայկական համայնքների գործունեությանը XX-րդ դարում:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, բանասերների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-860-57-2 ©ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2017

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հարուստ ու ինքնատիպ քաղաքակրթություն ստեղծած և մեր ժամանակներում առաջնակարգ աշխարհաքաղաքական ու տնտեսական դիրք գրավող չին ազգը Հայաստանից աշխարհագրականորեն և մշակութապես հեռավոր այն ժողովուրդն է, որի հետ, սակայն, հայությունն ունեցել է ամենատարբեր պատմամշակութային հարաբերություններ՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Չինաստանը Հեռավոր Արևելքի մի քանի այլ երկրների հետ մեկտեղ եղել և մնում է Հայ Սփյուռքի ամենից ավելի տարաշխարհիկ երկրներից:

Հայության թիվը Չինաստանում երբեք չի եղել ստվար, ուստիև սույն ուսումնասիրությամբ չպետք է ակնկալել հայ ավանդական մի գաղթավայրի պատմություն, սակայն ներկա աշխատության մեջ փորձ է արված պատմաբանասիրական նյութի հիման վրա ցույց տալ Չինաստանում հայկական ներկայության և հայ համայնքների հնարավորինս ամբողջական պատկերը՝ անդրադառնալով նաև հայ-չինական պատմամշակութային աղերսներին: Սույն իրողության վերհանումը կարևոր է երկու ժողովուրդներով հետաքրքրվող պատմաբանների, բանասերների, արվեստաբանների համար: Այդ կապերի պատմությունն իր մեջ ներառում է նաև այլ միջմշակութային իրողություններ (հայ-մոնղոլական, հայ-միջինասիական, հայ-հնդկական, հայ-ռուսական և այլն):

Թեև քիչ չեն եղել հայ-չինական պատմական կապերն ուսումնասիրողները, սույն հետազոտությամբ, պատմագրությանը վաղուց ի վեր հայտնի փաստերին զուգահեռ, ձգտել ենք աղբյուրների առատ գործածությամբ շրջանառել բազմաթիվ նորահայտ մանրամասներ, հատկապես օգտագործելով այլալեզու աղբյուրներ, ժամանակի մամուլի վկայություններ և արխիվային նյութեր:

Հարկ է նկատել, որ բուն չինական աղբյուրները տվյալ թեմային առատ նյութ չեն տրամադրում, ինչը չի կարելի ասել եվրոպալեզու գրականության մասին, որն էլ լայնորեն կիրառել ենք (կարելիս չափ հղել ենք նաև չինարեն սկզբնաղբյուրներ, որոնք հղելիս դիմել

ենք մեր չինարենագետ բարեկամների օգնությանը): Թեմային առնչվող թեկուզ երկրորդական կարգի, սակայն միանգամայն ուշագրավ տվյալներ գտնվել են հաճախ ամենից անսպասելի աղբյուրներից:

Բացի արխիվային և տպագիր նյութերից՝ տվյալներ ենք քաղել նաև բանավոր պատմությունից. մեզ հաջողվել է կապեր հաստատել Չինաստանում ծնված և բնակված մի քանի հայերի հետ, որոնք մեզ որոշ տեղեկություններ են հաղորդել այնտեղի հայ բնակիչների վերաբերյալ: Թեև այդ տեղեկությունները թռուցիկ էին, սակայն ցանկանում ենք առաջին իսկ էջով շնորհակալության խոսք ուղղել նրանց՝ Չինաստանում ծնված հայուհիներ Լուսիկ Մաքսուդյանին (1932–2011, Հայաստան), Սուսաննա Մանկալովային (Հայաստան), 1918–1932 թթ. Չինաստանի հայերի հոգևոր հովիվ Եղիշե քահանա Ռոստոմյանի թոռնուհուն՝ Մարգարիտա Նշանյանին (ԱՄՆ) և Վիրջինիա Մլտիկյանին (Մելթիքյան, ԱՄՆ, որը մեզ ուղարկել է նաև լուսանկարներ չինահայության անցյալից), Երվանդ Մարգարյանին (ԱՄՆ), որը, տեղեկացնելով մեր աշխատանքի մասին, սիրահոժար մեզ ուղարկեց իր «Կավկազ» անգլերեն ինքնակենսագրական գիրքը: Տվյալներ տրամադրելու և չինարենի հետ կապված խնդիրներում օգնելու համար շնորհակալ ենք նաև մեր լավ բարեկամներին՝ չինական փայլուն կրթություն ստացած և բազմաթիվ չինական հեռուստաֆիլմերում նկարահանված Լիանա Եղիազարյանին՝ իր տրամադրած տվյալների և Շանհայում բնակվող կինոռեժիսոր ու հայ-չինական հին կապերի ուսումնասիրող Ռուբեն Գինիին, որ սիրահոժար մեզ տրամադրեց լուսանկարներ և կարդալով ձեռագիրը՝ հաճես եկավ արժեքավոր առաջարկներով և դիտողություններով:

Շնորհակալ եմ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայկական գաղթօջախների և սփյուռքի բաժնի իմ գործընկերներին և Երևանի Կոնֆուցիուսի կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Գոռ Սարգսյանին՝ աշխատության ձեռագիրը կարդալու և իրենց կատարած արժեքավոր դիտողությունների ու առաջարկների համար:

ՆԱԽԱԲԱՆ

Աշխարհում մեկ միլիարդից ավելի մարդ իրեն անվանում է հան[1], այսինքն՝ չինացի: Տաս միլիոն չի հասնում այն մարդկանց թիվը, որ իրենց անվանում են հայ: Եվ այս երկու հնամենի ժողովուրդները՝ հանները և հայերը, որ միմյանց ճանաչել են դեռևս հազարամյակներ առաջ, շարունակում են ճանաչել մեր օրերում էլ...

Դեռևս 1968 թ. չինահայերին նվիրված մի լրագրային հոդվածում ափսոսանք է հայտնվել, որ Չինաստանի հայերի պատմության վերաբերող մենագրություններ չեն գրել ո՛չ հայերը, ո՛չ օտարազգիները[2]: Պատմաբան Լևոն Խաչիկյանը 1984 թ. հրատարակած իր մի գրքում նշել է. «*Չին ժողովրդի հետ հայերի ունեցած պատմական շփումների և առնչությունների հարցն առ այսօր քննության առարկա չի դարձել*»[3]: Եվ իսկապես, չնայած հայ-չինական կապերին, մասնավորապես Չինաստանում գոյատևած հայ գաղթօջախի վերաբերյալ առաջին աղբրադարձը լույս է տեսել դեռևս 1900 թվականին[4], բուն նյութը և հարակից թեմաները պատմագիտական աշխատություններում և հոդվածներում սկսել են հանդես գալ 1980-ականներից (Ռոբերտ Պետրոսյան[5], Պարգև Մարտիրոսյան[6], Լևոն Խաչիկյան[7], Ռաֆիկ Աբրա-

[1] Հանները չինական ամենամեծ էթնիկ խումբն են, որոնք իրենց անվանում են «Հան հարստության մարդիկ» կամ Հաներեն՝ պնդելով իրենց ազգակցությունը մեկ ընդհանուր նախահայր Դեղին կայսր Հուանգդիից (**Olson James S.**, An Ethnohistorical Dictionary of China, London, 1998, p. 94):

[2] Տե՛ս **Վերծանող**, Չինահայերը, «Մասիս», Պէյրութ, 11, 02.1968:

[3] Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցու Հաշվեմատյանը, աշխատասիրությամբ **Լ. Ս. Խաչիկյանի** և **Հ. Գ. Փափազյանի**, Երևան, 1984, էջ 25:

[4] Տե՛ս **Սիհրան**, Չինացիք եւ հայերը, «Նոր-Դար», Թիֆլիս, 9, 14.12.1900: Գրության շարժառիթը եղել է այդ թվականին Չինաստանում ծայր առած հասարակական-քաղաքական շարժումները («*Վերջին ժամանակներս քաղաքակիրթ ազգերի ուշադրությունը դարձած է Չինաստանի վրայ: Ամենքը հետաքրքրւում են չինական շարժումով, որի առիթներն ու ընթացքը շատ հետաքրքրական և ուսանելի կողմեր ունին*»), ինչպես նաև եվրոպացի հետազոտողների և հնագետների վերջին հայտնագործությունները:

[5] Տե՛ս **Bedrosian Robert**, China and the Chinese according to 5–13th Century Classical Armenian Sources, "Armenian Review," 1981, Vol. 34, No.1-133, էջ 17-24:

[6] Տե՛ս **Մարտիրոսյան Պ.**, Հայերը Չինաստանում, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Երևան, 1983, էջ 46-47: Նույնի, Չինաստան, «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 438-439:

[7] Տե՛ս Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցու Հաշվեմատյանը..., էջ 25-31:

համյան[8], Վահան Քայբուրդյան[9], Նիլ Ագոպոֆ[10], Լ. Տեր-Մկրտչյան[11], Գեղամ Գևոնյան և Միշել Աղասյան[12], Քաբկեն Հարությունյան[13], Նուբար Չալղմյան[14], Մաքսիմ Եվադյան[15]): Թեման արտացոլվել է նաև հայ ժողովրդի ընդհանուր պատմությանը[16] և հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում (ի. Ղևոնդ Ալի-

[8] Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Հնդկաստանի գաղթօջախները, «Հայ ժողովրդի պատմություն», հտ. 4, Երևան, 1972, էջ 344-347: **Նույնի**, Չինաստան, «Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.)», հ. 2, Երևան, 2003, էջ 423-438:

[9] Տե՛ս **Քայբուրդյան Վ.**, Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996, էջ 227-229: **Baibourtian Vahan**, International Trade and Armenian Merchants in the Seventeenth Century. New Delhi: Sterling, 2004.

[10] **Agopoff Nil V.**, Les relations arméno-chinoises, www.crda-france.org/fr/6histoire-/par_pays/chine.htm (այցելությունը կայքէջ՝ 20.11.2004):

[11] Տե՛ս **Тер-Мкртичян Л. Х.**, Армяне в Китае, "XI научная конференция «Общество и государство в Китае». Тезисы и доклады. ч. II., Москва, 1980. **Ter-Mkrtchyan L.**, Armenians in China (From Ancient Times to Recent History), The International Association for the Study of the Cultures of Central Asia: Information Bulletin, Vol. 4, "Nauka," 1983, pp. 24-31.

[12] Տե՛ս **Kévonian Kéram**, Un Itinéraire Arménienne de la Mer de Chine, in: Guillot Claude, ed. «Histoire de Barus Sumatra: le site de Lobu Tua: études et documents», Paris, 1998, էջ 35-118 : **Kévonian Kéram, Aghassian Michel**, Armenian Trade in the Indian - Ocean in the Seventeenth and Eighteenth Centuries, in: Lombard Denys, Aubin Jean, "Asian Merchants and Businessmen in the Indian Ocean and the China Sea," Oxford, 2000, էջ 154-177: **Kévonian Kéram, Aghassian Michel**, The Armenian Merchant Network: Overall - Autonomy and Local Integration, in: Chaudhury Sushil, Morineau Michel, eds. "Merchants, Companies and Trade: Europe and Asia in the Early Modern Era," Cambridge, 2007, էջ 74-94: **Chaudhuri Sushil, Kévonian Kéram,** Les arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne, Paris, 2007.

[13] Տե՛ս **Арутюнян Б. А.**, Из истории армяно-китайских отношений, в сб.: «Армения-Китай. Очерки исторических, деловых и культурных взаимоотношений», Ереван, 2010, էջ 7-24:

[14] Տե՛ս **Чалымян Н. Т.**, Постсоветские армяно-китайские отношения. В сб.: «Армения-Китай. Очерки....», էջ 25-41: **Չալղմյան Ն.**, Հայ-չինական հարաբերությունները 1-992–2007 թթ., «Բանբեր Երևանի համալսարանի», Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, թ. 130.6, 2010, էջ 25-35:

[15] Տե՛ս **Yevadian Maxime**, Le Catholicos arménien Sahak III Dzoroporetsi et l'Église de Chine, «L'apôtre Thomas et le christianisme en Asie», Recherches historiques et actualité, 2013, էջ 123-166 :

[16] Տե՛ս, օրինակ, **Hovannisian Richard G.**, The Armenian People from Ancient to Modern Times: Foreign dominion to statehood, vol. 2, 1997, էջ 430: **Ռուբինեան Զ.**, Հայ ժողովրդի համառոտ պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2012, էջ 343:

շան, Հրաչյա Ամառյան, Արշակ Ալպոյաճյան, Աշոտ Աբրահամյան, Համայակ Մարտիրոսյան, Հովհաննես Ալեքսանյան[17]), ինչպես նաև գիտահանրաճանաչողական[18] ու լրագրական[19] բնույթի և ուղեգրական[20] գրականության մեջ[21]: Չինահայության պատմությամբ զբաղվողների շարքում հատուկ պետք է նշել Ռաֆիկ Աբրահամյանի (1929–1998) ուսումնասիրությունը, որն ամենից ամբողջականն է և ժամանակային ամենամեծ ընդգրկում ունեցողը: Այնպես որ մասամբ է իրավացի պատմաբան Արա Սահճյանը՝ գրելով, որ չինաբնակ հայերի սահմանափակ թիվը և աշխարհի ամենից բնակեցված երկրում հայերի՝ երկարատև և ուժեղ պատմություն չունենալը չի գրավել սփյուռքահայ համայնքների պատմաբանների ուշադրությունը[22]:

Հիշենք նաև, որ Աֆրիկայի և Հեռավոր Արևելքի հայօջախներում շրջագայած Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը (1914–1963) ծրագրել է երեք ստվար հատորներով հրատարակել դրանց պատմությունը

[17] Տե՛ս **Ալիշան Հ. Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 468-470, 530-531: **Աճառյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 322-325: **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ գաղթականութեան. հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, հատոր Բ, Գահիրէ, 1955, էջ 320-326: **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Բ, Երևան, 1967, էջ 326-333: **Мартиросян А.**, Армянские источники о Китае и Индии, «На Великом шелковом пути», Ереван, 1998, стр. 51-58. **Նույնի**, Мировые пути через Армению и Переднюю Азию по карте Пейтингера, Ереван, 2003. **Ալեքսանյան Հ.**, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում, Երևան, 2014, էջ 70-71:

[18] Տե՛ս **Դադոյան Խ.**, Ակնարկներ հայ վաճառականության պատմության, Երևան, 2009, էջ 5-12:

[19] Տե՛ս, օրինակ, **Սվաճեան Ա. Յ.**, Ճենը եւ Հայաստան, «Ապագայ», 9,16.04.1927: **Դադոյան Խ.**, Հայոց առևտրատնտեսական ներկայությունն աշխարհում. Չինաստան, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2381 (այցելությունը կայքէջ՝ 22.03.2007):

[20] Այս առումով հատկանշական է՝ **Թորանեան Թ.**, Ուղեւորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, Հալէպ, 2004:

[21] Հայ-չինական պատմական կապերին չգիտես ինչու անդրադարձել է նաև երաժշտագետ Ցիցիլիա Բրուտյանը՝ սփյուռքահայ երաժշտական մշակույթին նվիրված իր «Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիւռ ընձիւղները» հատորում (Երևան, 1996, էջ 421-423)՝ չնչելով, սակայն, որևէ երաժշտի անուն, այն դեպքում, երբ առնվազն չորս երգչուհի է եղել չինաբնակ հայերի մեջ (Արծվիկ Ռոստոմյան, Կարինե Պասկյան, Սոֆյա Զայցևա և Ալիս Հյուսիսյան):

[22] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place: Stories from the Armenian Social Club in Old Shanghai, Seattle, 2012, first page without number.

(առաջին երկուսը վերաբերելու էին Հեռավոր Արևելքին, երրորդը՝ Աֆրիկային): Երեք հատորը միասին կազմելու էին 2500-3000 էջ՝ պարունակելով մոտ հազար լուսանկար: Դերենիկ եպիսկոպոսը, որը մեծ զոհողությունների, արկածների, առողջությունը վտանգելու գնով կատարել է իր ուղևորությունները, նշել է, որ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ գրեթե ամբողջովին ոչնչացվել են Ռանգունի, Սինգապուրի, Ջակարտայի, Հոնկոնգի հայկական արխիվները[23], ինչը ավելի է մեծացնում իր գրառումների շահեկանությունը: Սակայն Դերենիկ եպիսկոպոսի աշխատությունը մնացել է անտիպ. մեզ անհայտ է նրա գտնվելու վայրը:

Հեռավոր Արևելքի հայերին նվիրված իրենց աշխատություններում չինաբնակ հնդկահայերին որոշ չափով անդրադարձել են հայագրի հետևյալները՝ Նադյա Բայքը[24] (Ավստրալիա) և Լիզ Չաթըրը[25] (Մեծ Բրիտանիա), որը մասնավորապես զբաղվել է իր նշանավոր ազգականի՝ սըր Փոլ Չաթըրի կյանքի և գործունեության ուսումնասիրությամբ:

Հոնկոնգում բնակված պատմաբան դոկտոր Լինդսեյ Բայդը դեռ 1950-ական թվականներին ծրագրել է աշխատություն գրել Չինաստանի հայերի մասին, ինչը, ամենայն հավանականությամբ, չի իրականացել[26]: Չինաստանի հայոց անցյալով հետաքրքրվել է նաև երկար տարիներ Պեկինում բնակված պրոֆեսոր Հենրի Վիչը[27]: Չինահայ առևտրականների գործունեությունը մշտապես հիշվել է ուշ միջնա-

[23] Տե՛ս Պատմութիւն Ծայրագոյն Արեւելքի եւ Ափրիկէի հայոց, «Լրաբեր», Նիւ Եօրք, 4.06.1959:

[24] Տե՛ս **Wright N. H.**, Respected Citizens: The History of Armenians in Singapore and Malaysia, Melbourn, 2003.

[25] Նրա հոդվածներից տես՝ **Չաթըր Լ.**, Խաչիկ Պողոս Աստվածատուրյան. ո՞վ էր այս մարդը. բոկոտն հնդկահայ որբը, «Հնդկահայք», աշխատասիրությամբ Ն. Դուրգարյանի, Կալկաթա, 2010, էջ 121-125 (նույնը անգլերեն՝ էջ 122-126): **Chater Liz**, Armenian Graves, Inscriptions and Memorials in India, Dacca, 2011. **Նույնի**, Marble Hall Hong Kong - A Pictorial Review And Other Residences Associated With Sir Catchick Paul Chater, 2012, և այլն:

[26] Տե՛ս **Դերենիկ եպիսկոպոս**, Հայեր Ծայրագոյն Արեւելքի մէջ, «Արեւ», Գահիրէ, 12.08.1958:

[27] Նույն տեղում:

դարի հայ առևտրական գործունեությանը նվիրված տարբեր հետազոտություններում[28]:

Սույն թեմայի այլևայլ երեսակների հետազոտմամբ զբաղվել են նաև օտարազգի գիտնականներ, մասնավորապես ֆրանսիացի Ժան Դովիլյեն[29], Մակաոյի առևտրի պատմության հետազոտողներ, Հոնկոնգում բնակված վերապատվելի Կարլ Թ. Սմիթը[30] (մահացել է 2008-ին) և Գուանճոուի[31] համալսարանի ուսուցչապետ Պաուլ Ա. վան Դայքը: Ի դեպ, վերջին երկուսի ջանքերով 2003 թ. հոկտեմբերի 3-ին Հոնկոնգի համալսարանում տեղի է ունեցել «Չին-հնդկական փոխհարաբերությունները 18-19-րդ դարերում. փարսերը, հայերը և մահմեդականները Մակաոյում, Գուանճոուում և Հոնկոնգում» գիտաժողովը:

[28] Տե՛ս **Morse Hosea B.**, The Chronicles of the East India Company Trading to China 1635–1834 (Oxford, 1926–1929), vol. 2, pp. 84–85; vol. 3, էջ 103, 106, 225: **Aslanian Sebouh**, Trade Diaspora versus Colonial State: Armenian Merchants, the English East India Company, and the High Court of Admiralty in London, 1748-1752, "Diaspora: A Journal of Transnational Studies," Spring 2004, vol. 13, issue 1, էջ 37-100: **Aslanian Sebouh David**, From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, University of California Press, 2011, էջ 52-54, 57-58:

[29] Տե՛ս **Dauvillier Jean**, Les arméniens en Chine et en Asie Centrale au Moyen Age. Mélanges de sinologie offerts à M. Paul Demieville, II, Paris, 1974.

[30] Տե՛ս **Smith Carl T.**, Armenian Strands in the Tangled Web of the Opium Trade at Macau and Canton. Unpublished paper presented at the Hong Kong Historical Museum Conference, December 18-20, 1998. An Eighteenth-Century Macao Armenian Merchant Prince, "Review of Culture," s. 3, no. 6 (2003), էջ 120-129: Armenian Footprints in Macau (co-author: **Paul A. Van Dyke**), "Review of Culture," no. 8, October, 2003, էջ 20-39 (հոդվածի չինարեն բարգմանությունը՝ "Zhuixun Aomen Yameiniya Shangren de Zuji," լույս է տեսել «Review of Culture»-ի չինարեն տարբերակում, թ. 55, ամառ, 2005, էջ 87-103): Four Armenian Families, "Review of Culture," s. 3, no. 8 (2003), էջ 40-50 (co-author: **Paul A. Van Dyke**): Վերջինիս չինարեն բարգմանությունը ("Si ge Yameiniya Jiating") նույնպես լույս է տեսել "Review of Culture"-ի չինարեն հրատարակության մեջ (թ. 56, աշուն, 2005, էջ 43-52):

[31] Նշենք, որ չինարեն հատուկ անունները տալիս ենք բուն չինական արտասանությամբ, որը շատ ավելի մոտ է հայերենի հնչյունային համակարգին՝ իր Ծ և Ճ հնչյուններով, ոչ թե մեր մեջ արմատացած ռուսական տառադարձություններով: Ցգյան անունը հայերենում հեշտորեն կարելի է տառադարձել Ծան, ինչպես որ այն հնչում է չինարենում, հետևաբար՝ ոչ թե Մաո Ցզե Դուն, այլ Մաո Ծե Դուն, ոչ թե Չժան, այլ Ճան և այլն: Ի դեպ, մինչխորհրդային հայ իրականության մեջ արդեն ընդունելի էր այս միտումը. 1901-ին հայ մամուլում չինական քաղաքի անունը հանդիպում է Թեան-Ծին (ոչ Տիենցզին) ձևով (Գ. Հումուցեան, Նամակ Սանջուրիայից («Նոր-Դար» թղթակցութիւն), «Նոր-Դար», Թիֆլիս, 23.10.1901, նաև՝ Տիենծին («Յառաջ», Թիֆլիս, 28.02.1906) և Տյան-Ջին ձևերով (Չինաստանում, «Մարտակոչ», Թիֆլիս, 4.02.1926):

Առհասարակ, չինաբնակ հայերը առավել կամ պակաս չափով հիշվել են ուշ միջնադարի հայ առևտրականներին նվիրված տարբեր ուսումնասիրություններում[32]: Վերջին գիտահանրաճանաչողական հոդվածը (ցավոք, լեցուն բազմաթիվ անճշտություններով) պատկանում է ռուս արևելագետ, չինագետ-հայագետ Նատալյա Սոբոլի գրչին[33]:

20-րդ դարի Չինաստանի հայկական համայնքները եղել են նաև ռուսական գաղթավայրերի պատմությամբ զբաղվողների ուշադրության կենտրոնում, քանի որ վերջիններս եղել են Ռուսաստանից և մեծ մասամբ՝ ռուսախոս: Հայկական փոքրաթիվ ներկայության մասին մասնավորապես հիշվում է Վլադիվոստոկի Հեռավորարևելյան համալսարանի գիտաշխատող Ամիր Խիսամուտդինովի՝ Չինաստանի ռուսական համայնքին նվիրված աշխատություններում, մասնավորապես՝ «Ռուսական տարագրությունը Չինաստանում. հանրագիտարանի փորձ»[34] հատորում: Չինաբնակ հայերի անունները հիշված են նաև Կիրիլ Չաշչինի կազմած «Ռուսները Չինաստանում. տոհմաբանական ցանկ» մեծածավալ հատորում[35]:

Չինաբնակ հայերի պատմությամբ որոշ չափով զբաղվել են նաև չինացի գիտնականներ, Շանհայի սոցիալական գիտությունների եվրասիական ուսումնասիրությունների սլավոնագիտության կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Ալեքսանդր Վան Ջի Չենը (2013-ի տվյալով՝ նա պատրաստվել է հրատարակել գիրք, որտեղ համառոտ անդրադարձ է

[32] Տե՛ս, օրինակ, **Colless B. C.**, The Traders of the Pearl. The Mercantile and Missionary Activities of Persian and Armenian Christians in South East-Asia, "Abr-Nahrain," Melbourne 9 (1969-1970), p. 17-38. **Baladouni Vahé**, **Makepeace Margaret**, eds., Armenian Merchants of the Seventeenth and Eighteenth Centuries: English East India Company Sources. American Philosophical Society, Philadelphia, 1998, էջ 112, 127, 154, 225, 231.

[33] Տե՛ս **Соболь Н.**, Торгово-экономические отношения Армении и Китая, http://husisa-pail.wordpress.com/2012/10/31/2012/10/31/наталья-соболь-торгово-экономически/ (այցելությունը կայքէջ՝ 21.01.2013):

[34] Տե՛ս **Хисамутдинов А. А.**, Российская эмиграция в Китае. Опыт энциклопедии. Владивосток, 2002.

[35] Տե՛ս **Чащин К.**, Русские в Китае. Генеалогический индекс (1926-1946), Нью-Йорк, 2014.

լինելու նաև Շանհայի և Մակաոյի հայերին) և Ցիցիկարի համալսարանի պրոֆեսոր Վեն Լին[36]:

Վերջին տարիներին Չինաստանում երկու ավարտաճառ է գրվել հայ-չինական պատմական թեմաներով: Ծնունդով երևանցի Լիանա Եղիգարյանը Չինաստանի Ուհան քաղաքի համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ուսանելու տարիներին (2005) գրել է դիպլոմային աշխատանք՝ «Հայ-չինական պատմական կապեր» թեմայով՝ չինարեն լեզվով (68 էջ): Չինացի երիտասարդ հայագետ Յան Սյին 2008 թ. գրել է ավարտաճառ՝ «Չինաստան և Հայաստան. չին-հայկական պատմական հարաբերությունները՝ արտացոլված երկրների անվանումների մեջ» վերտառությամբ (չինարեն, 70 էջ): Նույնպես ծնունդով երևանցի Կարեն Շահբազյանը, որ ուսանել է Հանճոուի Արվեստի ակադեմիայի վիդեոյի և գովազդի բաժնում, 2014 թ. գրել է չինարեն ավարտաճառ՝ «Հայաստանից մինչև Չինաստան. մշակութային արժեքները (Մետաքսի ճանապարհ)» վերնագրով:

Մոսկվայի պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտի ասպիրանտ Իրինա Սինասյանը 2012-ի հունվարին համացանցում հանդես է եկել հայ-չինական պատմական կապերին նվիրված հոդվածով[37], որի ամենից արժեքավոր մասը 1930-ականների Չինաստանի ռուսական մամուլից հայերին վերաբերող տեղեկատվությունը շրջանառության մեջ դնելն է:

Չինաբնակ ռեժիսոր և հետազոտող Ռուբեն Գինին (Գինեյ, իսկական ազգանունը՝ Գասպարյան) «Անդին. հայոց ճանապարհորդությունների տարեգրություն» վավերագրական ֆիլմի վրա աշխատելիս խորությամբ ուսումնասիրել է հայ-չինական պատմական կապերը միջնադարում, ծանոթացել հազվագյուտ արխիվային փաստաթղթերի, այդ մասին հիշատակել մամուլին տված հարցազրույցներում[38], հանդես

[36] Տե՛ս Кино, человек, время: интервью с Рубеном Гини (Пекин, КНР), «Анив», Минск, но. 6 (45), 2012, էջ 22:

[37] Տե՛ս **Минасян И.**, Китайско-армянские контакты http://bs-kavkaz.org/2012/03/china-armenia-contacts/ (այցելությունը կայքէջ՝ 5.06.2012):

[38] Տես, մասնավորապես, Кино, человек, время: интервью с Рубеном Гини, էջ 2-25:

եկել հրապարակումներով գիտական և զանգվածային մամուլում[39], որոնք ամփոփել է 2016-ին հրատարակած «Andin. պատմական ակնարկներ Չինաստանի հայերի մասին» ռուսերեն ժողովածուում[40]:

Արդեն իսկ ուսումնասիրության առարկա է դառնում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (այսուհետ՝ ՉԺՀ) և Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) միջպետական հարաբերությունները[41]:

Մշտապես հետաքրքրություն ունենալով Չինաստանի և չինական մշակույթի հանդեպ՝ տարիներ շարունակ տվյալներ ենք հավաքել այդ երկրի և ժողովրդի հետ հայության ունեցած պատմական և մշակութային ամեն կարգի առնչությունների վերաբերյալ, հանդես եկել հոդվածներով զանգվածային, ապա նաև՝ գիտական մամուլում[42]:

[39] Տե՛ս **Гини Р.**, Китайская чаша Сюандэ из Гюмри, «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), Երևան, 2013, թ. 3, էջ 206-214: **Նույնի**, Ormiane w chinskom Harbine [Հայերը չինական Հարբինում], Ormiane – 2015 (Calendar), Warszawa, 2015, էջ 8. **Նույնի**, Данные о местонахождении кайрака с армяно-сирийской надписью, ՊԲՀ, Երևան, 2015, թ. 3, էջ 203-207: **Նույնի**, Путешествие в Китай Бенто де Гоиша и Исаака Армянина, «Բանբեր հայագիտության», Երևան, թ. 8, 2015, էջ 196-227: **Նույնի**, К биографии профессора Лассара – автора первой Библии на китайском языке, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 2016, թիւ 1-12, Յունուար-Դեկտեմբեր, էջ 315-400:

[40] Տե՛ս **Гини Р.**, Andin: исторические очерки об армянах в Китае, Ереван, 2016.

[41] Այս ուղղությամբ առաջին քայլերն են կատարել Ս. Սարաջյանը («Հայաստան և Չինաստան. փաստարկներ հատուկ համագործակցության օգտին», Երևան, 2012) և Մ. Էրյանը («Հայ-չինական բարեկամության 20-ամյա փորձն ու հետագա համագործակցության հեռանկարները», մագիստրոսական ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, Երևան, 2013, 59 էջ):

[42] Չինաստանին առնչվող մեր առաջին հոդվածը գրել ենք տակավին 20 տարեկանում՝ Երևանում ցուցահանդես բացած չինացի նկարիչ Ֆենգ Քիի մասին (տե՛ս **Քախչինյան Ա.**, Աշուշոտ բարձունքների նկարիչը, «Անդրադարձ», 12.03.1991): Թեմայի վերաբերյալ մեր հոդվածներից տե՛ս նաև՝ Иероглиф симпатии и красоты: дороги дружбы в тысячилетия, "Урарту", 2002, но 16: Армянская церковная жизнь Харбина, ՊԲՀ, Երևան, 2009, թ. 1, էջ 147-156: Армяно-китайские исторические и культурные отношения, в сб. «Армения-Китай. Очерки....», էջ 42-79: Հայերը Չինաստանում 1900–1950-ականներին (ակնարկներ), «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, հատոր ԼԱ., 2011, էջ 169-194: Հայերը ՉԺՀ-ում և Ճապոնիայում 21-րդ դարի սկզբին, «Սփյուռքագիտություն» տարեգիրք, Երևան, 2013, էջ 56-75: The Activity of Armenian Merchants in International Trade, "Regional Routes, Regional Roots? Cross-Border Patterns of Human Mobility in Eurasia," ed. by So Yamane, Norihiro Naganawa, Scientific Research on Innovative Areas "Comparative Research on Major Regional Powers in Eurasia," Slavic

Սույն մենագրության մեջ ձգտել ենք տալ Չինաստանում հայկական ներկայության հնարավոր ամբողջական պատկերը՝ կենտրոնանալով, սակայն, 1920-1930-ական թթ. Չինաստանի հայկական համայնքների վրա, ինչը համեմատաբար քիչ է ուսումնասիրված:

Research Center, Hokkaido University, Sapporo, 2014, p. 23-30. Sergoyan E. G., The Gathering Place: Stories from the Armenian Social Club in Old Shanghai, coffeetownpress, Seattle, 2012, pp. 216. $13.95 paperback, "Armenian Review," vol. 54, number 3-4 (Spring-Summer), 2014, pp. 90-92. Հայոց ցեղասպանութեան արձագանքները Հեռաւոր Արեւելքի երկրներում, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, հատոր ԼԵ., 2015, էջ 791-802: Armenian-Chinese Cultural Relations in 19th-21st Centuries, «Բանբեր հայագիտության», Երևան, 2016, թ. 2, էջ 212-227: Մեր հոդվածները հիմք են ծառայել ՀՀ Չինաստանի դեսպանատան հրատարակած «Համառոտ՝ Չինաստանի մասին» գրքում առկա հայ-չինական կապերի մասին գլխի համար (առանց տպագրության թվականի և վայրի նշման, էջ 143-154), որտեղ մեր անունը որպես սկզբնաղբյուր, սակայն, չի հիշատակվել:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հայ-չինական հարաբերությունները սկիզբ են առնում վաղնջական ժամանակներից: Ուսումնասիրողները հայ-չինական առնչությունների վերաբերյալ առաջարկել են տարբեր վարկածներ[43]: Օրինակ, Ա. Հ. Սվաճյանը ենթադրել է, որ մ. թ. ա. 238-230 թթ. հանների 11-րդ և վերջին կայսեր ընտանիքից շատ երևելի դեմքեր պահվել են Ho (հայ) անվան տակ Hoa-ի կողմերը՝ ենթադրելով, թե խոսքը Հայաստանի մասին է[44]:

2014-ի փետրվարին ռուսական «Դոժդ» հեռուստաընկերությունը հաղորդել է, որ Մաքս Պլանկի անվան գերմանական ընկերությունը և Օքսֆորդի գիտնական Գարեթ Գելենքալը ներկայացրել են միգրացիայի և ժողովուրդների խառնվելու ամենամասշտաբային և ամբողջական քարտեզը՝ հիմնված գենոտիպերի հետազոտության վրա: Այդ ինտերակտիվ քարտեզը հոդվածի հետ մեկտեղ հրապարակվել է «Science» ամսագրում, ըստ որի գենետիկական ուսումնասիրությունների միջոցով բացահայտվում էր այս կամ այն ժողովրդի գեներում այլ ժողովուրդների գեների առկայությունը: Գենոաշխարհագրական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եվրոպական հիմնական ժողովուրդը, որն իր գենետիկ կապիտալը ներդրել է ներկայիս չինացիների գեների մեջ, հայերն են, քանի որ չինացիների և հայերի գեների 4 տոկոսը համընկել է: Որքան էլ տարօրինակ է, այդ գենը ամենամեծ ոչ չինական օտարածին գենն է, այն դեպքում, երբ ճապոնացիների գեների համընկնումը չինացիների մոտ կազմել է ընդամենը 0.6 տոկոս: Հայերի գեների առավել մեծ համընկնումը իրանցիների հետ էր (23.1%), ապա՝ վրացիների (10.8%), լեհերի (8.1%): Ռուս մեկնաբանը դա բացատրել է հայերի՝ Մետաքսի ճանապարհին ամենաակտիվ առևտուր անող ժողովուրդներից մեկը լինելու հանգամանքով: Նկատենք, սակայն, որ քանի որ ընդամենը 10-16 հոգի է հետազոտվել, այս պատկերը կարող է միանգամայն սխալ լինել[45]:

Այդուհանդերձ, որոշ ուսումնասիրողներ համարում են, որ դեռևս մ. թ. ա. 7-րդ դարում հայերը և չինացիները ճանաչել են մեկմեկու[46]: Հույն պատմիչ Քսենոփոնի (մ. թ. ա. 444–356) «Կյուրոսի արշավանքը» երկի հերոս Կյուրոսը հայ ուղեկիցներ է ուզել՝ Չինաստան և արևելյան այլ երկրներ ճանապարհորդելու համար, ինչը ցույց է տալիս, որ այդ ժամանակներում հայերին արդեն ծանոթ երկիր էր Չինաստանը: Ռաֆիկ Աբրահամյանը, վկայակոչելով անգլիացի ուսումնասիրող Հ. Ուելսին, նշել է, որ հայերը ոչ միայն չինական ապրանքներ են բերել Հայաստան, այլև առևտրական գործարքներ կնքել Չինաստանում հաստատված հայ վաճառականների հետ[47]:

---

[43] Որոշ ուսումնասիրողներ կարծիք են հայտնել, որ Չինաստանում և նրա հարակից տարածքներում (հարավային Սիբիր, Մոնղոլիա) բնակված դինլին կոչվող եվրոպեոիդ ժողովուրդը կարող էր ունեցած լինել հայկական ծագում: Հայտնի է, որ դինլինները հյուսիսից հարձակվող մոնղոլոիդ ցեղերի հետ հազարամյա պատերազմներից հետո ի վերջո պարտվել են և ձուլվել Հեռավոր Արևելքի տարբեր ազգերի (չինացիներ, կորեացիներ, մանջուրներ, ույղուրներ և թյուրքալեզու այլ ցեղեր) մեջ: Այս ժողովուրդների մեջ մինչ օրս հանդիպում են դինլինների արտաքին նշաններով (խոշոր քիթ, բավ մորուք և ընչացք) անձինք: «*Դինլինների ցեղեր պահպանվել են Չինաստանի հարավային մարզերի անտառներում, որոնք իրենց անվանում են «ման» (համարյա բոլոր արխական լեզուներով՝ «մարդ», հայերեն՝ «մանուկ»՝ «փոքր մարդ»...): Կան նաև շատ անվանումներ, որոնք ակնհայտ հայկական արմատներ ունեն՝ մանջուր, Ամուր գետ և այլն*» (**Խոյշուդյան Է.**, Արխական իմաստնություն, գիրք Գ, մաս I, Երևան, 2010, էջ 150): Իսկ ըստ մարդաբան Հովհաննես Փիլիկյանի, չինարենում առկա են հայերեն ՀԱՅ, ԽԱՅ, ԽՈՅ, Ք(ի)Ի բառերի մնացորդներ և որպես օրինակ բերում է հետևյալ - չինարեն բառերը՝ ախ (սեր), խախ (ծով), հախ-ցի (երեխա), խոի (ի վիճակի լինել մի բան անել), խոի ջիա (տուն վերադառնալ), խուա (ծաղիկ), հաո (լավ) և այլն (տե՛ս **Փիլիկյան Հ.**, «Հայ»-երը, առաջին «մարդ»-երը. մարդատեսակի ծագման և զարգացման միջուկային տեսաբանություն, Երևան, 2011, էջ 129): Նման պնդումներն, անշուշտ, կարիք ունեն լրացուցիչ ծանրակշիռ ապացույցների:

[44] Տե՛ս **Սվաճյան Ա. Յ.**, Ճենք եւ Հայաստան, «Ապագայ», Փարիզ, 9,16.04.1927:

[45] Տե՛ս Բացահայտվել է գենետիկ կապ հայերի և չինացիների միջև, http://www.hragir.am/index/arm/0/society/53367/94989#sthash.TPjvhQKr.dpuf (այցելությունը կայքէջ՝ 8.03.2014):

[46] Հակոբ Մանանդյանը ժամանակին ժխտել է Գրիգոր Խալաթյանի այն պնդումը, թե իբր Աքեմենյան հարստության օրոք (մ. թ. ա. 558–330) հայ առևտրականներն ապրանքափոխանակության միջնորդներ են եղել Կովկասի, Սկյութիայի և Արևելյան Ասիայի, Չինաստանի հետ՝ նշելով, որ այդ ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայի և Չինաստանի միջև առևտուր ընդհանրապես չի եղել (տե՛ս **Манандян Я. А.**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, էջ 12):

[47] Տե՛ս **Աբրահամյան Ռ.**, Չինաստան, էջ 423:

Մ. թ. ա. 2-րդ դարի կեսերից սկսել է գործել Մետաքսի ճանապարհը, երբ առևտրատնտեսական հարաբերություններ են հաստատվել ժամանակի երկու խոշոր կայսրությունների՝ Հռոմեականի և Չինականի (Հան) միջև: Եվ Մետաքսի ճանապարհին ընկած Հայաստանը, հատկապես Արտաշատ վաճառաշահ քաղաքի հիմնադրմամբ (մ. թ. ա. 170), դարձել է միջազգային տարանցիկ առևտրի կենտրոն: *«Արտաշատի առևտրական զարգացման վրա խոշոր ազդեցություն պետք է ունեցած լինեն Չինաստանի հետ անմիջական տարանցիկ միջազգային հարաբերությունները, որոնց սկիզբը վերաբերում է մեր թվականությունից առաջ երկրորդ դարի վերջին»*[48]:

Մյուս կողմից հայոց արտաքին առևտուրը, որը միջազգային տարանցիկ առևտրի մի օղակն էր, ներառել է նաև Չինաստանը: Չինական Հան հարստության կայսր Վու Դիի օրոք (մ. թ. ա. 140–80) հայեր են հայտնվել Կենտրոնական Չինաստանում, որոնք գնել են դարձյալ մետաքս, ոսկեթել և արծաթաթել կտորեղեն, լայքա կոչվող կարմրախեժը, որից պատրաստվել է շիկափոկ, ինչպես նաև հասմկաքար (ժադեիտ կիսաթանկարժեք քարը)՝ այդ ապրանքները փոխանակել են մետաղների (պղինձ, կապար, արճիճ), Ալեքսանդրիայի և Միջագետքի ապակե իրերի և անոթների հետ[49]: Չինական ապրանքներով բեռնավորված քարավանները հասել են Միջին Ասիայի Թարիմ գետի հունը, որտեղ և հայ վաճառականներն իրականացրել են փոխանակությունը: Անգլիացի պատմաբան Հ. Ջ. Ուելսը, չինական աղբյուրների վրա հիմնվելով, վկայել է, որ մ. թ. 2-րդ դարում հայերը հաճախակի առևտրական ուղևորություններ են կատարել Չինաստան, այնտեղից ապրանքներ ներկրել Հայաստան, պայմանագրեր կնքել Չինաստանում հաստատված հայ վաճառականների հետ, ապրանքներ փոխանակել Հայաստանի և Հռոմի ոսկիով[50]: Վերոհիշյալ կայսր Վու Դին ուղարկել

[48] **Манандян Я. А.**, О торговле и городах Армении, стр. 53.
[49] Տե՛ս **Քիրտեան Յ.**, Գրախօսական Յ. Մանանդեանի «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան», հատոր Բ, մաս Ա, Ե., 1957, «Բազմավէպ», Վենետիկ, 1959, Յունիս-Օգոստոս, էջ 168:
[50] Տե՛ս **Ter-Mkrtchyan L.**, Armenians in China (From Ancient Times to Recent History), էջ 24:

է զորավար Գոն Ճենին՝ հետազոտելու Մետաքսի ճանապարհը, որից հետո ուղարկվել է երկրորդ արշավախումբը՝ Կիեն Իենի գլխավորությամբ: Այն Հայաստան է հասել Կասպից ծովի հյուսիսով[51]:

Հայաստանում մեծ և վաճառաշահ այլ քաղաքների (Արմավիր, Երվանդաշատ) ստեղծումն ու զարգացումը նույնպես կապված է միջազգային առևտրական ուղիների հետ, որոնք սկիզբ են առել Չինաստանից, Հնդկաստանից, Միջին Ասիայից և Հայաստանի ուղիով հասել են Եվրոպա: Մ. թ. 1–2-րդ դդ. ստեղծված Հռոմեական նշանավոր Milliarum auraum (ոսկե մղոնաքար) կոթողի վրա նշված է այդ առևտրական ուղին, որ սկիզբ է առել Չինաստանից և անցել է Արտաշատով: Մ. թ. 1-2-րդ դդ. Չինաստանից Հայաստան է հասցվել մեծ մասամբ մետաքս, իսկ Հայաստանից Չինաստան են արտահանվել դեղորայք, մետաղներ, ոսկեթել ապրանքներ, բուսական և հանքային ներկեր (հատկապես որդան կարմիր, որով ներկվել են չինական և հնդկական մետաքսի լավագույն տեսակները): Հայաստան ներմուծված չինական մետաքսի վերաբերյալ ամենահին հիշատակությունը վերաբերում է մ. թ. ա. 124 թվականին[52]: Իսկ արդեն մ. թ. 4-րդ դարում հռոմեացի աշխարհագրագետ Կաստորիուսի ստեղծած նշանավոր Պևտինգերյան քարտեզում պատկերված են Չինաստանից և Կենտրոնական Ասիայից եկող միջազգային տարանցիկ ճանապարհները, որոնք անցնում են նաև Էկբատանով և Արտաշատով[53]:

Հայ հին մատենագրության մեջ բազմիցս հիշատակված Ճենաստան կամ Ճենաց աշխարհը և նրա բնակիչ ճենները նույնացվել են Չինաստանի և չինացիների հետ:[54] Այն առաջին հերթին առնչվում է հայոց իշխանական Մամիկոնյան տոհմի՝ չինական ծագում ունենալու

[51] Տե՛ս **Yevadian Maxime**, Le Catholicos arménien..., էջ 126.
[52] Տե՛ս **Ժամկոչյան Ա. Ս.**, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX–XIV դդ., «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 10, միջնադարյան հուշարձաններ, պրակ III, Երևան, 1981, էջ 97:
[53] Տե՛ս **Манандян Я. А.**, О торговле и городах Армении..., стр. 126.
[54] Մ. թ. 142 թ. «ճին» անունով ցեղ է հիշվել Տիգրան Դ-ի կազմած բանակի օտար ազգությունների մեջ, որոնք, ենթադրվում է, կարող էին լինել չինացիներ (տե՛ս **Քիրտեան Յ.**, Գրախօսական Յ. Մանանդեանի, նույն տեղում):

ավանդության հետ: Այստեղ հարկ չենք համարում կրկնել այս հարցի շուրջ բոլոր քեր և դեմ կարծիքները, մանավանդ որ վերջերս հարցը կրկին ենթարկվել է մանրամասն հետազոտման[55], սակայն նաև ավելորդ չենք համարում հիշատակել ճենների և չինացիների նույնության վերաբերող վկայությունները:

Ճենացիների գաղթը և Մամիկոնյան նախարարական տոհմի ճենական ծագումը վկայել են 5-րդ դարի հայ ականավոր պատմիչները՝ Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին: Առաջինը Մամիկոնյանների ծագումը հիշել է՝ Պապ թագավորի և Մուշեղ Մամիկոնյան սպարապետի առնչությամբ: Թագավորը Մուշեղի մասին ասել է. «*Նա մի մարդ է, որ ծագումով մեզ չափ պատվական է, և սրա նախնիները մեր նախնիների նման էին. սրա նախնիները թողել են Ճենաց աշխարհի թագավորությունը ու եկել են մեզ մոտ և ապրել ու մեռել են մեր նախնիների համար*»[56]: Դարձյալ Բուզանդի վկայությամբ, Մանուել սպարապետը մի առիթով հետևյալն է ասել Վարազդատ թագավորին. «*Մենք մինչև անգամ ձեր ծառաները չենք, այլ ձեր ընկերներն ենք և ձեզանից ավելի բարձր, որովհետև մեր նախնիները Ճենաց աշխարհի թագավորներ են եղել. և երբայրների մեջ տեղի ունեցած տարաձայնության պատճառով, որպեսզի մեծ արյունահեղություն չլինի, այնտեղից հեռացել ենք և խաղաղ հանգստություն գտնելու համար եկել դադարել ենք (այստեղ)*»[57]: Իսկ Մովսես Խորենացին իր «Պատմություն հայոց» երկի Բ մասի ՁԱ գլխում մասնավորապես գրել է. «*Սասանի որդի Արտաշիրը, վախճանվելով, պարսից թագավորությունը թողնում է իր Շապուհ որդուն: Ասում են, որ սրա ժամանակ է Հայաստան եկել Մամիկոնյանների ցեղի նախնին՝ հյուսիս-արևելյան քաջատոհմիկ և գլխավոր աշխարհից՝ Ճենաստանից, որ ես հյուսիսային բոլոր ազգերի մեջ առաջինն եմ համարում: Նրանց մասին այսպիսի զրույց կա:*

[55] Տե՛ս **Դավթյան Հ.**, Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, 2015, էջ 23-93:
[56] **Փավստոս Բուզանդ**, Պատմություն հայոց, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանց, Երևան, 1968, էջ 242:
[57] Նույն տեղում, էջ 279:

Արտաշիրի կյանքի վերջին տարիներում եղել է Արբոկ անունով մի ճեն-բակուր, ինչպես նրանց լեզվով կոչվում է թագավորական տիտղոսը: Սա ունեցել է երկու դայակորդի, Բղդոխ և Մամգոն անունով, որոնք եղել են մեծ նախարարներ: Բղդոխը Մամգոնի մասին չարախոսում է, և ճենաց Արբոկ թագավորը հրամայում է Մամգոնին սպանել: Մամգոնն այս լսելով՝ թագավորի կոչին չի գալիս, այլ իր տունուտեղով փախչում, ապավինում է պարսից Արտաշիր թագավորին: Արբոկը պատգամավորներ է ուղարկում նրան պահանջելու, և որովհետև Արտաշիրը չի համաձայնվում, ճենաց թագավորը պատրաստվում է նրա դեմ պատերազմի: Արտաշիրը շատ շուտով մեռնում է, և թագավորում է Շապուհը:

Սրդ՝ թեպետ Շապուհը Մամգոնին չի հանձնում նրա տիրոջ ճեռքը, բայց և այնպես չի թողնում Պարսկաստանում, այլ իր ամբողջ տունուտեղով իբրև աքսորական ուղարկում է Հայաստան՝ իր գործակալների մոտ: Եվ պատգամ է ուղարկում ճենաց թագավորին, ասելով. «Մի՛ միրավորվիր, որ ես Մամգոնին չկարողացա քո ճեռքը տալ, որովհետև հայրս նրան երդվել էր արեգակի լույսով. այլ որպեսզի քեզ հանգստացնեմ, ես նրան իմ երկրից հալածեցի արևմտյան կողմը, աշխարհի ծայրը, որ նրա համար մահի հավասար է. ուրեմն թող իմ և քո մեջ պատերազմ չլինի»: Եվ որովհետև, ինչպես ասում են, աշխարհիս երեսին ապրող ազգերից ամենախաղաղասերը ճենաց ազգն է, հաշտվում է: Սրանից էլ պարզ երևում է, որ ճենաց ազգը հիրավի խաղաղասեր է և կենսասեր»[58]:

Հետագա շարադրանքում Խորենացին դարձյալ գովաբանում է ճենացիներին, այս անգամ՝ նրանց երկիրը. «*Նրանց երկիրը սքանչելի է ամեն տեսակ պտուղների առատությամբ, զարդարված է գեղեցիկ բույսերով, ունի շատ սիրամարգ, արտադրում է առատ քրքում և մետաքս, անչափ շատ կան այնտեղ վիթեր, հրեշներ և իշայծյամ կոչվածներ: Այնտեղ, ասում են, ընդհանուրի կերակուր են կազմում փաս-*

[58] **Մովսես Խորենացի**, Պատմություն հայոց, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի, Երևան, 1968, էջ 215-216:

իանը, պորը և ճմանները, որոնք մեզ մոտ պատվական և քչերին մատչելի կերակուրներ են: Իսկ ակնեղենների և մարգարիտների հաշիվը, ասում են, չգիտեն: Եվ այն զգեստները, որ մեզ մոտ պատվական են և քչերին մատչելի, նրանց մոտ սովորական զգեստ է: Այսքանը ճենաց երկրի մասին:

Իսկ Մամգոնը ոչ իր կամքով Հայաստան գալով՝ պատահեց Տրդատի գալստյանը, և պարսից զորքերի հետ (Պարսկաստան) չդարձավ, այլ իր բոլոր տնով-տեղով Տրդատին ընդառաջ գնաց մեծ ընծաներով: Տրդատը նրան ընդունեց, բայց հետը պատերազմի չտարավ Պարսկաստան, այլ բնակության տեղ տվեց նրա գերդաստանին և ապրուստի միջոց, բավական երկար տարիներ տեղից տեղ փոխելով»[59]:

Խորենացու հիշատակած պատմությունը գրեթե նույնությամբ զետեղված է Սեբեոսի «Պատմության» մեջ: Մամիկոնյանների ճենական ծագման պատմությունը կրկնել են նաև Ասողիկը, Շապուհ Բագրատունին, Սիմեոն Ապարանցին[60]: Մամիկոնյանների չինական ծագումը որպես պատմական վկայություն հետագայում հիշատակված է նաև հայ գեղարվեստական գրականության մեջ[61]:

[59] Նույն տեղում, էջ 216:

[60] Տե՛ս **Սվազյան Հ. Ս.**, Ճենները և «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների, ՊԲՀ, Երևան, 1976, թ. 4, էջ 204-205:

[61] Այսպես, վիպասան Րաֆֆին այդ վկայություններն օգտագործել է «Սամվել» վեպի որոշ նկարագրություններում («*Արածանիի ափերի մոտ ապրում էր և մի այլ ժողովուրդ, որ հյուրասիրվել էր այստեղ Հռանգոյի* (Հուանհեի – Ա. Բ.) *ափերից, և դեղնակաշի սիճեացին, բոլորովին հայկական դեմք ստանալով, մշակում էր հայոցերկիրը*»): Նա իր հերոսին՝ Սամվել Մամիկոնյանին օժտել է չինական արտաքինով («*Նրա դեմքը փոքր-ինչ մուգ-դեղնագույն էր*», «*որ պահպանվել էր նրա մեջ ժառանգական արյունից...*», գլխի «*բոլորտիքը սափրած էր, միայն գագաթի վրա ճոխ երկարությամբ ածել էին սև գիսակները: Գագաթի բոլորովին մեջտեղում, մի դրամի մեծությամբ, նույնպես ածիլած*»). նա լրացվում է ջրամաս-սիրամարգից («*այդ հիշատակը նրանք բերել էին իրանց նախկին հայրենիքից – Չինաստանից*» (**Րաֆֆի**, Երկեր 12 հատորով, հատոր 8, Երևան, 1986, էջ 17, 19, 30: Մամիկոնյանների չինական ծագումն է ակնարկված նաև Սմբատ Բյուրատի «Վարդանանք» պիեսում, որտեղ պարսից Հազկերտ արքան արհամարհանքով ասում է Վարդանին. «*Դուն, Մամիկոնեան նոր սպարապետ, գոնէ դուն երբէ՞ն ի վեր առրուեցար այնչափ աստուածաբանութիւն. նախնիներդ՝ Կոմփիկիոսի* (Կոնֆուցիուս – Ա. Բ.) *հաւատացեալներ, երբէք կրնայի՞ գուշակել թէ՝ իրենց սերունդէն մէկը պիտի ելլէր, Հրէայ մը պիտի պաշտէր*» (**Բիւրատ Ս.**, Աարայրի արծիւը կամ Վարդանանք, Կ.Պոլիս, 1909, էջ 44):

Ինչպես նշվեց, ճեների և չինացիների նույնացումը գիտնականների մի մասն ընդունում է[62], մյուս մասը՝ մերժում, գտնելով, որ դրանք տարբեր ազգեր են, իսկ Ճենաստանն էլ Չինաստանը չէ: Օրինակ, կարծիք է հայտնվել նաև, որ Ճենաստանը թոխարների երկիրն է եղել՝ Չինաստանի սահմանին մոտ[63], իսկ Քերովբե Պատկանյանի կարծիքով, Ճենաստանն իրականում եղել է երկիր Վոլգայի սահմաններից ոչ հեռու, դեպի արևելք[64]: Հ. Սվազյանի կարծիքով էլ՝ «*Ճենների երկիրը տարածված է եղել Ամու-Դարյայի և Սիր-Դարյայի միջև տեղավորված տարածության այն մասում, որը հետագայում՝ արաբներից նվաճվելուց հետո, նրանց կողմից կոչվեց Մավերաննահր՝ Սամարղանդ կենտրոնով*»[65]: Ավելի հիմնավոր է այն կարծիքը, որ Ճենաց աշխարհը բուն Չինաստանը չէ, այլ նրան սահմանակից երկիր: «*Անտարակույս, Մամիկոնյանները Ճենքից կամ Ճենաստանից էին, որը բուն Չինաստանը չէր, այլ նրան հարակից երկիր էր: Սա աներկբա փաստ է*»[66]:

Հայ-չինական կապերի մասին գրված ամենաառաջին հոդվածի հեղինակ Սիհրանը, խոսելով Մամգունի մասին, ներկայացրել է մ. թ. 3-րդ դարի վերջին Չինաստանում տիրող իրավիճակը՝ երկպառակություն և մասնատում, եղբայրասպան կռիվներ, որից էլ ենթադրել է, որ ամենևին անհավանական չէ, որ նման խառնակ վիճակում որոշ իշ-

[62] Տե՛ս, օրինակ, **Թոմանեան Մ.**, Սի քանի նկատողութիւն Մամիկոնեանց գաղթականութեան մասին, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1911, թիւ, 9, էջ 524-525, 527 (նույն հեղինակի «Չինացի եկվորները հին Անդրկովկասում» ռուսերեն աշխատությունը, գրված 1937-ին, մնացել է անտիպ և պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում. տե՛ս Մատենադարան, Այլևայլ հեղինակների ֆոնդ, թղթապանակ 240ե, վավերագիր 20): **Մանուէլեան Պ.**, Մամիկոնեաններու ծագումի մասին, «Ապագայ», Փարիզ, 18.06.1927: **Լ. Մ.**, Մամիկոնեանների չինական ծագումը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, մայիս, էջ 80-90 և այլն:

[63] **Ստեփանոս Օրբելյան**, Նյութերի պատմություն: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 506:

[64] Տե՛ս **История монголов по армянским источникам, выпуск первый. Перевод и объяснения К. П. Патканова, С. Петербург**, 1873, էջ 80:

[65] **Սվազյան Հ. Ս.**, Ճենները և «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների, էջ 20-9: Տե՛ս նաև **Skold Hannès**, L'Origine des Mamiconiens, «Revue des études arméniennes», Paris, 1925, sér. I, vol. 1, էջ 134-35:

[66] **Դանիէլյան Հ.**, Ովքե՞ր են և որտեղի՞ց են եկել առաջին Մամիկոնյանները, ՊԲՀ, Երևան, 2015, թ. 3, էջ 149:

խաններ փախչեին հարևան երկրներ, մանավանդ որ Պարսկաստանի սահմաններն այդ ժամանակաշրջանում հասել են մինչև Տիբեթ և Հնդկաստան, այսինքն՝ սահմանակից են եղել Չինաստանին[67]: Եվ այն, որ Խորենացու հիշատակած Ճենաց աշխարհը Չինաստանն է, վկայում է հենց միայն նրա հիշատակած սիրամարգների, մետաքսի և հրեշների (վիշապօձերի) առատությունն այդ երկրում (Ճենաց աշխարհը Կովկասում, Վրաստանում տեղադրողներն աչք են փակում այս վկայությունների վրա): Սիրամարգ բառը փոխառվել է պարսկերենից, նշանակում է «չինական թռչուն» (կազմված պարսկերեն սին՝ չին և մուրգ, մորղ՝ թռչուն բառերից[68], հայերենի բարբառներում սիրամարգին ասում են նաև սինամարք, հայ բանահյուսության մեջ նույնացել է Սինամ հավք կախարդական թռչունի հետ): Ի դեպ, ճեն բառից է ծագում նաև ճենապակի բառը, որն աշխարհին հայտնի է որպես չինական ապակի: Ավելի ուշ, ճենապակին հայ իրականության մեջ հիշվում է պարսկերեն «չինի» բառով[69]:

Ինչ վերաբերում է Խորենացու հիշած ճենբակուր բառին, որով կոչել են չինական կայսրին, այն, ըստ ֆրանսիացի արևելագետ Գիյոմ Պոտիեի, ծագել է թուրան-արիական «փագֆուր» բառից, որը չինարեն «թիեն ծե» («երկնքի որդի») բառի թարգմանությունն է: Հայտնի է, որ չինական կայսրերը կոչվել են «երկնքի որդի» կամ «արեգակի որդի»:

Ճենաստանը որպես Չինաստանից տարբեր երկիր ըմբռնելու համար լուրջ կռվան է 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի երկը, որտեղ Ճենաստանը նկարագրված է որպես այլ տարածքում գտնվող երկիր և ավելին, հիշատակվում է նաև Չին ու Մաչին երկիրը: Ըստ Օրբելյանների տոհմական պատմիչի՝ «*Հենց այդ ժամանակներում կռիվ, շփոթ և մեծ խռովություն ընկավ Ճենաստան աշխարհի թագավորության մեջ, որը գտնվում է արևելյան կողմում, Խալանդրաց* (կովկասյան

[67] Տե՛ս **Միհրան**, Չինացիք և հայերը, «Նոր-Դար», Թիֆլիս, 9.12.1900:
[68] Տե՛ս **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատոր 4, Երևան, 1945, էջ 217:
[69] Օրինակ, «*Չինին ացին, որ վատն այ, խաբային լէվն այ*» (Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցու Հաշվեմատյանը, էջ 136, 256):

հոների – Ա. Բ.) *աշխարհից այն կողմ, Խազրաց և Հոնաց աշխարհների սահմանակցությամբ՝ երկայնակի ձգվելով մինչև Եմավոն լեռը: Ճենբակուր կոչված թագավորի մեռնելուց հետո թագավորազունները սկսեցին պատերազմել միմյանց դեմ...*»[70]: Այնուհետև հիշատակվում է, որ այս Ճենբակուր կոչվող թագավորազուններից մեկը արքայական գնդի հետ հասել է Քարթլի և Մցխեթի ղեկավարներին ասել է. «*Մենք Ճենաց թագավորական տնից ենք. բաժանվելով մեր եղբայրներից՝ եկանք այստեղ և հավանեցինք ձեր ամուր աշխարհը*»[71]: Իսկ «Օրբել» անունն առաջացել է Քարթլոսի ձեռքով կառուցված Օրբեթ անառիկ ամրոցում հաստատվելուց հետո՝ նախկին «Ճենուլի» կամ «Ճենեուլքի» փոխարեն (*«Մինչեւ այսօր էլ այս պատճառով Օրբելք է կոչվում այն տոհմը, որը առաջ կոչվում էր Ճենաւուլք, այսինքն՝ Ճենացիք»*[72]): Օրբելյաններն իրենց ճենական ծագում վերագրելով ցանկացել են կա՛մ նմանվել Մամիկոնյաններին, կա՛մ պարզապես իրենց ծագմանը հաղորդել օտար ազնվական ցեղից սերված լինելու բացառիկություն:

Մամիկոնյանների չինական ծագումը տարբեր փաստարկներով փորձել է հիմնավորել նաև ամերիկահայ պատմաբան Ռոբերտ Պետրոսյանը[73]: Նրա տեսությունը պաշտպանել է ամերիկյան չինագետ ուսուցիչ Ֆրանք Վոնգը: Ըստ վերջինիս՝ հարավ-չինական բարբառով «Մանգուն» նշանակում է «ժողովրդի բանակ»: Նա վկայել է նաև, որ, համաձայն չինական աղբյուրների, մ. թ. 1-ին դարում զորավար Պան Չաոն իր պատվիրակ Կան Յինգին իր սպաների և բանակի հետ ուղարկել է Պարթևաստան և Հայաստան: Հավանաբար նրանց մեջ են եղել Մամգունը և Կոնակը: Ֆրանք Վոնգը նշել է նաև նույն ժամանակաշրջանում հայկական և պարսկական հնարավոր ներկայության

[70] **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 302:
[71] Նույն տեղում:
[72] Նույն տեղում, էջ 303: Նույնը հիշատակվել է նաև Իվանե Օրբելյանին նրա համախոհների հղած մի չափածո պատգամի մեջ («*Մեծ Իվանէ Օրբելեցի, Քաջ և հզոր անպարտելի, Որ աշխարհով ես ճենացի, Տոհմից տիրող թագաւորի*», նույն տեղում, էջ 313):
[73] Տե՛ս **Bedrosian Robert**, China and the Chinese according to 5–13th Century Classical Armenian Sources, "Armenian Review," 1981, Vol. 34, No.1-133, էջ 17-24:

մասին Չինաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում: 7-րդ դարում Սասանյան վերջին թագավոր Հազկերտ Գ-ի որդին՝ Պերոզը, արաբների կողմից հոր սպանությունից հետո պարսիկ զինվորականների և մի քանի նախարարների (որոնց մեջ եղել է երկու հայ) ընկերակցությամբ մեկնել է Չինաստան՝ օգնություն խնդրելու կայսրից, որն իր քեռայրն էր և մինչև կյանքի վերջը չինացի կայսեր կողմից շարունակել է պատերազմն Արաբական Խալիֆայության դեմ: Վոնգի վկայությամբ, Պամիրի լեռնաշղթայում, Տաջիկստանում կան մի քանի մեկուսացված ցեղեր (մոտ 5000 հոգի հաշվվող մահմեդական յաղնոբացիները, սերված սողդերից), որոնք, ըստ նրա, տեսքով ավելի նման են հայերի, քան պարսիկների (այս պնդումն, անշուշտ, վիճելի է): Նա վկայել է նաև Մետաքսի ճանապարհին գտնվող Չանգան (այժմ՝ Սյիան) քաղաքից ոչ հեռու Սյիանլին բնակավայրից 58 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սյի Վան Չուան գյուղի մասին, որի անունը թարգմանվում է «Արևմտյան թագավորի գյուղ»: Նրա բնակիչները թեև խոսում են չինարեն, սակայն ունեն չինացիների համար անսովոր խոշոր քիթ: Բնակիչներից ոմանք դավանում են բուդդիզմ, ոմանք՝ քրիստոնեություն[74]: Սյի Վան Չուան գյուղի մոտ պահպանվել են Պերոզի և նրա նախարարների քանդակները (անգլուխ). սրանցից երկուսը կարող են լինել Պերոզի վերոհիշյալ երկու հայ նախարարները:

7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ում Ճենքը (լատինական ձևով՝ Սյունիկիա) հիշված է որպես Ասիայի երեսունյոթերորդ երկիրը, որը «*Գտնվում է Սկյութիայից դեպի արևելք: Սահմանակից է արևմուտքից Սկյութիային, հյուսիս-արևելքից՝ Ամծանոթ երկրին, իսկ հարավից՝ Հնդկաստանին և Սինեացոց երկրին*»[75]: Քանի որ Ճենների երկիրը համարվում է Սինեացոց երկրից հյուսիս գտնվող մի տարածք, ուստիև ենթադրվել է, որ Ճենաստան և Ճենք ասելով նկատի են առնվել ոչ թե բուն Չինաստանը և չին ժողովուրդը, այլ նրան սահմանակից այսօրվա կոչվող քոչվոր ցեղերը (հոների նախնիները), որ բնակվել են Չինական մեծ պարսպից հյուսիս-արևմուտք: Եթե Շիրակացու տեղեկությունը ճիշտ է, ապա Ճենքին հյուսիսից սահմանակից Սինեացոց երկիրը կամ Սինեաց աշխարհագրականորեն Մոնղոլիան է, սակայն հետագա շարադրանքում երկրի նկարագիրը Չինաստանինն է: Այն մի «*ընդարձակածավալ դաշտավայր է, որ բնակվում է բազմահին ժողովուրդ, որոնցից մեկը, որն ապրում է Ամծանոթ երկրի մոտ, մարդակեր է*», այնտեղ «*կան վեց լեռներ: Այնտեղ լինում է դարիճենիկ, հոշիբոյակ, սուկոն և կասիմոն*[76]*.... ինչպես և սկյութիկոն (բանկազին քարը), որը ատրագույն է և ինքնեղ. կան հրեշ, մուշկ, շատ սիրամարգ և այլ տեսակի օգտակար բոյսեր: Լինում է այնքան անչափ բրքում, որ երբ ձիավորը սպիտակ ձիով ու սպիտակ բազեով որսի է գնում, վերադառնալիս բոլորովին դեղնած է լինում*», և, գլխավորը, որ այնտեղ «*լինում է շատ աբրեշում, որ ամենաարնտիրն է ողջ աշխարհում, այդ պատճառով էլ երկրի բնակիչները կերպասագործ ընչավետ արհեստավորներ են: Նրանց արքան Ճենբակուրն է, որը նստում է Սյուռա քաղաքում, որը գտնվում է երկրի հարավ-արևելյան ծայրամասում՝ Ամծանոթ երկրի մոտ*»[77]: Մասնագետների կարծիքով՝ Շիրակացու հիշատակած աշխարհագրական անունները, եզրույթները, ապրանքների անունները ինքնատիպ են, արժանահավատ և կարևոր նշանակություն ունեն 6-7-րդ դդ: Չինաստանի հետ առևտրի պատմության ուսումնասիրության համար: Հարցի ուսումնասիրությամբ մասնավորապես զբաղվել է իտալացի գիտնական Ռայմոնդ Ջորջո Կարդոնան[78]:

8-րդ դարի պատմիչ Ղևոնդ երեցը ևս իր «Պատմության» մեջ հիշել է Ճենաց աշխարհը («*Այդ ժամանակներում զորավար Մահմետի սիրտը դարձյալ զրգռվեց Ճենաց աշխարհի վրա, և նա մեծ զորք*

[74] **Wong Frank**, Pirooz in China, www.chinapage.com/minority/iran.html (այցելությունը կայքէջ՝ 22.05.2007):
[75] **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն: Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 311:

[76] Նկատի ունի դարչինը, խունկը, մահուդը և կասիա բույսը:
[77] **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, էջ 311-312:
[78] Տե՛ս **Cardona Raimond Giorgio**, L'India e la Cina secondo l'Aŝxarhac'oyc', "Armeniaca", Mélanges d'études arméniennes, E. M., Ile de Saint Lazar-Venise, 1969, էջ 83-97:

խնդրեց Իմայելի իշխանից՝ խոստանալով նրան Ճենաց արքային հնազանդ ծառայության բերել»[79]):

Ճենաստանի և Չինաստանի նույնությունն ապացուցվում է նաև 7-8-րդ դարի հեղինակ, 677–703 թթ. Ամենայն հայոց կաթողիկոս Սահակ Գ Ձորափորեցու գրություններից մեկում, որտեղ «Ճենաստանեայք» հիշատակվում են հնդիկներից հետո (դժվար թե հյուսիս-կովկասյան ժողովուրդը հիշատակվեր հնդիկներից հետո). «*Իսկ եթէ Յոյնք ոչ ընդունին զպատմութիւնն Սոկրատեայ եւ զանգրութիւն երանելոյն Յովհաննու, յայտնապէս վարդապետացն իւրեանց լինին անարգիչք, որպէս եւ հրեայք՝ մարգարէիցն: Բայց թէ զայս ոչ ընդունին ցուցցեն յաստուածեղէն գրոց, թէ ո՞ի սրբոց հարցն ասաց, Սուրբ Աստուած առանց՝ խաչեցարի, եւ յորո՞ւմ գիրս գրեալ է: Ապա թէ ոչ կարեն ցուցանել, ուրեմն ճշմարիտ է պատմութիւնն Սոկրատեայ: Վասն որոյ եւ մեք ընդ սուրբ, եւ ընդ Իգնատիոսի եւ ընդ Ոսկեբերանին Յովհաննու խոստովանեալ եմք եւ ասեմք ի սկզբանէ մինչեւ ցայսաւր, «Սուրբ Աստուած հզաւր եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»: Եւ ոչ միայն մեք, այլ եւ Եգիպտացիք, եւ Ափրիկեցիք, եւ արեւմտեան Հնդիկք, եւ Եվթովպացիք, եւ Հռովմեայեցիք, եւ Սպանիացիք, եւ մեծ ազգն Փռանգաց, եւ արեւելեան Հնդիկք, եւ Ճենաստանեայք, եւ Ասորիք, եւ ազգ մի ի Հոնաց աշխարհին, եւ Աղուանք, եւ մեք հայաստանեայքս...*»[80]: Այս վկայությունն արժեքավոր է հատկապես այն առումով, որ 691 թ. վկայում է Չինաստանում քրիստոնյաների առկայության մասին: Իսկ այդ քրիստոնյաների և նրանց ու նրանց նախորդներին քրիստոնեություն քարոզողների մեջ, անշուշտ, եղել են նաև հայեր:

Մ. թ. ա. 2-րդ դարից սկսած Չինաստանում հաստատվել էր կոնֆուցիականությունը, սակայն Տաճ հարստությունը ժամանակի ընթացքում ճանաչել է նաև այլ կրոնները: Երբ Չինաստանի քաղաքական շահերը տարածվել են դեպի Արևմուտք և մեծացել է հետաքրքրությունը հատկապես Պարսկաստանի կրոնների հանդեպ, Կենտրոնական Ասիայով արևմտյան Չինաստան են սկսել թափանցել մանիքեական և զրադաշտական քարոզիչներ[81]: 631 թվականից հետո նրանց թույլատրել են մուտք գործել մայրաքաղաք երկրորդ Տաճ կայսեր՝ Թայ-ծունի օրոք:

Տաճ հարստության ականավոր հետազոտող ամերիկացի չինագետ Էդուարդ Հեթցել Շեֆերը նշել է, որ «*Տաճի պետության երեք գուճաղիտակային դարերի գոյության ընթացքում այնտեղ եղել են Ասիայի գրեթե բոլոր երկրների ծնունդներ: Դեպի այդ ապշեցուցիչ երկիր մեկին ձգում էր հետաքրքրասիրությունը, մյուսներին՝ փառասիրությունը, երրորդին՝ շահի հետապնդումը, իսկ ոմանք այնտեղ էին հայտնվում ակամա: Եկվորների երեք ամենակարևոր դասերին՝ դեսպաններին, հոգևորականներին և առևտրականներին դրդում էին համապատասխանաբար խոշոր քաղաքական, կրոնական և առևտրական շահերը*»[82]: Այնուհետև նշել է տվյալ ժամանակաշրջանում Չինաստան եկած պարսիկ իշխանազուններին, Հնդկաստանի բուդդայականներին, թուրքական իշխանիկներին և ճապոնացի ուխտագնացների՝ զանց առնելով հայերին: Սակայն իտալացի հետազոտող Ֆրանչեսկո Բանդինին հավանական է համարում, որ արդեն մ. թ. 1-ին դարում քրիստոնյա հայեր են հայտնվել Չինաստանի տարածքում. «*Եթե որոշ բուդդայականներ, որ գալիս էին Հնդկաստանից, կարող էին թափանցել Հանների Չինաստան առաջին դարում, ապա կարելի է կարծել, որ որոշ քրիստոնյա հայեր, պարսիկներ կամ հնդիկներ կարող էին խառնված լինել նրանց հետ*»[83]: Բանդինիի աղբյուրը կարող է լինել մի միջնորդավորված վկայություն 16-րդ դարի իտալացի հեղինակ Ջովաննի Բատիստա Ռամուզիոյի «Ծովային ճամփորդության

[79] **Վանդ**, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Վանդյանի, Երևան, 1982, էջ 41:
[80] Հայերեն մեջբերումը տե՛ս **Yevadian Maxime**, Le Catholicos arménien..., էջ 161:

[81] Չինաստանում մանիքեականության վերաբերյալ տե՛ս **Tajadod Nahal**, Mani le Bouddha de Lumière: Catechisme manicéen Chinois, Paris, Les Editions du Cerf, 1990:
[82] **Шефер Э.**, Золотые персики Самарканда. Книга о чужеземных диковинах в империи Тан. Москва, 1981, стр. 24.
[83] **Bandini Francesco**, Origini del sacro e del pensiero religioso. "Origini del sacro e del pensiero religioso. Il dialogo interreligioso". Atti del convegno maggio 2009, vol. 14 di Quaderni di etnologia archeologia sacro, 2010, p. 76.

մասին» աշխատությունից: Այստեղ նա հիշատակել է, որ կաթոլիկ միսիոներ, ճիզվիտների օրդենի համահիմնադիր Ֆրանսիս Խավիերը (1506–1552) Հնդկաստանում հանդիպել է հայ եպիսկոպոս Մար Հակոբ (Ժակոմե) Աբունայինի, որն իրեն հաղորդել է, «*որ կարողացել է, թե հայերը քարոզել են Չինաստանում դեռևս նախնական եկեղեցու վաղ ժամանակաշրջանում*»[84]:

Ինչպես նշել է Չինաստանում քրիստոնեություն ուսումնասիրող Դեյլ Թ. Իրվինը, «*Չինաստանում կարող էին լինել պարսիկ և ասգամ հայ քրիստոնյա վաճառականներ, թերևս ամենաշուտը 5-րդ դարում. վկայություն չկա Չինաստանի սահմաններում քրիստոնյա համայնքների մասին մինչև 635 թվականը*»[85]:

Այս թեմային անդրադարձած պատմաբանները հիշատակում են Չինաստանի հետ քրիստոնեության ունեցած առաջին առնչությունը՝ Քրիստոսի առաքյալ սուրբ Թովմասի ենթադրյալ գործունեությունը Չինաստանում, որի վերաբերյալ առկա է նաև հայկական բանավոր աղբյուրը, վկայված, սակայն, եվրոպացիների կողմից: Այսպես, ըստ պորտուգալացի դոմինիկյան կրոնավոր Գաշպար դա Կրուզի (1520–1570), ինքը Հնդկաստանի Մելիափուր (Միլափոր) քաղաքում հանդիպել է Հայաստանից ուխտագնացության եկած մի հարգարժան հայի, որն էլ իրեն երդումով հավատացրել է, որ «*Հայերն իրենց հավատքի և արժանահավատ գրությունների մեջ ունեն, որ նախքան առաքյալը* (Թովմասը – Ա. Բ.) *Մելիափուրում նահատակվելը, գնացել է Չինաստան՝ Ավետարանը քարոզելու և մի քանի օր մնալուց հետո տեսել է, որ չի կարող արդյունքի հասնել այնտեղ, վերադարձել է Մելիափուր՝ Չինաստանում թողնելով երեք կամ չորս աշակերտ, որոնց նա ուներ այն-*

[84] Dissertazione del cardinale Placido Zurla dei vantaggi recati dalla religione cattolica alla geografia e scienze annesse: sull'unità del soggetto nel quadro della trasfigurazione di Raffaele: sull'opere di religioso argomento di Antonio Canova; ora per la prima volta insieme riunite, Boulzaler, 1835, p. 52.

[85] **Irvin Dale T.**, History of the World Christian Movement: Vol. 1: Earliest Christianity to 1453 Vol. 1 of History of the World Christian Movement, History of the World Christian Movement, Continuum International Publishing Group, 2002, p. 315.

ուեղ»[86]: Նույնը վկայել է նաև վերոհիշյալ Ֆրանսիս Քսավիերը՝ վկայակոչելով դարձյալ իր հայ բարեկամին՝ եպիսկոպոս Մար Յակոբոսին, ըստ որի Թովմաս առաքյալը քրիստոնեություն է քարոզել Չինաստանում[87]: Հայ եպիսկոպոսին է վկայակոչել նաև 16–17-րդ դարերի պորտուգալացի պատմաբան, Հնդկաստանում բնակված Դիոգո դո Կուտոն (1542–1616)[88]: Սուրբ Թովմասի՝ Չինաստանում լինելը որոշ ուսումնասիրողներ առասպել են համարում[89]:

Ինչն է առավել հետաքրքրական. Հայաստանը և Չինաստանը որպես Թովմաս առաքյալի երկիր հիշատակված են Մալաբարի (Հնդկաստան) ժամերգության տեքստում, որ գրառել է ճիզվիտ քարոզիչ Ջովաննի Մարիա Կամպոնին. «*Հնդկաստանի, Չինաստանի, Պարսկաստանի և կղզիների մյուս գտնվող մյուս ժողովուրդները, Միրիայի, Հայաստանի, Հունաստանի և Ռումինիայի ժողովուրդների հետ միասին, պաշտում են քո սուրբ անունը՝ ի հիշատակ սուրբ Թովմասի*»[90]:

Քրիստոնեության մուտքը Չինաստանում ընդունված է համարել 631 (կամ 635) թվականը[91], ինչը կապվում է նեստորական եկեղեցականների քարոզչական գործունեության հետ[92]: Երբ 480 թվականին

[86] **Moule Arthur Christopher**, Christians in China Before the Year 1550, Taipei, 1972, p. 12-14 (տե՛ս նույնը չինարեն թարգմանությամբ՝ Arthur Christopher Moule, 一五五〇年前的中国基督教史 中华书局, 1984, էջ 14, 170, 246): **Cary-Elwes Columba**, China and the Cross: Studies in Missionary History. London-New York-Toronto, 1957, p. 10.

[87] Տե՛ս **Saverio Francesco**, Dalle terre dove sorge il sole: lettere e documenti dall'Oriente, 1535-1552. Vol. 10 di Volti della storia. Tradotta da Adriana Caboni, Roma, Città Nuova, 1991, էջ 194:

[88] Ըստ դո Կուտոյի՝ Թովմաս առաքյալը «*մեկնել է Չինաստան և բնակություն հաստատել Կամքալիա քաղաքում, որտեղ մի բազավոր էր ապրում, այնտեղ ևս շատերին քրիստոնյա է դարձրել ու տաճարներ կառուցել, ապա վերադառնալով Միլափոր՝ նահատակվել այնտեղ*» (**Կյոպենկյան Ռ. Վ.**, Հայ-պորտուգալական հարաբերություններ, Երևան, 1986, էջ 304):

[89] Այս մասին տես՝ **Columba Cary-Elwes**, China and the Cross..., էջ 9-13:

[90] Նույն տեղում, էջ 12:

[91] Տե՛ս **Semedo Alvaro**, Historica relatione del gran regno della Cina: diuisa in due parti..., per Vitale Mascardi, 1653, էջ 207:

[92] Չինաստանում վաղ միջնադարում գործած նեստորականների մասին տես՝ **Saeki P. Yoshio**, The Nestorian Monument in China, London, 1916. **Saeki P. Y.**, The Nestorian Documents and Relics in China, Tokyo, 1937. **Cary-Elwes Columba**, China and the Cross..., էջ 14-38: **Winkler Dietmar W., Li Tang**, Hidden Treasures and Intercultural En-

Բյուզանդիայի Զենոն կայսրը հրամայել է փակել Եդեսիայի նեստորական վարդապետների հռչակավոր դպրոցը, և նեստորականությունը դադարել է գոյություն ունենալ արևելյան Հռոմեական կայսրության մեջ, և շատ նեստորականներ տեղափոխվել են Պարսկաստան, որտեղ աստիճանաբար ավելի մեծ ազդեցություն և դիրք են ձեռք բերել: Հատկապես նեստորականների Մծբինի դպրոցի ներկայացուցիչներն էին, որ քրիստոնեությունը տարածել և հասցրել են Ասիայի արևելյան ծայրերը՝ Հնդկաստան և Չինաստան[93]:

7-րդ դարից սկսած՝ Չինաստանում և շրջակա երկրներում ժամանակ առ ժամանակ հայտնվել են քրիստոնյա քարոզիչներ՝ նեստորականներ և հայեր[94]: Այս հայերը երբեմն ընկերակցել են իրենց ազգակից առևտրականներին, երբեմն՝ իրենք նույնպես եղել են վաճառականներ: Պարսիկ և հայ վաճառականները մինչև 10-րդ դարը եղել են անփոխարինելի քարոզի գործակալներ, որոնք մեծ ռիսկի են դիմել՝ մեծ քարավաններ տեղաշարժելով հազարավոր մղոններ՝ վտանգավոր ճանապարհներով[95]:

Միջնադարյան Արևելքում նեստորական քարոզիչների գործունեության վերաբերյալ աշխատությունների հեղինակ ամերիկացի Ֆ. Վ. Հյումը համոզված է եղել, որ 505 թ. Չինաստանում հաստատված առաջին քրիստոնյա համայնքների մեջ եղել են հայեր[96]: 1900 թ. Էջ-

---

counters: Studies on East Syriac Christianity in China and Central Asia, LIT Verlag Münster, 2009.

[93] Տե՛ս **Տեր-Մինասյան Ե.**, Նեստորականությունը Հայաստանում, «Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք 1, Երևան, 1946, էջ 193:

[94] Շոտլանդացի գրող, ուղեգրությունների հեղինակ Չարլզ Մաքֆարլեյնը (1799–1858) հայերին նվիրված իր գրքում նշել է. «*Ամենաառաջին միսիոներները խոսում են հայերի մասին՝ Չինաստանի սահմաններին: Նրանց, անշուշտ, կարելի է գտնել ամենուրեք՝ հեռու հյուսիսում, հարավում, հեռու արևելքում և արևմուտքում. հրեաներն ավելի սփռված չեն, քան հայ ժողովուրդը*» (**MacFarlane Charles,** The Armenians. A Tale of Constantinople, vol. I, London, Saunders and Otley, 1830, p. 308-309):

[95] Տե՛ս **Irvin Dale T.**, History of the World Christian Movement..., էջ 305:

[96] Տե՛ս **Աբրահամյան Ռ.**, Չինաստան, էջ 423: Աբրահամյանը նշել է նաև, որ ճապոնացի հետազոտող Յոսիյո Սաեկին հիշատակել է 573 թ. արևմուտքից Չինաստան գաղթած Սերգիուս անունով մի քրիստոնյայի, որն ընտանիքով ապրել է Գանսու նահանգում և մեծ դեր կատարել տեղական առևտրում, ու ենթադրել է, որ այդ Սերգիուսը եղել է հայ (նույն տեղում): Սակայն Չինաստանի քրիստոնյաներին

միածնում հյուրընկալված ֆրանսիացի գիտնական Բոնինը, որը նախագահել է Կենտրոնական Ասիայում հնագիտական հետազոտություններ կատարող ֆրանսիական հանձնաժողովը, վկայել է, որ պարզվել է, որ Չինաստան հասած առաջին քրիստոնյա (նեստորական) քարոզիչների մեջ եղել են նաև շատ հայեր: Որպես ապացույց նա հիշատակել է հետևյալը: 1894 թ. ամերիկացի մի ճանապարհորդ, որ հետագայում դարձել է ԱՄՆ հյուպատոս Հունաստանում, եղել է Ասիայի խորքերում և մի փոքրաթիվ հայ գաղթավայրի է հանդիպել Մոնղոլիայի և Չինաստանի սահմանին գտնվող Տուպա Չենգ (պարսպապատ քաղաք) բնակավայրում: Այդ հայագաղութը 1895 թ. բնաջնջվել է խռովություն հարուցած տեղացի մահմեդականների կողմից[97]: Բոնինն այդ անհետացած հայերին նոր եկվորներ չի համարել, այլ դարեր առաջ այնտեղ հաստատված հայերի շառավիղներ, քանի որ Տուպա Չենգը եղել է նեստորական կենտրոն: Այդ հայերը Չինաստան են հասել ոչ թե Հնդկաստանից (այնտեղից եկող ճանապարհն այդ հնարավորությունը չի տալիս), այլ ցամաքային ճանապարհով, նեստորական քարոզիչների հետ[98]:

Տան հարստության դարաշրջանի Չինաստանի մայրաքաղաք Սիանում է գտնվում երկրի հնագույն քրիստոնեական հուշարձանը՝ ասորերեն արձանագրություններով քարակոթողը, թվագրված՝ 781: Դրա վրա փորագրված է հայկականին նման խաչ, հայ կերպարվեստում առկա կենաց ծառը հիշեցնող մի խորհրդանշան և ոմն Ալոուբենի (Ալոբեն) անունը[99], «*խորհրդավոր մի մարդ Արևմուտքից*», որն առա-

---

նվիրված Սաեկիի հիմնարար աշխատության մեջ («Նեստորական հուշարձանը Չինաստանում», առաջին հրատարակությունը՝ 1916-ին) նման հիշատակություն չենք հայտնաբերել, իսկ նրա հիշած քրիստոնյա քարոզիչ Մար Սերգիուսը եղել է ազգությամբ ասորի:

[97] Տե՛ս **Միհրան**, Չինացիք և հայերը, «Նոր-Դար», Թիֆլիս, 14.12.1900: Նույնը տե՛ս՝ **Քիւրքչեան Վ. Մ.**, Հայը հայրենիքէն դուրս, «Կոչնակ», Պոսթըն, 13.01.1912, էջ 40, նաև՝ **Մկրտիչ եպս. Աղաւնունի**, Հայկական վանք մը Չինաստանի սահմանին վրայ, «Արեւ», Գահիրէ, 9-10.09.1926:

[98] Տե՛ս **Միհրան**, Չինացիք և հայերը, նույն տեղում:

[99] Տե՛ս **Saeki P. Yoshio**, The Nestorian Monument in China, էջ 94: «*Ռ- տառի բացակայությունը չհնարենում թույլ է տալիս ենթադրել, որ այդ մարդու անունը եղել է Ռուբեն*»

ջինն է քրիստոնեությունը ներկայացրել Չինաստանում[100]: Սիաճի նեստորական քարակոթողի վրայի խաչը նույնական է 1323-ին Կենտրոնական Ասիայում ստեղծված և այժմ Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժում պահվող Պիշպեկյան քարի վրայի փորագիր խաչին, որի վրա առկա են նաև հայ եպիսկոպոսի ծննդյան ու մահվան թվականները՝ ասորերեն և հայերեն: Այս նմանությունը թույլ է տալիս չբացառել Սիաճի քարակոթողի աղերսը հայ իրականության հետ[101], մանավանդ որ Ալոուբենը 635 թ. Չինաստան է եկել Պարսկաստանից:

Կարծիք է հայտնվել, որ քրիստոնեությունը հայ և նեստորական քարոզիչների միջոցով Տիբեթում և Չինաստանում տարածվելով՝ շփվել է բուդդայականության հետ, և այդ կրոնների հարաբերություններից առաջացել է լամայականությունը[102]: Իսկ ֆրանսիացի փիլիսոփա Ռաֆայել Լիոժիեն իր «Հիսուսը՝ Արևմուտքի Բուդդան» գրքում նշել է, որ բուդդայական հնագույն շարադրանքներից «Լալատավիստարան» (նկատի ունի «Լալիտավիստարա սուտրան»), մեծ նմանություններ ունի հայկական պարականոն ավետարաններից մեկի՝ Հիսուսի մանկության ավետարանի հետ[103]: Անշուշտ, նման պնդումները կարիք ունեն կրոնագիտական լուրջ հիմնավորումների:

Չինաստանում քրիստոնյա համայնքների համար բարենպաստ պայմաններ են ստեղծվել հատկապես Տաճ հարստության տիրապետության շրջանում (617–907 թթ.)[104]: Հայտնաբերվել են այս ժամանակաշրջանում պատրաստված մեծաքանակ գունավոր հախճապակե արձանիկներ, որ պատկերում են Չինաստանում բնակված տարբեր ազգերի ներկայացուցիչների (ույղուր, ալթայցի, թոխարցի, քաշգարցի, խորեզմցի, պարսիկ)՝ իրենց բնորոշ ազգային դիմագծերով, հագուստով, իսկ երբեմն՝ իրենց զբաղմունքը հատկորոշող որևէ առարկայով: Դրանց մեջ կան նաև տղամարդու երեք կավե արձանիկ՝ արծվաքիթ, ծալապատիկ նստած, սև բեղ-մորուքով՝ ծնկներին բռնած գինով լի տիկեր[105]: Մասնագետների կարծիքով՝ դրանք հայեր են, քանի որ մահմեդականներին արգելված է եղել գինի օգտագործել: Ենթադրվել է, որ հայերը գինի պատրաստել են Հայաստանում կամ Պարսկաստանում և տիկերով հասցրել են Չինաստան:

10-րդ դարից առաջ արևմտյան Չինաստանում, Տուհուանի Տուրֆան քաղաքներում եղել է քրիստոնեական փոքրաթիվ ներկայություն: 1900-ական թվականներին Տուհուանի քարանձավներում հայտնաբերվել են բուդդայական, քրիստոնեական և մանիքեական գրություններ: Նմանատիպ գրություններ են հայտնաբերվել նաև Տուրֆանում: Ըստ հետազոտող Դեյլ Իրվինի՝ այս երկու քաղաքներում բնակված քրիստոնյաները ազգությամբ եղել են պարսիկներ, բուրքեր, մոնղոլներ և չինացիներ, «*իրենց գրություններում գրված հայկական և հունական ազդեցություններով*»[106]:

Ինչպես նշեցինք, Հայաստանով են անցել Մետաքսի ճանապարհի առևտրական ուղիները, ուստի և չինական ապրանքների առկայու-

(Кино, человек, время: интервью с Рубеном Гини, стр. 21): Ռուբեն անունը թեև քրիստոնեական, սակայն հայկական չէ. անունը հայերի մեջ սկսել է օգտագործվել 11-րդ դարից (տե՛ս **Ամատյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երևան, 1948, էջ 326):

[100] Տե՛ս The Monks of Kûblâi Khân, Emperor of China or, The History of the Life and Travels of Rabban Şâwmâ, Envoy and Plenipotentiary of the Mongol khâns to the Kings of Europe, and Markôs Who as Mâr Yahbh-Allâhâ III became Patriarch of the Nestorian Church in Asia, Religious Tract Society, London, 1928, էջ 116-117:

[101] Տե՛ս Кино, человек, время: интервью с Рубеном Гини, էջ 21-22:

[102] Տե՛ս **Միհրան**, Չինացիք և հայերը...: Նույն հեղինակը առանց որևէ աղբյուր վկայակոչելու նշել է, որ իբր Չինաստանում «*հայերը VIII դարում վանք էլ են ունեցել*» (նույն տեղում), ինչը չի համապատասխանում իրականությանը:

[103] Տե՛ս **Liogier Raphaël**, Jésus Bouddha d'Occident, Paris, 1999, էջ 273, տե՛ս **Yevadian Maxime**, Le Catholicos arménien..., էջ 149:

[104] Գիտահանրամատչելի մի հոդվածում վկայված է, որ «*620 թ. չինացի ճանապարհորդ Նգաուեն Յիանգը Հնդկաստանի հյուսիսում համախ հանդիպել է հայերի և նույնիսկ առևտուր է արել նրանց հետ*» (**Սարգսյան Մ.**, Հնդկահայք..., «Ազգարար», Կալկաթա, թ. 1 (19), 2007, էջ 10):

[105] Տե՛ս **Խաչիկյան Լ.**, Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1980, թ. 13, էջ 11: Նույնը տե՛ս՝ Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցու Հաշվենատյանը, էջ 27: Խաչիկյանը հղել է **Gaston Mahler Jane**, The Westerners among the figurines of the T'ang Dynasty of China. Serie orientale Roma, 20, Roma: Instituto italiano per il Medio ed Estreme Oriente, 1959 աշխատությունը՝ ներառելով նաև հայ գիտնականի արձանիկ պատկերող մի լուսանկար:

[106] **Irvin Dale T.**, History of the World Christian Movement..., p. 313.

բյունը միջնադարյան Հայաստանում պատահական չի եղել[107]: «*Դվին-Պարտավ ճանապարհով առևտրական կարավանները ուղևորվում էին Դերբենդի վրայով դեպի Վոլգայի ափերը և Ռուսիա, իսկ Պարտավից դեպի հարավ-արևելք Արդաբիլի վրայով ճանապարհը տանում էր Իրան, Միջին Ասիա և Չինաստան*»[108]: Այս ուղին գործել է հետագա դարերում նույնպես, երբ Հայաստանը կորցրել էր իր անկախությունը: Ասիայի և Եվրոպայի միջև առևտրական ուղիների վրա գտնվող Արևելյան Հայաստանի մի շարք քաղաքներ որպես պահեստ են ծառայել Հնդկաստանից, Չինաստանից և Իրանից եկող ապրանքների համար, որոնք էլ իրենց հերթին, հազարավոր մղոններ կտրելով, հայտնվում էին Եվրոպայի և Միջին Արևելքի շուկաներում:

Դարեր շարունակ Չինաստանն է եղել թթագործության և շերամաբուծության հայրենիքը, և շերամի որդն ու թթի սերմը երկրից դուրս տանողին մահապատիժ է սպառնացել: Այդ կերպ չինացիները ցանկացել են մետաքսի մենաշնորհը պահել իրենց ձեռքին: Սակայն մ. թ. 419 թ. չինացի մի իշխանուհի, Խոթանին կոչված ինքնավար երկրի իշխանի հետ ամուսնանալու նպատակով, վտանգելով կյանքը, մազերի հյուսքի մեջ թաքցրել է շերամի ձու և թթենու սերմեր և այդպես Չինաստանից դուրս տարել[109]: Հայաստան շերամապահությունը մուտք է

[107] Սույն իրողությունն արտացոլվել է նաև գեղարվեստական գրականության մեջ: Ի պատասխան բյուզանդական արքունիքում տարածված կարծիքի, որ հայը միայն վաճառական լինելու համար է ստեղծված, անեցի հայ գիտնական հերոսն ասում է. «*Եթե հայերը Չինաստանից, Հնդկաստանից չբերեին նրանց պալատներն ու եկեղեցիները զարդարող ջահերը, իրենց ոսկիները վատնած չէին լինի դրանք ձեռք բերելու վրա, բայց այս անգամ էլ նրանց կկրծեր այն միտքը, թե ոսկի ունեն, բայց հնդկական կամ չինական ջահ չունեն*» (**Հովհաննիսյան Ա.**, Ճյուղեր, տերևներ (կիսաֆանտաստիկ վեպ), Երևան, 2012, էջ 168): 10-րդ դարի հայոց պատմության իրադարձությունները պատկերող մի վեպում էլ կարդում ենք. «*Աղախինը.... բերեց մրգեր՝ չինական հախճապակե սկահակի մեջ*» (**Գալստյան Ի.**, Գագիկ Արծրունի. գեղարվեստական քրոնիկոն, Երևան, 2013, էջ 29): Ի դեպ, չինական թասերը հետագայում էլ գործածվել են հայոց կենցաղում և անվանվել են չարգյոլ («*Չարգյուլը չինական թաս էր, վրան չորս հատ կապույտ վարդ նկարած*», **Թերլեմեզյան Փ.**, Կյանքիս հուշերը, Երևան, 2017, էջ 36):

[108] **Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դարերում, հ. 2, Երևան, 1964, էջ 32:

[109] Տե՛ս **Մակարեան Ա. Յ.**, Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սելանիկ, 1929, էջ 488: Պատմությանը հայտնի են շերամի և թթենու սերմի՝ Չինաստանից դուրս բերելու այլ վկայություններ ևս: Այսպես, 452 թ. Ճապոնիայի կայսր Յուրիակո-Տեննոն չինացիներից կորզել է շերամագործական գաղտնիքը, իսկ 552-ին Բյուզանդիայի Աթոս լեռան վանականները Պարսկաստանից գաղտնի բերել են շերամը (տե՛ս **Մակարեան Ա. Յ.**, նույն տեղում):

[110] Շերամապահություն, «Հայկական սովետական հանրագիտարան», հատոր 8, Երևան, 1982, էջ 485: 1921 թ. ամերիկյան մի հանդեսում տպագրված շերամապահությանը նվիրված ճանաչողական մի հոդվածում հիշված է, որ հայոց Լևոն թագավորը (նշված Lavon ձևով) «*մոտ 14 դար առաջ երկու վտահելի անձանց ուղարկել է Չինաստան Պարսկաստանի ճանապարհով: Ծպտված՝ նրանք ճամփորդել են ուղով, և ստիճանաբար իրենց հետ բերել են շերամորդի ձվեր և թթենու սերմեր՝ թաքցնելով իրենց կրած ապրանքի ճեղքերում: Եվ այդպես շերամագործության արդյունաբերությունը սկիզբ առավ Հայաստանում և այնտեղից տարածվեց Իտալիա, Ֆրանսիա, Անգլիա, Թուրքիա, Պարսկաստան և մոտ 260 տարի առաջ՝ Միացյալ Նահանգների հարավային մաս*» (**Dunn H. H.**, Worms That Spin Colored Silk, "Popular Mechanics Magazine," vol. XXXV, 1921, p. 20): Այս վկայության աղբյուրը մեզ անհայտ է և աչքի է ընկնում պատմական սխալով. հոդվածի գրությունից 14 դար առաջ (6-րդ դարում) հայոց Լևոն թագավոր չի եղել:

[111] «*Դժվար է հավատալ, որ թթենին հայկական բույս չէ. հազարավոր տարիներ առաջ բերվել է հեռավոր Չինաստանից և ներկայումս մեր հանրապետությունում տարածված է ցածրադիր գոտու բոլոր բնակավայրերում*» (**Հարությունյան Լ. Վ.**, Քո շրջապատի ծառերը, Երևան, 1983, էջ 82):

[112] Տե՛ս **Ջանփոլադյան Հ., Քալանթարյան Ա.**, Միջնադարյան Հայաստանի առևտրական կապերը VI-XIII դդ. (ըստ ապակեգործության տվյալների), «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 14, Միջնադարյան հուշարձաններ, պրակ VI, Երևան, 1988, էջ 31:

գործել մ. թ. 6–7-րդ դդ.[110]: Կարելի է ենթադրել, որ հավանաբար նման գարտուղի ճանապարհներով են Հայաստանում հայտնվել առաջին թթենին[111] և շերամը...

Վաղ շրջանի հայ-չինական տնտեսական կապերի վկայությունն են հայկական քաղաքներում (Գառնի, Դվին, Արտաշատ, Անի, Ամբերդ) կատարած պեղումներից գտնված չինական ծագում ունեցող ապրանքները, մասնավորապես չինական հախճապակին[112]: Անիում հայտնաբերվել են, այսպես կոչված, «չինական անմարմին» հախճապակու կտորներ Տաճ կամ Սուճ դարաշրջանից, որոնք իրականացված են նուրբ փորագրությամբ, մասնակի ցանցկենությամբ և թափանցիկ ջնարակով: Օտարերկրյա խեցեգործության այդ աշխատեղանակը նուրբ հախճապակու վրա բավական հաջողությամբ կիրառել են անեցի վարպետ խեցեգործները, ինչն ապացուցում է այդ ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքում չինական հախճապակին

բարձր գնահատելու մասին[113]: Ռուս հետազոտող Բ. Ա. Շելկովնիկովի կարծիքով, Դվինում պեղված մագնոլիայի ծաղկի տեսքով մի բաս նույնպես պատրաստվել է Չինաստանում[114]: Ավելի ուշ՝ 12-13-րդ դդ., դարձյալ վերոնշյալ բնակավայրերում (Անի, Դվին, Ամբերդ, Գառնի) հայտնաբերվել են նաև չինական նրբաճաշակ, թանկարժեք անոթներ հախճապակուց՝ պատված սելադոն կոչվող ջնարակով (կանաչի տարբեր երանգներով). չինական բնորոշ տեխնիկա, որ կիրառվել է հնում, Ճեծյան նահանգում: Սելադոնով իրերը լայնորեն գործածվել են հայ ազնվականների կենցաղում[115], սելադոնով պատված բազմաթիվ բեկորներ են գտնվել Անիի Բագրատունիների արքայական պալատի պեղումների ընթացքում[116], Ամբերդում ևս գտնվել է սելադոնով պատված գավաթի մի կտոր, բերված Չինաստանից[117]: Հայաստանում գտնված չինական խեցեղենը պատկանել է չինական կավագործության մեջ հայտնի լունծյուան-յաո տիպին[118]: Մասնագետի կարծիքով՝ «*Հայաստանի միջնադարյան հուշարձաններից գտնված սելադոնի մնացորդները սակավ են, բայց կարևոր են ժամանակի մշակույթի զարգացման աստիճանի ու տեղական վերնախավի ճաշակի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար*»[119]: Դրանք Հայաստանում

[113] **Кверфельдт Э. К.**, Керамика Ближнего Востока: руководство к распознанию и определению керамических изделий, Ленинград, 1947, стр. 76.
[114] Տե՛ս **Шелковников Б. А.**, Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, «Советская археология», XXI, 1954, էջ 869: Տե՛ս **Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դարերում, հատոր I, Երևան, 1958, էջ 246:
[115] Տե՛ս **Шелковников Б. А.**, Художественная керамическая промышленность средневековой Армении, «Տեղեկագիր ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի», 1942, թ. 3-4, էջ 9: **Պետրոսյան Հ.**, Գառնին IX–XIV դարերում, Երևան, 1988, էջ XLVIII, պատկեր 1, 2, 3, 4:
[116] Տե՛ս **Հակոբյան Թ. Խ.**, Անի մայրաքաղաք, Երևան, 1988, էջ 51: Այստեղ հեղինակը սխալմամբ սելադոնը համարում է չինական ճենապակի:
[117] Տե՛ս **Токарский Н. М.**, Архитектура древней Армении, Ереван, 1946, էջ 28:
[118] Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Չինական խեցեղենը որպես Մետաքսի ճանապարհի ցուցիչ, «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ», միջազգային գիտաժողովի նյութեր, 21-23 նոյեմբերի, 2011 թ., Երևան, 2012, էջ 332:
[119] **Ժամկոչյան Ա. Ս.**, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX–XIV դդ., էջ 121:

հայտնվել են ինչպես առևտրական կապերի, այնպես էլ մոնղոլական արշավանքների հետևանքով: «*Հայաստանի տնտեսական ու առևտրական կյանքն զգալիորեն առնչվում էր մուսուլմանական Արևելքի երկրների, մասնավորապես Իրանի հետ: Ինչպես երևում է, վերջինիս միջոցով էլ* (Հայաստանը – Ա. Բ.) *հաղորդակից էր նաև Չինաստանին*»[120]: Այդ իսկ պատճառով հավանական է, որ չինական ապրանքները Հայաստան կարող էին հասած լինել ոչ թե անմիջապես հայ կամ չինացի վաճառականների, այլ միջնորդավորված առևտրի շնորհիվ[121]:

1990-ականներին հայ միջնադարյան ճարտարապետական կարևոր հուշարձաններից մեկի՝ Գնդեվանքի համալիրում կատարված պեղումների արդյունքում հայտնաբերվել են 15-րդ դարում պատրաստված չինական ճենապակե հինգ անոթ, որոնք պահվում են Հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչության ֆոնդերում: Անոթներից մեկը պատրաստված է եղել Ճենգ-Հուա թագավորի տիրապետության ժամանակ (1465–1487): Այդ երփնագրված անոթներն ունեն գեղարվեստական արժեք, դրանց վրա առկա են չինական կերպարվեստին բնորոշ պատկերներ՝ վիշապներ, բուսական մոտիվներ, պարող մարդիկ[122]:

Գյումրիի երկրաբանական թանգարանում նույնպես պահվում է մի գեղեցիկ բրոնզե բաս՝ վիշապի պատկերով և չինարեն վեց հիերոգլիֆի մակագրությամբ, որ վերաբերում է Սին հարստության Սյուանդե կայսեր ժամանակաշրջանին (1425–1435), ուստին պայմանականորեն կոչվում է Սյուանդե (宣德 香炉) բաս: Ըստ բասը հետազոտած Ռուբեն Գինիի՝ այն ենթադրաբար վերաբերվում է Սյուանդե կայսեր ուշ ժամանակաշրջանին, ինչը հիմնավորվում է բասի ստորին մասում առկա կնիքի շնորհիվ, կատարված 楷书 (կաիշու) գրավոր ոճով, որը հիերոգլիֆում ունի 德 (de) լրացուցիչ գծիկը: Այս հիերոգլիֆի հատուկ

[120] Նույն տեղում, էջ 122:
[121] Տե՛ս **Հակոբյան Թ. Խ.**, Անի մայրաքաղաք, էջ 51:
[122] Տե՛ս **Ժամկոչյան Ա. Ս., Մեշինյան Ա. Ի.**, Չինական ճենապակու նմուշներ Գնդեվանքից, ՊՔՀ, Երևան, 1996, թ. 1-2, էջ 382-385:

տարբերակումը սկսել է գործածվել միայն կայսր Կանգսիի (康熙帝) օրոք (1661-1722): Վերջինիս երկարամյա թագավորությունը համակնշվում է օտար երկրների հետ բաց առևտրի վերականգնմամբ, այնպիսի քաղաքների հետ, ինչպիսիք էին Կանտոնը (այժմ՝ Գուանճոու), Ցայթոնը (այժմ՝ Ծյուանճոու), որը դարձել է հենակետ միջազգային առևտրի հետագա զարգացման համար: Այս նույն ժամանակահատվածը համընկել է նաև միջազգային հայկական առևտրային ցանցի ամրապնդման հետ, որը ձգվում էր ողջ Ասիայով մեկ: Իսկ Գյումրիում գտնված թասի 宣德 香炉 (Սյուան դե սյիան) նշումը Գինին թարգմանել է որպես «*սյուանդե թասի համար մոմերով անուշաբուրված*» և ենթադրել, որ քանի որ Հայաստանում և Իրանում անուշաբույր մոմերի գործածությունը տարածված չի եղել, ապա այդ բրոնզե թասը Հայաստան է եկել ի թիվս առևտրի համար նախատեսված այլ ապրանքների[123]:

Հայ վարպետների կողմից չինական դեկորատիվ-կիրառական արվեստի հետ մոտիկից ծանոթությունը չէր կարող իր ազդեցությունը չունենալ հայ արհեստների վրա: Մասնագետի կարծիքով՝ հայկական միջնադարյան խեցեգործության մեջ առկա որոշ նախշեր կարելի է ընկալել որպես Չինաստանի մշակույթի ազդեցություն[124]: Ըստ ռուս մասնագետի, միջնադարում ողջ առաջավորասիական խեցեգործական մշակույթը ձգտել է նմանակել չինականին՝ տեղական նյութերով և տեղական միջոցներով. «*...ոչ միայն Սամարրայում, որտեղ չինացի վարպետներ են աշխատել Բաղդադի խալիֆի արքունիքի համար, այլև հայկական Դվինի և Անի քաղաքներում, հայկական Անբերդ (sic) ամրոցում գտնվել են խեցիներ պատկերներով, որոնք բնութագրական են Տան հարստության ժամանակաշրջանի չինական հախճապակու համար, այսինքն՝ հնգագույն, պիսակավոր գունազարդմամբ*»[125]:

[123] Տե՛ս **Гинн Р.**, Andin..., էջ 40-46:

[124] Տե՛ս **Жамкочян А.**, Производство фаянса в средневековой Армении, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում. զեկուցումների ժողովածու, հատոր III, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, էջ 266:

[125] **Кверфельдт Э. К.**, Керамика Ближнего Востока..., стр. 75.

Նշենք նաև, որ հավանաբար հայկական գունաց գործիքի նույն ծագումն ունի Տիբեթում և Չինաստանում տարածված փողային մի գործիք, հայտնի սունա անվամբ:

Չինաստանի հետ առևտրատնտեսական կապերի մեջ է եղել նաև մյուս հայկական թագավորությունը՝ Կիլիկյան Հայաստանը: Նրան պատկանող Այաս նավահանգիստը եղել է ավարտակետն այն մեծ ճանապարհի, որն Արևմտյան Հայաստանով հասել է մինչև Պարսկաստան, Կենտրոնական Ասիա և Չինաստան: Մյուս կողմից Այասի նավահանգիստ են բերվել ապրանքներ (համեմունք, կերպաս, գոհարեղեն) Ասիայի խորքերից, ներառյալ Հնդկաստանից և Չինաստանից[126]:

13–14-րդ դդ. հեղինակ Հեթում Պատմիչը ֆրանսերեն և լատիներեն գրած «Ծաղկաքաղ արևելյան երկրների պատմությունից» երկում գրել է նաև Չինաստանի մասին՝ այն համարելով աշխարհի ամենահարուստ և ազնիվ թագավորությունը, որտեղ այնքան այլազան ու հրաշագեղ բաներ կան և այնքան նրբարվեստ, որ թերևս ոչ ոք չի կարող նրանց հետ բաղդատվել այդ տեսակ բաների մեջ: Հեթումը մանավորապես նշել է չինացիների առավելությունը գիտական հայտնագործությունների առումով, որ չինացիները շատ հնարամիտ են և օժտված մեծ սրամտությամբ, և ամեն արվեստի ու ամեն գիտության մեջ արհամարհում են մյուս բոլոր ազգերին: Ըստ Հեթումի՝ չինացիներն ասում են, թե միայն իրենք են երկու աչքով տեսնում, ոմանք (ըստ մի բնագրի՝ լատինները) մեկ աչքով են տեսնում, իսկ մյուս բոլոր ազգերը կույր են, և այս պատճառով են տխմար համարում նրանց: Հեթումի կարծիքով՝ չինացի թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք շատ գեղեցիկ են, բայց ունեն փոքր աչքեր, իսկ տղամարդիկ՝ փոքր մորուք: Նրանք ունեն սեփական գիրը և նրանց լեզուն շատ տարբեր է աշխարհի մյուս լեզուներից: Չինացիներն ունեն տարբեր հավատ, ոմանք պաշտում են արեգակը, ոմանք՝ լուսինը, աստղերը, ջուրը, ծառերը, անգամ եզներին, որովհետև նրանց միջոցով են վարում հողը: Դրա հետ մեկտեղ նա նշել

[126] Տե՛ս **Կյուպենյան Ռ. Վ.**, Հայ-պորտուգալական հարաբերություններ, էջ 23: **Luisetto Frédéric**, Arméniens et autres chrétiens d'Orient sous la domination mongole: L'Ilkhanat de Ghâzân 1295-1304, "Orient Chrétien Médiéval", Paris, 2007, p. 188-189.

է, որ որոշ չինացիներ շատ հետամնաց են և ապրում են կենդանիների պես: Հեթումը գրել է նաև, որ թեև չինացիները խիզախ զինվորներ չեն, սակայն ունեն զենքեր և մեքենաներ, որ ուրիշ ազգեր չունեն (ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի կարծիքով՝ խոսքը վառոդի և թնդանոթի մասին է): Ըստ Հեթումի՝ չինացիներն օգտագործում են թղթադրամ, որը նույնպես այլ ազգեր չունեն[127]: Հեթումի երկում արժեքավոր տեղեկություն կա նաև Չինաստանում ջրաուզակության՝ իբրև մասնագիտություն, առկայության վերաբերյալ[128]: Ցավոք, Հեթումի արժեքավոր գիրքը մինչ օրս չի ունեցել ամբողջական հայերեն թարգմանություն[129]:

Զանց առնելով Մամիկոնյանների նախահայրերին, ապա առաջին չինացիները, որ հայտնվել են Հայաստանում և որոնց անունները մեզ հայտնի են, եղել են 14-րդ դարի երկու չինական նեստորական վարդապետներ՝ Ռաբբան Սաուման և Մարկոսը (հետագայում նես-

[127] Տե՛ս **Ֆէյտի Ֆ.**, Հեթում պատմիչ, հեղինակ «Ծաղիկ պատմութեանց արեւելեան աշխարհին» գրքին, «Անահիտ», Փարիզ, 1938, Մայիս-Օգոստոս, թ. 4-5, էջ 82-83: Տե՛ս նաև՝ **Պէրպէրեան Հ.**, Հեթում Պատմիչ եւ չինական նկարչութիւնը, «Վէմ», Փարիզ, 1933, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 141-142:

[128] Այս մասին մանրամասն տես՝ **Սուքիասյան Կ.**, Հայկական աղբյուրների տեղեկությունները ջրաուզակության մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետ՝ ԼՀԳ), Երևան, 1981, թ. 6, էջ 94-97:

[129] Ի դեպ, նշենք, որ երկու հայ հեղինակ՝ լեզվաբան Ռաֆայել Իշխանյանը և պատմաբան Հմայակ Մարտիրոսյանը, գրել են հայ արքեպիսկոպոս Անտոն Սուլթանիացու մասին, որը նույնպես ճանապարհորդել է Չինաստանում և լատիներեն գրքեր գրել այդ երկրի մասին (**Մարտիրոսյան Հ.**, Անտոն Սուլթանիացու ուղևորությունը Չինաստան, «Էջեր հայ գաղթավայրերի պատմության», Երևան, 1996, էջ 99-119: Նույնի, Անտոն Սուլթանիեցին և նրա ուղևորությունը Չինաստան, «Բրանահայ գաղութի պատմություն», Երևան, 2007, էջ 108-120: **Мартиросян А.**, Еще раз об Антоне Султаниеци, ՊՔՀ, Երևան, 2005, թ. 3, էջ 227-231): Նրանք հենվել են 17-րդ դարի հեղինակ Կղեմես Գալանոսի և 18-րդ դարի հեղինակ Նիկոլա Միլեսկուի տեղեկությունների վրա: Մասնավորապես շրջանառվել է այն փաստը, որ իբր այս Անտոնը Օղերիկո Պորդենոնեցու և Մարկո Պոլոյի հետ միասին Չինաստանից Եվրոպա է հասցրել մետաքսի արտադրության, թնդանոթ ձուլելու, մագնիսով ծովագնացության և գրքեր տպագրելու արվեստը: Իրականում Անտոն Հայ անունով անձ գոյություն չի ունեցել, դա նույն ինքը՝ Հեթում Պատմիչն է: Ի շարս այլ ապացույցների, Մարտիրոսյանի հղած՝ Փարիզի ազգային գրադարանում 886 համարի ներքո գտնվող Անտոնի գործը նույն Հեթումի ձեռագիրն է: Մարտիրոսյանի տեսակետը ժխտել է բանասեր Գևորգ Աբգարյանը (տե՛ս **Աբգարյան Գ.**, Հայ տպագրության նախապատմություն, Երևան, 2001, էջ 22-23):

տորականների կաթողիկոս՝ Մար Յաբ Ալահա Գ, 1281–1317): Նրանց վերագրվում է ուղղափառական, օնգութական կամ թուրքական ծագում, սակայն մեզ համար էականն այն է, որ նրանք եղել են չինաստանցիներ: Երուսաղեմ ուխտագնացության մեկնելու նպատակով նրանք ճանապարհորդել են Թուրքեստանից Պարսկաստան, այցելել նեստորական սրբատեղիներ, ինչպես նաև Անիմդո քաղաքը: Անգլիացի ատրագետ Է. Ա. Ուոլիս Բաջը 1928-ին հրատարակած իր աշխատության մեջ Անիմդոն ներկայացրել է որպես հայոց երբեմնի Անի մայրաքաղաքը[130], մինչդեռ պատմաբան Հարությունյանն ապացուցել է, որ այդ վանականները չեն հասել Անի, այլ եղել են Ամիդում, որը Տիգրանակերտն է՝ ներկայիս Դիարբեքիրը Թուրքիայում: Միջնադարյան արաբ պատմիչները նա այդ քաղաքի անունը երբեմն ներկայացրել են Անիմդո անունով[131]:

[130] Նույնը կրկնել է Մաքսիմ Եվադյանը (տե՛ս **Yevadian Maxime**, Le Catholicos arménien..., էջ 149-150):

[131] Տե՛ս **Քիւրտեան Յ.**, Գուպլայ խանի վաճառականները, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թ. 6, էջ 175: Ռաբբան Սաումայի և Մարկոսի ուղևորության մասին մանրամասն տե՛ս **Moule A. C.**, Christians in China Before the Year 1550, London, 1972, էջ 94-127: Տե՛ս նաև **Mutafian Claude**, L'Arménie du Levant (XIe-XIVe siecles), Paris, 2012, էջ 524-525:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ՍԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Մասնագետների կարծիքով՝ Հայաստան կատարված մոնղոլական արշավանքները միջնորդավորված ձևով որոշակի աղերսներ են առաջացրել հայ և չինական միջնադարյան կերպարվեստի և դեկորատիվ արվեստների միջև[132]: Ինչպես նշել է մասնագետը. «*Ժամանակի տիրապետող ոճը ի հայս էր բերում մոնղոլական արվեստին հատուկ տարրեր, քանի որ պատվիրատուները հիմնականում տեղի վերնախավն ու եկվոր տարրերն էին, որոնք, բնականաբար թելադրում էին իրենց ճաշակը*»[133]:

Կիլիկյան Հայաստանի նկարիչները ծանոթ են եղել Չինաստանի արվեստին: Հովհաննես արքեպիսկոպոսի՝ 1287-ին ստեղծված մանրանկարում նրա հագուստի վրա առկա է չինական վիշապի պատկեր: Մասնագետի կարծիքով, 1286-ին ստեղծված կիլիկյան մի «Ճաշոցում» պատկերված առյուծները նման են չինացի վարպետների պատրաստած փղոսկրյա առարկաներին, իսկ նույն ձեռագրի մեկ այլ խորանի վրա պատկերված են չինական վիշապներ[134]: Ուրիշ ուսումնասիրողներ մեկ այլ կիլիկյան ձեռագրի (Մատենադարան, ձեռագիր 9422) մանրանկարում պատկերված կենդանիների գալարուն մարմինները նմանեցնում են չինական նկարչության կենդանիներին, իսկ հեծյալներից մեկի լայն եզրերով գլխարկը՝ մոնղոլների գլխանոցներին: Մատենադարանի թիվ 979 ձեռագրում առկա կենդանիների գլուխները

[132] Այս մասին մանրամասն տես՝ **Kouymjian Dickran**, Chinese Influences on Armenian Miniature Painting in the Mongol Period, "Armenian Studies/Études arméniennes: In Memoriam Haïg Berbérian," Lisbon: Calouste Gulbenkian Foundation, 1986, էջ 415-468: **Նույնի**, Chinese Motifs in Thirteenth-Century Armenian Art: The Mongol Connection, in: Komaroff Linda, ed., "Beyond the Legacy of Genghis Khan," Leiden, 2006, էջ 303-324: **Նույնի**, Chinese Dragons and Phoenixes Among the Armenians, «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մեսրոպի ճանապարհի պատմության մեջ»..., էջ 227-253:

[133] **Հակոբյան Ն. Գ.**, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX-XIII դդ.: **Ժամկոչյան Ա. Ս.**, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX-XIV դդ., Երևան, 1981, էջ 126:

[134] Տե՛ս **Ազարյան Լ. Ռ.**, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դարերում, Երևան, 1964, էջ 34-35:

և մարմինների ուրվագծերը նույնպես բնութագրական են համարում չինական արվեստին, հատկապես չինական մանրանկարներում առկա թռչող կռունկների սրընթաց գծերին: Բրիտանական թանգարանում է պահվում Տայքում 1313 թ. գրչագրված և պատկերազարդված մի Ավետարան, որի խորանի երկու հատվածներում պատկերված է չինական ոճի երկու ղեղին առյուծ[135]: Չինական արվեստի ազդեցությունը և անգամ նմանակումը մասնագետները տեսել են այլ մանրանկարներում ևս՝ նշելով, որ մետաքսե զգեստներ և անգամ բրոնզե առարկաները ներմուծվել են անմիջականորեն Չինաստանից (կամ մոնղոլական արքունիքի միջոցով), որտեղ կիլիկյան թագավորները և իշխանները երբեմն այցելել են[136]:

Արվեստաբանների կարծիքով՝ Իրանից և մոնղոլ նվաճողներից չինական ազդեցությունը միջնորդավորված ձևով անցել է նաև հայ մանրանկարչության մեկ այլ՝ Վասպուրականի մանրանկարչական դպրոց: Ըստ հետազոտող Հրավարդ Հակոբյանի՝ սելջուկ և մոնղոլ նվաճողները մշակույթի բնագավառում օգտվել են չինական արվեստի ձևերից, ինչն ուրույն ձև է ստացել նաև Հայաստանում[137]: Մասնագետները հետագա դարերում Նոր Ջուղայի արվեստի վրա նույնպես նշմարել են չինական ազդեցություն՝ ի թիվս պարսկական և եվրոպական ազդեցությունների[138]:

[135] Տե՛ս **Nersessian Vrej Nerses**, A Catalogue of the Armenian Manuscripts in the British Library: Acquired since the Year 1913 and of Collections in Other Libraries in the United Kingdom, vol. 1, London, 2012, էջ 176:

[136] Տե՛ս **Der Nersessian Sirarpie, Agémian Sylvia**, Miniature painting in the Armenian Kingdom of Cilicia from the twelfth to the fourteenth century. 1, Dumbarton Oaks, 1993, էջ 124:

[137] Տե՛ս **Հակոբյան Հ.**, Չեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում, Երևան, 1997, էջ 34: Ի դեպ, ինչպես միջնադարյան հայ մանրանկարիչների են ազդվել մոնղոլական և մահմեդական արվեստից՝ հիմնականում տեղ տալով դեկորատիվ թեմաներին, այնպես էլ մասնավորապես Վասպուրականի մանրանկարչական դպրոցը որոշակի ազդեցություն է կրել մոնղոլական արքունիքում ստեղծված ձեռագրերի նկարների վրա: Այս մասին տե՛ս նաև՝ **Kurdian H.**, An Armenian Manuscript with Unique Mongolian Miniatures, "Journal of the Royal Society," April, 1947, էջ 145-148: **Soucek Priscilla**, "Armenian and Islamic Manuscript painting: A Visual Dialogue," Mathews Thomas F., Wieck Roger S., eds. Treasures in Heaven: Armenian Art, Religion, and Society, New York, 1998:

[138] Տե՛ս **Redgate A. E.**, The Armenians, 2000, էջ 264:

Թուրքագետ Համլիկ Ստեփանյանը «Հայկական հախճապակու պատմությունից» հոդվածում նշել է, որ մասնավորապես Քյոթահիայում հայ վարպետների ստեղծած հախճապակու նմուշներում նկատելի են չինական ազդեցություններ[139]:

Գորգագետ Հարի Մ. Ռաֆայելյանն իր աշխատության մեջ նշել է, որ հայկական գորգերում առկա վիշապների, կրիաների, միաեղջյուրի և փյունիկ թռչունի մոտիվները, որոնք պտղաբերություն են խորհրդանշում, Հայաստան են անցել Չինաստանից[140]: Մեկ այլ արվեստաբան՝ Մանյա Ղազարյանը, հայկական գորգերին նվիրված իր աշխատության մեջ ենթադրել է, որ որոշ օձագորգեր ստեղծվել են *«յուրահատուկ «ամպերով» զարդարված չինական կտորների ազդեցությամբ, որը լայնորեն տարածված էր Իրանի հյուսիս-արևմտյան նահանգներում»*[141]:

Երևանի Մատենադարանում պահվող 13-րդ կամ 14-րդ դարերում ստեղծված առանց հեղինակի անվան հիշատակման հայերեն ձեռագրի՝ 12 սանտիմետրանոց քարտեզում նշված են մետաքսի հյուսիսային ճանապարհին գտնվող շրջանները և քաղաքները՝ Չինաստանից մինչև Թեոդոսիա և Իտալիա: Ըստ քարտեզագետ Ռուբեն Գալչյանի՝ այն եղել է մետաքսի հյուսիսային ճանապարհի ուղեցույց, ինչի պատճառով էլ քարտեզից բացակայել է Հայաստանի մասին հիշատակումը[142]: Քարտեզում տեղ են գտել նաև Չինաստանի կարևոր քաղաքներից Կանսայիը, Խայթայը և Զայթունը: Վերջինի մասին Գալչյանը մասնավորապես նշել է. *«Այս հայալեզու T-O տեսակի քարտեզը եզակի է այն առումով, որ քրիստոնեական քարտեզների մեջ այստեղ, առաջին անգամը լինելով, նշված է Խայթայ (Կիտայ, Չինաստան) երկիրը և նրա երկու քաղաքները՝ Զայթունն ու Կանսայը»*[143]:

[139] Տե՛ս **Ստեփանյան Հ.**, Լուգինյան թագավորական տան հայ ժառանգները (հոդվածների ժողովածու), Երևան, 2016, էջ 132-133:
[140] Տե՛ս **Raphaelian H. M.**, Rugs of Armenia, Their History and Art, New Rochelle, N. Y., 1960, էջ 44:
[141] **Казарян М.**, Армянские ковры, Москва, 1985, стр. 82.
[142] Տե՛ս Հայտնաբերվել է հայերեն ամենահին քարտեզը, «Ազգ», Երևան, 25.11.2008:
[143] **Գալչյան Ռ.**, Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում. Հայաստան, Վրաստան և Աղրքեջան, Երևան-Լոնդոն, 2007, էջ 70:

Հետագայում ևս Չինաստանը, ինչպես նաև Ճապոնիան և Կորեան[144], բնականաբար, տեղ են գտել հայկական տպագիր քարտեզներում:

Չինաստանը հիշել են հայ միջնադարյան պատմիչները և բանաստեղծները՝ Չինիստան, Չինեստան, Չինստան կամ Ճենաստան[145], մահմեդականների ձևով՝ Չինումաչին (Ջինումաջին[146]), Չին, Չին և Մաչին, Չինմաչին, իսկ չինացիներին՝ ճենազն, ճենազգեայ, ճենազնեայ, *«ազգ քինաց»* կամ *«ազգ սինէացւոց»* և այլ ձևերով: 12-րդ դարում ստեղծված Հնդկաստանի մի հայերեն ուղեցույցում, Չին և Մաչինը հիշվել է հետևյալ կերպ. *«Չին և Մաչին՝ երեք հազար եւ ութ հարիւր քաղաքք են եւ բազմաբարիք գաւառք. ամէնն կռապաշտք են. եւ երկիրն ցամաք. բայց չեն հաւանիր ո՛չ ոք ազգի. զի իւր Թագաւորն բազում եւ զազանաբարոյ հեծեալս ունի. եւ սիրեն զքրիստոնեայսն. եւ յաւ ընդունին՝ յԱղեքսանդր Թագաւորէն 'ի վեր, զի 'ի նմանէ շատ աղեկ են գտեալ եւ ազատութիւն. եւ զՀոռոմն խիստ սիրեն»*[147]: Ռաֆայել Աբրահամյանը, հրապարակելով սույն հատվածը, ենթադրել է, որ Չին և Մաչին ասելով հեղինակը հավանաբար նկատի է ունեցել Նեպալը[148], որը Հնդկաստանին դրկից է և ցամաքով շրջափակված՝ ի տարբերություն Չինաստանի: Սակայն հազիվ թե փոքր Նեպալը երեք հազարից ավելի քաղաք ունենար: Ենթադրում ենք, որ 12-րդ դարի

[144] Հետաքրքրական է, որ հայերը, հայտնվելով Ծայրագույն Արևելքի հյուսիս-արևելյան շրջաններում, կարծես դիտավորյալ շրջանցած լինեն Կորեան (հայ-կորեական կապերի մասին տե՛ս հավելվածում):
[145] Ճենաստան անվանումը գործածվել է անգամ 19-րդ դարում, հայ մամուլում, երբ եվրոպական մամուլից թարգմանաբար լուրեր են տրվել Չինաստանի իրադարձությունների մասին (տես, օրինակ, Ճենաստան, «Եւրոպա», 11.05.1852):
[146] Այս գրությունը հանդիպում ենք 17-րդ Հակոբ Գրիգորենցի «Գովք Պրիքանիոյ» երկում (տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), երկու հատորով, հատոր 2, աշխատասիրությամբ **Հ. Սահակյանի**, Երևան, 1987, էջ 582):
[147] Վասն քաղաքաց Հնդկաց եւ Պարսից, «Բազմավէպ», Վենետիկ, 1882, թիւ 4, էջ 317: Նույնը տե՛ս **Абрамян Р.**, Армянский путеводитель по Индии XII века, «Բանբեր Մատենադարանի», Երևան, հատոր 4, Երևան, 1958, էջ 326: Նույն տեքստը փոքր-ինչ տարբերությամբ տե՛ս Kleiner mittelarmenische Texte. Herausgegeben, mit Einleitung und Glosser versehen von F. N. Finck, B. Teste, «Հանդէս հայագիտութեան», Մարբուրգ, 1902, էջ 197-198:
[148] Տե՛ս **Абрамян Р.**, Армянский путеводитель…, էջ 328:

հայ հեղինակը պարզապես գաղափար չի ունեցել, որ Չինաստանն արևելքում ունի ելք դեպի ծով:

13-րդ դարի պատմիչ Վարդան Արևելցու «Աշխարհագրության» մեջ կարդում ենք. «*Ի կողմանէ Պարսից սկսեալ յարեւելք նախ Չինումաչին, ի Խաթա քաղաքն և աշխարհն որ է զհն բոլոր աշխարհիս, եւ են ուղղափառ քրիստոնեայք, եւ ունին թագաւորութիւն, ոչ որդն լայ, ոչ այրին յոգոց համէ. եւ ունին գիրք միայն, զՄատթէոս զլուխ աւետարանն. եւ պարարտ է աշխարհն, եւ բարեխառն եւ բարեխի, մի անգամ սերմանեն, եւ երեք տարին հաց լինի, քանզի մօտ է դրախտն, անտի գայ արմաւ եւ անուշահոտ ծաղկունք, դեղք զանազան ցաւոց... Եւ այնպէս է ազգն ճենաց, զի զկերպաս զգենուն ամենեքեան*»[149]: Պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի կարծիքով՝ չինացիներին քրիստոնյա համարելով՝ Վարդանը, հավանաբար, արտահայտել է տարածված մի կարծիք, որ հանդիպել է իրենից առաջ գրված ձեռագրերում: Իսկապես, որոշ աղբյուրների վկայությամբ, մինչև մահմեդականություն ընդունելը մոնղոլների շրջանում քրիստոնեությունը որոշ տարածում է գտել, ինչպես նշվեց, հատկապես ասորի նեստորական քարոզիչների շնորհիվ, որոնք ազատ մուտք են գործել մոնղոլ խաների արքունիք և անգամ հասել էին որոշ դիրքի: Հայտնի է, որ Մանգու խանն ունեցել է նեստորական խորհրդականներ և որ ասորի, հայ և կաթոլիկ քարոզիչների շնորհիվ շատ մոնղոլներ (հատկապես բարձր խավից) դարձել են ջերմեռանդ քրիստոնյաներ

13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին (1203–1271) իր «Պատմության» մեջ Չինաստանը հիշել է Ղատայիս (Խաթաստան-Խաթայ, նույնն է՝ Կիտայ) ձևով: Նա նշել է մոնղոլների մոտից վերադարձած Հեթում թագավորի տեսած և լսած զարմանալի պատմություններից մեկը Չինաստանից անդին գտնվող մի աշխարհի մասին: «*Կայ աշխարհ մի անդր քան զՂատայիքն, որ կանայքն են ի ձեւ մարդոյ բանականք, եւ արքն ի կերպարանս շանց. եւ են անբանք, մեծք եւ մազեղք: Եւ ոչ ումեք թողուն մտանել յաշխարհն իւրեանց շունքն, եւ որսան որսս շունքն, եւ այնու կերակրին շունքն եւ կանայքն: Եւ ի խառնակել շանցն ընդ կանանցն, արուքն շանց կերպիւ ծնանին եւ էգքն՝ կանանց*»[150]: Չինաստանից անդին գտնվող երկիրը կարող է լինել Մոնղոլիան[151] կամ Կորեան: Գանձակեցու «Պատմության» վերոհիշյալ հատվածի անգլերեն թարգմանիչը ծանոթագրել է, որ նմանատիպ պատմություն իսկապես շրջանառվել է մոնղոլների մեջ իրենց համաշխարհային տիրապետության ժամանակ: Նա մեջբերել է չինական գրքերում առկա վկայությունը, որ այդ երկիրը կոչվել է Կեու կվո կամ «Շների թագավորություն»[152]:

13-րդ դարի մեկ այլ հեղինակ՝ Ստեփանոս Օրբելյանը, նմանապես հիշել է Չինաստանը և Խաթաստանը՝ որպես հարևան երկրներ: «*Տասնմեկ տարի հետո տերն արևելքից վերկացրեց նետողաց ազգը, որ մուղալներ էին կոչվում, իսկ բուն գեղջուկների՝ թաթարներ: Նրանք Չին և Մաչին աշխարհից էին, որը գտնվում է Խաթաստանից այն կողմ, անաստված և անօրեն էին: Բայց բնականից հակված էին օրինապահության. ատում էին աղտեղի անառակությունն ու ամեն տեսակ վնասակար գործերը, միմյանց նկատմամբ արդարամիտ էին, հավատարիմ ու հնազանդ իրենց առաջնորդին*»[153], նաև՝ «*Սմբատին ուղարկում է Չին և Մաչին՝ Նետողաց աշխարհը, որտեղ նրանց թագավորության մեծ գահն է*»[154]:

Չինմաչին կամ Չին ու Մաչին երկիրը բազմիցս հիշվել է նաև միջնադարյան հայ բանաստեղծության և բանահյուսության մեջ, Գոգ ու Մագոգ, Իրան ու Թուրան, Հնդու Յաման, Հնդու Մաչին՝ արևելյան հեքիաթասացների տարածված ձևերի հետ մեկտեղ: Հայ ժողովրդական հեքիաթների շարքում հիշվում է նաև «*Չինմանչին թագավորի աղջի-*

[149] **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 318:

[150] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 371:

[151] Հայ-մոնղոլական պատմական կապերի մասին տե՛ս հավելվածում:

[152] St'u Journey of Armenian King Hethum to Mangoo Khan, Performed in the Year 1254 and 1255, and Described by the Historian Kirakos Kandtsaketsi. Translated from the Armenian, with notes. "The Asiatic Journal and Monthly Register for British and Foreign India, China and Australasia," vol. 10, January-April, London, 1833, էջ 143:

[153] Ստեփաննոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 322:

[154] Նույն տեղում, էջ 326:

կը»[155], որի հերոսը *«աչքը բաց ա անըմ, Չինմանչինու քաղաքի դրադին ա: Չինմանչինի քաղաքի չորս կուռը պարիսպի քաշած ա, մի դուռ ունի մտնելու»*[156]: Ժողովրդական հեքիաթների Չինաստանը եղել է ոչ այնքան որոշակի, այլ հեռավոր, շքեղ, տարաշխարհիկ մի երկիր, որ նույնացել է կախարդական աշխարհի հետ[157]: Ուշագրավ է, որ միջնադարյան հայկական պատկերացմամբ Չինաստանն աստվածընտրյալ երկիր էր, *«որտեղից բացվում են դրախտի դռները»*[158]: Ըստ մասնագետի, *«հայ ժողովրդական հեքիաթներում հիշատակվող հեռավոր արևելյան երկրներից հատկապես Չինաստանն է հանդես գալիս որպես կախարդական աշխարհի խորհրդանիշ: Նրա շուրջ հյուսված սյուժեները հարաբերականորեն կայուն դրսևորում ունեն, ուր մեծ դերակատարում ունի Չինաստանի արքայադուստրը, որը հանդես է բերում ընդգծված արևային հատկանիշներ: Դիվային հակահերոսի բացասական բնութագիր ունի Չինաստանի թագավորը կամ ոսկերիչը, որը բռնի տիրանում է արևային աղջկան: Չինաստանի՝ որպես կախարդական աշխարհի խորհրդանիշի մեկ այլ դիտանկյուն են ներկայացնում Սինամ հավքի ու Սինամ թագավորի մասին սյուժեները, որոնք ստուգաբանվում են որպես չինական հավք և Չին թագավոր, սակայն հեռացած լինելով իրենց նախնական իմաստից, բոլորովին անիրական, այլաբանական իմաստավորում են ձեռք բերել՝ շարունակելով, սակայն, իրենց մեջ կրել նախնական ընկալման հետքերը»*[159]:

[155] **Գևորգյան Ֆ.**, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ, 20, Լոռի (Տաշիրք-Ջորագետ), Երևան, 1999, էջ 30-34:
[156] Նույն տեղում, էջ 33:
[157] Հայկական հեքիաթներում Չինաստանի մասին պատկերացումների վերաբերյալ տես՝ **Հայրապետյան Ֆ.**, Արևելքը հայ ժողովրդական հեքիաթներում, «Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, Երևան, պրակ 3, 2011, էջ 10-24: **Նույնի**, Մետաքսի ճանապարհը առևտրատնտեսական և պատմամշակութային փոխառնչությունների ենթատեքստում (հայ ժողովրդական հեքիաթների հիման վրա), «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մեծաքսի ճանապարհի պատմության մեջ»..., էջ 344-362: **Վարդանյան Ն.**, Չինաստանը կախարդական աշխարհի խորհրդանիշ, նույն տեղում, էջ 84-90:
[158] **Հայրապետյան Ֆ.**, Արևելքը հայ ժողովրդական հեքիաթներում, էջ 18:
[159] **Վարդանյան Ն.**, Չինաստանը կախարդական աշխարհի խորհրդանիշ, էջ 89:

Հայոց դյուցազնավեպ «Սասնա Ծռեր»-ում նույնպես մի քանի անգամ հիշատակվում է Չինմաչինը՝ որպես հեռավոր տարաշխարհիկ երկիր.

Կ'երթա, կը խասնը Չինմաչինա
քաղաքի կուշտ, կը տիսնը՝
Խազար-խազար ֆերրգ-փահլըվան
էնաստեղ տատրած.
Չուր մեչը ինը մարթ ին, մեչքով ցածր
եված քար[160]:

Ժողովրդական հերոս Դավիթը սպանվում է իր և Չմշկիկ Սուլթանի դաշտը՝ «չինի աչքերով» աղջկա ձեռքով: Էպոսի մի պատումում նրա հերոսուհիներից Քառասուն Ճոպ Ծամը Չինումաչինի թագավորի դուստրն է, իսկ մեկ այլ պատումում Չինմաչինա թագավորը Խանդութ խաթունի թշնամիներից է: Ուշագրավ է նաև, որ Խանդութին գովաբանող աշուղները նրա աչքերը համեմատում են *«չինու կըթխայի»* հետ (չինի՝ հախճապակի): Սա վկայում է, որ առևտրական ուղիների կենտրոնում գտնվող Հայաստան են հասել չինական ապրանքներ: Պատմիչ Ստեփանոս Ասողիկը հիշել է, որ Աշոտ Ա Բագրատունի թագավորի իշխանության ժամանակ (885–890) Հայաստանում այնքան տարածված է եղել մետաքսը, որ նույնիսկ հովիվներն են հագել մետաքսե պատմուճաններ[161]: Բագրատունիների թագավորությունը 12-րդ դարում առևտրական կապերի մեջ էր Չինաստանի հետ. Անիի պեղումների ժամանակ գտնվել են մեծ քանակությամբ ճենապակու և չինական սելադոնի բեկորներ. վերջինից հայտնաբերվել է նաև Դվինում: Քարավանային ճանապարհով Հայաստան էին հասնում Չինաստանից արտահանվող ամենատարբեր գործվածքներ, էժանագիներից մինչև արծաթակար և ոսկեկար զարդաֆները[162]: Չինաստանի հետ

[160] Սասնա ծռեր, Երևան, 1936, էջ 486:
[161] Տե՛ս Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 161:
[162] Տե՛ս **Հակոբյանիայան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության..., էջ 201-202:

կապ ունի նաև սկուտեղին մեր բարբառներում տրվող «սինի» բառը[163]: Իսկ բարբառային «չինի» բառն ունի «ջնարակված, ջնարակված սպասք, ջնարակված սալիկ» իմաստը: Չինական քաղաքակրթության այլ նվաճումներ ևս (թուղթ, կողմնացույց, թեյ, վառոդ) նույնպես անտիճանաբար դարերի ընթացքում հասու են եղել Հայաստանին և հայերին:

Այն, որ չինական հանդերձանքը ծանոթ և հարգի է եղել միջնադարյան Հայաստանում, վկայում է 13-րդ դ. մատենագիր Կարապետ Սասնեցու՝ գայթակղության առարկաների հիշատակումը, որտեղ ի թիվս ոսկեղենի, գոհարեղենի, զենքերի և այլ աշխարհիկ բարիքների հիշված է նաև չինական հանդերձանքը[164]: Հեղինակը, անշուշտ, նկատի ունի մետաքսե հագուստները:

Չինաստանն առավելապես տարաշխարհիկ երկիր, քան որպես աշխարհագրական վայր է հիշատակվել նաև միջնադարի հայ պոետների գործերում: Ի դեպ, նկատենք, որ Չինումաչին ձևը ոչ որպես հեքիաթային վայր, այլ աշխարհագրական տարածք, վերաբերում է հարավ-արևելյան Չինաստանին: Հետաքրքրական է, որ երբեմն Չինումաչինն ընկալվել է որպես հեռավոր մի քաղաք, ինչպես 14-րդ դարի մեծ բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցու մոտ՝

[163] Կարծիք կա, որ հայերեն չնաշխարհիկ (չքնաղագեղ, տարաշխարհիկ) բառի արմատն է «*չինական աշխարհը*» (տե՛ս **Պողոսյան Ս.**, Ճենաց աշխարհ, Չինմաչին և վերջապես, Չինաստան, «Իրատես de facto», 28-31.10.2011): Սինչդեռ, ըստ Հ. Աճառյանի, այդ դեպքում բառը պիտի լիներ ճենաշխարհիկ: Նա տվել է իր ստուգաբանությունը, որ չնաշխարհիկ-ը կազմված է ոչ (չ) և աշխարհ բառերից, այսինքն՝ աշխարհից դուրս, ոչ այս աշխարհից, արտակարգ (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1926, էջ 630):
Այստեղ նշենք նաև, որ երբեմն սխալմամբ գրվում է, թե չինարենում Հայաստանի անվանումը՝ 亞美尼亞 (Յամեյնիյա), նշանակում է «արևելյան գեղեցիկ երկիր»: «*Հայաստան բառը չինարեն հնչում է «Յա-մեյ-նի-յա», որի հիերոգլիֆները նշանակում են «Ասիայի գեղեցիկ միանձնուհի»*» (**Հայրապետյան Թ.**, Արևելքը հայ ժողովրդական հեքիաթներում, էջ 19: Տե՛ս նաև՝ **Затикян М.**, Китайский иероглиф «Армения» означает красивая восточная страна, «Голос Армении», Ереван, 18.05.2010): Իրականում «Յամեյնիյան» ընդունվել է Հայաստանի համար, քանի որ այն կազմող հիերոգլիֆները հնչյունաբանորեն ամենամոտիկն են Արմենիա անվանը (ճշտումը կատարել է Ռուբեն Գինին):
[164] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության..., էջ 201-202:

Ի յայսմ աշխարհիս միջին,
Մեծիկ չեների Չին ու մէջին (Դու ես քաղաք Չին ու մաչին[165]):

Չինումաչինը որպես քաղաք է հիշատակված նաև 16-րդ դարի հեղինակ Գրիգոր եպիսկոպոսի բանաստեղծության մեջ՝

Քաղաք ասին Չին ու Մաչին,
Շինեալ հուրմուզ ծովու միջին,
Վաճառականք անդ ժողովին,
Վասն սիրոյ այն մարգարտին[166]:

Չինումաչին ձևը գործածվել է մինչև 17-րդ դար. 1634–1640 թթ. Գրիգոր Դարանաղցու (մոտ 1576–1643) «Ժամանակագրութեան» մեջ այն հիշված է «Չինն եւ Մաչինն» ձևով[167]:

Հայ մատենագիտության մեջ Չինաստանը հիշվել է նաև Խութայ և Խաթայ Խութայ ձևերով, որն էլ սովորաբար վերաբերում է հյուսիսային Չինաստանին: Որոշ ստեղծագործություններում այս երկու ձևերը գործածվել են զուգահեռ՝ որպես տարբեր աշխարհագրական հասկացություններ: Օրինակ, նմանապես 16-րդ դարի հեղինակ Կարապետ վարդապետի «Ոտանաւորս ասացեալ է Կարապետ վարդապետի ի վերայ որդոյն Նոյի, որ բաժանեցին զաշխարհս վեց բաժին» բանաստեղծության մեջ կարդում ենք՝

Խաթայ ու Խութայ ասեն,
որ է քախտ ազգին Լակզստան:
.....
Որ Չինումաչին կոչի
և կազմեն զդեղբսի Չինաստան[168]:

16-րդ դարի մեծագույն հայ քերթող Գրիգորիս Աղթամարցու բանաստեղծություններից է «Տաղ Աստուածատուր Խաթայեցւոյն» ստեղծագործությունը, որը ներկայացնում է քրիստոնեություն ընդու-

[165] **Հովհաննես Թլկուրանցի**, Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 220:
[166] Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), հատոր 1, աշխատասիրությամբ **Հ. Սահակյանի**, Երևան, 1986, էջ 319:
[167] Տե՛ս Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղէմ, 1915, էջ 548:
[168] Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.)...., էջ 203:

նած և Աստվածատուր վերանվանված ծագումով խաթայեցի մի երիտասարդի կյանքի և մարտիրոսության պատմությունը Քաղեշ քաղաքում[169]: Այստեղ հատկապես ուշագրավ է, որ հայ բանաստեղծն իր երկում հիշատակել է դալմուխների (կալմիկներ) և չինացիների քաղաքական հակամարտությունները, թե ինչպես «Խղթայու զօրքըն» մեծ արշավանք է կատարել դալմուխների դեմ և բոլորին գերեվարել: Սիա այդ գերիներից բաղիշեցի վաճառական Մխիթարը գնել է ու իր հետ բերել Հայաստան մի պատանի ծառայի և դարձրել քրիստոնյա, որին հետագայում սպանել են մահմեդականները, իսկ նրա վկայաբանության պատմությունը գրական գործի հիմք է դարձել: Թեև նորադարձ Աստվածատուրը փաստորեն եղել է ծագումով կալմիկ, սակայն Չինաստանից բերված լինելու պատճառով կոչվել է Խաթայեցի:

17-րդ դարի բանաստեղծ Նաղաշ Հովնաթանը ևս ունի խաթայախութայական հիշատակություններ իր քերթվածներում, մի տեղ՝ «*Քաղաք ես Խութայի, Մոսկով*», մեկ այլ տեղ՝ «*Էղ չկայ քեզ նման Խաթայի Խութայ(ն)*»՝ սիրելի էակին դարձյալ համեմատության մեջ դնելով տարաշխարհիկ մի երևույթի հետ[170]:

Ուշագրավ է, որ Խաթայ Խութայ ձևով Չինաստանը հիշատակվել է անգամ ավելի ուշ՝ 19-րդ դարում: Իսկ 13-րդ դարի հեղինակ Հեթում Կոռիկոսցու ֆրանսերեն երկի՝ 19-րդ դարում կատարված հայերեն թարգմանության մեջ Չինաստանի համար պահպանվել է նախնական ձևը. այստեղ Չինական ծովը հանդես է բերված «*ծովն Կաթայի*» ձևով[171]: Չինաստանը իր հին անուններով է հիշված նաև 19-րդ դարի կեսի հայ մամուլում («*Ի թագաւորութեան Չինաց (որ ասի Խաթայ Խութայի կամ Չինումաչին...)*»[172]). միաժամանակ գործածվել է նաև Սինեաստանը[173] և այլ ձևեր, իսկ երկիրը Չին ձևով հիշատակված է

[169] Տե՛ս **Գրիգորիս Աղթամարցի**, XVI դ., ուսումնասիրությունը, քննական բնագրերը և ծանոթագրությունները Մ. Ավդալբեկյանի, Երևան, 1963, էջ 128-129:
[170] Տե՛ս **Նաղաշ Հովնաթան**, Բանաստեղծություններ, ժողովածուն պատրաստեցին Ա. Մնացականյանը, Շ. Նազարյանը, Երևան, 1951, էջ 51, 234:
[171] Տե՛ս Հեթում Պատմիչ Թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 39:
[172] «Կովկաս», Թիֆլիս, 6.09.1847:
[173] Տե՛ս Քաղաքականք. Կալկաթա, «Ազգասէր», Կալկաթա, 26.12.1846, էջ 164:

հնդկահայերի մամուլում (Կալկաթայի «Ազգասէր Արարատեան», Մադրասի «Քանասէր», Սինգապուրի «Ուսումնասէր»):

Քննականաբար հարց է առաջանում, թե եղե՞լ է հակառակ երևույթը՝ Հայաստանը հիշատակվե՞լ է արդյոք չինական միջնադարյան պատմագիտական և գրական աղբյուրներում: Այս խնդրով զբաղվել են ավստրիացի արևելագետ Ռալֆ Քաուցը և չինացի իրանագետ Լիու Յինշենը «Հայաստանը չինական աղբյուրներում» ուսումնասիրության մեջ: Նրանք քննության են ենթարկել չինական աղբյուրներում հանդիպող մի քանի տեղանուններ, որոնք թերևս կարող են նույնանալ Հայաստանի հետ: Այսպես, «Ուշ Հաների պատմություն» երկում (ստեղծված մ. թ. 3–5-րդ դդ.) և «Վեյ լու» («Արևմուտքի ժողովուրդների նկարագրություն») անվանվող Վեյ հարստության հաշվետվություններում (գրված 239–265 թթ.) հիշվում է Աման երկիրը, որը հետազոտողները փորձել են նույնացնել Հայաստանի հետ, ինչը, սակայն, մնում է կասկածելի: Նրանք նշում են, որ Հայաստանը լավ են իմացել մոնղոլները և «Կորեական աշխարհի քարտեզը» կազմողները, որը ստեղծվել է չինական աշխարհագրական գիտական միջավայրում, մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանում և հավանաբար ներկայացնում է նույնիսկ Մեծ և Փոքր Հայքը: Նույն ժամանակաշրջանի չինական մեկ այլ աղբյուրում՝ «Մահմեդական դեղատոմսեր» («Հույհույ յաոֆան») աշխատության մեջ հիշվում է Չինաստանում «հայկական բժշկական նյութ» անունով հայտնի դեղամիջոցը: Վերջապես, Քաուցը և Յինշենը հիշատակել են 16-րդ և 18-րդ դարերի երկու այլ չինական աշխարհագրական տեքստեր, որտեղ հիշատակված է Հայաստանը և քննության առնված կովկասյան տարածաշրջանը: Հեղինակները գտնում են, որ Հայաստանը չինական աղբյուրներում հիշվում է առնվազն մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանից և որ միջնադարյան Չինաստանում առկա է եղել Արևմտյան Ասիայի աշխարհագրական վիճակի վերաբերյալ քաջատեղյա-

կությունում[174]: Հայաստանը հիշատակված է նաև մոտ 1270 թ. ստեղծված չինական «Ֆոզու տոնգջի» («Արևմտեան շրջանների պետությունների») քարտեզում, որը կազմվել է վերոհիշյալ «Արևմուտքի ժողովուրդների նկարագրություն» տրակտատի հիման վրա:

Հրաչյա Աճառյանի կարծիքով՝ չինարենից հայոց լեզու՝ Եվդոկիայի բարբառ է անցել քերականական մի ձև: Քննելով հարցական *մի* մասնիկի գործածությունը Եղոկիայի բարբառում՝ նա նշել է, որ այն ունի «մի» հարցական ձևը, փոխառված թուրքերենից: Իսկ թուրքերենում այդ մասնիկը փոխառված է չինարենից, որտեղ հարցականը կազմվում է *մո* (այժմ՝ *մա*) մասնիկով՝ դրվելով հարցական խոսքի վերջում: Չինարեն «չաո քա՛օ մօ» («վեռը բա՞ղձր է») Եվդոկիայի բարբառով և այլ արևմտահայերեն բարբառներով լինում է «վեռը բա՞ղձր է մի»: «*Այսպէսով մենք ունինք հայերէնի մէջ չինական մասնիկ մը, որ Թուրք ցեղին հետ Չինաստանէն ճամբայ ելլելով եկեր հասեր է Փոքր-Ասիա ու Պոլիս եւ հոն անցեր է մեր լեզուին: Անուղղակի փոխառութեան հրաշալի օրինակ մը չէ՞ այս*»[175],– հարցնում է Աճառյանը:

Ի դեպ, Աճառյանը թյուրքական լեզուներից հայերենին անցած բառերի մեջ նշել է նաև օսմանյան իրականությանն առնչվող չինական ծագում ունեցող երկու եզր՝ փայիզադ («թաթարական պատվի տախտակ»՝ չինարեն pai-tseu բառից) և նոյին («մոնղոլ իշխան»՝ չինարեն lao-ye)[176]: Աճառյանը հիշատակել է նաև հայոց մեջ գործածված չինական արմատով երկու իգական անձնանուն, երկուսն էլ հիշատակված 17-րդ դարում՝ Չինի և Չինիխան[177] (առաջինի մասին նշել է, որ այն մինչ օրս գործածվում է Ղարաբաղում): Հարկ է նշել նաև այն հանրահայտ իրողությունը, որ թեյի մշակույթի հետ մեկտեղ աշխարհի բոլոր լեզուները չինարենից են փոխառել այդ բառի զույգ ձևերը՝ թեյ և

[174] Տե՛ս **Kauz Ralph, Yingsheng Liu**, Armenia in Chinese Sources, "Iran and the Caucasus", Vol. 12, Number 2, 2008, էջ 175-190:

[175] **Աճառեան Հ.**, Հարցականի ձեւերը եւ չինարէն մասնիկ մը հայերէնի մէջ, Թէոդիկ, «Ամենուն տարեցոյցը», Կ.Պոլիս, 1912, էջ 137:

[176] Տե՛ս **Նույնի**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 278-279:

[177] Տե՛ս **Նույնի**, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ., էջ 213:

չայ (չինարեն 茶՝ չա՝ Պեկինի, թե՝ Ամոյի և ծայ-է՝ Թայվանի բարբառներով, որ բառացի նշանակում է դալար տերև): «*Չինաստանի հյուսիսային և հարավային բարբառների տարբերությունների աստիճանի մասին որոշ գաղափար են տալիս չայ ու թեյ ձևերը, որոնք միջնորդաբար անցել են նաև հայերենին և դարձել բարբառային ու գրական ձևեր*»[178]:

Չինացիների պատմության վերաբերյալ անորոշ տեղեկություններ են պահպանվել միջնադարյան մի անհայտ հայ հեղինակից: Հ. Ղևոնդ Ալիշանը վկայել է, որ «*Մորերի բազմահմուտ հեղինակ մեծ եւ հռչակաւոր կենսագիր Բառարանի յ'ԺԷ դարու կ'ըսէ թէ Միւլլեր Կրայթենակ անուամբ Գերմանացի մի բարգմանած ըլլայ ի հայերէնէ համառօտ Չինաց պատմութիւն մի. «Historiola de Sinis» (Մորերի, M., 356)*»[179]: Ալիշանի նշած անճշտությունը գերմանացի արևելագետ Անդրեաս Մյուլլեր ֆոն Գրայֆենհագենն (1630–1694) է, որը, ըստ վկայությունների, որոշ չափով տիրապետել է հայերենին և չինարենին[180]: Իսկապես, ֆրանսիացի հանրագիտակ Լուի Մորերիի (1643–1680) «Մեծ պատմական բառարանի»՝ Մյուլլերին նվիրված հոդվածում կա այդպիսի վկայություն[181]: Եվ քանի որ Մորերիի բառարանն առաջին անգամ լույս է տեսել 1674-ին, կարելի է ենթադրել, որ «Չինացիների համառոտ պատմությունը» հրատարակվել է այդ թվականից առաջ: Այդ լատիներեն գրքի լրիվ վերնագիրն է «Չինացիների համառոտ պատմություն, բարգմանված հայերենից. աշխարհագրական

[178] **Ջահուկյան Գ.**, Ջրույցներ լեզվի մասին, Երևան, 1993, էջ 7: Չայ բառը գործածել է նաև Սայաթ-Նովան իր նշանավոր «Քամանչա» երգում («*...առաջ չայի, դարիա գ'ուզիս*»): Այս բառը հաճախ ընկալվում է որպես ռուսական ազդեցություն (արևելահայերի մոտ) կամ թուրքական (արևմտահայերի մոտ), մինչդեռ 19-րդ դարում ռուսական կամ թուրքական իրականության հետ կապ չունեցող հնդկահայերն արդեն գործածել են այդ ձևը («*Չայ և սուրջ (sic) հարստաց են ըմպելիք...*», «Ազգասէր», Կալկաթա, 15.05.1847, էջ 158):

[179] **Ալիշան Հ. Ղ.**, Հայապատում, Ա, Վենետիկ, 1901, էջ 40, ծան. 2:

[180] Տե՛ս **Winkler Dietmar W., Li Tang**, Hidden Treasures and Intercultural Encounters, էջ 361:

[181] Տե՛ս **Moréri Louis**, Le grand dictionnaire historique ou Le mêlange curieux de l'histoire sacrée et profane: qui contient en abregé les vies et les actions remarquables des patriarches, des juges, chez P. Brunel, 1740, էջ 496:

ցանկին կցեց Անդրեաս Մյուլլեր ֆոն Գրայֆենհագենը» ("Historiola de Sinis ex Armenico versa, quam Imperii Sinensis Nomenclatori Geographico subjunxit Andreas Muller Greifenhagius")[182]: Լևոն Խաչիկյանը, վկայակոչելով Ալիշանի վերոբերյալ վկայությունը, նշել է, որ այս աշխատության ո՛չ բնագիրը, ո՛չ թարգմանությունը չեն պահպանվել[183]: Հիրավի, բանասիրական մեծ մարտահրավեր կլինի այդ գրքի իսկության և նրա հայկական բնագրի բացահայտումը...

1685 թ. Նոր Ջուղայում գրված մանկավարժ և բնագետ Կոստանդ Ջուղայեցու «Վասն նորահաս մանկանց եւ երիտասարդաց վաճառականաց խրատ» (կոչված նաև «Աշխարհաժողով գիրք») թվաբանության ծավալուն դասագրքում (ցարդ անտիպ) հանգամանորեն ներկայացված են տարբեր երկրների առևտրական կենտրոնները, շարադրված են միջազգային առևտրի հիմնական կանոնները, ներկայացված են տվյալ ժամանակաշրջանում տարբեր երկրներում գործածվող չափի և կշռի միավորները, ապրանքներն ու շուկաները: Այս ձեռագրում հիշվում են նաև Տիբեթը՝ Բութանդ (Բութանտ) անվամբ[184] և Չինաստանը՝ Խաթայ Խութ այ անվամբ («*Խաթայ եւ Խութայ բէ քաշերն բէ փողերն բէ առքն բէ ծախսն, որք Բութանդայ...*»[185]): Արևելյան Ասիայի բնակավայրերից հիշված են նաև Կոչինը (քաղաք Հնդկաստանում), Պեգուն (քաղաք Բիրմայում, այժմ՝ Բագո), Ինդոնեզիայի ներկայիս մայրաքաղաք Ջակարտան («*Ջաքարթայ, որ ումանք Բաթաւեայ կասեն*») և Ֆիլիպինների ներկայիս մայրաքաղաք Մանիլան[186]:

[182] Տե՛ս **Fabricius Johann Albert**, B. Jo. Alberti Fabricii, Opusculorum historico-critico-literariorum sylloge: quae sparsim viderant lucem nunc recensita denuo et partem aucta Indice instruuntur, sumtibus viudae Felgineriae, 1738, էջ 333:

[183] Տե՛ս Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցու Հաշվեմատյանը, էջ 31: Այստեղ Մորերիի անունը տրված է Մորիերի ձևով, Միլլէր Կրայֆէնակի անունը սխալմամբ նշվել է Ս. Կրայֆէնակ, իսկ տողատակին, թ. 55 ծանոթագրության մեջ Ալիշանի գրքի էջը սխալմամբ նշված է 23:

[184] Տե՛ս Մատենադարան, ձեռագիր թ. 10704, էջ 101, 119-120:

[185] Նույն տեղում, էջ 101, 120:

[186] Նույն տեղում, էջ 101, 117:

Նույն 17-րդ դարում գերմանացի փիլիսոփա և աշխարհագրագետ Պետեր Ապիանի (Պետրուս Ապիանուս, 1495–1552) «Կոսմոգրաֆիա» աշխատության հայերեն թարգմանության մեջ (կատարված 1621-ին, ցարդ՝ անտիպ) թարգմանիչ Հովհաննես Անկյուրացին (հայտնի նաև որպես Ջուանցի Մոլինո, ?– 1643) Չինաստանը թարգմանել է «*Խաթաւ բագաւորութիւն*» և «*Խաթայի երկիր*» ձևերով[187]:

18-րդ դարում է գրվել Չինաստանի մասին հայերեն առաջին աշխատությունը՝ Հակոբ պատրիարք Նալյանի «Պատմութիւն թագաւորութեան Քինայի» երկը, որը մնացել է անտիպ և պահվում է Երուսաղեմի հայկական մատենադարանում (ձեռագիր թիվ 387)[188]: Նալյան պատրիարքը 1757–1759 թթ. կազմել է նաև «Աշխարհացոյց» ծավալուն գիրքը՝ հայ և օտար աղբյուրների հիման վրա, որի հինգերորդ մասի 17 գլուխները վերաբերում են Չինաստանին: Հեղինակը մանրամասնորեն անդրադարձել է չինական գիտությանը, արվեստին, փիլիսոփայությանը, մետաքսագործությանը, հախճապակեղենին և այլ թեմաների:

Հայ հնատիպ գրքերի մեջ կա Չինաստանին վերաբերող երկու թարգմանական հատոր: Դրանք երկուսն էլ լույս են տեսել 1780-ականներին, Իտալիայի Տրիեստ քաղաքում, Մխիթարյանների տպարանում և թարգմանվել են նույն անձի՝ Մարգար Շահրիմանյանցի կողմից: Առաջինը Չինաստանում քարոզած ճիզվիտ քահանա Լուդովիկոս Քոմբեանցի (իսկական անունը՝ հավանաբար Լոդովիկո Կոմոտի) «Թուղթք գչինաց» աշխատությունն է, տպագրված 1783-ին, թարգմանված ֆրանսերեն բնագրի անգլերեն թարգմանությունից: Գրքի տիտղոսաթերթն է՝ «*Թուղթք պատմական Հօր Լուդովիկոսի Քոմբեանց խումբ զորպիսութեամբ երկրին Սինէացւոց, որ է Չին կամ Չինումայիճ*»: Այն մանրամասն տեղեկություններ է հաղորդում Չինաստանի աշխարհագրության, պատմության, ժողովրդի, լեզվի վերաբերյալ: Նշված գրքերից բացի՝ 18-րդ դարի վերջին Մխիթարյանների

[187] Տե՛ս Մատենադարան, ձեռագիր թ. 1780, էջ 377, 380:

[188] Տե՛ս **Բանդալեան Գ.**, Յակոբ պատրիարք Նալեան (1701–1764), կեանքը, գործերը եւ աշակերտները, Վտանպոլ, 1981, էջ 33:

տպագրած և վաճառականների համար նախատեսված հաշվապահական և առևտրական ուղեցույց գրքերում տվյալներ կան Հեռավոր Արևելքի երկրների պատմության, աշխարհագրության, բնակիչների կյանքի և կենցաղի մասին, որոնցում ընդգրկված են նաև Չինաստանին վերաբերող գլուխներ:

Մի քանի տարի անց, 1788-ին, Շահրիմանյանցը հրատարակել է Չինաստանին մասամբ վերաբերող իր մեկ այլ թարգմանություն՝ իտալացի հեղինակ Պետիսե Դելլա Կրուչեի «Չինգիզխանի պատմությունը»[189], որի մի քանի գլուխ ամբողջովին վերաբերում է միջնադարյան Չինաստանի պատմությանը, ինչպես՝ «Առաջին պատերազմն Ճէնկիզխանի ընդդէմ հիւսիսային աշխարհին Սինէեացւոց, որ կոչի Խաթայի», «Տիրապետութիւն Փէքինի Մայրաքաղաքի Սինէեացւոց աշխարհին կամ Խաթայոյ» և այլն: Մի փոքր ուշ, 1805-ին, Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանի հրատարակած համաշխարհային աշխարհագրությանը նվիրված գրքում մեծ տեղ է տրված Չինաստանին[190]:

[189] Տե՛ս **Քէքիսէ Տելլա Քոչէ**, Պատմութիւն Ճէնկիզ Խանի, Տրիեստ, 1788:
[190] Տե՛ս **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկէի եւ Ամերիկայի: Մաս առաջին, Ասիա, հատոր Դ, Վենետիկ, 1805, էջ 180-287:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

ա) 13–15-րդ դդ.

Ինչպես նշվեց, Չինաստանում առաջին հայ համայնքները հիմնվել են արդեն Տաճ հարստության օրոք: Տակավին 1145-ին Եվրոպայում հայտնի է դարձել Հովհաննես երեցի անունը, որը Հեռավոր Արևելքում զբաղվել է տեղի քրիստոնյա համայնքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելով և Եվրոպա ուղարկելով: Նրա անունն ու գործը հիշված են մի շարք եվրոպական աղբյուրներում: Հավանական է, որ այդ Հովհաննեսը եղել է հայորդի:

Ենթադրվում է, որ 7–8-րդ դդ. սկսած հայերը հասել են Չինաստանի սահմանին գտնվող Իսիկ-Կուլ լճի հարավը (այժմ՝ Ղրղզստանում): Այստեղ, չինական սահմանի մոտ, Փիշպեկ գյուղի նեստորական գերեզմանատանը 1892-ին հայտնաբերվել է 1323 թ. վախճանված ոմն Հովհան եպիսկոպոսի ասորերեն-հայերեն տապանաքարը. այն ներկայումս պահվում է Պետերբուրգի Էրմիտաժում[191]: Ուսումնասիրողներն իրավամբ եկել են այն եզրակացության, որ տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե հայրենիքը լքած առանձին անհատի հետ, այլ որ Իսիկ-Կուլ լճի ափին 14-րդ դարում եղել է հայկական համայնք, Սուրբ Մատթեոս վանք (որտեղ ըստ ավանդության, պահվել է Մատթեոս առաքյալի մարմինը), իսկ Հովհաննեսը եղել է նրանց հոգևոր առաջնորդը[192]: Ենթադրվում է, որ այս վանքը կործանվել է իլխանի օրոք[193]:

[191] Տե՛ս **Աչարեան Ա.**, Պատմութիւն հայ գաղթականութեան, հատոր 1, էջ 317: **Խաչիկյան Լ.**, Հայ պատմագրության անհայտ էջերից, ՊՔՀ, Երևան, 1972, թ. 4, էջ 243-244, **Արրահամյան Ռ.**, Չինաստան, էջ 425: **Гиин Р.**, Andin..., էջ 100-104:
[192] Տե՛ս **Միհրան**, Չինացիք և հայերը, նույն տեղում:
[193] Միջնադարում Կենտրոնական Ասիայի հայ համայնքի և հայ-կենտրոնասիական առնչությունների մասին տես՝ **Ставиский Б.**, О связях между Средней Азией и Арменией в древности и общих элементах в их искусстве, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում. զեկուցումների ժողովածու, հ. I, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, էջ 209-218: **Comneno Maria Adelaida Lala**, L'Armenie et l'Asie Centrale, «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը» ժողովածու, պատ. խմբագիր՝ Պ. Մ.

Երբ մոնղոլական Խուբիլայ խանը գրավել է Չինաստանը, նրա տիրապետության ժամանակ (1260–1294) Յուան կայսրության բնակչությունը բաժանված է եղել չորս խմբի, որոնց մեջ Արևմտյան Ասիայի և Եվրոպայի քրիստոնյաները կազմել են «սեմու» կամ «սեճեն» կոչվող խումբը[194]: Չինաստանի հայ բնակիչներն, այսպիսով, մտել են այս խմբի մեջ: Խուբիլայ խանի եղբայր Հուլաղու խանը, չվստահելով տեղական չինացի բնակչությանը, մեկնել է Պարսկաստան և Թուրքեստան, բերել բազմաթիվ հարկահավաքների, գինվորականների, գիտնականների, պետական պաշտոնյաների, նաև հայ և հրեա վաճառականների՝ ծառայելու համար իր արքունիքում[195]: Ըստ հ. Ալիշանի՝ Քուբլա (Խուբիլայ) խանի ժամանակ մոնղոլ խանի զարքխանեն (փողերաևոցը) հայեր են գլխավորել[196]:

1231–1245 թթ. Ղարաղորումում մոնղոլների մեծ դանի արքունիքում որպես գերի ապրել է Խլաթի ամիրայության հայ սուլթանուհի, Խորեզմի շահ Ջալալեդդինի կին Թամթան: 1245-ին Ղարաղորում գալով, վրաց Ռուսուդան թագուհու դեսպան Համադոլը միջնորդել է Թամթայի համար և ազատել նրան: Մոնղոլ մեծ դանը Թամթային է հանձնել հրովարտակ՝ նրան նշանակելով Խլաթի ամիրայության լիիրավ կառավարիչ: Խաչենի տեր Հասան Ջալալը (մահացել է 1261-ին) Մանգու (Մունքե) մեծ խանի օրոք (1251–1259) այցելել է Ոսկե Հորդա, հինգ տարի ապրել այնտեղ և խանից նվեր ստացել նեֆրիտի երախակալով դաշույն, որի վրա թողել է մակագրություն հայոց լեզվով[197]:

Մուրադյան, Երևան, 2000, էջ 157-162: **Վրամ արք. Պազարյան**, Հայ առաքելական եկեղեցին Միջին Ասիայում Ե-ԺԵ դարերում, Երևան, 2008: Տե՛ս նաև «Հայկական աղբյուրները Ղազախստանի և Կենտրոնական Ասիայի մասին» ղազախերեն ժողովածուն (Орталық Азия мен Казакстан тарихына Катысты армян деректемелрі, Алматы, Dyke Press, 2010):

[194] Տե՛ս **Кадырбаев А. Ш.**, Тюрки и иранцы в Китае и Центральной Азии XIII-XIV вв., Алма-Ата, 1990, էջ 63.

[195] Տե՛ս **Wong Frank**, Pirooz in China, www.chinapage.com/minority/iran.html.

[196] Տե՛ս **Ալիշան հ. Ղ.**, Սիսական, էջ 84:

[197] Այդ դաշույնը 1909 թ. հայտնաբերել է Հովսեփ Օրբելին Արցախ կատարած իր գիտական շրջագայության ժամանակ (տե՛ս **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու. 1934-1986, Երևան, 1986, էջ 577):

1254-ին բելգիացի ճանապարհորդ, ֆրանցիսկյան կրոնավոր Գիյոմ դը Ռյուբրյուկը Գոբի անապատում հանդիպել է մի հայ կրոնավորի, որը նրան հայտնել է Հռոմ մեկնելու և Սուրբ Հակոբի ուխտավայրն այցելելու իր փափագի մասին[198]: Նրա վկայությամբ՝ մոնղոլների մայրաքաղաք Ղարաղորումում ապրել են հայեր, մեծ մասամբ՝ գերիներ: Ռյուբրյուկը մասնավորապես հիշել է Ղարաղորումում ապրող քահանայի որդի մի հայի, որը Մանգու խանին գոհարազարդ արծաթե խաչ է նվիրել և պատմել, որ արաբները քանդել են իր եկեղեցին: Մանգու խանը հետաքրքրվել է, թե որքան կարժենա վանքի վերաշինությունը և հանձնարարել է նամակներ տալ այդ հային՝ այդ գումարը Պարսկաստանի և Մեծ Հայքի հարկերից արծաթ դրամով վճարելու նպատակով[199]:

Միջնադարում Չինաստանում հայերի ներկայության լրացուցիչ ապացույց է Մուլեյ կանտոնի Սինծյանի մոտակայքում հայտնաբերված հայկական դրամը, որը պատահաբար գտել է մի գյուղացի իր դաշտում աշխատելիս: Մետաղադրամի վրա պատկերված է թագավոր՝ ֆրանսիական շուշանով, ՄԻ նշանը, առկա են նաև մակագրություններ՝ «*Հեթում թագաւոր հայոց*» և «*Շինեալ ի քաղաքն ի Սիս*»[200]: Մարկո Պոլոն և Կիրակոս Գանձակեցին վկայել են, որ Կիլիկիայի Հեթում թագավորը և նրա եղբայր Սմբատ Գունդստաբլը 1254-ին ճանա-

[198] Տե՛ս **Bacci Michele**, An Armenian Pilgrim in Medieval Italy: Cult and Iconography of St. Davinus of Luce, Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, զեկուցումների ժողովածու, Երևան, 2004, էջ 549:

[199] Տե՛ս **Հակոբյան Հ.**, Ուղեգրություններ, հատոր Ա, Երևան, 1932, էջ 7:

[200] Տե՛ս **Վարդանյան Է.**, Կիլիկյան հայկական դրամ Չինաստանում, «Հայ արվեստ», 2002, թ. 2, էջ 28: Այստեղ վկայված է, որ չինացի գիտնական Գուոսին Ծյանը «Սինծյանի դրամագիտություն» հանդեսում իր հրատարակած «Մուլեյում գտնված «ՄԻ» նշանով մոգական դրամ» հոդվածում չճանաչելով հայերեն տառերը, ՄԻ-ն ընկալել է որպես չինական հիերոգլիֆ՝ «քրնճի հատիկ» նշանակությամբ, իսկ մարդու պատկերը՝ դրսդրդ Ջունգարիայից (մարզ Չինաստանի հյուսիս-արևմուտքում). տե՛ս Tang Guoxing, Mulei faxian "mi" zi fu tongbi, "Xinjiang qianbi", 1998, p. 3, էջ 12: Սխալը ընկատել է Ֆրանսիայի Ազգային գրադարանում պահվող չինական դրամների ֆոնդապահ Ֆ. Թիերին (տե՛ս **F. Thierry,** Un monnaie arménienne de Hetoum I (1226–1270) trouvée au Xingiang (Chine), «Bulletin de la Société Français de numismatique», Paris, 2000, no 3, էջ 49-50):

պարհորդել են Մոնղոլական կայսրության մայրաքաղաք Ղարաղորում (Խարա-Խորին), այցելել Մանգու խանին և դաշինք կնքել նրա հետ[201]: Սինճյանը գտնվել է մոնղոլ խաների մայրաքաղաքից մոտ 1000 կիլոմետր հեռավորության վրա, ուստին այդ տարածքում կիլիկյան դրամի հայտնագործումն աներկբայորեն կարող է կապվել Հեթումի սույն ճանապարհորդության հետ:

Իրենց հերթին, Հայաստանում գտնվել են չինական խորհրդանիշներով դրամներ, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել է ֆրանսիացի դրամագետ Ժորժ Դեպեյրոն[202]:

Ավելի ուշ հայերը ցամաքային ճանապարհով թափանցել են Չինաստանի խորքերը և հասել մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը և կամ Չինաստանի արևելյան ափերն են հասել հնդիկ առևտրականների հետ՝ ծովային ճանապարհով: Նրանք մասնավորապես հաստատվել են Ֆորմոսայի (այժմ՝ Թայվան) ծովածոցում գտնվող Գուանճոու (եվրոպական անունով՝ Կանտոն) նավահանգստային քաղաքում, ինչպես նաև ավելի հյուսիսում գտնվող Ծյուանճոու քաղաքում՝ հայտնի նաև արաբական ձևով՝ Զայթուն կամ Սայթոն, որը, ճիշտ հայկական Զեյթունի պես անվանվել է ի պատիվ այդ շրջանում հարուստ զեյթունի ծառերի՝ ձիթենիների[203]:

Չինական աղբյուրները վկայում են, որ Գուանճոուում միջին դարերում եղել է «*օտարականների քաղաքում*», որտեղ իջևանել են առևտրականները և ապրել են Չինաստանում մշտական բնակություն հաստատած օտարերկրացիները: Այդ համայնքն ունեցել է իր դեկավարը՝ հաստատված չինական իշխանությունների կողմից[204]: 1906 և 1908 թթ. հնագետ Պոլ Էմանուելը Գուանճոուում կատարել է պեղումներ և հայտնաբերել ասորատառ, պարսկատառ և արաբատառ շիրմաքարեր. ենթադրվում է, որ ասորատառ տապանաքարերի մի մասը պատկանել է հայերին: Այս քաղաքի հայերի մասին վկայություններ են պահպանվել ֆրանցիսկյան միաբանության անդամների՝ Հռոմ ուղարկած զեկուցագրերում, որոնք իրենց աշխատություններում ներկայացրել են Ժան Դովալյեն և Ռաֆայել Աբրահամյանը:

Իտալացի քարոզիչ, եպիսկոպոս Անդրեա դա Պերուջան (Անդրեաս Պերուջիացի), որին 1307-ին Հռոմի Պապը քարոզելու է ուղարկել Չինաստան, մի նամակում հիշել է, որ կանտոնաբնակ մի մեծահարուստ կաթոլիկ հայուհի իր ծախսով Ծյուանճոուում կառուցել է տվել մի եկեղեցի, որ կտակել է լատին ֆրանցիսկյաններին: Եկեղեցու կառուցման թվականը նշվում է 1313-ը (Ալիշանը ենթադրել է, որ կարող էր կառուցված լինել 13-րդ դարի վերջին[205]): Ըստ Անդրեաս Պերուջիացու, «*Օվկիանոսի ափին փռված է մեծ քաղաքը, որ պարսիկների լեզվով Զայթոն է կոչվում: Եվ այդ քաղաքում հայ տիկինը կանգնեցրեց մի գեղեցիկ և ընդարձակ եկեղեցի, որը հետո արքեպիսկոպոսը դարձրել էր աթոռանիստ, և [տիկինն] իր սեփական ցանկությունն էր արտահայտել, քանի դեռ ինքն ապրում է, և մահից հետո համարժեք կտակ թողեց եղբայր Ժերար արքեպիսկոպոսին, որն առաջինը զբաղեցրեց միևնույն աթոռը, և մեր եղբայրներին, ովքեր Ժերարի հետ էին*»[206]: Մեկ այլ նամակում նա նշել է, որ «*Զայթոն (Յայթոն) քաղաքում մենք ունենք մի լավ եկեղեցի՝ նստավայրով, որ Հայաստանի մի տիկին թողել է մեզ, և անհրաժեշտություններ է նշել մեզ համար և մյուսների, եթե նրանք գան*»[207]:

[201] Տե՛ս **Ճնախիրճյան Մ. Հ.**, Կիլիկիայի հայկական պետությունում հայ-վրացական հարաբերությունները, «Էջմիածին», 1998, թ. Բ-Գ, էջ 193: Հայտնի է, որ Մանգու խանը Սմբատին նվիրել է մի մոնղոլուհու՝ Բխաստախավոր խաթունին:

[202] Տե՛ս Звонкие монеты прошлого. Интервью Дианы Степанян с Жоржем Депейро, французским исследователем в области нумизматики, «Анив», но 3, 2009, էջ 71:

[203] Այս քաղաքի անունից է ծագել այնտեղ արտադրվող կերպասի մի տեսակի՝ սատինի անվանումը (տե՛ս **Ալիշան Հ. Ղ.**, Սիսական, էջ 469): Ի դեպ, վաղ միջնադարյան Չինաստանում ձիթապտուղը հայտնի է եղել հենց զեյթուն անվամբ (տե՛ս **Шефер Э.**, Золотые персики Самарканда, էջ 200):

[204] Այս մասին մանրամասն տե՛ս **Вельгус В. А.**, Средневековый Китай, Москва, 1987, էջ 29-32:

[205] Տե՛ս **Ալիշան Հ. Ղ.**, Սիսական, էջ 469:

[206] **A. C. Moule**, Christians in China Before the Year 1550, p. 192.

[207] Նույն տեղում, էջ 209:

Հայ պատմագրության մեջ Կանտոնում հիմնադրված այս քրիստոնեական եկեղեցու մասին առաջինը թերևս հիշատակել է Մխիթարյան պատմաբան Եփրեմ Չագըճյանը: Նա մասնավորապես գրել է. *«ԺԴ. դարուն սկիզբը Գանրոն քաղքին մէջ Հայոց ընտանիք գտնուին՝ Անդրէաս նոյն քաղքին եպիսկոպոսը մեզի կ՚աւանդէ, եւ միանգամայն պատմէ թէ անոնցմէ հարուստ տիկին մ՚իր ծախքովն եկեղեցի մը շինել տուած է»*[208]: Ավելի մանրամասն է տեղեկացրել ժամանակի հայ մամուլում տեղ գտած մի ինֆորմացիա, որն ավելորդ չենք համարում մեջբերել ամբողջությամբ.

«Այն ատենները Քայթու (sic) ըսուած ընդարձակ եւ գեղեցիկ քաղաքը՝ որ ծովէն շատ հեռու չէր, հայազգի մեծ հարուստ կին մը կը բնակէր: Հաւանական է որ այս քաղաքը հիմիկուան Հան Չէու Ֆու ըսուածն է որ Չէ Քեան գաւառին մայրաքաղաքն է: Շատ քրիստոնեայ կայ հոն, բայց տօն օրերը Աստուածային պաշտօնի ժողվուելու համար՝ մէկ յարմար տեղ մը չունէին: Այս հայազգի խաթունը իր ջերմեռանդ բարեպաշտութիւնովը իր անբաւ ճոխութիւնը Աստուծոյ փառաց եւ հոգւոց փրկութիւնը նուիրելու կամք ըրաւ. եւ քրիստոնէից մէջ ծիսից տարբերութիւն չնայելով՝ հոն գտնուող ամեն ազգի քրիստոնէից ծառայելու մեծաշէն եկեղեցի մը շինեց, որ Ճօվանի տի Մոնդէ Քօրվինօ լատին արք եպիսկոպոսը աթոռանիստ ըրաւ եւ գաւառը անոր թեմ սահմանեց եւ հոգեւոր կառավարութիւնը Ճերարտօ եպիսկոպոսին յանձնեց, որ քիչ ժամանակէն վախճանելով անոր յաջորդեց Պեղեգրինոս: Այս վիճակին հովիւն էր 1326 թուին Անդրէաս Բէրուճիացի եպիսկոպոսը որ Բէրուճիայի վանքին մեծատրին խրկած մէկ նամակին մէջ այս բաներս կը պատմէ»[209]: Կաթոլիկ եկեղեցու արքեպիսկոպոսն այս շինությունը որպես Մայր տաճար է գործածել: Եկեղեցուց զատ՝ մեծահարուստ հայուհին կառուցել է տվել նաև մի երիցատուն և նույնիսկ

[208] **Չագըճեան Հ. Ե.**, Պատմութիւն հայոց Հայկազանց տէրութեան սկսելէն մինչեւ մեր ժամանակը, Վիէննա, 1851, էջ 451:
[209] Հայազգի կին մը Չինաստան, «Երեւակ», Կ.Պոլիս, 1860, էջ 329-330:

եկեղեցականների կյանքի ապահովության համար կարգադրություններ է կատարել[210]:

Հայերի հետ առնչություններ է ունեցել 13-14-րդ դարերի նշանավոր գործիչներից մեկը՝ Պեկինի արքեպիսկոպոս, իտալացի ֆրանցիսկյան քարոզիչ, ճանապարհորդ և պետական գործիչ Ջովաննի դա Մոնտեկորվինոն (1246–1328): Սկսելով Չինաստան իր ուղևորությունը 1289 թվականին, նա, ի թիվս մի շարք երկրների, անցել է նաև Հայաստանով և նամակ հանձնել նաև հայոց թագավորին՝ Կիլիկիայի թագավոր Լևոն Գ-ին (1269–1289) կամ Հեթում Բ-ին (1289–1296): Արդեն 1294-ին Չինաստանում նա առնչություններ է ունեցել չինաբնակ հայերի հետ, որոնք նրան որոշակի օգնություն են ցույց տվել: Ինչպես հայտնի է դառնում Մոնտեկորվինոյի զեկույցներից, 1309–1310 թթ. որոշ հաջողության է հասել նեստորականների դեմ պայքարում: Նա իր առաջին լուրջ հաջողությունը համարել է չինաբնակ հայերին նեստորականների ազդեցությունից հանելը, որոնք ոչ միայն կաթոլիկություն են ընդունել, այլև մեծապես օժանդակել են Մոնտեկորվինոյի քարոզչական գործունեությանը: *«Եվ Քրիստոսի այլ ժողովուրդներ, ովքեր ատում են հերձվածող նեստորականներին, հետևել են եղբայր Ջովաննիին, և հատկապես հայերը, որոնք այժմ իրենք կառուցում են մի նշանակալից եկեղեցի, որ մտադիր են տալ նրան* (Ջովաննիին - Ա. Բ.)»[211]:

Ժան Դովիլյեն եվրոպական արխիվների վրա հիմնվելով՝ հիշել է նաև 13-րդ դարում Յուան կայսրության մայրաքաղաք Խանբալըքի (Պեկին) մարդաշատ և տնտեսապես հարուստ հայ համայնքի գոյության մասին: Նրանք, ինչպես նաև չինաբնակ հայության մեծ մասը, անսալով ֆրանցիսկյան քարոզիչների (հատկապես Ժան դը Մոնդ

[210] Տե՛ս **Moule A. C.**, Christians in China Before the Year 1550, էջ 191-192, 209: **Դերենիկ եպիսկոպոս**, Հայեր Ծայրագոյն Արեւելքի մէջ, «Արեւ», Գահիրէ, 1.08.1958: **Նույնի**, Չինաստանի հայ վաճառականներ եւ Յովհաննէս Ղազարեան, «Սիոն», Երուսաղէմ, 1959, թ. 11-12, էջ 276: Տե՛ս նաև՝ **Խաչատրեան Գ.**, Հայերէնը միջազգային լեզու միջին դարերում. հայուհիի մը եկեղեցին Չինաստանի մէջ, «Այգ», Պէյրութ, 9.09.1966: **Крюков М. В., Малявин В. В., Софронов М. В.**, Этническая история китайцев на рубеже средневековья и нового времени, Москва, 1987, էջ 47:
[211] **Moule A. C.**, Christians in China Before the Year 1550, p. 208.

Կորվինոյի) գործունեությանը, դավանափոխ են եղել՝ ընդունելով կաթոլիկություն[212]: Դովիլյեն նաև նշել է, որ Խանբալըքում հայերը նույն հարյուրամյակում կառուցել են մի գեղեցիկ և աչքի ընկնող եկեղեցի: Թեև այդ մասին վկայություններ չկան, սակայն եկեղեցու կառուցման հանգամանքը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ Խանբալըքի հայությունը տեր է եղել մեծ եկամուտների[213]:

Թեև այս ժամանակաշրջանում Չինաստանի սահմանները փակ են եղել օտարականների, հատկապես քրիստոնյաների համար, սակայն դա առաջին հերթին վերաբերել է եվրոպացիներին, իսկ հայերը և ասիացի քրիստոնյաները բացառություն են եղել: Այս պատճառով որոշ եվրոպացիներ Չինաստան մուտք են գործել հայանուն և հայկական տարազով[214]: 16–17-րդ դդ. Չինաստան հայկական տարազով են մուտք գործել մասնավորապես եվրոպացի ճանապարհորդներ և միսիոներներ Պերուջինո դե Կաստելանը, Ժան դը Մոնդ Էուվենիոն, Մեթյու Ռոչիենը և Բենտո դե Գոիշը[215]:

Հատկանշական է պորտուգալացի ճիզվիտ կրոնավոր Բենտո (Բենեդիկտ) դե Գոիշի (1562–1607) պարագան: Նա առաջին հայտնի եվրոպացին է, որը ցամաքային ճանապարհով հասել է Չինաստան: 17-րդ դ. սկզբին դե Գոիշը Լահորից ճանապարհվել է Չինաստան՝ ապահովության համար կրելով հայկական տարազ և ներկայանալով որպես հայ վաճառական՝ Աբդուլլահ Իսահ[216]: Նա կրել է նետ ու աղեղ, եղել մորուքով և երկարամազ՝ չճանաչվելու համար որպես եվրոպա-

[212] Տե՛ս **Dauvillier Jean**, Les arméniens en Chine..., էջ 12-13:
[213] Նույն տեղում, էջ 17: Տե՛ս նաև՝ **Արրահամյան Ռ.**, Չինաստան, էջ 428-429:
[214] Այս մասին մանրամասն տես՝ **Gulbenkian Roberto**, L'habit arménien, laissez-passer oriental pour les missionnaires, marchands et voyageurs européens aus XVIe et XVIIe siècles, «Revue des études arméniennes», Paris, nouvelle série, tome 25, 1994-1995, էջ 369-388:
[215] Նույն տեղում, էջ 377:
[216] Տե՛ս **Semedo Alvaro**, Historica relatione del gran regno della Cina..., p. 24. Dell'Istoria Della Compagnia Di Giesu. La Cina. Terza parte dell'Asia. Descritta dal P. Daniello Bartoli della medesima Compagnia, Roma, Varese, MDCLXIII (1663), էջ 466: Տե՛ս անգլերեն թարգմանությունը՝ China in the Sixteenth Century: The Journals of Matthew Ricci: 1583-1610. Translated by Louis J. Gallagher, Random House, 1942, էջ 500:

ցի[217]: Իրեն ուղեկից է ընտրել Լահորից մի հայ վաճառականի՝ Իսահակ անունով: Նրանք մեկ տարի անց են կացրել Չինաստանի տարածքում գտնվող Քաշգարիայի (այժմ՝ Քաշի, ՉԺՀ տարածքում) մայրաքաղաք Յարքանդում՝ սպասելով Պեկին մեկնող քարավանի: Այդ քարավանները տարին մեկ Խաթայի մայրաքաղաք (այսինքն՝ Պեկին) տարել են հասմկաքարը՝ որպես նվեր Կենտրոնական Ասիայի երկրներից Չինաստանի կայսերը: 1604-ին այդպիսի մի քարավանի հետ դե Գոիշը և Իսահակն իրենց ծառաներով ճանապարհվել են Չինաստան, սակայն մնացել են չինական սահմանային Սուճոու քաղաքում, քանի որ չինական Սին կայսրությունը դժվարություններ է հարուցել օտարականների՝ երկիր մուտք գործելու համար. ամիսներ են պահանջվել, մինչև որ Կենտրոնական Ասիայի առևտրականները (դեսպանները) կարողացել են արտոնություն ստանալ ճամփորդելու Չինաստանում: Սուճոուում էլ հայր Գոիշը վախճանվել է՝ կրած ֆիզիկական դժվարությունների և կամ, ըստ մի վարկածի, թունավորման պատճառով: Իսահակը վերցրել է նրա բոլոր օրագրությունները, փաստաթղթերը և անձնական իրերը, չինացի ճիզվիտ Ջոն Սինլինի (Ժոան Ֆեռնանդես) հետ հասել Պեկին, գտել կաթոլիկ քարոզիչներին և նրանց է հանձնել դե Գոիշի թղթոնները[218]: Քարոզիչ Նիկողայոս Տրիգոնեսը մանրամասն գրառել է Իսահակի պատմածն իր ուղևորության, ճանապարհին իրենց հանդիպած քրիստոնյա համայնքների մասին: Շուտով վերադառնալով Եվրոպա՝ Տրիգոնեսը 1618-ին Քյոլնում հրատարակել է մի լատիներեն աշխատություն, որտեղ հետաքրքիր տվյալներ է հաղորդել Չինաստանի քրիստոնյաների մասին: Ըստ Լևոն Խաչիկյանի՝ Իսահակի պատմածների շնորհիվ հնարավոր է եղել առաջին անգամ եվրոպացիների համար ճշտել մի հին աշխարհագրական թյուրիմացություն: Մինչև 17-րդ դարի 20-ական թվական-

[217] Տե՛ս **Gulbenkian Roberto**, L'habit arménien..., էջ 377: Դե Գոիշի նկարը հայկական հագուստով տես՝ նույն տեղում, էջ 378:
[218] Տե՛ս **Yule Henry**, Cathay and the Way Thither, Asian Educational Services, New Delhi, 2005, էջ 178-254: **Po-chia Hsia R.**, A Jesuit in the Forbidden City: Matteo Ricci 1552-1610, 2011, էջ 280-281:

ները Եվրոպայում չեն իմացել, որ Խաթա կամ Խաթայ (Կիտայ) արևելյան երկիրը նույն Չինաստանն է, իսկ նրա մայրաքաղաք Խանբալըքը և Պեկինը՝ միևնույն քաղաքը[219]:

բ) 17–18-րդ դդ.

17–18-րդ դդ. հայերի նորանոր խմբեր են հաստատվել Չինաստանի ծովափնյա քաղաքներում: Արդեն 17-րդ դարի կեսին հայ պատմիչն արձանագրել է հայոց ներկայությունը նաև Չինաստանում: «*Մինչ ի Հնդիկս ներքինս եւ յԵթովպիա եւ յԵգիպտոս եւ յամենայն աշխարհս Ֆռանգաց եւ ի Կոստանդինուպօլիս եւ յամենայն աշխարհն Թրակացւոց եւ Գութացոցն, որ են Լեհաց եւ Ռուսաց եւ Մոսկոֆաց եւ Վրկանաց եւ ընդ ամենայն աշխարհն Թուրքաց եւ Քրդաց եւ Քաղդէացւոց եւ ամենայն Պարսկաստանաց եւ արեւելեայս՝ մինչեւ ի Չինն եւ Մաւչինն, ի Թօնն եւ ի Թօնճան եւ յԱնգափան եւ յամենայն աշխարհին Տաթարաց եւ Ախխազաց, մինչեւ ի ծագս աշխարհաց անծանօթից, որպէս զիրշի ցիր եւ ցան եղեալք*»[220]:

Այս շրջանում չինաբնակ հայերը մեծ մասամբ եղել են ջուղայեցիներ և հնդկահայեր, ուստին իրավացի է Հրաչյա Աճառյանը՝ չինահայ գաղթականության երկրորդ փուլը համարելով հնդկահայ գաղթականության մի ճյուղը[221], որն էլ, ինչպես հայտնի է, իր հերթին սկզբնավորվել է Նոր Ջուղայից, որ հիմնվել է Շահ Աբբասի բռնագաղթի հետևանքով Իրանում հաստատված հայերի կողմից: Նորջուղայեցիների՝ Հնդկաստան և Չինաստան գաղթելու փաստը հաճախ է հիշվել Նոր Ջուղային նվիրված ուղեգրական և այլ կարգի գրականության մեջ[222]: 1765-ին Սիմեոն կաթողիկոս Երևանցու կազմած «Ջամբռ» աշխատության մեջ Չինաստանի և Կանտոնի հայերը հիշված են որպես էջմիածնի հպատակներ: «*Այլեւ Չինաց երկրի մէջ՝ Կանդրում Ղասապա-նը, որ եւ Մաքաւ (է կոչվում), որտեղ երբեմն լինում են հայ վաճառականները, նաեւ Քաղավիայում եւ Մանիլայում են լինում*»[223]:

Հայերը, ինչպես տեսանք, Չինաստանի միջազգային առևտրում ակտիվ են եղել վաղնջական ժամանակներից: 17–18-րդ դդ. չինաբնակ հայ վաճառականների՝ Արևելքի երկրների հետ կատարած լայնամասշտաբ առևտրական գործունեությունը մաս է կազմել հայոց պատմության ամենից դրական և ֆենոմենալ երևույթներից մեկի՝ ջուղայական առևտրական ցանցի, որը շուրջ երկու դար ձգվել է Ծայրագույն Արևելքից մինչև Հյուսիսային Եվրոպա: Տարբեր երկրների հայ առևտրականներ կապ են պահպանել իրենց հայրենակից գործընկերների հետ, մինչև անգամ ունեցել իրենց ներկայացուցիչներն այլևայլ երկրներում, ընդամին նաև՝ Չինաստանում: Այսպես, 18-րդ դարի կեսին բրուսացի խոջա Ծյուքրը (Շուքուր) եղել է վենետիկաբնակ մեծահարուստ վաճառական Հովհաննես Սեդրոյանի առևտրական գործակալը Չինաստանում[224]: Ենթադրվում է, որ Եվրոպայի ամենահարուստ վաճառական ընտանիքներից Շեհրիմանյաններն ունեցել են տեղեկություններ հաղորդողներ տարբեր եվրոպական և ասիական քաղաքներում, այդ թվում՝ Մակաոյում և Կանտոնում[225]:

Ուշ միջնադարում Չինաստանում հայ առևտրականների առկայությունը մեկ անգամ չէ, որ նշվել է եվրոպացի այլևայլ հեղինակների կողմից, իբրև ապացույց հայի՝ որպես Եվրասիայի ամենից դինամիկ տարրի, համաշխարհային գործընթացներում նրա ներգրավվածության և պետականությունից զուրկ ժողովրդի կողմից աննախադեպ առևտրական ցանցի հիմնադիր լինելու: Ուշ միջնադարում ջուղայեցիների միջազգային վաճառականական գործունեությունը ճանաչված էր որպես հայկական առևտրական ցանց, որ կապի մեջ է եղել անգլիական, չինական, հնդկական, հրեական, մահմեդականների, զրադաշտականների առևտրական ցանցերի, Հեռավոր Արևելքի առևտրա-

[219] Տե՛ս Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցու Հաշվեմատյանը, էջ 30: Տե՛ս նաև՝ **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 469: Այստեղ Քենտո ղե Գոիշի անունը հիշված է Կոէս Քենեղ ձևով: Գոիշի մասին մանրամասն տե՛ս **Гини Р.**, Andin…, էջ 9-35:
[220] Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, էջ 475-476:
[221] Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, էջ 323:
[222] Տե՛ս, օրինակ, շվեդ գրող, ճանապարհորդ Սվեն Հեդինի վկայակոչումը՝ **Hedin Sven A.**, Genom Persien, Mesopotamien och Kaukasien: Reseminnen, Stockholm, 1887, էջ 150:

[223] **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, Ջամբռ, Երևան, 2003, էջ 68:
[224] Տե՛ս **Ալիշան Հ. Ղ.**, Սիսական, էջ 468:
[225] Տե՛ս **Aslanian Sebouh David**, From the Indian Ocean to the Mediterranean..., p. 119.

կան և ֆինանսական ենթակառուցվածքների հետ[226]: Ըստ անգլիացի ուսումնասիրողների՝ «*Հայերի օրինակը ցույց է տալիս, թե որքան կարևոր և ազդեցիկ կարող են անհատ վաճառականները լինել առևտրի ընդհանուր եկամտի մեջ*»[227]:

Ֆրանսիացի հեղինակ Ժաք Սավարիի (1657–1716) «Առևտրի համընդհանուր բառարանում» (տպագրված 1748-ին) վկայվել է, որ հայերն առևտրական գործունեություն են ծավալում աշխարհի մի շարք երկրներում, սակայն ոչ Չինաստանում: Ըստ նրա՝ «*Հայերը պարկեշտ և քաղաքավարի մարդիկ են. իրենց պատրաստակամությամբ հարմարվում են վաճառականությանը և արհեստներին: Ինչ գործ էլ որ ձեռնարկեն՝ այն դարձնում են իրենց միակ զբաղմունքը: Նրանք ոչ միայն վարպետներն են Լևանտի արհեստների, այլև մաս են կազմում Եվրոպայի զանազան մեծ քաղաքների առևտրական շարժումների: Հասարակ երևույթ է՝ հանդիպել հայ վաճառականին կամ առևտրականին Լեգորնում, Վենետիկում, Անգլիայում և Հոլանդիայում, ինչպես նաև Մեծ Մողոլի երկրում և Սիամի, Ճավայի, Ֆիլիպինյան կղզիների այլևայլ կողմերում. մի խոսքով՝ ամբողջ Արևելքում՝ Չինաստանից բացի*»[228]: Ըստ երևույթին Սավարիին է երկու դար անց կրկնել ֆրանսիացի նշանավոր պատմաբան Ֆեռնան Բրոդելը՝ գրելով. «*Հայ վաճառականները նաև կտրել են Հիմալայները և հասել են Լհասա՝ այստեղից առևտուր կատարելով չինական սահմանի հետ՝ մոտ հազար մղոնի վրա: Սակայն նրանք ըստ էության երբեք չեն անցել այն: Բավական տարօրինակ կերպով Չինաստանը և Ճապոնիան կարծես թե փակ էին նրանց համար: Սակայն հայ վաճառականը ծանոթ կերպար էր, շատ վաղ ժամանակներից, իսպանական Ֆիլիպին-*

[226] Տե՛ս **Hisasue Ryoichi**, Chinese Banking Business in Singapore: Background and Development in the First Half of the Twentieth Century, "Regional Routes, Regional Roots?...," p. 13.

[227] **Smith Carl T., Van Dyke Paul A.**, Armenian Footprints in Macao, "Review of Culture," no. 8, October, 2003, p. 20-39.

[228] **Savary des Bruslons Jacques**, Dictionnaire universel de commerce, tome première, Paris, 1748, p. 408. Այս մեջբերումը տե՛ս նաև՝ **Վրթանես Չ. Ա.**, Ակնարկ մը հայ առեւտրականին վրայ՝ 17-րդ եւ 18-րդ դարերուն, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 29.05.1948, էջ 509:

ներում...»[229]: Այս տեղեկությունը, ինչպես տեսնում ենք, ճիշտ չէ, քանի որ հայ վաճառականների ներկայությունը Չինաստանում անհայտ և նորություն չէր: Այդ մասին վկայել է անգամ գերմանացիականավոր փիլիսոփա Իմանուիլ Կանտը (1724–1804): Հայ միջնադարյան առևտրին և չին-հայկական կապերի մասին խոսող ուսումնասիրողները հաճախ են մեջբերում Կանտի խոսքերը Չինաստանում հայ վաճառականների գործունեության վերաբերյալ: 1798-ին գրած «Մարդաբանությունը պրագմատիստական տեսանկյունից» աշխատության մեջ, «Ժողովրդի բնութագիրը» գլխում, խոսելով ժամանակի մի շարք ժողովուրդների մասին, Կանտը նշել է. «*Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մեջ իշխում է հատուկ տեսակի ինչ-որ առևտրական ոգի, ավելի որոշակի՝ նրանք զբաղվում են փոխանակությամբ, ոտքով ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեական ափի Կորսո հրվանդանը: Այս հանգամանքը ցույց է տալիս յուրահատուկ ծագումը խելամիտ և աշխատասեր այս ժողովրդի, որը, շարժվելով հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, կտրում-անցնում է հին աշխարհի ողջ տարածքով և կարողանում է բարեհաճ ընդունելություն գտնել բոլոր այն ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում է այցելությամբ. դա ապացուցում է նրանց խառնվածքի գերազանցությունը (որի սկզբնական ձևավորումը մենք ի վիճակի չենք ուսումնասիրել) ժամանակակից հույների թեթևամիտ և զետնաքարշ բնույթի նկատմամբ*»[230]:

[229] **Braudel Fernand**, Civilization and Capitalism, 15th-18th Century, Vol. II: The Wheels of Commerce, 1982, p. 155.

[230] **Kant Immanuel**, Anthropologie in Pragmatischer Hinsicht, Königsberg, 1800, S. 310-311. Նույնը տե՛ս **Кант И.**, Сочинения, т. VI, Москва, 1966, с. 572, **Kant I.**, Anthropology from a Pragmatic Point of View, Cambridge Texts in the History of Philosophy, ed. by Robert B. Louden, 2006, էջ 222: Կանտի խոսքերը որպես բնաբան բերված են հայր Լևոն Զեքիյանի «Հայկական ուղին դեպի արդիականություն» հատորում (տե՛ս **Zekiyan Boghos Levon**, The Armenian Way to Modernity: Armenian Identity Between Tradition and Innovation, Specificity and University, 1997, տե՛ս նաև՝ **Զեքիեան Հ. Լ.**, Ինքնութեան խճանկար, Պէյրութ, 2001, էջ 82), նիշատակվել հայ առևտրականներին նվիրված աշխատություններում (վերջիններից մեկը տես՝ **Hovhannisyan Smbat K.**, Examination of Armenian Trade Capital (16th-18th centuries) in Light of Fernand Braudel's Civilization Theory, "Armenian Review," vol. 54, no. 3-4 (Spring-Summer), 2014, էջ 52):

Ի դեպ, Չինաստանը՝ որպես հայ վաճառականների միջազգային գործունեության ծայրակետ, նաև տարաշխարհիկության պատճառով, հաճախ է հիշվել հայերի վերաբերյալ գրականության մեջ: Ռուս հեղինակ Սերգեյ Գլինկան, 1832-ին հրատարակած հայ ժողովրդին նվիրված հատորում, մասնավորապես, նշել է. «*Զբաղվելով առևտրով և արտադրական գործերով՝ հայերը հաջողության են հասել Թուրքիայի ափերից մինչև Չինաստան*»[231]: Կանտից մեկ դար և մի փոքր ավելի ուշ մեկ այլ նշանավոր եվրոպացի հեղինակ, խոսելով հայերի տարածվածության մասին, նույնպես հիշատակել է Չինաստանը. սակայն խոսել է բացասական երանգով: Խոսքը նորվեգացի նշանավոր արձակագիր Քնյութ Համսունի մասին է, որն իր «Կիսալուսնի ներքո» գրքում (1905) գրել է հետևյալը. «*Արեւելքի վաճառականութեան մէջ հայերը հրէաների դերն են խաղում: Նրանք խցկւում են ամեն տեղ, Բալկանից մինչեւ Չինաստան, ամեն մի քաղաքում դուք կը պատահէք հայերին: ....Նրանք իրանց ձեռքն են գցում առեւտուրը, վարկային օպերացիաները եւ փողը*»[232]: Նույն ժամանակահատվածում ֆրանսիացի ուսումնասիրող Ժորժ Բրեզոլը Ադանայի ջարդերին նվիրված իր ուսումնասիրության մեջ նշել է, որ «*Քաղաքում հայերը... դարձել են բանկիրներ և Արևելքի մեծ առևտրականներ. նրանց գործունեությունը ձգվում է Աֆրիկայի արևելքից Չինաստան*»[233]: Իսկ ֆրանսիացի վիպասանուհի Միրիամ Հերին ջուղայեցի առևտրականներին պատկերավոր կերպով անվանել է «*իշխան-վաճառականներ*», որոնք մրցում էին Եվրոպայի ամենահզոր ընտանիքների հետ՝ նրանցից խլելով Հնդկաստանի և Չինաստանի առևտուրը[234]: Չինաբնակ հայ

[231] **Глинка Сергей**, Обозрение истории армянского народа от начала бытия его до возрождения области Армянской в Российской Империи, Москва, 1832, стр. 30.
[232] **Աննանոր**, Կնուտ Համսունը հայերի մասին, «Հորիզոն», Թիֆլիս, 12.11.1910: Տե՛ս նաև՝ **Hamsun Knut**, Unter dem Halbmond, Münich, 1924, էջ 229.
[233] **Brèzol Georges**, Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêts, protestations, suppliques et enquêtes. Etablissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Erevan, 2009, p. 6.
[234] Տե՛ս Ջուղայի հայերը եւ անոնց առասպելական հարստութիւնը, «Յուսարեր», Գահիրէ, 25.06.1935:

առևտրականը հիշվում է նաև ամերիկացի գրող Փոլ Թերուի վեպերից մեկում[235]:

Վերադառնալով 17-րդ դար՝ նշենք, որ երբ 1685 թ. Չինաստանը պաշտոնապես բացել է Մակաո նավահանգստային քաղաքն արտասահմանյան առևտրի համար, հայերը սկսել են աշխույժ գործունեություն ծավալել ողջ այդ տարածաշրջանում: 1688-ին Լոնդոնում բրիտանական Արևելա-հնդկական ընկերությունը հայ առևտրականների ներկայացուցիչ Խոջա Փանոս Քալանթարի հետ պայմանագիր է կնքել, ըստ որի հայերն անգլիացիների հետ հավասար իրավունքներ են ձեռք բերել՝ ազատ ելումուտ անելու անգլիական տիրապետության սահմաններում և առևտրական գործառույթներ կատարելու «*Հնդկաստանի ցանկացած մասում, հարավային ծովերում, Չինաստանում կամ Մանիլաներում*»[236]: Հնդկաստանի, Իռլանդիայի, Մանիլայի հայ վաճառականներին իրավունք է տրվել Չինաստան ապրանք տանել ինչպես սեփական, այնպես էլ անգլիական և հնդկական նավերով՝ ազատված լինելով հարկերից: Բնականաբար, նման արտոնություններն աշխուժացրել են հայերի առևտրական կապերը չինական քաղաքների, հատկապես նավահանգիստների՝ Մակաոյի (այժմ՝ Առմին, 1557–1999 թթ. պատկանել է Պորտուգալիային), Կանտոնի, Շանհայի, Չուանշոյի հետ[237]: Հայերի չեզոքությունը, ճկունությունը, արևելյան լեզուներին ծանոթ լինելը նպաստել են, որ եվրոպացի գաղութարարները հաճախ նրանց վստահեն տարբեր ապրանքների իրացումը: Այսպես, 1690 թ. Լոնդոնից Բոմբեյ ուղարկված մի նամակում նշվում է, որ հայերի հետ պետք է վարվել «*մեծագույն բարությամբ և խրախուսել նրանց բանակցություններում՝ նրանց հետ մեր պայմանագրի համաձայն*»[238]: 1695-ին, դարձյալ Լոնդոնից, Հնդկաստան նամակ է հղվել մի հայ վաճառականի՝ Չինաստան մուտքի առնչությամբ, որ-

[235] Տե՛ս **Theroux Paul**, On the edge of the great rift: three novels of Africa, Penguin Books, 1996, էջ 26:
[236] **Noel-Buxton Noel**, Travel and Politics in Armenia, New York, 1914, p. 196.
[237] Տե՛ս **Seth Mesrob J.**, Armenians and the East India Company, Calcutta, 1926, էջ 5-7:
[238] **Baladouni Vahé, Makepeace Margaret**, eds., Armenian Merchants of the Seventeenth and Eighteenth Centuries..., p. 101.

տեղ խորհուրդ է տրվել համբերատար լինել հայերի նկատմամբ, ովքեր չափազանց օգտակար են եղել բրիտանացիներին, և առանց որոնց օգնության իրենք չէին կարողանա վաճառել անգլիական մանածագործական ապրանքները Պարսկաստանում[239]: Մեկ դար անց, 1795-ին, Կալկաթայից Չինաստան մեկնող հայերի մեջ հիշվում է պարոն **Նիկողոս (Նիկոդոս) Հարությունը**[240]: 1796-ին Բատավիայի հոլանդական կառավարությունը մի հայ առևտրականի է վստահել մեծ չափաբաժնով համեմունքների (մեխակ, մշկընկույզ) վաճառքը Կանտոնում[241] և այլն:

Արդեն 17-րդ դ. կեսին Կանտոնում բնակվել է 30 հայ ընտանիք, որոնցից մի քանիսն ունեցել են սեփական գործարաններ, նավեր և դրամատուն, իսկ 1700 թվականից քաղաքի առևտրում նրանք ակտիվ ներակատարություն են ունեցել՝ մահմեդական վաճառականների հետ միասին[242]: Երբ 1698 թ. ֆրանսիական նավը ժամանել է Մակաո, արդեն այնտեղ հանդիպել է հայերի: 1748-ին Մակաոյի բնակիչ պորտուգալացի Միգել Պեդրո Էյտորը սենյակ է վարձել հայ **Գրեգորիոյի** (Գրիգոր) համար, որը Չինաստան է եկել հավանաբար առևտրական գործերով, իսկ 1757-ին հայ **Անտոնիո Բատիստը** (հավանաբար՝ Անտոն Մկրտիչ) տուն է վարձել Մակաոյում, և հայերը սկսել են շարունակաբար մնալ այդ քաղաքում մինչև դարի վերջը[243]: 18-րդ դարում Չինաստանի նավահանգիստներում եղել է նաև հնդկահայ մեծահարուստ առևտրական, բարերար **Ռաֆայել Ղափամյանը** (1730–1795): 1780-ականներից Մակաոյից նավարկել են նաև հայերին պատկանող նավեր. հայերը, մյուս օտարերկրացիների նման, վճարել են որոշակի հարկեր, մինչև որ Մակաոն ազատ նավահանգիստ է դարձել 1835

[239] Նույն տեղում, էջ 223:
[240] Տե՛ս «Ազդարար», Կալկաթա, Ադամ ամսոյ, 1795, թիւ 5, էջ 40:
[241] Տե՛ս Journal of the Malayan Branch of the Royal Asiatic Society, vol. 31, part 4, Royal Asiatic Society of Great Britain and Ireland, Malayan Branch, 1961, էջ 105:
[242] Տե՛ս **Van Dyke Paul A.**, The Canton Trade: Life and Enterprise on the China Coast, 1700-1845, 2005, էջ 10:
[243] Նույն տեղում, էջ 13:

թվականին[244]: Կանտոնում առևտրական գործունեություն է ծավալել նաև հնդկահայ առևտրական **Խոջամալ Սափար Կումպարովը**, որը Չինաստանում քսանհինգ հազար ռուփի կորուստ է ունեցել, վերադարձել է Մադրաս և մահացել 1796-ին[245]: 1798-ին «Ինդիա գազեթը» դեկտեմբերի 11-ի համարում տեղեկացրել է, որ նոյեմբերի 3-ից առաջ Բոմբեյից Կանտոն է հասել «Արմենիա» նավը հաշիշի բեռով[246]:

Հատկանշական է, որ կանտոնաբնակ հայերը մուտք են գործել նաև գեղարվեստական գրականություն: Ժամանակակից հնդիկ հռչակավոր վիպասան Ամիթավ Գոշի «Ծխի գետը» վեպի հերոսներից է Կանտոնում բնակվող կես հայ, կես եգիպտացի ժամագործ Զատիկ Կարապետյանը կամ Զատիկ բեյը: Վեպի գործողությունները կատարվում են 1815 թվականին: Զատիկ բեյը վեպի հերոսի՝ հաշիշի մագնատ, գերը Բահրամի միակ ճշմարիտ բարեկամն է. մի առևտրականի, որ ճամփորդում է Հնդկական օվկիանոսով և Հարավ-չինական ծովով, և որի բիզնեսը կենտրոնական տեղ է գրավում այս գրքում[247]:

Ի դեպ, ինչպես հայկական հագուստը ցամաքում, այնպես էլ հայկական դրոշը ծովում, մի տեսակ անվտանգության երաշխիք են եղել

[244] Նույն տեղում, էջ 144:
[245] Տե՛ս Դիտան Հայոց պատմութեան, գիրք Թ., Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մասն առաջին, 1778–1800, հրատարակեց **Ադամեանց Գ. ս. քհն**, Թիֆլիս, 1911, էջ 203:
[246] Տե՛ս A Peoples' History 1793 – 1844 from the newspapers, http://www.houghton.hk/?p=84 (այցելությունը կայքէջ՝ 9.11.2015):
[247] Տե՛ս **Gosh Amitav**, River of Smoke: A Novel, 2011. Զատիկ Կարապետյանը կամ Զատիկ բեյը վեպի՝ միջազգային առևտրի բարոյական դժվարությունների կապող օղակն է և խիղճը: Այս «*մոլի ճանապարհորդը*», որ ծնվել և մեծացել է Կահիրեի հին քրիստոնեական և հրեական թաղամասում, «*վարժ տիրապետում է բազմաթիվ լեզուների*», ունի «*մեծ տաղանդ տեղական լիներու նորությունները*»: Բահրամը մաքառում է սեփական բարոյականության դեմ Զատիկի հետ զրույցների միջոցով: Երբ ինքը՝ Նապոլեոն Բոնապարտը, կասկածի տակ է առնում Բահրամի հաշիշի առևտրի էթիկան, քաղաքականությանը և բարոյականությանը Չինաստանում, Զատիկն արագ պատասխանում է. «*Ինձ միշտ ասվորեցրել են, որ չարիքից ոչ մի լավ բան չի կարող ծնվել... Ես ժամագործ եմ և ոչ մի դեր չունեմ առևտրում*» (տե՛ս **Gosh Amitav**, River of Smoke, էջ 166): Այնուամենայնիվ, նա հսկայական հարստության տեր Բահրամի ազնիվ և ճշմարիտ ընկերն է: Խմանալով Կանտոն քաղաքի բոլոր իրադարձությունները՝ Զատիկ բեյը, որի համար ընկերությունն առաջին տեղում է, երբ հաշիշի առևտուրն ընդհատվում է, և Բահրամի կյանքը վտանգի մեջ է հայտնվում, հսկում է Բահրամին:

Չինաստանի և այլ երկրների նավահանգիստներում և օվկիանոսում: Ըստ ժամանակագիր Հոսեա Քալու Մորսի՝ 1722-ին Չինաստանից Հնդկաստան ուղևորված վեց բեռնատար նավերից մեկի վրա եղել է հայկական դրոշ[248] («Գառն աստծո» խորհրդանիշը[249] կամ կարմիր-նարնջագույն երիզներ): Նա նաև վկայել է, որ այդ ժամանակ Կանտոնում եղել են մեկ անգլիացի, մեկ դանիացի և մոտ երեսուն հայ առևտրական[250]: Անգլիացի ճանապարհորդ Չարլզ Լոքյերը 1711-ին հրատարակած Հնդկական օվկիանոսում կատարվող առևտրի մասին իր գրքում մասնավորապես նշել է. «*Մանիլա, հայկական դրոշի ներքո, շահավետ ուղևորություն է*»[251]:

18-րդ դարի վերջին Մակաոյի և Կանտոնի հայ առևտրականների տնտեսական դրությունը զգալիորեն բարելավվել է: Դրա ապացույց է նաև այն, որ ասպարեզ են իջել առաջին բարեգործները: Այսպես, կանտոնաբնակ վաճառական **Մնացական Դասապյանը** (գանձակեցի) խոշոր գումար է կտակել Հայաստանին[252], իսկ նորաստեղծ Նոր Նախիջևան քաղաքին 80 հազար ռուբի է ցվիրաբերել խոջա **Մատթեոս Հովհաննեսը** կամ անգլիական ձևով՝ **Մեթյու Ջոաննեսը** Մակաոյից: Վերջինս ժամանակի ամենահարուստ անձանցից մեկն էր ոչ միայն հայ, այլև առհասարակ գաղութային աշխարհում: 1761-ին երիտասարդ տարիքում երեք այլ հայերի հետ նա Հնդկաստանից տեղափոխվել է Մակաո և այստեղ մնացել մինչև մահը: Նա զբաղվել է մետաքսի առևտրով Կալկաթայի և Մուրշիդաբադի, այնուհետև՝ Կանտոնի և Մակաոյի ու Կալկաթայի միջև: Մատթեոսի կարողության մասին տեղեկանում ենք Մակաոյում նրա ընտանեկան եկամուտների և Կանտոնում գտնվող նրա առևտրական հաստատության փաստաթղթերից, նրա կտակից և 1795–1830 թթ. նրա կարողության վերաբերյալ արձանագրություններից: 1783-ին Մատթեոսն ընդունել է պորտուգալական հպատակություն, ինչը նրան թույլ է տվել միանալ մոտ քսան պորտուգալացի նավատերերի խմբակցությանը, որոնք վերահսկել են Մակաոյի տնտեսական կյանքը: 1765 թ. գրված մի իտալերեն նամակում (պահվում է Օսլոյում՝ Նորվեգական պետական արխիվում) նշված է, որ Հովհաննեսին իր առևտրական գործունեության համար փոխ է տրվել 2000 պիաստր: Մատթեոսը եղել է յուրահատուկ անձնավորություն, ունեցել է բազմակողմանի հետաքրքրություններ և գործունեություն, զբաղվել է ամենատարբեր ապրանքների, այդ թվում՝ հաշիշի առևտրով: Նրա տունը երկար տարիներ գործածվել է որպես նատավայր Մակաոյում շատ պորտուգալացի և այլ օտարերկրյա առևտրականների համար: 1792-ին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը նրան ուղարկել է ոսկե ականակուռ մի խաչ, օրհնության գիր և մի երփնագիր պատկեր[253]:

Աղա Մատթեոս Հովհաննեսը վախճանվել է 1794 թ. դեկտեմբերի 14-ին, Մակաոյում, եղել է մոտ վաթսուն տարեկան: Իր մահվան տարում նա Ասիայի ամենահարուստ առևտրականներից մեկն է եղել՝ կես դարի ընթացքում կուտակած լինելով այնքան կարողություն, որ մրցել է ողջ կոզու տարեկան եկամուտի հետ: Թողել է երեք անչափահաս որդի և մեկ դուստր: Մատթեոսի մահը ծանուցել է հայ անդրանիկ պարբերականը՝ «Ազդարարը». «*Տրտմութեամբ յայտնեմք զմահս Պարոն Յովհաննէսեանին որ ’ի Գանքօս* (Կանտոն – Ա. Բ.), *յանցեալ համիրայ ամսոյն, զի էր այր արժանաւոր և պիտանի վասն մեր վարուցեալ ազգին, զոր զմահուանէ նորա բազումք են սգալոց: Ոչ ունիմք ոչ

[248] Տե՛ս **Morse H. B.**, The Chronicle of the East India Company Trading to China (1635–1824), vol. 1, Oxford, 1926, էջ174: Տե՛ս նաև՝ **Դերենիկ եպիսկոպոս**, Չինաստանի հայ վաճառականներ եւ Յովհաննէս Ղազարեան, «Սիոն», Երուսաղէմ, 1959, թ. 11-12:

[249] Այն առկա է հատկապես նորջուղայեցի վաճառականների դրոշների և կնիքների վրա, քանզի կված է նաև Ամստերդամի հայոց եկեղեցու ճակատին:

[250] Տե՛ս **Morse H. B.**, The Chronicle of the East India Company Trading to China (1635–1824), vol. 2, Oxford, 1926, էջ 84-85: Տե՛ս նաև՝ Դերենիկ եպիսկոպոս, Չինաստանի հայ վաճառականներ, նույն տեղում:

[251] **Lockyer Charles**, An Account of the Trade in India, 1711, p. 15.

[252] Ենթադրվում է, որ այս նույն Մնացականը հետագայում մեկնել է Հոլանդիա. «*Այլ եւ ի ներկայումս գիր եկն ի գԶմիւռնիոյ նուիրակ եւ Առաջնորդ Եսայի վարդապետէն որ ընդ այլ որպիսութեանց գրէր եւ զայս, զի Գեանջեցի Մնացական ոմն ի Հնդկաց երկրէն գնացեալ ի Հօլանդեա (զոր կարծէաք այն Մնացականն լինել՝ որ յառաջ ի Չինու երկրորդն էր՝ ի Գանդում Ղասապայն)*» (Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԱ, մասն 3, Թիֆլիս, 1913, էջ 312):

[253] Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Թ., էջ 186:

ինչ հաստատ ծանօթութիւն ոչ գտկարութենէ, և ոչ զորպիտութենէ կտակին իւրոց»[254]: Իր կարողության մեկ հինգերորդ մասը նա կտակել է Երուսաղեմի, Նոր Ջուղայի, Էջմիածնի և Նոր Նախիջևանի թեմերին[255]: Նրա կտակակատարներն են եղել Մակաոյի կաթոլիկ եպիսկոպոսը, **Մանուել Վիսենթը**, եղբայրը՝ **Ղազար Հովհաննեսը** (Լազար Ջոաննես)[256], որդին՝ **Հովհաննեսը**, մայրը՝ **Վարդենին** և պարոն **Պողոս Աբամը**[257]: Նշված Ղազար Հովհաննեսն, անշուշտ, նույն Լազարո Ջոաննեսն է, որի և **Մակաոտես Քազիլիոյի** (Մակաոտիշ Վասիլիո, հավանաբար Սկրտիչ Բաբսեղյան) հայերեն ստորագրություններով 1798-ի նոյեմբերի 23-ի թվակիր մի պորտուգալերեն նամակ է պահպանվել, որը վերաբերել է Բատավիայում հոլանդացիներին տրված փոխառության հայեր **Մանուկ Յակուբի** և **Վարդան Գասպարի** կողմից: «Ազդարարը» նշել է, որ իրենք համոզված են, թե նրա մահից հետո հայության գործերը վատ կլինեն, հատկապես Մակաոյում[258]: Սակայն Մակաոյի իշխանությունները տիրացել են Մատթեոս Հովհաննեսի՝ անգլիական ընկերությանն ի պահ տված դրամին՝ թույլ չտալով կտակակատարներին մոտենալ (ժամանակակցի բնորոշմամբ՝ «*ի Մաքաու քաղաքի անդ ուր հանգուցեալն բնակէր բարբարոսաբար կառավարութիւն ունին*»[259]): Մատթեոսի մահից հետո գրեթե 40 տարի շարունակ նրա ազգականները փորձել են կտակով հասանելիք վճարը ստանալ: Պորտուգալիայի կառավարությունն ամեն կերպ մերժել է դա կատարել, քանի որ, ինչպես մի անգամ Մակաոյի նահանգապետը գրել է Պորտուգալիայի թագավորին. «*Ստոված մեզ պահապան, երե մենք այդ գումարը վճարենք Մեթյուի ազգականներին, տնտեսությունը ձեր գաղութներում կկործանվի...*»: Մատթեոսի ժառանգության մի

[254] Մահ, «Ազդարար», Կալկաթա, Ոսդան ամսոյ, 1795, թիւ 5, էջ 40:
[255] Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Թ., էջ 187:
[256] Նամակի լուսանկարը տե՛ս՝ Paul A. Van Dyke, The Canton Trade..., պատկեր 6:
[257] Տե՛ս Հատորք տարտեղաց գրեալ 'ի Չին Գանթօնայ 1794 թուին, «Ազդարար», Կալկաթա, Նիւհան ամսոյ, 1795, թիւ 6, էջ 82:
[258] Նույն տեղում, էջ 83:
[259] Դիւան Հայոց պատմութեան, գիրք Թ., էջ 188:

գգալի մասն ուղարկվել է Պորտուգալիա՝ Նապոլեոն Բոնապարտի դեմ պատերազմի ֆինանսավորման համար:

Ըստ պատմաբան Կարլ Սմիթի՝ Մատթեոս Հովհաննեսի կյանքի պատմությունն արժանի է վերականգնվելու, իսկ նա՝ ճանաչվելու որպես Մակաոյի տնտեսական պատմության մեծագույն դեմքերից մեկը[260]:

Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի «Դավթարում» (1778-1800) հիշատակություններ կան Մատթեոս Հովհաննեսի և նրա կտակի մասին: 1795-ի դեկտեմբերին Ստեփանոս քահանա Տեր-Հարությունյանը Հովսեփ արքեպիսկոպոսին Կալկաթայից գրել է, որ Նոր Նախիջևանի համար նախատեսված Մատթեոս Հովհաննեսի խոստացած 80 հազար ռուփին փորձել է ստանալ տեղացի պարոն Սարգիս Տեր-Հովհաննեսից, որը «*յազահութենէն յաղթեալ, դեռ ևս ներհակի և ոչ տալ: Վասն որոյ՝ կրկին պարտաւոր եղէ խոհմտանաց օրէնքումն զանգատել: Այժմ Բ ամիս (2 ամիս) է զանգատեալ եմ. յուսով եմ միոչ ցծնունդն փողն տիրել*»[261]: Մեկ ամիս անց, 1796-ի հունվարի վերջին գրած մեկ այլ նամակում Ստեփանոս քահանան վկայել է, որ իր տաբածայնությունը Սարգիս Տեր Հովհաննեսի հետ չի ավարտվել, և իրավամբ հետևյալ մտահոգությունն է հայտնում. «*'ի Չինու նորոգ բաղդ գտաք, որ տեղն եղեալ ամենայն կայծ Մաքէոսի Ֆօրթուքեզներն սիրեալ են կամին կտակն աւրել: Վասնորոյ որպէս ես, նոյնպէս և սա ամենայն ջանիւք աշխատի յիշեալ դրամն չտալ. զոր՝ եթէ բաղից ի ձեռն տրին անկանիմ. մեք զուրկ եմք մնալոց ըստ ամենայնի*»[262]: Նույն թվականի մարտի 20-ին դարձյալ Հովսեփ արքեպիսկոպոսին գրած նամակում նա վկայել է, որ վերոհիշյալ Սարգիս Տեր Հովհաննեսի հետ առնվազն երեք դատական գործի մեջ է մտել և երեք անգամ էլ տանուլ տվել, ու Ստեփանոս քահանան հաստատվել է կտակակատար՝ ստիպված լինելով ևս մեկ տարի սպասել՝ ապարդյուն ակնկալելով

[260] Տե՛ս **Smith Carl T.**, An Eighteenth-Century Macao Armenian Merchant Prince, "Review of Culture," էջ 120-129. **Van Dyke Paul A.**, The Canton Trade..., էջ 158-159:
[261] Դիւան Հայոց պատմութեան, գիրք Թ., էջ 195:
[262] Նույն տեղում, էջ 196-197:

Մակաոյի պորտուգալական իշխանություններից կտակի բաժինը ստանալ[263]:

Ի դեպ, հաշիշը չինական նավահանգիստներում հայտնվել էր արդեն 1730–50-ական թթ. և ազատորեն վաճառքի հանվել Վամպոայում (Հուանպու, Կանտոնի մոտ) 1760-ականներին. վաճառքով զբաղվել են եվրոպացիները, քրիստոնյա չինացիները և հայերը[264]: Հաշիշի առևտուրը նախապես անօրինական կերպով վարել են անգլիացի և շոտլանդացի անկախ առևտրականները («առևտրական տները»), և տեսնելով այդ առևտրի խիստ շահավետ լինելը՝ նրանց շուտով միացել են նաև հայերը և փարսերը (հինդուստանցի զրադաշտականները)[265]: Ընդհանուր առմամբ այդ առևտրում ընդգրկված է եղել մեկ միլիոն մարդ. Չինաստանում արտադրված ողջ թեյը ձեռք է բերվել հաշիշից ստացված գումարների հաշվին[266]: Հայերը նախապես պորտուգալացիների հետ հանդես են եկել որպես միջնորդներ հաշիշի առևտրում[267]: Սակայն արդեն 1777 թ. Մակաոյի կաթոլիկ եպիսկոպոս Դ. Ալեքսանդր դա Սիլվա Պեդրոսա Գիմարաեսն (1727–1799) անհանգստություն է հայտնել, որ Մակաոյի առևտրականները հաշիշի առևտրում մյուս օտարազգիների մենաշնորհն են վերցրել, ուստիև հանձնարարել է, որ օտարականները (հատկապես հայերը) հեռացվեն հաշիշի առևտրից, որպեսզի դրանից օգտվեն միայն Մակաոյի վաճառականները[268]:

18-րդ դարի վերջին, 19-րդ դարի սկզբին Չինաստանի նավահանգիստներում հաշիշի առևտուրն անցել է մեծ մասամբ Կալկա-

[263] Տե՛ս նույն տեղում, էջ 200-201:
[264] Տե՛ս **Van Dyke Paul A.**, Americans and Macao: Trade, Smuggling, and Diplomacy on the South China Coast, Hong Kong University Press, 2012, էջ 182:
[265] Տե՛ս **Dikötter Frank, Laamann Lars, Zhou Xun**, Narcotic Culture: A History of Drugs in China, London, 2004, էջ 41:
[266] Տե՛ս **Տորունեն Արի**, Ինչ է, չգիտե՞ք՝ ես ով եմ. զոռոզամոլության պատմություն, Երևան, 2014, էջ 128:
[267] Տե՛ս **Wills Jr. John E.**, China and Maritime Europe, 1500-1800: Trade, Settlement, Diplomacy, and Missions, Cambridge University Press, 2010, էջ 219:
[268] Տե՛ս **Smith Carl T., Van Dyke Paul A.**, Armenian Footprints in Macau, էջ 34: Տե՛ս նաև **Van Dyke Paul A.**, Macao, Hawaii, and Sino-American Trade, “Macao and U.S.-China Relations,” ed. Yufan Hao, Jianwei Wang, էջ 95:

թայի հայ առևտրականների ձեռքը, թեև շոտլանդացիները և պարսիկները սկսել են նրանց հետ մրցել: Հայտնի են այդ առևտրականներից ոմանց անունները՝ **Ջոհան Սարգիս** (Հովհաննես Սարգսյան), **Սարգիս Օտեն, Մ. Ջ. Բագրամ, Հ. Չաթըր** և այլն: Նրանց գործակալն է եղել «Բեալե էնդ Մանիաք» ընկերությունը, որ հիմնել են անգլիացի վաճառական Չարլզ Մանիաքը և Հեռավոր Արևելքում առևտրական լայն գործունեություն ծավալած շոտլանդացի առևտրական, Չինաստանում Պրուսիայի հյուպատոս Դանիել Բեալեն (1759–1842)[269]: Վերջինս 1806 թ. տաս ամիս մնալով Մակաոյում՝ կարողացել է ընդամենը մի քանի արկղ հաշիշ վաճառել, ուստիև նամակով խնդրել է իր հայ ղեկավարներին հարկը հանել ապրանքից՝ իրենց հետագա ֆինանսական գործողությունների ընթացքում[270]: Քանի որ հայերը հաշիշը վաճառել են ցածր գնով, 1802-ին Մակաոյի սենատը պորտուգալական նավերին որպես պատիժ բացարձակապես արգելել է որևէ հայ ուղևորի փոխադրել[271]:

Չինաստանում հաշիշի առևտրի մեջ աչքի ընկնող դեր է խաղացել մեկ այլ հայ առևտրական՝ ծնունդով մադրասցի **Գրեգորի Մարգար Բաքումը** (հավանաբար՝ Գրիգոր Բաքումյան): Այս արկածախնդիր անձին Մադրասի կառավարությունը նշանակել է իր առևտրական ներկայացուցիչը Կանտոնում, որտեղ ներմուծվող համեմունքների ամենամեծ չափաբաժինը պատկանել է նրան[272]: 1799-ի վերջին Բաքումը, լինելով ամենահարուստը Կանտոնի հայերի մեջ, փորձել է մենաշնորհի ձեռք բերել տեղի հաշիշի առևտրում՝ խնդրագիր ներկայացնելով հաշիշի մեծ մասն արտահանող Բենգալական ապահովագրական ընկերությանը[273]: Նա առաջարկել է իրեն վաճառել ընկերության ողջ հաշիշը՝ արկղը 550 Սիկկայի ռուփիով, պայմանով, որ իրեն տրվի հաշիշի

[269] Տե՛ս **Greenberg Michael**, British Trade and the Opening of China, 1800-42, Cambridge, 1951, էջ 114:
[270] Տե՛ս նույն տեղում, էջ 117:
[271] Տե՛ս նույն տեղում, էջ 114-115:
[272] Տե՛ս Journal of the Malayan Branch of the Royal Asiatic Society, էջ 106:
[273] Տե՛ս **Smith Carl T., Van Dyke Paul A.**, Four Armenian Families, “Review of Culture,” S. 3, no. 8 (2003), էջ 40-50:

մենաշնորհը երեք տարով: Ընկերությունը մերժողական պատասխան է տվել[274]: Մանիլա հաշիշ արտահանող վաճառական Լուիս Բարրետոյի հետ համագործակցել է երկար տարիներ: Նրանք եղել են Քենգալական ապահովագրական ընկերության և Կանտոնի չինացի առևտրականների գործակալներ: 1805-ի դեկտեմբերի 28-ին Բաբումը քննության է ենթարկել Վամպոայում կայանած ամերիկյան «Քինգհեմ» նավի վրայի հաշիշի բեռները, վաճառքի վերաբերյալ հայտարարագիր ստորագրել և գնել իր բարեկամ, Հոնգ վաճառական Կոնսեքուայի (Պան Չանգյան) համար[275]: Հայտնի է նաև, որ 1800 թ. օգոստոսի 12-ին Բաբումին վարձակալության են տրվել մարգարտի հայթայթմամբ զբաղվող ընկերություններ Մադրասում[276]:

Մակաոյի հայ հարուստներից է եղել նաև **Իգնասե Նարսիպեն**, որի անունը հանդիպում է Ստոկհոլմի Նորդիկ թանգարանի արխիվում պահվող մի պայմանագրում: 1765-ի հունվար-փետրվարին ստորագրված այդ փաստաթուղթը վկայում է, որ Իգնասե Նարսիպեն 2000 պիաստր է տրամադրել չինացիներ Ճեն Ջիուգուանին և Հոնգսիային (Յան Սյիանգշե)՝ դեպի Ճապա ուղևորվելու նպատակով[277]: Մակաոյում հաստատված հայ ականավոր հայերից հիշվում է նաև Խաչիկ Ջոանենսը, ով նախապես իր բախտը փորձել է Կանտոնի առևտրում և ապա հաստատվել Մակաոյում, սակայն բազմաթիվ խոչընդոտների և ֆինանսական դժվարությունների է հանդիպել: 18-րդ դարի վերջի Մակաոյի հայ բնակիչներից պահպանվել են նաև Մարտիրոս Մելեքի (վախճանված 1795-ին), Նիկողայոս Մալխասի և Սիմեոն Հակոբի անունները[278]:

Ինչպես նախկինում, Չինաստանի հետ հայերի կատարած առևտրի մեջ մեծ տեղ են գրավել մետաքսի հումքը, դիպակե գործվածքները, զանազան կտորեղենները, քիչ չափով՝ փղոսկրը, թանկարժեք քարերը, դեղորայքը, խունկը և հախճապակին: Դրանք ոչ միայն վա-

[274] Տե՛ս **Greenberg Michael**, British Trade and the Opening of China, էջ 115:
[275] Տե՛ս **Van Dyke Paul A.**, Americans and Macao, էջ 64, 183, 190:
[276] Տե՛ս Guide to the Records of the Tinnevelly District, 1796 to 1835, Madras, 1934, էջ 21:
[277] Տե՛ս **Van Dyke Paul A.**, The Canton Trade…, պատկեր 11:
[278] Տե՛ս Մահ, «Ազդարար», Կալկաթա, Արամ ամսոյ, 1795, թիւ 16, էջ 664:

ճառվել են արևելյան տարբեր երկրներում, այլև հասել են հայկական տարբեր գաղթավայրեր: Այսպես, 17-18-րդ դարերի չինական սպիտակ կապույտ հախճապակիներ են գործածվել հայ ճարտարապետական որոշ կոթողներում, մասնավորապես՝ 12-րդ դարում հիմնված Երուսաղեմի հայկական Սուրբ Հակոբյանց վանքում[279]: Չինական հախճապակի արտածելով տարբեր երկրներ՝ հայ վաճառականները հաճախ չինացի վարպետներին պատվիրել են սպասք՝ իրենց անուն-ազգանունների սկզբնատառերով: Դրանք նախշազարդվել են «*հախճապակի մայրաքաղաք*» հռչակված Ծինդեճեն քաղաքում (Ծյանսի նահանգ): Հունահայ հավաքորդներ Գալֆայանների հավաքածուում կան 1776–1833 թթ. Չինաստանում պատրաստված հախճապակե սափորներ, ափսեներ, գավաթներ, ապուրամաններ, թեյնիկներ, սկուտեղներ[280]: Դրանցից մեկի՝ պոճձե էմալապատ սափորի պատվիրատուն եղել է Մելիք Հովսեփը Արցախից[281]: Այս նույն ժամանակաշրջանում Հնդկաստանում և Չինաստանում հին հայ թագավորների զինանշաններով թանկարժեք հախճապակե սպասք է պատվիրել նաև ռուս իշխան Պոտյոմկինը, որը ձգտել է դառնալ միացյալ Հայաստանի թագավոր: Այդ սպասքներից մեկը 19-րդ դարում ցուցադրվել է Թիֆլիսի Կովկասյան թանգարանում[282]: 18-րդ դարի վերջին հայ Եկեղեցու առաջնորդների (Ղուկաս կաթողիկոսի, Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի և այլոց) պատվերով Չինաստանում պատրաստվել են ճենապակե իրեր, թեյի և ճաշի սպասքներ, որոնց վրա նշված են հոգևոր անձանց անվանատառերը[283]: Այսպես, սպասքներից մեկը պատրաստվել է Ղուկաս

[279] Այս սալիկների քննությունը տես՝ **Carswell John**, Charles J. F. Dowsett, Kütahya Tiles and Pottery from the Armenian Cathedral of Saint James, Jerusalem, vol. 1, 1972:
[280] Տե՛ս Aspects of Armenian Art: The Kalfayan Collection, Temporary Exhibition June 11–October 10, 2010. Museum of Byzantine Culture, Thessaloniki, Greece, Athens, 2010, էջ 212-222:
[281] Տե՛ս նույն տեղում, էջ 214:
[282] Տե՛ս **Потто В. А.**, Кавказская война, т. 3. Персидская война 1826-1828 гг., Москва, 2000, էջ 351:
[283] Հայտնի դրոշմ ունեցող չինական հախճապակու ուսումնասիրությամբ զբաղվել է ռուս արվեստաբան, չինական արվեստի մասնագետ Մարիաննա Կրեչետովան (տե՛ս **Кречетова М. Н.**, Несколько китайских фарфоровых предметов с армянскими

կաթողիկոսի (1780–1799) պատվերով. ափսեների հայելու վրա պատկերվել է կաթողիկոսի ինքնանշանը, իսկ եզրաշրջիկ՝ խաղողի տերևներ և ողկույզներ: Մեկ այլ սպասքի վրայի անվանատառերը ներկայացրել են հայկական մանրանկարներից առնված մարդկային ֆիգուրներ[284]: Հայ Եկեղեցուն առնչվող չինական ճենապակե անոթների խումբը, ցավոք, դրանց արժեքին անտեղյակ մարդկանց պատճառով, ժամանակին նվիրաբերվել է Պետերբուրգի Էրմիտաժին: Չինական հախճապակե սպասքը հարգի է եղել և սերնդեսերունդ պահվել է շատ հայ ընտանիքներում որպես հազվագյուտ մասունք: 1915-ին ռուս կովկասագետ Ա. Ֆիտունին վկայել է, որ Շամախիի բնակիչ Գրիգոր Գուրգենյանի տանը տեսել է Չինաստանից բերված հախճապակե սպասքի երկու շքեղ պարագա: Գուրգենյանի տեղեկությամբ՝ դրանք իրեն են անցել շամախեցի հնաբնակ Ներսիսյաններից, որոնց վկայությամբ՝ այդ սպասքը սերնդեսերունդ փոխանցվելով արդեն մի քանի հարյուր տարի է գտնվել է իրենց մոտ[285]:

Այս դարաշրջանում հայերը որոշ ներկայություն են ունեցել նաև չինական ցամաքային առևտրում: Ինչպես նշվել է 1690 թ. վերոհիշյալ բրիտանական վավերագրում, հայերը միակ եվրոպական ժողովուրդն են, որոնք իրենց բացառիկ ջանասիրության և տնտեսողության շնորհիվ կարող են իրականացնել բրդե մանածագործական ապրանքների ավելի մեծ և լավ առևտուր՝ այն հասցնելով մինչև ուզբեկական Թաթարստան (այսինքն՝ Կենտրոնական Ասիա)՝ հյուսիսային Հնդկաստանի և Չինաստանի հետաղարձ ճանապարհով[286]: Նրանք միակն են եղել, որոնց առևտրական ուղիները հասել են մինչև Պատնա, Կատմանդու քաղաքները և Լհասա մայրաքաղաքը (1680-ականներից մինչև 1717-ը), Հիմալայներով դեպի Տիբեթ: Մասնավորապես 16-րդ դարի վերջին Տիբեթի Լհասա քաղաքում (ներկայիս ՉԺՀ-ի Տիբեթի ինքնավար մարզի վարչական կենտրոնը) եղել է հայկական փոքր համայնք, որ կապ է պահպանել Նոր Ջուղայի հետ: Այնտեղի հայերը մասնավորապես առևտուր են արել Լհասայից 1500 կմ հեռավորության վրա գտնվող Սինին (Սյինինգ) քաղաքի հետ (Ծինհայ նահանգ, Չինաստանի հյուսիս-արևմտյան շրջան), որտեղ հնդկական և եվրոպական ապրանքները փոխանակել են չինականի հետ: 1686–1691 թթ. Լհասայից Սինին են ճանապարհորդել նորջուղայեցի վաճառականներ Ծաուրը, Նիկողոս ու Դավութը, իսկ Պողոսի որդի Մելիջանը, տևական բնակություն է հաստատել այդ քաղաքում: Նրանց առևտրական տեսականիի մեջ եղել են ճուլածո ոսկի, թեյ, կտորեղեն, ինչպես նաև՝ մուշկ (չինական այծյամի արտաթորանքից ստացվող բանկարժեք նյութ, որը Եվրոպայում գործածվել է օծանելիքի արտադրության մեջ): Նորջուղայեցի վաճառական Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցին, որը 1682-1693 թթ. ճանապարհորդել է Իրանում, Հնդկաստանում, Նեպալում և Տիբեթում, դառնալով այդ տարածաշրջանում ճամփորդած չորրորդ օտարերկրացին, բազմապիսի տվյալներ է հաղորդում այդ երկրներում օգտագործվող չափ ու կշռի և դրամական միավորների մասին: Իր «Հաշվեմատյանում» նշել է, որ Լհասայի հայ առևտրականները Սինինում արծաթը փոխանակել են ոսկով, քանի որ արծաթը Չինաստանում ավելի հարգի է եղել՝ Եվրոպայի հետ համեմատ[287]: 17-րդ դարում Տիբեթ այցելած մի հայ քահանայի հիշատակել է ֆլամանդացի ճիզվիտ միսիոներ Ֆերդինանդ Վերբիեստը (1623–1688)[288]: Ինչպես վկայել է ֆրանսիացի ճանապարհորդ կրոնավոր Ժան-Բատիստ դյու Հալդը, 1735 թ. հայ առևտրականներն իրենց գործունեությունը ծավալել են նաև Սինինում, զբաղվել սուրճի վաճառքով, որ հավանաբար բերել են Հնդկաստանից՝ Տիբեթի ճանապարհով: Սուրճը բոլորովին նոր մշակույթ է եղել Չինաստանի՝

монограммами, «Труды Отдела Востока Государственного Эрмитажа», т. III, Ленинград, 1940, էջ 347-358):

[284] Տե՛ս Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան, 1992, էջ 261:

[285] Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010, էջ 59:

[286] Տե՛ս **Baladouni Vahé, Makepeace Margaret**, eds., Armenian Merchants of the Seventeenth and Eighteenth Centuries..., p. 223:

[287] Տե՛ս Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցու Հաշվեմատյանը, Երևան, 1984. տե՛ս նաև **Zekiyan Boghos Levon**, The Armenian Way to Modernity, էջ 41:

[288] Տե՛ս **Ahlenius Karl**, En Kinesisk vaerldskarta fraan 17de Aarhundrade, Band 8, Issue 4 af Skrifter, Uppsala, Akademiska Bokhandeln, 1903, էջ 11:

թեյի հայրենիքի համար, որտեղ թեյի պատմեշը անխորտակելի եղավ մինչև 20-րդ դարը[289]:

Հայերի ներկայությունը Տիբեթում ավարտվել է 1717-1720 թթ. ջունգարական ցեղերի ներխուժման հետևանքով, որին հետևել է չինական բռնազավթումը 1720-ին[290]:

Պետք է նշել, որ որոշ չինաբնակ հայեր ներգրավված են եղել նաև մաքսանենգության մեջ՝ կապեր ստեղծելով գաղութային կայսրությունների և դրսի շուկայի միջև: Նրանք հայթայթել են պերճանքի առարկաներ Կանտոնում՝ սիրաշահելու համար մանդարիններին: Որպես շրջիկ առևտրականներ ճամփորդել են ողջ Ասիայով մեկ՝ վաճառելով իրենց ապրանքները, Չինաստանում տարբեր հմտություններ են ներդրել, որոնք նպաստել են առևտրի ծաղկմանը: Համենայն դեպս, հայերը, որպես առանձին խումբ, հիշվում են մալայացիների, բուգիսների (ինդոնեզական ժողովուրդ), եվրոպացիների, ամերիկացիների, մահմեդականների և գեբրերի (իրանցի զրադաշտականներ) շարքում, ովքեր ընդգրկված են եղել այս տարածաշրջանի մաքսանենգ առևտրի մեջ, ինչպես «*համարյա ամեն ուրիշ էթնիկ խումբ*»[291]:

Իսկ ինչպիսի՞ն են եղել հայերի հարաբերությունները չինացիների և եվրոպացիների հետ: Պահպանված տեղեկություններից կարելի է որոշակի եզրահանգումներ կատարել: Անվիճելի է, որ առևտրականները եղել են մշտական մրցակցության մեջ. օրինակ, Կանտոնի հայ վաճառականները, ինչպես և Բատավիայի առևտրականները, լուրջ

[289] Տե՛ս **Adshead Samuel Adrian M.**, Material Culture in Europe and China, 1400-1800, London, 1997, էջ 64, **Aslanian Sebouh David**, From the Indian Ocean to the Mediterranean..., էջ 53-54: 18-րդ դարում Սինինում հայերի գոյության վերաբերյալ հիշել է նաև Եփրեմ Չագըճյանը՝ հիմնվելով հայր Հոիգիսի ուղեգրության վրա (տե՛ս **Չագըճեան Հ. Ե.**, Պատմութիւն Հայոց, նույն տեղում): Տիբեթի հայերի մասին մանրամասն տե՛ս նաև **Richardson H. E.**, Armenians in India and Tibet, "Journal of the Tibet Society," vol. 1 (1980), էջ 63-67:

[290] Տե՛ս **Aghassian Michel, Kévonian Kéram**, Le commerce arménien dans l'Océan Indien aux 17e et 18e siècles. Marchands et homes d'affaires asiatiques dans l'Océan Indien et la Mer de Chine 13e-20e siècles, etudes puelies dans la direction de Denys Lombard et Jean Aubin, Paris, 1988, էջ 158:

[291] **Antony Robert**, Elusive Pirates, Pervasive Smugglers: Violence and Clandestine Trade in the Greater China Seas, Hong Kong, 2010, p. 9.

մրցակիցներ են եղել տեղացի Հոնգ վաճառականների համար, ինչը չի խանգարել, սակայն, որ երբեմն ձեռք մեկնեն նրանց: Օրինակ, երբ 1717 թ. չինական կայսրությունն արգելել է անդրծովային առևտուրը, չինական ապրանքները բեռնվել են նաև Մակաոյի պորտուգալական և հայկական նավերի վրա[292]: Մյուս կողմից, առուծախի աշխարհում ամեն ինչ չէր կարող ընթանալ հարթ և առանց մեքենայությունների: Այսպես, անգլիացի հեղինակ սըր Ջոն Բարոուն հիշել է մի հայ վաճառականի, որը վաճառելու նպատակով խոշոր քանկարժեք մարգարիտ է բերել Կանտոն: Այստեղ նրան խաբել են չինացիները՝ ապրանքը խորամանկորեն փոխարինելով կեղծ մարգարիտով[293]: Բարոուն հիշել է, որ չինացիները, սակայն, հայերից առաջ չեն անցել: Նա հիշել է հայ Բաբումին (հավանաբար՝ վերոհիշյալ Գրեգորի Բաբումին), որը հավասարապես հայտնի է եղել ոչ միայն Կանտոնում, այլև Մադրասում և Բենգալիայում: Նա մինչև կես միլիոն ֆունտ ստեռլինգի վնաս կրելու պատճառով մի անգամ Հոնգ վաճառատան առևտրականներից մեկի մոտ խոշոր դրամի դիմաց գրավ է թողել, իր պնդմամբ, մարգարիտներով լի մի զարդատուփ, որը, ինչպես պարզվել է հետագայում, իրականում լցված է եղել չոր սիսեռով[294]:

18-րդ դարում Չինաստանում հայերի ներկայությունը հիշվել է անգլիացի հռչակավոր գրող Դանիել Դեֆոյի (1660–1734) «Ռոբինզոն Կրուզոյի կյանքը և արկածները» վեպի շարունակությունը հանդիսացող «Ռոբինզոն Կրուզոյի հետագա արկածները» վեպում: Այս վեպում Ռոբինզոնը վերադարձել է իր կղզին, այնուհետև կատարել շուրջերկրյա ճանապարհորդություն՝ Անգլիա վերադառնալով Չինաստանով և Ռուսաստանով: Վեպի իններորդ գլխում Դեֆոն մասնավորապես հիշել է, որ Ռոբինզոնը հայտնվելով Պեկինում՝ պորտուգալացի մի ծովայինից լսել է Մոսկվա մեկնող մի քարավանի մասին: «*Այս առավոտ*

[292] Տե՛ս **Cheong W. E.**, The Hong Merchants of Canton: Chinese Merchants in Sino-Western Trade, 1684-1798, Routledge, 1997, էջ 51:

[293] Տե՛ս **Barrow John Sir.**, Travels in China, Oxford, 1804, էջ 611-612: Այս մասին տե՛ս նաև՝ **Oliphant Oscar Sir.**, China: A Popular History, with a Chronological Account of the Most Remarkable Events from the Earliest Period to the Present Day, 1857, էջ 95:

[294] Տե՛ս **Barrow John Sir.**, Travels in China, էջ 612:

փողոցում ես հանդիպեցի իմ մի հին ծանոթի՝ մի հայի կամ որին դու կոչում ես հույն, որը նրանց մեջ է. նա եկել էր Աստրախանից, և պատրաստվում էր մեկնել Տոնկին (Չինաստանի հարավային սահմանակից Վիետնամի հյուսիսային մասը – Ա. Բ.), *որտեղ ես նախկինում ճանաչել եմ նրան, սակայն նա փոխեց իր միտքը և այժմ որոշեց քարավանի հետ Մոսկվա վերադառնալ և այնտեղից Վոլգա գետով իջնել Աստրախան»*[295]:

17-18-րդ դդ. Չինաստան մուտք գործած հայերը եղել են ոչ միայն վաճառականներ: Այս ժամանակաշրջանում Չինաստան է այցելել ծնծղաներ պատրաստող աշխարհահռչակ Զիլճյան ընտանիքի նախապապը՝ պոլսեցի պղնձագործ Գրիգոր աղա Զիլճին: Չինաստանում տեսած տամտամների հիման վրա նա 1623-ին ստեղծել է դրանց կատարելագործված տեսակը[296]: Գրիգոր աղան ծնծղայի պատրաստման գաղտնիքը փոխանցել է որդուն՝ Հարությունին, և այդ հարվածային գործիքի պատրաստման մենաշնորհն աշխարհում մինչ օրս պատկանում է Զիլճյաններին:

Նույն 17-րդ դարում Չինաստանում է եղել նաև Արիստակես եպիսկոպոսը, ինչի մասին նա վկայել է 1685-ին Հռոմում գրած մի նամակում: Նա մասնավորապես գրել է, որ ինքը Չինումաչինում ծանոթացել է տպագրական արհեստի գաղտնիքներին և առաջարկել է թուրքերեն, արաբերեն և պարսկերեն լեզուներով քրիստոնեական հավատը տարածող հրատարակություններ ձեռնարկել՝ այդ ժողովուրդների մեջ քրիստոնեություն տարածելու նպատակով[297]:

Հայազգի կոմս Սուլեյման Կոստանդին դե Սիրին (17-րդ դար) երիտասարդ տարիքում տարվել է Պորտուգալիայի արքունիք և դաստիարակվել բազավորին սպասարկող պատանիների հետ: Շրջել է Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում: 1689-ին մեկնել է Պարսկաստան որպես Ռեչ Պոսպոլիտայի դեսպան՝ տանելով Լյուդովիկոս 14-րդի նամակները և այլ նամակներ Չինաստանի կայսեր և իշխանների համար: Պատասխանատու դիվանագիտական հանձնարարություններ է կատարել նաև Կ.Պոլսում, Ավստրիայում, Ռուսաստանում և այլուր: Սակայն նա Չինաստան չի հասել. 1690-ին խեղդամահ է եղել Սպահանում մի պարսիկի կողմից[298]:

18-րդ դարում Չինաստանից Մեքսիկա է մեկնել ծնունդով նորջուղայեցի մի հայ երիտասարդ՝ Պետրոսը: Ակապուլկոյում նա մեղադրվել է հերետիկոսության մեջ և բանտարկվել է: Մեքսիկական ինկվիզիցիան նրան գրել է տվել իր ինքնակենսագրությունը, որից էլ տեղեկանում ենք, որ նա եղել է Հնդկաստանում և Չինաստանում, իսկ Մեքսիկա է եկել հավանաբար առևտրական գործերով: Մեքսիկայի գլխավոր արխիվում պահվում է նրա իսպաներեն կենսագրությունը, որտեղ նա հիշվում է որպես **Դոն Պեդրո դի Զառատե**[299]: Նրա հետագա ճակատագիրը մնում է անհայտ:

Հիշենք նաև, որ այս նույն ժամանակահատվածում՝ Մադրասում տպագրվող հայ մամուլի առաջնեկ «Ազդարար»-ում 1794–1796 թթ. թղթակցություններ են տպագրվել նաև Չինաստանից՝ տալով ամենատարբեր տեղեկություններ այդ երկրի մասին: Օրինակ, 1795-ին լույս է տպագրվել կայսեր կողմից գահը հանձնելու վերաբերյալ («*Չինու Եմպրադօռն գոլով ծերացեալ, առաջադրեալ է առաջիկայ տարոյն յանձնել զիշխանութիւնն իւր մի 'ի թոռանց իւրոյ, զոր առաջադրեալ է*

[295] **Defoe Daniel**, The Farther Adventures of Robinson Crusoe; Being the Second and Last Part of His Life, and of the Strange Surprizing Accounts of His Travels Round Three Parts of the Globe, London, 1719, p. 306. The Novels of **Daniel Defoe**: Life and adventures of Robinson Crusoe to which is Prefixed a Biographical memoir of Daniel De Foe, vol. III, Edinburgh, 1810, p. 245-246. Իտալերեն թարգմանության մեջ այս հայի հատվածն առկա է (տե՛ս **Defoe Daniel**, La vita e le avventure di Robinson Crusoe: storia galante che contiene, tra gli altri avvenimenti il soggiorno ch'egli fece per vintott' anni in un isola deserta situata sopra la costa dell' America vicino all' imboccatura della gran riviera Oroonoca. Il tutto scritto da lui medesimo. Traduzione dal francese, tomo primo, Venezia, 1763, էջ 246), մինչդեռ ռուսերեն թարգմանության մեջ բացակայում է (տե՛ս **Дефо Даниэль**, Дальнейшие приключения Робинзона Крузо, Москва, 2006, էջ 564):

[296] Ծնծղաների պատրաստման և Զիլճյան ընտանիքի վերաբերյալ հայ մամուլում լույս տեսած առաջին հոդվածներից տես՝ **Սերո Շնորհալի** [Միհրան Գասպարյան], Ծնծղայի դատ, «Հայրենիք», Պոսթըն, 4.04.1929:

[297] Տե՛ս **Քիպարեան Յ.**, Հետաքրքրական վաւերաթուղթ մը, «Բազմավէպ», Վենետիկ, 1962, թ. 4-8, Ասրիկ-Օգոստոս, էջ 122-123:

[298] Տե՛ս **Կյուլպենկյան Ռ. Վ.**, Հայ-պորտուգալական հարաբերություններ, էջ 327:

[299] Տե՛ս Кино, человек, время, էջ 22:

լինիլ արու ժառանգն տէրութեան իւրոյ»[300]): Հիշարժան է նաև 1795-ին Մադրասում գրված մի թղթակցություն, որտեղ ներկայացվում են Չինաստանը (մասնավորապես՝ Կանտոնը) և այնտեղ տիրող բարքերը: Անանուն հեղինակը մասնավորապես նշում է, որ Կանտոնում հնարավոր է առևտուր իրականացնել թե՛ կանխիկ, թե՛ ապառիկ դրամով, որ «*Երկիրն չինաց է բազմամբոխ եւ յոյժ մեծ առ եւ արի տեղ, միայն հարկ է մեծաւ զգուշութեամբ վարիլ*», և որ «*Չինէացիք ունին բարի սովորութիւն ընծայս մատուցանել (ըստ արժանեացս) ամեն վաճառականաց ընդ որ ունիցի տուր եւ առութիւն, այսու եկամտում չէ սակաւ, բայց ծուխն օտարականաց է ծանր*», և որ Չինաստանում գոյություն չունի դատաստանատուն՝ բացի մարդասպանության դեպքերի համար[301]:

Այս ժամանակաշրջանի չինարենակ հայերից առանձնակի ուշադրության է արժանի թարգմանիչ **Հովհաննես Ղազարը** կամ անգլիական ձևով՝ **Ջոաննես Լասսարը** (Joannes Lassar), որն առաջիններից մեկն է չինարեն թարգմանել Աստվածաշունչը: Նրա վերաբերյալ առաջին հիշատակությունը թողել է Չինաստանում գործած վերապատվելի դոկտոր Կլաուդիուս Բըքենենը՝ 1811-ին, Բոսթոնում հրատարակված «Քրիստոնեական ուսումնասիրություններ Ասիայում» աշխատության մեջ (վերահրատարակվել է 1819-ին, Լոնդոնում)[302]: 18-րդ դարի վերջին Բենգալիայի Սերամփուր (Սերամփոր) քաղաքում բրիտանական Արևելա-Հնդկական ընկերության հովանավորությամբ կրթական և գիտական աշխույժ գործունեություն է ծավալել Ֆորթ Վիլյամ անգլիական բողոքական միսիոներների քոլեջը: Այս հաստատությանը մեջ գործել է հատուկ խումբ՝ Աստվածաշնչյան ընկերակցությունը, Սուրբ Գիրքն արևելյան լեզուներով թարգմանելու նպատակով: Խմբի ղեկավարները փափագել են Սուրբ Գիրքը թարգմանել տալ չինարեն և որոնել են այդ լեզվին հմուտ մեկը, որը ոչ միայն կթարգմանի, այլև քոլեջում կդասավանդի չինարեն: Մինչդեռ Արևելահնդկական ընկերության Բենգալիայի տարածքում չի եղել մեկը, որը նույնիսկ տարրական չինարեն գիտենար: Եվ ահա երկար և ապարդյուն որոնումներից հետո Ֆորթ Վիլյամի պաշտոնյաները գտել են չինահայ առևտրական Հովհաննես Ղազարին:

Այդ հայորդին ծնվել էր 1778-ին (այլ տվյալով՝ 1781-ին), Մակաոյում: Նա որդին էր վերոհիշյալ մակաոցի մեծահարուստ Մատթեոս Հովհաննես–Մեթյու Ջոաննեսի եղբոր՝ առևտրական Լազար (Լազարո) Ջոաննեսի (Ղազար Հովհաննես)[303]: Որդին չինարենին տիրապետել է մանկուց՝ իրենց տանը ապրող երկու քրիստոնյա չինացի տղամարդ և կին ծառաներից: Հայերենից և չինարենից բացի իմացել է նաև անգլերեն և պորտուգալերեն: Հետագայում Ղազար Հովհաննեսը մի չինացի ուսուցիչ է բերել Կանտոնից՝ որդուն չինարեն գրել և կարդալ սովորեցնելու: Չափահաս դառնալով՝ Հովհաննես Ղազարն իր գործունեությունը սկսել է Կանտոնում՝ պաշտոնավարելով տեղի պորտուգալական գրասենյակում, խմբագրելով պորտուգալացիների կողմից Պեկինի արքունիք ուղարկվող պաշտոնական գրությունները: Ապա զբաղվել է վաճառականությամբ:

1802-ին 24-ամյա Հովհաննեսն առևտրական նպատակներով ընտանիքով տեղափոխվել է Կալկաթա, որտեղ որոշ դժվարություններ է ունեցել: Անգլիական իշխանությունները, տեղեկանալով նրա չինագիտությանը, հրավիրել են աշխատելու որպես չինարենի թարգմանիչ: Հովհաննեսին առաջարկել են ամիսը 300 ռուփի (տարեկան 450 անգլիական ոսկի) վարձատրությամբ մշտական աշխատանքի անցնել Ֆորթ Վիլյամ քոլեջում և զբաղվել Աստվածաշնչի չինարեն թարգմա-

[300] «Ազդարար», Կալկաթա, Շբաթ ամսոյ, 1795, թիւ 9, էջ 250:
[301] «Ազդարար», Կալկաթա, Նիրհան ամսոյ, 1795, էջ 79, 82:
[302] Տե՛ս **Buchanan Claudius Rev.**, Christian Researches in Asia: With Notices of the Translation of the Scriptures Into the Oriental Languages, 1819, London, էջ 223, 227: Այս աղբյուրի հիման վրա կազմվել է հետևյալ հրապարակումը՝ **Պէրպէրեան Հ.**, Յովհաննէս Լասսար. հայ մը որ Աւետարանը չինարէնի թարգմանած է, «Ապագայ», Փարիզ, 11.05.1935: Նույնը տե՛ս՝ **Պէրպէրեան Հ.**, Հայ չինագէտ մը՝ Յովհաննէս Լասսար, որ Աստուածաշունչը չինարէնի թարգմանած է, «Ճառագայթ», Ստամպուլ, 18.08.1951:

[303] Այս ժամանակաշրջանում որդիները կրել են հոր անունները՝ որպես ազգանուն, որի արդյունքում նույն սերնդի մարդկանց ազգանունները տարբեր են եղել:

նությամբ: Հովհաննես Ղազարը համաձայնվել է այս պայմաններով թողնել առևտրական ասպարեզը: Քոլեջի ղեկավարությունը, չկարողանալով Անգլիայից հայթայթել պահանջվող գումարը, վճռել է իրենց բյուջեից՝ հոգալ Ղազարյանի աշխատավարձը՝ գիտակցելով գործի կարևորությունը: Աշխատանքի անցնելով 1804-ին՝ երիտասարդ հայորդին անմիջապես ձեռնամուխ է եղել Աստվածաշնչի թարգմանությանը: Ձեռքի տակ ունենալով հայերեն և անգլերեն հրատարակությունները՝ նա նախապես թարգմանել է Հովհաննու Ավետարանը: Մեկ տարի անց նրան գտել է Սերամփուրի միսիոներական հաստատության ղեկավարությունը՝ ի դեմս վերոհիշյալ վերապատվելի Կլաուդիուս Բըքենենի և հրավիրել աշխատանքի՝ որպես չինարենի ուսուցիչ: Քոլեջի ղեկավարները և հատկապես Աստվածաշնչյան ընկերակցության հանձնախումբը ջերմորեն են ընդունել հմուտ չինագետ Հովհաննես Ղազարին՝ կատակելով, թե «*Չինաստանը Սերամփուր եկավ՝ փոխանակ Սերամփուրը գնար Չինաստան*»: 1805-ին նա թարգմանել է Գիրք Ծննդոցը և Մատթեոսի Ավետարանը: Այս գործում նրան օժանդակել են 1806 թ. սեպտեմբերին Ֆորթ Վիլյամ քոլեջի ռեկտոր վերապատվելի Դեյվիդ Բրաունը Անգլիա ուղարկած մի նամակում նշել է. «*Պարոն ուսուցիչ Լասսարն ինձ ուղարկել է երեք չինական ձեռագրեր, նույն լեզվի տառերով, իր սեփական գլխի և ձեռքի աշխատանքը: Քանի որ նշված փորձ ձեռագրերը այս առավոտվա հասցեով արտադրություն են, ես չեմ հանձնարարում դրանք խիստ քննադատության, սակայն պարոն Լասսարը կատարյալ չինացի է և նա հրաշալի աշխատանք կկատարի՝ Աստվածաշունչը թարգմանելով այդ լեզվով, եթե Աստված նրան հինգ կամ վեց տարվա կյանք տա: Նա այդ լեզվով կարդում է ամեն ինչ այնքան արագ, որքան դուք՝ անգլերեն, և նույնպես գրում է արագորեն*»[304]:

1807-ին Լասսարն ավարտել է Մատթեոսի Ավետարանի թարգմանությունը, արտագրել չինական գեղագրությամբ և ուղարկել Մեծ Բրիտանիա, Քենթրբերիի արքեպիսկոպոսին, Լամբեթի մատենադարանի համար՝ որպես Քենգալիայի չինական հիմնարկության երախայրիք: 1808 թ. Հնդկաստանի ընդհանուր կառավարիչ լորդ Մինթոն Ֆորթ Վիլյամ քոլեջի տարեկան հանդեսի ժամանակ մեծ գոհունակությամբ և գովեստով հիշել է, որ երեք երիտասարդներ ոչ միայն չինարեն են խոսում, այլև կարդում են ու թարգմանում: Այդ առթիվ լորդ Մինթոն հատուկ նշել է նաև Ջոաննես Լասսարի եռանդուն և հարատև ջանքերը ու Նոր կտակարանի երեք հիմնական գրքերի (Մատթեոսի, Ղուկասի և Մարկոսի Ավետարանների) թարգմանությունները, որոնք տպագրվել են 1810-ին՝ քոլեջում հաստատված չինական տպագրական մեքենայով:

Լասսարի չինարեն թարգմանած Նոր կտակարանը լույս է տեսել 1813-ին, երկու հատորով, իսկ ամբողջական Աստվածաշունչը հինգ հատորով՝ 1822 թվականին, Սերամփուրում[305]: Սա չինարեն Աստվածաշնչի ամենավաղ տպագրությունն է, քանի որ ավարտվել էր 1822-ին, մեկ տարի շուտ, քան չինագիտությանն առավել հայտնի «Շեն-ծիան չեն-շու» աստվածաշնչյան թարգմանությունը, որ կատարել էին անգլիացիներ Ռոբերթ Մորիսոնը և Վիլյամ Միլնը (տպագրված Մալակկայում, 1823-ին): Վերջապես, լինելով բապտիստ քարոզիչների նախաձեռնությունը, Լասսարի թարգմանությամբ սկիզբ է դրվել Աստվածաշնչի չինարեն բապտիստական թարգմանություններին, այն առավել կամ պակաս չափով անկախ էր՝ մյուս բողոքական քարոզիչների թարգմանական փորձերից: Չնայած առկա որոշ սխալներին՝ Լասսարի թարգմանությունը համարվում է Սուրբ Գրքի չինարեն լավագույն թարգմանություններից մեկը: Մասնագետները Լասսարի և Մարշմանի չինարենը դասակարգում են վենլի (գրական լեզու) կարգին՝ ի տարբերություն ազատ վենլիի (պակաս գրական) և գուո-յուի (ազգային համընդհանուր լեզվի)[306]:

[304] The Chinese Repository, vol. IV, no 6, Canton, 1835, p. 252.

[305] Անգլիալեզու աղբյուրներում հայտնի որպես The Old and New Testaments in Chinese, translated by Joannes Lassar and Joshua Marshman, issued in 5 volumes, Serampore, 1822:

[306] Տե՛ս **Sinquist Scott W.**, ed. A Dictionary of Asian Christianity. Michigan-Cambridge, 2001, էջ 85:

Արդեն 1847 թ. հրատարակած չինագիտության մասին իր մի հոդվածում գերմանացի գիտնական, հայագետ և չինագետ Կարլ Ֆրիդրիխ Նյումանը հիշել է, թե ինչպես Հովհաննես Ղազարը մի քանի չինական գրքերով և երկու չինացի քրիստոնյաների հետ եկել է Ֆորթ Վիլյամ քոլեջ, որտեղ ինքը լեզվի պրոֆեսոր էր, և առաջինն է Չինաստանի սահմաններից դուրս զբաղվել Աստվածաշնչի թարգմանությամբ: Նյումանը նշել է, որ թարգմանության համար Ղազարը հիմք է ընդունել «*դեռևս 5-րդ դարում կատարված հայկական հրաշալի թարգմանությունը*» և ծանոթագրել, որ Հին Կտակարանը հայ եկեղեցում թարգմանել են ասորերենից այսպես կոչված սուրբ թարգմանիչները, որից հետո միայն հետագայում ասպարեզ է իջել նաև հունարենից կատարված թարգմանությունը[307]:

Նշենք նաև, որ Ջոաննես Լասսարին թարգմանության գործում աջակցել է անգլիացի չինագետ, բապտիստական քարոզիչ Ջոշուա Մարշմանը (1768–1837)՝ վերոհիշյալ երկու չինացի քրիստոնյաների հետ մեկտեղ: Մարշմանն արդեն փորձ է ունեցել Աստվածաշունչը տարբեր հնդկական լեզուներով թարգմանելու գործում: Նա 1808-ին Լասսարի օժանդակությամբ թարգմանել և հրատարակել է Կոնֆուցիուսի[308] գործերի առաջին հատորը, որը հրատարակել է չինարեն բնագրով և անգլերեն թարգմանությամբ: Մարշմանի և Լասսարի աշակերտները նկատելի դեր են կատարել չինական մշակույթն Արևմուտքին ծանոթացնելու գործում[309]...

[307] Տե՛ս **Neumann K. F.**, Die Sinologen und ihre Werke (Schluss), "Zeitschrift der Deutschen Morgenlaendischen Gesellschaft", Band 1, 1847, էջ 217-237. Սույն տեղեկությունը մեզ սիրահոժար տրամադրելու համար մեր շնորհակալությունն ենք հայտնում գերմանաբնակ պատմաբան Ազատ Օրդուխանյանին:

[308] Չին մեծ մտածողի անունը մեզանում արմատավորվել է նրա լատինական տարբերակով, չինարեն նրա անունը հնչում է Կուն Ֆու Ցի: Այս ձևը հայ գրավոր խոսքում հանդիպել է տակավին 1902 թ. (տե՛ս **Հանդրցեան Կ.**, Նամակ Ծայրագոյն Արեւելքից («Նոր-Դար»-ի թղթակցութիւն), «Նոր-Դար», Թիֆլիս, 9.03.1902):

[309] Լասսարի մասին չինարեն վերջին հրատարակություններից տես՝ 马敏，《马希曼、拉沙与早期的〈圣经〉》中译》，《历史研究》，1998，年第4期，էջ 45-55页:

Հայագիտության համար կարևոր է այն փաստը, որ Հովհաննես Ղազարը մասնակցել է Սերամփուրում 1817 թ. հայերեն Աստվածաշնչի տպագրության աշխատանքներին[310]...

Ինչպես ամենուրեք, Չինաստանում ևս հայերի նյութական հաջողությունը պատճառ է դարձել, որ թե՛ տեղացիները, թե՛ օտարազգիները թշնամանքով վերաբերվեն նրանց: Արդեն 18-րդ դարում հայերը մրցակից են դարձել անգլիացիների համար, որոնք սկսել են նրանց հալածել և բռնագրավել նրանց նավերը՝ որպես թշնամու սեփականություն: Այսպես, 1780-ին Կանտոնի մոտ բրիտանացիները բռնագրավել են «Սանտա Ռետա» նավը, որը պատկանել է հայ Մկրտիչ Վասելիին և մի հույնի: Պահպանվել է այս խնդրով Մկրտչի հայց-նամակը Լոնդոնում բնակվող իր նորջուղայեցի ծանոթին, որի վերաբերյալ պատմաբան Սեպուհ Ասլանյանը նկատել է, որ ուշագրավ է այն հարազատությունը և ազգային զգացումը, որ վկայակոչել է այս չինաստանցի հայը՝ հեռավորության վրա հաստատելու համար վստահություն և համերաշխություն աշխարհի մյուս ծայրում գտնվող նորջուղայեցի հայրենակցի նկատմամբ[311]: Կանտոնի հայերը 1783-ին ենթարկվել են զանգվածային կողոպուտի, և չնայած իշխանությունները պաշտպանության տակ են առել հայերին, նրանց մի մասը հեռացել և հաստատվել է Մակաոյում և Հնդկաչինում[312]: Ավելի ուշ, 1858 թ. Հնդկական օվկիանոսում հայերին պատկանած «Հարություն Աբգար» նավը կողոպտել են չինացի ծովահենները[313]:

գ) 19-րդ դար

Բրիտանացիների հետևողական հալածանքների պատճառով չինաբնակ հայերի մի մասը 18-րդ դ. վերջին ստիպված արտագաղթել է Չինաստանի հարավ-արևելքում գտնվող Հոնկոնգ կղզի (որը 1842-ին

[310] Լասսարի մասին մանրամասն տե՛ս **Гинн Р.**, Andin..., էջ 49-85:

[311] Տե՛ս **Aslanian Sebouh**, Trade Diaspora versus Colonial State...., էջ 67:

[312] Տե՛ս **Աբրահամյան Ն.**, Չինաստան, էջ 431:

[313] Տե՛ս **Քարսեղով Յու.**, Ծովահենություն, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, Երևան, 1979, էջ 136:

անցել է անգլիական տիրապետության տակ, 1997-ից վերստին Չինաստանի մաս կազմել), Սինգապուր և պորտուգալական գաղութ Մակաո, սակայն հաջորդ դարում Չինաստանի հայերի թիվն ավելացել է ի հաշիվ Հնդկաստանից գաղթածների: Նրանք հիմնականում հաստատվել են Կանտոնում: 1845-ին հայ մամուլում հայության աշխարհաքաղաքացիական բնույթը ներկայացնող մի հոդվածում նշված է, որ շատ երկրներում հայերը տեղի առևտուրը վերցրել են իրենց ձեռքը, որ «*Բօրնիոյ, Սումատրի և Ջավու կղզինանու վաճառականաց մէջ ողջիցն հարուստ Հայերն են: Հնդկաստան, Պարսկաստան եւ Կովկասու երկրների մէջ առաջին տեղն Հայոցն է. եւ կզարմանանք Կանթօնի մէջ եւս Հայ վաճառական տեսնելով*»[314]:

1817 թ. Չինաստանի հայերը Էջմիածին են ուղարկել մի գեղեցիկ շուրջառ, որի վրա պատկերված կերպարներն ունեն որոշ չինական դիմագծեր: Այդ շուրջառը գործածվում է կաթողիկոսի օծման ժամանակ: Այն ցուցադրվում է Մայր տաճարի թանգարանում: Իսկ Էջմիածնի Գանձատանը (Մարի և Ալեք Մանուկյան թանգարան) ցուցադրվում են Չինաստանում պատրաստված այլ առարկաներ՝ 18-րդ դարում պատրաստված մի նկարազարդ վարագույր (պատկերում է Հիսուսի խաչելությունը. կերպարների դեմքերին նույնպես նկատելի են չինական գծեր), մի կաթողիկոսական ամպհովանի և մի փորուրար:

1820-ականներին Չինաստան և Հնդկաստան է այցելել կրթական, մշակութային գործիչ Պողոս Պետրոս Լազարովիչը, մասնավորապես եղել Կանտոն քաղաքում[315]:

19-րդ դարի առաջին կեսին Չինաստանում սկսել են հաստատվել սակավաթիվ հայեր Իրանից, Հնդկաստանից և Ինդոնեզիայից: «*Ճանապարհն բաց է. եւ իրաւունք արձակ ամենայն Հայոց: Կոստանդնուպոլիս մերձաւորագոյն է Հնդկաց եւ Չինաց՝ քան զԼոնդոն եւ զՓարիզ: Հայք կան 'ի Հնդիկս եւ 'ի Չին: 'Ի միջոցին անգամ գրեթէ յամենուրեք գտանին յազգէս մերմէ, եւ ամենեքին գրեթէ վաճառականութեամբ կեան*»[316]: «*...սկսեալ յԱտրպատականէ մինչեւ Չին, եւ 'ի Քաբօլ. է ուրէք՝ որ շատ, եւ է ուրեք՝ որ սակաւք գտանին յազգէս Հայոց*»,– գրել է ժամանակի մամուլը[317]: 1847 թ. Զմյուռնիայի «Արշալույս Արարատեան» պարբերականը (թիվ 291) հարց է տվել, թե կա՞ն արդյոք հայեր կամ հայկական վաճառատուն Չինաստանում: Ի պատասխան Կալկաթայի «Ազգասէր» երկշաբաթաթերթը պատասխանել է, որ «*Աղաբէգեան Եղբարք անուամբ հայազգի մեծապատիւ հարուստ վաճառականք գլխաւոր վաճառատուն են՛ 'ի Չին հաստատեցին*»[318]: Աղաբեգ ընտանիքի անդամները՝ Կարապետը, Ալեքսիսը, «*ուսումնասէր պարոնայք*» Մկրտիչը և Զնբլում Ղազարը, մշտապես երթևեկել են Հնդկաստանի և Չինաստանի միջև՝ «*առ 'ի գործ մեծաշահ վաճառականութեան տեղւոյն*»[319]: Աղաբեգներից բացի նշանավոր է եղել Կալկաթայում բնակվող մեծահարուստ վաճառական Սեթ Արզարի ընկերությունը, որի առևտրական նավերը Չինաստանից հասել են մինչև մեծ Բրիտանիա՝ ճանապարհին մտնելով երեք ցամաքամասերի բազմաթիվ նավահանգիստներ[320]:

Ի դեպ, «Ազգասէր Արարատյան» պարբերականը Կանտոնում ունեցել է սեփական թղթակից[321]: Կանտոնում թղթակից է ունեցել նաև Մադրասում լույս տեսնող «Բանասեր» խմորատիպ պարբերականը,

314 Բանասիրականք. Յառաջադիմութիւն ազգային, «Ազգասէր», Կալկաթա, 27.09.1845, էջ 53:

315 Տե՛ս նրա ուղեգրական հատորը՝ **Լազարովիչ Պողոս Պետրոս**, Ստորագրութիւն Կալկաթայ քաղաքի զոր արար պարոն Պողոս Պետրոս Լազարովիչ Կոստանդնուպօլսեցի ի ճանապարհորդել իւրում յարեւելեան հնդիկս, Վենետիկ, 1832:

316 Քաղաքականք. Կալկաթա, «Ազգասէր», Կալկաթա, 4.12.1847, էջ 386:

317 Քաղաքականք. Կալկաթա, «Ազգասէր Արարատեան», Կալկաթա, 5.11.1848, էջ 42:

318 Քաղաքականք. Կալկաթա, «Ազգասէր», Կալկաթա, 4.12.1847, էջ 385:

319 Քաղաքականք. Կալկաթա, «Ազգասէր Արարատեան», Կալկաթա, 30.05.1850, էջ 590:

320 Ի դեպ, Սեթ Արզարի Կալկաթայի ֆիրմայում ծառայել է իր յուրահատուկ գործունեությամբ հայտնի, Սինգապուրում ծնված հրեա ճանապարհորդ Իսահակ Բենիամինը (1845–?) և նրա նավերից մեկով ճանապարհվել է Չինաստան: Արզարը նրան պաշտոն է խոստացել Շանհայում կամ Հոնկոնգում, սակայն խոստումը չի կատարել, ուստի Բենիամինը վերադարձել է Կալկաթա (տե՛ս **Гитлин С. И.**, Национальные меньшинства в Узбекистане: прошлое и настоящее, т. 1, часть 1, 2004, Ташкент, էջ 172):

321 «Գ-րէ սիրելի թղթակից մեր 'ի Կանտօնայ....», «Ազգասէր Արարատեան», Կալկաթա, 15.01.1850, էջ 383:

որի հաղորդագրությունները տպագրվել են «Չին» ենթախորագրի ներքո[322]:

1845-ին Կանտոնում է հաստատվել ծնունդով մադրասցի վաճառական **Սեթ Ավետ (Ավիետ) Սեթը** (Սեթյան, 1810–1875) Սինգապուրից, որը հետագայում տեղափոխվել է Հոնկոնգ, որտեղ և մահացել է: Նույն ընտանիքից է սերել **Պետրոս (Փիթեր) Ավետ Սեթը** (1813–1886): Սինգապուրի հայ համայնքի այս ներկայացուցիչը 1828-ին եկել է Հոնկոնգ, առևտուր է արել Բոռնեո կղզու վաճառականների հետ: Փորձել է հայկական գաղթավայր հաստատել Մելբուռնում, ինչի ձախողումից հետո վերադարձել է Սինգապուր և շարունակել առևտուրը Չինաստանի, Մակաոյի, Ճավայի, Ավստրալիայի (Սիդնեյ և Մելբուռն) հետ: Կնոջ մահից հետո Սեթն ապրել է **Էդգար Գալստոնի** հետ, որի հետ 1886 թ. եկել է Հոնկոնգ: Թե՛ Սեթը, թե՛ Գալստոնը վախճանվել են Հոնկոնգում[323]:

1850-ին Հնդկաստանից Կանտոն է տեղափոխվել ծնունդով կալկաթացի առևտրական Ավետիս Ղազար Աղաբեկը (1827–1876): Մեծ գումարներ է նվիրել ազգին և Եկեղեցուն: Մահացել է Հոնկոնգում. համարվում է առաջին հայը, որը թաղվել է Հոնկոնգի օտարազգիների գերեզմանատանը[324]: Չինական առևտրի շնորհիվ են հարստացել նաև հնդկահայ վաճառականներ, ազգային բարերարներ Էդուարդ Ղարամյանը և Սամուել Մուրադը. առաջինն առևտուր է արել Չինաստանի և Ֆիլիպինների հետ, երկրորդը զբաղվել է մարգարտի փոխանակությամբ Չինաստանի վաճառականների հետ[325]:

Այս շրջանում, նույնպես Չինաստան և Սինգապուր, առևտրական գործերով երթևեկել է նաև ծնունդով նորջուղայեցի Կարապետ Ղուկաս Խոջամալը: Նրանից բացի 1850 թ. տվյալներով Չինաստանում հաստատված հայերի մեջ հիշվում են նաև հետևյալ անունները՝

[322] Տե՛ս, օրինակ, «Բանասէր», Մադրաս, 11.12.1848 («*Չին:– «...գիր ընկալաք ՚ի պատուելի բղթակցէ մերմէ որ ՚ի Կանտոնի*»):
[323] Տե՛ս **Lim Patricia**, Forgotten Souls: A Social History of the Hong Kong Cemetery, 2011, էջ 438:
[324] Տե՛ս նույն տեղում, էջ 19:
[325] Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, էջ 323:

նորջուղայեցի Մ. Գ. Մկրտում, կալկաթահայեր Ավետիք Աղաբեգյան և Վարդան Հորդանան, մադրասեցի Սեթ Ա. Սեթյան[326]: Այս տեղեկությունը տվողը ցանկություն է հայտնել նրանց միջև սեր և միաբանություն տեսնել: Մի քանի ամիս անց, նշելով, որ չինաբնակ հայերի թիվը յոթն է, նա որոշակիացրել է իր ցանկությունը՝ նրանց միավորումը շահեկան համարելով ոչ միայն ազգային, այլև զուտ տնտեսական առումներով: «*Ահա՜ թիւ մերազնէից ՚ի Չին՝ ըստ տկար իմացութեան մերոյ՝ հասանէ չեօքն, եւ եթէ ամենեքին միաբանիցին ՚ի մի տուն եւ յընկերութիւն եւ զամենայն գործառնութիւնս իւրեանց սիրով եւ խորհրդով կատարիցեն. անշուշտ հաւատամք, որ զկնի քանի ամաց՝ Հայկազանց ընկերութիւն ՚ի Չին՝ զերեւելի տեղին գրաւէ ՚ի մէջ ամենայն վաճառականաց Կանթոնայ: Փոխանակ զեօթն տունս վարձելոյ կարեն զմի ընդարձակ ապարանս վարձել կիսոյ գնովն. փոխանակ վեց կամ ութն ծառայս ունելոյ, կարեն եօթքն վեցովն կառավարիլ. եւ զմի սեղան հասարակաց ունելով՝ այնպէս բաժանել զպաշտամունս իւրեանց ՚ի մէջ. մինչ ասել եւ կատարելն մին լիցի. եւ այն՝ հասուն խորհրդով: Փրկութիւն աւելորդ ծախուցն բաւական լինի զամենեսին մխիթարել. եւ հաւատ նուիրողացն եւս բաւարարութիւն տայ: Փորձեսցե՛ն թող զայս խորհուրդ*»[327]: Մեկ այլ առիթով, առարկելով մի հոդվածագրի, ըստ որի «*եթէ ազգային ընկերութիւնք յիշեսցին՝ ծիծաղիմք եւ եթ. եւ եթէ ազգային վաճառատունք՝ խնդա՜մք միայն. բայց ո՛չ միում զմի զանգ, եւ ո՛չ միւում զմի հակ ՚ի մթերացս՝ հաւատամք. բարէ՜ ազգասիրական հոգւոյս*», «Ազգասերը» (ամենայն հավանականությամբ՝ խմբագիր Մեսրոպ Թաղիադյանը) առարկել է՝ գրելով. «*Այս դիտողութիւն ուղիղ չէ, քանզի Չին, Սինկափուր, Պինանգ, Ռանգուն, Մադրաս եւ Կալկաթա բնակիչք գրեթէ ամենեքին կապակցեալ են ընդ իրեարս մերազգիք օգնականութեամբ եւս եւ մեծամեծ հաւատովք*»[328]:

[326] Տե՛ս Քաղաքականք. Կալկաթա, «Ազգասէր Արարատեան», Կալկաթա, 15.05.1850, էջ 315:
[327] Քաղաքականք. Կալկաթա, «Ազգասէր Արարատեան», Կալկաթա, 30.05.1850, էջ 590:
[328] Քաղաքականք. Կալկաթա, «Ազգասէր», Կալկաթա, 4.12.1847, էջ 386:

19-րդ դարի կեսին Հոնկոնգում գործել է Հայկական տպարան, որտեղ մասնավորապես 1859 թ. տպագրվել է Հոնկոնգի 93 էջանոց տեղեկատուն[329]: Նույն ժամանակաշրջանում Հոնկոնգի դատարանում եղել է հայազգի անդամ: 1869-ի հունիսի 23-ին «Չայնա մեյլ» պարբերականում տպագրվել է մի բղթակցություն, որի հեղինակը դժգոհել է Հոնկոնգի դատարանի բազմազգ կազմից՝ ի շարս պորտուգալացի, գերմանացի, ամերիկացի, փարսի, չինացի և անգլիացի երդվյալ ատենակալների, առանց անունը տալու նշել է նաև մեկ հայի[330]:

19-րդ դարում տարբեր առաքելություններով չինական բնակավայրերում երբեմն հայտնվել են հայ ճանապարհորդներ: Հնդկաստան, Չինաստան և Սինգապուր այցելած Գրիգորիս արքեպիսկոպոսն իր գրառումներում տեղեկություններ է թողել Չինաստանում բնակված հայերի մասին[331]: Չինացիների մասին նա գրել է. «*Ազգն Չինաց է բազմաթիւ, ժիր, գործունեայ, աշխատասէր, ճոխ, մաքրասէր ըստ բաւականին եւ սիրողք չափաւոր կենաց. արուեստ նուրբ անդ է տեսանել*»[332]: Իսկ Հոնկոնգի մասին գրել է, որ այնտեղ «*գտանէ են միշտ գաղթականք Հայոց մինչ ց11 հոգիք, իսկ այժմ վեց հոգիք միայն կան, որոնք են՝ Խաչիկ եւ Թէոփիլէ եղբայրք՝ Պետրոս Ծատուրեան Կալկաթայէն*»[333]:

Նշված անձանցից Խաչիկը բավականաչափ տիրապետել է հայերենին, եղբայրը՝ ոչ այնքան: Այս Խաչիկ Պողոս Աստվածատրյանը (8.09.1846 – 27.05.1926) հետագայում, 20-րդ դարի սկզբին, հռչակվեց որպես «Չինաստանի ամենաբարի և ամենաշռայլ մարդը»՝ աշխարհին հայտնի դառնալով սրր **Խաչիկ Փոլ Չաթըր** (Չաթեր) անունով,

[329] Տե՛ս The Hongkong Directory: With List of Foreign Residents in China. Printed at the "Armenian Press," 1859, 93 p.:

[330] Տե՛ս **Lim Patricia**, Forgotten Souls..., էջ 351:

[331] Տե՛ս **Գեր. Գրիգորիս արքեպիսկոպոս**, Ուղեւորութիւն չինաբնակ եւ հնդկաբնակ հայոց մէջ, «Արարատ», Էջմիածին, 1877, էջ 234-239:

[332] Նույն տեղում, էջ 236:

[333] Նույն տեղում, էջ 235: Այստեղ նշված չէ, որ Աստվածատրյաններն ունեցել են նաև երկու քույր՝ Սառա և Էլիզա:

Հոնկոնգում կատարած իր հասարակական գործունեությամբ և բարեգործությամբ[334]:

Նա ծնվել է Կալկաթայում, Պողոս Աստվածատրյանի (Չաթըր Փոլ Չաթըր, 1804–1853) և նրա կնոջ՝ Մարիամի (Միրիամ, 1811–1855) տասներեք զավակներից մեկն էր: Հայրը եղել է հնդկական քաղաքացիական ծառայության անդամ: Վաղ հասակում զրկվել է ծնողներից: Նախնական կրթությունն ստացել է Կալկաթայի Լա Մարտինիե քոլեջում (հետագայում դարձել է այդ դպրոցի բարեգործ՝ 1910-ականներին խոշոր գումար նվիրաբերելով): 1864-ին մեկնել է Հոնկոնգ, քրոջ՝ Աննայի և նրա ամուսին Ջորջան Փոլ Ջորջանի (Պողոս Հորդանանյան) մոտ: Սկզբնապես աշխատել է Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի բանկում: Ավելի ուշ, Սասսուն ընտանիքի օգնությամբ սկսել է սեփական գործը որպես միջնորդ, զբաղվել ոսկու ձուլակտորների և հողի վաճառքով: Կարճ ժամանակում Խաչիկ Չաթըրը դարձել է կղզու ամենահայտնի դեմքը: 1868-ին մի գործընկերոջ հետ հիմնել է «Չաթըր էնդ Մողի» առևտրական ընկերությունը: 1876-ին նշանակվել է Հոնկոնգի հաշտարար դատարանի ցմահ դատավոր, 40 տարի եղել գեներալ-ցահանգապետի առաջին խորհրդականը, Հոնկոնգի անգլիական գաղութային վարչության գործադիր և օրենսդիր խորհուրդների անդամ (1896-ից մինչև իր մահը): 1882-ին Չաթըրը դարձել է Հարավային Չինաստանի տարածքային Մեծ մագիստրոսը: 1890-ին հիմնել է «Հոնքոնգ էլեքթրիք» ընկերությունը. հաջորդ տարին իսկ Հոնկոնգի 600 շենք էլեկտրիֆիկացվել են: Չաթըրի նախաձեռնությամբ է Հոնկոնգում կառուցվել աշխարհի առաջին էլեկտրակայաններից մեկը: 1902-ին Անգլիայի Էդուարդ 7-րդ թագավորը նրան արժանացրել է «սըր» պատվանունի: Տիրել է խոշոր կալվածքների, բանկերի,

[334] Նրա մասին տե՛ս Երկրիս ամենէն հարուստ հայազգին, «Նոր-Դար», Թիֆլիս, 28.10.1889: Հօնկ-Քօնկի սըր Փօլ Չաթըր, «Արեւ», Գահիրէ, 20.12.1924: **Դէտ**, Կրթական գործը հնդկահայերու մէջ. մեծահարուստի մը նուէրները օտարներուն եւ մեզի, «Մարմարա», Մոսանպոլ, 4.02.1925: Sir Paul Chater: His Great Work for the Colony, "Father of Hongkong," "Hongkong Sunday," 4.06.1926: Փոլ Չաթըրի մասին վերջին մեծ հրապարակումներից տես՝ **Ծոպիկյան Հ.**, Հոնկոնգի հայ «թագավորը», «Ազգ», Երևան, 25.06.2005: **Lim Patricia**, Forgotten Souls..., p. 352-353.

առևտրական նավատորմիղի: Նրա օժանդակությամբ կառուցվել են Հոնկոնգի համալսարանը, դպրոցներ, հիվանդանոցներ, բնակելի տներ, շտեմարաններ: Նրա հղացած մի ծրագրի շնորհիվ լայնացվել է Հոնկոնգի նավահանգիստը: Որպես Հոնկոնգի ներկայացուցիչ բազմիցս մասնակցել է միջազգային հանդիպումների: Եղել է նաև ազգային մեծ բարերար, նվիրատվություններ կատարել հայկական կազմակերպություններին, նյութական ծանր վիճակից փրկել Կալկաթայի Սուրբ Նազարեթ եկեղեցին՝ 1924-ին նվիրաբերելով 3 միլիոն ռուփի: Մշտապես օգնել է հայրենակիցներին, հաճախ աշխատանքի է ընդունել վեց հայ երիտասարդների Կալկաթայից: Կյանքի վերջին տարիներին հետաքրքրվել է նաև Խորհրդային Հայաստանով: Նրան համարել են «Հոնկոնգի թիվ մեկ քաղաքացին»: Նրա մարմարե պալատում (կառուցված 1901-ին՝ Հունաստանից և Իտալիայից բերված մարմարով), որ Հոնկոնգի ամենաշքեղ կառույցն էր, պահվել են հնդկական, չինական, մալայական արվեստի եզակի նմուշներ: Շանքը Չաթըրի մահից հետո վերածվել է թանգարանի: Ամուսնացած է եղել շվեդուհի Մարիա Քրիստինա Չաթըրի (Փերսոն, 1874–1935) հետ, զավակ չի ունեցել, իր հարստությունը կտակել է քույրերին և նրանց զավակներին ու բարեգործական նպատակներով: Այսպես, Կալկաթայի մի որբանոցին՝ մեկ միլիոն 500 հազար հնդկական ոսկի, Հոնկոնգի համալսարանին, Հոնկոնգի անգլիական և Մադրասի հայկական եկեղեցիներին՝ 250 հազարական դոլար և այլն:

Փոլ Չաթըրի մահից հետո հոնկոնգաբնակ հայերը շարունակել են աշխատել նրա առևտրական ընկերությունում: Այն տնօրինել է քրոջ՝ Օվսաննա Մարգարեթ Բագրամի որդին՝ կրթությամբ ճարտարագետ **Ջոն Թեոֆիլուս Բագրամը** (1886, Կալկաթա – 1947, Հոնկոնգ): Վերջինս տարիներ շարունակ եղել է Սիամի գլխավոր հյուպատոսը Հոնկոնգում:

Հոնկոնգում երկու փողոց կրում են Սըր Փոլ Չաթըր և Աստվածատրյան անունները: Չաթըրի մասին առկա է հարուստ գրականություն. կենսագիրները, նույնիսկ թռուցիկ նրա մասին խոսելիս, անկարող են շրջանցել նրա հայկական ծագումը[335]:

Փոլ Չաթըրի եղբայրներից **Ջոզեֆ Թեոֆիլուս Չաթըրը** (Հովսեփ Աստվածատրյան) 1880-ականներին եղել է Հոնկոնգի մասոնական օթյակի անդամ[336]: Չաթըրների քրոջ՝ Աննա Զորդանի (1829–1870) որդիներից **Գրեգորի Զորդանը** (Գրիգոր Հորդանանյան, 1856–1921) եղել է 1890-ին հիմնված Հոնկոնգի բժշկական դպրոցի ուսուցիչներից, դասավանդել է արևադարձային բժշկություն, իսկ նրա եղբայր **Փոլ Զորդանը** (Պողոս Հորդանանյան, 1850, Կալկաթա – 1901, Հոնկոնգ) եղել է առևտրական միջնորդ[337]:

Վերոհիշյալ Գրիգորիս արքեպիսկոպոսը հոնկոնգաբնակ հայերի մեջ հիշել է նաև **Ջնթյում և Ալեքսիս Աղաբեկներին**, **Հարություն Սեթին**՝ ծնված Կանտոնում և մկրտված Սինգապուրի հայկական եկեղեցում, **Աբգար** եղբայրներին՝ **Ղազարին** և **Աբգարին**, որոնք Կալկաթայից անվճար երթևեկել են Չինաստան և Չինաստանից՝ Հոնկոնգ ու Ճապոնիա՝ արտահանելով օճառ, յուղ և սիսեռ: Հոնկոնգի մյուս բնակիչների մեջ Գրիգորիսը հիշել է **Պողոս Հորդանան-Պողոսին** (հավանաբար՝ Փոլ Չաթըրի վերոնշյալ քեռայրին) և **Մանուկ Եսայի-Ներսեսին** (ռանգունցիներ), **Ստեփաննոս Պողոս-Հովհաննեսին**, **Հովհաննես Առնդ-Ավետումյանին**, որը Հոնկոնգում զբաղվել է տարբեր գործունեությամբ և 300 մղոն խորացել է Չինաստանի տարածքում: Գրիգորիս արքեպիսկոպոսը նշել է, որ «*Նման առին չտեսի խօսող զՉինարէնն՝ թէպետեւ Յարութիւն Սէթեանն եւս գիտէ բաւական*»[338]: Նա երկու կիրակի մնացել է Խաչիկի տանը, հավաքել տեղի հայերին և բանախոսել հայ ազգի ու Եկեղեցու մասին: Գրիգորիսը Հոնկոնգի գերեզմանատանը տեսել է մի քանի հայերի շիրմաքարեր՝ հայերեն և անգլերեն արձանագրություններով, մասնավորապես վկայել է վերոհիշյալ

[335] Տե՛ս, օրինակ, **Иванов П. М.**, Гонконг, Москва, 1990, էջ 22:
[336] Տե՛ս նույն տեղում, էջ 491:
[337] Տե՛ս նույն տեղում, էջ 468:
[338] **Գեր. Գրիգորիս արքեպիսկոպոս**, Ուղեւորութիւն չինաբնակ եւ հնդկաբնակ հայոց մէջ, էջ 236:

Սեթ Ավետ Սեթի շիրմաքարի մասին. *«աստ հանգչի իրայնոց արտաւտօք մարմին Սէթ Աւետ-Սէթի՝ որ էր մի ի հին վաճառականաց Սինկափօրայ: Եկն ի Քանտօն ի 1845 ամի: Ծնաւ ի Մատրաս եւ վախճանեցաւ ի Հօգ-Քօնկ ի 11 Փետրուարի 1875ի ի հասակի 65 ամաց»*[339]:

1875 թ. մեկ այլ հայ հոգևորական՝ Խաչատուր վարդապետ Կարապետյանը, Նոր Ջուղայում միջնակարգ դպրոց բացելու համար հանգանակություն կատարելու նպատակով շրջել է մի շարք երկրներում (Իրաք, Հնդկաստան, Ինդոնեզիա, Բոռնեո կղզի), եղել նաև Չինաստանում, բավականաչափ դրամ է հավաքել, սակայն ի վերջո ամբողջը յուրացրել է. 1880–1890-ական թթ. հայ հասարակությունը երկար ժամանակ զբաղվել է նրա դատով[340]:

Սպահանցի երիտասարդ **Արզար Գաբրիել Արզարը** Հոնկոնգում աշխատել է ընտանեկան բիզնեսում որպես բորսային միջնորդ և գրասենյակային աշխատող: Տանուլ տալով իր գումարները 1889-ի բորսային շուկայի փլուզման ժամանակ՝ 1890 թ. ինքնասպան է եղել[341]:

Հորդանանյան ընտանիքից է սերել անգլիական նավատորմիղում ծառայած սպա **Ջ. Բ. Ջորդանը**՝ ծնված 1883-ին, Հոնկոնգում: Կրթությունը ստացել է Մեծ Բրիտանիայում: Նրան 1917 թ. հունվարի 29-ին Լոնդոնի Բուքինգհեյմյան պալատում ընդունել է Անգլիայի թագուհին և պարգևատրել զինվորական խաչով[342]:

Կալկաթահայ **Տիգրան Մեթյուս Գրեգորին** (1879–1962) աշխատել է Փոլ Չաթըրի ընկերությունում, դարձել մեծահարուստ և նյութապես օժանդակել Կալկաթայի հայկական եկեղեցուն: Նա թաղված է Հոնկոնգի բողոքականների գերեզմանատանը, կնոջ՝ **Հռիփսիմեի** և այլ կալկաթացի հայերի կողքին:

Ուշագրավ է, որ չնայած հաստատված լինելով Հոնկոնգում՝ տեղի հնդկահայերը շարունակել են համարվել Հնդկաստանի հայության մի մասը: Օրինակ, Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում

[339] Նույն տեղում, էջ 235:
[340] Տե՛ս **Ամատյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, էջ 246:
[341] Տե՛ս **Lim Patricia**, Forgotten Souls..., էջ 438:
[342] Տե՛ս Հայ սպայ մը, «Ազգ», Պօսթըն, 29.03.1917:

պահվող տոմարում, որտեղ արձանագրվել են հայերի մահերը, թիվ 1963 թվահամարի ներքո հիշվել է Սինաս Աբգարի որդու մահը Հոնկոնգում, 1903 թ. մայիսի 27-ին: *«Փաստորեն ժամանակին իրա-պես Կալկաթան մի տեսակ միավորիչ կենտրոն է եղել ոչ միայն ողջ Բենգալիայի նահանգի համար, շատ դեպքերում նաև դրանից անդին, քանզի տեղեկություններ կամ հնդկաստանից դուրս ննջեցյալների մասին»*[343]:

Հոնկոնգցի հայերը հիմնականում ամուսնություններ են կնքել միմյանց և հնդկահայերի, ինչպես նաև եվրոպացիների հետ: Չինացու հետ ամուսնության ընդամենը մեկ վկայություն է մեզ հանդիպել. Փոլ Չաթըրի Աննա քրոջ որդին՝ Ջորդան Փոլ Ջորդան կրտսերը (1850, Կալկաթա – 1901, Հոնկոնգ) անգլուհի կնոջ՝ Հելեն Հաուեսից (1867–1959) ամուսնալուծվելուց հետո ամուսնացել է չինուհի Լիմ Սիմ Վոնգի հետ, ունեցել երկու դուստր՝ **Մարի Յու Չե Լեյնգ** (1877–1957) և **Սալի Քանինգհամ** (Յուետ Յինգ, 1879, Հոնկոնգ – 1960, անդ):

Չինաբնակ հայերի ոսկեսական վիճակը սկսել է վատանալ 1880-ականներին, երբ անգլիացիները սկսել են գաղութացնել չին ժողովրդին: Նրանք արգելել են հայերին նավեր ուղարկել այլ երկրներ, արտահանել և ներմուծել շահավետ ապրանքներ, ինչպես նաև սկսել են գանձել շատ ավելի բարձր մաքսեր:

Հատուկենտ վկայություններ կան նաև 19-րդ դարի Չինաստանի ցամաքային մասի փոքր քաղաքներում հայկական սակավաթիվ ներկայության մասին: Մոտ 1790-1791 թվականներին Կոստանդնուպոլսից առևտրական գործերով Ասիայի տարբեր քաղաքներ են ուղարկվել **Աբանոսով** եղբայրները: Թուրքիայում, Պարսկաստանում և Հնդկաստանում թափառելուց հետո նրանք Տիբեթի վրայով հասել են Յարկյան (Կենտրոնական Ասիա), որտեղ ապրել են երեք տարի, այնուհետև մեկնել են Խոթան (Չինաստանի արևմուտքում): Նրանք վաճառել են մետաքսի և մահուդի ապրանքներ: Աբանոսովների բերած

[343] **Գաղամյան պրկ. Տ.**, Արևմտյան Բենգալիայում բաղված հայ հոգևորականները, Երևան-Կալկաթա, 2007, էջ 21:

մի քանկարժեք շալն ուղարկվել է Պեկին՝ Բողդի-խանին, որը երկու ամիս անց այն վերադարձրել է՝ հրամանով, որ դրա դիմած վաճառականներից մաքս գանձեն իրենց իսկ՝ հայերի հայեցողությամբ[344]: Ի դեպ, Յարկյանի քրիստոնյա վաճառականները, ենթադրաբար՝ հայերը, այնտեղի տոնավաճառ գնալիս հագել են չինական տարազներ[345]:

Հ. Ալիշանը հիշատակել է 18-րդ դարի վերջին **Կուրլակ** անունով մի հայ վաճառականի, որ բնակվել է Բոլորում[346]: Սա ներկայիս Չինաստանի արևմուտքում գտնվող Սինյան Նահանգի Բոլոր-դաղ լեռնաշղթայի հին անվանումն է: Այս Կուրլակը, ի. Ալիշանի վկայակոչմամբ, «գիր ընծայութեան» է տվել Քաշգար քաղաքում բնակված Գուկա (հավանաբար՝ Ղուկաս) անունով մի հայի: Քաշգար կամ Ղաշխա փոքրիկ քաղաքը գտնվել է Չինաստանի արևմտյան սահմանին և հենակետ եղել մետաքսի առևտրում: Ալիշանը հիշել է, որ Չինաստանում ճանապարհորդած գերմանացի Գեորգ Լուդվիգը հիշատակել է Քաշգարում բնակվող 525 հայերի և 1615-ին նրանց հիմնած եկեղեցու մասին, ինչը անհավանական է թվացել անգլիացի աշխարհագրագետ Հենրի Ռոուլինսոնին (1810–1895)[347]: Վերջինս Մերձավոր Արևելքում անգլիացիների և ռուսների մասին պատմող աշխատության մեջ հիշատակել է Քաշգարի 300 հոգիանոց հայ համայնքի գոյության մասին[348]:

19-րդ դարի վերջից փոքրաքանակ հայեր սկսել են հաստատվել նաև Չինաստանի արևելքի քաղաքներում՝ Մուկդեն (Մանջուրիայի երբեմնի մայրաքաղաքը, այժմ՝ Շենյան), Սյինծին կամ Ճանճուն և Դայրեն (Լուտա, հետագայում հայտնի նաև ռուսական անունով՝ Դալնի): Նրանք գործել են հիմնականում երկրից արտահանվող առևտրի շրջանակներում:

[344] Տե՛ս **Риттер К., Григорьев В. В.**, Землеведение: Восточный или Китайский Туркестан. Москва, 1869, էջ 412-413:
[345] Տե՛ս նույն տեղում, էջ 206:
[346] Տե՛ս **Ալիշան Հ. Ղ.**, Սիսական, էջ 469:
[347] Տե՛ս նույն տեղում:
[348] Տե՛ս **Rawlinson Henry Sir**, England and Russia in the East: A Series of Papers on the Political and Geographical Condition of Central Asia, 1875, էջ 175: Տե՛ս նաև՝ Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 382:

1899-ի տվյալով Չինաստանում որպես գերմանական բողոքական միսիոներական կազմակերպության անդամ քարոզչությամբ է զբաղվել միսիոներ Հովհաննես Ավետարանյանը՝ հայկական ամուն և քրիստոնեություն ընդունած թուրք[349]:

[349] Տե՛ս Քրոնիկ Վանայ, «Քիւզանդիոն», Կ.Պոլիս, 18.09.1899:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՉԻՆԱՀԱՅԵՐԸ 1900–1920-ԱԿԱՆ ԹԹ.

Այսպիսով, ինչպես տեսանք, չինաբնակ հայության առաջին հոսանքը կազմված է եղել հնդկահայերից, որոնք մեծ մասամբ հաստատվել են Հոնկոնգում և Շանհայում՝ այնտեղ հիմնելով առևտրական տներ: Հնդկահայ խոշոր առևտրական **Սեթ Ավետ Սեթը** (Սեթյան) Կանտոն քաղաքում հաստատել է իր առևտրական ընկերության մի գրասենյակ: Կանտոնում կնոջ՝ **Դշխոյի (Դշխուն) Սեթի** (1814–1857) մահից հետո,[350] Սեթ Ավետը հաստատվել է Հոնկոնգում՝ գործելով որպես առևտրական միջնորդ: Որդիները դարձել են հաջող բիզնեսմեններ Հոնկոնգում[351]: Նրանցից **Արաքում Սեթը** (Հարություն Սեթյան) ծնվել է 1852-ին, Կանտոնում և երկար տարիներ կարևոր ու պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել Հոնկոնգի տարբեր հիմնարկներում: Տասնվեց տարեկանում նշանակվել է հնդկերենի թարգմանիչ դատարանում, այնուհետև զանազան պաշտոններ զբաղեցրել նույն հիմնարկում: 1882-ին նա հիմնել է Հոնկոնգի Արդարադատության պալատը: Տարբեր ժամանակներում պաշտոնավարել է այլևայլ հիմնարկներում (որպես գլխավոր արխիվարիուսի օգնական, սնանկացման պաշտոնյա, 1903-ից՝ Գերագույն դատարանի և տարբեր ընկերությունների գործող արխիվարիուս, պաշտոնական վարչարար և վստահված անձ):

Նույն ընտանիքից սերված **Էնթրնի Արաքում Սեթը** (1879, Սինգապուր – 1960, Հոնկոնգ) գործունեությունը սկսել է Հոնկոնգում որպես պետական ծառայող: 1919-ին դարձել է Շանհայում հիմնադրված հաշվապահական ֆիրմայի ղեկավարը: Նրա քույրը՝ **Մեյբլ Սեթը**, 1912-ին ամուսնացել է անգլիացի Դուգլաս Մ. Բեյնի հետ և հաստատվել Շանհայում: Հոնկոնգում հայ-անգլիական առևտրական մի մեծ տան տնօրեն է եղել նույն ընտանիքից **Եռնովք Սեթը** (1873–1929), որի առևտրի կենտրոնը մասնաճյուղեր է ունեցել ողջ Արևելքում[352]:

Շանհայում հայերի զգալի քանակը պատճառ է դարձել, որ Հայ օգնության միությունը 1910 թ. հիմնի Շանհայի հայկական ակումբը՝ որպես հայ գաղթականների կայանատեղ: Ակումբը գործել է մոտ չորս տասնամյակ՝ տարիների ընթացքում վերաճելով հանրային ակումբի, որտեղ հավաքվել է համայնքը՝ կատարելով հայկական ծեսով հարսանիքներ, կնունքներ և մշակութային միջոցառումներ: Ոմանք կապ են պահպանել հայրենիքի հետ: Այսպես, 1917 թ. Չինաստանից տիկին **Աշխեն Հ. Արգարը** պարոն Ս. Պետրոսյանի միջոցով Թիֆլիսի «Տարազ» պարբերականին է ուղարկել որոշ նվիրատվություն (188 ռուբլի 96 կոպեկ)[353]:

Այս շրջանում Շանհայում ապրել են ոչ միայն հնդկահայեր: Ծնունդով ագուլիսցի առևտրական Թովմաս Յարդալյանը 1920-ին այցելելով Շանհայ՝ վկայել է, որ այնտեղ գործում է մի հայկական ֆիրմա՝ ծխախոտի և մետաքսի լայն առևտրով, որի տերն է հինջուղայեցի Ազատյանը[354]: **Ժաք Ազատյանը** հավանաբար եղբոր՝ **Լ. Ազատյանի** հետ 1917-ից Շանհայից արտածել է տարբեր ապրանքներ՝ հում մետաքս, թեյ, էպոճժ (չինական չսպիտակեցված մետաքսի տեսակ) և կաշվեղեն[355]:

Ռուսաստանի կողմից նախ Տրանսսիբիրյան երկաթուղու կառուցման (1891–1916), ապա հատկապես Արևելա-Չինական կամ Հեռավորարևելյան երկաթուղու (ԿՎԺԴ) շինարարության (իրականացել է 1897–1903 թթ.) հետևանքով 19-րդ դ. վերջից Միջին Ասիայից և Ռուսաստանի տարբեր շրջաններից մի շարք կարիքավոր, տուն ու տեղից զրկված և անհայրենիք հայեր, ի թիվս այլ ազգությունների, տեղա-

[350] Դերենիկ եպիսկոպոսը 1959-ին Հոնկոնգի բողոքական գերեզմանատանը տեսել է տիկին Դշխուն Սեթի, Հարություն Հ. Մարութի դստեր հայատառ և անգլիատառ տապանաքարերը և հոգեհանգստյան կարգ կատարել (տե՛ս **Դերենիկ եպիսկոպոս**, Չինաստանի հայ վաճառականներ եւ Յովհաննէս Ղազարեան, էջ 277):

[351] Տե՛ս **Wright Nadia H.**, Respected Citizens, էջ 284-285:

[352] Տե՛ս Եռնովք Սէթ հրդեհի մը զոհ, «Հայրենիք», Պօսթըն, 4.04.1929:

[353] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1917, թ. 2, էջ 15:

[354] Տե՛ս Կեանքը հետու Վլադիվոստոկում, «Յառաջ», Երևան, 18.07.1920:

[355] Ավստրալացի հայազգի պատմաբան Նաղյա Հ. Բայթի՝ իր "Respected Citizens..." գրքում տեղ չգտած և էլեկտրոնային փոստով սիրահոժար կերպով մեզ ուղարկած տեղեկություններից (9 սեպտեմբեր, 2006):

փոխվել են Սիբիր[356] և ռուսական Հեռավոր Արևելք, Մանջուրիա և Չինաստան, փոքր հայագաղութներ են հաստատվել Պորտ Արթուր, Մուկդեն, Ճանճուն, Դայրեն, Շանհայ և այլ քաղաքներում: Նրանք հետագայում պիտի դառնային Հյուսիսային Չինաստանի հայ համայնքների կորիզը: Արդեն 1901 թ. մամուլում հանդիպում ենք այսպիսի տողեր. «*Մի ժամանակ, երբ հայ պանդուխտներին հարցնում էին «ո՞ր բարով», նրանք պատասխանում էին, «Պոլիս, Տրապիզոն կամ Թիֆլիս», իսկ այժմ երեւի պատասխանելու են՝ Սիբիր, Մանջուրիա կամ Չինաստան: Հայ պանդուխտների եւ կամ, ինչպէս առհասարակ ազատ կամքով այս կողմերն եկողներին կոչում են, «սամոխոդ»-ների թիւը զգալի կերպով աճում է: Ամեն օր որեւէ մի նոր հայ «սամոխոդ» լոյս է ընկնում այս կողմերում, նրա տեսքը խիստ անմխիթարական է: Հայրենիքից մեկնելիս նա ունենում է մօտ 200-300 ր. կանխիկ դրամ, տաք անկողին, որոշ չափով հագուստեղէն եւ այլ իրեր ու ֆիզիքապէս եւս առողջ է լինում. սակայն մինչեւ այստեղ հասնելը թէ ինքը և թէ իր գրպանները կմախք են դառնում*»[357]: Եվ հոդվածի վերջում ասվում է. «*Եթէ գորեցի եւ սուրամցի մի երկու հայեր սրանից 3-4 տարի առաջ Պորտ Արթուր ընկնելով քիչ ու միչ հարստութիւն կազմեցին, դա միմիայն ժամանակային եւ պատերազմական դէպքերին պէտք է վերագրել: Իսկ ներկայումս արդէն անցել են այն ժամանակները, երբ առանց գումարի կամ ամենաչնչին գումարով կարելի էր փող աշխատել: Ներկայումս ունայն ձեռքերով Կովկասից տեղս եկողը դառնապէս զղջալու է, ինչպէս որ զղջում էլ են*»[358]:

Այդուհանդերձ, հայերի հոսքը դեպի Հեռավոր Արևելք չի դադարել: Ինչպես նշել է մի հոդվածագիր, «*...այժմս Սիբիրի մեծ երկաթուղու եւ նրա շարունակութիւն կազմող Չինական-Արեւելեան երկաթուղու շնորհիւ Կովկասը անմիջական հաղորդակցութեամբ կապուած է Ծայ-*

[356] Սիբիրի հայության մասին տե՛ս մեր «Հայերը Սիբիրում և ռուսական Հեռավոր Արևելքում» հոդվածը («Քաևքեր հայագիտության», Երևան, 2015, թ. 1, էջ **153-176**):
[357] **Հումպցեան Կ.**, Նամակ Մանջուրիայից (Չինաստան), «Նոր-Դար», Թիֆլիս, 27.09.1900:
[358] Նույն տեղում:

րագոյն Արեւելքի հետ: Ուղիղ հաղորդակցութեան ճեպընթաց գնացքներն.... Մոսկուայից Դայրնիյ հասնելու են 14 օր ու գիշերուայ ընթացքում, իսկ Դայրնիից դէպի Ճափոնիա (Նագասաքի) կամ Չինաստան (Շանհայ) ուղեւորուողներին ճանապարհն անարգել կերպով շարունակելու համար երթեւեկելու են Չինական-Արեւելեան երկաթուղու շոգենաւային ընկերու[թեան] արագընթաց (էքսպրէս) «Մոնղոլիա» և «Մանջուրիա» շոգենաւերը»[359]: Ռուս-ճապոնական պատերազմից հետո նրանց թիվը զգալիորեն մեծացել է, և Միջին Ասիայից հետո կովկասահայության համար գաղթականության գրավիչ վայր է դարձել Հեռավոր Արևելքը: Ռուսաստանի ժողովուրդների մեջ զրույցներ են շրջել Մանջուրիայի անսպառ հարստությունների մասին[360], և շատ բախտախնդիրներ ու առևտրական ջիղ ունեցողներ ձեռնարկել են այդ հեռավոր ու վտանգավոր ճամփորդությունը: Եվ իսկապես, այդ շրջանը Սիբիրում և Մանջուրիայում հաստատված մի շարք հայերի համար եղել է արագ հարստանալու մի ժամանակաշրջան, երբ նրանք աշխուժորեն զբաղվել են խմիչքի առևտրով, բացել են հյուրանոցներ «*և այլ կասկածելի հիմնարկներ*»[361]: Ռուս-ճապոնական պատերազմը լուսաբանած ամերիկացի լրագրող և գրող Ֆրեդերիք Փալմերը 1904-ին հիշել է հայերի և հույների Լիաոյան բնակավայրում[362]: 1905 թ. ռուս-ճապոնական պատերազմին մասնակցել են մի շարք հայեր: Նրանցից էր կապիտան (հետագայում՝ զորավար) **Սիքայել Սկիբա-Սուրաղյանը** (1868–1937): Նա կամավոր մեկնել է ռազմաճակատ, հասել Մանջուրիայի սահմանը, մտել այն զորաբանակի մեջ, որ գործել է Սախալին կղզու ուղղությամբ: Այդ զորաբանակի հետ անցել է

[359] **Հումպցեան Կ.**, Նամակ Ծայրագոյն Արեւելքից («Նոր-Դարի» թղթակցութիւն), «Նոր-Դար», Թիֆլիս, 25.03.1903:
[360] Կա վկայություն, որ 19-րդ դարի վերջին հրեաները Մանջուրիա են մեկնել՝ երգելով. «*Поедемте в Маньчжутию, поедемте туда, Там деньги достаются без всякого труда*» (Գնանք Մանջուրիա, գնանք այնտեղ, որտեղ փողը ձեռք է բերվում առանց որևէ աշխատանքի), տե՛ս **Հումպցեան Կ.**, Նամակ Մանջուրիայից («Նոր-Դարի» թղթակցութիւն), «Նոր-Դար», Թիֆլիս, 30.08.1901:
[361] **Արշակունեան Ն. ք.**, Սիբիրիայի հայերը, «Հորիզոն», Թիֆլիս, 18.05.1912:
[362] Տե՛ս **Palmer Frederick**, With Kuroki in Manchuria, New York, 1904, էջ 326:

Բլագովեշչենսկով Նիկոլաևսկ, ապա՝ Սախալին: Պատերազմից հետո վերադարձել է Սարիղամիշ[363]: Ռուս-ճապոնական պատերազմին մասնակցել է նաև Բաշկաղըքլարի պահեստային գումարտակի կապիտան **Նիկողայ Սկրուչի Բոզդասարովը** (1868–°), որը վիրավորվել է, արժանացել սուրբ Գևորգի 4-րդ աստիճանի ասպետի կոչման:

Ժամանակակցի վկայությամբ՝ 1906 թ. ռուսական և չինական Սիբիրում մոտ 1200 հայ բնակիչ է եղել՝ աքսորյալներ և կամավոր եկածներ, մեծամասնությունը ամուրիներ, ցրված բոլոր քաղաքներում, որոնք զբաղվել են մեծ կամ փոքր առևտրով: Մեծ մասամբ եղել են Ջալալօղլիից, Ախալքալաքից, Ախալցխայից, ինչպես նաև փոքր քանակությամբ արևմտահայեր: «*Թէեև աչքի ընկնող վաճառականներ չը կան, բայց եւ այնպէս տեղիս հայերը, մոռանալով Կովկասի ճիւթական կրիզիսը եւ այստեղի սարսափելի թանգութեանը, մտիկ չը տալով, լուկուլլական ճաշեր են պատրիում եւ ամեն կողմ շռայլում*»[364]: Նույն հեղինակը նշել է նաև Սիբիրում տիրող հանցագործ միջավայրի պատճառով մի քանի հայերի (նաև բանվորական շարժմանը հարող մեկի) զոհվելու դեպքեր:

Մանջուրիայի հայերի բարգավաճ վիճակն իմանալով՝ Թուրքիայից և Պարսկաստանից նույնպես հայեր գաղթել են Չինաստան՝ հաստատվելով հիմնականում Հարբինում: Այս նորաստեղծ քաղաքն իր աշխատանքային շուկայով 20-րդ դարի սկզբին ձգել է Ռուսական կայսրության հազարավոր բազմազգ քաղաքացիների՝ իր հիմնադրման իսկ տարում դառնալով բազմադեմ և բազմալեզու մի բնակավայր: Ռուսաստանցիները ներկայացրել են 28-ից ավելի ազգություն[365]: Ինչպես 1904 թ. գրել է հայազգի ռուս գրող Վասիլի Նեմիրովիչ-

[363] Տե՛ս Հայ զօրավարի մը մահը. Միքայէլ Մելիք-Մուրատեան, «Հայրենիք», Պօսթըն, 20.02.1937:

[364] **Հայկունի Աշոտ**, Հայերը Սիբիրում, «Յառաջ», Թիֆլիս, 21.04.1906:

[365] Տե՛ս Дальный Восток России – северо-восток Китая: исторический опыт взаимодействия и перспективы сотрудничества: материалы международной научно-практической конференции, посвященной 60-летию Хабаровского края, 100-летию со дня начала строительства Китайско-Восточной железной дороги и города Харбина, Хабаровск, 1998, էջ 63:

Դանչենկոն. «*Ջրույցներ թվերով, երազանքներ բազմապատկման աղյուսակներով, մտքեր հանրահաշվական հաշիվներով: Այսպիսին էր Հարբինը մինչև պատերազմը և մնացել է այսպիսին: Միայն հիմա են առաջնեկներին միացել նորեկներ, որոնք այստեղ են ամապարել Ռուսաստանի ամեն անկյունից միակ մի նպատակով՝ ճանկել խոշոր գումարներ, խուսափելով ռազմական դատարանից և դուրս պրծնելով ողջ-առողջ ու ժամանակին: Հայերը, վրացիները (իմերեթցները), գերմանացիները, հրեաները, ռուս կուլակները և անգամ գնչուները, բոլորն ամապարում են իրենց խենթ իրարանցման մեջ՝ մտածելով առնվազն հազարների մասին*»[366]: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Մանջուրիայի ռուսական տարագիրների թիվը եղել է 43500 հոգի, որոնց մեջ ռուսներից բացի նշվում են նաև լեհերը, ուկրաինացիները, հրեաները, թաթարները, վրացիները, ինչպես նաև հայերը[367]: Հարբինում գործող Գլխավոր շտաբում եղել է Ազգությունների խորհուրդ, որի մեջ մտել են ազգային միությունների ղեկավարները, այդ թվում՝ հայկական համայնքի ղեկավար **Սարգիս Գրճելյանը** (Գրճելով)[368]:

20-րդ դարի սկզբին Հեռավոր Արևելքում գտնվող Կ. Հումուտցյանը (Հումութցյան) պարբերաբար աշխատակցել է քինֆիսահայ մամուլին՝ հիմնականում չինական կյանքի տարբեր երևույթների մասին (օրինակ, Արևելյան երկաթուղու, տեղացիների բարքերի (օրինակ, նրան հատկապես զարմացրել է ճապոնական բաղնիքներում տղամարդկանց և կանանց հանդերձարանների ընդհանուր լինելը), չինական արքունիքի՝ Պեկինի հանդիսավոր վերադարձի մասին և այլն[369]),

[366] **Wolff David**, To the Harbin Station: The Liberal Alternative in Russian Manchuria, 1898-1914, 1999, p. 115.

[367] Տե՛ս **Мелихов Г. В.**, Российская эмиграция в Китае: 1917-1924 гг., Москва, 1997, էջ 56:

[368] Տե՛ս **Аблова Н. Е.**, Дальневосточная ветвь русского зарубежья, Минск, 2007, էջ 131:

[369] Տե՛ս նրա թղթակցությունները՝ Նամակ Մանջուրիայից (Չինաստան), «Նոր-Դար», Թիֆլիս, 1.07.1900: Նամակ Մանջուրիայից («Նոր-Դարի» թղթակցություն), նույն տեղում, 6.09.1900: Նամակ Մանջուրիայից (Չինաստան), նույն տեղում, 8.09.1901: Նամակ Ճափոնիայից («Նոր-Դարի» թղթակցութիւն), նույն տեղում, 25, 28.11.1901: Նամակ Չինաստանից, նույն տեղում, 29-30.11.1901: Չինական տպորութիւններից (նամակ Ծայրագոյն Արեւելքից), նույն տեղում, 5.02.1902: Նամակ Ծայրագոյն

գրված Չինաստանից, Մանջուրիայից, Սախալինից և Ճապոնիայից: Խարբինից Թիֆլիս նամակները հասել են գրեթե երկուսուկես ամսում[370]: Ուշագրավ է, որ այս թղթակիցները երբեմն զուգահեռներ են անցկացրել հայ իրականության հետ: Օրինակ, Հումուտցյանը, խոսելով 1899–1901 թթ. Յիհետուանի ապստամբության ժամանակ չինացիների՝ եվրոպացի միսիոներների հանդեպ կիրառած դաժան հաշվեհարդարների մասին, գրել է. «*Չինացոց բարբարոսութեանց մասին պատմուածները լսելիս մարդու մազերը փշաքաղւում են, եւ յիշողութեան մէջ արթնանում են Տաճկա-Հայաստանում տեղի ունեցած համանման դէպքերի տխուր յիշատակը*»[371]: Եվ կամ, նշելով, որ չինացի 10 հազար նորադարձ քրիստոնյաների մեջ հազիվ երկու հոգի լինեն, որ համոզմամբ ընդունած լինեն նոր կրոնը, նա նշել է. «*Պէտք է որ մենաւնչած չլինինք, եթէ միևնոյնն ասենք և հայերիս մէջ գործող կաթոլիկ եւ այլ քարոզիչների ու նրանց հետևող դաւանափոխների մասին*»:[372] Իսկ Սիբիրացի ծածկանունով հեղինակը գրել է. «*Չինական տարազը շատ նման է Պարսկաստանի մի քանի քաղաքներում ապրող, այն է՝ Խոյի և Սալմաստի հայոց հագուստին*»[373]:

1906 թ. Հեռավոր Արևելքի քաղաքներում է եղել ծնունդով ալեքսանդրապոլցի Հակոբ Չիլինգարյանը (ծն. թ. անհայտ – 1908), որը նույնպես թղթակցություններ է ուղարկել թիֆլիսահայ մամուլին՝ Աշոտ Հայկունի ծածկանունով[374]:

Արեւելքից, նույն տեղում, 9, 13, 16.1902, 7, 12, 19, 21.03.1902, 10.04.1902: Նոր տարին եւ վիշապահանդէսը Չինաստանում (Նամակ Ծայրագոյն Արեւելքից), նույն տեղում, 1.03.1902: Նամակ Ծայրագոյն Արեւելքից, նույն տեղում, 11.02.1903, 25.03.1903, 24.04.1903, 2.05.1903, 2.07.1903, 18.11.1903, 21.11.1903:

[370] Տե՛ս **Հումուտցեան Կ.**, Նամակ Մանջուրիայից («Նոր-Դար»-ի թղթակցություն), «Նոր-Դար», Թիֆլիս, 6.09.1900:

[371] **Հումուտցեան Կ.**, Նամակ Չինաստանից («Նոր-Դար»-ի թղթակցութիւն), «Նոր-Դար», Թիֆլիս, 30.11.1901:

[372] Նամակ Ծայրագոյն Արեւելքից («Նոր-Դար»-ի թղթակցութիւն), «Նոր-Դար», Թիֆլիս, 2.05.1903:

[373] **Սիբիրացի**, Նամակ Սիբիրից («Նոր-Դար»-ի թղթակցութիւն), «Նոր-Դար», Թիֆլիս, 18.02.1895:

[374] Տե՛ս, օրինակ, **Հայկունի Ա.**, Չինացիները զինւում են, «Ալիք», Թիֆլիս, 24.06.1906:

1901-ին ծնունդով նոխեցի **Թաթոս (Թադևոս, Թևադրոս) Գրիգորի Տեր-Հակոբյանը** (Տերակոպով) Հարբինի Չինական փողոցում (ներկայիս Կենտրոնական պողոտա) հիմնել է «Թաթոս» ռեստորանը՝ մինչ օրս գործող Չինաստանի առաջին կովկասյան ռեստորանը, որը դարձել է Հարբինի բրենդներից[375]: Այստեղ մատուցել են հայկական, կովկասյան, ռուսական և եվրոպական ճաշատեսակներ: Այն եղել է արվեստագետների, Հարբինում ապրող և աշխատող դիվանագետների, հայտնի հանրային գործիչների սիրած հավաքատեղին: Հայտնի է, որ Հարբինում եղած ժամանակ այս ռեստորանում է սիրել ճաշել ռուս հայտնի երգիչ Ֆեոդոր Շալյապինը: Այս ռեստորանից բացի 1920-ական թթ. Թաթոս Տեր-Հակոբյանն է հիմնել Հեռավոր Արևելքի առաջին գինեգործարանը, որը նույնպես անվանել է «Թաթոս»: Այն գինի է արտադրել Հարբինի տեղական սև և Շանդունի սպիտակ խաղողից: «Թաթոս» ռեստորանը ճապոնական բռնազավթման շրջանում մի քանի անգամ փոխել է անվանումը և տերերին: Թադևոս Տեր-Հակոբյանը հետագայում բնակվել է Շանհայում, որտեղից էլ իր ազգական Աշոտ Ակոպովի և նրա գերմանական ծագումով կնոջ՝ Վալենտինա Յարցևայի հետ 1960-ականների վերջին տեղափոխվել է ԽՍՀՄ: Տեր-Հակոբյանը մահացել է 1970-ականների վերջին, Թբիլիսիում, մոտ 100 տարեկան հասակում: Ի դեպ, «Թաթոս» ռեստորանի ցուցանակը երևում է ռուս տարագրության վերաբերյալ «Ռուսներն առանց Ռուսաստանի» վավերագրական ֆիլմաշարի հինգերորդ՝ «Հեռավոր արևելյան արդյունք» կինոնկարում (խոսնակ՝ Նիկիտա Սիխալկով):

«Թաթոս» ռեստորանում մի քանի տարի աշխատել է 1916-ին Տավուշի Վերին Կարմիրաղբյուր գյուղից Հարբին փախած **Հարություն Սիրզախանյանը**, որին հետագայում գտել և տուն է վերադարձրել իր կնքահայր Դանիել Բաբայանը[376]:

---

[375] «Թաթոսը» հիշվում է Հարբինի ռուս-կովկասյան ռեստորանների («Կավկազ», «Իվերիա», «Ալպահ-վերդի», «Ռոգոզինսկի») շարքում, տե՛ս **Старосельская Н. Д.**, Повседневная жизнь «русского» Китая, Москва, 2006, էջ 93:

[376] Վկայությունը՝ Սիրզախանյանի ազգական, պատմական գիտությունների թեկնածու Արտաշես Շահնազարյանի (19.06.2017):

20-րդ դարասկզբին Մանջուրիայում բնակվող կովկասցի գաղթականները զբաղվել են հետևյալ աշխատանքներով. հույները՝ հացագործությամբ, լեռնականները ծառայել են որպես հեծյալ պահակներ, իսկ հայերը, վրացիները և թուրքերը՝ առևտրով: Պորտ Արթուրում հայերը բացել են «Կվանտուն» անունով ծխախոտի գործարանը: Կարնեցի **Քաջվորյան** եղբայրները Սունգարի ճավահանգստում ձեռնարկել են բաղնիքի շինարարություն, ախալցխացի **Գ. Քրիստոստուրյանը** զբաղվել է չինական ֆանզաների (տների) վարձակալությամբ: Առևտրով է զբաղվել նաև կամովին Մանջուրիա եկած նորնախիջևանցի **Լևոնյանը**: Մնացածները եղել են մեծ մասամբ սիբիրցի և սախալինցի հայեր, որոնց դրությունը ևս գոհացուցիչ է եղել: Սան-Սինում, Հարբինում և Մանջուրիայի այլ բնակավայրերում ցրված ռուսական զինվորականների մեջ եղել են նաև հայեր Ախալցխայից, Ախալքալաքից և Այսրկովկասի այլ վայրերից[377]:

1906 թ. Հարբինի հայերի տնտեսական վիճակն այնքան բարվոք է եղել, որ նրանք մինչև անգամ որոշակի գումարներ են տրամադրել Կովկասում հայ-թուրքական բախումներից տուժած հայրենակիցներին[378]: Այս թվականի մայիսի 3-ին Հարբինի «Պորտսմուտ» հյուրանոցի թատրոնում տեղի է ունեցել համերգ՝ հօգուտ Կովկասում վերջին իրադարձություններից տուժած հայրենակիցների, մասամբ՝ Հարբինում բացվելիք գիշերային տան: Համերգին մասնակցել են տեղի օպերայի խմբի անդամները, որոնց մեջ է եղել երգիչ Արշակ Կոստանյանը (1865–1920): Կատարել են «Կռունկը» և այլ հայկական երգեր ու պարեր (պարերով աչքի է ընկել վրացի Լոմաձեն): Համերգից ստացվել է 1300 ռուբլի մաքուր հասույթ: Միջոցառումը կազմակերպել են «Պորտսմուտ» թատրոնի տերեր **Ա. Ուլուխանյանը** և Գրեչյանները, որոնք անվճար են տրամադրել դահլիճը, ղեկավարել են **Հովակիմ Քա-**

[377] Տե՛ս **Հունութցեան Կ.**, Նամակ Մանջուրիայից («Նոր-Դարի» թղթակցութիւն), «Նոր-Դար», Թիֆլիս, 30.08.1901:
[378] Տե՛ս **Կոստանդյան Է.**, Սկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2008, էջ 422:

չուրյանը, ինժեներ **Ստեփան Ուլուխանյանը** և մի քանի այլ երիտասարդներ[379]:

20-րդ դարի սկզբին սկսել է կազմավորվել Մանջուրիա կայարանի հայ համայնքը, կազմված Կովկասից եկած առևտրականներից և փոքրաթիվ աքսորականներից, որոնց մեջ աչքի են ընկել Սարգիս Կուկունյանի խմբի անդամները: Վերջիններս, Մանջուրիայի հայերի մեջ մեծ հարգանք վայելող ծնունդով թիֆլիսեցի դաշնակցական գործիչ, նույնպես Կուկունյանի գործի առնչությամբ դատապարտված **Ռուբեն Ազանեզովի** (Հովհաննիսյան) գլխավորությամբ 1906 թ. ապրիլի 3-ին Մանջուրիայի գերեզմանատունը Ընծակ վարդապետի արարողությամբ հոգեհանգիստ են կազմակերպել Կուկունյանի խմբից իրենց հանգուցյալ ընկերների հիշատակին: Ականատեսի վկայությամբ, «*Տեսարանը յուզիչ էր, 10,000 վերստ հայրենիքից հեռու աքսորած ընկերները օգտելով յարմար առիթից – հայ հոգեւորականի ներկայութիւնից իրենց 16 տարուայ չարչարանքից յետոյ, ընկերական ջերմ սիրով վառուած, արտասուալից աչքերով՝ իրենց ընկերներին էին յիշում, որոնք զանազան ժամանակ ու զանազան վայրերում էին ընկած*»[380]: Նշենք, որ Ռուբեն Հովհաննիսյանը մեծ օգնություն է ցույց տվել 1905–1906 թթ. արևմտահայերին օգնություն կազմակերպելու գործում: Մահացել է 1916 թվականին, Մանջուրիայում[381]:

Այս շրջանում, ինչպես տեսնում ենք, Չինաստանում պաշտոնի բերումով կամ այցելությամբ հայտնված հայերը հիմնականում եղել են Արևելյան Հայաստանից և Կովկասից, սակայն երբեմն հայտնվել են նաև արևմտահայեր: Այսպես, 1905 թվականին, երբ Չինաստանի ֆրանսիական մասում սկսվել է 450 կիլոմետրանոց երկաթգծի շինարարությունը, ֆրանսիական կառավարությունն այդ շինարարության գլխավոր երկրաչափ է նշանակել **Կարապետ Ժամագործյանին**[382]:

[379] Տե՛ս **Հայկունի Ալ.**, Հեռատր Արեւելքից, «Ալիք», Թիֆլիս, 2.06.1906:
[380] **Հայկունի Ալ.**, Հայ յեղափոխականների հոգեհանգիստը Սիբիրում, «Ալիք», Թիֆլիս, 30.04.1906:
[381] Տե՛ս **N. N.**, Р. И. Аганезов, «Армянский вестник», Москва, 1916, но 42, էջ 21:
[382] Տե՛ս **Ամատեան Հ.**, Հայ գաղթականութեան պատմութիւն, էջ 325:

Արևմտահայերի մեջ գոյություն ունի Ճընոզյան (Cinosian) կամ Չինացյան ազգանունը, ինչը ենթադրել է տալիս, որ այդ ընտանիքների նախնիները ինչ-որ ժամանակ ապրել են Չինաստանում[383]: 1911 թ. Հեռավոր Արևելքի երկրներ է այցելել հոգևորական Մեսրոպ Յ. Գաբրագաշյանը՝ Կ.Պոլսի «Բիւզանդիոն» օրաթերթում նկարագրելով իր ուղևորությունը և իր հանդիպումները տեղի հայերի հետ: Գաբրագաշյանը այցելել է Հնդկաստան, Ճավա, Մալայան թերակղզի, Հնդկաչին, Չինաստան, Ճապոնիա, Ֆիլիպիններ և Ավստրալիա: Նա նշել է, որ *«կան հայեր որ հնդիկ, ճավանէզ, չինացի եւ նոյն իսկ ճաբոնցի կիներ ունին, այո, կան եւ շատ են ատոնք եւ անոնք որ երախայ չունին՝ մէկ հատ հոգեզաւակ կառնեն այդ տեղէն կամ սեւամորթ ցեղերէն, փոխանակ այնքան հայ որբերու եւ որբուհիներու երջանկութեան պարգեւելու եւ ազգին բազմանալու միջոց տալու»*[384]: Այդ իսկ պատճառով Գաբրագաշյանը կոչ է արել համախմբվել, այս գաղութներում տարածել հայ մամուլը, ուղարկել հայ հոգևորականների պատվիրակություններ այդ ցիրուցան հայերի մեջ:

20-րդ դարի սկզբին Ծայրագույն Արևելքի երկրներում է դեգերել նաև պոլսեցի, հետագայում ամերիկաբնակ գործարար և հայ բարեգործական ընդհանուր միության բարերար անդամ **Երվանդ Հակոբյանը**: Նա որոշ ժամանակ բնակվել է Հնդկաստանում, Չինաստանում, Ճապոնիայում, Ֆիլիպիններում (որտեղ ամերիկյան զինվորականների մեջ հանդիպել է մի հայի) և չորս տարի՝ Պապուա Նոր Գվինեայում, որտեղ ուսումնասիրել է տեղի մարդակեր ցեղերին[385]: Նմանապես Առաջին աշխարհամարտի տարիներին Հեռավոր Արևելքի քաղաքներում դեգերել է ռուսական բանակի սպա, ծնունդով ալեքսանդրապոլցի Լևոն Սարումյանը: Նա 1917-ին Հարբինում Անդրամուրյան երկրի շտաբում վարել է ռուսական հյուպատոսի մոտ պատվերներ

[383] Տեղեկությունը՝ Շապուհ Կեոսիկի (Նիս, Ֆրանսիա, անձնական նամակ), որի ակնցի մոր ազգանունը եղել է Ճընոզյան կամ Չինացյան:
[384] **Գաբրագաշեան Մ. Յ.**, Հայք Ծ. Արեւելքի մէջ, «Լոյս», Նոր Նախիջեւան, 1911, թ. 45, էջ 7:
[385] Տե՛ս **Աղաթօն Ե. Գ.**, Ո՞վ է Երուանդ Յակոբեան եւ ի՞նչպէս բարերար անդամ եղաւ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան, «Միութիւն», Գահիրէ, 1913, թ. 14, էջ 40:

կատարող սպայի պաշտոնը, այնուհետև՝ Պեկինի ռուսական դեսպանատանը՝ նույն պաշտոնը: Սարումյանը եղել է Հեռավոր Արևելքի գրեթե բոլոր քաղաքներում, շրջել ողջ Մոնղոլիայում և Հյուսիսային Չինաստանում, արշավախմբերի կազմում այցելել նաև Տիբեթ, Հնդկաստան ու Ճապոնիա: Կովկաս է վերադարձել Հեռավոր Արևելքի հայ կամավորական գնդի հետ, մասնակցել կռիվների[386]:

1921-ի հունիսին հայտնի **Մարգրիտ Լայլը** (Մարգարիտ Ատուրյան), ամերիկաբնակ ավետարանչական գործիչ, վերապատվելի Հայկ Ատուրյանի դուստրը, Նանկինի Թա Շեո եկեղեցում պսակադրվել է ԱՄՆ նավատորմի պաշտոնյա Մարք Տաննա Քրաութերի հետ: Պսակադրությունը կատարել է Շանհայի կաթոլիկ եպիսկոպոս Լ. Ի. Քըրնը, ներկա են եղել ԱՄՆ-ում պաշտոնավարող բազմաթիվ ամերիկացի պաշտոնյաներ[387]:

Կցկտուր տեղեկություններ են պահպանվել Հայոց ցեղասպանության զոհերի օգնության հարցում Չինաստանի ներգրավվածության վերաբերյալ:

Օսմանյան կայսրությունում հայոց վիճակին անդրադարձել է Չինաստանի ռուսերեն, անգլերեն, չինարեն և ճապոներեն մամուլը: Շանհայի անգլիալեզու «Նորք Չայնա հերալդը» բազմաթիվ թղթակցություններ է տպագրել համիդյան կոտորածների, Ադանայի ջարդերի, հայերին ցուցաբերվող համաշխարհային օգնության, հայ ներկայացուցիչների մասնակցությամբ խաղաղության պայմանագրերի և բանակցությունների վերաբերյալ[388]:

Չճշտված տեղեկության համաձայն, հայերին պատկանող չինական մի քանի ֆիրմաներ մեծ նվիրատվություններ են կատարել հոգուտ 1915 թ. Մեծ եղեռնից տուժած հայրենակիցների[389]:

[386] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 610, թ. 12-13:
[387] Տե՛ս Հայ աղջկան մը ուշագրաւ հարսանիքը, «Ազգ», Պօսթըն, 25.06.1921:
[388] Տե՛ս **Mouradian Khatchig**, China as Refuge for Armenian Genocide Survivors, "Armenian Weekly," 27.06.2016, http://armenianweekly.com/2016/06/27/china-as-refuge/ (այցելությունը կայքէջ՝ 29.06.2016):
[389] Տե՛ս **Wright Nadia H.**, Respected Citizens, էջ 77:

1916-ին արևմտահայ տուժածներին որոշ չափով օժանդակել են նաև Ճավայում բնակվող չինացիները, որոնք կղզու անգլիացի և հոլանդացի բնակիչների հետ միասին մասնակցել են տեղի հայերի կազմակերպած հանգանակությանը և հավաքել 3500 անգլիական ոսկի[390]:

Սեթաստիայի ամերիկյան քոլեջի ուսուցիչ, ամերիկյան միսիոներ, վերապատվելի դոկտոր Էռնեստ Քլարք Փարթրիջը 1917-ին մեկնել է Չինաստան, որտեղ քրիստոնեություն ընդունած չինացիների նեղ շրջանակում խոսել է հայությանը բաժին հասած տառապանքների մասին: Ունկնդիրներն այնքան են հուզվել, որ անմիջապես 20 դոլար են հավաքել, նույնքան էլ տվել են դպրոցի աշակերտները, իսկ դպրոցի դռնապանը, որն իր ծննդավայրը վերադառնալու համար բացառիկ գումար է ստացած եղել, հայաջինջ սարսափների պատմությունից ազդվելով՝ այդ գումարն ամբողջովին տրամադրել է հայ տուժածներին: Այս մասին Փարթրիջը գեկուցել է 1919-ին Սկյուտարի ժողովարահում, իր հայերեն ելույթի ընթացքում[391]:

1920 թ. Միջագետքի Հայ տարագրելոց հանճնախումբը ձեռնարկել է ֆինանսներ հայթայթելու նպատակով Հնդկաստան գործուղել իր ատենապետ Մարտիրոս Գույումճյանին՝ Բաքուբայի (Իրաք) հայկական որբանոցին օգնելու համար: Միջագետքի անգլիացի կոմիսար Ա. Ֆ. Վիլսոնը նամակ է հղել Հնդկաստանի ղեկավար պաշտոնյաներին՝ հանճնարարելով ամեն դյուրություն ընծայել Գույումճյանին: Հնդկաստանի հայ համայնքի, նաև Հնդկաստանի, Հոնկոնգի և Ճապոնիայի օտարազգի բարեգործների առատաձեռն նվիրատվության շնորհիվ Գույումճյանի առաքելությունը պսակվել է հաջողությամբ[392]: Նվիրատուների մեջ կան նաև Մակասարում (Ինդոնեզիա) ապրող 13 չինացիների անուններ, որոնցից տասը նվիրաբերել են 250-ական ռուփի, ե-

[390] Տե՛ս **Ղարիբ**, Նամակ Ջաւա կղզուց, «Մշակ», Թիֆլիս, 17.04.1916: Տե՛ս նաև՝ Օրինակելի քայլեր, «Արձագանք Փարիզի», Փարիզ, 25.05.1917, թ. 4, էջ 7:
[391] Տե՛ս Չինացիներն ալ կ՚օգնեն հայերու, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1.04.1919:
[392] Տե՛ս **Վարդանեան Ե.**, Անապատէ անապատ: Շար. «Վասպուրականի Նահանջ քիրոց»ին, Վենետիկ, 1923, էջ 418: Նվիրատուների ցանկը տե՛ս նույն տեղում, էջ 503-517 (բնագիրը տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 770):

րեքը՝ 100-ական[393]: Հոնկոնգից Ա. Թութունջյանը նվիրաբերել է 50 իեն, Մ. Մանուկը և Տիգրան Գրեգորին՝ 25-ական, Հարոլդ Լեքը՝ 15 իեն, իսկ Շանհայից տիկին Ա. Բագիլը հանգանակել է 30 իեն[394]: Կոբեից հանգանակությանը մասնակցել են 8 հոգի՝ հայ և օտարազգի (675 իեն), Յոկոհամայից (Ճապոնիա)՝ տաս հոգի, հայերից՝ 222 իեն, օտարազգիներից՝ 55 իեն[395]:

Ուշագրավ է նաև, որ 1920-ին, ԱՄՆ-ի չինացի ուսանողների ամսագրի խմբագրականներից մեկում, խոսելով չինացիների՝ իրենց հարևանների հետ կապերի և առհասարակ ազգամիջյան հարաբերությունների մասին, աշխարհում ուժեղի և թույլի, արդարի և անարդարի մասին, որպես բնորոշ օրինակ բերված են հայերը. «*Նայեք հայերին: Հազարավոր հայեր կոտորվեցին կամ ստրկացվեցին թուրքերի կողմից: Այնտեղ նրանց հիսնյակ երկիրն ավերված է դաժան թուրքերի կողմից: Ինչո՞ւ: Նրանք քրիստոնյաներ են: Նրանք չեն վիրավորել թուրքերին: Նրանք, իհարկե, իրավացի են: Նրանք ունեն իրավունք: Սակայն նրանք ուժ չունեն: Նրանք թույլ են, և ընկնում են թուրքերի կրունկների առաջ: Այդպիսին է համաշխարհային փորձառության ողբերգությունը: Եվ մենք չե՞նք կարող նախազգուշանալ*»[396]:

1922-ին Պեկինում կայացած աշխարհի ուսանողների քրիստոնեական դաշնության համաժողովում հնչել է հայերի կոտորածների դատապարտման հարցը: Փոքր Ասիան ներկայացրել է Զմյուռնիայի ամերիկյան քոլեջի պատմության և սոցիոլոգիայի պրոֆեսոր Սեմյուել Ռալֆ Հարլոուն (1885–1972): Ապրիլի 2-ին համաժողովը որոշում է կայացրել ի նպաստ Մերձավոր Արևելքի հալածված ժողովուրդների, այդ թվում՝ հայերի, ստորագրված 32 ազգերի ներկայացուցիչների կողմից[397]: «*Երբ 1920-ականների սկզբին Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեն սկսեց տարբեր երկրներում կազմակերպել այս-*

[393] Տե՛ս նույն տեղում, էջ 513:
[394] Տե՛ս նույն տեղում, էջ 515-516:
[395] Տե՛ս նույն տեղում:
[396] What Shall Be Our Policy Toward Japan? [Editorial], The Chinese students' monthly. v.15 no. 3, 1920 January, p. 7.
[397] Տե՛ս Արեւելքի ջարդերու մասին, «Ճակատամարտ»,Կ.Պոլիս, 6.02.1922:

պես կոչված «Ոսկե կանոնի» միջոցառումներ, որի ընթացքում լուսաբանվում էր Մերձավոր Արևելքում պատերազմից տուժածների ներկա դրությունը և հանգանակություններ էին կազմակերպվում նրանց օգտին, այդ երկրներից անմասն չմնացին նաև Չինաստանը և Ճապոնիան»[398]: Չնայած 1921-ի Չինաստանի սովին՝ Պեկինում, Գուանճոուում և Շանհայում 1922-ին հիմնվել են հայերին նպաստամատույց հանձնախմբեր (նաև Կորեայում[399]): Չինաստանում ճանաչված ամերիկացի միսիոներ վերապատվելի Էլվուդ Ջ. Թյուքսբըրիին դարձել է կենտրոնական հանձնախմբի նախագահ, որը գործել է Շանհայում: Դրանից առաջ ամերիկյան Ինդիանապոլիս քաղաքում միացյալ միջոցառում է կազմակերպվել Մերձավոր Արևելքի նպաստամատույց հանձնախմբի և Չինաստանի Սովի հիմնադրամի կողմից: Տիկին Անահիտ Ազգապետյանն իր ելույթում ներկայացրել է եղեռնից փրկված գաղթական հայերի կարիքները: Նրա խոսքից խորապես ազդված ԱՄՆ-ում չինական առաքելության դեկավար Սաո-Քե Ալֆրեդ Ցեն նկատելի գումար է տրամադրել հայ գաղթականներին[400]:

Հայերի նորանոր խմբեր Հեռավոր Արևելք են հասել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո: Նրանց մեջ եղել են բազմաթիվ գերիներ[401], որոնց մի մասին հաջողվել է ազատվել և հաստատվել Չինաստանի տարբեր քաղաքներում:

---

398 **Դարբինյան Ա.**, Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի մարդասիրական-քարոզչական քաղաքականության առանձնահատկությունները (1915–1930 թթ.), ՊՔՀ, Երևան, 2011, թ. 2, էջ 57:

399 Ուշագրավ է, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Կորեայում հայկական նպաստամատույց հանձնախումբ ստեղծվել է ԱՄՆ-ի հյուպատոս Սիլերի կողմից: Կանադացի բժիշկ միսիոներ Օլիվեր Ռ. Ավիսոնը, ի թիվս այլ ամերիկացիների և եվրոպացիների, եղել է այդ հանձնախմբի նախագահ (որոշ ժամանակ նրան փոխարինել է Թոմաս Հոբսը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1318, էջ 7): Տեղեկացվել է, որ Սբրահի Բիչի (Կորեա) ամառային շաբաթօրյա դպրոցում կազմակերպվել է հատուկ հայ գաղթականների օգնությանը նվիրված մի օր, որի ընթացքում որոշակի գումար է ժողովվել: Կորեացիները, իրենք էլ լինելով աղքատ, իրենց լուման են ներդրել հայ գաղթականների վիճակը թեթևացնելու գործում:+

400 Տե՛ս **Babkenian Vicken**, Cuba, China, Korea, Hawaii and the Armenian Genocide, Article taken from Armenian Weekly, http://www.armenianweekly.com/2010/11/10/cuba-china-korea-hawaii-and-the-armenian-genocide/ (այցելությունը կայքէջ՝ 6.12.2010):

401 Տե՛ս Հայ գերիները Սիբիրում (նամակ խմբագրությանը), «Հորիզոն», Թիֆլիս, 21.03.1918:

1910-ականների վերջի, 1920-ականների սկզբի հայ մամուլը տարբեր տվյալներ է հաղորդում Սիբիրի և Չինաստանի հայության ընդհանուր թվի և քաղաքական դիրքորոշման վերաբերյալ: Այն տատանվել է մոտ 3000-ից մինչև 10-15 հազարը. վերջինս չափազանցված է թվում: Մի բան հստակ է, որ նրանք գրեթե բոլորն էլ ապրել են բարեկեցիկ կյանքով, ճշմող մեծամասնությունը զբաղվել է վաճառականությամբ, եղել են նաև բժիշկներ: Սիբիրահայերը Ճապոնիայի, Հնդկաստանի և Չինաստանի հայերի հետ մեկտեղ հավաքել են հինգ միլիոն սիբիրյան ռուբլի՝ Հայաստանի համար: Սիբիրիում 15-20 հազար դոլար դրամագլխով հաստատվել է մի առևտրական ընկերություն՝ կամավորության հետ կապ պահպանելու, Ճապոնիայից էժան ապրանքներ առաքելու նպատակով: Հակասական են նաև նրանց քաղաքական դիրքորոշման վերաբերյալ տվյալները. որոշ աղբյուրների համաձայն՝ նրանք չեզոք դիրք են գրավել Կոլչակի և բոլշևիկների հանդեպ, ուստին չեն հալածվել, բայց կա նաև վկայություն, որ բազմաթիվ հայ սպաներ պաշտոն են ստանձնել Սիբիրի ժամանակավոր կառավարության մեջ[402]:

Հայերի այս մեծ կուտակումների պատճառով անհրաժեշտություն է զգացվել ստեղծել մի հայկական կազմակերպություն՝ կարիքի մեջ գտնվող հայրենակիցներին օգնելու նպատակով: 1917 թ. ստեղծվել է Չինաստանի առաջին հայկական կազմակերպությունը. Հարբինի Նովի գորոդի Սադովայա և Լյահյանսկայա փողոցների վրա գտնվող հայկական աղոթատանը հիմնվել է Մանջուրիայի Հայոց Ազգային Միությունը: Նրա հիմնադիր-ղեկավարներն են եղել բժիշկ **Ստեփանոս Սիտեյանը** (Ստեպան Միգդիսով), ճարտարագետ, Արևելա-չինական երկաթուղու բազմամյա աշխատող **Միքայել Հայրապետի Տեր-Հովակիմյանը** (Միխայիլ Տեր-Օվակիմով, մահացել է 1947-ին) և իրավաբան **Լևոն Ստեփանի Մելիք-Օհանջանյանը**: Չինաբնակ հայերը նրանց կատակով անվանել են այն երեք «հսկա կետերը», որոնց վրա հենվում է քաղաքի հայությունը: 1919-ին չինական իշխանութ-

---

402 Տե՛ս Սիպերիոյ հայ գաղութը, «Ազգ», Պոսթըն, 12.04.1920:

յունները պաշտոնապես վավերացրել են այդ կազմակերպության գոյությունը և իրավունքները[403]: Ազգային Միության գլխավոր խնդիրն է եղել օգնել բոլոր կարիքավորներին, ծերերին, որբերին, ինչպես նաև պահպանել հայկական ինքնությունը համայնքի անդամների շրջանում: Այդ նպատակով ազգային և եկեղեցական տոներին կազմակերպվել են թեյասեղաններ, հանրային և մշակութային զանազան ձեռնարկներ: Բարեգործական ձեռնարկներն իրականացրել է Տիկնանց օգնության խումբը, որը զբաղվել է ֆինանսների հայթայթմամբ և նվիրատվություններ հավաքելով: Հայ Ազգային միության վարչությունն իրավասու է դարձել նաև քննել հայերի միջև ծագած գժտությունները և հարկ եղած դեպքում տուգանել նրանց: Հարբինի հայերը կազմել են 46 կետից բաղկացած կանոնադրություն, որի առաջին կետում ընդգծվել է Չինաստանում ապրող բոլոր հայերի համար «*ազգային միասնության գաղափարի տարածումն ու պահպանությունը*»: Այս կանոնադրությունը ռուսերեն լույս է տեսել Հարբինում, 1922-ին՝ վավերացված Հարբինի գլխավոր ոստիկանական վարչության կողմից[404]: Հավանաբար այս կազմակերպությունն է հրատարակել հայերեն «Երկիր» երկշաբաթաթերթը: Ցավոք, ոչ մի օրինակ այս, ինչպես նաև «Գոլոս արմյանինա» («Հայի ձայն») թերթից[405], մեզ տակավին չի հաջողվել հայտնաբերել: 1920-ի տվյալով՝ Մանջուրիա քաղաքում երգնկացի Արմենակ Մելիքյանը հրատարակել է «Հայրենիք» թերթը[406], որի մասին նույնպես ոչ մի լրացուցիչ տվյալ չենք հայտնաբերել:

Երբ 1919-ի հունիսի 30-ին Հեռավոր Արևելքում Ալեքսանդր Կոլչակի (1874–1920) հռչակած հանրապետությունը ճանաչել է Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի ներկայացուցիչ է ընտրվել իրավաբան, Իրկուտսկի «Վեստնիկ Արմենիի» («Հայաստանի լրաբեր») թերթի հրատարակիչ Գրիգոր Սարգսի Ջամոյանը (Ծամոյան)[407]: Նույն ժամանակ Հարբինում ՀՀ հյուպատոս է նշանակվել Սիբիրում և Հեռավոր Արևելքում հեղինակություն վայելող իմժեներ, ծնունդով ախալցխացի **Լևոն Սուրինովը**:

1919 թ. մայիսի 20-ից սկսած, մոտ մեկ ամիս շարունակ, Հարբինում կայացել է Սիբիրի և Ծայրագույն Արևելքի հայերի առաջին համագումարը՝ միավորելով այդ տարածաշրջանում միմյանցից անջատ գործող հայկական կազմակերպությունները[408]: Նման մի հավաք կազմակերպելու գաղափարը միմյանցից անկախ հղացել են Վլադիվոստոկի Հայկական կոմիտեն[409] և երեք հայ ուսանող: Մայիսի 1-ին

[403] Տե՛ս **Meltickian Virginia**, Pictorial History of the Armenians in China, 1919–1945, "Hye Sharzhoom," Fresno, December, 2003: Տե՛ս նաև **Мелихов Г. В.**, Белый Харбин: середина 20-х, Москва, 2003, էջ 22:

[404] Տե՛ս Устав Харбинского Армянского общества, Харбин, 1922:

[405] Տե՛ս **Крушанов А. И., Ларин В. Л.**, Дальний Восток России в контексте мировой истории: от прошлого к будущему: материалы международной научной конференции, доклады и сообщения, состоявшейся 18-20 июня 1996 года: конференция посвящалась 25-летию института и 75-летию со дня рождения его создателя академика А. И. Крушанова, 1997, էջ 261:

[406] Տե՛ս Սիպերիոյ հայ գաղութը, «Ազգ», Պօսթըն, 12.04.1920:

[407] Գրիգոր Սարգսի Ջամոյանը (Գրիգորի Սերգեյի Ջամոև, 1865, Թիֆլիս–1937, Սանդրամոնիկո, Կալիֆոռնիա) եղել է իրավաբան, ՀՅԴ անդամ: Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (ԿՀԲԸ) նրան գործուղել է ռուսական զորքի կողմից Արևմտյան Հայաստանի գրավված բնակավայրերում հայ բնակչությանն օգնելու: 1916-ին եղել է ԿՀԲԸ-ին կից հայկական կենտրոնական կոմիտեի լիազորը (տե՛ս **Սահակյան Ռ. Օ.**, Փաստաթղթեր Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսահպատակ հայերի զանգվածային կոտորածների մասին, ԼՀԳ, Երևան, 2012, թ. 4, էջ 275): 1917 թ. եղել է Կարսի շրջանի կոմիսար (տե՛ս **Ջաքարյան Ա.**, Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը. գիրք 1, Երևան, 1997, էջ 285. անունը սխալմամբ տպագրված է Ջամոն): 1918-ին նշանակվել է Հայաստանի լիազոր դեսպան Ուկրաինայում: Խորհրդային կարգերի հաստատումից հետո որպես իրավախորհրդատու աշխատել է Ալմա-Աթայում: 1934-ին ձերբակալվել է, հաջորդ տարի դատապարտվել հինգ տարի ազատազրկման, տարվել Կարելիա, որտեղ 1937-ին նրան գնդակահարել են: Հետմահու արդարացվել է 1989-ին (Дзамоев_Григорій_Сергійович, http://uk.wikipedia.org/wiki/, այցելությունը կայքէջ՝ 16.05.2014):

[408] Այս համագումարի մասին տե՛ս **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Սիբիրի և Հեռավոր Արևելքի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1919–1920 թթ), Երևան, 2006, էջ 229-230: **Ալեքսանյան Հ.**, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում, էջ 56-59:

[409] Վլադիվոստոկի Հայկական կոմիտեն հիմնվել է 1916-ին և պաշտոնապես ճանաչվել Կոլչակի կառավարության կողմից: Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի տարիներին այն հայկական հյուպատոսարանի դեր է կատարել՝ հայերին տալով հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն վկայականներ, ստորագրված և կնքված կոմիտեի վարչության կողմից (կնիքի վրա՝ Ռուբինյան բազավորության զինանշանը՝ առյծներ և Մասիս), որը միգա է եղել Ճապոնիայի, Չինաստանի, Ցեյլոնի, Եգիպտոսի, Կոստանդնուպոլսի և Թիֆլիսի կառավարությունների կողմից՝ որպես հայկական անցագիր: 1920-ի դրությամբ Վլադիվոստոկում եղել են 500-ի չափ հայեր, որոնց մեծ մասն անցել է Ճապոնիա՝ այնտեղից ԱՄՆ արտագաղթելու

պատգամավորների մեծ մասը ժամանել է Հարբին, հնգօրյա ոչ պաշտոնական բանակցություններից հետո կազմվել է դաշնակցային խմբակցություն: Համագումարի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել մայիսի 5-ին՝ Հարբինի Ազգային վարչության նախագահ, հաղորդակցական ճանապարհների ճարտարագետ **Լևոն Մաֆարյանի** ճառով: Ուղերձներ են կարդացել թիֆլիսահայ թատրոնի երբեմնի դերասանուհի, Հարբինում հաստատված **Վարվառե Մելիքյանը** (1868–1928), **Վահրամ Ազնավուրյանը** և այլք: Մասնակից պատգամավորները քսանվեցն էին, որոնց թվում՝ հետագայում Հեռավոր Արևելքում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս նշանակված, Ճապոնիայում բնակվող գործարար տիկին Դիանա Աբգարը, Հարբինից՝ առևտրականներ **Հովհաննես Գրճելյանը**, Թիֆլիսում երբեմնի ունևոր դասի ներկայացուցիչ և բարերար, Երևանի մոտակայքում մի հիվանդանոց բացած **Սուրեն Թումաղյանը**, ինչպես նաև մի շարք հայեր ռուսական Ծայրագույն Արևելքի տարբեր քաղաքներից (Չիտա, Վլադիվոստոկ, Խաբարովսկ, Իրկուտսկ, Օմսկ, Տոմսկ, Չելյաբինսկ, Բլագովեշչենսկ): Համաժողովին ներկա **Վասակ Տեր-Պողոսյանը** (Րաֆֆու Խենթի փոքր որդին) սկզբնապես ընտրվել է համաժողովի նախագահ[410]: Համագումարն ընտրել է դիվան (հանձնախումբ) հետևյալ կազմով՝ Դիանա Աբգար (պատվավոր նախագահ), Վասակ Տեր-Պողոսյան (ատենապետ), **Կարապետ Սինասյան** (փոխատենապետ), **Նազարեթ Դշխոյան** (քարտուղար), **Արամ Սարգսյան** (փոխքարտուղար): Համագումարը նաև ընտրել է վարչություն, որի կազմում են եղել **Թադեոս Սիրունյանը** (նախագահ), Վահրամ Նալբանդյանը (փոխնախագահ), Հարություն Միրզոյանը (գանձապահ), **Համազասպ Պասակյանը** (քարտուղար) և Վասակ Տեր-Պողոսյանը (լիազոր ներկայացուցիչ): Ֆինանսական հանձնախմբի նախագահ է ընտրվել

նպատակով (տե՛ս Կեանքը հեռու Վլադիվոստոկում, «Յառաջ», Երևան, 17.07.1920): 1920-ին Վլադիվոստոկի անկուսակցական հայ ուսանողների խմբակը հրատարակել է «Հայ ուսանողի ձայն» ռուսերեն երկշաբաթաթերթը (**Крушанов А. И., Ларин В. Л.**, Дальний Восток России в контексте мировой истории, стр. 261):

[410] Տե՛ս **Պասկեան Հ.**, Հանդիպումներ եւ պատահարներ, «Հայրենիք» ամսագիր, Պօսթըն, 1963, p. 1, էջ 77-78:

առևտրական գիտությունների պսակավոր Հարություն Յակուբյանը, գանձապետ՝ Կարապետ Ասպետյանը:

Համագումարի օրակարգի գլխավոր կետերը հետևյալն էին՝

1. նյութական և բարոյական օգնություն նորաստեղծ Հայաստանին,
2. վերադարձ հայրենիք,
3. ազգային Լեգեոնի կազմություն,
4. կենտրոնական վարչության կազմություն
5. մարդահամար, և այլն[411]:

Հատուկ ուշադրություն է դարձվել Հայաստանին շուտափույթ օգնություն հասցնելուն, որի նպատակով կատարվել է հանգանակություն՝ հաշվի առնելով ողջ Հեռավոր Արևելքում գտնվող հայերի ստվար թիվը և նրանց նյութական բարեկեցիկ վիճակը: Այդ գործն արդյունավետ կատարելու համար գործունեության կենտրոն է որոշվել Հարբինը, որի հայ բնակիչների թիվը 1920-ին եղել է 50[412]: Համագումարը միաձայն որոշել է մեկուկես միլիոնի փոխառություն կատարել տեղի հայերից՝ երեք տարվա ժամկետով, առանց տոկոսի, որով առաջին պատեհությամբ իսկ կենսամթերք գնելով պետք է տեղափոխել Հայաստան՝ այնտեղ էժան գնով վաճառելու նպատակով: Որոշվել է նույնպես մեկ միլիոնի հանգանակություն կատարել և դարձյալ անհրաժեշտ կենսամթերք գնելով՝ անվճար բաժանել հայրենիքի կարոտյալներին (մեկ այլ աղբյուրի համաձայն՝ որոշվել է տարբեր համայնքներից հավաքել 250 հազար ֆրանկ[413]):

Որոշվել է նաև 18 տարեկանը լրացած բոլոր հայերին տալ Հայաստանի Հանրապետության անձնագրեր և առաջին իսկ պատեհությամբ, երբ արգելքները վերանան, կազմակերպված՝ հայրենիք վերադարձնել տեղի հայությանը՝ առաջնությունը տալով մտավորական ուժերին, իրավաբաններին, երկրաչափներին, բժիշկներին: Համագու-

[411] Տե՛ս **Տէր-Պօղոսեան Վ., Սարգսեան Վ.**, Հեռաւոր գաղութ մը մէկուկէս միլիոն գումար եւ ազգային զօրագունդ մը կը տրամադրէ հայկ. կառավարութեան, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 20.09.1919: Նույնը տե՛ս «Վերածնունդ», Փարիզ, թիվ 29, 9.10.1919, էջ 488-490:

[412] Տե՛ս Կեանքը հեռու Վլադիվոստոկում, նույն տեղում:

[413] Տե՛ս 250,000 ֆրանք, «Ասպարէզ», Ֆրեզնօ, 13.01.1920:

մարը որոշել է կազմել նաև ազգային զորագունդ հայ երիտասարդությունից և այդ ուղղությամբ դիմումներ է հղել Սիբիրի կառավարությանը, որի հրամանով զորակոչի օրենքը տարածվել է նաև տեղացի հայերի վրա, խնդրել, որ առժամանակ ազատ թողնի հայ երիտասարդներին զորակոչից, մինչև Խաղաղության համաժողովի վերջնական որոշումը հայության վերաբերյալ: Համագումարը զեկուցագիր է կազմել և ուղարկել Հայաստանի կառավարությանը (ստորագրված 1919-ի հունիսի 23-ին, Հարբինում[414]), դիմել է Հարբինի ամերիկյան հյուպատոսին՝ խնդրելով միջնորդել հայերի պահանջի նպաստավոր լուծման համար: Մամուլի մի թղթակցություն վկայում է նաև, որ համաժողովի կենտրոնական մարմինն արտոնություն է ստացել դաշնակից զորքերի ընդհանուր հրամանատար զորավար Ժանենից՝ կազմելու Հայկական լեգեոն, սակայն հետագա դեպքերն արգելք են հանդիսացել այն իրականացնելու համար[415]:

Սիբիրում և Հեռավոր Արևելքում գտնվող մոտ երեք հազար հայերի համար համագումարը մշակել է ծրագիր և ստեղծել կենտրոնական վարչություն, որի վրա համագումարը սրբազան պարտք է դրել ամեն կարելի միջոցներով նրանց կապել հայրենիքի հետ և պատրաստել ժամանակի հայեր[416]: Ժամանակակցի վկայությամբ՝ «*Ամբողջ գաղութը արտատրոփի կ'ապասէ այն օրուան, ուր կարելի պիտի ըլլայ հայրենիքը վերադառնալ*»[417]:

Բոլոր նշված որոշումները հրատարակվել են «Երկիր» և «Վեստնիկ Արմենիի» թերթերում: Վերոհիշյալ Գրիգոր Չամոյանի նախաձեռնությամբ «Հայ ազգային կենտրոնական խորհուրդը» Հարբինում հիմնել է «Երկիր» բաժնետիրական ընկերությունը, որի նպատակն է եղել առևտրական կապեր հաստատել Հայաստանի և ռուսական Հեռավոր Արևելքի, Չինաստանի և Ճապոնիայի միջև, փորձել է հագուստեղեն,

[414] Տե՛ս **Տէր Պօղոսեան Վ., Սարգսեան Վ.**, Հեռաւոր գաղութ մը...:
[415] Տե՛ս Սիպերիոյ հայ գաղութը, «Ազգ», Պօսթըն, 12.04.1920:
[416] Տե՛ս **Տէր Պօղոսեան Վ., Սարգսեան Վ.**, նույն տեղում:
[417] Սիպերիոյ հայ գաղութը, նույն տեղում:

շաքար, թեյ և այլ ապրանքներ ուղարկել Հայաստան[418]: Մինչև ամգամ առաջարկ է եղել հարյուր հազար չինացի ուղարկել Հայաստան՝ բանվորության: Համագումարն իր պաշտոնական սուրհանդակ Խ. Նալբանդյանի միջոցով Հայաստանի կառավարությանն ուղարկել է Ծայրագույն Արևելքի հայության վերաբերյալ մանրամասն տեղեկագիր[419]: Համագումարին անդրադարձել է ոչ միայն ժամանակի հայ մամուլը, այլև ամերիկյան Կարմիր Խաչի տեղեկագիրը[420]:

1920-ի սկզբին Հեռավոր Արևելքի հայությունը ձեռնամուխ է եղել իր հանգանակությունները Հայաստան հասցնելու գործին: Հունվարի վերջին Օմսկի հայերը տեղի չեխերի օգնությամբ ապահովել են երկու վագոն (մեկ մարդատար և մեկ ապրանքատար), մեկի մեջ տեղավորել չեխերից գնված հագուստեղենը, մյուսի մեջ՝ մի քանի հայ ընտանիք: Առաքելությունը ղեկավարել է Գրիգոր Չամոյանը, որին տրամադրել են զինվորական կցորդ, բիկնապահ և պահակախումբ: Վագոնների վրա պատկերվել է հայկական եռագույն դրոշը և ֆրանսերեն ու ռուսերեն լեզուներով գրվել է «Հայաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն»: Նրանք ճանապարհ են ընկել, եկել են նախ Իրկուտսկ: Այստեղ Չամոյանին պատիվներով ընդունել է իշխ. Կուչակը: Այն հյուրանոցում, որտեղ իջևանել է Չամոյանը, որոշ ժամանակ հայկական եռագույնն է պարզվել: Չամոյանը փորձել է Ծայրագույն Արևելքի հայերին ճանաչել տալ որպես Հայաստանի քաղաքացիներ: Նա բոլոր հայերին հանձնել է հայկական անցագրեր, և բոլոր ազգերի ներկայացուցիչները, ինչպես և ռուսական տեղական կառավարությունը ճանաչել են հայերին որպես հայ քաղաքացիներ: Իրկուտսկում Չամոյանը ժողովի է հրավիրել Սիբիրի և Ծայրագույն Արևելքի բոլոր քաղաքների հայկական հանձնախմբերին: Ժողովին ներկա են եղել Տետեճյանը՝ Վլադիվոստոկից, Սաֆարյանը՝ Հարբի-

[418] Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Հայաստանի հանրապետության հարաբերությունները..., էջ 231:
[419] Տե՛ս **Սարգիսեան Ար.**, Խարբինում, «Յառաջ», Երևան, 25.03.1920:
[420] Տե՛ս American National Red Cross, vol. 3, Bureau of Publications for the Department of Chapters, American Red Cross, 1918, էջ 3:

ցից, Պսակյանը՝ Մանջուրիայից, Մելիքյանը՝ Բլագովեշչենսկից, Յագուպյանը՝ Իրկուտսկից, ինչպես նաև Նալբանդյանը, Վ. Տեր-Պողոսյանը և Վ. Հարությունյանը: Ժողովի գլխավոր նպատակն է եղել Սիբիրում և Հեռավոր Արևելքում ապրող հայերին զինվորագրել և վերադարձնել Հայաստան, անմիջապես երկիր ուղարկել այն հայերին, որոնց օգնության կարիքը կա հայրենիքում, Սիբիրում և հեռավոր Արևելքում ապրող ամեն մի հայ պետք է հագցնի մեկ հայ զինվորի, որի արժեքը նշանակվել է 5000 ռուբլի, կազմակերպել մի առևտրական ընկերություն, որը կզբաղվի Հայաստան ապրանք փոխադրելու և առևտրական գործեր մշակելու գործով: Այնուհետև հայկական պատվիրակությունը մարտի 15-ին հասել է Հարբին, որտեղ նրանց դիմավորել են հայ համայնքի ներկայացուցիները, այդ թվում՝ տեղական կոմիտեի փոխնախագահ բժիշկ **Մղռեյանը**, դաշնակցության կողմից՝ Համբարձումյանը, Կանանց միության կողմից՝ տիկին **Քեչեջյանը**, Երիտասարդաց ընկերության կողմից՝ օրիորդ **Գրծելյանը**[421]: Ժամոյանը հարաբերություններ է մշակել նաև Հարբինում ֆրանսիական գլխավոր ներկայացուցիչ Մատրայի, ճապոնական դեսպան Յունետաղա Կատոյի, չեխոսլովակյան ներկայացուցիչ բժիշկ Կլոսի և լեհական ներկայացուցչի հետ: Հատկապես ուշագրավ է եղել նրա հանդիպումը Հարբինի արտասահմանյան գործերի ընդհանուր կոմիսար, նահանգապետ, զորավար Տաո Շու Էնի հետ: Ժամանակակցի վկայությամբ՝ վերջինս շատ հետաքրքրված է եղել հայերով և մասնավորապես՝ հայ գրականությամբ: Նա Ժամոյանին ուղեկցել է չինական բանտ՝ ցրելու համար չինական բանտերի մասին շրջող ասեկոսեները, և տեսել են, որ բանտարկյալները բնակվում են մաքուր սենյակներում, զբաղվում ֆիզիկական և մտավոր աշխատանքներով: Ժամոյանը հարցրել է նահանգապետին, որ եթե չինական կառավարությունից խնդրեն հարյուր հազար հոգի՝ Հայաստան աշխատանքի տեղափոխելու համար, դրական պատասխան կստանա՞ն արդյոք: Տաո Շու

[421] Տե՛ս **Յովհաննէսեանց Խ.**, Հայկ. Հանրապետութեան ներկայացուցիչը Սիբիրում եւ Ծայր. Արեւելքում, «Ասպարէզ», Ֆրեզնօ, 4.01.1920: Նույնը տե՛ս՝ Հայկ. Հանր. ներկայացուցիչը Սիպերիոյ եւ Ծայր. Արեւելքի մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 6.07.1920:

էնը հրճվել է այս հարցից և ասել, որ իր կարծիքով չինական կառավարությունը կընդառաջի նման խնդրանքի և անճամբ պատրաստակամություն է հայտնել դիմել չինական արտաքին գործերի նախարարին՝ Պեկին[422]:

Այնուհետև Ժամոյանն իր խմբով հասել է Մանջուրի (Լուպին), որտեղ նրան դիմավորել է տեղի հայ համայնքը: Երբ նա դուրս է եկել գնացքից՝ հավաքվածները «Մեր հայրենիքն» են հնչեցրել: Ապրիլի 20-ին խումբը հասել է Ճանճուն, ապա՝ Շանհայ, որտեղ հանդիպել է թեյի և շաքարի առևտրով զբաղվող երկու հայ վաճառականների՝ **Ազատյանին** և **Գազազյանին**. վերջիններս պատրաստակամություն են հայտնել օժանդակել Հայաստանի Հանրապետությանը: Ժամոյանն այնուհետև Հոնկոնգում հանդիպել է տեղի դատավոր և նահանգապետ հայազգի Սեթին, որը նույնպես Հայաստանին օգնելու իր մտադրությունն է հայտնել: Վերջապես Ժամոյանը հայտնվել է Ճապոնիայում, այցելել Տոկիո, Յոկոհամա և Կոբե քաղաքները, հանդիպել Դիանա Աբգարին, որից հետո ճանապարհ է ընկել Հայաստան: Սակայն հանգանակած գումարների և օգնության մի մասը չի ծառայել նպատակին. մեծ եռանդով սկսված գործը ձգձգումների պատճառով աննախադեպ վերջ է ունեցել: Օգոստոսի 3-ին Թիֆլիսից ՀՀ վարդապետ և արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանին Ժամոյանը հղել է մի նամակ-զեկույց՝ տեղեկացնելով, որ իրականացրել է Հայաստանի կառավարության հանձնարարությունը, վերադարձել Չինաստանով, Ճապոնիայով, Ինդոնեզիայով, ծովերով ու Հնդկական օվկիանոսով և որ վերադարձի ճանապարհին հանդիպումներ է ունեցել տարբեր երկրների հայ համայնքների ներկայացուցիչների հետ, որոնք ցանկություն են հայտնել կապեր հաստատել Հայաստանի հետ և օգնություն ցույց տալ[423]:

[422] Տե՛ս Հայկական ներկայացուցիչը Չինաստանի մէջ, «Ժողովուրդի ձայնը», Կ.Պոլիս, 4.08.1920:

[423] Տե՛ս Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երևան, 2010, էջ 137:

1920-ին Հարբինում գումարվել է նաև մեկ այլ ժողով՝ մասնավորապես հայ բանակի համար նվերներ հայթայթելու նպատակով: Ճապոնիայից ստացվել է 15 սնդուկ զանազան ապրանք (գինվորական հագուստներ, տաք կտավեղեն, բրդե ծածկոցներ, ձեռնոցներ, գուլպաներ, դեղորայք), 7200 ճապոնական իեն (5000 ամերիկյան դոլար) ընդհանուր արժողությամբ: Այդ 15 սնդուկն ըստ հրահանգի 1921-ի աշնանը հանձնվել է Փարիզի ՀՀ պատվիրակությանը՝ Ամերիկյան նպաստամատույց հանձնախմբի ներկայությամբ, որն էլ հանձնառու է եղել հասցնել այդ նվերը հայ ժողովրդին[424]: Փարիզից այդ ողջ գույքն ուղարկվել է Պոլիս և հանձնվել տեղի Ամերիկյան նպաստամատույցին[425], սակայն հայտնի չէ, թե այն ուղարկվել է արդեն բոլշևիկյան հռչակված Հայաստան:

Նույն թվականին Վլադիվոստոկում ամերիկյան Կարմիր խաչը հայ բանակի և կարոտյալների համար հավաքել է 45 արկղ այլ իրեր՝ 15 հազար դոլար արժողությամբ: Հարբինի հայերը, չկարողանալով Սիբիրի ճանապարհով այս նվիրատվությունն ուղարկել Հայաստան, ուղարկել են Ճապոնիա՝ Դիանա Աբգարին: Վերջինս դիմել է ճապոնական Կարմիր խաչին, որն էլ իր շոգենավով այդ 45 արկղ գույքն ուղարկել է Կ.Պոլիս՝ այնտեղից Հայաստան հասցնելու նպատակով[426]:

Հարբինի բնակիչ, ծնունդով ախալցխացի Կարապետ Ստեփանի Ասպետյանը, որը Հարբինի Կիտայսկայա փողոցում ունեցել է հրուշակեղենի և շոկոլադի գործարաններ, հայտարարել է, որ իր երկու բանկարժեք տները կտակում է Հայաստանի կառավարությանը, որպեսզի դրանց գնով Երևանում բացվեն դպրոցներ: Այդ տները գնահատվել են կես միլիոն ոսկի: Կտակի պաշտոնական գործողությունները կատարելուց հետո համապատասխան փաստաթղթեր են պատրաստվել Հայաստան ուղարկելու համար[427]:

[424] Տե՛ս **Թանթաճեան Ֆ.**, Հայաստանի համար Ճաւոնի միջոցաւ դրկուած նուէրները, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 10.11.1921:
[425] Տե՛ս Խարպինի հայութեան նպաստը, «Ասպարէզ», Բրեզնօ, 13.01.1922:
[426] Տե՛ս Ո՞վ նուիրեց 45 սնտուկ գոյքը, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 12.11.1921:
[427] Տե՛ս Հայաստանի ներկայացուցիչը Սիբիրում, «Յառաջ», Երևան, 31.08.1920:

Պատմաբան Գ. Պետրոսյանի գնահատմամբ՝ «*Սիբիրի և հեռավոր Արևելքի հետ առնչություններն օբյեկտիվ պատճառներով չտվեցին անհրաժեշտ արդյունքները, սակայն կարևոր էր հայ գաղութի հետ կապերի հաստատումն և նրա աշխուժացումը*»[428]:

[428] **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները..., էջ 233:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Հետաքրքրական է և չուսումնասիրված հայ Եկեղեցու պատմությունը Չինաստանում ու առհասարակ, Հեռավոր Արևելքում[429]: Չինաստանի միակ և մի քանի տասնամյակի կյանք ունեցած հայկական եկեղեցին գոյություն է ունեցել Հարբին քաղաքում: Մինչև 1918-ը Հարբինի Նովի Գորոդ թաղամասում գործել է հայկական փայտաշեն աղոթատուն: Նրա հիմնադրման թվականը մեզ հայտնի չէ: Ցայժմ նրա վերաբերյալ մեզ հայտնի առաջին տեղեկությունը վերաբերում է 1905 թվականին: Մինչ աղոթատուն ունենալը Մանջուրիայի հայերը հաճախել են տեղի ռուսական եկեղեցիները[430]:

1902 թ. Աստրախանի թեմի առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանը ցանկացել է գտնել մի եռանդուն և զարգացած անձնավորություն՝ Սիբիրում և Մանջուրիայում գտնվող առևտրական և աքսորական հայերի հովվության համար, ինչը նրան չի հաջողվել[431]: Ինչպես տեղեկացվել է Հարբինից «Մշակին» ուղարկված թղթակցության մեջ, այդ թվականի հունվարի 22-ին Հարբինի «Պորտսմուտ» հյուրանոցի ընդարձակ դահլիճում Ամենայն հայոց կաթողիկոսի պատվիրակ Ընծակ վարդապետը մատուցել է ժամերգություն և հանդես եկել քարոզով: Ներկաները՝ մոտ 200 հայորդիներ, հիմնականում 10-12 տարիների բախտառական չարքաշ կյանքից հետո առնչվել են հարազատ Եկեղեցուն: «*Ո՞վ կարող էր երազել,*– նշված է թղթակցության մեջ,– *որ այս դաժան, հեռու երկրում, վաղուց հայրենիքից անջատված, ցիրուցան եղած մեր պանդուխտ հայ եղբայրները այսօր անակնկալ կերպով կարող կը լինեն միախմբուել մի արժանաւոր հոգեւորականի առաջ, որը դրդուելով հովուական խղճմտանքից, իր բարի ցանկութեամբ արհամարհել է ամէն մի խոչընդոտ, որպէս զի հոգեկան մխիթարութիւն բերէ օտարութեան մէջ տանջուող իր ճեղուրտած հօտին*»[432]: Հարբինի ռուսական թերթի թղթակիցը հայ վարդապետին համեմատել է Պիոս պապի հետ: Միջոցառմանը հայկական երգերի կատարումով ելույթ է ունեցել հայ երգիչ Արշակ Կոստանյանը[433]:

Նույն թվականի հունիսի 19-ին Սիբիրի հայոց հովիվ Արիստակես քահանա Խեմչյանցը պատարագ է մատուցել **Ջալալ բեգ Ալթունյան-**

---

[429] Ռուսաստանի այդ խստաշունչ երկրամասում՝ Սիբիրում հայտնված մի բուռ հայ աքսորականները, մասնավորապես 1894-ից Թիֆլիսի «Նոր-Դար» օրաթերթին Սիբիրացի ծածկանունով աշխատակցող հեղինակը, դիմել են Աստրախանի հայոց թեմին, բազմիցս արծարծել Սիբիրում մի շրջուն հայ քահանա ունենալու հարցը (տե՛ս **Սիբիրացի**, Նամակ Սիբիրից, «Նոր-Դար», Թիֆլիս, 11.03.1899, 3.03.1900): Այդ թղթակցության շնորհիվ Աստրախանի թեմի սրբազան առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանը անհրաժեշտ կարգադրություններ է կատարել և մի քանի ազգասեր հայերի ճիգերատվությամբ նույն թվականի հունիսին Իրկուտսկ է այցելել տեր Մեսրովբ Գուլումյանցը Աստրախանից՝ մեծ ուրախություն պատճառելով տեղի հայերին (տե՛ս **Նույնի**, Նամակ Սիբիրից, նույն տեղում, 8.07.1900:): Իրկուտսկի հայ աքսորականները վարձել են երեք սենյակ, որոնցից մեկը ծառայել է որպես աղոթատուն: 1900 թ. օգոստոսի 20-ին մատուցվել է առաջին պատարագը (տե՛ս **Սիբիրացի**, Նամակ Սիբիրից («Նոր-Դար»-ի թղթակցութիւն), նույն տեղում, 21.09.1900): Սակայն Սիբիրացու կոչը հայ հարուստներին, գնելու այդ շենքը՝ հայերի համար մշտական աղոթատուն դարձնելու նպատակով, մնացել է անարձագանք, և շենքը հայերը ձեռքից բաց են թողել (տե՛ս **Սիբիրացի**, Նամակ Սիբիրից («Նոր-Դար»-ի թղթակցութիւն), նույն տեղում, 8.05.1901):

Ուշագրավ է, որ հայկական աղոթատուն ունենալու մտահոգությամբ են ապրել նաև Սախալինի հայերը: «*Ներկայիս իրենց առօրեայ հարցը – հայկական մատուռի հարցն է կազմում: Ամեն որ մի որոշ գումար ետ գցելով՝ փող է հաւաքում մատուռի շինութեան ծախսերին աքսորուած հայրենակցի հետ հոգալու համար: .....Թէ՛ Սիբիրի քաղաքներում եւ թէ՛ Սախալինում ամեն ազգ ունի իր աղօթատեղին՝ բացի հայերից: Մահմեդականն ամեն օր լսում է մզկիթի մինարէթից Ալլահին և նրա մեծ մարգարէին փառաբանող մոլլայի ձայնը, իսկ խեղճ հայը տասնեակ տարիներով կարօտ է մնում իր մայրենի եկեղեցու հոգեզմայլ շարականներին: Խիստ գովելի է վերջին աքսորուած մի քանի անձնաւորութիւնների վարմունքը, որոնք նրանք գոնէ տարուայ մեծ տօներին – Ծննդի եւ Զատկի ճրագալոյցին – ի մի հաւաքելով տեղացի հայերին (Ալեքսանդրովսկում) որեւէ տան մէջ երգում են պատշաճաւոր տարերն ու շարականները եւ նշխարքով ու գինով հաղորդուելով հոգեւոր մխիթարութիւն գտնում*» (**Հումպցեան Կ.**, Նամակ Սախալինից («Նոր-Դար»-ի թղթակցութիւն), նույն տեղում, 30.09.1900): Ի դեպ, Սախալինում հայերի գտնվելու փաստը հպիշտակել է ռուս մեծ գրողը՝ Անտոն Պավլովիչ Չեխովը, 1891–1893 թթ. գրած «Սախալին կղզին» ուղեգրության մեջ. «*Հայերը Էրիվանի գավառից բոլորովին չգիտեն իրենց տարիքը*» (**Чехов А. П.**, Собрание сочинений в 12 томах, т. 10, Москва, 1956, стр. 68.):

---

[430] Չինաստանի ռուսական Եկեղեցու մասին տե՛ս **Doubrovskaya Dina V.**, The Russian Orthodox Church in China. In: Stephen Uhalley Jr., Xiaoxin Wu, ed. "China and Christianity: Burdened Past, Hopeful Future," 2000, էջ 163-178:

[431] Տե՛ս **Արքահամեան Ն. ք.**, Սիբիրիայի հայերը, նույն տեղում:

[432] **Փիրումեանց Ս.**, Նամակ Խարբինից, «Մշակ», Թիֆլիս, 28.01.1905:

[433] Տե՛ս նույն տեղում:

ցի դահլիճում: Ներկա են եղել ինչպես առաքելական, այնպես էլ կաթոլիկ հայեր: Արիստակես քահանան իր քարոզի մեջ խոսել է Քաղվում, Նախիջևանում և այլ վայրերում այդ տարի տեղի ունեցած հայերի կոտորածների ու դրանց հետևանքների մասին՝ կոչ անելով եղբայրական օգնություն հասցնել ջարդերից տուժածների ընտանիքներին: Ապա **Խաչատուր Թաթուլյանի** պատրաստած մատաղի սեղանի վրա հոգեհանգստի արարողություն է կատարել: Հարբինի հայերը հայրենակիցներին օգնելու նպատակով հավաքել են 2363 ռուբլի, որը ռուսչինական բանկի միջոցով փոխանցվել է «Մշակի» խմբագրություն: Թղթակցության մեջ անուն առ անուն նշվել են այն հայերի անունները, ովքեր մասնակցել են հանգանակությանը[434]:

Ի դեպ, Հեռավոր Արևելքում հայկական եկեղեցի ունենալու գաղափարին ոչ բոլորն են դրականորեն արձագանքել: 1906-ին Չիտայից բիֆլիսահայ մամուլին ուղարկված մի թղթակցության մեջ նշվել է, որ «*Հարբինի հայերը մօտ 2 հազար (1936 ր.) րուբլի դրամ են հաւաքում և Իրկուտսկ փոխադրում, որպէսզի հայոց եկեղեցի շինի, որպէսզի Սիբիր եկած հայերը ընդմիշտ կարող մայր հայրենիքից: Բարեբաղդաբար դեռ եկեղեցու հիմքը դրած չէ, և Հարբինի հայերն էլ հնչհնչ պատճառներով հետ են ուզում Իրկուտսկի հայերից վերոյիշեալ գումարը ապագայում եռապատիկը տալու խոստումով – սակայն վերջիններս մերժում են փողերը վերադարձնել: Սրանք ունին մի քահանայ, Աստրախանի բեմից նշանակած*»[435]:

Մինչև քահանա ունենալը հարբինաբնակ հայերը հոգևոր հարցերով դիմել են համայնքի ղեկավարներ Միքայել Տեր-Օվակիմովին, Վ. Յա. Սողոմոնյանին և Կասկալյանին[436]: 1910-ին Սիբիրի և Հեռավոր

[434] Տե՛ս **Թաթուլեան Խ., Քաչուրեան Յ., Լեոնեան Ն.**, Նամակ խմբագրութեան, «Մշակ», Թիֆլիս, 28.07.1905:
[435] **Հայկունի Ա.**, Հայերը Սիբիրում, «Յառաջ», Թիֆլիս, 21.04.1906:
[436] Տե՛ս Духовная жизнь Дальнего Востока России: материалы региональной научно-практической конференции, посвященной 2000-летию христианства, Хабаровск, 24-26 октября 2000 г, ред. **Ципкин Ю. Н.**, Хабаровск, 2000, էջ 87: Նշված Կասկալյանը հավանաբար եղել է Հարբինի բնակիչ Կարապետ Մկրտչի Կասկալյանը (**Чашин К.**,

Արևելքի հայության հոգևոր հովիվ է նշանակվել քահանա **Եղիշե** (ավազանի անվամբ՝ Արտաշես) **Ռոստոմյանը** (1868, Ներքին Ագուլիս – 1932, Հարբին)՝ ստանալով Վլադիվոստոկը: Վերջինս 1888-ին ավարտել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, մինչև 1909-ը դասավանդել Լոռում (Հյուսիսային Կովկաս) և Թյուրքեստանի հայաշատ կենտրոններում: 1910-ին հաստատվել է Վլադիվոստոկում, թղթակցել հայ մամուլին, 1911-ին վկայել, որ ողջ Սիբիրում բնակվում է առնվազն հազար հայ[437]: 1912-ի նոյեմբերի 20-ին նա մարդահամար է կատարել Հեռավոր Արևելքի հայերի շրջանում, ըստ որի Վլադիվոստոկ, Չելյաբինսկ, Իրկուտսկ քաղաքներում և այլ բնակավայրերում ապրում են 1600-1700 հայեր, որոնց թիվը գնալով ավելանում է[438]: 1913-ին թղթակցություն է ուղարկել Թիֆլիսի «Հորիզոնին» ռուսական Ծայրագույն Արևելքից[439]: 1918-ին Վլադիվոստոկի հայ համայնքի ընդհանուր ժողովի որոշմամբ կնոջ՝ Մարգարիտի և չորս զավակների (Հրաչյա, Սիմեոն, Աստվածատուր, Արծվիկ) տեղափոխվել է Հարբին՝ դառնալով չինահայության հոգևոր առաջնորդը[440]: Եղիշե քահանա Ռոստոմյանը

Русские в Китае. Генеалогический индекс, էջ 341) և կամ Հովհաննես Կասկալյանը (տե՛ս Խարպինի մէջ համայնական վարչութիւնը, «Յուսաբեր», Գահիրէ, 29.08.1934):
[437] Տե՛ս **Ռոստոմեանց Ե. ք.**, Նամակ Վլադիվոստոկից, «Հորիզոն», Թիֆլիս, 16.04.1911:
[438] Տե՛ս **Իշխանեանց Կ.**, Հայերը Սիբիրում, «Հորիզոն», Թիֆլիս, 2.10.1913:
[439] Տե՛ս **Ռոստոմեանց Ե. ք.**, Ամուրեան շրջանում, «Հորիզոն», Թիֆլիս, 4.09.1913: Նույն թվականին Եղիշե քահանան վկայել է նաև, որ Սախալին կղզում անցյալում բնակվել է մի քանի հարյուր հայ, հիմնականում աքսորականներ, որոնցից 1911-ին մնացել են 33-ը, բոլորն էլ վաճառական (տե՛ս **Ռոստոմեանց Ե. ք.**, Մի այցելութիւն Սախալին աքսորավայրի հայերին, «Հորիզոն», Թիֆլիս, 27.11.1911): Սախալինի և առհասարակ ռուսական Հեռավոր Արևելքի և Սիբիրի հայության մասին տե՛ս մեր հոդվածը (**Քախչինյան Ա.**, Հայերը Սիբիրում և ռուսական Հեռավոր Արևելքում, «Քանքեր հայագիտության»,Երևան, 2015, թ. 1, էջ 153-176):
[440] Տե՛ս Նորակազմ Մանջուրյի հայերը, հաւաքեց՝ **Միքայէլեան Ա.**, «Հայրենիք», Պօսթըն, 15.02.1933: Մանջուրական կայսրություն (Մանջու-Դիգո-Մանջու-Գո) խամաճիկային պետությունը հիմնվել է Մանջուրիայի ճապոնական բռնազավթումից հետո, հռչակվել է 1932 թ. մարտի 1-ին՝ Մանջու-Գո (Մանջուրո) անունով և Սիմծին (այժմ՝ Ճանճուն) մայրաքաղաքով: Երկրի ձևական ղեկավարն է եղել մանջուրական հարստության տասներորդ ներկայացուցիչ, Չինաստանի վերջին կայսր Պու Ին (1906–1967): Մանջուրոն գոյատևել է մինչև 1945-ի օգոստոսի 19-ը՝ խորհրդային զորքերի կողմից Մանջուրիայի գրավումը:

հովվապետական առաքելությամբ պարբերաբար այցելել է Հեռավոր Արևելքի հայաբնակ վայրերը: Երբ 1922 թ. Վլադիվոստոկ են հասել արևելահայ 42 գաղթականներ, որոնք ռուսների հետ Բաղդադից անգլիացիների միջոցով տեղափոխվել են Ռուսաստան, Հարբինի Հայ կոմիտեն լիազորել է քահանա Ռոստոմյանին ճամփորդել Վլադիվոստոկ՝ գաղթականների կյանքը մոտիկից ուսումնասիրելու և նրանց օգնության գործը կազմակերպելու համար[441]:

1915–1916 թթ. չինաբնակ հայերն Էջմիածնից թույլտվություն են խնդրել Հարբինում հայկական եկեղեցի կառուցելու. մասնավորապես 83 ստորագրություն կրող մի ճամակ-համախոսականով բարձրացրել են դրա անհրաժեշտությունը և կարևորությունը՝ չինահայերին ուծացումից հեռու պահելու համար: Գործին հատկապես նախանձախնդիր է եղել Հարբինի հայ համայնքի եռանդուն գործիչ բժիշկ Ստեփաննոս Մղտեսյանը: Էջմիածինը հարգել է այդ խնդրանքը և թույլատրել եկեղեցու կառուցումը[442]: Սկսվել է դրամահավաք չինաբնակ հայերից: Հատկապես առատաձեռն են եղել հարբինցի Կարապետ Ասպետյանը (750 ոսկի ռուբլի) և Հարբինի ու Ճանճուլի հայերը, որոնք եկեղեցու կառուցման նպատակով հավաքել են 1207 ոսկի ռուբլի[443]:

1918-ին Արևելա-չինական երկաթուղու վարչությունը Հարբինի Լիառյանգ (Լյառյանսկայա) փողոցի անկյունում, Սադովայա փողոցի 18 հասցեում 2500 քառակուսի մետր տարածություն անվճար տրամադրել է հայերին՝ հայկական եկեղեցի կառուցելու նպատակով: Եկեղեցու և կից կառույցների շինարարության վերահսկման և շինանյութերի մատակարարման գործով զբաղվել է ճարտարապետ Միքայել Տեր-Հովակիմյանը: 1923-ի սեպտեմբերի 5-ին տեղի է ունեցել այդ տարածության հիմնարկեքը, որի ժամանակ Եղիշե քահանա Ռոստոմյանը հանդես է եկել ճառով, կարդացել հայրապետական մաղթանք, կատարվել է մատաղի արարողություն[444]: Մի քանի տարի տևած շինարարությունից հետո 1923-ի նոյեմբերի 18-ին բացվել է Ծայրագույն Արևելքի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայ առաքելական եկեղեցին՝ հարակից շենքերով, որն ընդգրկել է երիցատունը՝ քահանայի կացարանը, դպրոցը և մի սրահ-հավաքատեղի: Եկեղեցին կառուցված է եղել աղյուսից, հիմնական սրահը եղել է 119 քառակուսի մետր, քահանայի սենյակը՝ 55 քառակուսի մետր, աղքատների համար հարդարյուսից կառուցված կացարան՝ 22 քառակուսի մետր, իսկ կից այգին զբաղեցրել է 1908 քառակուսի մետր[445]: Այս ընդարձակ պատատու այգին հարուստ է եղել մասնավորապես բալենիներով և ընկուզենիներով:

Եկեղեցու բացմանը ներկա են եղել տեղի ողջ հայ համայնքը, նաև շատ օտարազգիներ (ռուսներ, վրացիներ, հրեաներ, լեհեր և այլք): Բացման առթիվ հարբինահայությունը հեռագիր է հղել Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Տփխիսեցուն և հաջորդ օրը նրանից նույնպես հեռագրով ստացել պատասխան օրհնության գիր[446]: 1925-ին չինական իշխանությունները պաշտոնապես ճանաչել են այն որպես Հարբինի հայ-գրիգորյանական եկեղեցի[447] (ինչպես հայտնի է, ռուս իրականության մեջ հայ Եկեղեցին միշտ անվանել են գրիգորյանական՝ Գրիգոր Լուսավորչի անունով, փոխանակ առաքելական՝ միտում ունենալով այն հեռացնել Քրիստոսի և նրա առաքյալների ժամանակներից): Այն դարձել է Մանջուրիայի, Չինաստանի և Ճապոնիայի հայերի միակ եկեղեցին և նատավայրը: Իսկ Հարբինի ակտիվ երիտասարդական միությունը Սուրբ Ծննդյան օրերին շրջել է բոլոր հայկական տները և երգել Ծննդյան շարականներ[448]:

Սակայն արդեն 1920-ականներից սկսվել են որոշ չինաբնակ հայերի տարաձայնություններ Էջմիածնի հետ, ինչը հետագայում ավելի է

[441] Տե՛ս Հայկական կեանք, «Ազգ-պահակ», Պօսթըն, 27.02.1922:
[442] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3712:
[443] Նույն տեղում, գ. 4712, թ. 13:

[444] Տե՛ս Չինաստանի հայերը, «Ասպարէզ», Ֆրեզնօ, 25.09.1923: Հայերը Չինաստանի մէջ, «Պայքար», Ուօթըրթաուն, 15.11.1923:
[445] Տե՛ս **Хисамутдинов А. А.**, Российская эмиграция в Китае, էջ 21-22:
[446] Տե՛ս Հայերը Չինաստանի մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 15.02.1924: Նույնը տե՛ս «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 13.03.1924 և «Յուսաբեր», Գահիրէ, 15.03.1924:
[447] Տե՛ս Духовная жизнь Дальнего Востока России, էջ 87-89:
[448] Տեղեկությունը՝ Վիրջինիա Մլտիկյանի (26.02.2007 թվակիր նամակ):

խորացել: Մանջուրիայի և Հեռավոր Արևելքի եկեղեցիները նախապես ենթարկվել են Արմավիրի և Հյուսիսային Կովկասի հոգևոր իշխանություններին: 1925-ին Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի կարգադրությամբ Մանջուրիայի և Հեռավոր Արևելքի եկեղեցիները սկսել են անմիջականորեն ենթարկվել Էջմիածնին:

1924-ին Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը Մայր Տաճարի նորոգության և Մայր Աթոռի հասույթները գանձելու նպատակով Հեռավոր Արևելք է ուղարկել Ռուբեն ծայրագույն վարդապետ Մանասյանին (1886–1955): Սկզբում տեղի հայությունը նրան լավ է ընդունել, Էջմիածնի համար գումարներ և նվերներ են հավաքել (Մանջուրիի հայերը՝ 350 ռուբլի, Տյենծինի հայերը՝ 60 անձի համար սեղանի սպասք՝ 800 ռուբլով և 1100 մեքսիկական դոլար[449], Ճանճունից Արտաշես Անտոնյանը՝ 184 ռուբլի, Հոնկոնգից Փոլ Չաթըրը՝ 1000 ոսկի): Մանջուրիի հայերը 1924-ի հոկտեմբերի 20-ին կաթողիկոսին շնորհակալական նամակ են հղել՝ գոհունակություն հայտնելով իրենց քաղաքում Էջմիածնից պատվիրակ ունենալու համար: Այդ նամակը ստորագրել են Մանջուրիի հայոց ազգային վարչության նախագահ Թադեոս Սիրունյանը և քարտուղար Համազասպ Պասկյանը: Սակայն այս նույն Պասկյանը հետագայում իր հուշերում պիտի արձանագրեր, որ Ռուբեն վարդապետը սաղրիչ գործունեություն է ծավալել Մանջուրիում և Հարբինում՝ նպատակ ունենալով Ծայրագույն Արևելքը դարձնել առանձին թեմ և դառնալ թեմի առաջնորդ: Սկսվել է մի տգեղ պայքար, փոխադարձ ատելություն հարբինահայերի մեջ, այն աստիճան, որ հեռավոր Չինաստանում ապաստանած հայերը սկսել են փողոցում միմյանց չբարևել: Ըստ քահանա Ռոստոմյանի՝ խորհրդային կառավարությունը լրտեսներ է ուղարկել՝ պառակտելու համար չինահայերին[450]: Համայնքը բաժանվել է վարդապետականների և ոչ վարդապետականների. առաջինները ոչ միայն իրենց զավակներին դաստիարակել են ուղարկել հայկական դպրոց, որտեղ դասավանդում էր վարդապետի մոլի հակառակորդ Ռոստոմյանը, այլև դիմել են տարբեր միջոցների՝ փակելու համար վարժարանը, որտեղ երեխաներն անվճար կրթություն էին ստանում: Վարդապետին համակիր խմբակի մեծամասնությունն ունեցել է խորհրդային անցագիր՝ գործելով այնպես, ինչպես թելադրել են[451]: Երկու կողմերը շարունակաբար Էջմիածին են ուղարկել բողոքագրեր. մի մասը ծանր մեղադրանքներ է ներկայացրել Ռուբեն վարդապետին, որը ծխատեր քահանայից խլել է նրա օրվա հացը՝ մկրտության և պսակի արարողությունները, մշտապես վարվել է անվայելուչ, նույնիսկ չինացիների շրջապատում, կատարել անօրինական գործողություններ (օրինակ, Հարբինում պսակել է թիֆլիսեցի Տեր-Առաքելյանին, որն արդեն ամուսնացած է եղել)[452]: Մյուս կողմը և Ռուբեն վարդապետը պախարակել են Ռոստոմյան քահանային (իբր նրա պատճառով հայությունը ճգնաժամային վիճակում է, առևտուրը դադարել է, Հարբինի եկեղեցին իր վեց սենյակով ունի 160 դոլար պարտք, ժողովուրդը սառել է եկեղեցուց, մեղադրել են գողության մեջ և այլն[453]): Տեղի տալով իրեն ուղղված բողոքներին՝ Խորեն արքեպիսկոպոսը 1925-ի փետրվարին ետ է կանչել Ռուբեն վարդապետին, որը հեռացել էր Կոբե (Ճապոնիա): Վարդապետականների թիմը Էջմիածին բողոքի նամակներ է գրել՝ պահանջելով Ռուբենի վերադարձը[454] (որին, ի դեպ, ուղարկել են Իրաք), մինչդեռ Հարբինի հայ համայնքի վարչությունը դիմում է հղել Էջմիածին՝ պնդելով դատի տալ Ռուբենին՝ որպես քրեական հանցագործի: Նրանք միաժամանակ նշել են, որ Հեռավոր Արևելք ժամանած Էջմիածնի պատվիրակները՝ Աբել, Ռուբեն վարդապետները, Մազլումյան և Թորգոմյան եպիսկոպոսները, ունե-

[449] Մեքսիկական դոլարը արտառոց է թվում Չինաստանի համար, սակայն այդպես է վկայված ժամանակի փաստաթղթում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4716, թ. 1):
[450] Տե՛ս **Ռոստոմեանց Ե. ք.**, Հայերը Չինաստանի եւ Մանջուրիայի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 16.12.1930:

[451] Տե՛ս **Գողթնեցի**, Խարպինի հայ գաղութը, «Յառաջ», Փարիզ, 9.10.1928:
[452] Լևոն Մելիք-Օհանջանյանը Հայաստանում ապրող մորը գրած նամակում վկայել է. *«Ռուբէն վարդապետի ոտը կոտրէր այստեղ չգար: Ախտս իմ, բժիշկ Մղրեսեանի եւ ինճեանէր Տէր-Յովակիմեանի թափած քանքերը եւ աշխատանքը. այդ վարդապետը իր կեանքով ու վարքով մեզ խայտառակեց, իսկ խեղճ տէրտէրի դէմ... այնպիսի ինտրիգներ սարքեց, որ ժողովուրդը երկու մասի բաժանեց»* (ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4709, թ. 15):
[453] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4706, 4717, 4724, 4728:
[454] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4724, թ. 3:

ցել են միանգամայն ժխտական գործունեություն[455]: Արդարև, Չինաստանում մնալով ընդամենը երեք ամիս 18 օր՝ Ռուբեն վարդապետին, այնուամենայնիվ, հաջողվել է վեց տարի շարունակ պառակտված պահել հայությանը և Հեռավոր Արևելքի նոր հոգևոր հովիվ նշանակելու հարցում համոզել Էջմիածնին, քանի որ 1927-ին Էջմիածինը մտադրվել է Չինաստանի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայության ընդհանուր հովիվ նշանակել Երվանդ ավ. ք. Նալբանդյանին[456], ինչը չի իրականացել: Միայն 1932-ի ապրիլի 24-ին Հարբինում բժիշկ Մղտեսյանի ջանքերով կազմակերպված ժողովը վերջ է տվել ախրահոչակ վարդապետի գործունեության առթիվ չինահայ միությունների միջև եղած գժտություններին[457]:

Մանասյանից բացի 1920-ականներին Էջմիածնից Հեռավոր Արևելք է այցելել նաև հայ կաթողիկոսի ներկայացուցիչ Սուրեն ծ. վ. Մանուկյանը: 1925 թ. Էջմիածնի համար հանգանակություններ կատարելու առաքելությամբ նա եղել է Ճավայում, Հոնկոնգում, այստեղ այցելել Փոլ Չաթըրին, որն Էջմիածնին նվիրել է 1000 անգլիական ոսկի: Այցելել է նաև մի քանի չինական քաղաքներ, հանդիպումներ ունեցել տեղի հայերի հետ: Ի դեպ, «Մալվա» շոգենավի վրա Մանուկյանը ծանոթացել է Անգլիայի թագավորի կրտսեր որդու՝ Ջորջի հետ, որին սովորեցրել է նվագել և երգել «Հայաստան» երգը[458]:

Ըստ ժամանակակցի վկայության՝ 1930-ականների կեսին Հարբինի հայոց եկեղեցին ունեցել է մոտ 400 ծուխ[459], որոնք, սակայն, հինգ տարով «որբացել են», քանի որ 1932-ի հոկտեմբերի 11-ին Հարբինում վախճանվել է Եղիշե քահանա Ռոստոմյանը[460]: Այդ առթիվ

[455] Տե՛ս նույն տեղում, գ. 4722, թ. 3:
[456] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4723:
[457] Տե՛ս **Կասպ**, Լուրեր Խարպինէն, «Յառաջ», Փարիզ, 14.05.1932:
[458] Տե՛ս Հայերը Ծայրագոյն Արեւելքի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 27.09.1925:
[459] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 73:
[460] Անշուշտ, Եղիշե քահանան է 1920–1930-ական թթ. Չինաստանում բնակված ռուս արձակագրուհի Նինա Ֆյոդորովայի (Անտոնինա Պոդգորինա-Ռյազանովսկայա) «Երեխաները» վեպում նկարագրված հայ քահանան. *«Լուցկին չրթաց և լուսավորեց անսովոր և տարօրինակ գեղեցիկ աչքերով բարձրահասակ մարդու դեմքը. ամենուր դեմք՝ երջանկությունից վառվող աչքերով»* (**Фёдорова Н.**, Дети, Франкфурт-на-Майне,

Երիտասարդական միությունը 40 օր սուգ է պահել: Նրա մահվան կես տարին նշել են 1933ի ապրիլի 11-ին, երեք տարին՝ 1935-ի հոկտեմբերի 11-ին, որին անդրադարձել է Հարբինի «Զարյա» ռուսերեն պարբերականը[461]: Չինաբնակ հայերը հինգ տարի զրկված են մնացել հոգևոր հովվից և հարսանեկան, կնունքի և հուղարկավորության ծեսերը ստիպված կատարել են ռուս ուղղափառ կամ անգլիական միաբանության եկեղեցիներում: Սակայն Չինաստանի ռուսական Եկեղեցին միշտ բարեհաճ չի եղել հայերի հանդեպ: Հաճախ Հարբինում և այլուր նա մերժել է հայերին՝ շենք կամ քահանա տրամադրել[462], այն դեպքում երբ Հարբինի հայերն իրենց եկեղեցին հաճախ սիրահոժար տրամադրել են լյութերականներին՝ մինչև նրանց սեփական շենքի կառուցումը: Սակայն, օրինակ, Շանհայի ռուսական Եկեղեցին ավելի բարեհաճ է գտնվել հայերի հանդեպ:

1935-ին Էջմիածինը Բուլղարիայում գործող Գրիգորիս ծայրագույն վարդապետ Կարապետյանին նշանակել է «Հեռավոր Արևելքի Ս. Էջմիածնի վարչական ներկայացուցիչ»՝ պատասխանատու Չինաստանի, Մանջուրիայի, Ճապոնիայի և Հնդկաչինի հայության հոգևոր կարիքների: Բուլղարիայի թեմի առաջնորդը խնդրել է Մայր Աթոռին՝ թույլ տալ Գրիգորիս վարդապետին մնալ Բուլղարիայում՝ մինչև Սոֆիայի հայկական եկեղեցու շինության ավարտը: Այս հոգևորականը այդպես էլ չի մեկնել Հեռավոր Արևելք[463]: Հարբինի ազգային Եկեղեցու վարչությունը, խնդրելով իրենց քահանա ուղարկել, նշել է, որ կարող են

1958, стр. 114): Անգլերեն թարգմանությունը փոքր-ինչ այլ է. *«Ռինգը տեսավ մի բարձրահասակ մարդու, չափազանց բարձրահասակ և համակրելի, նիհար, արծաթավուն մորուքով դեմքի վրա վառվող սև աչքերով»* (**Fedorova Nina**, The Children, 2005, p. 187):
[461] Տե՛ս «Заря», 1.01.1933; 11.10.1935, հղված է ըստ՝ Незабытые могилы, Российское зарубежье некрологи 1917-1997 гг., сост. **Чуваков В. Н.**, том 6, книга 2, Москва, 2006, էջ 287:
[462] Այսպես, երբ վախճանվել է երեցկին Ռոստոմյանը, և Եղիշե քահանան խնդրել է ռուս արքեպիսկոպոսին կատարել հուղարկավորության ծիսակարգը, վերջինս մերժել է զալ հայկական եկեղեցին, *«եւ խեղճ Ռոստոմեանց իր իսկ կինը թաղելու կրկնակի կսկիծին կ'ենթարկուի: Ռուսաց այս վերաբերմունքը շատ զարմանալի է. Քրիստոնեայի եկեղեցի տրամադրելը Աստուածավայել արարք մըն է, մանաւանդ քոյր եկեղեցւոյ մը, որպիսին է մերը»* (**Ծեռնիկ-որդի**, Չինական նամականի, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 7.08.1937, էջ 773):
[463] Տե՛ս Ծայրագոյն Արեւելքի առաջնորդարանը, «Յուսաբեր», Գահիրէ, 3.05.1935:

ապահովել քահանայի և ընտանիքի ապրուստը, ինչպես նաև հատկացնել բնակության համար հարկաբաժին՝ ծառայով, վառելանյութով և այլն[464]: Ինչպես նշել է Վահագն Թեոդիկը, «*Չինաստանի 480 միլիոն ժողովուրդին մէջ կորուսեալ ափ մը հայեր փնտռելու եւ անոնց հոգեղէն սնունդ եւ մայրենի դաւանանք մատակարարելու պաշտօնը արդարեւ սովորական մարդու գործ չէ եւ բազում աշխատանքի կը կարօտի*»[465]:

Ի վերջո մասնավորապես Հարբինի հայ միության նախագահ Տեր-Հովակիմյանի, Կարապետ Ասպետյանի և գեներալ (Արցախ) Ավետիսյանցի ջանքերով դիմում է հղվել Էջմիածնի Մայր Աթոռին՝ Չինաստան հոգևոր հովիվ ուղարկելու խնդրանքով: Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի և Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի հավանությամբ Ծայրագույն Արևելքի հայոց հոգևոր հովվության պաշտոնին է կոչվել Երուսաղեմի միաբան Ասողիկ վարդապետ Ղազարյանը (1909–1978)[466]: Խարբերդի Պեյեճեն գյուղում ծնված Ասողիկը միակն է եղել ընտանիքում, որ ողջ է մնացել Մեծ եղեռնի ժամանակ: Նա մի քանի ազգականների հետ ոտքով երեք տարի ճանապարհ կտրելուց հետո ի վերջո հանգրվանել է Բասրայում (Իրաք): Այնուհետև Ասողիկն ընդունվել և կրթությունը ստացել է Երուսաղեմի վանքում՝ ստանալով հոգևոր աստիճան և ձեռնադրվելով կուսակրոնության: Նա սահուն խոսել է հինգ լեզվով: 1937-ի մարտի 23-ին 28-ամյա վարդապետը նավով ճանապարհվել է Երուսաղեմից և ապրիլի 12-ին հասել է Չինաստան՝ Շանհայ: Նավահանգստում նրան մեծ խանդավառությամբ դիմավորել են տեղի 150 հայերը: Իսկ Հարբինի հայերը նրան ողջույնի գիր են ուղարկել: Նույն օրն իսկ Ասողիկը հանդիպել է Շանհայի ռուս եպիսկոպոսին՝ խնդրելով իրեն տրամադրել տեղի ռուսական եկեղեցին և պատարագ մատուցել: Ռուս եպիսկոպոսը պատրաստակամորեն ընդառաջել է նրա խնդրանքին: Ապրիլի 27-ին Ասողիկը մեկնել է Հարբին՝ իր նստավայրը, ճանապարհի փոքր քաղաքներում նույնպես հանդիպել տեղի հայերին: Մայիսի 2-ին արդեն Հարբինում հայերը տոնել են Զատիկը և պատարագ մատուցել եկեղեցում[467]: Շանհայի և Հարբինի մասուլը, հատկապես ռուսալեզու թերթերը[468], հոդվածներով անդրադարձել են հայությանը և նրանց նոր հովվապետին: Չինաբնակ հայերը միանգամից սիրել և պատկառանք են զգացել երիտասարդ, գեղեցկատես, խարիզմատիկ հոգևորականի հանդեպ («*Համակրելի դէմք մը՝ որու վրայի նորափթիթ մօրուքը պաշտօնին վայել պատկառանք մը կուտայ իրեն. միջահասակ, անուշ խօսուածքով աւեծ մըն է 28 տարեկան Ասողիկ Վ., որ իր տարիքէն աւելի երիտասարդ եւ աշխոյժ կ'երեւի*»[469]), անգամ տեղական ռուսներն են փողոցում հարգանք ցույց տվել նրան և անվանել վարդապետ[470]:

Ասողիկ վարդապետը ցույլը ձեռքին այցելել է Չինաստանի հայաբնակ բնակավայրերը՝ ամենուրեք կատարելով իր պաշտոնը, կատարել չինաբնակ հայերի մարդահամար, ծավալել աշխույժ գործունեություն՝ սովորեցնելով հոգևոր և ժողովրդական երգեցողություն, դասավանդելով հայոց լեզու և պատմություն, Շանհայում հիմնել է Հայ բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղ՝ Էդուարդ Համամճյանի և Հայկ Ասատուրյանի առատաձեռն նվիրատվությամբ: Շանհայում պատարագը մատուցել է տեղի ռուսական ընդարձակ եկեղեցում, և քա-

[464] Տե՛ս Մանչուրիայէն քահանայ կ'ուզեն, «Ազդարար», Ստանպուլ, 4.07.1935:

[465] **Թեոդիկ-որդի**, Չինական նամականի, «Հայաստանի կոչնակ», նույն տեղում, էջ 772:

[466] Վահագն Թեոդիկն այսպես է հիշել իր առաջին հանդիպումը Ասողիկ վարդապետի հետ Տյեճնինի «Իմպերիալ» հյուրանոցում. «*Մեր պանդոկը ժամանող հիւրերուն մէջ կը մօտենայ Father Asoghigի՝ զայն գտնելով կղերական տարազով և մօրուքաւոր միակ անձը:*

–Հայր Աշուղիկը դո՞ւք եք:

–Այո, օրհնեալ ըլլաք:

Զարմանքը մեծ կ'ըլլայ հայերէն լսելով Չինաստանի հեռաւոր անկիւնը, անծանօթի մը բերնէն՝ որուն դիմագիծերը հայկական տիպարի չէին նմանիր:

–Իմ անունս Ասողիկ է, ոչ թէ Աշուղիկ....

–Հայր Ասողիկ եւ Վահագն Թէոդիկ, երկու եզակի անուններու ինչ հանդիպում այս չնաշխարհիկ երկրին մէջ» (**Թէոդիկ-որդի**, Չինական նամականի, նույն տեղում, էջ 772):

[467] Տե՛ս Լուրեր Ծայրագույն Արեւելքի հայութենէն, «Սիոն», Երուսաղէմ, 1937, Յունիս, թ. 6, էջ 195:

[468] Չինաստանում ռուսները հրատարակել են 189 թերթ և 305 հանդես (**Юнхуа Чжао**, Русская эмигрантская пресса в Китае в первой половине XX в., «Вопросы истории», Москва, 2011, но 1, стр. 145):

[469] **Թեոդիկ-որդի**, Չինական նամականի, նույն տեղում, էջ 772:

[470] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 77:

ցի որ անհնար է եղել գտնել հայերեն կարդացող տիրացու և սարկավագ, հայերեն աղոթքի և սրբասացության շարադրանքը գրել են ռուսերեն տառերով և կարդացել են ռուս հոգևորականները: Նույն դժվարություններին է հանդիպել նաև Հարբինում և Մանջուռգոյի այդ ժամանակվա մայրաքաղաք Ճանճունում: Վերջինում 43 հայ է ապրել, իսկ հայկական եկեղեցի չլինելու պատճառով պատարագը մատուցել է մի սեփական տան մեջ[471]: Իսկ Տյենծին քաղաքում հայկական պատարագ է մատուցվել անգլիական Գորդոն դահլիճում[472]: Ասողիկն ընթերցել է պատրիարքի կոնդակը՝ ուղղված Ծայրագույն Արևելքի հայերին: «*Աղօթքներն ու սրբասացութիւնները վերացուցին մեր հոգիները... Նոյն իսկ սրահին Չինացի պահապանները, որոնք ներկայ եղած էին արարողութեան, ազդուած կ'երեւէին*»[473]:

Ճանհայում տեղի ռուս եպիսկոպոսը բարեհաճ է գտնվել հայերի հանդեպ և հատուկ նրանց համար եկեղեցում կախել է տվել սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերները, որպեսզի դրանց դիմաց աղոթեն[474]:

Ասողիկ վարդապետի ջանքերով վերաւորոգվել և ընդլայնվել են Հարբինի եկեղեցուն կից տարածքները՝ հայ ազգայինների (Սիմոն Էլոյան, Լ. Ավետիսյան, Ա. Էլյասով և այլք) առատ նվիրաբերմամբ: Եկեղեցուն կից կառուցվել է հարդե կացարան՝ համայնքի աղքատների համար: 1940-ականների սկզբին եկեղեցի այցելողների թիվը եղել է 155, բոլորն էլ՝ հայեր[475]: 1938-ին Ասողիկ վարդապետը Բարեկենդանին Տյենծին է այցելել և 16 հոգու ներկայությամբ ժողով գումարել՝ զեկուցելով, որ Հարբինի Սուրբ Գրիգոր եկեղեցու համար Հարբինի, Ճանճունի և Դայրենի հայերից հավաքել է 10,000 իեն[476]: Հարբինի մյուս ազգությունների հոգևոր հովիվների հետ նա անդամակցել է քաղաքում գործող անաստվածության դեմ պայքարող եկեղեցական

[471] Տե՛ս **Թեոդիկ-որդի**, Չինական նամականի, նույն տեղում, էջ 773:
[472] Տե՛ս նույն տեղում, էջ 773-774:
[473] Նույն տեղում, էջ 774:
[474] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 75:
[475] Տե՛ս Духовная жизнь Дальнего Востока России, էջ 90:
[476] Տե՛ս **Թեոդիկ-որդի**, Ասողիկ վարդապետ Թիէնցինի մէջ, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 2.04.1938, էջ 32:

խորհրդին[477]: Նույն 1938-ին Ասողիկ վարդապետը այցելել է Մանջուրիա (կատարել է 57 հայկական պսակ և մկրտություն ռուսական եկեղեցում) և Հայլար (35 հայկական պսակ և մկրտություններ՝ մասնավոր տան մեջ): Նախատեսել է աշնանը այցելել նաև Ճապոնիա[478]: Ժամանակակցի վկայությամբ, Ասողիկ վարդապետի այցերը պսակվել են հաջողությամբ, պատանիներն ու երիտասարդները հաճույքով հետևել են նրան: «*Հայերէն խօսելու տենչը հրահրած է ամէնքը: Տարէցներն ալ սկսած են խօսիլ հայերէն, զոր մոռցեր էին երկար տարիներէ ի վեր: Ասողիկ Վրդ. աշխատանքի լծուած է ազգ. կալուած մը չհնել տալու: Հակառակ պատերազմ. վիճակին, ամէն կողմէ կը փափաքին, որ հոգեւոր հովիւը այցելէ իրենց այն բոլոր քաղաքները, ուր այցելած էր նախապէս: Յուրաք երբեմն կ'իջնէ եղեր զէրոյէ մար մինչեւ 45 աստիճան, եւ առ հասարակ 25-30*»[479]: Ահա նման խիստ կլիմայական պայմաններում հայ հոգևորականը շարունակել է իր գործունեությունը:

1939-ին Հարբինի հայկական եկեղեցի են մտել չինացի գողեր և կողոպտել են՝ տանելով խորանի ոսկեճույլ խաչը, Ասողիկ վարդապետի ոսկեճամուկ շուրջառն ու թագը և եկեղեցական անոթներ: Մանջուրյի ոստիկանությունը որոնման աշխատանքներ է կատարել[480]: Այլ մանրամասնություններ հայտնի չեն:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Ասողիկ վարդապետը, լինելով Երուսաղեմի քաղաքացի, որը 1930-ականներին գտնվել է բրիտանական հովանավորության ներքո, 1941–1945 թթ. բանտարկված է մնացել Մուկդենի բրիտանական և ամերիկյան քաղաքացիների համար նախատեսված ճապոնական համակենտրոնացման ճամբարում: Մեծ եղեռնից փրկված այդ հոգևորականը բազմաթիվ տառապանքներ է կրել ճապոնացիների ձեռքին: Ազատվելով համակենտրոնացման ճամբարից՝ նա Չինաստանում մնացել է մինչև 1949-ը՝ լինելով

[477] Տե՛ս Լուրեր Ծայրագոյն Արեւելքի հայութենէն, «Սիոն», Երուսաղէմ, 1937, Սեպտեմբեր, թ. 9, էջ 291:
[478] Տե՛ս **Ա. Աբան**, Հայ կեանք (ամսական տեսութիւն), «Հայրենիք» ամսագիր, 1938, Նոյեմբեր, էջ 167:
[479] Հայերը Ծ. Արեւելքի մէջ, «Արեւելք», Ստանպուլ, 13.03.1938:
[480] Տե՛ս Խարպինի հայ եկեղեցին, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 25.11.1939:

մեծապես հարգված անձնավորություն ժողովրդի կողմից: 1945 թ. հոկտեմբերի 19-ին Գևորգ Զ կաթողիկոսին գրած նամակում Ասողիկը հայտնել է, որ չորս տարի ճապոնական գերության մեջ լինելով՝ ինքը կտրված է եղել աշխարհից և կաթողիկոսի ընտրության լուրը իմացել է խորհրդային բանակի հայ զինվորներից, «*որք Ռուսաց բանակին հետ եկան այստեղ եւ ազատագրեցին զմեզ ճաբոնացւոց ձեռքէն*»[481]:

1955–1956 թթ. Ասողիկը գործել է Ավստրալիայի հայության մեջ, մասնավորապես՝ Մելբուռնում[482]: 1957-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն նոյեմբերի 25-ին կոնդակ է ստորագրել Ծայրագույն Արևելքի հայոց համար, որտեղ գերաշնորհ տեր Ասողիկ եպիսկոպոսին դիմել է որպես «*հայրապետական պատուիրակին եւ առաջնորդին Հեռաւոր Արեւելեայց, Հնդկաստանի, Չինաստանի, Աւստրալիոյ, Նոր Զելանդիոյ, Ինդոնեզիոյ, Մալաւայի եւ Բիրմայի*»[483]:

Ասողիկ եպիսկոպոսը հետագայում հայոց հոգևոր հովվի պաշտոն է կատարել Հնդկաստանում, Նյու Յորքում և վերջապես 1964–1979 թթ.՝ Իրաքում[484]: Այդ ժամանակահատվածում նա մի քանի անգամ այցելել է Խորհրդային Հայաստան, հյուրընկալվել Էջմիածնում: 1978-ին, զգալով իր մոտալուտ վախճանը՝ նա նստել է Բաղդադ-Մոսկվա ինքնաթիռը, ճանապարհին ինքնազգացողությունը վատացել է, և ինքնաթիռի հայ օդաչուին խնդրել են վայրէջք կատարել Երևանում: Նրան տեղափոխել են Էջմիածին, որտեղ էլ մի քանի ժամ անց մահացել է: Թաղվել է Սուրբ Գայանե եկեղեցու բակում[485]:

[481] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4736, թ. 1:
[482] Տե՛ս **Դերենիկ եպս.**, Աւստրալիոյ հայ գաղութը, «Զարթօնք», 29.05.1958:
[483] Կոնդակը տպագրված տես՝ «Էջմիածին», Էջմիածին, 1957, թ. ԺԱ, էջ 7-8:
[484] Սխալվել է ուսումնասիրող Միրոն Ռեզունը՝ 1930-ականներին վերագրելով այն իրողությունը, որ «*Խարբինի (Մանջուրիա) նախկին եպիսկոպոսին տրվել է Բաղդադի հայկական եպիսկոպոսությունը, բրիտանացիների հետ բթի տակ*» (**Rezun Miron**, The Soviet Union and Iran: Soviet Policy in Iran from the Beginnings of the Pahlavi Dynasty Until the Soviet Invasion in 1941, Collection de relations internationals, Institut universitaire de hautes études internationales, vol. 8 1981, p. 168):
[485] Ասողիկ եպիսկոպոսի վախճանի մասին մեզ պատմել է նրա անգլիախոսակ ազգական Փոլ Մանուկը (Պողոս Դիշլեքեճյան, 2005, ապրիլ): Նրա մասին տե՛ս նաև՝ **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 73-79:

Հարբինահայությունը, որի թիվը կտրուկ պակասել էր պատերազմից հետո, Ասողիկի մեկնելուց հետո դարձյալ մնացել է առանց հոգևոր հովիվ: 1957-ի օգոստոսին Հարբինի հայերը ժողով են գումարել, որին ներկա են եղել 22 հոգի: Նկատի ունենալով, որ տարիներ շարունակ Հարբինի հայ եկեղեցին չի ունեցել մնայուն կամ ժամանակավոր հովիվ և որ համայնքի մեծամասնությունն արտագաղթել է տարբեր երկրներ, ոմանք առաջարկել են Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շենքը վաճառել և գումարը կիսել միմյանց միջև: Այս առաջարկին շատերը հակառակվել են և վերջնական որոշման չեն հանգել: Չինական իշխանությունները, տեղեկանալով այս վեճի մասին, հայտարարել են, որ օրենքով չեն կարող շենքը վաճառել, քանի որ ժամանակին պետությունն անվճար է տրամադրել իրենց հողատարածքը: Հոնկոնգում և Ավստրալիայում Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանին հանդիպած նախկին մանջուրաբնակ հայերը նրան խնդրել են մեկնել Հարբին և զբաղվել հայ եկեղեցու խնդիրներով. Դերենիկ սրբազանը պատրաստ է եղել մեկնել, սակայն վիզայի դժվարությունների պատճառով հրաժարվել է այդ ծրագրից՝ մեծ հիասթափություն պատճառելով Չինաստանի հայերին[486]: 1959-ին հայկական եկեղեցու շենքն անցել է չինական կառավարության ձեռքը, որն այն դարձրել է տեքստիլ գործարան: 1966-ի օգոստոսին, ՉԺՀ-ի «մշակութային հեղափոխության» տարիներին, երբ Հարբինի բոլոր եկեղեցիները քանդվել են[487], նույն ճակատագրին են արժանացել նաև հայկական եկեղեցին և հարակից շինությունները: Հայկական եկեղեցու գաճաճները (սրբապատկերներ, զգեստներ), որ մի քանի տարի պահվել են խորանում, դուրս են բերել բակ և այրել[488]: Խրամատներ փորելու նպատակով քանդվել է նաև հայկական գերեզմանատունը:

[486] Տե՛ս **Դերենիկ եպիսկոպոս**, Հայեր Ծայրագոյն Արեւելքի մէջ, «Արեւ», Գահիրէ, 1, 8.08.1958:
[487] Տեղին է նշել, որ մինչև 1949-ը Հարբինում գործել է 15-ից ավելի ռուս ուղղափառ եկեղեցի, որոնց մի մասը կործանվել է Մաոյի կոմունիստական հեղափոխության և 1966-ի կուլտուրական հեղափոխության ժամանակ: Այժմ Հարբինում մնացել է մոտ տասն ռուսական եկեղեցի, որոնցից գործում է միայն մեկը:
[488] Տե՛ս **Meltickian Virginia**, Pictorial History…., "Hye Sharzhoom," Fresno, December, 2003: Հարբինի հայկական եկեղեցու մասին տե՛ս նաև Armenians in Australia and New

Հարբինի Սուրբ Սոֆյա ռուսական եկեղեցին (կառուցվել է 1926–1932 թթ.) այժմ թանգարան է, որտեղ լուսանկարներով ցուցադրվում են անցյալում քաղաքում գործած բազմամշակույթ ճարտարապետական հուշարձանները: Հայ եկեղեցու հիշատակը բացակայում է՝ ցնոր կարգադրություն…

Ինչպես վկայել է գրող Թորոս Թորանյանը, 2001 թ. Չինաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Ազատ Մարտիրոսյանը զբաղվել է Հարբինի հայոց աղոթավայրի՝ հայերին պատկանելության հարցի լուծման խնդրով: Տեղական չինական պատասխանատուներն առաջարկել են մեկ այլ վայր տրամադրել մատուռի կառուցման համար, քանի որ նախկին վայրում շենք է կառուցվել: Չինացի պատասխանատուները պատրաստակամություն են ցուցաբերել հայկական մատուռի կառուցման գործում՝ հայերի նախաձեռնություն հանդես բերելու դեպքում[489]: Հարբինում տակավին նման շինություն չի կառուցվել: Սակայն հիշարժան է եղել 2010 թ. Հարավային Չինաստանի Շենճեն քաղաքում 40 հայորդիների մասնակցությամբ կայացած պատմական կնունքը, որի մկրտության խորհուրդը կատարել է Խորեն աբեղա Հովհաննիսյանը:

Zealand, compiled by **Aramais Mirzaian**, Sydney, 1966, էջ 217-218: Սույն հատորում ընդգրկվել է Հարբինի հայկական եկեղեցու՝ պահպանված միակ լուսանկարը (նույն տեղում, էջ 217):

[489] Տե՛ս **Թորանեան Թ.**, Ուղեւորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, էջ 106:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՉԻՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1920–1950-ԱԿԱՆ ԹԹ.

20-րդ դարի առաջին քառորդին հայերի թիվը Չինաստանում մեծացել է հատկապես ռուսական հեղաշրջումից հետո, երբ բազմաթիվ հայեր, Արևելյան և Արևմտյան Հայաստանից, հիմնականում՝ ՀՅԴ կուսակցության անդամներ կամ համակիրներ, խուսափելով բոլշևիկների հաշվեհարդարից, ապաստանել են Չինաստանում՝ մեծ մասամբ այնտեղից ԱՄՆ մեկնելու վերջնական նպատակով, սակայն շատերը ստիպված մնացել են: Չինաստանում հայտնվելու պատճառներից մեկն էլ այն է եղել, որ Առաջին աշխարհամարտի ժամանակ Մոսկվայից Սիբիր գնալը համեմատաբար դյուրին է եղել, քան Եվրոպա, որտեղ պատերազմական վիճակ էր: Հայերն առանձին-առանձին կամ փոքր խմբերով հաստատվել են հիմնականում հյուսիսային Չինաստանի, Մանջուրիայի քաղաքներում, ինչի շնորհիվ թարմ արյուն են ստացել արդեն հիմնված հայկական համայնքները: Այսպիսով, Չինաստանը մտել է հայ Սփյուռքի աշխարհագրության մեջ[490], իսկ չինաբնակ հայերը՝ Չինաստանի գաղթականների պատմության մեջ, արտացոլվելով ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի պատմության, այլև գեղարվեստական գրականության մեջ[491]:

[490] «*…ռուսական հեղափոխությունից, քաղաքացիական պատերազմից և բոլշևիկներից խույս տված հայերը սկսեցին հաստատվել Հարբինում՝ չինական Մանջուրիա նահանգում և Շանհայում: Հարբինում կառուցվեց հայկական եկեղեցի, և հայ առևտրականներ և արհեստավորներ գործ սկսեցին Չինաստանում և հարավ-արևելյան Ասիայում: Հայերը սերտորեն աշխատում էին Չինաստանի եվրոպացիների հետ և երբեմն ամուսնություններ կնքում նրանց հետ: Երկրորդ աշխարհամարտը քայքայեց տարածաշրջանի մնացած հայկական կենտրոնները: Ճապոնացիները համակենտրոնացման ճամբարներում արգելափակեցին Չինաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի, Ֆիլիպինների, Մալայզիայի և Սինգապուրի եվրոպացիներին, ներառյալ հայերին: Ողջ մնացածները կանգնեցին ազգայնական կամ կոմունիստական կառավարությունների խտրականություն դնող քաղաքականության փաստի առաջ, որը հետևեց հարավային և հարավ-արևելյան Ասիայի ապազգաղութացմանը: Մեծ մասը գաղթեց Ավստրալիա կամ Հարավային Ամերիկա*» (**Թոռոսեան Զ.**, Հայ ժողովրդի համառոտ պատմութիւն, էջ 343):

[491] Այսպես, արդեն հիշված Չինաստանում բնակված ռուս արձակագրուհի Նինա Յոլդոռովան Հարբինի ռուս գաղթականներին նվիրված «Երեխաները» վեպում հիշել է

1920–1930-ական թթ. չինահայ համայնքների, մասնավորապես Հարբինի հայության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են թողել Չինաստանում որոշ ժամանակ բնակված Համազասպ Պասկյանը՝ ժամանակի մամուլում և 1963-ին Բոսթոնի «Հայրենիք» հանդեսում հրատարակած իր հուշերում[492], ինչպես նաև Չինաստանում ծնված մի քանի ամերիկաբնակ հայերի անգլերեն հուշագրությունները: Հիշենք դրանցից Ֆրեզնոյի բնակչուհի Վիրջինիա Մլտիկյանին, որը կազմել է 20-րդ դարի չինահայ համայնքի մասին մի ծավալուն հավաքածու՝ 1919–1945 թթ. չինահայ գաղթավայրի վերաբերյալ լուսանկարների և հոդվածների ալբոմ (2003-ին այն նվիրել է Ֆրեզնոյի համալսարանի հայագիտության ամբիոնին[493]), Երվանդ Մարգարյանին[494] և Է. Գ. Սերգոյանին[495]: Վերջին հեղինակների՝ առանձին գրքերով հրատա-

Հայկանուշ անունով մի աղքատ այրիի, որն ունեցել է տասնմեկ զավակ: Մանջուրիայի հայ համայնքը, նույնպես լինելով աղքատ, այդ կնոջը իր զավակների հետ ուղարկել է Շանհայ՝ հույս ունենալով, որ տեղի ավելի բարեկեցիկ վիճակում գտնվող հայերը կօգնեն նրան: Չստանալով ոչ մի օգնություն՝ Հայկանուշն իր ութ դուստրերին հանձնել է մի կաթոլիկ հաստատության, ինչն առաջացրել է Մանջուրիայի հայերի վրդովմունքը: Այնուհետև Հայկանուշը մեկնել է Հարբին՝ օգնություն գտնելու այնտեղի հայերից: Օգնություն չստանալով՝ նա որոշել է իր երեք որդիներին հանձնել ռուս կոմունիստներին, ովքեր կկարողանան հոգալ նրանց ապագայի հարցերը (տե՛ս **Фёдорова Н.**, Дети, стр. 52-53): Ֆյոդորովան նաև մանրամասն նկարագրել է Ծննդյան տոնի նշումը Հայկանուշի տանը (նույն տեղում, էջ 114-115): Իսկ արձակագիր Վահրամ Մավյանն իր «Հայու բեկորներ» վավերապատում գրքում հիշել է լոնդոնաբնակ մի հայի, որն «*Ապրած էր աշխարհի բոլոր անկյուններում մեջ, Մեքսիկոյեն մինչև Չինաստան*» (**Մավյան Վ.**, Հայու բեկորներ, Երևան, 1967, էջ 87):

[492] Տե՛ս **Պասկեան Հ.**, Հանդիպումներ եւ պատահարներ, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1963, թ. 1, էջ 75-78, թ. 2, էջ 38-47:

[493] Տե՛ս **Meltickian Virginia**, Pictorial History…., "Hye Sharzhoom," Fresno, December, 2003: Այդ նյութերը ներառում են նաև 1970-ականներին Ավստրալիայի ռուսպեղտ մի պարբերականում լույս տեսած Հարբինի հայերի մասին հոդվածի անգլերեն թարգմանությունը: Լուսանկարներ են նվիրել նաև նախկին չինաբնակ հայեր Նատալյա Ազատյան Լուկինը՝ Բրազիլիայից և Վարդանուշ Կասյանցը՝ Սան Ֆրանցիսկոյից: Մեր խնդրանքով այդ լուսանկարները տիկին Մլտիկյանն ուղարկել է մեզ:

[494] Տե՛ս Kavkaz: A Biography of **Yervand Markarian**, n. p., 1996.

[495] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place…. Այս գրքի մասին տե՛ս **Abeel Daphne**, Review: Tales of the 'Two-Percenters' Depict Armenian Community in China, "The Armenian Mirror-Spectator," March 30, 2012, ինչպես նաև մեր գրախոսականը (տե՛ս **Bakhchinyan Artsvi**, Sergoyan E. G., The Gathering Place: Stories from the Armenian

բակված ինքնակենսագրական հուշագրությունները մանրամասն տեղեկություններ են հաղորդում Հարբինի, Շանհայի և առհասարակ 1920–1940-ական թթ. չինաբնակ հայության վերաբերյալ:

Բանասեր Թեոդիկի և գրող Արշակունի Թեոդիկի որդին՝ չինաբնակ Վահագն Լապճինճյանը[496] Տյենծինից Նյու Յորքի «Հայաստանի կոչնակին» է ուղարկել «Չինական նամականի» ընդհանուր խորագրի ներքո տպագրված բղթակցություններ (Թեոդիկ-որդի առաքագրությամբ), որոնցում ներկայացրել է ոչ միայն հայերի կյանքը, այլև արժեքավոր ուղեգրություններ Չինաստանի զանազան վայրերից և չինական իրականությունից[497]:

Չինաբնակ հայերի վերաբերյալ տեղեկատվություն առկա է նաև Չինաստանում 1920-30-ականներին հրատարակված հարուստ ռուսալեզու մամուլում[498]: Մասնավորապես «Խարբինսկայա վրեմյա» («Հարբինյան ժամանակ») թերթը (հակակոմունիստական ուղղվածությամբ) պարբերաբար անդրադարձել է Հարբինում բնակվող այլ

Social Club in Old Shanghai, coffeetownpress, Seattle, 2012, pp. 216. $13.95 paperback, "Armenian Review," vol. 54, number 3-4 (Spring-Summer), 2014, էջ 90-92):

[496] Վահագն Լապճինճյանը ծնվել է Կ.Պոլսում, 1923-ին ավարտել է Նեոշատելի (Շվեյցարիա) Առևտրի բարձրագույն դպրոցը՝ առաջինը հանդիսանալով 29 աշակերտուհիների մեջ (տես՝ Թեոդիկ որդի առաջին կը հանդիսանայ, «Արեւ», Գահիրէ, 31.07.1923): Այնուհետև տեղափոխվել է Շանհայ, ապա՝ ԱՄՆ, որտեղ էլ մահացել է:

[497] Տե՛ս նրա հոդվածներից՝ Տիկին Չիանկ Քայ-Շէք, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եօրք, 6.11.1937, էջ 1086-1087: Փէյփինկ (ճամբու ճօքեր), նույն տեղում, 6.11.1937, էջ 1233-1234: «Արգիլեալ քաղաքը», նույն տեղում, 27.11.1937, էջ 1259-1261: Փառապանծ անցեալի բեկորներ, նույն տեղում, 11.12.1937, էջ 1304-1306: Դէպի Թէյթախօ, նույն տեղում, 29.01.1938, էջ 106-108, 19.02.1938, էջ 181-183: Նոր տարին չին հորիզոններու տակ, նույն տեղում, 12.03.1938, էջ 255-257: Փէքինկի Bishop Norris-ը, նույն տեղում, 9.04.1938, էջ 348-350: Մահացու ամբաստանագրերը, նույն տեղում, 29.01.1938, էջ 471-473: Հովիւներու տեսակցութիւնը, նույն տեղում, 18.06.1938, էջ 588-589: Դէպի Փէքինկ, նույն տեղում, 16.07.1938, էջ 681-682: Վերակենդանացեալ Խարպին, նույն տեղում, 6.08.1938, էջ 758-759: Փոխ վրէժ, նույն տեղում, 27.08.1938, էջ 825-826: Վերակենդանացեալ Չինաստան, նույն տեղում, 1.10.1938, էջ 945-947: Սենկլները, նույն տեղում, 5.11.1938, էջ 1074-1076, 26.1131938, էջ 1143-1144, 14.12.1938, էջ 1247-1248: Քրէիքո՛ւր յանցանքը, նույն տեղում, 10.06.1939, էջ 550-552, 17.06.1939, էջ 572-575:

[498] Տե՛ս, օրինակ, **Савский Г.**, Российские эмигранты всех национальностей сохраняют свой быт и религию в Манчжурской империи, «Рубеж», 4.10.1941, էջ 12-14 (**Хисамутдинов А. А.**, Российская эмиграция в Китае, стр. 21):

ազգությունների՝ հայերի, լեհերի, վրացիների ազգային կյանքին[499]: Յավոք, մեր ձեռքին չենք ունեցել այդ բերքից նմուշներ, սակայն չինաբնակ հայերի՝ հայ մամուլին ուղարկած թղթակցությունները և ուրիշ աղբյուրներ միանգամայն բավարար են գաղթօջախի կյանքը ներկայացնելու համար:

Ինքնին հասկանալի է, թե 1910-1920-ական թթ. ինչ ահռելի ֆիզիկական ու հոգեկան տանջանքների և զրկանքների գնով են այդ հայերը հասել Չինաստան և ինչ հոգեվիճակում, տարիների անորոշության մեջ են ապրել հայասակավ, մշակույթով, լեզվով և բարքով այնքան տարբեր այդ երկրում[500]: «*Ռուսաստանով Չինաստան ճանապարհորդելը նման էր Ժյուլ Վեռնի հին արկածի ճանապարհին հետևելուն*»,– գրել է Չինաստանում ծնված Է. Գ. Սերգոյանը[501]: Այսպես, Չինաստանում հաստատված Դարալագյազի (այժմ՝ Եղեգնաձոր) Ազադակ (թերևս՝ Ազատեկ) գյուղի բնակիչ Սկրտիչ Շարոյանը հայ մամուլին ուղարկել է իր արկածալից ճանապարհորդության պատմությունը, թե ինչպես է 1924-ին դաշնակցական լինելու մեղադրանքով ձերբակալվել, բանտարկվել, ապա ազատ արձակվելուց հետո մի փոքր խմբով և չինացի սպաների ուղեկցությամբ Մոսկվայից հասել Վլադիվոստոկ, ապա՝ Չինաստան: «*Երկու գիշեր առանց կանգ առնելու քալեցինք սարերով եւ անտառներով: ...Նոյեմբերի 17ի առաւօտեան ժամը 8ին հասանք չինական կայարան մը, այստեղից գնացքով Հարբին քարտը հասանք ես, կինս եւ չորս ընկերներս: Սիա մեր ճանապարհորդութիւնը Երեւանից մինչեւ Վլադիվոստոկ, Հարբին, մօտաւորապէս 13-000 վերստ*»[502]: Մեկ այլ հայ՝ Շանհայում հաստատված կարսեցի Սկրտիչ Հակոբյանը, Գյումրիով և Թիֆլիսով մեկնել է Չինաստան՝ այնտեղից Ամերիկա անցնելու մտադրությամբ, որտեղ «*արդէն կորսուած զգացի ինքզինքս: Չինումաչինը մանկութեանս օրերուն հեքիաթներու մէջ էի լսում, եւ այսօր ինքս չինարէն աւելի լաւ եմ խօսում, քան հայերէն*»[503]: Իր թղթակցությունը Հակոբյանն ավարտել է «Տե՛ր իմ, դու խղճա՛ հայ ազգիս» բանաստեղծությամբ: Իսկ Չինաստանում ծնված Երվանդ Մարգարյանը վկայել է, որ Հարբինում գտնվող ամուսնում միանալու նպատակով իր զոքանչը Մոսկվայից մինչև չինական սահմանն է հասել մեկ տարում՝ ճանապարհին ստիպված լինելով վաճառել ունեցած ամբողջ ոսկեղենը, այնուհետև ուրիշ փախստականների հետ ապօրինի ճանապարհով կտրել-անցել է խորհրդա-չինական սահմանը[504]: Ռուսաստանցի փախստականները հաճախ են Իրկուտսկում կաշառել տեղական իշխանություններին՝ կարողանալու համար անցնել Չինաստանի հյուսիսային մասը:

Եվ չնայած Չինաստան եկած հայերը եղել են խորհրդային կարգերի հակառակորդներ, կա վկայություն, որ 1923–1927 թվականներին Չինաստանում ԽՍՀՄ լիազոր ներկայացուցիչ Լևոն Կարախանը օգնել է այնտեղ հայտնված Մամիկոն Քարտաշյանցին՝ Մոսկվայից Չինաստան տեղափոխել մի խումբ հայերի, հույների և հրեաների[505]:

[499] Տե՛ս Նորակազմ Մանջուրյի հայերը, «Հայրենիք», Պոսթըն, 15.02.1933:

[500] Տե՛ս Չինաստանում հայտնված մի ռուս տարագիր հետևյալ տողերն է հղել Փարիզում հրատարակվող «Դնի» («Օրեր») ռուսերեն պարբերականին. «*...Ձեզ Եվրոպայում դժվար կլինի պատկերացնել, թե մինչև հիմա ինչ վիճակում ենք գտնվում մենք՝ ռուս տարագիրներս, Չինաստանում: Մենք այստեղ միայն վերջերս ենք իմացել, թե ինչ է պատահել ռուսների հետ, երբ նրանք Վրանգելի պարտությունից հետո հայտնվել են Կոստանդնուպոլսում: Միայն թե տարբերությունն այն է, որ եվրոպական ռուսական տարագրության աղեռների մեջ Կոստանդնուպոլիսը, Գալլիպոլը, Լեմնոսը և մյուսները կարող էին լինել և եղել են ընդամենը անցողիկ դրվագ օտարության մեջ դնգերումների: Կոստանդնուպոլսի կուտակումը կարող էր ցրվել, բաշխվել այլ, աշխատանքի և կյանքի համար ավելի հարմար երկրներ: Վերջիվերջո այն համեմատաբար շուտ էլ ցրվեց: Պատկերացրե՛ք Կոնստանդնուպոլիսն անհեռանկար, որտեղից ոչ մի տեղ չկա ցրվելու. Կոստանդնուպոլիս՝ երկար տարիներով*» (**Верасаков А. Н.**, Где наемный солдатский труд (письмо из Китая), «Дни», 11.08.1926): Ասվածը ճիշտ է նաև Չինաստանի հայ տարագիրների համար:

[501] **Sergoyan E. G.**, The Gathering Place, p. 22.

[502] **Շարոյեան Մ.**, Փախստականի մը պատմածները. Երեւանէն Խարպին (Չինաստան), «Յառաջ», Փարիզ, 16.01.1931:

[503] **Յակոբեան Մ.**, Կարսէն... Չինաստան (երիտասարդի մը ոդիսականը), նույն տեղում, 14.04.1933: Նմանատիպ մի վկայություն կատարել է ամերիկահայուհի Ջոան Սարվերը (Փուչիկյան). իր հորեղբայր Վարդան Փուչիկյանը և մորեղբայր Հովակիմ Մելքոնյանը Խարբերդից ոտքով քայլել են մինչև Սիբիր և Չինաստան, որտեղից էլ Յոկոհամայի (Ճապոնիա) ճանապարհով տեղափոխվել ԱՄՆ (տե՛ս http:// genforum.genealogy. com/armenia/messages/339.html այցելությունը կայքէջ՝ 4.11.2008):

[504] Տե՛ս Kavkaz: A Biography of Yervand Markarian, էջ 66-67:

[505] Տե՛ս նույն տեղում, էջ 61:

Չինաստանում ապաստանած հայերը երբեմն դիմել են հայ մամուլին՝ իրենց կորած ազգականներին գտնելու խնդրանքով: Այսպես, 1920 թ. Հարբին քաղաքից Երևանի «Հառաջ» օրաթերթին են դիմել Էմանուել Դիլաքյանը, Ռուբեն Քաբայանը և Աբամ Սարգսյանը՝ խնդրելով իրենց հետ կապ հաստատել Բոսթոնի «Հայրենիքի» կամ Հարբինի հայկական կոմիտեի միջոցով[506]: Նույն թվականին նմանապես Հարբինից խոստոջուրցի Ա. Զաքարյանը նամակ է ուղարկել Պոլսում լույս տեսնող «Առաւօտ» թերթին, որի միջոցով փնտրել է ծնողներին, եղբորն ու քրոջը և իր հասցեն նշել լատինատառ ռուսերեն՝ Harbin (China), Outchaskovaia Oulitz. No. 4 Pekarnia[507] (ինչպես տեսնում ենք՝ նա աշխատել է որպես հացթուխ): Նույն թերթը ծանուցել է, որ Քաթումից Պոլսի եկած երկու որբեր՝ Օրդուից, հայտնում են, որ մեկը Հարբինում ունի եղբայր, մյուսը՝ հորեղբայր (Խոսրով Չորպաճյան)[508]: Նույնպես «Առավոտին» են դիմել Չինաստանից Հայկ Մխիթարյանը[509], Օննիկ Նազարյանը[510], աղաբազարցի Ստեփան Գահնապետյանը Հարբինից միջոցով փնտրել է իր ծնողներին և եղբորը[511]: Ինչպես նշել է վերջինս պոլսահայ մամուլին ուղղված մի թղթակցության մեջ, «*Մաս մը Արեւմտահայեր կը փափաքին երկիր վերադառնալ, բայց երկրի իսկական կացութեան մասին որոշ տեղեկութիւններ կը պակսին*»[512]:

Չինաբնակ Համազասպ Պապկյանի դասակարգմամբ՝ Ծայրագույն Արևելքի հայությունը ունեցել է հետևյալ սոցիալական կազմը՝ ա) աքսորյալներ, բ) արկածախնդիրներ, գ) Արևելա-չինական և սիբիրյան երկաթուղու շինարարության ծառայողներ, դ) փախստականներ: «*Այսպիսի խայտաբղետ հասարակութենէ մը չօշափելի դրական գոր-*

[506] Տե՛ս Չինաստանի Խարբին քաղաքից խնդրում են, «Յառաջ», Փարիզ, 9.10.1920:
[507] Տե՛ս «Առաւօտ», Կ.Պոլիս, 5.07.1920:
[508] Տե՛ս Ազատուած որբեր, «Առաւօտ», Կ.Պոլիս, 14.03.1921:
[509] Տե՛ս Ուշադրութիւն, «Առաւօտ», Կ.Պոլիս, 18.04.1921:
[510] Տե՛ս Կը փնտռեմ, նույն տեղում:
[511] Տե՛ս Առաբազարցիներու ուշադրութեան, նույն տեղում:
[512] **Ս. Գ.**, Տեղեկութիւններ Չինաստանէն, նույն տեղում:

ծութիւնի սպասել՝ եթէ ոչ անկարելի, գէթ չափազանց դժուար էր»,– եզրակացրել է Պապկյանը[513]:

Ինչպես նշել է Երվանդ Մարգարյանը, նախամահմեդական ժամանակաշրջանի Չինաստանում տեղի բնակիչները բավական բարեկամաբար են տրամադրված եղել օտարերկրացիների հանդեպ՝ նպաստելով նրանց գործ հիմնել և լինել հնքնաբավ[514]: Հատկապես խորթականություններով և ամենաթողությամբ աչքի ընկնող օսմանյան իրականությանը սովոր արևմտահայ գաղթականներին զարմացրել են Չինաստանում առկա օրինապահությունը և օտարականների հանդեպ հարգանքը: Մամուլին ուղարկված մի թղթակցության մեջ պատմվել է, թե ինչպես մի անգամ Ճանճուռում չինացի գողերը կողոպտել և վիրավորել են հայ ամուսինների և նրանց բարեկամին, ինչից հետո տեղական իշխանությունները ցավակցություն են հայտնել տուժածներին և հավաստիացրել, որ ցանկացած խնդրով կարող են դիմել իրենց[515]: Այդուհանդերձ, տարագրությունը մնում է տարագրություն: «*Չինաստանն ընդունեց ռուս տարագրութեանը, սակայն, ինչպես նշել են նրա շատ ներկայացուցիչներ, այնտեղ ամեն ինչ իրենց համար խորթ էր, հարազատ չէր... «Տարագրութեան արհեստական երկինքը» չէր ջերմացնում, նրա տակ ցուրտ էր: Դրութիւնը խորացնում էին չկարգավորված կենցաղը, նյութական դժվարությունները, տանջալից էր կարոտախտը*»[516]: Այս տողերը միանգամայն ճշմարիտ են նաև չինաբնակ հայերի համար:

Չինահայության հոգևոր առաջնորդ Ասողիկ վարդապետ Ղազարյանը 1937-ին «Սիոն» պարբերականում հրատարակել է Չինաստանի հայերի հետ իր հանդիպումների մասին՝ տալով նաև վիճակագրական տվյալներ: Ըստ նրա՝ չինաբնակ հայերը բոլորը ճանաչում են

[513] **Պապկեան Հ.**, Հանդիպումներ եւ պատահարներ, «Հայրենիք» ամսագիր, Պոսթոն, 1963, թ. 1, էջ 78-79:
[514] Տե՛ս Kavkaz..., էջ 7:
[515] Տե՛ս **Հիսխեան Գ.**, Հետաքրքրական բարդատական մը չինական եւ տաճկական դատավարութեան, «Ազգ-պահակ», Պոսթոն, 18.03.1922:
[516] **Кривченко Л.**, "Лучшие песни мои не спеты, лучшие песни мои со мной...", «Иные берега», Москва, 1 (29) 2013, стр. 26.

մեկմեկու և հետաքրքրվում են միմյանցով: Նրանք ստանում են Ամերիկայում, Եվրոպայում և Եգիպտոսում լույս տեսնող հայերեն լրագրեր: Բոլորն էլ եղել են ընտանիքի տեր, ունեցել զավակներ, որոնք հաճախել են օտար դպրոցներ: Նրանք ռուսահայեր են, բացի Տյեն-Ծինի հայերից, որոնք տաճկահայեր են: Գրեթե ամենուրեք, քիչ բացառություններով, հայերը զբաղվում են հացեղենի ու քաղցրավենիքի պատրաստությամբ և վաճառքով: Նյութական վիճակը եղել է բարեկեցիկ, մեծամասնությունը ևվիրված է ազգային կյանքին[517]: Հիմնականում ամուսնացել են համայնքի անդամների հետ, թեև եղել են ամուսնության դեպքեր ռուսների և այլ ազգերի ներկայացուցիչների (սակայն ոչ չինացիների) հետ[518]: Սակայն Չինաստանում վաղուց հաստատված հայերի մի մասն աստիճանաբար օտարացել է՝ իրեն հեռու պահելով ազգային կյանքից: Ժամանակակցի վկայությամբ, «*Երբ իրենց դիմում կ՚ըլլայ հիւթական աջակցութեան համար, անոնք կուտան այնչափ, որ չքսուի, թէ չտուին: Այս դասակարգին կը պատկանին գրեթէ բոլոր հարուստները*»[519]:

Քարեբախտաբար, պահպանվել են Չինաստանում բնակվող հայերի մարդահամարի տվյալները[520]: 1910–1924 թթ. Եղիշե քահանա

[517] Տե՛ս Ծայրագոյն Արեւելքի հոգեւոր հովիւը, «Սիոն», Երուսաղէմ, 1937, թ. 5, մայիս, էջ 159-160:

[518] Այս առթիվ հիշենք հետևյալ հետաքրքրական փաստերը: Գրող Թորոս Թորանյանը հիշել է, թե ինչպես է Նյու Յորքում հանդիպել Հարբինում ծնված մի հայի: Վերջինիս գյումրեցի հայրը, ամուսնացած լինելով իր համաքաղաքացի աղջկա հետ, մեկնել է Մանջուրիա: Տարիներ անց կինը մահացել է, և ամուսինը վերադարձել է Գյումրի, վերամուսնացել մի տեղացի աղջկա հետ և նորից հաստատվել Հարբինում: Այդ ամուսնությունից էլ ծնվել է վերոհիշյալ նյույորքցին (տե՛ս **Թորանեան Թ.**, Ուղեւորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, էջ 38): 1923-ին Մանջուլիում բնակվող Հարությունն անունով մի հայ առևտրական, որ լավ բիզնես է ունեցել, միշտ դժգոհել է, որ հայ աղջիկներ չկան՝ ընտանիք կազմելու նպատակով: Պատահաբար իմանալով Իրկուտսկ հասած կարսեցի Մկրտիչ Օհանջանովի մասին, որը հինգ դուստր է ունեցել, նա Չինաստանից մեկնել է Սիբիր, գտել Օհանջանովին և խնդրել նրա դուստրերից մեկի ձեռքը: Այդպիսով, նա ամուսնացել է Հայկանուշ Օհանջանովայի հետ և տեղափոխվել Մանջուլի: Ունեցել են երկու դուստր՝ Տաիա և Արշալույս: Հարությունի մահից հետո կինը շարունակել է նրա գործը (տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, p. 109, 135):

[519] Չինաստան. հայ գաղութը, «Հայրենիք», Պոսթըն, 1.09.1928:

[520] Չինաստանի ռուսական գաղթականության պատմությամբ զբաղվող մասնագետները նշել են. «*Գոյություն են ունեցել և այլ էթնիկ խմբեր՝ բյուրք-թաթարներ, հայեր,*

Ռոստոմյանն արձանագրել է 415 ծնունդ, 233 պսակ և 104 մահ[521]: 1925-ին Հարբինի հայերի թիվը եղել է 287[522]: 1927 թ. տվյալով՝ հայերը Չինաստանում բնակվել են հետևյալ քաղաքներում՝ Տյեն-Ծին, Խանխայ, Հայլար, Պոգրանիչնի, Մանջուլի, Ցիցիհար, Ճանճուն, Մուկդեն, Դայրեն և այլն: Նրանց մեջ եղել են երկու բժիշկ, երկու փաստաբան, մի քանի ուսուցիչ և հաշվապահ, մեկ լրագրող, մեկ քահանա, մնացածը՝ մանր առևտրականներ և բանվորներ[523]: Իսկ ըստ 1930 թ. Բոսթոնի «Հայրենիք» ամսագրում տպագրված մի հաղորդագրության, որ ուղարկել է Եղիշե քահանան, Չինաստանի հայերի տարաբաշխումը և թվաքանակը ունեցել է հետևյալ պատկերը. Հարբին՝ 271, Մանջուրիա (Մանջուլի)՝ 80, Շանհայ՝ 54, Տյեն-Ծին՝ 47, Ճանճուն՝ 41, Հայլար՝ 17, Մուկդեն՝ 13, Ծինղտաո՝ 10, Ցիցիհար՝ 9, Դայրեն՝ 8, Ինգոու՝ 6, Անտա, Պոգրանիչնի և Իմենամբո՝ 3-ական, Բուխեզա և Խայնդաոխեծի՝ 2-ական: Ընդհանուր թիվը կազմել է 579 հոգի[524]: (Նկատի առնենք, որ Ճանճունը և Դայրենը այն ժամանակ եղել են Ճապոնիայի տիրապետության ներքո): 1932-ի վիճակագրական տվյալները գրեթե նույնն են. ընդհանուր թիվը՝ 516 (Հարբին՝ 271, Մանջուլի՝ 80, Շանհայ՝ 54, Տյեն-Ծին՝ 47, Ճանճուն՝ 41, Մուկդեն՝ 13, մնացածը գրված են 10-ից ավելի քաղաքներում[525]): 1933-ին վերաբերող մեկ այլ փաստաթուղթ, որ պահվում է Հայաստանի ազգային արխիվում[526], այլ թվեր է ներկայացնում. Հարբին՝ 560, Մանջուրիա՝ 160, Շանհայ՝ 90, Ճանճուն՝ 78, Տյեն-Ծին՝ 70, Մուկդեն՝ 45, Հոնկոնգ՝ 20, Ծինղտաո, Տենչեն, Ռայլին և այլ քաղաքներում՝ 200: 1937-ին չինահայության տարաբաշխումն ունեցել

յատվիացիներ, լիտվացիներ, էստոնացիներ, որոնց քանակը սահմանված չէ արխիվային տվյալների բացակայության պատճառով» (**Аурилене Е. Е., Нотапова И. В.**, Русские в Маньчжоу-Ди-Го: «Эмигрантское правительство». Хабаровск, 2004, էջ 19): Սակայն հայերի թվաքանակի մասին տվյալներ կան շնորհիվ հայ մամուլին պարբերաբար ուղարկվող վիճակագրության:

[521] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4714:

[522] Տե՛ս նույն տեղում, ֆ. 409, ց. 1, գ. 4712, թ. 12:

[523] Տե՛ս Չինաստան. հայ գաղութը, «Հայրենիք», Պոսթըն, 1.09.1928:

[524] Տե՛ս **Ոսատոմեանց Ե. թ.**, Հայերը Չինաստանի եւ Մանջուրիայի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 16.12.1930: Տե՛ս նաև՝ Հայերը Մանջուրիոյ մէջ, «Յառաջ», Փարիզ, 6.02.1931:

[525] Տե՛ս Մանջուրիոյ հայ գաղութը, «Հայրենիք», Պոսթըն, 7.05.1932:

[526] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4732:

է հետևյալ պատկերը. Հարբին՝ 350, Շանհայ՝ 206, Դայրեն՝ 34, Ճանճուն և Ծինդաո՝ 15-ական, Մուկդեն՝ 7[527]:

Ինչպես տեսնում ենք, թվերը տատանվում են, բնակչության աճը և նվազումը եղել է տարերային, այնպես որ սույն տվյալները հարյուր տոկոսանոց չեն կարող համարվել:

Վերևում նշվեց, որ ամենից մեծ թվով հայեր բնակվել են Հյուսիսարևելյան Չինաստանի կենտրոն հանդիսացող Հարբին քաղաքում (մեզանում, ցավոք, արմատացել է քաղաքի ռուսական հնչմամբ գրությունը՝ Խարբին): 1898-ին ձկնորսական գյուղերի վայրում[528] հիմնված բնակավայրը շատ արագ վերաճել է խոշոր քաղաքի. երկու տասնամյակում այստեղ վեր են խոյացել բյուզանդական և բարոկկո ոճի շենքեր, ձևավորվել են շքեղ պողոտաներ, ի հայտ են եկել արդյունաբերական, առևտրական և բանկային կենտրոններ: Մեկ միլիոն բնակչություն ունեցող Հարբինը ցարական Ռուսիայի գաղութային երազանքների քաղաքն էր, որի արագ աճի տեմպերը ծգել են ամենատարբեր ազգերի ներկայացուցիչների: Հարբինը 20-րդ դ. առաջին կեսին եղել է Հեռավոր Արևելքի ամենաբազմազգ քաղաքը (այստեղ բնակվել են 53 տարբեր ազգերի ներկայացուցիչներ[529]): Համաձայն մի հեղինակի՝ արդեն 1913 թ. ավելի քան 34 հազար ռուս, 24 հազար չինացի և մանջուր, 5000 հրեա և այլ ազգեր, մեծ մասամբ՝ ճապոնացիներ, հայեր և լեհեր Հարբինն անվանել են իրենց տունը. մոտ 69 հազար հոգի, չհաշրենից և ռուսերենից բացի խոսել են 45 լեզվով[530]:

«Արևելյան Սանկտ-Պետերբուրգ» անվանված Հարբինը համարվել է տարածաշրջանում ռուս տարագիրների (այսպես կոչված՝ սպիտակ ռուսների) ոչ պաշտոնական մայրաքաղաքը և ժամանակի մեծագույն ռուսական անկլավն արտասահմանում: 1918–1922 թթ. ռուսների թիվը Մոնղոլիայում և հյուսիսային Չինաստանում (ներկայիս

[527] Տե՛ս Սանջուրիոյ հայերը, «Հայրենիք», Պօսթըն, 13.08.1937:
[528] Մանջուրերեն Հարբին նշանակում է «ուռկաններ չորացնելու վայր»:
[529] **Sergoyan E. G.**, The Gathering Place, p. 27.
[530] **Jaivin Linda**, Holiday on Ice: Linda Jaivin on Harbin, China, http://www. themonthly. com.au/linda-jaivin-harbin-china-holiday-ice-linda-jaivin-3279:

ՉԺՀ-ի Սինձյանի ույղուրական ինքնավար տարածքում, Ալթայում և Տաչենի շրջանում) հասել է 200 հազարի[531]: 1920-ի սեպտեմբերի 8-ին Չինաստանի հանրապետությունը հայտարարել է, որ ինքն այլևս չի ճանաչում երկրի ռուսական հյուպատոսարանները և սեպտեմբերի 23-ին խզել է հարաբերությունները Ռուսաստանի հետ: Մեկ գիշերվա մեջ Չինաստանի ռուսներն իրենց գտել են պետություն չունեցողի կարգավիճակում: Շուտով չինացիներն իրենց հսկողության տակ են վերցրել Հարբինի ռուսական հաստատությունները (դատարաններ, ոստիկանություն, փոստ): Դա նշանակել է, որ Հարբինի բնակիչները պետք է որոշեին ոչ միայն իրենց քաղաքացիությունը, այլև քաղաքական ինքնությունը: Շատ հարբինցիներ, հայրենասիրությունից մղված, խորհրդային քաղաքացիություն են ընդունել: Ոմանք մնացել են անհայրենիք՝ կորցնելով իրենց աշխատանքը հեռավորարևելյան երկաթուղում: Երբ 1932-ի փետրվարին ճապոնացիները բռնազավթել են Մանջուրիան, գրավել Հարբինը և ստեղծել Մանջուքո անվանված խամաճիկային պետությունը, և երբ 1935-ին ռուսական երկաթուղին վաճառվել է ճապոնացիներին, սկսվել է ամբողջական վերահսկում տարագիրների վրա: Այդժամ շատ ռուսներ գնացքով վերադարձել են ԽՍՀՄ (որտեղ նրանց մեծ մասին գնդակահարություն էր սպասվում՝ որպես կապիտալիստական լրտեսների), իսկ ոմանք էլ (նաև հայերը) տեղափոխվել են Չինաստանի այլ բնակավայրեր, հատկապես՝ Շանհայ, որը եղել է ազատ նավահանգիստ. այնտեղ մտնելու համար չի պահանջվել մուտքի արտոնագիր, անձնագիր կամ աշխատանքի թույլտվություն[532]: 1945-ի օգոստոսին քաղաքը գրավել է խորհրդային բանակը, և 1946-ից Հարբինն ընկել է խորհրդային իշխանությունների վերահսկողության տակ:

[531] Սինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը Չինաստանում ռուսների թիվը եղել է 15 հազար (նրանց մեջ ներառվել են ռուսաստանցի այլ ազգություններ ևս): 1957-ին Չինաստանում բնակվել է 9000 ռուս, 1978-ին նրանց թիվը նվազել է՝ 600. հետագայում դարձյալ ավելացել է. 1990-ին Չինաստանում եղել է 13504 ռուսազգի բնակիչ (տե՛ս **Schwartz Henry G.**, The Minorities of Northern China: A Survey, 1984, էջ 294):
[532] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 46:

Ահա այս քաղաքում մի քանի տասնամյակ շարունակ գոյատևել է Չինաստանի և Հեռավոր Արևելքի ամենաստվար հայ համայնքը: Այդ իսկ պատճառով Չինաստանում և մասնավորապես՝ Հարբինում բնակված տարբեր ազգերի համայնքների մասին գրականության մեջ հիշվում են նաև հայերը[533]: Ազգերի, լեզուների և կրոնների այդ խառնարանում հայերն ապրել են կղզիացած, սահմանափակվել ռուսախոս գաղթականների հետ շփումներով: Հայերը Հարբին են հասել հիմնականում Իրկուտսկի, Սիբիրի և Մանջուրիի ճանապարհով, ծնունդով եղել են Արևելյան Հայաստանի տարբեր գավառներից (Արցախ, Սյունիք, Ջավախք), Վրաստանից, ներկայիս Աղրբեջանի տարածքից և Հյուսիսային Կովկասից: Լինելով ռուսախոս ու մշակութապես ռուսներին մոտիկ՝ ընկալվել են որպես ռուս գաղթականության մի ճյուղը[534], թեև պահպանել են իրենց աշխարհիկ և հոգևոր անկախությունը: 1932-ին Հարբինից գրված մի թղթակցությունում վկայված է, որ Հարբինում և Շանհայում մոտ 250 հայ ընտանիք է ապրում՝ գաղթած Կովկասի տարբեր մասերից, նաև քիչ թվով արևմտահայեր՝ Էրզրումից, Վանից և այլ վայրերից: «*Դժբախտաբար, գաղութիս անդամների կէսը վրացախօս հայեր են, մի մասը ռուսախօս եւ մօտ 40 տոկոսը*

[533] Տե՛ս, օրինակ, **Goldstein Jonathan**, The Jews of China: Historical and Comparative Perspectives, vol. 1, M.E. Sharpe, 1999, էջ 192. To the Harbin Station: The Liberal Alternative in Russian Manchuria, 1898-1914, 1999, էջ 115. **Lahusen Thomas**, Harbin and Manchuria: Place, Space, and Identity, Duke University Press, 2000, էջ 2, 84-85: 世界知識, 问题 13-24 世界知識出版社, 2000, 页 33: **Chernolutskaia E. N.**, Religious Communities in Harbin and Ethnic Identity of Russian Emigres, "The South Atlantic Quarterly," vol. 99, no 1, Winter 2000, էջ 79-96: **Усов В. Н.**, Последний император Китая: Пу И (1906-1967), Москва, 2003, էջ 190. **Ван Чжичэн**, История русской эмиграции в Шанхае, Москва, 2008, էջ 81-82. **Аурилене Е. Е.**, Российская диаспора в Китае: 1920-1950-е гг. Хабаровск, էջ 23. **Victoir Laura A., Zatsepine Victor**, Harbin to Hanoi: Colonial Built Environment in Asia, 1840 to 1940, Hong Kong, 2012, էջ 22-23: Հայերը հիշվում են նաև Թոմաս Լահուսենի և Օլգա Բակիչի նկարահանած «Հարբինյան արձագանքներ» 90 րոպեանոց ֆիլմերն և անգլերեն փաստագրական ֆիլմում:

[534] Է. Սերգոյանն իր հուշերում վկայել է, որ իր հայրը՝ Գևորգ Սարգսյանը, ընտանիքի հետ մեկտեղ հաճախ հիշվել է որպես «հարբինցի ռուս», քանի հայ, և որ շատերի պես նրանք էլ ստիպված են եղել ռուսացնել իրենց ազգանունը (Սերգեև)՝ ավելի լավ ներգրավվելու համար տարագիրների մեծ համայնքի մեջ (**Sergoyan E. G.**, The Gathering Place, p. 30):

միայն հայախօս: ....Եթէ չհաշուենք մի տասնեակ հարուստները, հայերի 90 %-ը չքաւորութեան մէջ են»[535]: Որոշ հայեր երբեմն փորձել են չինական քաղաքացիություն ստանալ, սակայն 1920-ին կառավարությունը հայտարարել է, որ նրանց քաղաքացիությունը չի ճանաչվի. անգամ Չինաստանում ծնված օտարականները համարվել են անհայրենիք: Իսկ 1922-ին Խորհրդային Միությունը լուծարել է բոլոր նրանց ռուսական քաղաքացիությունը, ովքեր երկրից հեռացել են առանց թույլտվության[536]:

1926-ի դրությամբ հարբինահայերի մեջ եղել են նաև մեծ թվով արհեստավորներ, չորս բժիշկ, մեկ իրավաբան, չորս ճարտարապետ և ուսանող երիտասարդներ[537]: 1928-ի վիճակագրությունը ավելի որոշակի թվեր է տալիս՝ 17 արհեստավոր, 7 տանտեր (հավանաբար՝ վարձու սենյակներ տվող), 6 ուսանող, 5 ծառայող տարբեր հիմնարկներում, 3 փոնապան և մեկ իրավագետ[538]: Հարբինի հայերը զբաղվել են հիմնականում մանր առևտրով, իսկ Չինաստանի արևելքում բնակվողները մեծ մասամբ եղել են երկաթուղու ընկերության ծառայողներ, երկրաչափներ, մեխանիկներ, ճարտարապետներ, շինարարներ, բժիշկներ, փաստաբաններ, իրավաբաններ և արհեստավորներ, իսկ հյուսիսում ապրողները՝ առևտրականներ և հրուշակագործներ[539]: Վերջին պարագան հատկանշական է, քանի որ հայերն անմիջապես օգտվել են չինացիներին բնորոշ քաղցրասիրությունից՝ հիմնելով բազմաթիվ հրուշակարաններ, հացաբուլկեղենի և քաղցրավենիքի խանութներ՝ պատրաստելով չինացիներին մեծ մասամբ անծանոթ ռուսական, կովկասյան և եվ-

[535] Մանչուրիոյ հայ գաղութը, «Հայրենիք», Պոսքոն, 21.09.1932:

[536] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 46:

[537] Տե՛ս **Որոս**, Հայերը Չինաստանի մէջ, «Հայրենիք», Պոսքոն, 25.04.1926:

[538] Տե՛ս **Գաղթենիք**, Խարպինի հայ գաղութը, նույն տեղում:

[539] Համեմատության համար նշենք, որ Մանջուրիայում ռուսներն ընդգրկված են եղել քաղաքացիական և ռազմական վարչարարության, տեխնիկական ղեկավարման մեջ և ներկայացրել են ամենից խոշոր առևտրական ֆիրմաները և ընկերությունները, հրեաները զբաղվել են առևտրով, արտածմամբ և ներմուծմամբ, թաթարները հիմնականում վաճառել են մորթեղենի, բրդե, կաշվե և մանուֆակտուրագալանտերային ապրանքներ (տե՛ս **Мелихов Г. В.**, Маньчжурия: далекая и близкая, Москва, 1991, էջ 76):

լոպական թխվածքեղեն[540]: Չինաբնակ հայերը՝ որպես հրուշակագործներ և սրճարանատերեր, սկսել են հիշատակվել ժամանակի գրավոր աղբյուրներում[541]:

Հայերը կարողացել են համեմատաբար արագ հարմարվել Հարբինին և կարճ ժամանակում դառնալ ինքնաբավ: Քաղաքում հաստատվելուց մի քանի տարի անց արդեն նրա գլխավոր Կիտայսկայա փողոցում և նավահանգստում բացվել են հայերին պատկանող խանութներ, գործարաններ, փռեր, ռեստորաններ: Գործել են Հ. Մխիթարյանցին պատկանող «Պալաս» հյուրանոցը, «Արմենիա» և «Ադայանց ընկերություն» կոշիկի գործարանները, Աթոյան եղբայրների կոշկագործարանը, Պ. Ա. Սուքոյանցի տնտեսական ապրանքների խանութը, Զ. Ավետիքովի՝ կովկասյան խոհանոցի «Սամսոն» ռեստորանը, Ասպետյանի հրուշակարանը և այլն[542]:

Արևելահայ գաղթականները մեծ մասամբ եղել են հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամներ և համակիրներ, այս կամ այն չափով հալածված բոլշևիկների կողմից և խիստ հակախորհրդային կողմնորոշմամբ[543]: Նրանք Չինաստանում էլ շարունակել են իրենց գործունեությունը, տարածել կուսակցության գաղափարները և սերունդներին դաստիարակել դաշնակցական ոգով, բաժանորդագրվել միայն դաշնակցական մամուլ, հատկապես Փարիզի «Յառաջը» և Բոսթոնի «Հայրենիքը»: Կա վկայություն, որ անգամ չինահայերի մեջ գործել է ցեղակրոն երիտասարդների ուխտ՝ 15-20

[540] Ի դեպ, հարբինյան բարբառով հաց ասում են «լիե-բա», որ ծագում է ռուսերեն хлеб բառից:

[541] «*Քաղցրեղեն գնելու նպատակով մենք գնացինք մի հայի պատկանող հաստատությունը՝ հրուշակարան և սրճարան*» (Manchuria: A Semi-monthly Publication of the Manchuria Daily News, vol. 4, Issues 1-20, 1939, p. 897):

[542] Տե՛ս **Минасян И.**, Китайско-армянские контакты..., http://bs-kavkaz. Org /2012/ 03/ china-armenia-contacts/:

[543] Եղիշե քահանա Ռոստոմյանը մի առիթով ասել է. «*Յայտնի է, որ ունինք հայաստան, բայց ոչ հայկական կեանքով: Մեր դժբախտ հայրենիքին մէջ կատարուած անմիտ եւ ազգավնաս գործերու պատճառով փիւտելու չենք: Մենք պարտաւոր ենք գաղթականներու մէջ իբրեւ մէկ սիրտ եւ մէկ հոգի պատրաստել մօտիկ ապագային հայաստանի մէջ հայ կեանքով մտնելու*» (Վարդանանց տօնը Խարբինի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 13.04.1930):

հոգուց բաղկացած[544]: Հատկանշական է, որ անգամ հեռավոր Չինաստանում նրանք երբեմն հետապնդվել են: Երբ 1924-ին Պեկինում կնքվել է խորհրդա-չինական համաձայնագիր, ըստ որի չինական հեռավորարևելյան երկաթուղին անցել է չին-խորհրդային վերահսկողության տակ, խորհրդային ներկայությունն ուժեղացել է Հարբինում: Բոլշևիկները սկսել են թափանցել Չինաստան, դաշնակցության անդամները զգուշացել են և թաքնվել. այս շրջանում 800-ից ավելի մարդ է ձերբակալվել, նրանց մեջ՝ երկու հայ[545]:

1925-ի դեկտեմբերի 13-ին Հարբինում ստեղծվել է ուկրաինացի և հայ ուսանողների միություն, որի գլխավոր նպատակն է եղել հետապնդել Ուկրաինայի և Հայաստանի պետական և ազգային կատարյալ անկախությունը, ուկրաինական լայն շրջանակներին ծանոթացնել հայ դատը և հայ ժողովրդին: Այդ առթիվ միությունը նպատակադրել է կազմակերպել դասախոսություններ՝ ուսումնասիրելով հատկապես Ուկրաինայի և Հայաստանի քաղաքական ու տնտեսական վիճակը[546]:

1926 թ. նոյեմբերի 21-ին Հարբինում բացվել է հեռավոր Արևելքի առաջին հայկական դպրոցը՝ դարձյալ հիմնականում Մղտեսյանի ջանքերով: Այդ օրը մեծ ցնծություն է եղել հարբինահայության համար, բոլորն ուրախությունից արտասվել են և սփոփվել, որ այդուհետ ուծացման և օտարացման դեմն առնելու են: Այդ առթիվ հայկական եկեղեցում մատուցվել է պատարագ: Նույն օրն իսկ արձանագրվել է 33 աշակերտ: Ուսուցիչը եղել է Եղիշե քահանա Ռոստոմյանը: Դպրոցում ավանդվել են զուտ հայկական առարկաներ՝ հայոց լեզու, պատմություն, աշխարհագրություն, Սուրբ Գրքի պատմություն: Դպրոցի բոլոր

[544] Տե՛ս **Փանիկեան Օ.**, Լուսաբանութիւն, Երևան, 2006, էջ 138: Այստեղ Փանիկյանը վկայակոչել է Չինաստան այցելած Քեմանչիատ Ռուբենին և վկայել, որ այդ ուխտը գործել է Պեկինում: Սա թյուրիմացություն է թվում, հավանաբար պետք է լինի՝ Հարբինում, քանի որ այդ ժամանակ Պեկինում հայեր չեն բնակվել:

[545] Տե՛ս **Պասկեան Հ.**, Հանդիպումներ եւ պատահարներ, «Հայրենիք» ամսագիր, Պօսթըն, 1963, թ. 2, էջ 45:

[546] Տե՛ս Գաղութահայ կեանք, «Նոր արշալոյս», Պուքրէշ, 25.02.1926: Հայ ուրբայնական միութիւն մը, «Հայրենիք», Պօսթըն, 21.03.1926:

ծախսերը հոգացել է համայնքի վարչությունը[547]: 1928-ին հայկական դպրոցի աշակերտները բավական հաջող են հանճնել ավարտական քննությունները՝ հարուցելով բոլորի զարմանքը, թե ինչպես են կարողացել այդքան առաջադիմել ութ ամսվա ընթացքում[548]:

1927-ին Չինաստան է այցելել մի հայորդի, որը Բոսթոնի «Հայրենիքին» հունվարի 12-ին Հարբինից ուղարկած մի թղթակցության մեջ նկարագրել է իր այցելությունները չինական քաղաքները և հանդիպումները տեղի հայերի հետ: Նա նախ եղել է ճապոնական տիրապետության տակ գտնվող Ճանճուն քաղաքում, որի հայերի թիվը հիշել է 46, բոլորը՝ վաճառականներ: Նրանք ունեցել են ազգային կոմիտե, 1924-ից գործող նախակրթարան-դպրոց, որի ուսուցիչն էր Սերովբե Քահաթրյանը (Սերաֆիմ Բագատուրով): Նախապես դպրոցն ունեցել է 10 աշակերտ, սակայն ուսուցչի հանդեպ սկսված անբարյացակամության պատճառով չորս աշակերտի տեղափոխել են ռուսական դպրոց: Մուկդենի հայերի թիվը եղել է 16՝ արհեստավորներ և պաշտոնյաներ: Ունեցել են ազգային ենթակոմիտե, որը կապ է պահել Հարբինի հայ համայնքի հանճնախմբի հետ: Նրա վարչության անդամներն են եղել ճարտարապետ Լ. Ղորդանյանը (նախագահ), նախկին սպա Լ. Պոպովյանը (քարտուղար և հաշվապահ) և Լևոն Սարգսյանը (գանձապահ): Այցելում եղել է նաև Տյենձին քաղաքում, նշել, որ նրա 50 հայ բնակիչները Թուրքիայի տարբեր քաղաքներից են, բոլորն էլ՝ բարեկեցիկ վիճակում: Խոսում են անգլերեն և թուրքերեն, ապրում են կոզիացած, ազգային-հասարակական կազմակերպություններ չունեն և չեն էլ ձգտում ազգային կյանքի: Այդուհանդերձ, մի քանի տարի առաջ հանգանակել են 2000 դոլար՝ հայ որբերի համար: Իսկ Դայրենում հանդիպել է երեք հայի, երկուսը՝ վաճառական[549]:

[547] Տե՛ս Չինաստան. հայկական դպրոցը, «Հայրենիք», Պոսթըն, 2.02.1927: Նույնը տե՛ս՝ Հայկական դպրոց Չինաստանի մէջ, «Պայքար», Ուօթըրթաուն, 13.03.1927:
[548] Տե՛ս Հարբինի հայ դպրոցը, «Հայրենիք», Պոսթըն, 13.07.1928:
[549] Տե՛ս **Այցելու**, Հայերը Չինաստանի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 13.03.1927: Նույնը տե՛ս՝ Գաղութահայ կեանք, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1927, թ. 6, էջ 156:

1927 թ. հունիսի 19-ին կայացել է Հարբինի հայ համայնքի տարեկան ընդհանուր ժողովը: Վարչության անդամներ են ընտրվել դարձյալ երեք «կետերը»՝ Մղտեսյանը, Տեր-Հովակիմյանը և Մելիք-Օհանջանյանը, նաև կաթնատնտես Վ. Նազարյանը և վաճառական Ա. Սարգսյանը: Զեկուցել են, որ հայկական դպրոցի երկսեռ աշակերտների թիվը 28 է[550]:

Հարբինի հայ համայնքում գործել են նաև Հայ հեղափոխական դաշնակցության մասնաճյուղ, «Ազգային ընկերությունը», «Երիտասարդաց գրական-գեղարվեստական միությունը», «Արծիվ» մարմնամարզական միությունը (հիմնված 1925-ին, մասնակցել են սեպտեմբերին կայացած օլիմպիական խաղերին և արժանացել մրցանակների), «Հայ երիտասարդների ակումբը» (մտադիր է եղել հրատարակել «Միություն» հայերեն-ռուսերեն պարբերականը), «Հայ տիկնանց միությունը» (ղեկավար՝ բժշկուհի **Աննա Յագուպյան**, քարտուղար՝ **Շուշանիկ Պողոսյան**. կազմակերպել է հայոց լեզվի դասընթացներ), «Հայ թատերասիրաց ընկերությունը» (ներկայացրել է հայերեն և ռուսերեն բեմադրություններ) և «Հայ երաժիշտների խումբը» (ելույթներ է ունեցել համայնքի միջոցառումների ժամանակ): Հարբինահայ միությունները նշել են ազգային-եկեղեցական տոները, աղոթատանը կամ համայնքային կենտրոնում կազմակերպել միջոցառումներ, որոնք ուղեկցվել են ազգային երգ ու արտասանությամբ: Դաշնակցական և այդ կուսակցությանը համակիր չինաբնակ հայերը մշտապես նշել են Հայաստանի անկախության օրը՝ մայիսի 28-ը: Այսպես, 1928-ին այդ տոնակատարությանը մասնակցել են երգչախումբ և նվագախումբ, ներկայացվել են «կենդանի պատկերներ»՝ «Զեյթունցի հերոսներ», «Աղոթք որբերի համար», «Մայր Հայաստանի՝ մինչև 1918», «Մայր Հայաստանը՝ 1918, Մայիս – 1920, Դեկտեմբեր»[551]: 1933-ի մայիսի 28-ի տոնին ներկա են եղել նաև Հարբինի վրացի, ռուս և մանջուրիացի համայնքների ներկայացուցիչները: Ելույթներ են ունեցել հայոց Ազ-

[550] Տե՛ս Խարբինի հայ գաղութը, «Հայրենիք», Պոսթըն, 31.07.1927:
[551] Տե՛ս Անկախութեան տասնամեակը, «Հայրենիք», Պոսթըն, 11.07.1928:

գային վարչության նախագահ Մղտեսյանը, Հարբինի վրացական համայնքի[552] նախագահ բժիշկ Ն. Ճիշկարիանին, ռուս տարագիրների գործադիր մարմնի ներկայացուցիչ Ե. Վ. Լուտչևը: Պաշտոնական ելույթներից հետո Հարբինի երիտասարդական միությունը հանդես է եկել գրական-գեղարվեստական փոքր ծրագրով: Համազասպ Պասկյանի դուստրը՝ Կարինեն, արտասանել է Ավետիք Իսահակյանի «Էյ ջան, հայրենիքը», երգերի կատարումներով հանդես են եկել օրիորդ **Մ. Թեյմուրազյանը**, **Ս. Ռոստոմյանը**, որը «Երազ» երգը կատարել է տիկին **Մնացականյանի** (դաշնամուր) և **Ա. Մղտեսյանի** (ջութակ) նվագակցությամբ: Երեկոյին ներկաների թիվը 150-ից ավելի էր[553]: 1928-ին Հարբինում Ազգային կոմիտեի, Ծնողների կոմիտեի և հայկական դպրոցի ուսուցիչների ջանքերով Վարդանանց տոնը նշվել է մեծ հանդիսավորությամբ՝ «Արծիվ» նվագախմբի մասնակցությամբ, ցուցադրվել են նաև «կենդանի պատկերներ»՝ «Հայկական դյուցազնամարտը», «Հայ հերոսներ», «Հայդուկների խումբը», «Վարդանի դիակի որոնումը» և «Վերածնունդ»[554]: Վարդանանց տոնը Հարբինում նշվել է նաև 1930-ին, ելույթ է ունեցել երգչախումբը՝ **Հրաչյա Ռոստոմյանի** (քահանա Ռոստոմյանի որդու) ղեկավարությամբ[555]:

1929-ի հոկտեմբերի 27-ին Հարբինի հայերը տեղի համայնքի անդամների և օտարազգիների մասնակցությամբ տոնել են Դուրյան պատրիարքի հոբելյանը, մատուցվել է պատարագ, ելույթ է ունեցել 22 հոգիանոց քառաձայն երգչախումբը[556]:

1930-ին Հարբինի հայ համայնքի ընդհանուր ժողովը հաստատել է վարչության նախկին կազմը, իսկ վերստուգիչ հանձնաժողովի անդամներ են ընտրվել **Սերովբե Քահաթուրյանը**, ուսանողներ Հրաչյա Ռոստոմյանը և **Ս. Մղտեսյանը**[557]: Այս ժամանակաշրջանում Հարբինի հայերը, բոլոր չինաբնակների պես, մատնվել են որոշ տնտեսական տագնապների՝ տեղական դրամը ոսկու և ճապոնական իենի հանդեպ ցածր լինելու պատճառով: Չնայած այդ հանգամանքին՝ հայկական դպրոցը հինգերորդ տարին շարունակել է իր գործունեությունը, երկսեռ աշակերտների թիվն աճել է, հայկական դպրոցում սովորելու ցանկություն են հայտնել նաև մի շարք այլազգիներ[558]:

1931 թ. նոյեմբերին Հարբինում մահացել է ականավոր հայ թարգմանիչ և իրանական դիվանագիտության հայտնի դեմք **Հովհաննես Խան-Մասեհյանը**: Նա 1930-ին նշանակվել էր Իրանի դեսպան Ճապոնիայում, սակայն ծանր հիվանդության պատճառով հրաժարական է ներկայացրել: Տոկիոյից Թեհրան ճանապարհին նա վախճանվել է Չինաստանում: Նրան Հարբինում սխալմամբ հուղարկավորել են իսլամական ծեսով, ինչն առաջացրել է տեղի հայերի վրդովմունքը: Հարբինի հայոց Ազգային վարչությունը պահանջել է Խան-Մասեհյանի դագաղը: Համապատասխան փաստաթղթեր ներկայացնելուց հետո վարչության կազմը ստացել է այն, Չինաստան ժամանած իրանահպատակ հայերի և տեղի թաթար համայնքի ներկայությամբ դագաղը բերվել է հայկական եկեղեցի, կատարվել է հոգեհանգստի արարողություն և հոգեճաշ է տրվել քաղաքի հայկական ճաշարաններից մեկում[559]:

Ինչպես նշվեց, հարբինահայերը հրատարակել են «Երկիր» երկշաբաթաթերթը և ռուսալեզու «Վեստնիկ Արմենիի» լրագիրը, որոնք կարճատև գոյություն են ունեցել: Սրանցից բացի Համազասպ Պասկյանը և Մելիքյանը լույս են ընծայել «Ավետիս» տարեգիրքը՝ երգիծանա-

[552] Մանջուրիայի վրացական ազգային միությունը համարվել է Հարբինի հնագույն կազմակերպություններից մեկը: Այն ունեցել է սեփական կենտրոնը, 1905-ին հիմնված Վրացական գրադարան, ազգային դպրոց: 1941 թ. Հարբինում բնակվել է մոտ 400 վրացի (տե՛ս **Хисамутдинов А. А.,** Российская эмиграция в Китае, էջ 63): Վրացական համայնքներ են եղել նաև Շանհայում և Տյենձինում:

[553] Տե՛ս **Կասպ**, Մայիս 28ը Խարպինի մէջ, «Յառաջ», Փարիզ, 24.06.1933:

[554] Տե՛ս Վարդանանց տօնը Հարբինի մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 22.04.1928:

[555] Տե՛ս Խարբինի մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 13.04.1930:

[556] Տե՛ս Խարպինի հայ գաղութը տօնած է Դուրեան պատրիարքի յոբելեանը, «Հայրենիք», Պօսթըն, 20.12.1929:

[557] Տե՛ս Խարբինի հայ գաղութի կեանքը, նույն տեղում, 17.05.1930:

[558] Տե՛ս **Ռոստոմեանց Ե. ք.**, Հայերը Չինաստանի եւ Մանջուրիայի մէջ, նույն տեղում, 16.12.1930:

[559] **Պասկեան Հ.**, Հանդիպումներ եւ պատահարներ, «Հայրենիք» ամսագիր, Պօսթըն, 1963, թ. 2, էջ 46-47: Տե՛ս նաև **Կասպ**, Յովհ. Խան Մասեհեանի թաղումը, «Յառաջ», Փարիզ, 18.02.1932: Նույնի, Մասեհեան Խանի մարմինը Թեհրան փոխադրուեց, նույն տեղում, Փարիզ, 18.03.1932:

կարներով[560]: Յավոք, մեզ չի հաջողվել տեսնել այդ պարբերականներից գոնե մեկ նմուշ:

Հարբինահայերը զերծ չեն մնացել մշակութային կյանքից: 1919–1922 թթ. Հարբինի հայ և ռուս թատերասերների (հիմնականում՝ երիտասարդների) ուժերով տրվել են մի շարք ներկայացումներ[561], որոնք հիմնականում խաղացվել են Առևտրական ժողովարանի դահլիճում կամ «Չուրին» ակումբում: 1921-ի փետրվարի 2-ին Հարբինի Առևտրական ժողովարանի դահլիճում ներկայացվել է Գաբրիել Սունդուկյանի «Պեպո», որը բեմադրել է 1918-ին Չինաստանում հաստատված Թիֆլիսի հայ և վրացական թատերախմբերի վաստակավոր դերասանուհի **Վարվառե Մելիքյանը** (1868–1928): Նա էլ հանդես է եկել Շուշանի դերում: Մյուս դերերը կատարել են **Բուդաղյան** ամուսինները (Մելիքյանի դուստրը և փեսան), **Վ. Նազարյանը, Օ. Տեր-Հակոբյանը** և **Ս. Հովհաննիսյանը**[562]:

Ավելի ուշ, Հարբինի Հայ երիտասարդական խմբակը 1940-ականների վերջին, 1950-ականների սկզբին ներկայացրել է մի շարք սիրողական բեմադրություններ՝ «Անուշ» օպերան, «Անահիտ» դրաման, «Արշին մալ ալան» երաժշտախաղը և այլն: Դրանք բեմադրել է **Կարինե Պասկյան-Պլավկովան**, որը եղել է նաև գլխավոր դերակատարուհին[563]: Հատկանշական է եղել 1944-ին Հայ երիտասարդների խմբակի կողմից Վարդանանց տոնի առթիվ ներկայացված «Ավարայրի դաշտում» բեմադրությունը: Ներկայացումից հետո հայկական երգով, ասմունքով և դաշնամուրի նվագով հանդես են եկել **Եվա Սուրինովան, Է. Օվանեսովան, Եկատերինա (Կատարինե) Քանանյանը** և **Ն. Ազատյանը**: Տոնի նշանակության մասին խոսք է ասել հայկական միության փոխնախագահ **Գ. Գ. Ավետիսովը**[564]:

Հարբինահայերը, նաև օտարազգիները, հաճախ առիթ են ունեցել լսել **Արծվիկ Ռոստոմյանի** (1909–1927) երգեցողությունը զանազան հանդիսությունների ժամանակ: Այս վաղամեռիկ երգչուհին եղել է միակ հայ աղջիկը Չինաստանում, որ կարողացել է սահուն հայերեն խոսել, գրել և կարդալ, ինչն արտառոց է եղել Հեռավոր Արևելքում մեծացած մեկի համար[565]:

1930 թ. ապրիլի 6-ին Հարբինում նշվել է Ավետիս Ահարոնյանի գրական գործունեության քառասնամյակը: Բժիշկ Մղտեսյանը ռուսերեն լեզվով բացման խոսք է ասել, որից հետո հնչել է «Մեր հայրենիքը»՝ Հրաչյա Ռոստոմյանի ղեկավարած 20 հոգիանոց երգչախմբի կատարմամբ: Ուսանող Ս. Մղտեսյանը նա ռուսերեն բանախոսել է Ահարոնյանի մասին, ելույթ է ունեցել Եղիշե քահանա Ռոստոմյանը, կարդացվել են հայերեն և ռուսերեն հատվածներ Ահարոնյանի գործերից: Երեկոն ավարտվել է երգերով, որոնցից ուշագրավ է եղել **Արտաշես Հովհաննեսի** կատարած «Երազը»[566]: Հարբինի հայության անունից մի շնորհավորագիր է գեղագրվել և ուղարկվել Ահարոնյանին: այն ստորագրել են Մղտեսյանը և Տեր-Հովհաննիսյանը: Այսօր այդ շնորհավորագիրը պահվում է Երևանի Հայ հեղափոխական դաշնակցության թանգարան-հիմնադրամում (վավերագիր թիվ 468):

1934-ին Հարբինի հայ համայնքի տարեկան ընդհանուր ժողովն անցել է, ժամանակակցի վկայությամբ, «*ոչ բոլորովին խաղաղ*», սակայն գրեթե միաձայն ընտրվել է վարչություն հետևյալ կազմով՝ **Միքայել Տեր-Հովակիմյան** (նախագահ), **Սարգիս Գրձելյան** (փոխնախագահ), **Զաքար Ավետիքյան** (քարտուղար), **Հովհաննես Կասկալ-**

[560] Տե՛ս **Պասկեան Հ.**, Հանդիպումներ եւ պատահարներ, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1963, թ. 2, էջ 40:
[561] Տե՛ս **Lahusen Thomas**, Harbin and Manchuria, էջ 85:
[562] Տե՛ս **Հովակիմյան Ք.**, Պեպո Չինաստանում, «Հայք», Երևան, 8.05.1996:
[563] Տե՛ս **Meltickian Virginia**, Pictorial History..., "Hye Sharzhoom," Fresno, December, 2003:

[564] Տե՛ս Вартананц Тон. На армянском национальном вечере, "Новое время", 26.02.1944, հղված է ըստ **Минасян И.**, Китайско-армянские контакты..., http://bs-kavkaz.org /2012/03/china-armenia-contacts/
[565] Տե՛ս Խոստմնալից օրիորդի մը մահը, «Հայրենիք», Պոսթըն, 12.11.1927:
[566] Տե՛ս **Գորբենցի**, Համեստ գաղութի մը կեանքը, «Յառաջ», Փարիզ, 6.05.1930:

յան (գանձապահ), Հրաչյա Ռոստոմյան (անդամ)[567]: 1941 թ. տվյալով Չինաստանի Հայոց Ազգային Միության վարչության նախագահն է եղել Կասկալյանը, փոխնախագահը՝ **Անանուվը**, քարտուղարը՝ **Սողոմոնյանցը**:

Հարբինից հետո երկրորդ հայաշատ քաղաքը եղել է Շանհայը: «Ասիայի դեղին Բաբելոն» կամ «Արևելյան Փարիզ» անվանված Շանհայը 1937-ին համարվել է աշխարհի ամենից գրավիչ վայրը[568]: 1926-ին Շանհայում բնակվել են 25 հազար օտարերկրացիներ, որոնցից 15 հազարը՝ ռուս սպիտակգվարդիականներ[569]: Մինչև Երկրորդ աշխարհամարտն այստեղ բնակվել է շուրջ 600 հայ. ԱՄՆ արխիվներում պահվում են Շանհայի քաղաքային ոստիկանության փաստաթղթերը, որոնցում տեղեկատվություն կա Շանհայի հայերի մեծամասնության վերաբերյալ՝ լուսանկարներով հանդերձ[570]: 1920-ականներին Շանհայի հայերի թիվը մեծացել է ի հաշիվ Մանջուրիայից գաղթածների: Նրանք փոքր խմբերով հաստատվել են այդ նավահանգստային քաղաքում՝ խուսափելով Չինաստանի հյուսիսի կլիմայի խստությունից, 1929-ին չին-խորհրդային հակամարտությունից, Ճապոնիայի կողմից Մանջուրիայի բռնազավթումից առաջացած դժվարություններից և գնահատելով Շանհայի ավելի բարենպաստ տնտեսական դրությունը, քաղաքի մի տարածքում 1842-1943 թթ. գոյատևած և միջազգային կառավարման տակ գտնվող Շանհայի Միջազգային սեթլմենթի ու ֆրանսիական կոնֆեսիայի պայմաններում ապրող բնակիչների իրավական մեծ պաշտպանվածությունը: Հայերը մեծ մասամբ եղել են կովկասցիներ, ժամանակակցի բնորոշմամբ՝ «*արթուն եւ չէն վաճառականներ, պատուական ազգայիններ*»[571]: Շանհայում գործել է **Ե. Գ. Սարկիզովի** «Ալա-Վերդի» ռեստորանը, **Վ. Խ. Աբոյանցի**՝ մանրածախ և մեծածախ կոշիկի առևտրի ֆիրման[572]: Ժամանակակցի վկայությամբ՝ Շանհայի խանութների և կրպակների մեծ մասն ունեցել է ռուսերեն ցուցանակներ՝ հունարենի, հայերենի, կորեերենի և ասորերենի հետ մեկտեղ[573]:

[567] Տե՛ս Խարպինի մէջ համայնական վարչութիւնը, «Յուսաբեր», Գահիրէ, 29.08.1934:
[568] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 43:
[569] Տե՛ս **Далин С. А.**, Китайские мемуары, Москва, 1982, էջ 193:
[570] Տեղեկությունը՝ Շերմազանյանի բոռ, ամերիկացի Ջոզեֆ Քենդալի (7.06.2013 թվակիր էլեկտրոնային նամակ):
[571] Ծայրագոյն Արեւելքի հոգեւոր հովիւը, «Սիոն», Երուսաղէմ, 1937, թ. 5, Մայիս, էջ 160:

Մի քանի տարի անց քաղաքում հիմնվել են հայկական միություններ: 1936-ի ապրիլի 25-ին հիմնվել է Շանհայի Հայ երիտասարդական միությունը՝ որպես տեղի Հայ օգնության միության մասնաճյուղ: Այն հետապնդել է գերազանցապես կրթական և մշակութային նպատակ, օժանդակել է Շանհայի կարիքավոր հայերին: Կազմակերպել են հայերենի երեկոյան դասընթացներ՝ փոքրերի և մեծերի համար, նշել ազգային տոները: Պատրաստվել են հիմնել գրադարան և մշտական գործող դպրոց[574]: Դրամական օժանդակություն ստացել են տարբեր աղբյուրներից, օրինակ՝ Շանհայի Միջազգային ակումբից (225 դոլար՝ 1936-ին): Հետագայում, մինչև 1949-ը, Շանհայի Հայ երիտասարդական միությունն օգնել է Չինաստանի հայ բնակիչներին արտագաղթել ԱՄՆ: 1937-ին այս միությունը տեղի ազգայիններից Մելիք Նուպարյանի միջոցով փորձել է քաղաքում բացել հայկական աղոթատուն[575]: 1938-ին Շանհայի Հայ երիտասարդական միությունը ընտրել է նոր հանձնախումբ հետևյալ կազմով՝ **Վարդան Չաքալյան** (պատվո նախագահ), **Ֆրանց Չաքալյան** (պատվո քարտուղար), **Պողոս Չաքալյան** (պատվո գանձապահ), **Անայա Կարապետյան, Վարյա Պետրոսյան** (հանձնախմբի անդամներ): Միությունը 1938-ին ունեցել է 30 անդամ: Գործել է սիրողական երգչախումբ, որը ղեկավարել է **Լևոն Հովհաննիսյանը**: Երգչախումբը կատարել է հատվածներ Տիգրանյանի «Անուշ» օպերայից, Կոմիտասի «Ո՞վ մեծասքանչ», Անտոն Մայիլյանի «Լորիկ» և այլ երգեր: 1938-ի փետրվարի 24-ին Վարդանանց տոնի առիթով ներկայացրել են «Վարդանի մահը» ներկայացումը (հե-

[572] Տե՛ս **Минасян И.**, Китайско-армянские контакты...., http://bs-kavkaz. org/2012/03/china-armenia-contacts/
[573] Տե՛ս **Miller G. E.**, Shanghai, the Paradise of Adventurers, New York, 1937, pp. 22-23.
[574] Տե՛ս Հեռաւոր Չինաստանի մէջ, «Արագ», Պուքրէշ, 4.10.1936:
[575] Տե՛ս Լուրեր Ծայրագոյն Արեւելքի հայութենէն, «Սիոն», Երուսաղէմ, 1937, թ. 9, էջ 291:

տագայում կրկնել են): Թեև երիտասարդները բավականաչափ լավ չեն տիրապետել հայոց լեզվին, սակայն մեծ խանդավառությամբ են ընդիրվել իրենց գործին: Նույն թ. հունիսի 24-ին Հայ երիտասարդական միությունը նշել է վիպասան Րաֆֆու ծննդյան հարյուրամյակը[576]:

1938-ին Շանհայի ռուսական եկեղեցում հոգեհանգիստ է մատուցվել կաթողիկոս Խորեն Ա-ի մահվան առթիվ, ռուս եպիսկոպոսի և քահանաների կողմից: Ընտրվել է համայնքի յոթ հոգուց կազմված վարչական մարմին՝ Հայկ Ասատուրյանի ղեկավարությամբ: Այս տարում դարձյալ աղոթատուն կառուցելու նպատակով հանգանակվել է 1500 դոլար (500 դոլարը ընդիրաբերել է Ասատուրյանը). աղոթատան վեմ-քարով բացումը կատարել է Ասողիկ վարդապետը: Վերջինս հովվապետական այց է կատարել Մանջուրիա (որտեղ 57 հայկական պսակ և մկրտություն է կատարել ռուսական եկեղեցում) և Հայլար (35 հայկական պսակ և մկրտություն է կատարել մի մասնավոր տանը): Նախատեսել է այցելել նաև Ճանճոու և Դայրեն, իսկ աշնանը՝ Ճապոնիա[577]:

Երբ 1937-ին Շանհայում արյունալի բախումներ են տեղի ունեցել չինական և ճապոնական զորքերի միջև՝ 900 զոհերով և բազմաթիվ վիրավորներով, հայ համայնքի անդամները, բարեբախտաբար, անվնաս են մնացել: Տեղացի հայերից մեկը մամուլին ուղարկած բղթակցության մեջ գրել է. «*Անշուշտ օրը օրին հետեւեցաք մեր քաղաքին մէջ պատահած զարհուրելի դէպքերուն եւ բերես մտածեցիք նաեւ այս հեռաւոր ափերուն վրայ ապաստանած հայ բեկորներուն մասին: Բարեբախտաբար բոլորս ալ անվտանգ ազատեցանք: Շաբաթներով ականատես եղանք պատերազմի բոլոր սոսկումներուն օդին մէջ, ծովուն եւ ցամաքին վրայ: Հայերս համախմբուած ենք ֆրանս. բաղին մէջ: Հոս կան եւրոպացի շատ ազգեր, որոնք շատ լաւ պաշտպանեցին իրենց բաղերը*»[578]:

[576] Տե՛ս **Tchakalian F.**, Shanghai Youth Organize Local Armenian Community, "Hairenik Weekly," Boston, 30.12.1938.
[577] Տե՛ս **Ա. Սրսճ**, Հայ կեանք (ամսական տեսութիւն), «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1938, նոյեմբեր, էջ 167:
[578] Հայերը Շանկհայի մէջ, «Արեւելք», Ստանպուլ, 26.02.1938:

1939-ին չինահայության հոգևոր առաջնորդ Ասողիկ վարդապետի առաջարկով և **Հայկ Ասատուրյանի, Վահան Չաքալյանի** և այլոց առատաձեռն օժանդակությամբ, Մոնսինյոր Մարեսկա (ներկայիս Վատիկան Լու) փողոցի թիվ 269 հասցեում գտնվող երկհարկանի քարաշեն մի տանը պաշտոնապես բացվել է Շանհայի Հայոց ազգային տունը՝ (կամ ակումբը): Նրա նպատակն է եղել նյութական օգնություն տրամադրել ազգակիցներին, դառնալ մշակութային կենտրոն: Առաջին հարկում եղել է համայնքի հավաքասրահը, դահլիճը և բեմը, որտեղ ներկայացվել են ազգային թատերախաղեր և երաժշտախաղեր, կազմակերպվել պարահանդեսներ, այստեղ գործել է շուրջօրյա սրճարան՝ չինացի աշխատակազմով: Երկրորդ հարկը զբաղեցրել է բարեգործական կազմակերպությունը: Կենտրոնում կազմակերպել են հայերեն երեկոյան դասընթացներ երեխաների համար, տարբեր թեմաներով դասախոսություններ՝ հայերեն և ռուսերեն: Հայոց ազգային տան ամսական ծախսը եղել է 300 յուան (ներառյալ ուսուցչի ռոճիկը), որը մասամբ գոյացել է անդամավճարներից, իսկ կեսը տրամադրել է Ասատուրյանը: Ծրագրել են սեփական եկեղեցի ունենալ, նրա համար հող գնելու նպատակով հանգանակվել է 12 հազար յուան (միայն 10,000-ը տրամադրել է դարձյալ Հայկ Ասատուրյանը)[579]: Շանհայի հայկական ակումբի նախագահը 1940-ին եղել է Հայկ Ասատուրյանը, փոխնախագահը՝ **Միքայել Թոդոյանը**, առենապետները՝ **Վարդան Չաքալյանը** և **Մ. Նուպարյանը**, պատվավոր գանձապահը՝ **Երվանդ (Էդուարդ) Համամճյանը**:

Հայոց ազգային տանն է պատկանել նաև Մոնսինյոր Մարեսկա 260 հասցեում գտնվող շինությունը, որը տրամադրել է սահմանափակ թվով ապրելատեղեր նորեկ գաղթականներին: Այն բաց է եղել բոլորի համար, սակայն հիմնականում հաճախել են հայեր, ռուսներ և արևե-

[579] Տե՛ս **Թեոթիկ-Վրթի**, Շանկհայի հայոց Ազգային տան հիմնարկութիւնը, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 4.03.1939, էջ 206-208: Նոյնի անգլերեն տպրքերակը տե՛ս **Theotig Vahan** [sic], Armenian National Home is Inaugurated in Shanghai, "Armenian Mirror-Spectator," 22.02.1939: Տե՛ս նաև **Ա. Սրսճ**, Հայ կեանք (ամսական տեսութիւն), «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1939, ապրիլ, էջ 171:

լաեվրոպացիներ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ ամերիկյան զորքերի կազմում Շանհայ են եկել բազմաթիվ ամերիկահայ զինվորականներ, նրանց ջերմորեն դիմավորած տեղացի հայերը տրամադրել են այս տունը, որտեղ զինվորականներն իրենց ժամանակի մեծ մասն անց են կացրել պարելով կամ թղթախաղով[580]:

Ի դեպ, 1938-ին ևս Շանհայում տեղի ունեցած չին-ճապոնական բախումների ժամանակ տեղի հայ երիտասարդները աննման չեն մնացել քաղաքի սահմանները պաշտպանելու գործում: Այդ բախումների ժամանակ զոհվել է հայ երիտասարդական միության անդամ, 22-ամյա **Արտաշես Եսայանը**: Հետմահու նա արժանացել է Շանհայի քաղաքապետարանի խորհրդի մեդալին[581]:

Կազմակերպված կյանքով են ապրել նաև Մանջուլիի հայերը, որոնք ունեցել են մանկապարտեզ, նախակրթարանի ծրագրով դպրոց, երիտասարդական միություն, որը բացել է գրադարան, կանանց միություն: Վերջինս Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին մի քանի հարյուր ձեռք տաք հագուստ է պատրաստել և ուղարկել Հայաստան[582]: Մանջուլիի հայ համայնքը զգալիորեն տուժել է 1929-ի չին-խորհրդային հակամարտության ժամանակ, երբ կոմունիստները ռմբակոծել են Մանջուլին: Շատ հայեր ստիպված տեղափոխվել են Հարբին և այլուր: 1932-ին հայ մամուլին ուղղված մի թղթակցության մեջ նշվել է, որ Մանջուրիայի հայերի ունևոր դասը, որը յոթ տարուց ավելի իրեն հեռու է պահել ազգային կյանքից, սկսել է հետաքրքրություն ցույց տալ դեպի հասարակական գործերի զարգացումը: Այդ նպատակով կազմվել են մի քանի հանձնաժողովներ՝ մշակութային, որը ղեկավարելու էր արդեն գոյություն ունեցող երիտասարդական միությունը, դպրոցական և շինարարական: Վերջին հանձնախումբը հանձնառու է եղել ընդարձակել հայերին պատկանող

[580] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 11:
[581] Տե՛ս **Tchakalian F.**, Shanghai Youth Organize…., "Hairenik Weekly," Boston, 30.12.1938:
[582] Տե՛ս **Պապկեան Հ.**, Հանդիպումներ եւ պատահարներ, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1963, թ. 2, էջ 44:

շենքը՝ համապատասխանեցնելու տարբեր միջոցառումներին, քանի որ հայերն իրենց բոլոր հավաքույթները, ներառյալ պարերը կատարել են աղոթատանը: Նորընտիր վարչության փոխնախագահ Սարգիս Գրիգեյանն առաջարկել է ամսական տաս դոլարով հիմնադրամ կազմել աղոթատան վերաշինության և ընդարձակման համար: Ռեստորատներ Թաթոս Տեր-Հակոբյանը նույն նպատակով խոստացել է տրեկան երկու հարյուր դոլար, իսկ **Ռաֆայել Օվանեսովը** միանվագ նիոգ հարյուր դոլար է տրամադրել շինարարական հանձնախմբին: Այդ կերպ մրցակցությունը սկսվել է[583]…

Չինաստանի հյուսիսում՝ Մոնղոլիայի և Ռուսաստանի միջև ընկած Հայլար քաղաքում[584] ապրել է 4-5 հայ ընտանիք և 5-6 ամուրի, որոնք բոլորն էլ զբաղվել են վաճառականությամբ: Այս քաղաքում դեռևս 1915 թ. գինու և նպարեղենի խանութ է ունեցել **Գրիգոր Կասյանցը** (Քոսյան): Վ. Մ. Խոռխոռունու դեղատունը համարվել է լավագույնը քաղաքում: Այս անձին պատկանել է նաև քաղաքի արտածման ու ներածման առևտրի տունը: **Կ. Մ. Քասկալյանցն** ունեցել է եվրոպական կոշիկի գործարան և վաճառատուն: **Ս. Քիրմանյանի** ընկերությունը զբաղվել է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ[585]:

1934-ին Կահիրեի «Յուսաբեր» թերթին Չինաստանից ուղարկվել է թղթակցություն, որի հեղինակը հայտնել է, թե իրը նոր է հաստատվել Շաթով քաղաքում, որի միակ հայ բնակիչն է: Ըստ նրա՝ Շանհայում կան 60-ից ոչ ավելի հայեր, որոնք բոլորը խեղճ վիճակում են: Այս տեղեկությունը միանգամայն սխալ է: Նույն թղթակիցը հայտնել է նաև, որ մի քանի հայ էլ բնակվում է Նանկինում՝ լինելով միակ աղբյուրը այդ քաղաքում հայության ներկայության վերաբերյալ[586]:

[583] Տե՛ս Հայերը Մանչուրիոյ մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 12.08.1932:
[584] *«Մանչուրիոյ մէջ, Մուքտէնի մօտերը Հայլար անունով քաղաք մը կայ: «Հայլար» բառը-բաբարերէն կը նշանակէ «հայեր»* (Հայկական անուններ հեռատար երկիրներու մէջ, «Ջարթօնք», Պէյրութ, 13.08.1955): Հայլարի անունը հայ ժողովրդի հետ կապելը չի դիմանում քննությանը:
[585] Տե՛ս Հայլարի հայութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 11.01.1928:
[586] Տե՛ս **Ս. Ս.**, Հայերը Չինաստանի մէջ, «Յուսաբեր», Գահիրէ, 20.08.1934, տե՛ս նույնը՝ Հայերը Չինաստանի մէջ, «Ալիք», Թեհրան, 16.09.1934:

Ճաճճուճի հայերի թիվը եղել է մոտ 45, որոնցից ամենաերևելին եղել է **Իվան Օ. Ավետիսյանը**: Նրան (ինչպես նաև **Ա. Եսայանին** և **Ս. Տարասովին**) պատկանել է մի սրճարան-հրուշակարան: Քաղաքում գործել է նաև «Արմենիա» սրճարանը[587]:

Տյեննիոնում բնակվել է 44 հայ, գրեթե բոլորն էլ տաճկահայեր: 1925 թվականից այնտեղ գործել է Նյու Յորքի Գարակյոզյանների գորգագործարանի մասնաճյուղը (հայտնի որպես «The A. and M. Karagheusian Imperial Carpets and Rugs of New York»): Այս գորգագործարանը, հիմնված Արշակ և Միհրան Գարակյոզյանների կողմից, համարվել է ժամանակին արևելյան գորգեր արտադրող լավագույն ընկերությունն աշխարհում: Ըստ երևույթին, նախապես դժվար է եղել շուկա հաստատել Գարակյոզյանների ապրանքի համար. 1927-ին գրված մի աղբյուր վկայում է, որ չինական կառավարությունը երկար քննարկել է, թե արդյոք այդ գորգերը շուկա կունենան Չինաստանում[588]: Սակայն գործն առաջադիմել է, քանի որ 1930-ականների վերջին մասնաճյուղում արդեն 2000 մարդ է աշխատել: Մինչև երկրորդ աշխարհամարտը գորգագործարանում աշխատել է 4000 մարդ[589]: Այս հիմնարկության վերատեսուչն է եղել **Հակոբ Շահպազը** (Շահպազյան), օգնականը՝ վերոհիշյալ **Վահագն Լապճինճյանը** (Թեոդիկ-որդին): Տյեննիոնի հայերի մեջ հիշվում են նաև շապինգարահիսարցի **Գառնիկ Հյուսիսյանի**, պոլսեցի **Օգստին** (sic) **Կոստանդյանի**, ռումինահայ **Հայկ Սարգարյանի** և կեսարացի **Էվրենյանի** անունները[590], ինչպես նաև առևտրականներ, գյումրեցի **Արսեն Անտոնյանցը** և խարբերդցի **Նշան Պետրոսյանը**:

[587] Տե՛ս **Хисамутдинов А. А.**, Следующая остановка – Китай: из истории русской эмиграции, Владивосток, 2003, стр. 22. Русские в Китае. Под общ. ред. и предисл. **Хисамутдинов А. А.**, Шанхай, 2010, էջ 402:
[588] Տե՛ս Reappraisement Circular, United States. Customs Court. Reappraisements of merchandise, Issues 13-58, էջ 372:
[589] Տե՛ս **Cunningham John T.**, Made in New Jersey: the industrial story of a State, 1954, էջ 94:
[590] Տե՛ս Լուրեր Ծայրագոյն Արեւելքի հայութենէ, «Միտք», Երեւաւդէմ, 1937, թ. 8, էջ 260: Տե՛ս նոյնը նաև՝ Ռումանահայ մը Ծայրագոյն Արեւելքի մէջ, «Արագ», Պուքրէշ, 19.08.1937:

1932-ի փետրվարի 10-ին «Նորք Չայնա սթար» պարբերականը հրատարակել է Քրիստոնեական կոնցեսիայի մունիցիպալ խորհրդի հաշվետվությունը Անգլիական դպրոցի 1931 թ. ազգային աշակերտական կազմի մասին, ըստ որի այդ դպրոցում սովորել է երկու հայ աշակերտ[591]:

Դայրեն քաղաքի 14 հայ ընտանիքների (36 հոգի) ներկայացուցիչներից էին կարնեցի սրճարանատեր **Ալեքսան Հարությունյանը**, նորբայազետցի **Վահան Կրոյանը**, գանձակեցի բժիշկ **Գարեգին Գևորգյանը**, ազգային կյանքի ակտիվիստներ ծնունդով ախալցխացի **Կարապետ Առաքելյանը** (որն իր հարստությունը կտակել է հայրենակիցներին), բանդրմացի **Արամ Իշխանյանը** և տիկինը՝ **Երևակ Իշխանյանը**[592] (վերջիններս Երկրորդ աշխարհամարտից հետո հեռացել են Չինաստանից. Արամը վախճանվել է Իրանում, Երևակը՝ Բուլղարիայում[593]): Դայրենի «Քրիստոլ» հյուրանոցը պատկանել է թիֆլիսցի **Ռոզան Մոխովի Տեր-Առաքելովին** (հավանաբար՝ Աստվածատուր Սովսեպի Տեր-Առաքելյան)[594]:

Հոնկոնգում, ինչպես արդեն նշվել է, 1930-ականների սկզբին ապրել է 20 հայ: 1932-ին ամերիկաբնակ Հովակիմ Խուշպուլյանը, լինելով Հոնկոնգում, նշել է. «*Երկար փնտռտուքներէ ետք գտայ քանի մը Հայեր, որոնք 30 տարիէ ի վեր կ'ապրին հոս լաւ պայմաններու մէջ: ...Երեւակայեցէք, որ այս մարդիկը չեն գիտեր եղեր, որ հայերէն թերթ կը տպուի...: Երբ իրենց առաջարկեցի կարդալ հայերէն թերթեր, ամենայն ուրախութեամբ տուին հասցէնին: Շատ պատուաւոր եւ շատ պատուական հայեր են, Պարսկաստանցի*»[595]: Պարսկաստանցի ասե-

[591] Տե՛ս Русские в Китае..., էջ 292:
[592] Տե՛ս **Թեոդիկ-որդի**, Վերակենդանացեալ Խարպին, էջ 759:
[593] Ըստ Իշխանյանների ազգական Արա Սուքիասյանի տեղեկության (2012, հոկտեմբեր, Թեհրան):
[594] Տե՛ս **Хисамутдинов А. А.**, Русские в Дальнем-Дайрене, «Вопросы истории», 1998, но 1, стр. 147. **Նույնի**, Российская эмиграция в Китае..., էջ 66: Տե՛ս նաև Русские в Китае, էջ 375.
[595] **Խուշպուլեան Յ.**, Տպաւորութիւններ Հարաւային Ծովերէ, «Հայրենիք», Պոսթըն, 12.05.1932:

լով թերևս պետք է հասկանալ հնդկահայերի՝ նկատի առնելով նրանց նորջուղայական ծագումը:

1936 թ. չինահայերը մեծ խանդավառությամբ են ընդունել սիյուքահայ գաղթավայրերը հյուրախաղերով այցելող նշանավոր նվագածու Քեմանչիստ Ռուբենի (Գարախանյան, 1892–1983) երույթները: Ուղևորության ժամանակ նրան ընկերակցել է կինը՝ դաշնակահարուհի Ազնիվ Մանուկյանը: Ռուբենի կատարումները լսել են Պեկինի, Հարբինի, Շանհայի, Ֆիտուտեն, Չինչաուա, Տյենծինի, Դայրենի և Մանջուլի քաղաքներում: Ռուբենի նախաձեռնությամբ առանձին հայկական համերգ է կազմակերպվել Շանհայում[596]: Չինական մամուլը զովեստով է խոսել հայ արվեստագետի մասին՝ հրատարակելով նրա լուսանկարը: «*Վիրտուոզ Ռուբենի ձեռքերում քամանչան հախտարմունեն արտահայտում է մարդկային հոգին*»,– գրել է Շանհայի «Չայնա պրեսը»[597]: Քեմանչիստ Ռուբենին առաջարկել են շահավետ պայմաններով մնալ Չինաստանում, սակայն նա մերժել է՝ պատճառաբանելով, որ պետք է մեկնի՝ հայ արվեստը տարածելու Եվրոպայում և Ամերիկայում[598]: Հետագայում Ռուբենը պատմել է Չինաստանի մասին. «*Այնքան գոհ էինք, որ կարծես հոն պիտի հաստատուէինք վերջնականապէս: Քաւական երկար մնացինք.... Ժամանակի ընթացքին կազմեցինք երգչախումբ մը եւ տօնեցինք Ապրիլ 24-ը: ...Սակայն օր մը, պէտք է մեկնէինք. կեդրոն մը, տեղ մը չունէինք*»[599]:

Անշուշտ, ճիշտ չի լինի կարծել, թե չինաբնակ հայերը զբաղվել են միմիայն խաղաղ աշխատանքով: Ինչպես տեսանք, Համազասպ Պսակյանը նրանց մեջ հիշել է նաև արկածախնդիրների, որպիսիք կարելի է համարել Մանջուլիում թմրեցուցիչների, սախարինի և այլ ապրանքների մաքսանենգությամբ զբաղվող հայերին: 1933-1934 թթ. ամերիկյան թմրանյութերի ֆեդերալ բյուրոյի խնդրանքով կազմվել է

[596] Տե՛ս Քեմանչիստ Ռուբէն Չինաստանի մէջ, «Արագ», Պոքրէշ, 10.05.1936:
[597] **Մանուկեան Ց.**, Քէմանչիստ Ռուբէնի յուշերը, Պէյրութ, 1989, էջ 96:
[598] Տե՛ս **Հայուհի մը**, Խաբրիկներ հեռաւոր Մանջուրիայէն, «Հայրենիք», Պօսթըն, 19.08.1936:
[599] **Յակոբ Մանուկեան**, Քէմանչիստ Ռուբէնի յուշերը, էջ 77:

Չինաստանում թմրադեղերի մաքսանենգությամբ զբաղվող անհատների ցանկը, որտեղ հայերը հիշված են եվրոպացի այլ 179 մաքսանենգների մեջ՝ ի շարս գերմանացիների, ռուսների (ներառյալ թաթարները և վրացիները), հրեաների, հույների, սերբերի, ավստրիացիների, բուլղարների, չեխերի և իտալացիների[600]:

Թեև մեծ մասամբ ինքնաբավ՝ սակայն չինաբնակ հայերի մեջ էլ եղել են աղքատներ: Այսպես, 1925-ին վեց հայ օգտվել են Հարբինի գիշերօթիկ կացարանի ծառայություններից[601]: 1930-ին Շանհայում փողոցում գտնվել է մուրացկան **Շարատայանի** դիակը[602]:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին չինաբնակ հայերը հայտնվել են նոր փորձանքի մեջ: Կայսերական Ճապոնիան 1943 թ. հատուկ հրամանով Հեռավոր Արևելքում իր գրաված երկրներում բնակվող հայերին համարել է Ճապոնիայի թշնամիներ, և նրանցից շատերը մնկուսացվել են համակենտրոնացման ճամբարներում ու բանտերում: Ճապոնական բռնազավթումից և հարձակումներից տուժել են ինչպես Չինաստանի, այնպես էլ Ինդոնեզիայի և Սինգապուրի հայերը, որոնց տներն ու ունեցվածքը կողոպտվել են: (1943-ի դեկտեմբերի 20-ին Ինդոնեզիայի բոլոր հայերին, ներառյալ ծերերին և մանուկներին, նետել են բանտերն ու ճամբարները): Դրա հիմնական պատճառը եղել է այն, որ հայերի հայրենիքը գտնվել է Ճապոնիայի թշնամի Խորհրդային Միության կազմում, ուստին հայերը, ռուսների պես, որպես անվստահելի տարր, ճապոնական իշխանությունների կարգադրությամբ թևերին կրել են լատինական S տառանիշը[603]: Նրանց մեջ է եղել, ինչպես նշվեց, չի-

[600] Տե՛ս **Block Alan A.**, Space, Time & Organized Crime, New Brunswick, 1994, էջ 114:
[601] Տե՛ս Ночлежная статистика, «Новости жизни», 14.01.1926, հղված է ըստ՝ **Минасян И.**, Китайско-армянские контакты..., http://bs-kavkaz.org/2012/03/china-armenia-contacts/:
[602] Տե՛ս Труп европейца опознан, «Шанхайская заря», 17.10.1930, հղված է ըստ՝ **Минасян И.**, Китайско-армянские контакты..., http://bs-kavkaz.org/2012/03/china-armenia-contacts/:
[603] Տե՛ս **Արամեանց Աշոտ**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Բ, էջ 372: Նույնը տե՛ս՝ **Մարդեան Զաւէն**, Նացի գեղապաշտները եւ հայերը, «Շիրակ», Պէյրութ, 1987, թ. 5, էջ 41: S տառը նշանակել է Soviet Union (Խորհրդային Միություն). այս ժամանակաընթացքում Աքսիս դաշնության (Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա) չանդամակցող երկրների քաղաքացիները Չինաստանում կրել են իրենց

նահայության հոգևոր հովիվ Ասողիկ վարդապետը, որը 45 ամիս ապրել է գերության մեջ: Չինաստանում հաստատված իրանահայերը նույնպես համարվել են թշնամիներ, նրանց ևս ստիպել են իրենց ձախ թևին կրել կարմիր երիզ՝ I տառանշանով[604]: Հայերի մի մասը զոհվել է համամկենտրոնացման ճամբարներում՝ քաղցից, հիվանդություններից և կոտանքներից: Հոնկոնգ կղզում ամերիկյան ոմբակոծության զոհ է դարձել հայուհի **Լավինիա Ալիս Մադարը** (22.02.1898 – 1.12.1943), որը պատերազմի ավարտին սպանվել է Քովլունում[605]:

Այդուհանդերձ, անգամ այդ պայմաններում հայերը ձգտել են հնարավորինս բարվոք պահել իրենց: Ըստ ժամանակակցի, «*...Թվում է, թե հայ տարագիրները մշտապես բարգավաճում էին: Նրանք կա՛մ վարել են սեփական գործը, կա՛մ նոր գործ սկսել, որը ծաղկում էր անգամ ճապոնական բռնազավթման օրոք*»[606]:

Չինաբնակ հայերը համակենտրոնացման ճամբարներից ազատվել են 1945-ի օգոստոսի 19-ին: Նրանց թիվը Մանջուրիայում և Չինաստանում, ըստ 1945-ին Երևանի ԱՕԿՍ-ում կազմված հայկական գաղթավայրերի վերաբերյալ փաստաթղթի, եղել է 2000[607]: Չինահայերի հետպատերազմյան առաջին հավաքը տեղի է ունեցել 1946-ի մայիսի 26-ին, որը ստեղծել է ազգային նոր վարչություն[608]: Նրանք փորձել են վերականգնել խզված կապերը տարբեր երկրների հայ համայնքների հետ. 1947-ի սկզբին Նյու Յորքի «Լրաբեր» թերթը հրատարակել է Չինաստանից Մեժլում անունով մի հեղինակի հոդվածը Չինաստանի ներկա կյանքի մասին[609]:

երկրի առաջին տառով թևկապեր (բրիտանացիները՝ B, ամերիկացիները՝ A, նիդերլանդցիները՝ N, և այլն, տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 54):

[604] Տե՛ս **Գերեզմիկ եպիսկոպոս**, Հայեր Ծայրագոյն Արեւելքի մէջ, «Արեւ», Գահիրէ, 8.08.1958:

[605] Տե՛ս **Lim Patricia**, Forgotten Souls..., էջ 532:

[606] **Sergoyan E. G.**, The Gathering Place, p. 57.

[607] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 147, թ. 5:

[608] Տե՛ս **Աբրահամյան Ն.**, Չինաստան, էջ 438:

[609] Տե՛ս **Մեժլում**, Կեանքը Չինաստանում (մասնաւոր թղթակցութիւն «Լրաբերի»), «Լրաբեր», Նիւ Եօրք, 4.01.1947:

1946-ին Էջմիածին ուղարկած նամակներից մեկում Ասողիկ վարդապետը գոհունակությամբ նշել է, որ առիթներ է ունենում հանդիպել հայաստանցի երիտասարդների, որոնք սրտակից են, հաստատակամ, անկեղծ ազգասեր և հավատքից էլ հեռու չեն[610]: Նույն թվականին Հայաստանի հետ կապ է հաստատել **Ա. Ա. Յադուբյանը** Շանհայից, որը պատրաստվել է ելույթ ունենալ «Խորհրդային Հայաստանի արվեստը քսանհինգ տարում» թեմայով՝ խնդրելով իրեն տրամադրել համապատասխան նյութեր[611]: Իսկ 1947-ին Ասողիկ վարդապետը վկայել է, որ Էջմիածնից ստացած կոնդակները կարդացել է հայերի համար, որոնցից շատերը ցանկություն են հայտնել հայրենադարձվել, ինքն էլ նրանց հետ, քանի որ առողջությունը քայքայվել էր հոգեկան ցնցումներից և երկրի խիստ կլիմայական պայմաններից: Ասողիկ վարդապետի վկայությամբ՝ պատերազմից առաջ չինահայության ընդհանուր թիվը եղել է 600, իսկ 1947-ի տվյալով՝ 300 (Ճապոնիայի հետ միասին): Շանհայի հայերի վիճակը եղել է համեմատաբար լավ, իսկ Հարբինում մնացել է մոտ 150 հոգի, որոնք գտնվել են տնտեսական դժվարությունների մեջ[612]: Շանհայի հայ համայնքը 1946-ի դեկտեմբերի 8-ին կայացած ժողովում որոշել է հաջորդ տարի Նյու Յորքում գումարվելիք Հայերի համաշխարհային համաժողովին ուղարկել չինահայերի պատվիրակության կազմը՝ հանձնելով իր մշտական պատվո նախագահ Հայկ Ասատուրյանի, Շանհայի Հայ օգնության ընկերության նախագահ Գաբրիել Քիլյանի և նրա կնոջ ու Վիկտոր Չաքալյանի[613]:

Սակայն համակենտրոնացման ճամբարներից դուրս գալուց հետո հայերի դեմ հալածանքներ են սկսել չինացի համայնավարները: Իշխանությունը գրավելուց գրեթե անմիջապես հետո կոմունիստները սկսել են պայմաններ թելադրել բոլոր գործատերերին և բնակիչներին,

---

[610] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4736:

[611] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 703, ց. 3, գ. 4, թ. 27:

[612] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4736:

[613] Տե՛ս **Ազգապետ Եզգիկ վ. կ.**, Համահայկական համագումարը եւ հայ գաղութներու գործունէութիւնը, «Երիտասարդ Հայաստան», Նիւ Եօրք, 4.03.1947: Տե՛ս նաև "The Armenian Mirror-Spectator," Watertown, 30.04-4.05.1947:

ոչ չինացիների մեծամասնության արգելվել է սեփական գործ և տուն ունենալ և շուտով հրաման է արձակվել, որ բոլոր օտարերկրացիները կարող են որոշակի գումար վճարել և հեռանալ Չինաստանից, քանի որ նրանց համար այլևս գործ չկա, և նրանք կասկածի ենթակա են որպես եվրոպական լրտեսներ: Նրանք պետք է գնան ցանկացած երկիր, որը կընդուներ: Ինչպես վկայել է 1948-ին Ճանճուից մի հայի գրած նամակը, «*...ապրեցանք շատ մը սեւ տարիներ, բայց դեռ կատարեալ չէ մեր ազատումը... Վերջին 2-3 տարին տաժանների էր մեր դրութիւնը. տուինք եւ գոհեր, կարծես թէ ուր որ տառապանք կայ, հոն հայերը պէտք է տանջուին: Աստուած եթէ օգնէ եւ իրար տեսնենք, կը պատմեմ ձեզ չինական վայրագութեանց մասին*»[614]:

Նոր վարչակարգի պայմաններում չինաբնակ հայերը նպատակահարմար են գտել հեռանալ «բամբուկե վարագույրի» հետևից, ուստի շարժում է սկսվել՝ փախստականների միջազգային կազմակերպությունների միջոցով հայ բնակիչներին Չինաստանից դուրս բերելու նպատակով[615]: Ռուսաստանցի տարագիրների ընդհանուր թիվը Չինաստանում եղել է մոտ 15 հազար, որից երկու երրորդն ունեցել է խորհրդային քաղաքացիություն. և նրանց միավորել է ապագայի հանդեպ անվստահությունը և ԱՄՆ գաղթելու ցանկությունը[616]: Մասնավորապես Հարբինում հաստատված օտարազգիները (ռուսներ, լեհեր, գերմանացիներ, ֆրանսիացիներ) կա՛մ հայրենադարձվել են, կա՛մ տեղափոխվել ԱՄՆ, Ավստրալիա և Հարավային Ամերիկա, մի փոքր մասն էլ՝ Եվրոպա: Չինաբնակ օտարերկրացիների համար միևնույն է եղել, թե ինչ երկիր կմեկնեն, միայն թե ունենային քաղաքացիություն,

[614] **Դերենիկ եպիսկոպոս**, Հայեր Ծայրագոյն Արեւելքի մէջ, նույն տեղում, «Արեւ», Գահիրէ, 8.08.1958:
[615] Տե՛ս Kavkaz..., էջ 181. Հատկանշական է, որ պատկերը նույնը եղավ նաև Երկրորդ աշխարհամարտից հետո Արևելյան Եվրոպայի հայ համայնքներում (Ռումինիա, Չեխիա), երբ համայնավարների գալուց հետո դաշնակցականամետ և հակախորհրդային տրամադրություններով շատ հայեր ստիպված եղան արտագաղթել, իսկ ոմանք նույնիսկ ձերբակալվեցին և աքսորվեցին կամ սպանվեցին:
[616] Տե՛ս **Хисамутдинов А. А.**, Русские эмигранты на Филиппинах, «Вопросы истории», Москва, 2003, но 7, էջ 141:

և վերջ տրվեր իրենց անհայրենիքի և իրավազուրկի կարգավիճակին: Հատկանշական է, որ ԱՄՆ գաղթող ծնունդով արևելահայ չինահայերը հիմնականում նախընտրել են բնակություն հաստատել Ֆրանցիսկոյում, որտեղ ռուսական և հայկական մեծ համայնք է եղել: Նախքան տեղափոխությունը չինահայերը ժամանակավորապես ապաստանել են հարևան երկրներում՝ Մալայզիայում, Ֆիլիպիններում, նաև Հոնկոնգում: Հոնկոնգում ապաստանել են հայեր Հայլարից և Հարբինից. նրանցից ոմանք կաթոլիկություն են ընդունել՝ Ավստրալիա մեկնելու նպատակով[617]: Ֆիլիպիններն առաջին երկիրն էր, որ ընդունել է չինաբնակ ռուսների հոծ զանգվածների, նրանց հետ մեկտեղ՝ նաև այլ ազգերի ներկայացուցիչների (նրան հետևել են Ավստրալիան, ապա՝ Պարագվայը և Հարավային Ամերիկայի այլ երկրներ[618]: Այդ տարիներին Պարագվայը միակ երկիրն է եղել, որն ընդունել է այրիների և իրենց երեխաներին: Մյուս երկրներն ընդունել են ստանդարտ կազմ ունեցող ընտանիքներ (ծնողներ և զավակներ): Ֆիլիպիններում տեղակայված տեղահանված մարդկանց ճամբարում ապաստանել են մոտ 100 չինաստանցի հայեր, մեծ մասամբ՝ Շանհայից, որոնք պատերազմի ժամանակ կորցրել են իրենց ողջ ունեցվածքը և մատնվել թշվառության: Նրանք դիմել են պատերազմի պատճառով տարբեր երկրներում գտնվող հայերին օժանդակող ամերիկյան ԱՆՉԱ կազմակերպության նախագահ Ջորջ Մարտիկյանին՝ իրենց ԱՄՆ տեղափոխելու խնդրանքով: Այդ նպատակով Մարտիկյանը և իր տիկինը բանակցել են Ֆիլիպինների կառավարության, մասնավորապես Ազգային ժողովի նախագահ զորավար Կառլոս Ռոմուլոյի հետ[619]: ԱՆՉԱ-ն, որ իր գործունեությունը մեծ մասամբ դադարեցրել էր 1950-ական թթերին, շարունակել է համագործակցել Չինաստանի հայերի հետ՝ կապված նրանց արտագաղթելու և տեղավորվելու որոշակի յուրա-

[617] Տե՛ս **Դերենիկ եպիսկոպոս**, Հայեր Ծայրագոյն Արեւելքի մէջ, «Արեւ», Գահիրէ, 29.07.1958:
[618] Տե՛ս **Хисамутдинов А. А.**, Русские эмигранты на Филиппинах, էջ 145:
[619] Տե՛ս Գաղութէ գաղութ, «Յառաջ», Փարիզ, 4.01.1950: Տե՛ս նաև՝ Չինաստանի հայերը ապաստանել են Ֆիլիպեան կղզիները, «Այիք», Թեհրան, 19.01.1950:

հատկությունների և դժվարությունների հետ[620]: Չինաստանից ԱՆՕԱ-ի շնորհիվ փոխադրվել է շուրջ 500 հայ[621]:

Հատկանշական է, որ չինաբնակ հայերի մի մասն անծնագիր չունենալու պատճառով մեկնել է Բրազիլիա, քանի որ վերջինս այն եզակի երկրներից էր, որ ընդունել է անծնագիր չունեցող փախստականներին: Եվ ինչպես ժամանակին հայերը Կովկասից և Ռուսաստանից Չինաստան են հասել ամիսներ, երբեմն մեկ տարի տևած ճամփորդությունից հետո, այնպես էլ հիմա նրանց մի մասի և իրենց զավակների համար երկար ամիսներ են պահանջվել՝ Բրազիլիա հասնելու համար, քանի որ այդ ժամանակաշրջանում Չինաստանից Հարավային Ամերիկա ուղիղ կապ չի եղել: Երվանդ Մարգարյանը գրել է, որ Չինաստանից Բրազիլիա իրենց ճանապարհն անցել է Հոնկոնգ-Թաիլանդ-Հնդկաստան-Իսրայել-Շվեյցարիա-Իտալիա-Սենեգալ երթուղիով[622]: Բրազիլիա է արտագաղթել նաև Եղիշե քահանա Ռոստոմյանի որդիներից Սիմեոնը իր ռուս կնոջ և երեք դուստրերի՝ Արծվիկի (ծնված 1941-ին, Ճապոնիայում), Մարգարիտայի և Վարվառայի հետ (հետագայում տեղափոխվել են ԱՄՆ):

1948-ի հունիսի 12-ին ՀԲԸՄ Բուենոս Այրեսի մասնաճյուղը ՀԲԸՄ-ի Շանհայի մասնաճյուղից նամակ է ստացել՝ 60 հայերի՝ Արգենտինա մուտքի համար Արտաքին գործերի նախարարությունում միջամտելու նպատակով: Պատասխան է տրվել, որ նամակը հղվել է ՀԲԸՄ-ի Նյու Յորքի կենտրոնը եւ պիտի սպասեն պատասխանի, քանի որ նման իրավասություն նրանք չունեն[623]:

Եղել են նաև Չինաստանից Խորհրդային Հայաստան որոշ հայ ընտանիքների հայրենադարձության դեպքեր:

Դեռևս 1936-ին ընտանիքով Հայաստան է ներգաղթել բժիշկ **Մեղրակ Պետրոսի Մաքսուդյանը** (1888–1937): Նա ծնունդով եղել է Խիգանի Խարխոտ գյուղից: Առաջին աշխարհամարտի տարիներին, խուսափելով օսմանյան բանակում ծառայելուց, հեռացել է լեռները, տեղահանության ժամանակ մի ջոկատով պաշտպանել գաղթականներին: Ընտանիքով և գերդաստանի անդամների հետ[624] 1915-ին տեղափոխվել է Մանջուրիա, որտեղ բնակվել է մինչև 1936-ը: Այստեղ արդեն բնակվելիս է եղել եղբայրը՝ **Տիգրան Սարկիսովը**, որը Հնդկաստանում և Չինաստանում շրջելուց հետո հաստատվել է Մանջուրիայում: Այստեղ էլ ծնվել են Մեղրակ Մաքսուդյանի չորս զավակները: Մանջուրիայում Մեղրակ և Տիգրան եղբայրները բացել են ռեստորան: Մեղրակը նաև ուսումնասիրել է տիբեթյան բժշկություն: Հավաքել է Մանջուրիայում բնակվող հայ երեխաներին և հայերեն է սովորեցրել: Հայրենադարձվելուց հետո Հայաստանի տարածքում Մաքսուդյանը սկսել է հավաքել դեղաբույսեր, տեղացիներին բժշկել տիբեթյան մեթոդներով: Շուտով Երևանում և նրա սահմաններից դուրս տարածվել է չինաստանցի բժիշկի համբավը: Սակայն Մաքսուդյանը 1937-ին ձերբակալվել է ճապոնական լրտես լինելու մեղադրանքով և գնդակահարվել: Որդիներից **Արամը** զոհվել է պատերազմի ժամանակ, Նովոռոսիյսկում: Մանջուրիայում ծնված նրա դուստրը՝ **Լուսիկ Մաքսուդյանը** (1934–2011), հետագայում դարձել է լեզվաբան, բանասիրական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի դասեցնո[625]:

Նմանապես 1937-ին ստալինյան անհատի պաշտամունքի զոհ է դարձել 1906 թ. Հարբինում ծնված **Նիկոլայ Լեոնտիի Նալբանդյանը**

[620] Տե՛ս **Zadoian Hratch**, Our Brother's Keepers. The American National Committee to Aid Homeless Armenians (ANCHA), 2012, էջ 54:
[621] Տե՛ս ԱՆՕԱ, Կարօ Գէորգեան, «Ամենուն տարեգիրքը», Պէյրութ, 1962, էջ 487:
[622] Տե՛ս Kavkaz..., էջ 155-157:
[623] Արձանագրութեան տօմար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Պուէնոս Այրէսի մասնաճիւղ, 22 Յուլիս 1948:

[624] Նրանց մեջ է եղել նաև եղբորորդին՝ Ազատ Մաքսուդյանը, որն ավարտել է ճապոնական գիմնազիա և Նիկոլայ անունով մի ռուս երիտասարդի հետ աշխատանքի անցել ճապոնական դեսպանատունը: Ռուսներին տեղեկատվություն տրամադրելու համար Ազատին և Նիկոլային ճապոնացիները տանջամահ են արել (1930-ականների կեսերին): Այդ սպանությունից հետո Ազատի սիրած աղջիկը՝ երիտասարդ մի լեհուհի, վշտից ինքնասպան է եղել (վկայությունը՝ Ազատ Մաքսուդյանի զարմուհի Լուսիկ Մաքսուդյանի):
[625] Նրա մասին տե՛ս **Կիրակոսեան Մ.**, Լուսիկ Մաքսուդեան (1934–2011), «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, հ. ԼԲ., 2012, էջ 594-595:

Ցելլերը, որը մեկնել է ԽՍՀՄ և հաստատվել Ավստրալիայում, աշխատել որպես հաշվապահ: Արդարացվել է հետմահու, 1959 թվականին[626]:

Սկսած 1946 թվականից՝ Շանհայից որոշ հայ ընտանիքներ վերադարձել են Հայաստան[627]: 1947-ին Չինաստանից Հայաստան է տեղափոխվել **Հայկ Գրիգորի Շահնազարյանը** (ծնված 1907-ին)[628]: 1948-ին Չինաստանից հայրենադարձվել է 16 հայ[629]: Նրանց մեջ են եղել Եղիշե քահանա Ռոստոմյանի որդին՝ **Հրաչյան** (1905, Լոռի – 1966, Երևան), կնոջ՝ **Օվսաննա (Սոնյա) Մամիկոնի Ռոստոմյանցի** (ծնյալ Քարտաշյանց, 1913, Իրկուտսկ – 1991, ԱՄՆ) և զավակների՝ **Աստվածատուրի** (1932, Հարբին – 1959, Երևան) և **Մարգարիտայի** (1933, Հարբին, այժմ՝ Գլենդեյլ, ԱՄՆ) հետ[630]: Հրաչյա Ռոստոմյանը Չինաստանում կրթություն է ստացել Հարբինի հայկական դպրոցում և ռուսական գիմնազիայում, հայրենադարձվելուց հետո տարիներ շարունակ աշխատել է Երևանի Պոլիգրաֆկոմբինատում: Հայաստան են վերադարձել նաև հարբինցիներ **Վահան Անտոնյանցը** և կինը՝ **Թամարա Թեյմուրազովան**, Տյենձինում բնակված, արդեն հիշված Արսեն Անտոնյանցի որդին՝ **Սեդրակ (Սերգեյ) Անտոնյանցը**, նրա տոմփսոնի կինը՝ Վալենտինան և իրենց միակ դուստրը՝ Տյենձինում ծնված **Սուսաննա Անտոնյանցը** (մահացել է 1990-ական թթ., Երևանում): Հայրենադարձվելուց հետո Սեդրակ Անտոնյանցին աքսորել են Սիբիր՝ ճապոնական լրտեսության մեղադրանքով, քանի որ վերջինս բարձրագույն կրթություն ստացել էր Ճապոնիայում[631]:

1954-ին Ռուսաստանից Հայաստան են եկել վերոհիշյալ Սեդրակ Սաքսուդյանի հանգուցյալ եղբոր՝ Տիգրան Սարկիսովի կինը և հինգ

[626] http://nekropole.info/ru/Nikolaj-Nalbandjan-Celler (այցելությունը կայքէջ՝ 20.10.2014):
[627] Ուշագրավ մի փաստ. 1947-ին Դիքրոյթի բնակիչ, չինացի բանվոր **Լի Լ. Մոյը** 100 դոլարով մասնակցել է հայերի հայրենադարձության հիմնադրամին, այդ առթիվ հայ մամուլը գրել է նրա մասին՝ տպագրելով լուսանկարը (տե՛ս **Թղթակից**, Չինացի մը կը մասնակցի ներգաղթի ֆոնտին, «Լրաբեր», Նիւ Եօրք, 6.03.1947):
[628] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 362, ց. 13, գ. 12, թ. 51:
[629] Տե՛ս Մի խումբ հայերի վերադարձը Չինաստանից, «Էջմիածին», Էջմիածին, 1948, թ. Ա-Բ, էջ 45:
[630] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 362, ց. 13, գ. 7, թ. 17:
[631] Տեղեկությունը՝ Չինախդա Ստաշևսկայայի (Երևան, 2006, հոկտեմբեր):

զավակներից երկուսը: Որդին՝ նույնպես **Տիգրան Սարկիսով**, հաստատվել է Ալավերդիում: Դուստրը՝ **Թագուհի (Տատյանա) Նովիկովան**, ամուսնու՝ կես ճապոնացի, կես ռուս Վիկտոր Մացումոտոյի (Նովիկով) և դստեր՝ **Սվետլանա Նովիկովայի** հետ բնակվել է Ալավերդիում և Երևանում: Հիրավի, արտառոց է եղել 1950-ականներին Ալավերդիում կես ճապոնացի բնակչի առկայությունը (Մացումոտոն հետագայում տեղափոխվել է Սիբիր): Սվետլանա Նովիկովան այժմ բնակվում է ԱՄՆ-ում: 1950-ականների կեսին Չինաստանից Ռուսաստանի ճանապարհով ներգաղթել են նաև հետևյալ հայերը՝ ծնունդով խիզանցի **Տեր-Ավետիքյանները** (Ավետիքովներ)՝ Մանջուրիայում ծնված **Թամարա Ազատյանցի** և **Մանյա Շախազիզյանցի** հետ, ծնունդով ախալցխացի **Ռոման և Եվա Սուրինովները (Սիրունյան)**, որոնք հետագայում հաստատվել են Մոսկվայում, հարբինցի **Մնացականյանները** (նրանցից մեկը եղել է Հարբինի պոլիտեխնիկ ինստիտուտի շրջանավարտ), **Պողոս և Հռիփսիկ Պողոսովները** և իրենց զավակները (**Սուրեն, Մարգո, Սիրանույշ**): Ի դեպ, Հռիփսիկ Պողոսովայի քույրը՝ **Շուշանիկը**, Մանջուրիայից հարս է գնացել Ռուսաստանի Չիտա քաղաք՝ ամուսնանալով իրանահպատակ Նալբանդյանի հետ: Հետագայում որդու հետ տեղափոխվել է Իրան, ապա ներգաղթել Հայաստան: Նրա որդին է հետագայում Հայաստանում ճանաչված բանաստեղծ-արևելագետ Գեորգի Նալբանդյանը (1926, Չիտա – 1997, Երևան)[632]:

Թիֆլիսցի **Դավիթ (Դարչո) Մանկալովը**, որը խանութ է ունեցել Ումենսկայա ստանիցայում (Եկատերինոդարի մարզ), 1905-ին քաղաքական դրդապատճառներով փախել է Մանջուրիա: Ռուսաստանում մնացած նրա որդին՝ **Ալեքսանդր Մանկալյանը** (1903, Ումենսկայա – 1985, Երևան), պատանեկության տարիներին հորը գտնելու նպատակով նույնպես մեկնել է Մանջուրիա: Այստեղ նա հանդիպել և ամուսնացել է Չինաստանում ծնված հայուհի **Աննա Չուբարյանցի** հետ (1915, Հարբին – 1946, Մանջուրիա, ծագումով՝ ռուստովցի): Ալեքսանդր Մանկալովը 1954-ին չորս դուստրերի և որդու հետ տեղափոխ-

[632] Տեղեկությունը՝ Լուսիկ Սաքսուդյանի (Երևան, 2006, դեկտեմբեր):

վել է Ռուսաստան, մասնակցել խոպան հողերի յուրացմանը: Նույն թվականին հաստատվել են Հայաստանում: Կանադահայ բեմադրիչ Հակոբ Գուդուզյանի «Հայկական աքսոր» (2010) վավերագրական կինոնկարում, ի թիվս այլ հայերի, ներկայացված է նաև այս ընտանիքի դուստրերից մեկը՝ ասեղնագործ վարպետ, երևանցի **Սուսաննա (Շուշանիկ) Մանկալովան**: Նրա ավագ քույրը՝ **Սոֆյա Մանկալովան** (ռուսերեն գրվում է Մոչկալովա), երկու տարի ռուսերեն է դասավանդել Շենյանի համալսարանում (Չինաստան), որից հետո, չինարենի իմացության շնորհիվ, ռուսերեն է դասավանդում չինացի ուսանողներին Մոսկվայի Պուշկինի անվան ռուսաց լեզվի ինստիտուտում: Մանկալովան հեղինակ է չինացի ուսանողների համար ռուսերենի ձեռնարկի, նաև իր չինացի գործընկերոջ հետ կազմել և հրատարակել է շատ գործածական բառերի և բառակապակցությունների ռուս-չինարեն իրավաբանական բառարան[633]:

Չինաստանից հայրենադարձված վերջին ընտանիքը եղել է 1964-ի փետրվարի 12-ին հայ-ռուս-գերմանական ծագումով մի ընտանիք. **Դանղուրյան** քույրերը՝ **Թամարան** (ծն 1917) և **Նինան** (ծն. 1924), վերջինիս ամուսին Օլեգ Լեոնիդի Պտիցինը (ծն. 1930), նրանց դուստր **Նինան** և Օլեգի մայր Մարի Միլերը (ծն. 1894): Նրանք բնակվել են Գյումրիում, եղել ուսուցիչներ[634]:

Հետաքրքրական է, որ չինաբնակ հայերը Չինաստանից հեռանալուց հետո էլ ձգտել են ամուսնական կապեր հաստատել միմյանց հետ: Այսպես, վերոհիշյալ Ռոման Սուրինովը Ռուսաստանում ամուսնացել է վերոնշյալ Մանկալով ընտանիքի դուստրերից **Ասաղիկի (Նաստայա)** հետ, իսկ նրա քույրը՝ մի քանի անգամ հիշված Եվա Սուրինովան, նույնպես ամուսնացել է Մանջուրիայից Սիբիր աքսորված, այնուհետև Մոսկվայում հաստատված Գրիգոր Ավետիսովի հետ:

[633] Տե՛ս Мочкалова С.А. 莫奇卡洛娃 Русско-китайский юридический словарь общеупотребительных слов и словосочетаний 俄汉法律常用语词典—北京：商务印书馆，2012. —656页:

[634] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 362, ց. 13, գ. 44, թ. 5:

Նկատենք նաև, որ անգամ հայրենադարձվելուց հետո չինաբնակ հայերի մեծ մասը իրեն լիարժեք չի զգացել Հայաստանում, ուստիև պատահական չէ, որ նրանցից շատերը հետագայում արտագաղթել են Ռուսաստան կամ ԱՄՆ: Չունենալով չինական ինքնություն (նրանցից քչերն են տիրապետել չինարենին, անգամ կենցաղում չեն ունեցել ոչինչ չինական, թեկուզ, օրինակ, խոհանոցը), նրանք իրենց ավելի մոտ են զգացել ռուս մշակույթին և կամ ձգտել են միանալ ԱՄՆ-ում հաստատված իրենց ազգականների մեծամասնությանը (օրինակ, Հրաչյա Ռոստոմյանի կնոջ և դստեր պարագան):

Նշենք նաև, որ Հարբինում է ծնվել նաև Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, հայկական մի շարք կինոնկարների նկարիչ Պյոտր (Մարկուս) Քեյտները (1902–1967):

Հիշենք նաև, որ այս շրջանում Չինաստանում ժամանակավորապես աշխատանքի բերումով հայտնվել են նաև տարբեր երկրների հայեր: Թուրքիայում և Հունաստանում գործած դիվանագետ **Րաֆֆի Թրլնկյանը** (1890–1952) Չինաստանի հետ ունեցած իր համագործակցության համար այդ երկրի կողմից արժանացել է երկու բարձր պարգևների, ընդսմին՝ մանդարինի (չինական իշխանի) աստիճանի: 1930-ական թթ. տարբեր առաքելություններով Չինաստանում են գտնվել երկու ամերիկահայուհիներ: 1932–1936 թթ. «Յեյլ ընդ Չայնա» միսիոներական ընկերությունում է պաշտոնավարել բուժքույր **Վիկտորյա Գավուքյանը**: Չին ժողովրդի հայ բարերարուհի կարելի է անվանել դիթրոյթցի օրիորդ **Էնի Գարթոզյանին** (1906–1989): Հայ ավետարանչական եկեղեցու պատվելիի դուստր Էնին 1934–1939 թթ. բնակվել է Չինաստանում, սովորել չինարեն և եղել շրջիկ քարոզիչ: Նա Շանհայից Պեկին ոտքով ուղեկցել է բազմաթիվ որբևայրի չինուհիների, որոնք պատերազմի պատճառով ստիպված են եղել լքել իրենց տները: Վերադառնալով ԱՄՆ՝ Գարթոզյանը եկեղեցիներում բանախոսել է Չինաստանի վերաբերյալ, օգնության կոչ արել ամե-

րիկյան ժողովրդին[635]: Վերստին Չինաստան է մեկնել 1940-ին, պատերազմի ժամանակ զգալի օգնություն ցույց տվել ճապոնացի միլիտարիստների կողմից ագրեսիայի ենթարկվող չինացի գյուղացիներին: Էնի Գարթոզյանն ինքն էլ ընկել է ճապոնական գերություն, այնտեղ մնացել 21 ամիս, սակայն 1943-ին ազատվելով՝ վերադարձել է ԱՄՆ և շարունակել իր չինամշակույթային գործունեությունը: Ապա կրկին մեկնել է Պեկին, որտեղից, սակայն, 1949-ին փախել է՝ համայնավարական կարգերի պատճառով: Չկարողանալով այլևս մուտք գործել Մաո Ծե Դունի երկիրը՝ նա գործել է Թայվանում: Չինաստանում իր գործունեության մասին Գարթոզյանը պատմել է 1987-ին հրատարակած իր գրքում[636]: Մեկ այլ հայուհի՝ ծնունդով սուխումցի **Հասմիկ Գրիգորյանը**, 1946-ին Եգիպտոսից տեղափոխվել է Շանհայ և որպես գրագիր երեք տարի պաշտոնավարել Միավորված ազգերի նպաստամատույցի և Վերականգնման Ադմինիստրացիա (UNRRA) կազմակերպությունում: Երբ 1949-ին այդ կազմակերպությունը դադարեցրել է իր գործունեությունը՝ Գրիգորյանը տեղափոխվել է Նոր Զելանդիա[637]:

Մինչև 1950-ականների կեսերը շարունակել է գործել և չինահայերի կյանքը ղեկավարել «Հայ հոգաբարձության մարմինը»: 1951 թ. տվյալով՝ Չինաստանում դեռևս ապրել է մոտ 125 հայ ընտանիք (Հարբին, Շանհայ, Հայլար, Տյենծին քաղաքներում): Բոլորի տնտեսական վիճակը եղել է անբավարար, զբաղվել են մանր առևտրով, նրանց մեջ եղել են նաև բժիշկներ, երկրաչափներ և փաստաբաններ: Հարբինահայերը շարունակել են նշել եկեղեցական տոները, ապրել համեմատաբար համերաշխ՝ մեկ ընտանիքի պես, խառնամուսնությունները քիչ են եղել[638], մեծ մասամբ՝ սլավոնական ազգությունների ներկայացուցիչների հետ, իսկ չինացիների հետ ամուսնությունները, ինչպես նշվեց, կտրականապես բացառվել են[639]:

1954-ի տվյալով Շանհայում տակավին մնացել էր 15 հայ ընտանիք, մեծ մասամբ վաճառականներ և որոշակի դիրք ունեցողներ: Դպրոց չեն ունեցել, հոգևոր կարիքների համար գործածել են ռուս ուղափառ եկեղեցին: Շանհայահայերի մեջ դարձյալ հիշվում են Չաղալյան եղբայրները և **Սամիկոն Քարտաշյանցը**[640]:

1958-ին Ծայրագույն Արևելքի երկրներ, նաև Չինաստան է այցելել հայտնի հոգևորական գործիչ Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը և իր ընդարձակ թղթակցություններն ուղարկել Կահիրեի «Արև» օրաթերթին՝ անդրադառնալով Չինաստանի հայերի անցյալին և ներկային[641]: Նա մասնավորապես նշել է, որ իր այցելած ժամանակաընթացքում Շանհայում այլևս հայեր չեն մնացել, իսկ Հարբինի հայերի մեջ

[635] Տե՛ս **Իրազեկ**, Հայ միսիոներուհի մը, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 31.08.1940, էջ 867:
[636] Տե՛ս **Kartozian Annie**, God Has a Green Thumb; A Veteran Missionary Recounts Her Years in China and Taiwan, OMS International, 1987:
[637] Տե՛ս **Դերենիկ եպիսկոպոս**, Նոր Զելանտայի հայերը, «Արև», Գահիրէ, 24.06.1958:
[638] Տե՛ս Ծայր. Արեւելքի հայ գաղութը, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 10.03.1951, էջ 236:

[639] Ինչպես մեզ վկայել է Չինաստանում ծնված երևանցի Զինաիդա Ստաշևսկայան, ռուսների և այլ ազգությունների գաղթականների համար չինացիի կամ չինուհու հետ ամուսնությունը անգամ քննարկման հարց չի եղել՝ հիմք ունենալով չինացիներից մշակութային խիստ զանազանությունը, եվրոպացիների և ռուսաստանցիների ցեղային խորականությունը և այլն: Իրավիճակը, սակայն, փոխվել է 20-րդ դարի երկրորդ կեսին: Հայերի և չինացիների միջև ամուսնությունների դեպքեր առկա են ոչ միայն Չինաստանում, այլև Հայաստանում: Խորհրդային ժամանակներում Երևանում որոշ ժամանակ ապրել են հայերի հետ ամուսնացած հատուկենտ չինացիներ՝ կրկեսի արտիստուհի Ինգա Սունը (Կրիմգիլդա Ահարոնովա, ծն. 1927), չինացի նշանավոր կրկեսի արտիստ Սուն Սիու-Լիի (1883–1960) դուստրը և Հայաստանի վաստակավոր արտիստ, կրկեսի արտիստ Գեորգի Ահարոնովի (1913–2007) կինը, վարսահարդարուհի Աննա Աբրահամյանը, ֆիզիկոս Յաո Շին: Աշխարհի տարբեր երկրներում ապրել և ապում են հայ-չինական ծագումով անձինք (ԱՄՆ, Ֆրանսիա, Կանադա, Ռուսաստան): Հայազգի ամերիկյան մեծանուն նկարիչ Արշիլ Գորկու դուստրը՝ Նատաշա Գորկին (ծն. 1945), ամուսնացած է չինացու հետ և բնակվում է Լոնդոնում: Չինացի հոր (դիվանագետ Ֆույուն Շյու) և ֆրանս-հայկական ծագումով (Նիկոլետ Լալուա Շյու) մոր զավակ է ամերիկյան գրող, չինարենի պրոֆեսոր Քլեր Շյու Ակկոմմանդոն (ծն. 1936): Նա գրել է «Մեր և գոնգեղ. հիշողություններ պատերազմի տարիներից» հուշագիրքը Ֆրանսիայում անգլացրած իր մանկության մասին (տե՛ս **Hsu Accomando Clair**, Love and Rutabaga: A Remembrance of the War Years, New York, 1993), նվիրված իր մորը և սիրելի տատի՝ «Նանիի» հիշատակին. ի դեպ, գրքի գլխավոր կերպարներից է հենց Նանին՝ Ակկոմանդոյի հայ տատիկը, ծնունդով բիֆլիսեցի փարիզաբնակ դաշնակահարուհի Շուշանիկ Լալուա-Քաբայանը (1879–1952):
[640] Տե՛ս Շանհայի հայերը, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 27.03.1954, էջ 306:
[641] Տե՛ս **Դերենիկ եպիսկոպոս**, Հայեր Ծայրագոյն Արեւելքի մէջ, «Արև», Գահիրէ, 8.08.1958:

նշել է հետևյալ անունները՝ **Թևադրոս Տեր-Հակոբյան**, **Ասյա** և **Երմինիա Թումուրազյանցներ** (պիտի լինի Թեյմուրազյանցներ), **Միքայել** և **Զարդար Պողոսյաններ**, **Զաքար Ավետիսյանց** և իր ռուս կինը, **Հմայակ Վարդանի Էլիասյան** (Էլիյազով) և իր ռուս կինը, **Մարիամ Հարությունյան** և զավակները՝ **Լևոն** և **Լեռնիա**, **Սիմոն Էդոյան** և կինը՝ **Իզաբելլա** և իրենց մայրը, **Գարեգին Առենյանց** և իր ռուս կինը, քույր և եղբայր **Եվգինե** և **Սուրեն Շահնազարյանները**, **Վարդան Նազարյան**, **Վահան Սողոմոնյան** և իր ռուս կինը, **Սմբատ Վլադիմիրի Բեկ-Ավշարով**[642] (Բեկ Ավշարյան), ռուս կինը՝ Աննա Եֆիմովնա Բեկ-Ավշարովա և երկու զավակները (**Վլադիմիր**, °), նրա եղբայրը՝ **Սվյատոսլավ Բեկ-Ավշարով**, **Արշավիր** և **Գայանե Նշկարյաններ** և իրենց դուստրը՝ **Շուշանիկ** (ամուսնացած ռուսի հետ, ունի մեկ որդի), **Գարեգին Սարգսյան** և իր ռուս կինը: Հայլարում բնակվել են **Գրիգոր Կասյանցը**, կինը՝ **Մարիամը** և զավակները՝ **Լևոնը**, **Տիմոթեոսը**, **Գևորգը** և **Եպրաքսիան**: Լևոնն ամուսնացած է եղել հայուհու հետ (**Վարդանուշ**), ունեցել մեկ դուստր՝ **Նունե**: Դայրենում մնացած է եղել ընդամենը մեկ հայ՝ **Ալեքսան Հարությունյանը**: Հոնկոնգում Դերենիկ եպիսկոպոսին հայտնել են, որ Հարբինում վիճակն այլևս անտանելի է դարձել, և բոլորն էլ առիթի դեպքում կհեռանան Չինաստանից[643]: Կյանքը ցույց է տվել, որ այդպես էլ եղել է[644]:

Կղզիացած կյանքով ապրող չինաբնակ հայերը, սակայն, անմասն չեն մնացել չինարեն լեզվին և մշակույթին: Ուսանելով հանդերձ օտար դպրոցներում՝ Չինաստանում կրթություն ստացած հայերը, հատկապես այնտեղ ծնվածները, տիրապետել են նաև չինարենին (ոմանք նաև՝ ճապոներենին), կարողացել են ոչ միայն խոսել, այլև կարդալ ու գրել[645]: Չինաստանում ծնված հայերի համար չինարենը հաճախ առաջին լեզու է եղել և անգամ ազդել մայրենի հայերենի վրա[646]: Չինական հարստագույն (մեկ միլիոնից ավելի ճաշատեսակ հաշվվող) խոհանոցի որոշ նմուշներ մուտք են գործել նաև հայկական ընտանիքներ: Հաստատվելով տարբեր երկրներում՝ նախկին չինաբնակ հայերը կապը չեն կտրել չինական իրականության և Չինաստանում ծնված հայրենակիցների հետ: Հայտնի է, որ Դամասկոսում տարիներ շարունակ չինական ռեստորան են ունեցել Չինաստանում երկար ժամանակ բնակված հայ ամուսիններ, որոնք, ի թիվս տարբեր լեզուների, տիրապետել են նաև չինարենին: Վերոհիշյալ Բեկ Ավշարովների ընտանիքից Սիդնեյում բնակվող **Էմիլիա Էդգարդովնա Բեկ Ավշարովան**, որն ավարտել է գիմնազիան Հարբինում, մշտապես մասնակցում է Ավստրալիայում բնակվող նախկին չինաբնակ ռուսների միջոցառումներին[647], ելույթ է ունեցել Հարբինում մանկության տարիներին բնակված հոլիվուդյան ապագա հայտնի դերասան Յուլ Բրիններին նվիրված հանդիսությանը[648]:

Ամփոփելով նշենք, որ 20-րդ դարի չինահայ գաղթավայրը կարելի է համարել մի յուրօրինակ կղզի սփյուռքահայ գաղթօջախների մեջ: Ի տարբերություն հայ Սփյուռքի, որ անմիջականորեն Մեծ եղեռնի ծնունդ էր, չինահայ համայնքը, կազմված լինելով մեծ մասամբ արևելահայ գաղթականներից՝ անխտիր հակահամայնավարական դիրքորոշում ուներ, և ռուսական բոլշևիկյան հեղաշրջման արդյունք էր, քա-

[642] Ռուսական «սպիտակ» տարագիրների մեջ հիշվում է Չինաստանում ապաստանած Սոֆյա Իոսիֆի Բեկ-Ավշարովան (1847–11.02.1935), որը հավանաբար այս Սմբատի մայրն է:

[643] Տե՛ս **Դերենիկ եպիսկոպոս**, Հայեր Ծայրագույն Արեւելքի մէջ, նույն տեղում:

[644] 1960-ին սփյուռքահայ մամուլը, հենվելով Չինաստանում ճանապարհորդած Հովհաննես Վարժապետյանի վկայության վրա, գրել է, թե իրր Չինաստանում գրեթե հազար հայ է ապրում, բերելով հետևյալ թվերը. Պեկին՝ 18, Շանհայ՝ 120, Տյենձին՝ 20, Քիա-Չու՝ 30, Չանկ-Չա՝ 30, Ցինկ-Ցաո՝ 40, Չանկ-Չու՝ 50, Հարբին՝ 150, Մուկդեն՝ 100, Դայրեն՝ 50, Հայլար՝ 30, և որ «Ցիրուցան հայեր կան նաեւ ուրիշ քաղաքներու մէջ» (տե՛ս **Դէտ**, Հայեր Չինաստանի մէջ, «Մասիս», Պէյրութ, 28.01.1960): Այս տեղեկությունը հիմնովին սխալ է:

[645] Է. Սերգոյանը վկայել է, որ հայրը՝ Գևորգ Սարգսյանը (Սերգեև), խոսել է ռուսերեն, չինարեն, հայերեն և անգլերեն (տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 33):

[646] Երգահան Ծովակ Համբարձումյանի վկայությամբ, ինքը մի անգամ 1950-ականներին Երևանում հանդիպել է Չինաստանից հայրենադարձված մի կոշկակարի, որը հայերեն խոսել է չինարեն առոգանությամբ և իրեն հայտնել, որ Չինաստանն ամբողջովին պարպվել է հայությունից (անձնական զրույց, 1994, օգոստոսի 6):

[647] Տե՛ս **Пигарева Т.**, Литературные портреты - Алексей Несмелов, «Единение: русская газета в Австралии», Мельбурн, 28.02.2011:

[648] Տե՛ս Юл Бриннер в Русском клубе Сиднея, նույն տեղում, 28.04.2016:

նի որ այդ հայերը փախել են «կարմիր տեռորից» (թեև Չինաստանի հայ բնակիչների մեջ կային նաև որոշ թվով Եղեռնից փրկված արևմտահայեր): Այդ առումով 20-րդ դարի չինահայ համայնքներն իրենց ձևավորմամբ և անցած ուղիով ավելի շատ նմանություններ ունեն Չինաստանի ռուսական գաղթավայրի, քան որևէ սփյուռքահայ գաղթօջախի հետ: Չինաբնակ հայերը թեև պահպանել են լեզուն, կրոնը, մշակույթը, պատմական հիշողությունը, սակայն ընդհանուր ճակատագիր են ունեցել Ռուսական կայսրությունից հեռացած բազմազգ տարագիրների հետ: Նրանց սերունդները, թեև որոշակի հայկական ինքնությամբ, սակայն արդեն ինչ-որ չափով ուծացած, ավելի շուտ պատկանում են այն կատեգորիային, որը պատմաբան Վարդան Գրիգորյանը բնորոշել է որպես «*ռուսախոս հայերի» մարգինալ մի սերունդ*»[649]:

Ինչպես տեսնում ենք, Հայոց ցեղասպանության և բոլշևիկ յան հեղաշրջման սարսափներով անցած այս հայերը Չինաստանում ևս դիմակայել են պատմության մարտահրավերներին՝ 1927-ին գեներալ Չան Կայշիի իրագործած հեղաշրջումը, 1929-ի չին-մանջուրական հակամարտությունը, 1930-ականների ճգնաժամը, 1932-ին Ճապոնիայի կողմից Մանջուրիայի բռնազավթումը, Երկրորդ աշխարհամարտի տարիների ճապոնական բռնությունները և ապա՝ Մաո Ծե Դունի գլխավորած չինական 8-րդ բանակի կողմից երկրի գրավումը և համայնավարության հաստատումը: Այս ամենով հանդերձ, 20-րդ դարի առաջին կեսին Չինաստանում բնակված հայությունը կարողացել է դրսևորել իրեն որպես ուշիմ, ձեռներեց համայնք, լինել մեծ մասամբ ինքնաբավ և ծավալել ազգային հանրային, կրոնական, կրթական և մշակութային գործունեություն:

Հայերի հեռանալուց հետո անտեր մնացած Հարբինի հայկական եկեղեցին նույնպես ենթարկվել է ոչնչացման: Այսպիսով, 20-րդ դարի Չինաստանում հայկական ներկայությունը գրեթե իսպառ անհետացել է: Միակ բացառությունը Հարբինի վերոհիշյալ «Թաթոս» ռեստո-

[649] Հայ գաղթաշխարհի պատմություն, էջ 518:

րանն է, Չինաստանի առաջին կովկասյան ռեստորանը, որը շարունակում է գործել մինչ օրս[650]: Հարբինի Ճոնյան Դաթյե 127 հասցեում գտնվող այս ռեստորանը պահպանվում է պետության կողմից. այն նշված է ոչ միայն ռուսական, այլև միջազգային ուղեցույցներում՝ որպես զբոսաշրջիկներին հանձնարարվող այցելության վայր: Չինացի տերերը ձգտում են պահպանել մթնոլորտը՝ անփոփոխ պահելով հին առարկաները (պատեֆոն, սրճաղաց, որպես պաստառ ծառայող 20-րդ դարի սկզբի թերթեր և այլն), մշտապես նշում են իրենց հաստատության՝ հայի կողմից հիմնված լինելու փաստը, ինչի շնորհիվ ռեստորանի հաճախորդներն իրենց կարծիքների մեջ հիշատակում են «Թաթոսը» որպես «*հաճելի հայ-ռուսական.... ռեստորան*»[651]:

Երեսուն տարուց ավելի Չինաստանում հայկական ներկայություն չի եղել, մինչև 1990-ականների կեսերը, երբ նոր ձևավորված աշխարհաքաղաքական պայմաններում դարձյալ փոքրաթիվ հայեր են սկսել մշտական բնակություն հաստատել չինական մեծ քաղաքներում...

[650] Տես Harbin Restaurants, http://www.chinatravelsavvy. com/ destinations/ harbin / restaurants/ (այցելությունը կայքէջ՝ 31.12.2012): Այստեղ Տեր-Հակոբյանի ազգանունը սխալմամբ նշված էր Del-Aknovy:

[651] Tatoc (sic), http://www.tripadvisor.co.uk/Restaurant_Review-g297433-d2034092-Reviews-Tatos-Harbin_Heilongjiang.html (այցելությունը կայքէջ՝ 31.12.2012):

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՉԻՆԱՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

«Բազմաթիվ աքանչելի կերպարներ կային, որոնք հավաքվում էին Շանհայի հայկական հանրային ակումբում պատերազմի տարիներին»[652],– հիշել է Է. Սերգոյանը: Ասվածը ճշմարիտ է առհասարակ չինաբնակ հայերի մեծ մասի համար:

Հիշենք նրանց հնարավոր բոլոր անունները, եթե անգամ նրանք չեն ունեցել նշանակալից ղեկավարություն համայնքի կյանքում:

Թիֆլիսեցի **Հովհաննես** և **Սարգիս Միքայելի Գրձելյանները** (Իվան և Սերգեյ Գրձելովներ) նախ ապրել են Վլադիվոստոկում, ապա 1897 թ. հաստատվել են Չինաստանում: Հարբինում նրանք ունեցել են կոնֆետեղենի, հրուշակեղենի և հացաբուլկեղենի մեծ ֆաբրիկա, և, ինչպես նշվեց, տնօրինել են «Պորտսմուտ» թատրոնը: Որոշ ժամանակ Սարգիս Գրձելյանը Վ. Յա. Սողոմոնյանի հետ եղել է Հարբինի հայ համայնքի նախագահը[653]: Ռուբեն Մանասյանը նրան հիշել է որպես *«Հեռավոր Արևելքի Հայ համայնքների կենտրոնական անձն.... որին դիմում են բոլորը իրենց կարիքների համար եւ կապ պահպանում իրենց ամբողջ կեանքի ընթացքում»*[654]:

Ծնունդով թավրիզեցի **Արշակ Մահտեսի-Քաղդասարյանը** 1901 թ. աչքի է ընկել Մանջուրիայում խունխուզ կոչվող ավազակների դեմ պայքարում: Խունխուզները մեծ ու փոքր խմբերով հարձակումներ են գործել խաղաղ բնակչության, երկաթուղու և շոգենավերի վրա: Քաղդասարյանը, Հարբինի ոստիկանապետի առաջարկով, հանձն է առել չինացի թարգմանի ու մի պահակ զինվորի ուղեկցությամբ հետախուզել Շիթամաուզա քաղաքի շրջակայքը, որտեղ խունխուզները պատրաստվել են հերթական ավազակային հարձակման: Քաղդասարյանը

[652] **Sergoyan E. G.**, The Gathering Place, p. 57.
[653] Տե՛ս **Аблова Н. Е.**, История КВЖД и российской эмиграции в Китае (первая половина XX века), Минск. 1999, էջ 74:
[654] **Մանասեան Ռուբէն ծ. վարդապետ**, Խաչատուր Արովեանի գերեզմանը Ախտոսկում, նույն տեղում:

ճարպկությամբ կատարել է իր ստանձնած գործը և հեռագրով տեղեկացրել Հարբին: Այնտեղից ուղարկել են զինվորներ, որոնք հարձակվել և վռնդել են խունխուզներին: Քաղդասարյանը հավաքել է նրանց թողած զենքերը և տարել Հարբինի Արևելյան Սիբիրի 17-րդ գնդի պահեստ. նաև գերեվարել է երկու խունխուզի[655]:

Մոտ 30 տարի Հարբինում է բնակվել առևտրական **Ռուբեն Կարապետի Լևոնյանը** (1864 – 1.01.1938, Հարբին):

Երևանցի **Սիմոն Եմոքի Էդոյանը** (ծնված 1874-ին) հայկական և ռուսական կրթություն է ստացել ծննդավայրում: Որպես գործարար այցելել է Ռուսաստանի մի շարք մեծ քաղաքներ: Բոլշևիկյան հեղաշրջումից հետո տեղափոխվել է Մանջուրիա և հաստատվել Հարբինում: 1938-ին այստեղ ամուսնացել է հայուհի Իզաբելլայի հետ: Հարբինում ունեցել է շոկոլադի գործարան, տնօրինել մի քանի ռեստորան տարբեր քաղաքներում: Մեծ նվիրատվություն է կատարել Հարբինի հայկական եկեղեցուն: 1960-ին ընտանիքով տեղափոխվել է Ավստրալիա[656]:

Արցախեցի **Վաղարշակ Բեգլարի Ծիծաղյանցը** (1886, Ազատ գյուղ – ?) 1909 թ. մեկնել է Հարբին՝ աշխատելու այնտեղ հաստատված իր ավագ եղբոր մուշտակեղենի խանութում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Վաղարշակը ծառայել է կովկասյան ճակատում, կռվել Էրզրումում: Վերադառնալով Հարբին՝ 1917–1922 թթ. որպես վաճառական ճամփորդել է Հարբինի և սիբիրյան քաղաքների (Նովոսիբիրսկ, Չիտա, Վլադիվոստոկ) շրջանում: 1922-ին Վլադիվոստոկում հանդիպել է արցախեցի մի աղջկա և ամուսնացել նրա հետ: Հաստատվելով Հարբինում՝ Ծիծաղյանցը առևտրական գործունեություն է սկսել Հարբինի և չինական քաղաքների (Դայրեն, Մուկդեն) ու Պորտ Արթուր նավահանգստի հետ: 1941-ին կնոջ՝ Վար-

[655] **Համազասեան Կ.**, Նամակ Մանջուրիայից («Նոր-Դար»-ի թղթակցութիւն), «Նոր-Դար», Թիֆլիս, 1.09.1901:
[656] Տե՛ս նույն տեղում, էջ 74-75:

դանուշ Խոսրովի Ծիծաղյանցի և դստեր հետ տեղափոխվել է Շանհայ, իսկ 1952-ին հաստատվել Ավստրալիայում[657]:

Տարաս Նիկիտի Սուրինովը (հավանաբար թորոս Մկրտչի Սիրունյան, 1883, Ախալցխա – 1930) եղել է հաջողակ արդուճաբերող, գործարար, ունեցել գործարաններ, ֆաբրիկաներ և տներ Մանջուրիա քաղաքում և Չոյբալսանում (Մոնղոլիա): 1929-ին Մոնղոլիայում ձերբակալվել է կոմունիստների կողմից և ամիսներ անց գնդակահարվել:

Արդեն հիշված հարբինաբնակ **Լևոն Ստեփանի Մելիք-Օհանջանյանը** (Լև Մելիք-Օհանջանով) եղել է հայ բանասեր Կարապետ Մելիք-Օհանջանյանի զարմիկը: Կինը եղել է ռուս Չինահդա Անդրեյի Մելիք-Օհանջանովան: Նրանց միակ զավակը՝ Թամարան, բժշկական կրթությունն ստացել է Փարիզում, որտեղ մնացել է և աշխատանքի անցել բժշկական մի հաստատությունում: ՉԺՀ-ի հռչակումից հետո Լևոն Մելիք-Օհանջանյանը աքսորվել է Սիբիր: Երկարատև պայքարից հետո Թամարան 1950-ականներին կարողացել է թույլտվություն ստանալ հորը բերել տալ իր մոտ՝ Ֆրանսիա, սակայն Մելիք-Օհանջանյանը ճանապարհին վախճանվել է նավում և թաղվել Փարիզում:

Ամերիկահայ հեղինակ Է. Ջ. Սերգոյանի «Հավաքատեղին. պատմություններ հին Շանհայի հայ հանրային ակումբից» գրքում (2012), որը բովանդակում է Ասիայից գաղթած հայերի անձնական պատմություններ և լուսանկարներ, տեղ է գտել նաև նրա մեծ հոր և հոր կյանքի ողիսականը: Հեղինակի պապը՝ **Լևոն Սարգսյանը** (1866, Քաքու – 1933, Հարբին), հորից ստացել է 30 հազար դոլարին համարժեք դրամ՝ Չինաստանում հաստատվելու և այնտեղ գործարարությամբ զբաղվելու նպատակով: Նա 1917-ին կնոջ՝ **Հռիփսիմեի** (ծնյալ Մելիք-Սարգսյան, 1880, Թիֆլիս – ?) և երեք զավակի (**Գևորգ, Վարազ, Վարվառա**) հետ ճանապարհ է ընկել Չինաստան (ի դեպ, Քաքվում մնացած ընտանիքի անդամները հաջորդ տարի սրի են քաշվել թուրք-թաթարների կողմից): Սակայն ճանապարհին Իրկուտսկում նա թղթախաղի մեջ տանուլ է տվել իր ունեցած ողջ դրամը: Ի վերջո ընտանիքով հանգրվանել է Հարբինում, բացել մի փոքր ճաշարան և որոշ ձկատառումներով ռուսացրել ազգանունը՝ դառնալով Սերգեև[658]: Սակայն նրա որդիներից Գևորգը (1912, Քաքու – 1991, ԱՄՆ) հետագայում ազգանունը դարձրել է Սերգոյան: Նա որոշ ժամանակ ապրել է Հարբինում (այստեղ ուսանել է մեթոդիստների միսիոներական դպրոցում) և Դայրենում, 1937-ին հաստատվել Շանհայում, աշխատել արտածման և ներածման ընկերությունում: Շանհայի հայկական ակումբում բեմադրել է սիրողական թատերախաղեր և դերեր ստանձնել: Այստեղ էլ ծանոթացել և ամուսնացել է ծնունդով կարսեցի **Նադեժդա Օհանջանովայի** (1918–1992) հետ:

Վերջինիս Չինաստանում հայտնվելու պատմությունը նույնպես նման է չինաբնակ հայերի մեծ մասի ողիսականին, սակայն՝ շատ ավելի հարուստ արկածային տարրերով: Նրա պապը եղել է կարսեցի հարուստ առևտրական Մկրտիչ Օհանջանովը (Օհանջանյան, 1873, Կարս – 1923, Իրկուտսկ), որն ունեցել է սեփական ջրաղաց և ալյուր է մատակարարել ողջ Կարսին: Մկրտիչը և իր կին Գայանե Եկմալյանն ունեցել են հինգ դուստր և մեկ որդի՝ **Հայկ Օհանջանովը** (1893, Կարս – 1977, ԱՄՆ): Վերջինս եղել է Առաջին աշխարհամարտի մասնակից, ականատես եղել Հայոց ցեղասպանությանը և ռուսական քաղաքացիական պատերազմին: Ամուսնացած է եղել **Արփենիկ Մելիք-Ստեփանյանի** (1897, Ջուղա – ?) հետ, ունեցել հինգ զավակ: 1918-ին Մկրտիչ Օհանջանովը, կնոջ, դուստրերի և որդու՝ Հայկի ու նրա ընտանիքի հետ կտրելով 4000 մղոն ճանապարհ՝ Կարսից Սիբիրի վրայով հասել է Մանջուրի, նպատակակետ ունենալով Շանհայը՝ այնտեղից ԱՄՆ մեկնելու համար: Ընտանիքը որոշ ժամանակ հաստատվել է Իրկուտսկին մերձ Սմոլենշչինա գյուղում, որտեղ Հայկը ջրաղաց է աշխատեցրել: 1923-ին Օհանջանովներն իրենց տանը ենթարկվել են

[657] Տե՛ս Armenians in Australia and New Zealand, էջ 75:

[658] Ազգանվան ռուսացման պատճառով մի զվարճալի պատմություն է տեղի ունեցել Լևոնի Վարազ որդու հետ: 1905-ին Քաքվում ծնված **Վարազ Սերգեևիչ** չինական իշխանությունները շփոթել են 1895-ին նույնպես Քաքվում ծնված խորհրդային լրտես Ռիխարդ Զորգեի (գրվել է Sorge) հետ, որին Վարազը նաև արտաքինապես է նման եղել (այս մասին տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 82-89):

ավազակային հարձակման և կողոպուտի, որի ժամանակ սպանվել են Մկրտիչը և Գայանեն: Չցանկանալով մնալ խորհրդային երկրում՝ Հայկը որոշել է տեղափոխվել Մանջուրի, այնտեղ հարս գնացած քրոջ՝ Հայկանուշի մոտ, որը խանութի տեր է եղել: 1924-ին Հայկ Օհանջանովը ոտքով կտրել է Սիբիրի և Մանջուրիայի միջև գտնվող սահմանային Արգուն գետը: Հայկի հույն ընկերները կաշառքով չինական սահմանն են անցկացրել Հայկի զավակներին, իսկ ավագ որդին՝ ութամյա Արամը, սահմանը գաղտնի անցել է գնացքով և միացել ընտանիքին Մանջուրիում: Սիբիրում մնացած մայրը՝ Արփենիկը, ստիպված է եղել մենակ անցնել Չինաստան՝ ընտանիքի հետ վերամիավորվելու: Այդ նպատակով մի չինացու ուղեկցությամբ նա ոտքով կտրել-անցել է խորհրդա-չինական սահմանը, սակայն բռնվել է սահմանապահների կողմից, որոնք պատրաստվել են նրան հետ ուղարկել Իրկուտսկ: Սակայն վերջիններս տեսնելով հայ կնոջ վճռակամությունը՝ ամեն գնով միանալու համար Չինաստանում հայտնված ամուսնուն և զավակներին, նրան չեն հանձնել իշխանություններին, անգամ նպաստել են, որ նա կրկին անցնի սահմանը: Մի քանի օր տափաստաններով քայլելուց հետո Արփենիկ Օհանջանովան հասել է Մանջուրի և գտել ընտանիքին (այնքան հյուծված վիճակում, որ անգամ զավակները չեն ճանաչել մորը)[659]: 1929-ին Օհանջանովները տեղափոխվել են Հարբին, որտեղ տաս տարի ապրել են ապահով կյանքով: Նաղյա Օհանջանովան ուսանել է ռուսական գիմնազիայում, 1940-ին Արամ եղբոր հետ մեկնել է Շանհայ, որտեղ էլ հանդիպել է **Գևորգ Սերգոյանցին** և ամուսնացել նրա հետ 1942-ին: Ունեցել են երկու զավակ՝ **Էդուարդ** (ծնված 1943-ին) և **Նինա** (ծնված 1947-ին): Գևորգ Սերգոյանը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին աշխատել է ամերիկյան գինվորականների հետ: 1945-ին նա տնօրինել է Շանհայի մոտ գտնվող «Չիկան» մեծ կինոթատրոնը: 1949-ին Գևորգ և Նաղյա Սերգոյանները զավակների հետ անցել են Ֆիլիպիններ, ապա հաստատվել ԱՄՆ-ում: Նրանց որդին՝ Էդուարդ (Է. Գ.) Սերգոյանը, ԱՄՆ-

[659] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 138-152:

ում երկար տարիներ աշխատել է որպես ավիացիոն ինժեներ, 2012-ին հանդես եկել ինքնակենսագրական գրքով:

Ավելացնենք, որ Հայկ Օհանջանովի մյուս դուստրը՝ **Իզաբելլա Օհանջանովան** (1916, Կարս –), ատամնաբուժական կրթություն է ստացել Չինաստանում և հիվանդանոց-գնացքով բազմիցս ճանապարհորդել է կենտրոնական Չինաստանում՝ օգնություն ցուցաբերելով գյուղական բնակչությանը: Հետագայում հաստատվելով ԱՄՆ-ում՝ նա կազմակերպել և ղեկավարել է կլինիկա Չիքագոյում[660]: Օհանջանովի որդիներից **Արամը** (1921, Իրկուտսկ –) բնակվել է Կանադայում, եղել Վանկուվերի Բրիտանական Կոլումբիայի համալսարանի պավլոնագիտության դասախոս, իսկ **Նիկոլայը** (1926, Իրկուտսկ–), Նիք Օհան անունով դարձել է հաջողակ գործարար ԱՄՆ-ում:

1919–1922 թթ. Չինաստանում և Ճապոնիայում է բնակվել հետագայում ամերիկաբնակ երկրաբան, անտառագետ, ծնունդով թիֆլիսեցի **Սուրեն Գևորգյանցը** (մահացել է 1958-ին):

1920-ին Հարբինում են գտնվել Գանձակի Ոսկանապատ գյուղի բնակիչ **Սարգիս Մովսեսյանը** եղբայրների՝ **Արշակի, Ավագի, Արսենի** և քույրերի՝ **Մարիամի, Ասաղիկի** և **Սոնայի** հետ[661]: 1932-ին որոշ ժամանակ Չինաստանում պաշտոնավարել է եվդոկիացի **Լեոն Սարգյանը**, որն այդտեղ է բնակվել կնոջ և դստեր հետ[662] (բնակավայրը մեզ հայտնի չէ):

Ռուսական արտերկրի մահագրականների ցվիրված վեցհատորյակում[663] տեղ են գտել նաև իրենց վախճանը Չինաստանում գտած մի շարք հայորդիների անունները, որոնց թվում են **Իվան Զախարի Սոգրոնը** (մահ. 1920, Հարբին)՝ **Արմենակ** և **Վասիլի Սոգրոնների** եղբայրը, նրանց մյուս եղբայր **Տիգրան Զախարի Սոգրոնը** (մահ. 1943, Հարբին), Ռուսական Արևելյան ռազմաճակատի շտաբս-կապիտան

[660] Տե՛ս նույն տեղում, էջ 110-111:
[661] Տե՛ս **Սարգիսեան Ար.**, Հարբինում, «Յառաջ», Երեւան, 25.03.1920:
[662] Տե՛ս **Այվազեան Արշակ**, Պատմութիւն Եղոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 1741:
[663] Տե՛ս Незабытые могилы. Российское зарубежье: некрологи 1917-1997, сост. **В. Н. Чуваков**, под ред. Е. В. Макаревич, т. 1-6:

Ստեփան Սերգեյի Ամասյանը (մահ. 22.04.1923, Հարբին), **Ալեքսեյ Կարապետի Տեր-Թումասովը** (մահ. 1926, Մանջուրիա), **Կարապետ Հակոբի Կաբակը** (մահ. 1928, Հարբին), **Հովհաննես Ստեփանյանցը** (մահ. 1928, Հարբին), **Միշա Ալիխանովը** (մահ. 21.10.1931, Հարբին), **Ս. Ի. Աբրամյանցը** (մահ. 1939, Կալգան):

1922-ին հայ ազգային պատվիրակությունը տեղեկություններ է հավաքել տարբեր երկրների հայերի վերաբերյալ՝ նշելով նրանց բնակավայրը և հասցեն: Չինաստանի հայերի մեջ ընդգրկված են եղել հետևյալ անձինք՝ պարոն **Քազիլ** (21 Նանկին փողոց, Շանհայ), **Ա. Ազատյան** (Փարիզի փողոց 4, Շանհայ), **Մ. Չաքալյան** (20 Կոնսուլեր փողոց, Շանհայ), **Ա. Վ. Աբգար** (Հոնկոնգ), Բանկ Արքիոն (sic) Աբգար (Հոնկոնգ)[664]:

Տարագրության ալիքը Չինաստան է նետել նաև Թիֆլիսի երբեմնի քաղաքագլուխ և բանասեր Գալուստ Շերմազանյանի թոռներին՝ **Լևոն և Ռուբեն Շերմազանյաններին**: Ռուբենը եղել է Հայաստանի Հանրապետության կառավարության անդամ, 1921-ին տեղափոխվել է Հարբին, դարձել Հեռավորարևելյան Հանրապետության անդամ: Լևոնը (1877, Թիֆլիս – 1941, Շանհայ) եղել է ռուսական կայսերական բանակի սպա, 1917-ի հեղաշրջման ժամանակ առաքելությամբ գտնվել է Անկարայում՝ շվեյցարական անձնագրով: Ընտանիքով մեկնել է Ռուսաստան, որտեղից տեղափոխվել է Հարբին, ապա՝ Մուկդեն, Տյենցին, 1924-ին վերջնականապես հաստատվել Շանհայում: Չինաստանում Շերմազանյանը անվտանգության նկատառումներով ազգանունը փոխել է Սարգսյան կամ Սարգսյանց: Շանհայում մի քանի ընկերների հետ հիմնադրել է բանկ, բացել ռեստորան և մանկամսուր, որոնք բոլորն էլ առգրավվել են Չինաստանում համայնավարական կարգեր հաստատվելուց հետո: Լևոնն ամուսնացած է եղել արցախցի **Մարգարիտ Մելիք-Բեժանյանի** հետ (1886, Թիֆլիս – 1974, ԱՄՆ), որը 1949-ին զավակների հետ տեղափոխվել է ԱՄՆ[665]:

[664] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1412, թ. 9:
[665] Տեղեկությունը՝ Ջոզեֆ Քենդալի (7.06.2013 թվակիր էլեկտրոնային նամակ):

Խարբերդցի **Գրիգոր Զ. Եղոյանը** 1952-ին գրված «Իմ կյանքի պատմությունը» հուշագրության մեջ հիշել է, թե ինչպես Ցեղասպանությունից փրկվելով՝ հասել է մինչև Հարբին, Վլադիվոստոկում հանդիպել է Վանում աշխատած ամերիկացի միսիոներ Յարոուին, որը շարունակել է հայանպաստ աշխատանքը Ծայրագույն Արևելքում[666]:

1930-ականներին Բրազիլիայից Չինաստան սուրճի ամենամեծ ներմուծողը եղել է **Կարապետ Հովհաննիսյանը** (հայտնի՝ Շիշկա մականունով): Նրան է պատկանել «Մոկկա» սուրճի ընկերությունը Հարբինում, բրազիլական սուրճի մի խանութ Հարբինի կենտրոնում, որը մասնաճյուղ է ունեցել Շանհայում, «Սանտոս» խանութ-սրճարանը, որտեղ վաճառվել է բրազիլական սուրճ և շվեյցարական շոկոլադ[667]: 1949-ին Հովհաննիսյանը կորցրել է իր հարստությունն ու գործը և իր ռուս կնոջ հետ հեռացել Չինաստանից:

Ռուսական սպիտակգվարդիական բանակի գնդապետ **Հակոբ Քաղյանցը** (Յակով Բոգդանի Բագիյանց) ծնունդով եղել է թուրքահայ[668]: Եղել է Իժևսկի հեծելազորի հրամանատար, Իժևսկի հեծյալ դիվիզիայի հրամանատար և պորուչիկ: Մասնակցել է Սիբիրի Սառցե արշավանքին: Հաստատվելով Հարբինում՝ ապրավաճի պարտականություն է կատարել հայկական եկեղեցում: Սպանվել է 1936-ի մարտի 9-ին Սան-Սինում (Շիտոուհեծի)՝ խունխուզների կողմից[669]:

Ճարտարագետ-էլեկտրիկ **Գ. Կ. Քեչեջյանցը** (՞ – 23.08.1969, ԱՄՆ) ավարտել է Հարբինի գիմնազիան և Հարբինի պոլիտեխնիկ ինստիտուտը: 1952-ին ԱՄՆ է տեղափոխվել Բրազիլիայից:

Արդեն մի քանի անգամ հիշատակել ենք Շանհայում բնակված խոշոր գործարար և ազգային գործիչ **Հայկ Աստուրյանին** (16.04.1901, Հելիոպոլիս – 1987, Լոս Անջելես): Նա ծնվել է Եգիպտո-

[666] Տե՛ս **Yeghoyan Krikor Z.**, The Story of My Life, p. 28, տե՛ս http:// issuu. Com /dianaapcar.org/docs/memoir__the_story_of_my_life__by_krikor_z._yeghoya/1 (այցելությունը կայքէջ՝ 28.08.2016):
[667] Տե՛ս **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 58, 64:
[668] Տե՛ս **Волков С. В.**, Восточный фронт адмирала Колчака, Москва, 2004, էջ 435:
[669] Տե՛ս **Նույնի**, Генералы и штаб-офицеры русской армии. Опыт мартиролога. Т. 1., Москва, 2012, էջ 75:

սում, փաստաբանի ընտանիքում: Հայրը Նուբար փաշայի ժամանակ ազատ ելումուտ է ունեցել եգիպտական արքունիք և շատ հարգված է եղել եգիպտացիներից: Հայկ Ասատուրյանը եղել է Եգիպտոսի բոնցքամարտի ախոյան: Դեռևս 1919 թ. Հելիոպոլսում կայացած մրցույթում 18-ամյա Հայկը հաղթանակ է տարել Եգիպտոսի արքայական հրետանիի զինվորական ախոյան Դրևեր Փեյջի նկատմամբ[670]: Հաստատվելով Չինաստանում՝ Հայկ Ասատուրյանը հիմնել և ղեկավարել է պելոտայի (բասկյան խաի ալաի գնդակախաղի տարատեսակ) կենտրոններ Շանհայում, Տյենձինում, այնուհետև՝ Մանիլայում: Շանհայում նրա տնօրինած «Խաի ալայի ֆրոնտոնս» վիթխարի մարզադաշտի մուտքն անվճար է եղել[671]: 1930-ականների վերջին Ասատուրյանին է պատկանել նաև Շանհայի «Մետրոպոլիտեն ֆիլմզ» ընկերությունը: Այդպիսով, նա դարձել է Չինաստանի կինոյի մագնատներից մեկը: Մասնավորապես նրա ջանքերով է իրականացվել «Ավազի մորեխները» չինական կինոնկարը[672]: Ինչպես երևաց նախորդ շարադրանքից՝ Ասատուրյանը եղել է հայ համայնքի ակտիվ գործիչ և առատաձեռն ցվիրաբերող: «*Մեր ազգակից Հայկ Ասատուրեանի մասին որքան գրուի՝ քիչ է*»,– նշել է **Թեոդիկ-որդին**՝ անվանելով նրան Շանհայի հայոց բարերար արքա[673]: 1930-ականների սկզբին տեղափոխվել է Շանհայ կնոջ՝ Վալենտինա Ամիրայանի, նրա քույր **Օգյուստա Առնոյի** (1916, Ստամբուլ – 1938, Շանհայ), վերջինիս ամուսին **Երվանդ (Էդուարդ) Համամճյանի** (1912, Կահիրե – 2004, Լոս Անջելես), դուստր **Ալիդայի** (ծն. 1922, Կահիրե), և Վալենտինայի առաջին ամուսնու՝ **Ստեփան Ամիրայանի** հետ: Օգյուստա Առնոն Չինաստանում աշխատել է Շանհայի կամավորների ընկերությունում, օգնել ճապոնական ներխուժումից տուժածչինացի գաղթականներին,

[670] Տե՛ս Երիտասարդ հայ ըմբիշի մը փայլուն յաղթութիւնը, «Ժողովուրդի ձայնը», 16.06.1919: Տե՛ս նաև՝ Հայաստանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ժենյա Արիստակյան-Պոլյակինայի ֆոնդ, թ. 1, էջ 49:
[671] Տե՛ս **Թեոդիկ-որդի**, Վերակենդանացեալ Խարպին, էջ 773:
[672] Տե՛ս China's Magnate Said to be an Armenian, "The Armenian Mirror," Watertown, 5.10.1938:
[673] Տե՛ս **Թեոդիկ-որդի**, Շանկհայի հայոց…, էջ 206:

սակայն նրանցից վարակվելով ծաղիկ հիվանդությամբ՝ մահացել է 22 տարեկան հասակում: Ամուսինը՝ Երվանդ Համամճյանն աշխատել է Շանհայի եգիպտական առևտրական ընկերությունում, զբաղվել եգիպտոսից Չինաստան ապրանքների արտահանմամբ և ներմուծմամբ: Կնոջ մահից հետո ամուսնացել է նրա քրոջ դստեր՝ Ալիդայի հետ: 1948-ին հեռացել է Չինաստանից, հաստատվել Լոս Անջելեսում, զբաղվել գործարարությամբ: 1954-ին անունը դարձրել է Էդուարդ Ջերարդ:

Ուշագրավ կերպար է եղել նաև **Վալենտինա Ամիրայանը** (1901, Կ.Պոլիս – 1971, Լոս Անջելես): Երգչուհի և դերասանուհի, «Նեղոսի սոխակ» անվանված Վալենտինան ծնվել է իտալացի հոր (սարդինական ազնվականության շառավիղ Նիկոլա Միքելե Առնո) և հայ մոր (Ագապի Համամճյան) ընտանիքում: Նա մասնակցել է Կահիրեում ներկայացված հայերեն թատերախաղերի, «Անուշ» օպերայի բեմադրությանը, Էմի Ռայան անունով նկարահանվել է ամերիկյան և եգիպտական ֆիլմերում: Վալենտինա և Ալիդա Ամիրայանները 1942–1945 թվականներին արգելափակված են եղել Մանիլայի ճապոնական համակենտրոնացման ճամբարում: Այստեղից Վալենտինան դուրս է եկել քաղցից կիսամեռ վիճակում: Ամերիկացիները նրան քաղաքացիություն են առաջարկել, և ընտանիքը մեկնել է Լոս Անջելես[674]:

Ծնունդով կարնեցի **Չաքալյան** (Չախալյան, Չանղալյան) եղբայրներին պատկանել է Շանհայի հրուշակեղենի խանութների մի մասը: 1930-ականներից մինչև 1950-ականների կեսը նրանք են վարել Շանհայի ֆրանսիական հացեղենի արտադրությունը՝ ամբողջ քաղաքի օտարազգիներին մատակարարելով հացաբուլկեղեն և պատրաստելով քաղաքի լավագույն անուշեղենը: Ի դեպ, Չաքալյանների հացի խանութը և հրուշակարանը հիշատակվում են 1930-ականների Շանհայի վերաբերյալ գեղարվեստական և հուշագրական գրականության

[674] Տեղեկությունը՝ Վալենտինա Ամիրայանի թոռ, ամերիկաբնակ դերասան-բեմադրիչ Էդվին (Վարդան) Ջերարդ Համամճյանի (10.10.2008 թվակիր էլեկտրոնային նամակ): Արտիստուհու մասին մանրամասն տե՛ս մեր «Նեղոսի սոխակը. Վալենտինա Ամիրայան (Առնո)» հոդվածում, «Ազգ», Երևան, 7.04.2017:

մեջ: Այսպես, Շանհայում ծնված մակացի գրող Ֆելիպե Բ. Ներիճ իր «Անցումներ» վեպում հիշելով պատերազմի պատճառով Շանհայ տեղափոխված մակացի վաճառականներին, նշել է. «*Ամեն առավոտ վաճառականները հավաքվում էին Ժոֆրե պողոտայի վրա գտնվող Չաքալյանի հացի փռում, վարելու համար իրենց գործը մի բաժակ սուրճի առաջ*»[675]: Շանհայում ծնված ամերիկաբնակ ռուս գրող Ալեքսանդր Տիտովն իր կենսագրական հուշերում նշել է, որ հայրը «*Վաղ առավոտյան, տունդարձի ճանապարհին, մտել է Չաքալյան եղբայրների հացի խանութը Լաֆայետ փողոցի վրա*»[676]: Շանհայում ծնված մեկ այլ ռուս գրող՝ Օլեգ Շտիֆելմանն իր «Փոքրիկը Շանհայից կամ Փոքրիկ մարդը Խորհրդային բագավորության ճանապարհին» ինքնակենսագրության մեջ հիշել է հետևյալ դրվագը, որ բացահայտում է նաև Չաքալյանների՝ որպես գործարարների, մարդկային նկարագիրը. «*Չաքալյանի և Քրաֆթի հրուշակեղենի խանութների ցուցափեղկերում դրված էին հսկայական շոկոլադե նապաստակներ: Հրուշակարանների մոտով անցնելիս միշտ զգում էինք թարմ թխվածքների հրաշալի բույրը, որը մինչ օրս հետապնդում է ինձ: Ի դեպ, Չաքալյանի հրուշակարանի հետ է կապված իմ կյանքի դեպքերից մեկը: Այնտեղ վաճառում էին շատ համեղ ռոմն թխվածքներ: Ես այնքան էի սիրում այդ հյութալի թխվածքները, որ մայրս հրուշակագործի հետ պայմանավորվեց, որ ես ամեն օր տունդարձի ճանապարհին կվերցնեմ մեկ հատ, իսկ ամսվա վերջին կվճարվի: Մի անգամ ռոմն թխվածք ուտելով ես այնպես թունավորվեցի, որ մի քանի օր անկողին ընկա: Որպես փոխհատուցում հրուշակարանը մի ամբողջ ամիս թխվածքները ձրի էր տրամադրում, միայն թե չտուժեր ֆիրմայի հեղինակությունը*»[677]:

Եղբայրներից **Գրիգոր Քրիստափորի Չաքալյանի** մահվանն անդրադարձել է Շանհայի ռուսալեզու մամուլը[678]: Այս ընտանիքից են

[675] **Nery Felipe B.**, The Transitions: A Novel, 2006, p. 41.
[676] **Титов А.**, Здравствуй, Шанхай! http://www. rusconshanghai. org. Cn /useful/ shanghai/titov-memory (այցելության կայքէջ՝ 25.12.2011):
[677] **Штифельман О.**, Крошка из Шанхая, http://www. russianshanghai. Com /articles/post5340 (այցելության կայքէջ՝ 10.05.2010):
[678] Տե՛ս Скончался К. Х. Чакальян, «Слово», 19.01.1939, հղումն ըստ **Минасян И.**, Китайско-армянские контакты..., http://bs-kavkaz.org/2012/03/china-armenia-contacts/

սերել Շանհայում ծնված ամերիկյան տնտեսագետ, Սպասարկման համագործակցության վստահության հիմնադրամի (Maintenance Cooperation Trust Fund) տնօրեն **Էդուարդ Չաքալյանը** (1926–2006)[679], ամերիկյան աբստրակտ նկարիչ **Սեմ Չաքալյանը** (1929–2004)[680] և ամերիկյան բանակի սպա Ռուբեն **Վիկտոր Չաքալյանը** (1935–2007): Նույն ընտանիքից Տանյա Չաքալյանն ամուսնացած է եղել հարբինցի Տրուշի հետ, բնակվել են ԱՄՆ-ում:

Չաքալյաններից բացի Շանհայում հացագործությամբ է զբաղվել նաև «Առաջին ռուսական հացի փուռը», որը տնօրինել է Բաղիրյանը: Այս անձը եղել է 1931-ին Տաշքենդից Շանհայ տեղափոխված **Հովհաննես Բաղիրյանը**, որը 1949-ին կնոջ՝ Սաթենիկի և Շանհայում ծնված դստեր՝ **Լալայի** հետ տեղափոխվել է Սան Ֆրանցիսկո[681]: Շանհայում են բնակվել նաև **Սեդրակ Ժամհարյանցը**, որը մի պարսիկ ընկերոջ հետ դրամատուն է ղեկավարել, և **Հայկ Իփեքճյանը**, որը զբաղվել է կերպասեղենի առևտրով:

1930-ականների չինահայերի մեջ, անշուշտ, ազգային և հասարակական գործունեության առումով առաջնությունը պատկանում է ամենահայաշատ համայնքի՝ Հարբինի հայերին: Արդեն մի քանի անգամ հիշվեց Ազգային վարչության նախագահ, բժշկական վերատեսուչ և ոստիկանական դատարանի պատվակալ անդամ **Ստեփանոս Գասպարի Սղոնեյանը** (Սղոյան, ռուսական անունը՝ Ստեպան Միգդիսով, 1867–1933), որը որոշ ժամանակ ղեկավարել է Հարբինի առողջապահական գործը: Ծնունդով Վրաստանի Թելավ քաղաքի մոտակա մի գյուղից էր. մեկնել է Ռուսաստան՝ առանց մի բան ռուսերեն իմանալու և բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայի բժշկական համալսարանում: Ուսման տարիներին ձերբակալվել է որպես հեղա-

[679] Տե՛ս **Milkman Ruth, Bloom Joshua, Narro Victor**, eds. Milkman, Working for Justice. The L.A. Model of Organizing and Advocacy, 2011, p. 211.
[680] Նրա մասին տե՛ս Shanghai-Born Sam Tchakalian Exhibits in His Hometown, "The Armenian Reporter," 1.07.2000:
[681] Տե՛ս Lala Hazarabedian, "Contra Costa Times," 21.02.2006, հղումն ըստ http://www.legacy.com/obituaries/contracostatimes/obituary.aspx?n=lala-hazarabedian&pid=16818929&fhid=2297#fbLoggedOut (այցելության կայքէջ՝ 20.09.2010):

փոխական՝ պատիժը կրելով Թիֆլիսի Մետեխի բանտում: Ազատվելուց հետո Մղտեսյանը մեկնել է նախ Դորպատ, ապա՝ Մոսկվա, որտեղ ավարտել է ուսումը: Երբ 1910–1911 թթ. Մանջուրիայում մոլեգնել է ժանտախտը, նա ուղարկվել է Չինաստան՝ համաճարակի դեմ մաքառելու (նման Սոմերսեթ Մոեմի «Երփներանգ շղարշը» վեպի հերոս Ուոլթեր Ֆեյնին, որը գլխավորում է չինական մի քաղաքում բռնկված համաճարակի դեմ տարվող պայքարը): Հարբինի հայությունն այս գործչին է պարտական իր եկեղեցու, դպրոցի և երիտասարդական մարզական միության ստեղծման համար: Մղտեսյանը հաջողեցրել է հիմնել նաև հայկական բուժարան՝ կազմակերպելով չքավոր հայերի և օտարազգիների ձրի բուժօգնությունը, որն իրականացրել է բժիշկներ Լևոն Շերմազանյանի, Յաղուպյանի, Ոսկանյանի և տիկին Բադալյանի հետ միասին: Իր հաջող գործունեության համար Մղտեսյանը չինական կառավարության կողմից պարգևատրվել է շքանշաններով: 1924-ին նշանակվել է Մանջուրիայի բժշկական վերատեսուչ, մի քանի տարի եղել Հարբինի գլխավոր ոստիկանական բժիշկը: 1927-ին սկսել է հրատարակել ռուսերեն բժշկական շաբաթաթերթ: Հարբինում գործել է գիշերօթիկ դպրոց, որ կրել է Միգդիսովի անունը: Կինը ռուս Ալեքսանդրա Ալեքսանդրովնա Միգդիսովան էր: 1929-ին Հարբինում տեղի հայերը մեծ շուքով նշել են բժշկի հոբելյանը, որին ներկա են գտնվել նաև չինացի, անգլիացի, ճապոնացի, լեհ, վրացի, ռուս և օս ազգերի ներկայացուցիչներ: Չինական թերթերն ընդարձակ հոդվածներով ներկայացրել են հոբելյարին[682]: Այդ առթիվ հրատարակվել է առանձին ռուսերեն պարբերական[683]: Ստեփանոս Մղտեսյանը մահացել է 1933-ին՝ դիազննության ժամանակ արյան վարակումից[684], ճիշտ ինչպես վերոհիշյալ Ուոլթեր Ֆեյնն է մահանում աշխատանքային պարտականությունները կատարելիս... Ավելի քան տաս տարի հարբինցիները նշել են Միգդիսովի մահվան օրը: 1944-ին նրա մահվան 11-րդ տարելիցի առթիվ Հարբինի ռուսական «Վրեմյա» («Ժամանակ») թերթը գրել է. «*Բոլորից գաղտնի կատարելով շռայլ ողորմածություն, նա, որպես իսկական քրիստոնյա, իրեն դիմողների ազգությունների միջև տարբերություն չէր դնում: ....Հին ռուսական դպրոցին պատկանող այս անարծաք բժշկի հիշատակը մինչև հիմա նշում են շատ հարբինցի ռուսներ: Նրա պայծառ անունը երախտագիտությամբ են հիշում նրանք, որոնց բժիշկ Միգդիսովը ոստիկանական ընդունարանում իր երկարամյա ծառայության ժամանակ փրկել էր մահվան ճանկերից*»[685]:

Հարբինում 1926-1937 թթ. հրատարակված «Գուն-Բաո» չինարեն-ռուսերեն թերթի ռուսական բաժնի խմբագիրներից է եղել **Արամ Իվանի Մելիք-Վարդանյանցը**[686]: Նա է խմբագրել նաև ռուսական «Պրոժեկտոր» ընկերության համանուն շաբաթաթերթը, որի առաջին համարը լույս է տեսել 1933-ի հոկտեմբերի 15-ին[687]:

Հարբինում 1930-ականներին ճաշարանների տեր են եղել **Վանո Հակոբյանը** և վրացահայ **Սեդրակ Փուչինյանը**: Մեկ այլ հարբինցի՝ **Լեոն Նազարովը** (Լևոն Շահնազարյան), 1940-ականներին եղել է ամերիկյան «Գեներալ Գորդոն» նավի գլխավոր ճարտարագետը[688]:

1930-ից Չինաստանում է բնակվել Պետերբուրգում ծնված **Ալեքսան Մադաթովը**, որտեղ նա հաճախել է ֆրանսիական տեխնիկական քոլեջ: Աշխատել է Շանհայի օմնիբուսների ընկերությունում: Եղել է Շանհայի Հայ երիտասարդաց միության ակտիվ անդամ: 1951-ից բնակվել է Ավստրալիայում[689]:

[682] Տե՛ս Յորելեան բժ. Ստեփաննոս Մղտեսեանի (sic), «Հայրենիք», Պօսթըն, 2.03.1929:
[683] Տե՛ս Газета-сборник, посвященная 30-летию врачебной деятельности ныне покойного д-ра С. Г. Мигдисова (Харбин, 1933).
[684] Տե՛ս **Համազասպ**, Մահ բժ. Ստ. Մղտեսեանի, «Յառաջ», Փարիզ, 25.11.1933: Խարպինի հայութեան կորուստը, «Հայրենիք», Պօսթըն, 20.12.1933: Տե՛ս նաև **Мелихов Г. В.**, Маньчжурия: далекая и близкая, էջ 136: Դրանից երկու տարի առաջ նույն պատճառով մահացել էր Հարբինի ամենահանճարեղ ռուս՝ նույնպես անարծաք բժիշկ Վլադիմիր Կազեմ-Բեկը (1892–1931)՝ հիվանդից վարակված լինելով դիֆտերիայով:

[685] Жизнь национальных колоний. Армянская, "Время", 8.11.1944, տե՛ս **Минасян И.**, Китайско-армянские контакты..., http://bs-kavkaz.org/2012/03/china-armenia-contacts/
[686] Տե՛ս **Хисамутдинов А. А.**, Российская эмиграция в Китае, էջ 64:
[687] Տե՛ս Русские в Китае..., էջ 236:
[688] Տե՛ս Kavkaz..., էջ 109:
[689] Տե՛ս Armenians in Australia and New Zealand, էջ 99:

Ճակատագիրը Չինաստան է նետել նաև ռուսական բանակի երբեմնի սպա, թիֆլիսեցի Կորգանովին (Ղորղանյան): Ինչպես վկայել է ժամանակակիցը, նա Թիֆլիսում պատանեկության տարիներին եղել է Ստալինի ընկերը, որի հետ միասին ժամանակին զբաղվել է բանկի կողոպուտով՝ հանուն համայնավարության հաղթանակի[690]:

1932-ին Շանհայի «Սլովո» («Խոսք») ռուսերեն թերթը գրել է Ծին-դաո քաղաքում գործող Նիկոլայ Բ-ի անվան մանկատան կից բարեգործական միության մասին, որի խորհրդի նախագահ է ընտրվել **Մ. Գ. Մելիք-Նուբարովը**[691]:

1934-ին Հարբինում ստեղծված Մանջուրական կայսրության ռուս տարագիրների գործերով բյուրոյի երիտասարդական բաժնի ղեկավարը եղել է **Գուրգեն Ենգոյանցը**, միջնորդ դատավոր՝ **Լև Մելիքը**[692]:

Մանջուրական բանակում է ծառայել փոխգնդապետ **Գուրգեն Նագոլյանը** (Նագոլյան-Ասերսյանց, Նագոլեն, Նագոլին): Որպես ռուսական վտարանդի բնակվել է Հարբինում: Այստեղ է ստացել բարձրագույն իրավաբանական կրթությունը, վարժ տիրապետել չինարենին և ճապոներենին: 1920-ականների վերջին թողել է ինստիտուտը և ծառայության անցել Հեռավորարևելյան երկաթուղում: 1932-ին ընդունվել է Մանջոու-գոյի զինված ուժեր, ծառայել մինչև մայորի աստիճան: 1936-ին ծառայության է անցել Մանջոու-գոյի բանակի՝ ռուսներից կազմված բրիգադում (հայտնի որպես Ասանոյի բրիգադ), որի կազմում արժանացել է փոխգնդապետի աստիճանի: 1940-ականների կեսին Նագոլյանը ղեկավարել է Ռեզերվիստների միությունը: Ճապոնիայի պարտությունից հետո Հարբինի փողոցներում Նագոլյանին արդեն տեսել են խորհրդային համազգեստով. պարզվել է, նա եղել է խորհրդային հետախույզ, ներքին գործերի ժողովրդական կոմիտեի գործակալ: Խորհրդային զորքերի՝ Հարբին մտնելուց հետո խորհրդային իշխանության համար կատարել է տարբեր հանձնարարություններ՝ ռազմական գործերը համատեղելով որոշ առևտրական գործերի հետ, և շուտով դարձել է Հարբինի մի քանի կինոթատրոնների սեփականատերը: Գուրգեն Նագոլյանը վախճանվել է 1950-ականներին, ԽՍՀՄ-ում[693]:

Բազմիցս հիշված դաշնակցական գործիչ, ծնունդով կարնեցի **Համազասպ Պասկյանը**, փրկվելով Ցեղասպանությունից, Սիբիրի վրայով հասել է Մանջուրիա: Հարբինից նա Կասպ, Պասկ և այլ ծածկանուններով աշխատակցել է սփյուռքահայ մամուլին, մասնավորապես Փարիզի «Յառաջին»՝ ուղարկելով տեղեկություններ չինահայ համայնքի մասին: Նա գրել է նաև թղթակցություններ Չինաստանի քաղաքական կացության վերաբերյալ, հատկապես երբ սրվել են չինճապոնական հարաբերությունները, և Ճապոնիան գրավել է Մանջուրիան[694]: 1953 թ. նրան հաջողվել է դուրս գալ կարմիր Չինաստանից՝ փարիզաբնակ քրոջ վիզայի շնորհիվ: Մահացել է 1950-ականներից հետո, Ֆրեզնոյում (ԱՄՆ):

Պասկյանի ավագ դուստրը՝ երգչուհի, հրապարակախոս և ռադիոմեկնաբան **Կարինե (Կորիննա, Կարինա) Պասկյանը** (4.01.1918, Կարս – 26.02.2003, Սան Ֆրանցիսկո[695]), ուսանել է Հարբինի ռուսական դպրոցում և Մանջուրիայի երաժշտանոցում: Մանկուց արտասա-

[690] Տե՛ս նույն տեղում, էջ 110:

[691] Благотворительное общество при детском приюте имени Николая II в городе Циндао. Русские в Циндао. Собрание Благотворительного Общества, «Слово», 28.03.1932, տե՛ս **Минасян И.**, Китайско-армянские контакты..., http://bs-kavkaz.org/2012/03/china-armenia-contacts/ Հավանաբար միևնույն անձնավորությունն է Վլադիվոստոկում տպագրված «Գոլոս արմյանինա» («Հայի ձայնը») ռուսերեն երկշաբաթաթերթի խմբագիր ուսանող Մելիք-Նուպարը (տե՛ս **Փեշիմնզճան Ա.**, Սիբերիական թղթակցութիւն, «Ասպարէզ», Ֆրեզնօ, 5.04.1921):

[692] Տե՛ս Жизнь национальных колоний. Армянская, «Время», 06.12.1944, հղումն ըստ **Минасян И.**, Китайско-армянские контакты..., http://bs-kavkaz.org/2012/03/china-armenia-contacts/

[693] Տե՛ս **Окороков А.**, Русские добровольцы, Москва, 2007, էջ 203-207, **Балакшин П.**, Финал в Китае, Сан-Франциско, т. 2, 1958, էջ 144:

[694] Տե՛ս, օրինակ, **Կասպ**, Կացութիւնը Խարպինի մէջ, «Յառաջ», Փարիզ, 3.06.1932: Մանջուրիոյ քաղաքական կացութիւնը, **նույն տեղում**, 9.06.1932 և այլն:

[695] «Ռուսները Հյուսիսային Ամերիկայում» կենսագրական բառարանում Կարինե Պասկյանի հայրանունը նշված է Վլադիմիր (**Александров Е. А.**, Русские в Северной Америке. Биографический словарь, Хэмден-Сан-Франциско-Санкт-Петербург, 2005, стр. 417, տե՛ս նաև՝ **Поздняков И. А.**, Из Китая в Америку: историко-антропологический взгляд на русскую-эмиграцию (1920-1950-е гг.), Санкт-Петербург, 2007, էջ 169):

նությամբ և ռուսական ու հայկական երգերով մասնակցել է Հարբինի հայ և ռուս համայնքների միջոցառումներին: Ավարտելով Հարբինի կոնսերվատորիան (Մ. Վ. Օսիպովա-Ջակրժևսկայի դասարան)՝ դարձել է Հարբինի ֆիլհարմոնիկ նվագախմբի երգչուհի (դրամատիկական սոպրանո), արժանացել տեղի ռուսական մամուլի գովասանքին: Չինաբնակ ռուս տարագիր բանաստեղծ Վալերի Պերելեշինը (1913–1992) գրել է «Կորիննա Պսակյանին» բանաստեղծությունը[696]: Ղեկավարել է հայկական եկեղեցու երգչախումբը, բեմադրել «Արշին մալ ալան» օպերետը և Տիգրանյանի «Անուշ» օպերան, որոնք մեծ հաջողություն են ունեցել Հարբինի բազմազգ տարագիրների շրջանում: Կարինե Պսակյանը 1939–1944 թթ. Հարբինի հայ համայնքն է ներկայացրել Քաղաքացիական պաշտպանությանն աջակցող կանանց միության ռուսական բաժնում (այնուհետև նրան փոխարինել է **Տ. Պ. Սուրինովան**)[697]: 1940-ին ամուսնացել է «Խարբինսկոե վրեմյա» («Հարբինյան ժամանակ») թերթի լրագրող Ալեքսանդր Պլավկովի հետ, որը 1945-ին խորհրդային զորքերի կողմից Չինաստանի գավթման ժամանակ ձերբակալվել է որպես սպիտակգվարդիական և աքսորվելով՝ մահկանացուն կնքել է Սիբիրում: Որպես բանտարկյալի կին՝ Կարինե Պսակյան-Պլավկովան զրկվել է աշխատանքից, ուստին որդու՝ Վլադիմիրի հետ (ծնված 1944-ին, Հարբինում) տեղափոխվել է Շանհայ: 1953-ին ամուսնացել է շանհայցի Անատոլի Վուս-Վոնսովիչի հետ, և որդին սկսել է կրել Վուս ազգանունը[698]: Այս ամուսնությունից ծնվել է նաև Մարգարիտա դուստրը, որը, ինչպես նաև Վլադիմիրը, այժմ բնակվում են Կալիֆոռնիայում: Շանհայում Սիմեոն եպիսկոպոսը անձամբ Պսակյանին հրավիրել է ելույթ ունենալ հովվապետական երգչախմբում: 1945-ից հետո Կարինե Պսակյանը վերադարձել է Հարբին, որտեղ կարճ ժամանակ ղեկավարել է հայկական ակումբը, նրա անունից նամակ հղել Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի համամիութենական կոմիտեին՝ խնդրելով ուղարկել հայերեն նյութեր և նոտաներ: Հայաստանի Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեն Հարբինի Հայկական ակումբին է ուղարկել Խորհրդային Հայաստանի հիմնը, Կոմիտասի երգերի ժողովածուն և Ա. Սաթյանի «Հիմն առաջնորդին» երգը[699]: 1957-ին հաստատվելով ԱՄՆ-ում՝ Կարինե Պսակյան-Վուսը զբաղվել է երաժշտական և լրագրողական գործունեությամբ, Սան Ֆրանցիսկոյում հանդես է եկել Ռուսական կենտրոնի բեմում, հիմնադրել է կանանց առաջին ռուսական երգչախումբը Քերքլիում, կատարել Արամ Խաչատրյանի, Ռախմանինովի և այլ կոմպոզիտորների ստեղծագործություններից: Աշխատակցել է Սան Ֆրանցիսկոյում հրատարակվող «Ռուսսկայա ժիզն» («Ռուսական կյանք») և Նյու Յորքի «Նովոե ռուսսկոե սլովո» («Նոր ռուսական խոսք») թերթերին[700]: 1960-ին Սան Ֆրանցիսկոյում հանդես է եկել հայ, ռուս և իտալացի երգահանների գործերից բաղկացած համերգով և այն հարցին, թե հատկապես ո՞ր երգերն են դյութում իր հոգին, Պսակյանը պատասխանել է. «*Թէեւ կը սիրեմ բոլոր երգերը, զորս ստրված եմ՝ երաժշտական Ակադեմիայիս մէջ, բայց ամենէն աւելի կը սիրեմ այն երգերը՝ զորս ստրված եմ մորմէս, այսինքն՝ հայ երգերը, կը փնտռեմ զանոնք միշտ, կը խոկամ անոնց մասին*»[701]: 1964-ին ամուսնու հետ պետական ծառայության է

[696] Տե՛ս **Перелешин В.**, Коринне Псакян, «С горы Нево: восьмая книга стихотворений», Франкфурт, 1975, էջ 24.

[697] Տե՛ս Жизнь национальных колоний. Армянская, «Время», 6.12.1944, հղումն ըստ **Минасян И.**, Китайско-армянские контакты..., http://bs-kavkaz.org/2012/03/china-armenia-contacts/

[698] Վլադիմիր Վուսը (ծն. 27.08.1944, Հարբին) եղել է դաշնակահար, առաջին անգամ ելույթ է ունեցել Սան Ֆրանցիսկոյի ռուսական կենտրոնում: Ուսանել է Սան Ֆրանցիսկոյի կոնսերվատորիայում, Կալիֆոռնիայի համալսարանում: Հաճախ նվագակցել է մորը՝ հայկական և ռուսական երգերի կատարումների ժամանակ: Հեղինակ է մի շարք երաժշտական ստեղծագործությունների:

[699] Տե՛ս Письмо заведующего отделом восточных народных республик ВОКС Н. Ерофеева уполномоченному ВОКС в Харбине А. М. Туманову о материалах для армянского клуба Харбина, «Китайская Народная Республика в 1950-е годы», сборник документов в двух томах, под ред. **Мясникова В. С.**, Москва, 2010, էջ 73-74:

[700] Տե՛ս, օրինակ, նրա հոդվածը Չինաստանում գործած ռուս երաժշտական մանկավարժ Տրախտենբերգի մասին՝ **Псакян К.**, Владимир Данилович Трахтенберг (некролог), «Русская жизнь», 27.02.1963, տե՛ս Хисамутдинов А. А., Российская эмиграция в Китае, էջ 172):

[701] Հայ երգերը, «Ասպարէզ», Պէյրութ, 29.09.1960:

անցել Վաշինգտոնում, 1965–1969 թթ. աշխատակցել է «Ամերիկայի ձայն» ռադիոկայանին: Հանդես է եկել մենահամերգներով, 1969-ին ելույթ է ունեցել Վաշինգտոնում[702]: 1979-ին վերադառնալով Սան Ֆրանցիսկո՝ դարձել է «Ռուսկայա ժիզն» թերթի փոխխմբագիրը, այնուհետև՝ խմբագիրը: Հանդես է եկել բարեգործական միջոցառումներում՝ հօգուտ Եվրոպայում երեխաների օգնության միության, աջակցել է Փոխօգնության ռուս-ամերիկյան միությանը, Կիրիլ-Մեֆոդիի գիմնազիայի և ռուս սկաուտների գործունեությանը, կազմակերպել է համերգներ: Երեք անգամ կազմակերպել է ռուսական մշակույթի օրեր: Կիևյան Ռուսիայի՝ քրիստոնեություն ընդունման 1000-ամյակի առթիվ իրականացրել է «Կիևյան Ռուսիա» հանդիսավոր բեմադրությունը:

Համազասպ Պասկյանի կրտսեր դուստրն էր **Արմենուհի Յոլիճե Պասկյան-Քալյանցը** (9.01.1921, Մանջուլի – 2.08.2007, Սան Ֆրանցիսկո): Մանկությունն անցել է Հարբինում, ստացել է ռուսական կրթություն, հաճախել դրամայի և բալետի դասերի, զբաղվել սպորտով: Խոսել է հայերեն, ռուսերեն, չինարեն, ֆրանսերեն և անգլերեն: 1939-ին ամուսնացել է Արամ Քալյանցի հետ, որը Ծինղաոյում զբաղվել է տարբեր ապրանքների արտածմամբ և ներմուծմամբ: Նրանց դուստրը՝ Ժանետ Քալյանցը (հետագայում՝ տիկին Ջենեթ Էթերիջ), ծնվել է 1942-ին, Ծինղաո քաղաքում, որդին՝ Արթուր Քալյանցը, 1945-ին, ճապոնական համակենտրոնացման ճամբարում: Պատերազմից հետո Քալյանցները վերադարձել են Ծինղաո, զբաղվել հրուշակագործությամբ: Հեռանալով Չինաստանից՝ 1950–1951 թթ. նրանք բնակվել են Ֆիլիպիններում, փախստականների ճամբարում, իսկ 1952-ին հաստատվել Սան Ֆրանցիսկոյում: Այստեղ Արմենուհին հայտնի է դարձել որպես Արմեն Քալի: Սան Ֆրանցիկոյում հիմնել է «Քալիզ» հայ-ռուսական ռեստորան՝ ձևավորված չինական Տաո գերդաստանի

[702] Տե՛ս Հայուհի արուեստագէտներ, «Ասպարէզ», Բոստըն, 19.09.1969: Նրա մասին տե՛ս նաև՝ **Ա.**, Ի պատիւ երգչուհի Կարինէ Պասկեանի, նույն տեղում, 13.10.1964, ինչպես նաև մեր «Шитье старинного романса» հոդվածը («Республика Армении», Ереван, 21.03.1995) և մահագրականը (**Аджемян М.**, Карина Псакян (некролог), «Русская жизнь», Сан-Франциско, 29.05.2003):

ռոմով[703]: 1959-ին ամուսնալուծվել է և ռեստորանային բիզնեսը շարունակել է մենակ: Որդու արկածամահ լինելուց հետո նա 1985-ին փակել է ռեստորանը:

Արմեն Քալին եղել է բալետի մեծ երկրպագու և ողջ կյանքում հոգատարությամբ է շրջապատել բալետի արտիստներին: Մտերիմ է եղել հատկապես մեծահռչակ Ռուդոլֆ Նուրեևի հետ, որին համարել է իր որդին:

Արմեն Քալին Չինաստանում ապրած իր տարիների մասին պատմել է բեմադրիչ Փիթեր Քաուֆմանի «Չինաստան. վայրի Արևելք» փաստագրական կինոնկարում (1994): Քալիի գործը շարունակել է դուստրը՝ Ջենեթը, որի «Տոսկա» սրճարանը եղել է հոլիվուդյան հայտնի շատ գործիչների հավաքատեղի[704]:

Դաշնակահարուհի և երգչուհի է եղել **Ալիս Հյուսիսյանը**, դուստրը շապինգարահիսարցի Գառնիկ Հյուսիսյանի, որը 1950-ին Չինաստանից տեղափոխվել է Սան Ֆրանցիսկո: Նա տիրապետել է հայերեն, չինարեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներին[705]:

1940-ականներին Հարբինի սուրբ Ֆրանցիսկի անվան ֆրանս-ռուսական մենաստանի ուսուցչուհիներից է եղել հայուհի **Իրինա Զարդաղիադին**: Նրան հիշատակել է աշակերտուհին՝ Չինաստանում ծնված, Հարբինի ռուս տարագրության պատմաբան Լյուդմիլա Չեմեշկինչն իր «Հարբինցիները» գրքում՝ հատուկ նշելով Զարդաղիադիի չափազանց խստությունը[706]:

[703] Տե՛ս From Armenia to Russia, Manchur[i]a, China and San Francisco: A Conversation with Mme. Baliantz of the Bali Restaurant, "San Francisco Sunday Examiner and Chronicle," 3.10.1976, վերահրատարակված՝ "Armenian Mirror-Spectator," 4.12.1976, **Solway Diane**, Nureyev: His Life, New York, 1998, էջ 368–369: Տե՛ս նրա մահախոսականը՝ Winn Steven, Armen Baliantz (1921–2007), Joyful Owner of Bali's Restaurant, Warm-Hearted Friend of the Great, "San Francisco Chronicles," 4.08.2007. Քալիի մասին մանրամասն տե՛ս մեր «Հայերը համաշխարհային պարարվեստում» գրքում (Երևան, 2016, էջ 155-157):

[704] Նրա մասին տե՛ս **Zinko Carolyne**, Tosca Cafe Owner Assaulted, Robbed. Daylight Attack in Her Restaurant, "San Francisco Chronicle," 30.05.2002:

[705] Տե՛ս Գադրիէլ գաղութ, «Յառաջ», Փարիզ, 28.03.1950:

[706] Տե՛ս **Кривченко Л.**, «Я обращаюсь с требованьем веры и с просьбой о любви», «Иные берега», 3 (31), 2013, էջ 44:

1937-ին մամուլը գրել է Չինաստանի և Հնդկաստանի միջև գտնվող Խոթան քաղաքում բնակված **Գարեգին Մղդոսյանի** մասին, ծնված 1864-ին: Նա ունեցել է գորգերի գործարան Խոթանում, որտեղ կիրառել է բուրդը բուսական ներկով գունավորելու արհեստը[707]:

1939-ին «Ռուսսկի սոկոլ» («Ռուսական բազե») մարզական և հայրենասիրական կազմակերպության վերահսկիչ հանձնախմբի Շանհայի մասնաճյուղի անդամ է ընտրվել **Պ. Գ. Բեզպարյանցը**[708]:

Չինահայերի մասին խոսելիս հիշենք նաև Հարբինում ծնված **Օվսաննա Թաթուլյանին** (Օլգա Թաթուլովա)՝ հայ կազակ **Ալեքսեյ Թաթուլով-Թաթուլյանի** և ռուս սիրող պարուհի Մարիա (Մարուսյա) Զուդիլովայի դստերը: Օվսաննան նախապես մկրտվել է Հարբինի հայկական եկեղեցում, հետագայում ընդունել ռուս ուղղափառ դավանանք: Ամուսնալուծվելով Թաթուլովից՝ Մարիա Զուդիլովան վերամուսնացել է վլադիվոստոկցի Նիկոլայ Զախարենկոյի հետ, որից էլ հետագայում ԱՄՆ-ում ծնվել են Սվետլանա և Նատալյա քույրերը: Նրանք հայտնի են ամերիկյան կինոյի պատմության մեջ որպես դերասանուհիներ՝ Լանա և Նաթալի Վուդ անուններով: Համաշխարհային հռչակի է արժանացել հատկապես կինոյի աստղ Նաթալի Վուդը (1937–1981), որի կենսագրություններում մշտապես հիշվում է իր կես հայ համամայր քույրը՝ Օվսաննա Թաթուլովա-Վիրիպաևան[709]:

Հարուստ հանքագործի որդի, Դիարբեքիրի Մադեն բնակավայրից **Կարապետ Մլտիկյանը** (1896–1938) օսմանյան բանակում եղել է տասնապետ: 1915-ին Երզնկայում ուրիշ հայ զինվորականների հետ սվինահարվել է, Մեծ եղեռնի ժամանակ կորցրել է ընտանիքի անդամներին, սակայն հրաշքով ողջ է մնացել: Ոտքով հասել է Արևելյան Հայաստան, Կարսի անկումից հետո անցել է Թիֆլիս: Խուսանավելով բոլշևիկներից՝ փախել է նախ Սիբիր, ապա՝ Մանջուրիա: Հյուծված վի-

[707] Տե՛ս Հայկական հնարամտութիւնը Ծայրագոյն Արեւելքի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 2.11.1937:
[708] Տե՛ս За год в 'Русском Соколе', «Слово», 08.03.1939, հղումն ըստ **Минасян И.**, Китайско-армянские контакты..., http://bs-kavkaz.org/2012/03/china-armenia-contacts/
[709] Տե՛ս **Finstad Suzanne**, Natasha: the Biography of Nathalie Wood, New York, 2001, էջ 16:

ճակում հասել է Մանջուլի, որտեղ նրան օգնության ձեռք են մեկնել Հայ օգնության միության տիկնայք: Կարապետը հաստատվել է այնտեղ, բացել նպարեղենի խանութ: Այստեղ ծանոթացել և ամուսնացել է ծնունդով դարաքիլիսցի **Մարիամ Ազատյանի** (1901–՞) հետ: 1931-ին նրանք տեղափոխվել են Հարբին, որտեղ Կարապետը բացել է մեկ ուրիշ նպարեղենի խանութ: Եղել է Հարբինի երիտասարդաց միության ստեղծողներից, հիմնել է փոքր գրադարան՝ հայերեն գրքեր հայթայթելով Բոսթոնից: Վաղաժամ մահացել է ծանր հիվանդությունից: Դուստրը՝ **Վերժինեն** (Վիրջինիա), դեղագործություն է ուսանել Հարբինի Պոլիտեխնիկ ինստիտուտում: ՉԺՀ-ի հռչակումից հետո Մարիամ և Վերժինե Մլտիկյանները տեղափոխվել են նախ Պարագվայ, այնուհետև 1961-ին հաստատվել են ԱՄՆ-ում (Ֆրեզնո), որտեղ Վերժինե Մլտիկյանը աշխատել է ապահովագրական ընկերությունում[710]:

Մանջուրիա կայարանում է ծնվել **Սմբատ Ավշարովը** (Բեկ-Ավշարով, 25.11.1922–16.01.1995, Սիդնեյ, Ավստրալիա): Հայրը՝ Վլադիմիր Ավշարովը, եղել է դատախազ: Սմբատն ավարտել է Հարբինի ռուսական միացյալ գիմնազիան, 1941-ին՝ Հյուսիս-Մանջուրական համալսարանի առևտրական բաժինը, արժանացել առևտրական գիտությունների թեկնածուի աստիճանի: 1948-ին ուսանել է բժշկական տեխնիկումում, 1955-ին ավարտել տեխնիկական դպրոցի մեքենաշինական գծագրության բաժինը: 1958-ին ընտանիքով տեղափոխվել է Ավստրալիա, որտեղ աշխատել է տարբեր ֆիրմաներում:

Ինչպես նշվեց, Չինաստանի հայերի վերաբերյալ տվյալներ է պարունակում 1996-ին ԱՄՆ-ում հրատարակված «Կավկազ. Երվանդ Մարգարյանի կենսագրությունը» անգլերեն հատորը: Հեղինակի հայրը՝ եղեռնից մազապուրծ **Հովհաննես Մարգարյանը**, կորցնելով ընտանիքին, գաղթել է նախ Արևելյան Հայաստան, ապա՝ Սիբիր, այնուհետև՝ Հարբին: Այստեղ փորձել է գոյությունը պահել պարի դասեր տալով: Հարբինում հանդիպել է ապագա կնոջը՝ **Աննա Շահնազարո-**

[710] Տեղեկությունները՝ Վիրջինիա Մլտիկյանի (26.02.2007 թվակիր նամակ): Տե՛ս նաև **Sergoyan E. G.**, The Gathering Place, էջ 121-125, **Հ. Պապ**, Կարապետ Մլտիկեան, «Ասպարէզ», Ֆրեզնօ, 12.04.1963:

վայից, ունեցել երկու որդի: 1925-ին ընտանիքը տեղափոխվել է Տյեն-ծին, որտեղ բացել են «Մոդեռն» հյուրանոցը և «Քալալայկա» ռեստո-րանը: Հովհաննես Մարգարյանը մահացել է 1928-ին, մի ծեծկռտուքի ժամանակ ստացած հարվածից: Նրա որդիներից **Էդուարդ (Էդդի) Մարգարյանը** 1948-ին միայնակ ներգաղթել է Հայաստան, որտեղ նա երբեք չէր եղել, սակայն հետքը 1949-ից կորել է[711]. ամենայն հավանա-կանությամբ նրան աքսորել են Սիբիր, որտեղ էլ մահացել է: Երկրորդ որդին՝ 1920-ին Հարբինում ծնված **Երվանդ Մարգարյանը**, պետք է եր-կար ուղի անցներ՝ կատարելով զանազան աշխատանքներ Չինաս-տանում, այնուհետև ծառայելով ֆրանսիական լեգեոնում Հնդկաչի-նում (Վիետնամ), տնօրինելով սեփական «Ռենեսանս» ռեստորան-կաբարեն Շանհայում, ապա՝ «Կավկազ» ռուս-հայկական ռեստորա-նը Տյենծինում: Ի դեպ, նշանավոր ռուս երգիչ Ալեքսանդր Վերտինս-կին, 1936–1937 թթ. Շանհայում ապրած տարիներին ելույթներ է ունե-ցել «Ռենեսանսում»: Ինչպես նշել է Չինաստանի ռուս տարագրութ-յան մասնագետը, *«Ռենեսանսը» այն ժամանակվա ամենաշքեղ շան-հայյան ռեստորաններից էր: Նրա հայ տերը շատ էր գնահատում Վերտինսկիին»*[712], իսկ Մարգարյանին հիշել է որպես *«ռուսահայ՝ թուխ, երկարաքիթ, թախծոտ բարի աչքերով»*[713]:

Հետագայում ապրելով Ռիո դե Ժանեյրոյում, Սաո Ֆրանցիսկո-յում և Լոս Անջելեսում՝ մարգարյանն այստեղ նույնպես բացել է «Կավկազ» անունով ռեստորաններ: Երվանդ Մարգարյանն անդա-մակցել է Շանհայի Հայ օգնության միությանը: Ունեցել է երեք զա-վակ՝ **Միշա** (ծն. 1943, Շանհայ), **Սամսոն** (ծն. 1945, Տյենծին) և **Վիո-լետ** (ծն. Շանհայ) Մարգարյանները, որոնք բնակվում են Լոս Անջել-սում: Ի դեպ, Լոս Անջելեսի «Կավկազ» ռեստորան հաճախել են մի շարք կինոգործիչներ, որոնց շնորհիվ էլ Երվանդ և Միշա Մարգար-յանները 1971-ին փոքր դերերով նկարահանվել են Գաբրիել Է. Գյոր-ֆիի «Սեր հանած մեկ» ֆիլմում: Երվանդ Մարգարյանը ֆրանսիացի

[711] Տե՛ս Kavkaz..., էջ 17:
[712] **Старосельская Н. Д.**, Повседневная жизнь "русского" Китая, стр. 194.
[713] Նույն տեղում, էջ 199:

լեգեոների դրվագային դերով նկարահանվել է նաև «Լավ ժեստ» կի-նոնկարում, իսկ Միշա Մարգարյանը Մարիոնա Այվազյանի հետ հան-դես է եկել Հիլդա Չորքաջյանի բեմադրած «Խենթություններ ռուսա-կան ձևով» ներկայացման մեջ: Ռեստորանային բիզնեսն ընտանե-կան ավանդույթ էր այլ չինահայերի մեջ նույնպես. Երվանդ Մարգար-յանի աները՝ **Մամիկոն Ս. Քարտաշյանցը** կնոջ՝ իրկուտսկցի ռուս Վե-րա Քարտաշյանցի (Սուրկովա) հետ, Հարբինում ունեցել են «Սամ-սոն», իսկ Շանհայում՝ քաղաքի լավագույնը համարվող «Կավկազ» ռեստորանը[714]: Վերջինս գտնվել է քաղաքի գլխավոր պողոտաներից մեկի՝ Ժոֆֆրի վրա (թիվ 744) և եղել է շանհայաբնակ ռուսների և հա-յերի, այնուհետև նաև՝ ամերիկյան զինվորականների սիրած վայրը: Քարտաշյանցների դուստրը՝ Իրկուտսկում ծնված **Մարիամ Քար-տաշյանցը**[715], եղել է «Կավկազի» գլխավոր խոհարարը: Նա աշխար-հի տարբեր երկրներում հազարավոր հաճախորդների հիացրել է իր պատրաստած բարձրակարգ հայկական և ռուսական կերակրատե-սակներով[716]:

Սիլվա Կապուտիկյանն իր ամերիկյան ուղեգրության մեջ հիշել է Սաո Ֆրանցիսկոյում ապրած նախկին չինահայ **Մարգո Հովհաննիս-յանին**՝ նշելով, որ հայերեն և ռուսերեն լեզուներին տիրապետող այդ կի-նը ԱՄՆ-ից զբոսաշրջիկների խմբեր է տարել Խորհրդային Հայաս-տան[717]:

Այս համատեքստում պետք է հիշել նաև երկու ռուսացած հայ գործչի: Երգչուհի և գրող **Սոֆյա Զայցևան** (1899–1945) ծնվել է Պե-տերբուրգում, Արտեմի Ավանովի ընտանիքում: 1916-ին ավարտել է Պետրոգրադի կայսրուհի Մարիայի անվան գիմնազիան: Դեռնիկինի

[714] Տե՛ս **Ван Чжичэн**, История русской эмиграции в Шанхае, էջ 529:
[715] Հետաքրքրական է, որ Մոսկվայում Մարիամ Քարտաշյանցի երգեցողության ուսու-ցիչը եղել է երիտասարդ Արամ Խաչատրյանը, որը սիրահետել է նրա քրոջը՝ **Մոնյա-յին**: Տարիներ անց Մոնյան Չինաստանից հայրենադարձվել է Հայաստան և մի անգ-ամ փողոցում պատահաբար հանդիպել Արամ Խաչատրյանին (տե՛ս Kavkaz..., էջ 61-62):
[716] Այդ կերակրատեսակներից մի քանիսի բաղադրատոմսերը տե՛ս Kavkaz..., էջ 247-256:
[717] Տե՛ս **Կապուտիկյան Ս.**, Խճանկար հոգու և քարտեզի գույների, Երևան, 1976, էջ 413:

բանակի հետ փախել է Կ.Պոլիս: Ապրել է Պրահայում, որտեղ երգել է ռուսական երգչախմբում: Երգեցողություն է ուսանել Քեռլինում և Փարիզում[718]: 1930-ին Փարիզում ամուսնացել է ռուս տնտեսագետ, իրավաբան Կիրիլ Զայցևի (1887-1975) հետ, 1935-ին նրա հետ միասին հաստատվել է Հարբինում: Սոֆյա Զայցևան Մանջուրիայում հանդես է եկել մենահամերգներով (կամերային երկացանկով), 1938-ին հյուրախաղերով՝ Ճապոնիայում, որը լայնորեն լուսաբանվել է տեղի մամուլում: Նրան դաշնամուրով նվագակցել է ամուսինը՝ Կիրիլ Զայցևը: Գրել է ինքնակենսագրական վեպ-եռագրություն, որի առաջին մասը՝ «Երեխայի աչքերով Աշխարհին. վիպակ պետերբուրգցի աղջկա կյանքից», լույս է տեսել 1937-ին, Հարբինում, երկրորդը՝ «Աշխարհի շեմին», 1942-ին, Հարբինում և վերահրատարակվել Շանհայում 1947-ին: Սոֆյա Զայցևան մահացել է Բեյ-Գուանում (Պեկին), թոքախտից: Ամուսինը Շանհայում 1946 թ. հետմահու հրատարակել է նրա եռերգության մյուս հատորը՝ «Ճանապարհ աշխարհի միջով»[719]: Ռուսական Չինաստանի հանրագիտարանում նրա կենսագրության մեջ առաջին իսկ բառով նշված է՝ «Հայուհի»[720]:

Մյուս հայազգին **Սերգեյ Միխայլովիչ Օգանեզով** է (1884, Վիտեբսկ – 1958, Ծինդաո): Նա մասնակցել է ռուս-ճապոնական, Առաջին համաշխարհային և Սիբիրի քաղաքացիական պատերազմներին, եղել թնդանոթաձգության կապիտան: Չինաստան է գաղթել Մոնղոլիայից, որտեղ կռվել է բարոն Ունգեռնի դիվիզիայում: Հաստատվել է նախ Հարբինում, ապա 1925-ին՝ Շանհայում, որտեղ 1930-ից խմբագրել է «Դեն» («Օր») ռուսերեն օրաթերթը: Այս պարբերականն աջակցել է Չինաստանում գործող ռուս ֆաշիստական կազմակերպությանը: Շանհայում տնօրինել է «News Asia Printing Press» տպագրատունը: 1939-ին Օգանեզովը հաստատվել է Ծինդաոյում, որտեղ նույնպես

[718] Տե՛ս **Соловьева Н. А.**, Печатные издания харбинской россики: аннотированный библиографический указатель печатных изданий, вывезенных хабаровскими архивистами из Харбина в 1945 году, Хабаровск, 2003, էջ 114:
[719] Տե՛ս **Хисамутдинов А. А.**, Российская эмиграция в Китае, էջ 87-88:
[720] Տե՛ս նույն տեղում, էջ 87:

խմբագրել է թերթ և տնօրինել մի տպարան: 1945-ին ձերբակալվել է չինական իշխանությունների կողմից ճապոնացիների հետ ունեցած կապերի համար և 3.5 տարի անցկացրել է բանտում: 1951-1956 թթ. դարձյալ անցկացրել է բանտում: Մահացել է ծայրահեղ աղքատության մեջ, Ծինդաոյում[721]:

Ինչպես տեսանք, չինաբնակ այս հայորդիները մեծ մասամբ արևելահայ գաղթականներ են, շատ քիչ թվով՝ արևմտահայեր: Սակայն այս ժամանակաշրջանում անգամ դիպվածաբար Չինաստանում հայտնվել են նաև այլ երկրներում ծնված հայեր: Արտառոց է թվում 1937-ին Սանտյագոյի (Չիլի) համալսարանի երկրագործության բաժնի տեսուչ Հուգո Սիվերսիի վկայությունը. նա Մանջուրիայի մայրաքաղաք Սինծինում հանդիպել է իր համերկրացի, սակայն հայորդի **Մարգիս Մանուել Անտոնյանցին**: Վերջինս նրան պատմել է, որ ինքը ծնվել է մոտ 1892-ին, Չիլիի հարավում, մանկությունից որբացել է և հայտնվել է Չինաստանում: Այստեղ Անտոնյանցն աշխատել է որպես գբոսաշրջության ուղեվար, բնակվել է Սինծինի ռուսական թաղամասում և որդեգրել է ռուսական սովորություններ[722]:

Ճապոնիայում ծնված և Չինաստանում բնակված ամերիկահայ լրագրող **Ռոյ Էսոյանը** (1920 – 2012) իր կենսագրության որոշ շրջանով կապվում է այդ տարածաշրջանի հետ: Ռոյ (իսկական անունով՝ Գարեգին) Էսոյանը, ծնվել է ճապոնական Յուրուգա ձկնորսական ավանում, որտեղ նրա ընտանիքը ապաստանել է 1919-ին՝ փախչելով Ռուսաստանի բոլշևիկյան հեղաշրջումից: Էսոյանները տեղափոխվել են նախ ճապոնական Կոբե քաղաքը, ապա՝ Շանհայ: Այստեղ Գարեգինը 1932-ին հաճախել է անգլիական վարժարան: Գրել սկսել է փոքր տարիքից, բայց երբ 17 տարեկանում անգլիալեզու մի թերթ մերժել է հրատարակել հոդվածը, ծառայության է անցել մի դանիական բեռնատար նավի վրա և մեկուկես տարի շրջագայել: Այդ նավի կապիտանն է նրան Ռոյ անունը տվել՝ գտնելով, որ Գարեգին անունը դժվարա-

[721] Տե՛ս նույն տեղում, էջ 172:
[722] Տե՛ս **Մատթեոսեան Վ.**, Հարաւային կողմն աշխարհի. հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, Ամբիլիաս, 2005, էջ 27:

հումչ է: Շանհայ վերադառնալով 1939-ին՝ աշխատել է «Շանհայ թայմս» («Շանհայի ժամանակ») թերթում: 1941-ին ճապոնացիների կողմից Շանհայի գրավման ժամանակ Էսոյանի մեծ եղբայրը սպանվել է պատահական գնդակից: 1945-ից աշխատել է «Ասոշիեյթեդ պրես» լրատվական գործակալությունում, աշխատանքի նշանակվել Հավայան կղզիներում, որտեղ ձեռք է բերել է ԱՄՆ քաղաքացիություն: Ռուսերենին տիրապետելու շնորհիվ 1955-ին նրան տեղափոխել են «Ասոշիեյթեդ պրեսի» Մոսկվայի գրասենյակ: Թեև օտար լրագրողները հսկողության տակ են եղել, և կատարվել է շատ խիստ գրաքննություն, այնուամենայնիվ, 1958-ին նրան հաջողվել է խուսափել դրանից և ԱՄՆ լուր հասցնել, որ Մաո Ծե Դունի և Խրուշչովի միջև առկա են տարաձայնություններ: Այս պատճառով Էսոյանին փտարել են երկրից: Արտգործնախարարությունն այս արարքը անվանել էր «*խորհրդային գրաքննության կոպիտ խախտում*»: Ճշգրիտ և ժամանակին արված եզրակացությունների համար Էսոյանին 1965-ին նշանակել են Մերձավոր Արևելքի գործողությունների պատասխանատու (Բեյրութում), 1973-ին՝ լրատվական հյուսիսասիական ծառայությունների վարիչ (Տոկիոյում): Էսոյանի ամերիկացի, ճապոնացի և այլ ազգությունների լրագրողները միշտ հիացել են նրանով, նրա վարակիչ հումորով: Նրանք միշտ մի նոր բան են սովորել նրանից: «*Նա շատ լավ էր հասկանում ճապոնական մթնոլորտն ու ճապոնացիների հոգեբանությունը*»,– նշել է «Ասոշիեյթեդ պրեսի» աշխատակից ճապոնացի Շիգեյոշի Կիմուրան[723]:

Վերջում նշենք նաև ճակատագրի բերումով Չինաստանում ծնված մի քանի հայորդիների: Շանհայում է ծնվել լեհական բանաստեղծ, արձակագիր, սցենարիստ, ռուս և հայ պոեզիայի թարգմանիչ **Անջեյ Մանդալյանը** (1926–2011), որի մայրը եղել է լեհուհի, հայրը՝ Մայիսյան ապստամբության մասնակից, գյումրեցի Թադևոս Մանդալյանը, որը մասնակցել է նաև Չինաստանի հեղափոխությանը, այնուհետև՝ Իսպանիայի քաղաքացիական պատերազմին: Նույն 1926 թվականին Պեկինում է ծնվել ճանաչված ռուսական քանդակագործ (ռակրափորագրիչ) **Իրինա Կարախանը**՝ խորհրդային ականավոր դիվանագետ Լևոն Կարախանի դուստրը:

1920-ականներին Շանհայում մեկ տարի բնակվել է հայ-վրացական ծագումով բիֆլիսեցի **Եվգենյա Թումանովան** (1899–1989)՝ ամերիկյան փառաբանված բալետի պարուհի Թամարա Թումանովայի (1919–1997) մայրը: Ի դեպ, հենց այստեղ էլ փոքրիկ Թամարան դիտել է Հեռավոր Արևելքում հյուրախաղերով հանդես եկող ռուս մեծ պարուհի Աննա Պավլովայի ելույթը և որոշել է նվիրվել բալետին...

Ամերիկահայ գիտնական, ռադիոֆիզիկոս, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ Չարլզ Հրաչ Փափազի (Փափազյան, 1918–2007) մանկությունն անցել է Չինաստանի հյուսիսում (հավանաբար՝ Շանհայում), որտեղ նրա հայրն աշխատել է գորգագործական արհեստանոցում: Հավանաբար նրա հետ կապ ունի **Չարլզ Մ. Փափազը**, որը 1942–1946 թթ. Չինաստանում արգելափակված է եղել ճապոնական համակենտրոնացման ճամբարում:

Ավելի ուշ, 1956-ին Շանհայում է ծնվել երգիչ, Ռուսաստանի վաստակավոր արտիստ **Կարեն Ռոբերտի Ակոպովը** (Հակոբյան), որը Պետերբուրգի Մուսորգսկու անվան օպերայի և բալետի պետական թատրոնի մեներգիչներից է:

[723] Հայագգի լրագրողը, որն առաջինն է հաղորդել Խորհրդա-չինական տարաձայնությունների մասին, բարգմ. Հ. Ծ. (Հակոբ Ծոլիկյան), «Ազգ», Երևան, 9.06.2012: Նրա մասին հայերեն առաջին անգամ տե՛ս Հայեր Հոնոլուլուի մէջ, «Յառաջ», Փարիզ, 29.03.1955:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ. 19–21-ՐԴ ԴԴ.

19-րդ դարից մինչև 20-րդ դ. սկիզբ: Հայ գրականության և հայ-չինական կապերի պատմության մեջ չափազանց ուշագրավ (եթե ոչ արտառոց) փաստ է այն, որ 19-րդ դարում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներից մի քանիսը հեղինակել են չինական թեմաներով թատերական գործեր: Դեռևս 1808 թվականին Սուրբ Ղազարի միաբանության թատրոնում ներկայացվել է «Խիկարայ ուղևորութիւնն ի Չինաստան» պիեսը[724] (անհայտ է՝ ինքնուրույն, թե թարգմանական ստեղծագործություն է): Մխիթարյաններից մի անանուն հեղինակ մոտ 1832-ին ստեղծել է «Հո-Համղի» (կամ «Պատկեր արդարության») պիեսը: Գործող անձինք են Շունք-Շե կայսրը, Թշիմ-Վայմ մանդարինը, Հո-Համղի զինվորականը, նրա որդիներ Յա-Նոն և Մի-Հոն, Շան քուրմը, Ուսա-Կուեն պաշտոնյան և ուրիշներ: Չինական թեմայով Մխիթարյանները գրել են նաև «Շունք-Շե կամ Սուտանում աստեղաբաշխը» և «Լեանգուս կամ Տիրասիրութեան զոհը» մելոդրամը[725]: Մեկ դար անց, հայ արձակագիր Ժենյա Արիստակյան-Պոլյակինան գրել է «Շանհայի գեղուհին» ժամանակակից կյանք պատկերող թատերախաղը. հրատարակվել է 1937-ին, Բոսթոնի «Հայրենիք» ամսագրում[726], հերոսներն են հայ Արսեն Ասլանը, ճապոնացի Նակահարան և մի քանի չինացիներ: Հետագայում Մխիթարյանների «Բազմավէպ» պարբերականը տարբեր առիթներով անդրադարձել է Չինաստանին, նրա պետական կարգին, մշակույթին, մասնավորապես՝ փիլիսոփայությանը[727]:

[724] Տե՛ս **Հարությունյան Ք.**, XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն, հատոր I (1801–1900), Երևան, 1980, էջ 8:

[725] Տե՛ս **Թերզիբաշյան Վ.**, Հայ դրամատուրգիայի պատմություն, 1668-1868, հատոր 1, Երևան, , 1959, էջ 153:

[726] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, թ. 5, մարտ, էջ 1-6, թ. 7, մայիս, էջ 14-25, թ. 8, յունիս, էջ 14-20:

[727] Տե՛ս Չինու մեծ պարիսպը, «Բազմավէպ», Վենետիկ, 1845թ. Գ, , էջ 184: Կոմփուկիուս, նույն տեղում, 1848, թ. Զ,էջ 343: Չինացւոց փիլիսոփայութեան վրայ, նույն տեղում, 1854, թ. ԺԲ, էջ 12: Չինաց եւ հնդկաց աւելորդապաշտութիւն յուսնի

19-րդ դարի կեսին Չինաստանի կյանքի տարբեր ոլորտներին անդրադարձել են Կալկաթայում հրատարակված «Ազգասէր» և «Ազգասէր Արարատեան» պարբերականները[728]: 1851-ին «Հյուսիսափայլում» Ստեփանոս Նազարյանցի թարգմանությամբ լույս տեսած արևելյան առակների մեջ[729] տեղ է գտել նաև մի «Չինէական առակ հիւրասիրութեան մասին» գրվածքը, թերևս առաջին չինական գրական երկը՝ թարգմանված հայերեն: Նույնպես Նազարյանցի թարգմանությամբ «Հյուսիսափայլում» լույս է տեսել Ֆրիդրիխ Շիլլերի «Թուրանդոտ Չինաստանի իշխանազուհին» (ըստ Կարլո Գոցցիի) երկը[730]:

1871-ին չինարեն հրատարակվել է հայ գրականության առաջին թարգմանական նմուշը՝ Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը Մխիթարյանների հրատարակած 36-լեզվյա ժողովածուում[731]: 1895-ին Թիֆլիսում հայերեն լույս է տեսել առաջին չինական գիրքը՝ «Չինական առասպելները» Տիրուհի Կոստանյանցի՝ ռուսերենից կատարված թարգմանությամբ, որտեղ ընդգրկված է հինգ առասպել:

20-րդ դարի սկզբին Չինաստան է այցելել թիֆլիսեցի Հեղինե Մելիք-Հայկազյանը, որը, լինելով զինվորականի դուստր, ճանապարհորդել է Հեռավոր Արևելքի երկրներում: Իր չինական տպավորությունները նա ամփոփել է «Մանջուրական սահմանի վրա (տուրիստուհու տպավորություններից)» ակնարկում[732]:

Արևելահայ և արևմտահայ մամուլը պարբերաբար անդրադարձել է չինական իրականության այլևայլ կողմերին[733]: Արևմտահայերից

[728] Տե՛ս Բանասիրականք. Քարք Չինէացւոց, «Ազգասէր», Կալկաթա, 28.02.1846, էջ 69-70: Առատաձեռնութիւն Չինէացւոց, նույն տեղում, 21.03.1846, էջ 92-93: Յաղթապակի (sic), նույն տեղում, 11.04.1846, էջ 118-119: Արգելական խրատք Չինէացւոց, թարգմանութիւն Մ. Ն., 17.04.1847, նույն տեղում, էջ 125-126:

[729] Տե՛ս Մի քանի ասիական առասպելք, «Հիւսիսափայլ», Մոսկուա, 1851, էջ 180-186:

[730] Տե՛ս «Հիւսիսափայլ», Մոսկուա, 1859, թիվ 3, էջ 169-282, թիվ 6, էջ 417-459:

[731] Տե՛ս Ներսէս Շնորհալի, Հաւատով խոստովանիմ, Վենետիկ, 1871, էջ 522-498:

[732] Տե՛ս Ոստիկ. Հայ կանանց ժողովածու, Ալեքսանդրապոլ, 1904, էջ 147-174:

[733] Տե՛ս, օրինակ, **Գ.**, Չինաստան, «Նոր-դար», Թիֆլիս, 3-4.11.1894: Չինական խնդիրը. Չինաստանի ներքին վիճակէն, թարգմ. Հ. Ռափայէլեան, «Բազմավէպ»,

առաջիններից մեկը Չինաստանի մասին ընդարձակ հոդվածով հանդես է եկել Զ. Ն. Պերպերյանը[734]: Ուշագրավ է միջնադդ լեզվից թարգմանված չինացի հեղինակ Լի Ճաո Պիի մի հոդվածը, հրատարակված Պոլսի «Արեւելեան մամուլում»[735]:

Հայ գրողներից չինական թեմային անդրադարձել է իր արևելյան հետաքրքրություններով հայտնի Ավետիք Իսահակյանը՝ «Չինական մի հին զրույց», «Չի-Հուանգ-Տի Բողդիխանը» լեգենդներով, «Լի-Թայ-Պո» և «Չինական Մեծ պարսպի երգը» արձակ բանաստեղծություններով: Նա թարգմանել է նաև մ. թ. ա. 8-7-րդ դարերի չինական մի բանաստեղծություն՝ «Ոչինչ է մարդը տիեզերքի դեմ...» սկսվածքով[736]:

Հայ մամուլում ժամանակ առ ժամանակ հրատարակվել են չինական գրականության, մասնավորապես պոեզիայի նմուշներ՝ թարգմանված միջնադդ լեզուներից. ֆրանսերենից՝ արևմտահայ, ռուսերենից՝ արևելահայ մամուլում[737]: Դեռևս 19-րդ դարում չինական միջնադարի ականավոր բանաստեղծ Լի Թայ-Պոյին թարգմանել է արևմտահայ բանաստեղծ Թովմաս Թերզյանը (հավանաբար՝ ֆրանսերենից): 1905 թվականին Ալեքսանդրիայի «Շիրակ» ամսագրում (թիվ 4 և 5) լույս է

Վենետիկ, 1899, հոկտեմբեր, հատոր ԾԷ, էջ 517-524: Մանրալուրք. չինացիներն ի՛նչ են ուտում և ի՛նչով բժշկում, «Արարատ», Էջմիածին, հոկտեմբեր, 1900, էջ 495:

[734] Տե՛ս Տարեցոյց 1903 թուականի եւ նուէր Կաղանդի, Կ.Պոլիս, 1902, էջ 195-215:

[735] Տե՛ս **Ly-Chao-Pee**, Չինացւոց տարապայման կերպով բազմանալուն պատճառները, «Արեւելեան մամուլ», Կ.Պոլիս, 17.01.1907, թիւ 3, էջ 79-87:

[736] Տե՛ս Իսահակյան Ա., Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 2, Երևան, 1974, էջ 280:

[737] Տե՛ս Չինական մարսէէզ. ազգային յեղափոխական նոր ոտզներգ, թարգմանեց Մ., «Հայրենիք», Պօսթըն, 21.11.1911: Իմաստուն դատաւորը (չինական հէքիաթ), «Խաբաբալա», Թիֆլիս, 21.07.1912, թ. 28, էջ 331: **Սու Վու**, Չինուորին բաժանումը, «Կոչնակ», Նիւ Եօրք, 20.07.1912, էջ 693: Արքայի արցունքները (չինական պատմուածք), «Մշակ», Թիֆլիս, 30.06.1920: Պատանուհիին պաղատանքը (չինական բանաստեղծութիւն), թարգմ. Վահրամ Սեւունի, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 27.04.1921: **Ցին-Քվան** (1049–1101), Սելամաղմութիւն, «Յառաջ», Փարիզ, 10.10.1926: Հատընտիր էջեր Լի-Թայ-Փէ (sic) բանաստեղծէն, «Անահիտ», Փարիզ, 1931, Սեպտեմբեր-Դեկտեմբեր, թ. 3-4, էջ 30-32, 1932, Յուլիս-Հոկտեմբեր, թ. 1-2, էջ 145-147: Փիլիսոփայի այրին (հինգերորդ դարու չին հեղինակէ մը), թարգմ. Արնու, «Հայրենիք», Պօսթըն, 14-15.04.1933: Չինական սիրային բանաստեղծութիւններ, «Յառաջ», Փարիզ, 22.10.1933: Չինական բանաստեղծութենէն, թարգմ. Կ., «Հայրենիք», Պօսթըն, 30.07.1935: **Յաս-Շանգ-Լինգ**, Սիաոլինգ պարուհին, թարգմ. Հ. Գ., «Լրաբեր», Նիւ Եօրք, 6.02.1940: Չինական բանաստեղծութիւն. Անհաւատարմութիւն, նոյն տեղում, 31.08.1940 և այլն:

տեսել հատվածներ մ. թ. ա. 5-րդ դարի հեղինակ Լաո-Ձզիի (Լաո Ցզի) «Ընթացքը և կանոնը» փիլիսոփայական գրությունից (հայտնի որպես «Դաո Դե Ցին». հազարամյակներ շարունակ այն եղել է չինական և առհասարակ արևելյան փիլիսոփայության հիմքերից մեկը): Թարգմանությունն իրականացրել էր Կ. Մ. Չավդարյանը՝ ֆրանսերենից[738]: Այն առանձին գրքով հրատարակվել է 1919-ին, Վիեննայում, Մխիթարյան միաբանության կողմից[739]:

Չին մեծ մտածող Կոնֆուցիուսին թարգմանել են Հարություն Սուրխաթյանը (արևելահայերեն[740]) և Հարություն Մրմրյանը (արևմտահայերեն[741]), իսկ չինական բանահյուսության տարբեր նմուշների թարգմանություններ է կատարել Հովհաննես Հովհաննիսյանը (ռուսերենից): Ֆրանսերենից չինական բանաստեղծությունների թարգմանություններ են կատարել ֆրանսահայ գրողներ Շավարշ Նարդունին[742] և Վահրամ Կաբավյանը[743]: Նույնպես ֆրանսաբնակ Գեղամ Խանամիրյանը թարգմանել է միջնադարյան մի շարք չին բանաստեղծների գործերից (Քո Քիու Եւ, Վեն Թինկ Հուան, Շը Քինկ, Չեն Ֆոնգ, Սու Շը, Թու Ֆու, Լու Յու), որոնք լույս են տեսել Փարիզի «Յառաջ» օրաթերթում և արտատպվել Բոսթոնի «Հայրենիքում»[744]: Ավելի ուշ պարսկագետ Ռուբեն Աբրահամյանը կատարել է իրանական և չինական էպոսների համեմա-

[738] Տե՛ս Ուղիին եւ ուղիղ գիծին գիրքը, «Շիրակ», Ալեքսանդրիա, 1905, ապրիլ, թիվ 4, էջ 255-259, մայիս, թիվ 5, էջ 349-354:

[739] Այս ստեղծագործությունն ամբողջապես հայերեն լույս է տեսել 2007-ին, Հայաստանում Չինաստանի դեսպանատան հովանավորությամբ, կինոբեմադրիչ, բանասեր Տիգրան Խզմալյանի թարգմանությամբ (**Լաո Ցզի**, Դաո Դե Ցզին («Բնական հումի ուսմունքը»), Երևան, «Նոյյան տապան», 2007): Կա նույն ստեղծագործության մի ավելի փոքր հրատարակություն ևս (տե՛ս **Լաո Ցզի**, Դաո դէ ցզին (Բնական հումի ուսմունք կամ Գիրք՝ ճանապարհի առաքինության մասին) և Սաճ դարաշրջանի պոեզիա, խմբ. Վ. Բարաքաթյանի, Երևան, 2010):

[740] Տե՛ս **Կօնֆուցիոս** (Չինական իմաստունը), խմբ. Լ. Ն. Տոլստոյի, կազմեց Ա. Բոլշնժէ, 1916:

[741] Տե՛ս Թա-Հիոյ կամ Վեհուսմունք Կոմփուկիոսի, «Վերջին լուր», Կ.Պոլիս, 18.11.1921:

[742] Տե՛ս «Նաւասարդ», Պուքրէշ, 1925, Բ պրակ, էջ 47:

[743] Տե՛ս «Մեծ զանգակի հոգին», «Արեւմուտք», Փարիզ, 25.03.1951, «Հրաշալի ճպուռը», նույն տեղում, 23.09.1951:

[744] Տե՛ս «Հայրենիք», Պօսթըն, 23, 25.05.1933, 13.06.1933, 4.07.1933:

տական ուսումնասիրություն[745]: Կատարվել են նաև Չինաստանին առնչվող այլ թեմաներով հրապարակումներ[746]:

1879 թվականին Մոսկվայում հրատարակվող «Փարոս Հայաստանի» պատկերազարդ ամսաթերթը «Տեսարանք աշխարհի» շարքով հրատարակել է չինական բնապատկեր ներկայացնող փորագրանկարներ՝ «*Չինական գիւղ Կոնբօն քաղաքի մօտ*» և «*Չինաստան — Քոլճայի ռուսական եկեղեցին*»[747]: Երկրորդ պատկերը վերաբերում է Ղազախստանի սահմանից ոչ հեռու գտնվող Կուլջա կամ Ինին քաղաքին: Առհասարակ, 19-րդ դարի վերջին Չինաստանում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձությունները երկիրը շարունակ պահել են համաշխարհային մամուլի լուսարձակի տակ: Հայ մամուլը ևս անմասն չի մնացել. մասնավորապես Թիֆլիսի «Նոր-Դարը» մշտապես անդրադարձել է չինաստանյան նորություններին (օրինակ, 1900 թվականի թերթի գրեթե բոլոր համարներում լուսաբանվել են Չինաստանի դեպքերը, չինաստանյան իրականության վերաբերյալ վերլուծությունները մի քանի անգամ տարբեր տարիների եղել են թերթի առաջնորդողները[748]): 19-րդ դարի վերջից հայ մամուլը անդրադարձել է նաև չինական թատրոնին[749]:

Չինական տարաշխարհիկությունը ոճավորված ձևով մուտք է գործել հայ հանրության տարբեր գեղարվեստական ձեռնարկներ: Այսպես, թիֆլիսաբնակ հանրային գործիչ, իշխանուհի Մարիամ Թումանյանը կազմակերպել է չինական դիմակահանդես: 1908-ին Թիֆլի-

[745] Տե՛ս **Արբահամեան Ռ.**, Շահնամէ եւ չինական վէպը, «Վէմ», Փարիզ, 1935, Յուլիս-Օգոստոս, էջ 52-59:
[746] Տե՛ս, օրինակ, Չինական ռազմագիտութիւն, թարգմ. Ա. Ս. Աւարայր, տես՝ **Պալեան Հ.**, «Սիւրիահայ տարեգիրք», Ա. տարի, 1929, Պէյրութ,էջ 41-42:
[747] Տե՛ս «Փարոս Հայաստանի», Մոսկուա, 1880, տեսր Բ., յուլիս-դեկտեմբեր, էջ 79-80:
[748] Տե՛ս, օրինակ, Չինաստանը և նրա կայսրը, «Նոր-Դար», Թիֆլիս, 13.10.1898: Չինական խնդիրը, նույն տեղում, 28.10.1900: Չինաստանը և Մակեդոնիան, նույն տեղում, 10.03.1901: Թիւրքիան Չինաստանում, նույն տեղում, 2.06.1901: Հաւատառորութիւնը Չինաստանում, նույն տեղում, 31.07.1901 և այլն:
[749] Տե՛ս Դերասանները Չինաստանում, «Արձագանք», Թիֆլիս, 27.07.1894: Թատրոն ի Չինաստան, «Արեւելք», Կ.Պոլիս, 25.01.1895: Չինացի դերասանները, նույն տեղում, 30.10.1905: Չինական թատրոն, նույն տեղում, 15.08.1906:

սի Խարփուխ թաղամասի հայոց ծխական դպրոցի աշակերտության օգտին նախատեսվել է կազմակերպել «*չինական հսկայական գբռսանք*», որի ժամանակ վիճակախաղի են դրվել չինական սպասք, ծաղկամաններ: «*Այգին զարդարուած կը լինի չինական ճաշակով՝ չինական հոյակապ կամար (ընդօրինակած Պեկինի դռներից), կիոսկներ-թէյարան, բուֆէտ, չինական խաղ, գուշակութիւն, մանկական խաղեր, բախտի տակառ, պտի-շուօ (ձիարշաւ), կարթ, կոնֆետտի, ծաղիկներ, սերպանտին, չինական հրախաղ*»[750]:

Հայ նկարիչներից չինական կերպարվեստին առաջինն առնչվել է Գեորգի Յակուլովը: 1905-ին ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ նա մեկնել է ռազմաճակատ: Մանջուրիայում էլ սկսվել է նրա հետաքրքրությունը կերպարվեստի հանդեպ: «*Չգտում է ամեն կերպ հենց տեղում պարզել, թե ինչո՞ւ չինական նկարչության մեջ տիրապետողը լազուր, կանաչ և դեղին գույներն են: Նրան հատկապես կլանում է լույսի առանձնահատկությունների գաղափարը, նրա ազդեցությունը բնության տարբեր կազմվածքների, կենդանական ու բուսական աշխարհների վրա, ինչպես և չին-ճապոնական գծանկարչության ոճի և ոիթմի ծագման խնդիրները: Նա այստեղ նկատում է, որ այդ ժողովուրդների նախասիրած գույները բխում են այն հիմնական տոներից, որ տվյալ բնությանը հատկանում է արեգակը*»[751]: Ավելի ուշ հայ գեղանկարիչ Տարագրոսը ստեղծել է չինական նկարաշար՝ բրնձի թղթի վրա պատկերելով չինական վերին դասակարգի և ցածր խավի տիպերի[752]:

Կոմիտաս վարդապետն իր «Պատմութիւն երաժշտութեան» հոդվածում մի ենթագլխով անդրադարձել է նաև չինական երաժշտությանը[753], մասնավորապես նշելով, որ «*Չինացիք եղել են ամենահանդարտ եւ անշարժ ժողովուրդ, այնպէս որ նոցա երաժշտութիւնը չի զարգացել, այժմ եւս նոյն դրութեան մէջ է, ինչ դրութեան մէջ է եղել 10*

[750] «Վտակ», Թիֆլիս, 13.04.1908:
[751] **Խաչաթյան Լ.**, Վախթանգով, Յակուլով և ուրիշներ, Երևան, 1984, էջ 119:
[752] Տե՛ս **Երնեանց Ա.**, Նկարիչ Տարագրոս, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եօրք, 27.04.1940, էջ 393:
[753] Տե՛ս **Կոմիտաս վարդապետ**, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ երկու գրքով, գիրք Ա, աշխատասիրութեամբ Մարիամ Մուշեղեանի, Երեւան, 2005, էջ 146-149:

դար սրանից առաջ»[754] և որ «*Չինական երաժշտութեան տեսակին է պատկանում եւ ճապոնականն ու մոնղոլականը եւ այլ բոլոր դասակարգերին պատկանող ժողովուրդները*»[755]:

Ըստ մի չճշտված տվյալի՝ հայ երաժիշտ, քամանչահար Սաշա Օգանեզաշվիլին (Օհանյան, 1889–1932) տիրապետել է տաս լեզվի, նաև չինարենին և նույնիսկ չինացիների համար իր դասախոսություններն արևելյան երաժշտության մասին նա կարդացել է չինարեն...

Հայ կինոյի հիմնադիր, կինոռեմադրիչ Համո Բեկնազարյանի վկայությամբ՝ իր հայրը՝ Հովհաննես Բեկնազարյանը, տիրապետել է մի շարք լեզուների, ընդսմին՝ չինարենի և ճապոներենի[756]: Ինչպե՞ս է սովորել նա այդ լեզուները 19-րդ դարի վերջի Երևանում՝ դժվար է ասել...

1912-ի ապրիլին Փարիզում կայացել է տեղաբնակ արևելքցիների մի հավաքույթ (հայեր, չինացիներ, հնդիկներ, եգիպտացիներ, ճապոնացիներ, թուրքեր, արաբներ, սիրիացիներ, կովկասցիներ, ալժիրցիներ)՝ պատվելու Սուն Յաթ-սենի չինական հանրապետական կոմիտեի հաղթանակը: Այս երեկոյին պարել է հայազգի նշանավոր պարուհի Արմեն Օհանյանը (Սոֆյա Փիրբուդաղյան, 1887–1976)[757]:

ՀԽՍՀ-ՉԺՀ մշակութային կապերը: Հայ-չինական մշակութային կապերը հատուկ զարգացում են ապրել խորհրդային ժամանակաշրջանում և հատկապես Չինաստանի ժողովրդական հանրապետության հռչակումից հետո: Խորհրդա-չինական բարեկամության արդյունքում հատուկ ուշադրություն է դարձվել մշակութային կապերին, և բոլոր ԽՍՀՄ հանրապետությունների, ներառյալ Հայաստանի, մշակութային քաղաքականության ծիրում ակամա հայտնվել է նաև Չինաստանը:

Արդեն սկսած 1920-ականներից՝ ժամանակ առ ժամանակ խորհրդահայ մամուլում լույս են տեսել չին գրականության նմուշներ և Չինաստանի մշակույթի վերաբերյալ հոդվածներ[758]: Բանաստեղծ Ազատ Վշտունին իր այսպես կոչված պրոլետարական բանաստեղծություններում անդրադարձել է Չինաստանի ժողովրդին («Պոեմ չինական», 1924), հանդես եկել ճապոնացիների ագրեսիայի դեմ՝ ընդդեմ չինացի աշխատավորության («Չապե», 1932), հայերենի ժխտական «չի» մասնիկը հաճախ խաղարկելով չին ժողովրդի անվան հետ («*Չինմաչինը երբեք չի ների անմեղ արյունը չիների...*»): Իսկ մեկ այլ պրոլետարաբանաստեղծ՝ Գևորգ Աբովը, Չարենցի «Լենինն ու Ալին» պոեմի նմանողությամբ գրել է «Լենինն ու Լի-Չաոը» բանաստեղծությունը[759]: Իրեն հատուկ հումորով Չինաստանի դեպքերին անդրադարձել է նաև անվանի երգիծաբան Լեո Կամսարը[760]:

1927 թվականին Թիֆլիսում կայացած «Վրաստանի և Չինաստանի մանուկ նկարիչները» ցուցահանդեսում հատուկ մրցանակի են արժանացել չորսամյա հայ մանուկ Ծովակ Համբարձումյանի (հետագայում՝ կոմպոզիտոր, 1923–2001) աշխատանքները[761]:

1927 թվականին Երևանի Պետական թատրոնում կայացել է Սերգեյ Տրետյակովի «Մոնչա՛, Չինաստան» պիեսի բեմադրությունը, որ իրականացրել է Արմեն Գուլակյանը[762]: Հայ պարարվեստի երախտավոր Սրբուհի Լիսիցյանը աշակերտների ուժերով 1920-ականներին

[754] Նույն տեղում, էջ 146-147:
[755] Նույն տեղում, էջ 149:
[756] Տե՛ս **Քեկնազարյան Հ.**, Հուշեր դերասանի և կինոռեժիսորի, Երևան, 1968, էջ 26:
[757] Տե՛ս **Bonakdarian Mansour**, Britain and the Iranian Constitutional Revolution, 1906-1911, Syracuse: 2006, էջ XX: Ի դեպ, ժամանակի հայ մամուլը մանրամասն անդրադարձել է Չինաստանի այդ նոր հեղափոխությանը (տե՛ս **Գալոյեան Սրբ.**, Նոր յեղափոխութիւնը Չինաստանում, «Հորիզոն», Թիֆլիս, 26.07.1913), իսկ Արշակ Չոպանյանը Ֆրանսիական հեղափոխությանը նվիրված իր հոդվածում հարկ է համարել հիշել, որ «*Մինչեւ հետաւոր Չինաստանին մէջ, Մանչու բռնապետութիւնը տապալել, Հանրապետութիւն հաստատել ուզող ազատականները Յուլիս 14ի բոցն ունէին իրենց առաջնորդ՝ խաւարահալած գործը կատարելու համար*» (**Չօպանեան Ա.**, Յուլիս 14, «Վերածնունդ», Փարիզ, թիվ 1, 14.07.1917, էջ 3):

[758] Տե՛ս, օրինակ, Չինաստանի ժամանակակից թատրոնը, «Խորհրդային Հայաստան», Երևան, 4.09.1927, **Ն. Մ.**, Չինական թատրոնը «Արվեստ, գրականություն, գիտություն», Երևան, 1928, թ. 10, էջ 80: **Ջեկ Չեն**, Ժամանակակից չինական թատրոնը, «Խորհրդային արվեստ», Երևան, 1.01.1937:
[759] Տե՛ս «Նոր ակոս», Երևան, թ. 11, 26.09.1924, էջ 192-193:
[760] Տե՛ս **Լեո Կամսար**, Չինաստան, «Խորհրդային Հայաստան», Երևան, 20.09.1924:
[761] Տե՛ս **Համբարձումյան Ծ.**, Դիմանկարներ և հուշեր, Երևան, 2004, էջ 139:
[762] Տե՛ս **Ռ. Տ.**, «Մոնչա՛, Չինաստան», «Խորհրդային Հայաստան», Երևան, 3.11.1927:

Երևանում բեմադրվել է «Կեցցե՛ կարմիր Չինաստան» սյուժետիկ պարը և «Չինական լապտերների տոնը» բալետը:

Արտառոցության է հասնում այն փաստը, որ 1920-ականների վերջին նորաստեղծ հայկական կինոստուդիան՝ «Հայկինոն», ծրագրել է նկարահանել Չինաստանի ներկային վերաբերող խաղարկային կինոնկար՝ Վրաստանի հետ համատեղ: Այն պետք է ներկայացներ չին ժողովրդի պայքարն ընդդեմ անգլիական իմպերիալիզմի: Թեման առաջարկել է ինքը՝ Ստալինը: Նախատեսվել է զբահանավերի նկարահանումները կատարել Վլադիվոստոկում, գյուղական և զանգվածային տեսարանները՝ Հարբինի շրջանում ու Չինաստանի այլ վայրերում: Այս ծրագրի հետագա ճակատագրի վերաբերյալ մանրամասնությունները բացակայում են[763]:

1950-ական թվականները ժողովրդական դարձած Չինաստանի հետ Խորհրդային Միության փոխադարձ բարեկամության, ընդգծված սիրալիրության և հաճախակի փոխայցերի առավել ակտիվ շրջանն էին (ինչը, անշուշտ, հաճախ կրում էր ձևական բնույթ): 1949-ին խորհրդա-չինական բարեկամության առթիվ խորհրդահայ երգահան **Վանո Մուրադելին** գրել է «Մոսկվա-Պեկին» երգը: Այս ժամանակաշրջանում որոշ խորհրդային ժողովուրդներ երևան են հանել չինացիների հետ իրենց ունեցած անցյալի կապերը (ցավոք, հայերը նման ձեռնարկով հանդես չեն եկել): Ակտիվորեն կատարվել են թարգմանություններ խորհրդային ժողովուրդների (այդ թվում և՝ հայ) գրականությունից (բնականաբար՝ ռուսերենից): Իրենց հերթին խորհրդային ժողովուրդներին պարտադրվել է հաճախակի ներկայացնել եղբայրական չինացի ժողովրդի մշակույթը, այնպես որ 1950-ականների խորհրդահայ մամուլում սկսել են հաճախ երևալ չինացին ու չինականը, իսկ փակ կյանքով ապրող Խորհրդային Հայաստանում պարբերաբար հայտնվել են չինական պատվիրակություններ: 1950-ի հուլիսին Երևանում կայացել է չինական արվեստի ցուցահանդես[764]: Երևանում 1951 և 1954 թթ. կազմակերպվել

[763] Տե՛ս Հայկինոյի արտադրությունները և նրա զարգացումը, «Խորհրդային Հայաստան», Երևան, 2.03.1927:

[764] Տե՛ս Չինական արվեստի ցուցահանդես, «Էջմիածին», Էջմիածին, 1950, թիվ Է-Ը, էջ 77:

է չինական կինոյի փառատոն, հյուրախաղերով հանդես է եկել չինական կրկեսը, այս ժամանակաշրջանում է գեղանկարիչ Սերգեյ Ստեփանյանը քանդակել չինացի կրկեսի արտիստներից մեկին («Դերասան Վան-Ֆուն-Կի»): Հայաստանում 1956-ին հյուրընկալվել է Չինաստանի կինոյի գործիչների պատվիրակությունը[765], 1959-ին՝ Չինաստանի երգի-պարի երիտասարդական համույթը[766]: 1951 թվականին Երևանի օպերայի և բալետի պետական թատրոնում բեմադրվել է ռուս կոմպոզիտոր Գլիերի՝ չինական կյանք պատկերող «Կարմիր կակաչ» բալետը (բալետմայստեր՝ Յազվինսկի): 1953-ին համայնավար Չինաստանի առաջնորդ Մաո Ծե Դունին վերջինիս 60-ամյակի առթիվ Խորհրդային Հայաստանի գորգագործները նվիրել են նրա դիմանկարով գորգ (հեղինակ՝ **Հ. Թաքակյան**): 1957-ին Չինաստանում ելույթներ է ունեցել հայ երգչուհի **Արև Բաղդասարյանը**: Նրա երկացանկում եղել է նաև «Երգ խաղաղության մասին» չինարեն պարերգը՝ Ան Սոնիի բեմադրությամբ[767]: Նույն թվականին Պեկինում չինարեն թարգմանությամբ լույս է տեսել հայ ականավոր ֆիզիոլոգ **Վիկտոր Ֆանարջյանի** «Ռենտգենոախտորոշում» աշխատությունը, որի ծանոթագրության մեջ ասված է. «*Տվյալ գրքի թարգմանությունը… մեծ իրադարձություն է*»[768]: Չինաստանում թարգմանաբար հրատարակվել է նաև մեխանիկ, ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս **Նագուշ Հարությունյանի** (1912–1993) «Սողքի տեսության մի քանի հարցեր» աշխատությունը: Այդ չինարեն թարգմանությունը պատճառ է հանդիսացել, որ երիտասարդ չինացի **Ու Ժույ-ֆինը** 1957-ին գա Հայաստան և չորս տարի ուսանի ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայում: Նա ուսանել է Նագուշ Հարությունյանի ղեկավարության ներքո՝ զարգացնելով հայ գիտնականի ներկայացրած տեսությունը և կիրառելով այն ջրատեխնիկական շինությունների հաշվումների մեջ: 1961-ին Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտում չինացի մասնագետը թեզ է պաշտպանել կամրջի ամ-

[765] Տե՛ս Հայ ազգային կեանք, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 19.01.1957, էջ 69:

[766] Տե՛ս «Սովետական արվեստ», Երևան, 1959, թ. 10, էջ 26-27:

[767] Տե՛ս **Ռ. Ավագյան**, Արև Բաղդասարյանի համերգները, «Կոմունիստ», Բաքու, 23.12.1957:

[768] **Կ. Ք.**, Հայ գիտնականի աշխատութիւնը չինարէն, «Զարթօնք», Պէյրութ, 3.04.1958:

բարտակի կառուցման նոր եղանակի մասին: Ենթադրվել է, որ նրա աշխատանքը լայն կիրառություն կստանա ՉԺՀ-ի ջրատեխնիկական շինությունների կառուցման մեջ[769]:

1959-ին Երևանի Արվեստի աշխատողների տանը տեղի է ունեցել հայ և չին պիոներների բարեկամության ակումբի հանդիսավոր բացումը: Հյուրերի մեջ է եղել նաև վերոհիշյալ Ու Ժույ-ֆինը[770]: 1960-ին Պեկինում, Շանհայում, Նանկինում և Գուանճոուում հանդես են եկել հայաստանցի մարզիկներ **Ալբերտ Ազարյանը, Ալբերտ Ազնավուրյանը, Ազնիվ Գրիգորյանը** և ուրիշներ[771]:

Հայաստանի Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և համագործակցության ընկերությունում տասնամյակներ շարունակ գրոծել է «Հայաստան-Չինաստան» ընկերությունը: Նրա ակտիվ աշխատողներից է եղել լրագրող **Կարեն Կարոյի Ավագյանը** (ծն. 1947), որը Կիևում ստացել է գիմնորական կրթություն և որպես օտար լեզու սովորել է չինարեն:

Գրական-մշակութային կապեր: Տակավին 1947 թվականին Խորհրդային Հայաստանում, որտեղ արտասահմանցի հյուրերը հազվադեպ էին, հյուրընկալվել է չինացի գրող **Մաո Դուն** կնոջ հետ: 1949-ին Պեկինում հիմնադրված «Սուլիան վենյի» («Խորհրդային գրականություն») ամսագրում հրատարակվել են նաև **Ավետիք Իսահակյանի** ստեղծագործություններից[772]: Շանհայում 1949 և 1955 թթ. լույս է տեսել «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիրքը՝ **Ճեն Ճուն-Ճունի** թարգմանությամբ (առաջինը թարգմանված էր անգլերենից, երկրորդը՝ Հակոբ Խաչատրյանի ռուսերեն փոխադրությունից), որտեղ, ի թիվս այլ գործերի, տեղ են գտել նաև Հովհաննես Թումանյանի «Խոսող ձուկը», «Կիկոսի մահը», «Պոչատ աղվեսը» և «Քաջ Նազարը» հեքիաթները: 1956-ին Պեկինում լույս է տեսել արձակագրուհի **Արաքսի** «Նորից

[769] Տե՛ս Երբ չինացին գիտնական կը դառնայ Հայաստանի մէջ, «Արաքս», Ալեքսանդրիա, 22.07.1961:
[770] Տե՛ս «Սովետական Հայաստան», Երևան, թիվ 5, մայիս, 1959, էջ 37:
[771] Տե՛ս Հայաստանի մարմնամարզիկները Չինաստանի մէջ, «Արաքս», Ալեքսանդրիա, 26.11.1960:
[772] Տե՛ս **Желоховцев А. Н.**, Из истории ознакомления китайской общественности с советской литературой (20-40-е годы), в кн. «Китайская культура 20-40-х годов и современность», Москва, 1993, էջ 258:

կյանքը» պատմվածքների գրքույկը, **Չարենցի** «Լենինն ու Ալին» վիպերգը, 1958-ին՝ «Հայկական պատմվածքներ» ժողովածուն (ընդգրկում է ստեղծագործություններ **Հովհաննես Թումանյանից, Ստեփան Զորյանից** և այլ հեղինակներից): 1959-ին Մոսկվայում չինարեն լույս տեսած «Խորհրդային Միության հանրապետությունների գրողների պատմվածքների ժողովածու» հատորում ընդգրկվել են նաև **Դերենիկ Դեմիրճյանի** երկերից (էջ 65-94): Հատկանշական է, որ եռակի հրատարակության են արժանացել **Վախթանգ Անանյանի** «Մանկությունը լեռներում» պատմվածքների ժողովածուի (1955, 1958, 1959) և «Սևանի ափին» վեպի (1957, 1958, 1959) չինարեն թարգմանությունները, որոնք ռուսերենից կատարել է **Ցաո Ճի-Ճաոն**: 1958-ի հրատարակությունը եղել է չինարենի նոր ուղղագրությամբ և 304 հազար տպաքանակով: Չճշտված տեղեկությունների համաձայն՝ չինարեն են թարգմանվել նաև Րաֆֆու ստեղծագործություններից[773]:

1957-ին Պեկինում լույս է տեսել «Սասունցի Դավիթ» էպոսի չինարեն թարգմանությունը՝ կատարված ռուսերենից: Այն վերահրատարակվել է 2012-ին: Այս թարգմանության շնորհիվ Պեկինի Հուշարձանների ճեմուղիում, որը նվիրված է աշխարհի ժողովուրդների էպոսներին, տեղադրվել է նաև հայոց դյուցազներգության հերոսի հուշարձանը, որի պատվանդանին գրված է «Սասունցի Դավիթ, Հայաստան»[774]:

Չին բանաստեղծ-թարգմանիչ, «Սասունցի Դավթի» չինարեն թարգմանության խմբագիր **Գե Քաոծյուանը** դեռևս 1946 թվականին չինարեն թարգմանությամբ հրատարակել է Իսահակյանի «Իմ հայրենիքին», «Հայրենիք», «Իմ սիրտն այնտեղ է», «Գնդապետ Զաքիյանի հիշատակին» և այլ բանաստեղծություններ: «*Ես շատ ուրախ եմ և հպարտ, որ պատիվ ունեմ թարգմանելու Ավետիք Իսահակյանի երկերը չինարեն: Մենք շատ սիրեցինք նրա՝ մեզ հարազատ պոեզիան, և այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում չին ընթերցողի համար*»,– գրել է նա[775]: Հետագայում Իսահակյանի բանաստեղծություններից

[773] Տե՛ս «Երջանիկ տարեցոյց», Ստանպուլ, 31րդ տարի, 1960, էջ 116:
[774] Տե՛ս Мы, наш Давид и мир, «Новое время», Ереван, 15.12.2012:
[775] **Եսայան Հ.**, Հայ գրականությունը օտար լեզուներով, «Գրական թերթ», Երևան, 11.05.1955:

հրատարակել է նաև Շանհայում[776]: Գե Բառոյյանը 1955 և 1985 թթ. այցելել է Հայաստան, առաջին այցելության ժամանակ չին գրողներ **Տաո Տաոյի** և **Լի Լինի** հետ միասին ծանոթացել Ավետիք Իսահակյանի հետ, նրա (ինչպես նաև Հովհաննես Թումանյանի) գործերից թարգմանել չիներեն[777]: Նա իր հայ գործընկերների միջոցով պարզել է Խաչատուր Աբովյանի, Հովհաննես Թումանյանի և Եղիշե Չարենցի ստեղծագործությանը վերաբերող մի շարք հարցեր՝ ենթադրելով, որ չինացի ընթերցողներին կհետաքրքրեն այս հայ գրողները: Գե Բառոյյանը հայ գրողներին անդրադարձել է խորհրդային գրողներին նվիրված իր չիներեն աշխատություններում: 1984-ին Պեկինում նրա խմբագրությամբ լույս է տեսել խորհրդային գրողների կենսագրական բառարան, որտեղ հայ գրականությունից ներկայացված են Մանուկ Աբեղյանը, Հակոբ Հակոբյանը, Վահրամ Ալազանը, Ակսել Բակունցը, Գուրգեն Բորյանը, Աշոտ Գրաշին, Դերենիկ Դեմիրճյանը, Նաիրի Զարյանը, Ստեփան Զորյանը, Ավետիք Իսահակյանը, Սիլվա Կապուտիկյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Վարդգես Պետրոսյանը, Համո Սահյանը, Սկրտիչ Սարգսյանը, Պարույր Սևակը, Գարեգին Սևունցը, Գրիգոր Տեր-Գրիգորյանը, Սերո Խանզադյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն և Գևորգ Էմինը[778]: 1957 թվականին Հայաստանում եղել է չին գրողների մեկ այլ պատվիրակություն[779]: Չինարեն են թարգմանվել նաև Ազատ Վշտունու՝ Չինաստանին նվիրված բանաստեղծությունները, Գևորգ Էմինի «Կարմիր հրապարակ» բանաստեղծությունը (1954, թարգմանիչ՝ Ճան Յույ) և Ստեփան Զորյանի պատմվածքներից: 1954-ին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության 5-ամյակի առթիվ Երևանի «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրում լույս են տեսել հետևյալ նյութերը՝ «Չին մեծ ժողովրդի գրականությունը», «Չինական կլասիկ բանաստեղծություններ», «Ժամանակակից չինական բանաստեղծություններ», Ռ. Հովհաննիսյանի «Չին ժողովրդի կերպարվեստը» և Ցական Շողենցի «Մենագրություն Այ Ցինի մասին» հոդվածները[780]: Չինական գրականությունը նմանապես հայերեն թարգմանվել է միջնորդ լեզվից՝ ռուսերենից: 1951 թվականից սկսած Երևանում լույս է տեսել չինացի գրողների երկու տասնյակից ավելի գիրք, հայաստանյան մամուլում ժամանակ առ ժամանակ հրատարակվել են թարգմանություններ չինական գրականությունից (խորհրդային տարիներին և հետագայում՝ ռուսերենից[781]), ինչպես նաև չին գրականության վերաբերյալ հոդվածներ[782]: Սփյուռքում նույնպես չինական գրականության նմուշները թարգմանվել են միջնորդ լեզուներից՝ անգլերենից կամ ֆրանսերենից[783]: Հայ թարգմա-

[776] Տե՛ս Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունները չիներեն, նույն տեղում, 28.08.1955:

[777] Տե՛ս Հանդիպում չին գրողների հետ, «Գրական թերթ», Երևան, 20.05.1955: Տե՛ս նաև՝ Չին-սովետական բարեկամության ընկերության դեղեգացիան Հայաստանում, «Սովետական Հայաստան», Երևան, 22.05.1955: Տե՛ս Ավետիք Իսահակյանի նամակը Գե Բառոյյանին (**Իսահակյան Ա.**, Երկերի ժողովածու վեց հատորով, հատոր 6, Երևան, 1979, էջ 390: Գե Բառոյյանի մասին մանրամասն տես՝ Литература и искусство свободной страны, «Огонек», Москва, но 2, 8.01.1950, էջ 7:

[778] Տե՛ս **Գե Բառոյյան**, խմբ., Սուչլիեն վեն հուե ցը դիեն (Խորհրդային գրականության բառարան), Պեկին, 1984, էջ 2, 7-8, 22-23, 35, 67, 74-75, 92, 95, 103, 110, 197, 210, 231-232, 234-235, 262, 277-278, 292, 299-300 (չիներեն):

[779] Տե՛ս Հանդիպում չին գրողների հետ, «Գրական թերթ», Երևան, 10.12.1957, 16.12.1957:

[780] Տե՛ս «Սովետական գրականություն և արվեստ», Երևան, 1954, թ. 10, էջ 89-106:

[781] Տե՛ս, օրինակ, **Շա Օտ**, Չինաստանում (բանաստեղծություն), «Երևան», Երևան, 11.09.1958: Չինական միջնադարյան նովելներ. **Չեն Ույտան-Յու**, Մարմնից հեռացած հոգին, Լի Յու-Յան, Զվարճասերն ու կախարդը, Նախասահմանված ամուսնություն, թարգմ. Հենրիկ Հակոբյան, «Գարուն», Երևան, 1982, թ. 9, էջ 75-81: Չինական պոեզիա (**Լո Քին Վան**, «Բանտախցում գովերգում եմ ծղրիդին», **Լի Քո**, «Միայնակ ապրում եմ լեռներում», **Չժան Ույտ**, «Իմ հյուրին չեմ թողնում լեռներում», **Դու Ֆու**, «Մենություն», **Լի Շան Ին**, «Իմաստունը», **Վեյ Չժուան**, «Եղյամի փայլ է», **Գուան Չզունցզի**, «Դու նույնն ես», **Այ Ցին**, «Հույսը»), թարգմ. Յուրի Սահակյան, «Կանչ», Երևան, 24.06.1996: **Լո Քին Վան**, «Բանտախցում գովերգում եմ ծղրիդին», թարգմ. Յուրի Սահակյան, նույն տեղում, 6.05.1998: **Չժուան Ցզի**, Թե ինչպես է ամենայն ինչ աշխարհում հավասարեցվում, թարգմ. Վարդան Ֆերեշեթյան, «Ռուբիկոն», Երևան, 2 (5), 2002, էջ 70-77: **Սուն Ծրան**, Պատրանք և իրականություն, թարգմ. Արմեն Կիրակոսյան, «Գարուն», Երևան, 2010, թ. 3-4, էջ 36-39: Չինական առակներ, թարգմ. Գրիգոր Ֆերեշեթյան, «ԳեղArm», Ստեփանակերտ, թիվ 56, 2015, էջ 90-93:

[782] Տե՛ս, օրինակ, Մեծ դրամատուրգ Գուան Խան-Ցինը, «Սովետական արվեստ», Երևան, 1958, թ. 8, էջ 60-61:

[783] Տե՛ս, օրինակ՝ Չինական առածներ եւ ասացուածքներ, «Զարթօնք», Պէյրութ, 18.05.1958: Չինական առածներ, նույն տեղում, 23.08.1952: Չինական բանաստեղծութիւն (Գաօ-Չէօ-Գի, Լօ-Սէն, Եէ-Շան, Հուան-Եօնկ), «Հայրենիք», Պօսթըն, 6.02.1977, **Տիկ. Չան Քայ Շէք**, Չուան Շօի կինը, «Ազդարար», Ստանպուլ, 15.04.1944: Չժան-Թիան-ի, Բարի օձը, «Երեսնամեակ «Երջանիկի»», 1959, Ստանպուլ, էջ 119: **Լի Շան-ին**, Ցզացզուանցներ, թարգմ. Նէլի Հայրապետեան, «Հանդէս», Թեհրան, Յուլիս, 2007, էջ 22-23:

նական գրականության ականավոր դեմքերից Կարպիս Սուրենյանը նույնպես անգլերենից է թարգմանել մ. թ. ա. 4-3-րդ դդ. չինացի փիլիսոփա Ճուան Ծեի (Չժուան Ցե) «Խոսքից անդին է բուն իմաստը» և «Ծեր ձկնորսը» ստեղծագործությունները[784]:

Խորհրդային տարիներին Հայաստանում չինարենի միակ մասնագետը տասնամյակներ շարունակ եղել է **Զինաիդա Ալեքսանդրովնա Ստաշևսկայան** (1931–2014): Տյեննծինում ծնված լեհ-ռուսական ծագումով Ստաշևսկայան ուսանել է անգլիական դպրոցում, այնուհետև ռուսերեն է դասավանդել չինական համալսարանում: ՉԺՀ-ի հռչակումից հետո ընտանիքով 1954-ին տեղափոխվել է ԽՍՀՄ, ապրել Սիբիրում, ապա՝ Մոսկվայում: Ամուսնանալով հայ հոգեբույժ Ալեքսանդր Հովսեփյանի հետ՝ Ստաշևսկայան 1957-ին հաստատվել է Երևանում: Տարիներ շարունակ աշխատել է ՀՀ գիտությունների ակադեմիայի օտար լեզուների գրադարանում: Կատարել է բանավոր թարգմանություններ չինարենից ռուսերեն[785]:

Ցավոք, այսօր էլ տակավին չկան չինարենից հայերեն թարգմանիչներ, և չինական գրականությունը հայերեն շարունակվում է լույս տեսնել միջնորդ լեզուներից կատարված թարգմանություններով (օրինակ, 2007-ին Երևանում հրատարակված «Կարմիր շուշան. չինական ժողովրդական հեքիաթներ» գիրքը կամ 2009-ին տպագրված Լաո Ցզիի (sic) «Ոսկյա հրի աղբյուրը» բանաստեղծական ժողովածուն): Եվ եթե առաջ այդ լեզուն ռուսերենն էր, ապա 21-րդ դ. սկզբին դարձել է անգլերենը[786]: Չինարենից հայերեն գեղարվեստական գործերի միակ թարգմանիչը մասնագիտությամբ հոգեբան, չինարենն ինքնուրույն ուսանած **Պավել Ճաղարյանն** է, որը «Գրեթերթ» պարբերականում, նաև համացանցային կայքէջերում հրատարակել է Ցզյա Ցիի «Չոն

[784] Տե՛ս **Սուրենյան Կ.**, Պապակ թարգմանական, Երևան, 2001, էջ 51-74:
[785] Անձնական հանդիպում, 2006, հոկտեմբեր: Նրա մասին մանրամասն տե՛ս **Затикян М.**, Мне бы вновь побывать в Тьянцзине, «Голос Армении», Ереван, 6.02.2007:
[786] Տե՛ս, օրինակ, ***Ժու Թան***, Կարմրակտուց ագռավի պատմություն, թարգմ. Սիլվա Հովակիմյան, «Նարցիս», Երևան, 2011, թ. 1, էջ 30-31: **Յու Ջիան**, Յան Ֆեյին, թարգմ. Լիլիթ Ղազարյան, «ԳեղArm», Ստեփանակերտ, թիվ 56, 2015, էջ 49-54:

բվին» բանաստեղծությունը, Լաո Շեի «Մահաբեր նիզակը» և Չժան Յունանի «Սուն Լուտանի հարվածները» պատմվածքները:

Իսկ ցայսօր առկա միակ գործերը, որ հայերենից չինարեն կատարվել են բնագրից, Հովհաննես Թումանյանի «Քարեկենդան» հեքիաթն է (առանձին գրքույկով հրատարակվել է 2009-ին, Երևանում՝ «Ուրախ հեքիաթներ քնելուց առաջ» մատենաշարով) և Էդգա Գրինի «Չեռքերը» պատմվածքը, որն ընդգրկվել է այդ ստեղծագործության բազմալեզու հրատարակության մեջ[787]: Երկուսի թարգմանիչն էլ Լիանա Եղիգարյանն է:

1998-ին Թայվանում լույս է տեսել անգլիացի հեղինակ Ֆիլիպ Մարտենի «Հատման վայրը. ուղևորություն հայերի միջով» գրքի չինարեն թարգմանությունը (թարգմանիչ՝ Ճեն Մինգվա): 2005-ին լույս է տեսել Լիո Գու Ճիի «Հայաստան» աշխատությունը (274 էջ), որը ներկայացնում է հայ ժողովրդի համառոտ պատմությունը և ներկան: Ամերիկահայ բանաստեղծուհի եւ թարգմանչուհի Դայանա Տեր-Հովհաննիսյանը 2007-ի աշնանը մասնակցել է Թայվանի Միջազգային պոեզիայի փառատոնին՝ փառատոնի տնօրեն, բանաստեղծ և կինոռեժիսոր Հուն Հունի հրավերով: Փարիզում կինոռեժիսուրա ուսանելիս վերջինս ծանոթացել է Սերգեյ Փարաջանովի ֆիլմերին, և նրա մեջ մշտական հետաքրքրություն է ստեղծվել Հայաստանի և հայ մշակույթի հանդեպ: Տեր-Հովհաննիսյանը, հրավիրված լինելով որպես հայ բանաստեղծ, ուղարկել է ինչպես իր հայապատում բանաստեղծությունները, այնպես էլ թարգմանություններ հայ պոեզիայից: Թայվանում նա ելույթ է ունեցել հայ պոեզիայի և պատմության վերաբերյալ, զեկուցման ժամանակ ցուցադրվել են լուսանկարներ: Նրա ներկայացրած բանաստեղծությունները նախապես թարգմանված են եղել չինարեն և պաստառին ցուցադրվել են երկու լեզուներով[788]: Դրանից մի քանի տարի անց, 2013-ի օգոստոսին Չինաստանի Սինին քաղաքում կայացել է Ծինհայ լճի պոեզիայի 4-րդ միջազգային փառատոնը, որին

[787] Տե՛ս **Գրին Է.**, Չեռքերը: Պատմվածք 35 լեզուներով, Երևան, 2010, էջ 122-123:
[788] Այս մասին տե՛ս մեր վարած հարցազրույցը՝ Հայ պոեզիան Չինաստանում, «Ազգ», Երևան, 4.12.2007:

ներկա է եղել նաև բանաստեղծ **Հրանտ Ալեքսանյանը**: Լույս է ընծայվել փառատոնի մասնակիցների ստեղծագործությունների ծավալուն անթոլոգիան, որը բացվում է Հրանտ Ալեքսանյանի բանաստեղծություններով[789]: Չինաստանում լույս տեսնող «Համաշխարհային բանաստեղծություն» գրական տարեգրքի 2015 թվականի հատորում, ի թիվս 100 երկիր ներկայացնող 263 պոետների, ընդգրկվել են նաև Հրանտ Ալեքսանյանի և մեկ այլ հայ բանաստեղծի՝ **Էդուարդ Հարենցի** ստեղծագործությունների չինարեն թարգմանությունները:

2016 թ. լույս տեսավ **Սերգո Երիցյանի** «Չինական ճեպանկարներ» գիրքը, որը ներկայացնում է հեղինակի ճամփորդությունները Չինաստան: Նույն թվականին է հրատարակվել նաև Երիցյանի կազմած «Իմաստության արկղիկ. հին չինական առակներ» գիրքը:

Ի տարբերություն գրական կապերի՝ կերպարվեստի բնագավառում դրանք անհամեմատ սակավ են: Դեռևս 1930 թ. հայ գեղանկարիչ Զարեհ Մութաֆյանը հանդես է եկել «Չինական ոգին արուեստին մէջ» հոդվածով[790]: Հայաստանի ազգային պատկերասրահում գործող Արևելքի երկրների ցուցասրահում կա չինական արվեստի ներկայացալի մի հավաքածու, որ ընդգրկում է 17-19-րդ դարերի ճենապակու, քարի ու փայտի փորագրություններ, բրոնզե արձանիկներ, զարդանկարված էմալե իրեր (գունագեղ ափսեներ, սկուտեղներ, սկահակներ) և կահույք (փորագրված պահարաններ, տակդիր, բազկաթոռներ և կլոր սեղան)[791]: Երևանում երբեմն ցուցադրվել են նաև չինացի նկարիչների գործեր: Երկու անգամ Հայաստանում ճանապարհորդել է պետերբուրգցի չին բնանկարիչ **Ծյան Չի-Լուն**, որը 1988-ին ցուցահանդես է ունեցել Երևանում՝ ներկայացնելով նաև Արարատ լեռը պատկերող երկու աշխատանք[792]: 1991-ին Երևանում կազմակերպվել

[789] Տե՛ս **Մելիքյան Ա.**, Հայ պոետը պոեզիայի չինական փառատոնում, «Ազգ», Երևան, 9.09.2013:
[790] Տե՛ս «Բազմավէպ», Վենետիկ, 1930, Նոյեմբեր, թ. 11, էջ 476-480:
[791] Տե՛ս Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան, 1992, էջ 261-262:
[792] Տե՛ս **Հարությունյան Հ.**, Չին նկարչի ցուցահանդեսը, «Սովետական արվեստ», Երևան, 1988, թ. 8, էջ 62-63:

է բնանկարիչ **Ֆենգ Քինի** բնանկարների ցուցահանդեսը,[793] այդուհետ Հայաստանը տեղ է գրավել նրա ստեղծագործական կենսագրության մեջ[794]: 1995-ին Պեկինում անհատական ցուցահանդես է ունեցել երևանցի լուսանկարիչ Ջավեն Սարգսյանը: 2002-ին Երևանում չինական մոտիվներով նկարաշար է ցուցադրել նկարիչ Տիգրան Մամյանը[795]: 2004-ին Երևան է այցելել Չինաստանի նկարիչների միության նախագահ, պրոֆեսոր Ճին Շանճուն, որը բարձր է գնահատել հայ նկարիչների ստեղծագործությունները[796]: 2007-ի սեպտեմբերին Չինաստանում Հայաստանի դեսպան Վահագն Մովսիսյանի, Լոս Անջելեսի «Արևելքի լուսարձակ» կազմակերպության նախագահ Հիդեո Սակատայի և Երևանի մանկական պատկերասրահի հիմնադիր տնօրեն Հենրիկ Իգիթյանի նախաձեռնությամբ Երևանում բացվել է արվեստի միջազգային փառատոն, որին մասնակցել են արվեստագետներ աշխարհի 20 երկրներից, այդ թվում և՝ Չինաստանից, Ճապոնիայից, Կորեայից, Թաիլանդից և այլն: Բուլղարահայ նկարիչ **Աստղիկ Մարկարովը** (Մարգարյան, ծն. 1961) չինարեն է ուսանել Պեկինի լեզվի ինստիտուտում, 1988–1993 թթ. սովորել է Հանգճոուի (Չինաստան) Գեղարվեստի ակադեմիայում, չինական ավանդության գեղագրութ-

[793] Նրա մասին տե՛ս մեր «Մշուշոտ բարձունքների նկարիչը» հոդվածը, «Անդրադարձ», Երևան, 12.03.1991:
[794] Տե՛ս, օրինակ, Sześć śiadów pędzla (CongLin Cheng, Bin Feng, Lu Luo, Chen Yun Wang, Zhuang HongYi, ChunYa Zhou) [2003, Poznán], էջ 77:
[795] Նկարչության մեջ հայ-չինական կապերին անուղղակիորեն կարող է առնչվել հետևյալ ողբերգազավեշտական իրողությունը: Նկարիչ Դմիտրի Նալբանդյանը մի վիթխարի կտավով պատկերել է բազմամարդ մի տեսարան, կենտրոնում՝ Ստալինը: Անհատի պաշտամունքի տարիներին կտավում պատկերված անձանց մի մասը մեկը մյուսի ետևից հայտարարվել են ժողովրդի թշնամի և գնդակահարվել: Այդժամ Նալբանդյանը այդ «թշնամիների» դեմքերը փոխարինել է չինացիների դեմքերով: Արդյունքում ստացվել է Ստալինն իր մի քանի զինակիցներով՝ շրջապատված մեծ թվով չինացիներով: Նկարը վերանվանվել է «Ստալինը մեծ Չինաստանի պատվիրակների հետ»: Հետագայում կտավը ցնփրել են Մաո Ծե Դունին: Այժմ Նալբանդյանի այդ ստեղծագործությունը զարդարում է Չինաստանի կոմունիստական կուսակցության գլխավոր կոմիտեի շենքի դահլիճներից մեկը (տե՛ս **Ерзинкян Ю.**, Веселые страницы из невеселого дневника, «Новое время», Ереван, 20.01.2007): Ի դեպ, Նալբանդյանը ստեղծել է նաև Մաո Ծե Դունի և Ստալինի հանդիպումը պատկերող կտավ, որը դրոշմվել է 1955-ին Չինաստանում թողարկված նամականիշի վրա:
[796] Տե՛ս «Կերպարվեստ», Երևան, 2004, թ. 5, էջ 2:

յան բաժնում: Նա անհատական ցուցահանդեսներ է ունեցել Չինաստանի քաղաքներում, մասնակցել գիտաժողովների, Չինաստանի և Ճապոնիայի մշակույթի նախարարությունների կողմից արժանացել կրթաթոշակի: 2013-ին Շանհայի հանրահայտ M50 արվեստի կենտրոնում գտնվող «Datian Art» ցուցասրահը նկարիչ Սևադա Գրիգորյանի մի աշխատանքն ընդգրկել է իրենց աշնանային կատալոգում:

Երևանցի նկարիչ **Պետո Պողոսյանի** ջրաներկ աշխատանքները բարձր են գնահատվում ջրաներկին նվիրված չինական խոշոր բիենալեներում (Շանհայ, Շենջեն, Ծինղաո, Թայվան), արտատպվում այդ բիենալեների կատալոգներում և շրջագայում Չինաստանի տարբեր ցուցահանդեսներում: Չինացիներին հատկապես գրավել է Պողոսյանի ոճը՝ չինական ժամանակակից ջրաներկի և եվրոպական ավանդական դպրոցի միաձուլումը: Ծինղաո քաղաքի պետական թանգարանը ձեռք է բերել նրա գործերից մեկը, նաև կազմակերպել Պողոսյանի ստեղծագործությունների ներկայացում-վերլուծություն՝ թեմայի ակտուալության և տեխնիկայի շուրջ: 2016-ի հոկտեմբերին Պետո Պողոսյանը մասնակցել է Չինաստանի Հանդան քաղաքի «Արևի լույս» արվեստի թանգարանում կայացած ջրաներկի երիտասարդ վարպետների միջազգային ցուցահանդեսին, որին մասնակցել են քսան չինացի նկարիչ և տասնական աշխարհի տարբեր երկրներից:

Առկա են որոշ կապեր նաև երաժշտության բնագավառում: Ինչպես նշվեց, չինական երաժշտությանը ծանոթ է եղել դեռևս Կոմիտաս վարդապետը: Հետագայում չինական երաժշտության վերաբերյալ առանձին ուսումնասիրություններ են գրել սփյուռքահայ երաժշտագետներ **Նվարդ Գալբագյանը** (1929-ին, հայերեն)[797] և **Րաֆֆի Շիկահերը** (1990-ական թթ., թուրքերեն):

1956-ին Վիեննայում չինական օպերայի հայտագիրն է դիտել ականավոր հայ գրող Կոստան Զարյանը, որն իր օրագրում կատարել է հետևյալ գրառումը. «*Չինական օպերան: Մարդկային մարմնի ճկուն*

[797] Տե՛ս **Գալբագեան Ն.**, Չինական երաժշտութիւն, «Ջուարթնոց», Փարիզ, 1929, թ. 6-7, էջ 335-336:

նությունը, թաքում երաժշտությունը և առասպելը հիանալիորեն շաղկապված: Մեծ խաղը: Աստվածայինը խառնված մարդկայինին: Վերջը վերջո՝ իսկական թատրոնը: Գաղափարների և ձգտումների հերոսական պայքարը: Ամեն ինչ իրականության բարձր հարկի վրա: Մեծ էպոսը:

Ի՜նչ հրաշալի դաս եվրոպական մեռնող մշակույթին:

Թատրոնից դուրս եկանք տպավորված, խոր կերպով ցնցված»[798]:

Հայ բեմի մեծանուն վարպետ **Վահրամ Փափազյանն** (1888–1968) իր «Հետադարձ հայացք» հուշագրության մեջ վկայել է, որ այցելել և, հավանաբար, ներկայացումներով հանդես է եկել չինական մի քանի քաղաքներում՝ Մանջուրիա, Հայլար, Հարբին, Ճանճուն, Ֆունճան, Մուկդեն, Անշան և Դալնի[799]: Ցավոք, ինչպես շատ դեպքերում, նա չի նշել իր այցելության կոնկրետ թվականը:

Որոշ կապեր են եղել Խորհրդային Հայաստանի և Չինաստանի երաժիշտների միջև: **Ալեքսանդր Վան Ջի Չենն** իր «Ռուս երաժիշտները Շանհայում (1920–1940-ական թթ.)» չինարեն աշխատության (2007) մեջ հիշել է այդ քաղաքում ելույթներ ունեցած **Արամ Խաչատրյանին**[800] և երգահան, թավջութակահար **Սարգիս Ազամալյանին** (անվան սկզբնատառը սխալմամբ նշելով S.[801]):

Դաշնակահար և մանկավարժ **Արամ Թաթուլյանի** (1915–1974) ստեղծագործական կենսագրության մեջ առանձնահատուկ էջ է նրա ուղևորությունը Չինաստան խորհրդային երևելի երաժիշտների խմբի կազմում: Այն ժամանակ նոր երաժշտական մշակույթի ձևավորման գործընթացում Չինաստանը զգացել է բարեկամական երկրների օգնության կարիքը: Տյենծինի կենտրոնական կոնսերվատորիայում Թաթուլյանն աշխատել է 1955–1957 թթ., մանկավարժական գործունեությունից բացի Պեկինում, Շանհայում, Տյենծինում հանդես է եկել

[798] **Զարյան Կ.**, Նավատոմար, Երևան, 1999, էջ 512:
[799] Տե՛ս **Փափազյան Վ.**, Երկեր հինգ հատորով, հատոր 2, Երևան, 1981, էջ 462:
[800] Տե՛ս 上海音乐学院出版社 (Շանհայ յինո յուե խուս յուան չու բան շե), Շանհայ, 2007, էջ 153, 196:
[801] Տե՛ս նույն տեղում, էջ 111, 125, 126, 129, 134:

համերգներով[802]: Ինչպես գրել է չինացի երաժշտագետ Հուան Պինը, «Խորհրդային մասնագետների ավանդը Չինաստանի դաշնամուրային արվեստի ձևավորման մեջ (1949–1966)» ավտոռեֆերատում, Թաթուլյանի դասերը, Չինաստանի տարբեր երաժշտական հաստատությունների ուսանողների ու դասախոսների համար վարած վարպետության դասընթացները նրանց առջև բացել են երաժշտության հիրավի ուրիշ աշխարհ: Դափնեկիրների այդ ցանկը գլխավորեց **Լյու Շիկունը** (ծն. 1939)՝ Լիստի անվան դաշնակահարների միջազգային մրցույթի (3-րդ մրցանակ, 1956 թ.) և Պ. Ի. Չայկովսկու անվան 1-ին միջազգային մրցույթի (2-րդ մրցանակ, 1958 թ.) դափնեկիրը: Ըստ Հուան Պինի, այդ դափնեկիրների (**Գու Շենհի, Լի Սինծյան, Յին Ճեն Ծուն, Հույ-Ծյան Քան** և այլք) շնորհիվ նոր Չինաստանի դաշնամուրային երաժշտությունը դուրս եկավ երկրի սահմաններից, աշխարհին ստիպեց նորովի նայել Չինաստանին: Ի դեպ, Լյու Շիկունը, ի նշան երախտագիտության իր ուսուցչի հանդեպ, 1958-ին այցելել է Հայաստան[803]: Նա ՉԺՀ-ի առաջատար դաշնակահարներից էր մինչև 1966 թվականի Մշակութային հեղափոխությունը, երբ արևմտյան երաժշտությունն արգելվեց և հազարավոր այլ արվեստագետների հետ Լյու Շիկունն էլ ձերբակալվեց՝ բանտում անցկացնելով վեց տարի:

Նշենք նաև, որ Մոսկվայի կոնսերվատորիայում հայ կոմպոզիտոր **Սերգեյ Բալասանյանին** են աշակերտել չինացի երգահաններ **Ճույ Վենը, Ճու Ծյան Էրը** և **Ծոու Լուն**:

Երևանցի կոմպոզիտոր **Վահրամ Բաբայանը** գրել է «Չինական սոնատ» ստեղծագործությունը: Կոմպոզիտոր **Էդուարդ Միրզոյանը** (1921–2012) 1958 և 1993 թթ. այցելել է Չինաստան, առաջին անգամ ԽՍՀՄ կոմպոզիտորների միության կողմից, երկրորդ անգամ՝ ԽՍՀՄ Խաղաղության ֆոնդի պատվիրակության կազմում, հանդիպումներ ունեցել չինացի գործընկերների հետ, հետագայում այդ մասին պատմել իր հուշագրքում[804]: Ի դեպ, 1999-ին Միրզոյանը գրել է «Տարվա եղանակներ» վոկալ շարքը (առաջին անգամ կատարվել է 2006-ի մայիսին, Երևանում): Այս երգերի երաժշտությունը չինական ոճի չէ, սակայն հիմնված է չինական պոեզիայի թարգմանությունների վրա (թարգմանիչներ՝ Հենրիկ Սևան և Դանիել Երաժիշտ): Կոմպոզիտորը վկայել է, որ Քո Ծյույիի «Գարուն» բանաստեղծության մեջ իրեն գնգել է «*Գարունը, բայց այլևս չի հպեցնի մազերիս ծյունը*» բանաստեղծական պատկերը[805]:

Երաժշտության մասին խոսելիս հարկ ենք համարում հիշատակել, որ ամերիկահայ մեծանուն երգչուհի **Քեթի Քերքերյանը** (1925–1983) երգել է աշխարհի քսան լեզուներով, նաև չինարեն: Նա որոշ չափով տիրապետել է խոսակցական չինարենին, իսկ շվեյցարաչինուհի երգահան Թոնա Շերչենը հատուկ նրա համար գրել է մի չինարեն մեներգ[806]:

2000 թվականին «Մետաքսի ճանապարհ» միջազգային երաժշտական ծրագրի շրջանակներում արդյունավետ համագործակցություն է տեղի ունեցել հայ կոմպոզիտոր **Վաչե Շարաֆյանի** և հռչակավոր չինացի թավջութակահար **Յո-Յո Մայի** միջև: Աշխարհի տարբեր երկրներում Յո-Յո Ման մոտ 15 անգամ հաջողությամբ կատարել է Շարաֆյանի «Արև, գինի և ժամանակի քամին» և «Ակացիայի երգի առավոտյան բուրմունքը» կամերային ստեղծագործությունները: Հատուկ Յո-Յո Մայի համար է Շարաֆյանը գրել «Համբարձվող քամանչա» ստեղծագործությունը: Ի դեպ, Վաչե Շարաֆյանի «Իմ բարձրագնա լուսին» ստեղծագործության մեջ հայկական դուդուկի հետ մեկտեղ գործածվել է նաև չինական շենգը և ճապոնական շոն[807], իսկ «Մի անգամ գեղեցիկ մարզագետնում» ստեղծագործության մեջ՝ չինական էրհու գործիքը:

[802] Տե՛ս **Ափոյան Ծ.**, Դաշնակահար Արամ Թաթուլյան, «Ազգ», Երևան, 28.09.2013:
[803] Տե՛ս «Սովետական արվեստ», Երևան, 1958, թ. 5, էջ 76:

[804] Տե՛ս **Мирзоян Э.**, Фрагменты, Ереван, 2005, էջ 144-145:
[805] Տե՛ս նույն տեղում, էջ 101:
[806] Տե՛ս Երգչուհի Քէթի Պէրպէրեան Պէյրութ կ՚այցելէ, «Այգ», Պէյրութ, 2.02.1973:
[807] Տե՛ս Վաչե Շարաֆյան, «Մի լեզուն չափազանց սկար է լայն հոգու համար» (հարցազրույցը՝ Արթուր Ավանեսովի), «Ազգ», Երևան, 7.04.2007:

2006 թվականին Newquantum ծածկանունով հանդես եկող մի չինացի երաժշտագետ չինական «Ֆիլհարմոնիա» հանդեսում հրատարակել է հինգ մասից կազմված հոդվածաշար՝ նվիրված հայ երգահանններին[808]:

Հիշենք նաև, որ մեր օրերում Երևանի պետական կոնսերվատորիայում տարբեր մասնագիտություններ են սովորում չին երիտասարդներ: Նրանցից աչքի է ընկել հատկապես երիտասարդ երգիչ (բաս) **Շի Շուանը** (ծնված 1982-ին): Նա ավարտել է Երևանի կոնսերվատորիան, սովորել ասպիրանտուրայում, որոշ ժամանակ եղել կոնսերվատորիայի օպերային ստուդիայի մենակատար: Շի Շուանը ելույթներ է ունեցել Հայաստանում և Ռուսաստանում, կատարել նաև հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Ի դեպ, հայկական երկացանկ ունի նաև չինացի երգիչ **Ցիան Հոնշին**. կատարում է «Հայաստան, երկիր դրախտավայր» երգը և Տիգրան Մանսուրյանի «Երկիր Նաիրի» վոկալ շարքը:

2007-ի դեկտեմբերի 21-27-ը Չինաստանում անց են կացվել հայ մշակույթի օրեր՝ «Հայ-չինական 2005–2010 թթ. մշակութային համագործակցության մասին» պայմանագրի շրջանակներում: Պեկին և Շենյան քաղաքներում ելույթներ են ունեցել Երևանի Մինջախաղի պետական թատրոնը՝ **Ժիրայր Դադասյանի** ղեկավարությամբ, մեներգիչներ **Իրինա Զաքյանը**, **Բարսեղ Թումանյանը**, «Կադանս» լարային համույթը՝ դաշնակահար **Արմեն Բաբախանյանի** գլխավորությամբ և դաշնակահարուհի **Արուս Ածեմյանը**: Պեկինի մայրաքաղաքային գրադարանում բացվել է Հայաստանի նկարիչների միության նախագահ **Կարեն Աղամյանի** գործերի ցուցահանդեսը: Պեկինում հայկական պատվիրակությանն ընդունել է Չինաստանի մշակույթի նախարար Սուն Ծյանճենը[809]:

Գուանճոու քաղաքում 2016 թվականի մարտի 26-30-ին կայացած Թատրոնի միջազգային ինստիտուտի հերթական ֆորումին (Ամանդական թատրոններ թեմայով) Հայաստանից ներկա է եղել երիտասարդ թատերագետ, թատերագիր **Անուշ Ասլիբեկյան Արծրունին**, որը հանդես է եկել հայ թատրոնի անցյալի ու ներկայի մասին զեկուցումով[810]:

2015 թվականին Չինաստանի Ծինան քաղաքում կայացած Պատմաբանների համաշխարհային 22-րդ կոնգրեսին մասնակցել է նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, որից հետո սկսվել է այդ Կոնգրեսին Հայաստանի պաշտոնական անդամակցության գործընթացը:

Վերոշարադրյալ փաստերը ցույց են տալիս, որ թեև անցած հարյուրամյակի ընթացքում առկա է հայ մշակույթի որոշակի ներկայացվածություն Չինաստանում և չինականի՝ Հայաստանում, տակավին երկու ժողովուրդների մշակութային փոխճանաչումը մնում է անբավարար: Գրեթե չկան երկու լեզուների թարգմանիչներ՝ միմյանց գրականությանը ծանոթանալու համար, տեղի չեն ունեցել մշակութային լայնակտավ միջոցառումներ (ցուցահանդես, փառատոն, հյուրախաղեր): Սակայն վերջին տարիներին Հայաստանում չինագիտության զարգացումը և Չինաստանում հայության ներկայության մեծացումը և նրանց համախմբվածության ուղղված քայլերը բավարար հիմքեր են տալիս, որ մշակույթի ասպարեզում նման մասնավոր բնույթ կրող և պատահական առնչությունները կարող են դառնալ ավելի համընդհանուր և կրեն պարբերական բնույթ:

[808] Տե՛ս «Ֆիլհարմոնիա», Պեկին, 2006, թիվ 8-12 (չինարեն): Տվյալը մեզ հայտնել է հայագետ Յաո Սյին (2010-ի նոյեմբերի 25-ի էլեկտրոնային նամակում):
[809] Տե՛ս Հայկական մշակույթը Չինաստանում, «Ազգ», Երևան, 26.12.2007:

[810] Զեկուցման տեքստը տե՛ս **Aslibekyan Artsruni Anush**, "The issue of the Origin of the Theatre in Armenia and a Reverberation to the Latest Tendency of Modern Armenian Theatre," "Collection of World Theatre Day 2016 Asian Traditional Theatre Forum," Guangzhou, China, 2016.03, էջ 186-192:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԱՊԵՐ. 20-21-ՐԴ ԴԴ.

1920–1950-ական թթ.: Հայ-չինական վաղնջական կապերը 20-րդ դարում նոր ընթացք են ստացել հատկապես Հայաստանի խորհրդայնացումից հետո[811]: 1920-ականներին՝ խորհրդա-չինական հարաբերությունների զարգացման արշալույսին, չին ժողովրդի պայքարը համակրող Կրեմլի քաղաքականությունը ստիպել է, որ խորհրդային վարչակարգում ապրող բոլոր ժողովուրդները պարտադիր կերպով բարեկամություն խաղան դասակարգային պայքարի ելած չին բանվորագյուղացիության հետ: Դա արտահայտվում էր մամուլում Չինաստանի խնդիրների վերաբերյալ հաճախակի երևացող հոդվածներով, չին գրականության թարգմանությամբ, չինական մոտիվների արծարծմամբ ազգային գրականությունների մեջ, ինչպես նաև՝ ի համակրություն Չինաստանի կազմակերպվող միտինգներով, փոխայցելություններով: Այս շարժումից զերծ չի մնացել նաև Հայաստանը: Խորհրդահայ մամուլն այս ժամանակաշրջանում լեցուն է եղել Չի-

[811] Իրականում արդեն 19-րդ դարում Ռուսաստանի մաս կազմած Հայաստանը և նրա հայազգի քաղաքացիները սկսել են աստիճանաբար ճանաչել և կապեր հաստատել կայսրության այդ արևելյան մեծ հարևան երկրի՝ Չինաստանի հետ: Այսպես, 19-րդ դարի վերջից բաքվեցի հայ գործարար Ալեքսանդր Մանթաշյանն իր գործարանի նավթը ուղարկել է մինչև Չինաստան և Ճապոնիա (տե՛ս Համառօտ կենսագրութիւն Մանթաշեան Ալեքսանդրի, «Բազմավէպ», 1897, թ. 12, էջ 593): Եղել են կապեր նաև գյուղատնտեսության բնագավառում: 1880-ին Թիֆլիսում հայերեն թարգմանաբար լույս է տեսել գիրք չինական եղինջի մշակության վերաբերյալ (տե՛ս **Մակաևին Գ.**, Չինական եղինճի (sic) մշակութիւնը, Թիֆլիս, 1888): 1896-ին Կովկասի գյուղատնտեսական ընկերությունը փորձել է Չինաստանից բրնձի կուլտուրան բերել Անդրկովկաս և մշակություն է սկսել նրա տարբեր շրջաններում (տե՛ս Ներքին տեսութիւն, «Արձագանք», Թիֆլիս, 28.06.1896): Հայաստանում բրինձ աճեցվել է Արաքս գետի ափին, Զանգիբասարի և Գառնիբասարի գյուղերում (տե՛ս Կովկաս, «Հորիզոն», Թիֆլիս, 3.06.1911), ինչպես նաև Արարատյան դաշտում: Հայաստանում բրնձի սահմանափակ մշակությունը տևել է մինչև 1958 թվականը: Ի դեպ, հաջողությամբ չի պսակվել նաև Հայաստանում թեյի մշակման փորձը 1950-ականների սկզբին, մասնավորապես՝ Իջևանի, Դիլիջանի և Շամշադինի շրջաններում (տե՛ս «Ճառագայթ», Ստեփանավան, 9.06.1951):

նաստանի մասին հոդվածներով[812]. ոչ միայն լրատվական, այլև վերլուծական: 1927-ի ապրիլի 17-ին Երևանի գավառային գործադիր կոմիտեի հրապարակում քաղաքի աշխատավորները, կարմիր բանակը և պիոներիան կազմակերպել են միտինգ՝ ի պաշտպանություն չին բանվորների: Այսօր միայն ծիծաղ կարող է առաջացնել նորաստեղծ բոլշևիկների կոչերը փոքրիկ և աղքատ Հայաստանի բնակիչներին՝ աջակցելու 400 միլիոնանոց չինացի աշխատավորներին: «*Երևանի աշխատավորության դեմքին կարելի է կարդալ Չինաստանի քաղաքացիական կռիվների ընթացքը,*– գրել է «Խորհրդային Հայաստան» թերթը:– *...Հայաստանի արհեստակցական միությունների խորհուրդն այսօր կոչ է անում ձեզ միշտ աչալուրջ հետևել քաղաքական անցուդարձին, հետևել Չինաստանի հեղափոխության ընթացքին և նյութապես աջակցել 400 միլիոն աշխատավորության ազատագրմանը: Կորչի՜ իմպերիալիզմը: Կեցցե՜ ազատագրվող Չինաստանը*»[813]:

1925–1927 թթ. չինական հեղափոխության՝ խորհրդային իրականության մեջ ունեցած արձագանքների և խորհրդային կողմի համակ-

[812] Տե՛ս, օրինակ, Չին կնոջ ընտանեկան և կենցաղային դրությունը, «Հայաստանի աշխատավորուհի», Երևան, 1927, թ. 9, էջ 23-24: Կնոջ դրությունը Չինաստանում, նույն տեղում, 1927, թ. 10, էջ 38-39 և այլն: Չինաստանի հանդեպ իր գաղութատիրական նկրտումները վերարծարծել փորձող Մեծ Բրիտանիայի վարչապետ Չեմբերլենի հասցեին խորհրդահայ մամուլում տպագրվում էին միամիտ սպառնալիքներ, օրինակ. «*Չեմբերլեն! զոռ տուր մարիդ, զորքիդ, դավադրություններիդ, բայց գիտցի՛ր, չես հաղթի հեղափոխությանը դու տականքին, չե՛ս ստանա կորցրած գաղութդ դու վերստին*» (տե՛ս «Հայաստանի աշխատավորուհի», Երևան, 1927, թ. 6-7, էջ 17. պատմությունը լռում է, թե Չեմբերլենը կարդո՞ւմ էր «Հայաստանի աշխատավորուհի» ամսագիրը): Ի պաշտպանություն եղբայրական ՉԺՀ-ի՝ կապիտալիստական աշխարհին ուղղված հայ աշխատավորների նմանատիպ անհեթեթ հոխորտանքները շարունակվել են հետագա տասնամյակներին նույնպես: Ահա պատառիկ ժանրին մոտեցող ևս մեկ նմուշ խորհրդահայ մամուլից. «*Երևանի Պահածոների գործարանի աշխատողները զայրույթով են համակված Հեռավոր Արևելքում ԱՄՆ-ի պրովոկացիոն գործողությունների հանդեպ: ...Տոմատի ցեխի վարիչ Սամսոն Հակոբյանն ասաց.*
–Ամերիկյան ագրեսորներն իրենց հերթական պրովոկացիան սկսել են Հեռավոր Արևելքում, մեր բարեկամ Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի դեմ: Դա մի ակտ է, որ հավասարապես ուղղված է մեր երկրի դեմ» (տե՛ս Ձեռքերդ հեռու Չինաստանից, «Երևան», Երևան, 17.09.1958): Պարզապես հիացնում է տոմատի ցեխի վարիչի քաղաքական հասունությունը...

[813] «Խորհրդային Հայաստան», Երևան, 19.04.1927, տե՛ս այս լուրի արձագանքը՝ Չին-հայկական եղբայրակցութիւն, «Յառաջ», Փարիզ, 10.05.1930:

րության վերաբերյալ մանրամասն գրել է հայազգի պարոհի և ֆրանսագիր գրող **Արմեն Օհանյանը** (Սոֆյա Փիրբուդաղյան, 1887–1976)՝ Խորհրդային Միություն կատարած ճանապարհորդությունից հետո գրած իր ուղեգրության մեջ, որի մի գլուխը վերնագրված է «Մոնչա՛, Չինաստան»[814]: 1928-ի հունվարին Երևանում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնց հասույթն ուղարկվել է Չինաստանի *«հակահեղափոխականության վերջին զոհերին»*[815]: Իսկ 1930 թվականին Երևան է ժամանել Չինաստանի բանվորներից և գյուղացիներից կազմված 40 հոգիանոց մի պատվիրակություն. Երևանի կայարանում գումարվել է միտինգ, որտեղ ճառեր են ասվել՝ փոխադարձ գովեստներով[816]:

Խորհրդային Միությունից, սկսած 1920-ականներից, պարբերաբար Չինաստան են գործուղվել տարբեր մասնագիտությունների մարդիկ, որոնց թվում և՝ հայեր: Թերևս ամենաառաջինը եղել է հայ առաջին ռազմական օդաչուներից մեկը՝ **Արթուր Վասիլիի Ղույմանը** (1896–1927), ծանոթ նաև որպես Արթուր Ռիլսկի: Հայկական առաջին ավիացիոն ջոկատի հրամանատարը 1923-ին երեք ամիս գտնվել է Չինաստանում՝ որպես խորհրդական աշխատելով Սուն Յաթ-սենի հետ չինական ավիացիայի կազմակերպման գործում: 1927-ին **Բաֆֆի Խիտարովը** (1901–1938) մոտ մեկ տարի գործել է Չինաստանում որպես Ինտերնացիոնալ կոմունիստական երիտասարդության գործադիր կոմիտեի ներկայացուցիչ: Եղիշե Չարենցի եղբայրը՝ տնտեսագետ **Սոդոմոն (Սերգեյ) Աբգարի Սողոմոնյանը** (1894–1945), 1927–1929 թթ. գործուղվել է Չինաստան՝ Գուանճոուի աշխատավորների համալսարան[817]: 1934-ին Չինաստանի տարբեր քաղաքներում ռուս ժամանակակից գրականության վերաբերյալ դասախոսություններ կարդալու իրավեր է ստացել հայազգի նշանավոր արձակագրուհի **Մարիետա Շահինյանը**[818]: Հետագայում, 1956-ին, նրա «Ճանապարհորդություն Խորհրդային Հայաստանում» գիրքը թարգմանվել է չինարեն[819]: 1936–1939 թթ. Չինաստանում է աշխատել մաշկաբան-վեներաբան **Կոռնելի Ռոմանի Աստվածատուրովը** (1903, Աստրախան – ?): Լեռնային ճարտարագետ-մետալուրգ, Հայաստանի վաստակավոր ճարտարագետ **Մարգար Գաբրիելի Քաղաւախովը** (Քաղաւախյան, 1907, Ղրիմ, Ռուստովի մարզ – ?) որոշ ժամանակ աշխատել Չինաստանում, որտեղ ղեկավարել է լեռնահարստացնող ֆաբրիկայի հիմնադրման աշխատանքները: 1955–1957 թթ. Չինաստանում գիտական գործուղում է անցել նավթագետ **Վռամ Հայկազի Վարդանովը** (1919–2004): Կոնստրուկտոր **Սերգեյ Աբայանը** (1928, Մախաչկալա – 2012) հնքնաթիռների ռադիոէլեկտրոնային համալիրների ապահովման վերաբերյալ դասախոսություններ է կարդալ Չինաստանի պաշտպանության նախարարության գլխավոր հնստիտուտներում (Պեկին, Նանկին, Հոֆեյ):

Ժողովրդական Չինաստան խորհրդային հայազգի գործիչներից այցելել է Անաստաս Միկոյանը, սակայն Մոսկվա վերադառնալով՝ պաշտոնազրկվել է Ստալինի կողմից, որը նրան մեղադրել է չինական այցելության գաղտնիությունը չպահելու մեջ[820]:

Իրենց հերթին, հատկապես Ժողովրդական Չինաստանի հռչակումից հետո, Խորհրդային Հայաստան են սկսել գալ չինական պատվիրակություններ. պաշտոնական Երևանը սկսել է ցուցադրել իր համակրական ժեստերը նորաստեղծ եղբայրական երկրին: 1952-ին Հայաստանի գրողների միությունում տեղի է ունեցել բողոքի միտինգ՝ ուղղված ամերիկյան ագրեսորների՝ Կորեայում և հյուսիս-արևմտյան Չինաստանում բակտերիոլոգիական զենքի կիրառման դեմ[821]: 1954-ին Երևանում կայացել է հանդիսավոր երեկո՝ նվիրված ՉԺՀ-ի 5-րդ տարեդարձին: 1955-ի փետրվարին Հայաստան է ժամանել ՉԺՀ է-

[814] Տե՛ս **Ohanian Armen**, Dans la sixième partie du monde, Paris, 1928, էջ 145-155:
[815] Ջանազան լուրեր, «Հայրենիք», Պոսթըն, 13.03.1928:
[816] Տե՛ս Չինացիները Երեւանի մէջ, «Յառաջ», Փարիզ, 12.08.1930:
[817] Տե՛ս **Զաքարյան Ա.**, Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը, էջ 32-33:

[818] Տե՛ս Մարիէտթա Շահինեան Չինաստան հրատիրուած, «Արեւելք», Սոսմպուլ, 15.05.1934:
[819] Տե՛ս **Маргарян А.**, Мариэтта Шагинян: творческий путь, Ереван, 1956, էջ 3:
[820] Տե՛ս **Монтефиоре С. С.**, Сталин: двор Красного монарха, Москва, 2005, էջ 616:
[821] Տե՛ս **Նազարյան Հ., Սեդրակյան Կ.**, կազմ., Հայաստանի գրողների միություն. 80-րդ հանգրվան (ժամանակագրություն), Երևան, 2014, էջ 72:

ներգետիկների պատվիրակությունը՝ Չինաստանի վառելանյութերի արդյունաբերության փոխնախարար Լյու Լան-բոյի գլխավորությամբ[822]: Նույն թվականի մայիսին Երևանում հյուրընկալվել է չինա-խորհրդային բարեկամության ընկերության պատվիրակությունը Պեկինի փոխքաղաքապետ Վան Հուն-Լունի գլխավորությամբ[823]: Այս նույն թվականին Երևանում տպագրվել է աշխարհագրագետ Կառլսար Ավետիսյանի «Ժողովրդական Չինաստան. տնտեսա-աշխարհագրական ակնարկ» աշխատությունը: 1956-ին Հայաստանում պաշտոնական այցով եղել է ՉԺՀ-ի փոխնախագահ Մարշալ Ճու Դեն: Նրա պատվին Երևանի օպերայի և բալետի թատրոնում համերգ է տրվել: Ճու Դեն այցելել է Էջմիածին, տարբեր ճարտարապետական հուշարձաններ, ծանոթացել ժողովրդական տնտեսությանը[824]: 1957-ին Հայաստան է այցելել չինացի բանվորների պատվիրակությունը[825] և այլն:

Խորհրդային հայազգի գործիչները և ՉԺՀ-ն: Խորհրդա-չինական կապերի զարգացմանը հատկապես նպաստել է հայազգի պետական գործիչ, խորհրդային դիվանագիտության և քաղաքականության խոշոր դեմք **Լև Միխայիլի Կարախանը** (Լևոն Միքայելի Ղարախանյան[826], 1889, Թիֆլիս – 1937), որը 1923–1927 թվականներին եղել է Ռուսաստանի Խորհրդային դաշնության լիազոր ներկայացուցիչը Չինաստանում[827]:

[822] Տե՛ս Համառոտ լուրեր Սովետական Հայաստանից, «Էջմիածին», Էջմիածին, 1955, թիվ Գ, էջ 54-55:
[823] Տե՛ս Չին-սովետական բարեկամության ընկերության դելեգացիան Հայաստանում, «Սովետական Հայաստան», Երևան, 22.05.1955:
[824] Տե՛ս Հայ ազգային կեանք, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եօրք, 23.06.1956, էջ 597:
[825] Տե՛ս Հայ ազգային կեանք, նույն տեղում, 11.05.1957, էջ 453:
[826] Կարախանի անունը հանդիպել է նաև Ղարախան ձևով (տե՛ս «Ընկեր Ղարախան», «Վերջին լուր», Կ.Պոլիս, 9.05.1921):
[827] Կարախանի նշանակման առթիվ դաշնակցական մամուլը գրել է. «*Մենք կ՚ուզէինք, որ հայ դեսպան մը ներկայացնէր միայն Հայաստանը՝ Չինաստանի մէջ եւ իր առաջին դեսպանական ճառին մէջ յիշատակէր Մամիկոնեաններ, որոնք Չինացի էին եւ պարիսպներէն դուրս փախելով, եկեր ապաստաներ էին Հայաստան: Հայ դեսպանը պիտի ըսէր Չինացիներուն, թէ հին հայերը նկատած են գիրենք «Աշխարհի ամենախաղաղասէր ժողովուրդ», այդ պատճառով մեծ յարգ ու պատիւ տուած են Մամիկոնեաններուն.... Չինացիք, ուրեմն, յանձին Մամիկոնէից, մեծ ծառայութիւն մատուցին Հայաստանի զինուորական գետնի վրայ, քո՛ղ Գարախանն ալ փոքր ծառայութեամբ*

Կարախանի կապերը Չինաստանի հետ ունեցել են հին արմատներ: Հարուստ փաստաբան Միքայել Կարախանյանի որդին սովորել է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, սակայն ուսումը դեռ չավարտած՝ ընտանիքը տեղափոխվել է Հեռավոր Արևելք՝ Վլադիվոստոկ և Հարբին: Այդ քաղաքներում էլ Կարախանը ներգրավվել է սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ, աշխատակցել տեղի ձախակողմյան մամուլին: Հարբինում ամուսնացել է Կլավդյա Սինևաայի հետ, ունեցել մեկ որդի՝ Միխայիլ: 15 տարեկանում մտել է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության շարքերը: 1910-ին ձերբակալվել է Հարբինում, սակայն նրա մոտ հանցանշաններ չգտնելով՝ չինական ոստիկանությունը շուտով ազատ է արձակել: Էքստեռն քննություններ հանձնելով՝ ընդունվել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանության բաժինը, սակայն չավարտած՝ ձերբակալվել է հեղափոխական գործունեության համար և աքսորվել Սիբիր: 1912-ին վերադարձել է Պետերբուրգ, աշխատակցել բոլշևիկյան մամուլին: 1915-ին նորից է բանտարկվել և աքսորվել Իրկուտսկ: Ազատվել է 1917-ին, գործուն մասնակցություն է ունեցել Սիբիրում ցարական իշխանության տապալմանը[828]: 1917-ին նա եղել է Լև Տրոցկու դեկավարած Պետրոգրադի խորհրդի նախագահության անդամ և քարտուղար, ապա՝ նույն խորհրդի ռազմա-հեղափոխական կոմիտեի քարտուղար: Մասնակցել է Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններին: Իշխանությունը բոլշևիկների գրավումից հետո, 1918-ի մարտին, հեղափոխական Կարախանն իր համար իսկ անսպասելի կերպով դարձել է դիվանագիտական գործիչ՝ Լենինի կողմից նշանակվելով ԽՍՀՄ արտասահմանյան գործերի ժողկոմ Գեորգի Չիչերինի տեղակալը: 1920-ին Չիչերինը Լենինին գրած նամակում դրվատել է Կարախանի ձիրքերը, նշել նրա՝ «*գործերի մեջ արագ և հեշտ կողմնո-*

մը փոխադարձած լինի պատմութեան մեր պարտքը հանդէպ «Ճենաց աշխարհին» քաղաքական գետնի վրայ» (**Մեծ Շնորհալի**, Չինաստան, Գարախան եւ Հայաստան, «Հայրենիք», Պոսթըն, 5.08.1924):
[828] Տե՛ս Լ. Գարախանի կեանքը, «Հայրենիք», Պոսթըն, 18.08.1934:

ռոշվելու հիանալի կարողության» մասին[829]: Ամեն անգամ արտաքին գործերի ժողկոմ Չիչերինի բացակայության ընթացքում վարել է Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը:

Կարախանը նախապես եղել է առաջին խորհրդային ներկայացուցիչը Լեհաստանում: Սակայն երբ Մոսկվան 1918-ին որոշել է վստահելի, փորձառու, կորովի և միաժամանակ կարող մի ներկայացուցիչ ունենալ Չինաստանում, ողջ ԽՍՀՄ-ում անկարելի է եղել գտնել Կարախանից լավագույնը: 1919 թվականին Կարախանն է ստորագրել ՌՍՖՍՀ կառավարության դիմումը՝ ուղղված չին ժողովրդին և Հարավային ու Հյուսիսային Չինաստանի կառավարություններին: Այն չինական մամուլում հրատարակվել է 1920-ի ապրիլին: 1923-ին Կարախանն ուղարկվել է Չինաստան: Միջազգային օրենքների համաձայն՝ նա դարձել է *«Պեկինի "դիվանագիտական մարմնի" ավագ»*[830]: Կարախանը երկրորդ կնոջ՝ դերասանուհի Վերա Ջենեևայի հետ երեք տարի բնակվել է Պեկինում (ունեցել է երկու զավակ՝ Իրինան և Յուրի, որը զոհվել է Երկրորդ աշխարհամարտի ժամանակ): Պեկինում Կարախանի և նրա աշխատակազմի տրամադրության տակ է դրվել նախկին ցարական դեսպանատան շենքը դիվանագիտական ավագի՝ Հոլանդիայի ներկայացուցչի միջոցով[831]: Չինաստանում Կարախանն ակտիվորեն բանակցել է կառավարության հետ, աչքի ընկնող դեր կատարել չին-խորհրդային միջպետական բարեհաճ հարաբերությունների զարգացման գործում: Պետք է հաշվի առնել, որ Չինաստանի կառավարությունը հրաժարվել է պաշտոնապես ճանաչել ԽՍՀՄ-ը, բայց այնուամենայնիվ դիվանագիտական հարաբերություններ է հաստատել նրա հետ: Երբ 1923-ին Կարախանն «արտակարգ պաշտոնով» մեկնել է Չինաստան, փարիզյան մամուլը, հենվելով Պեկինից ստացված հեռագրերի վրա, գրել է, որ չինական մամուլը խանդավառ տողերով է ծանուցել նրա ժամանումը, իսկ Չինաստանի արտաքին գործերի պաշտոնաթերթի թղթակիցը գրել է հետևյալը. *«Քարախան ոչ միայն Չինաստանի, այլ Ճապոնի մէջ բազմաթիւ բարեկամներ պիտի գտնէ: Չինացի ժողովուրդը չէ մոռցած այն ճշմարտը հեռագիրը, զոր 1919 Յուլիսին Քարախան կ'ուղղէր՝ հրաժարելով Չինաստանի մէջ ռեւէ մենաշնորհ պահանջելէ: Ինչ որ ալ ըլլայ իր գալուն պատճառը եւ ինչ ծրագիր ալ ունենայ, վստահ կարելի է ըլլալ, թէ իր նախկին դիմումը մեծապէս պիտի ծառայէ երկու երկիրներուն»*[832]:

Պեկինում Կարախանը պաշտոնավարել է երկրի համար դժվարին ժամանակներում, երբ Չինաստանում իրենց ազդեցությունն էին փորձում հաստատել Անգլիան, Ռուսաստանը և Ճապոնիան: Կարախանին հաջողվել է տարածել համայնավարական գաղափարներ և առաջ բերել հակաեվրոպական շարժում[833]: Նա կարողացել է շահել չինացի հեղափոխականների, հատկապես Սուն Յաթ-սենի հիմնած Գոմինդան կես-ազգայնական, կես-համայնավարական կուսակցության անմիջական գործակցությունը[834]: Պեկինին կատարած նրա մի շարք առաջարկները պատմության մեջ մտել են «կարախանյան դեկլարացիա» անունով: Չինական և Չինաստանի ռուսալեզու մամուլը գրեթե ամեն օր անդրադարձել է Կարախանին, այդ ժամանակաշրջանի մամուլը եղել է «կարախանյան», լույս են տեսել բազմաթիվ հարցազրույցներ, նրա մասին գրվել հոդվածներ, ժամանակագրություններ, անգամ՝ ֆելիետոններ, իսկ նրա անունը հիշվել է անգամ ժամանակի գեղարվեստական գրականության մեջ (օրինակ, ռուս վտարանդիական գրականության լավագույն գործերից մեկում՝ հայազգի Նինա Բերբերովայի «Նվագակցուհին» վեպում կարդում ենք. *«Պավել Խեորորովիչը մեկ ուրիշի հետ երկար հրապուրիչ խոսակցության էր սկսել որարդության, Կարախանի հրացանների հայտնի հավաքածո-*

[829] Տե՛ս **Остальский А.**, Лев Карахан: возвращение имени, «Спутник» (дайджест советской прессы), Москва, 1989, ноябрь, но 11, էջ 84:
[830] Հեռավոր Արևելքում, «Խորհրդային Հայաստան», Երևան, 30.08.1924:
[831] Տե՛ս Ընկ. Կարախանը չինական նախագահի մոտ, «Մարտակոչ», Թիֆլիս, 27.07.1924:

[832] Քարախան Ծայր. Արեւելքի մէջ. հայազգի դեսպանէն ի՞նչ կը սպասուի, «Նոր օր», Կ.Պոլիս, 19.10.1923:
[833] Տե՛ս Ո՞վ է Միխայլովիչ Գարախան, «Մարմարա», Կ.Պոլիս, 15.08.1925:
[834] Տե՛ս **Մասուրեան Ս.**, Չինական յորձանքին մէջ, «Յառաջ», Փարիզ, 15.04.1927:

ի, վայրի ցուլերի բազավորական որսի մասին»[835]): Խորհրդային մամուլում նույնպես ամեն ամիս Չինաստանից ստացված տեղեկություններում շեշտվել է Կարախանի անունը[836]: Երբ 1925-ին չինացիները խռովություններ են բարձրացրել ընդդեմ Ճապոնիայի և Մեծ Բրիտանիայի, անգլիական մամուլը Կարախանին է մեղադրել դրանց հրահրման մեջ և սրել է երկու տարի ընթացող արշավը Կարախանի դեմ: երբեմն հիշելով նրա հայ ծագումը (օրինակ, «Մորնինգ փոսթ» օրաթերթը Կարախանի մասին արտահայտվել է որպես «*գռեհիկ և ինտրիգան հայի*»[837]): Նրան հորջորջել են նաև «հայկական աղվես» և բնորոշել որպես «Ասիայում բրիտանական հետաքրքրությունների գլխավոր թշնամին»: 1926-ին իտալական «Պոպոլո դ'իտալիանո» թերթի թղթակիցը նրա մասին գրել է, որ Կարախանին ճանաչողները նրան համարում են արտակարգ հանճարի տեր մեկը, Եվրոպայի ուխտյալ թշնամին, ի բնե դիվանագետ, ինտրիգների մեջ թրծված և անողոք: Այդ հատկությունների պատճառով Կարախանի՝ Չինաստանի բոլշևիկյան գործունեությունը կրել է ծայրահեղ պայքարի բնույթ: Պեկինում նրա ազդեցությունը հակակշռող ոչ մի ուժ չի եղել: Կարախանի հեղինակությունը մեծ է եղել Պեկինում գործող օտարերկրյա դիվանագիտական շրջաններում, նա ազատ մուտք է ունեցել Չինաստանի նախագահի մոտ և իր վետոն է դրել նախարարների և կառավարիչների գործերում[838]: 1926-ին Կարախանը վերադարձել է Մոսկվա: Պեկինից տեղեկացվել է, թե իբր չինական կառավարությունն է հետ ուղարկել նրան՝ նկատելով, որ դեսպանը շատ է միջամտում Չինաստանի ներքին գործերին[839]: 1926-ից Կարախանը դեկավարել է ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության Հեռավոր Արևելքի գործերի վարչությունը, ինչպես նաև դարձյալ աշխատել որպես արտասահմանյան գործերի ժողկոմի (Լիտվինովի) տեղակալ:

1933-ին Կարախանը հրաժարվել է իր պաշտոնից, որի պատճառը, ենթադրվում է, եղել է Չինական արևելյան երկաթուղու վաճառքի հարցում նրա բռնած ընդդիմությունը[840]: Կրեմլը քննարկել է նրան Մոնղոլիայում կամ Ռումինիայում ԽՍՀՄ դեսպան նշանակելու տարբերակները[841]: Այնուհետև Կարախանը նշանակվել է ԽՍՀՄ դեսպան Թուրքիայում: 1935-ին հանդիպել է Մուստաֆա Քեմալի հետ[842], որի վրա, ըստ տեղեկությունների, ունեցել է շատ ավելի մեծ ազդեցություն, քան նույնիսկ Թուրքիայի վարչապետը[843]: Նա բացառիկ հեղինակություն է եղել ոչ միայն Չինաստանում և Թուրքիայում, այլև Մոնղոլիայում, Ճապոնիայում, Իրանում, Աֆղանստանում: Եղել է զարգացած մտավորական, արվեստասեր անձնավորություն: Տիրապետել է ութ արևելյան լեզվի, խոսել և գրել նաև չինարեն: ԽՍՀՄ-ում բնակված լրագրող Լուի Ֆիշերի կինը՝ Բերտա Մարկ Ֆիշերը, իր հուշերում «*գեղեցիկ սև աչքերով*» Կարախանին անվանել է «*ամենից համակրելին ականավոր բոլշևիկների մեջ*»[844]:

Կարախանը մշտապես հետաքրքրվել է հայաստանով և իր հայրենակիցներով[845]: Հայաստանի առաջին Հանրապետության տարի-

[835] **Քերբերովա Ն.**, Նվագակցուհին, ռուսերենից թարգմանեց Հ. Մուրադյանը, 2015, էջ 30: Տե՛ս բնագիրը՝ **Берберова Н.**, Чайковский. Железная женщина. Рассказы в изгнании. Набоков и его «Лолита». Москва, 2001, էջ 571:

[836] Քերենք մեկ օրինակ: «*ՊԵԿԻՆ, 10 հունիսի.– ....Պրոֆեսորների և ուսանողների հրավերով Կարախանը ճառով հանդես եկավ միհիստրական դահլիճում տեղի ունեցած բազմամարդ միտինգին: Դահլիճը զարդարված էր չինական և խորհրդային դրոշակներով և լի էր հազարավոր ուսանողներով, կրելով կարմիր կոկոններ իրենց օձիքների վրա: Կարախանը, որին դիմավորեցին ջերմ ոգևորությամբ, հայտարարեց, թե չինական երիտասարդությունը, պետք է ժողովրդի աչքերը բաց անի այն իմպերիալիստական պայմանագրերի նկատմամբ, որոնք խեղդում են Չինաստանին: Անհրաժեշտ է համեմատել այդ պայմանագրերը այն պայմանագրերի հետ, որ կնքվեց Չինաստանի և Ս. Խ. Հ. Միության միջև, որպեսզի կարելի լինի ընդունել վերջինիս որպես մի ճնշող այն բոլոր դեպքերում, երբ Չինաստանը գործ կունենա օտար պետությունների հետ: Կարախանի ճառը ծածկվեց աղմկալի ծափահարություններով*» (Չինխորհրդային համաձայնության շուրջը, «Մարտակոչ», Թիֆլիս, 13.06.1924):

[837] Քարախան եւ անգլ. մամուլը, «Ապագայ», Փարիզ, 20.06.1925:

[838] Տե՛ս Գարախան, «Նոր արշալոյս», Պուքրէշ, 18.03.1926:

[839] Տե՛ս Գարախան եւս կանչուած, «Յառաջ», Փարիզ, 3.09.1926:

[840] Տե՛ս Գարախան կը հրաժարեցուի Հեռաւոր Արեւելքի կոմիսարի պաշտօնէն, «Հայրենիք», Պօսթըն, 31.08.1933:

[841] Տե՛ս Մ. Վրոյլ, Կարճ, «Հայրենիք», Պօսթըն, 17.08.1934:

[842] Տե՛ս Գարախանը Մ. Քէմալի մօտ, «Հայրենիք», Պօսթըն, 11.10.1935:

[843] Տե՛ս Գարախան մտերիմ բարեկամ Քէմալի, «Յուսաբեր», Գահիրէ, 14.12.1934:

[844] **Fischer Bertha Mark**, My Lives in Russia, 1944, New York-London, p. 197.

[845] Սույն թեմայով մանրամասն տե՛ս **Զոհրաբյան Է. Ա.**, Լևոն Կարախանի առնչությունները Հայաստանի և հայկական հարցի հետ 1918–1921 թթ., «Քանքեր

ներին բազմիցս ընդունել է Լևոն Շանթի և այլոց գլխավորած պատվիրակությունները՝ բանակցելով հայկական հողերի հետ կապված հարցերի շուրջ: Ծանոթ է եղել Վահան Տերյանի հետ, իր ստորագրությամբ նրան հանձնել է վկայական: Լենինի հետ ստորագրել է Ռուսաստանի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու փաստաթուղթը: Հայտնի է, որ Լենինը հատուկ պատվիրակներ է ուղարկել Կարախանին, որպեսզի նրա միջոցով բանակցեին Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ ընդունելու իր առաջարկած սահմանները և իրեն թողնեին մնացյալ հողերն ապահովելու հարցը: Այս գործի առնչությամբ Երևան ուղարկած հեռագրերը, սակայն, մնացել են անպատասխան: Բանակցությունների այսօրինակ ձախողումից հետո վշտացած Կարախանն ասել է. «*Միավախիկ կորցրինք այն հազվագյուտ առիթներից մեկը, որը չի կրկնվի ժողովուրդների պատմության մեջ*»[846]: 1923-ին Կարախանը Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմի ժամանակավոր պաշտոնակատար եղած ժամանակ զբաղվել է արտասահմանից հայ գաղթականներին ԽՍՀՄ տեղափոխելու գործով[847]: Երբ 1925-ին Հեռավոր Արևելք այցելած ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ Սուրեն Ծայրագույն վարդապետ Մանուկյանը Պեկինում ներկայացել է խորհրդային դեսպանատուն, Կարախանը սիրալիր ընդունել է նրան և ամեն կերպ դյուրացրել նրա վերադարձը Հայաստան[848]: Երվանդ Մարգարյանն իր հուշերում վկայել է, որ Կարախանը (որին նա անվանել է Ստալինի աջ ձեռքը) օգնել է իր աներոջը՝ Սամիկոն Քարտաշյանցին, Մոսկվայից Չինաստան տեղափոխել մի խումբ հայերի, հույների և հրեաների[849]: 1929-ին նրա հետ տեսակցություն է ունեցել Ստամբուլի «Նոր լուր»

Երևանի համալսարանի», Երևան, 1989, թիվ 3, էջ 141-145: Այս մասին տե՛ս նաև թուրք պետական գործիչ Ալի Ֆուադ փաշայի հուշերում (Գարախանի եւ Չիչերինի հետ թուրք պատուիրակութեան բանակցութիւնները Մոսկուայի մէջ, «Զարթօնք», Պէյրութ, 4.04.1954, նույնը տես՝ «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1962, թ. 1, էջ 38):

[846] Մեջբերումն ըստ՝ **Մանուկեան Յակոբ**, Քեմանչիստ Ռուբէնի յուշերը, էջ 55-56:

[847] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 356:

[848] Տե՛ս Հայերը Ծայրագույն Արեւելքի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 27.09.1925:

[849] Տե՛ս Kavkaz.... էջ 61:

օրաթերթի բղթակիցը, որը հետաքրքրվել է Խորհրդային Հայաստանով: Կարախանը տեղեկություններ է տվել Հայաստանի տնտեսության մասին, անդրադարձել նաև ուղղագրության հարցին՝ ասելով, որ կողմ է լեզուների միօրինակությանը[850]: 1935-ի հունիսի 14-ին Վենետիկում Կարախանը երրորդ կնոջ՝ ռուս բալետի մեծաճում պարուհի Մարիա Սեմյոնովայի (1908–2010) հետ այցելել է Սուրբ Ղազար կղզի՝ Մխիթարյան միաբաններին, հետաքրքրությամբ և գոհունակությամբ դիտել վանքի մատենադարանը, տպարանը, հյուրասիրվել է միաբանների կողմից[851]:

Արևելքի խնդիրների մեջ ամենամեծ հեղինակությունը համարվող այս խորհրդային ականավոր դիվանագետը 1937-ին հետ է կանչվել Մոսկվա և կայարանում իսկ ձերբակալվել ու դարձել ստալինյան անհատի պաշտամունքի զոհ՝ գնդակահարվելով 1937-ի դեկտեմբերի 19-ին[852]:

Թեև Կարախանը 1956-ին հետմահու լիովին արդարացվել է, տասնամյակներ շարունակ նրա անվան շուրջ լռություն է պահպանվել, նրա անունը չի հիշատակվել դասագրքերում, աշխատություններում, հանրագիտարաններում: Նրա մասին հրատարակված է հայերեն առանձին մենագրություն[853], սակայն այն գրվել է խորհրդային տարիներին, ուստի՝ խիստ միակողմանի, այնպես որ այս քաղաքա-

[850] Տե՛ս «Ապագայ», Փարիզ, 28.12.1929:

[851] Տե՛ս Լեւոն Գարախան..., «Բազմավէպ», Վենետիկ, թիւ 6, յունիս, 1935, էջ 224: Գարախան Վենետիկի վանքին մէջ, «Յուսաբեր», Գահիրէ, 16.07.1935:

[852] Տե՛ս Գարախան հրացանազարկ, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 25.12.1937, էջ 1360: Ըստ իտալական «Կորիերա դելա սեռա» պարբերականի, Կարախանի դեմ գլխավոր մեղադրանքը եղել է կնոջ՝ Մարինա Սեմյոնովայի կողմից: Նա, իբր, ծանր ամբաստանություններ է կատարել, որոնց Կարախանը ոչինչ չի կարողացել պատասխանել: Իսկ անգլիական մի թերթ վկայել է, որ Կարախանը գնդակահարությունից մեկ ժամ առաջ ամուսնալուծվել է, իր իսկ՝ Ստալինի կարգադրությամբ, որպեսզի հայտնի արտիստուհին չարժանանա «պավաճանի կնոջ» խարանին (տե՛ս Ո՞վ մատնեց Գարախանը, «Արեւելք», Ստանպուլ, 3.01.1938):

[853] Տե՛ս **Լիպյան Հ. Տ.**, Սովետական ականավոր դիվանագետը, Երևան, 1978: Տե՛ս նաև **Остальский А.**, Лев Карахан..., էջ 82-88: **Капица М. С.**, Лев Карахан, «Видные советские коммунисты – участники китайской революции», Москва, 1970, էջ 5-21: **Pollard Robert T.**, China's Foreign Relations, 1917-1931, New York, 1970, p. 124-130, 155-137, 179-188 և այլն:

կան գործչի կյանքը և գործունեությունն արժանի են համակողմանի ուսումնասիրության:

Կարախանի հետ մեկտեղ խորհրդա-չինական հարաբերությունների բարելավմանը մեծապես նպաստել է նույնպես հայազգի և նմանապես ստալինյան բռնության զոհ մեկ այլ դիվանագետ՝ **Հակոբ Դավթյանը** (1888, Վերին Ագուլիս, Նախիջևան – 1938, Մոսկվա): Վերջինս 1922–1924 թթ. խորհրդական է եղել Չինաստանում ԽՍՀՄ ներկայացուցչության, որի լիազոր ներկայացուցիչներ Կարախանի և Իոֆֆեի հետ արդյունավետ գործունեություն է ծավալել երկու երկրների միջպետական հարաբերությունների ամրապնդման գործում: Դավթյանը որոշ ժամանակ եղել է նաև ԽՍՀՄ լիազոր ներկայացուցիչ Հնդկաչինում, հետագայում պաշտոնավարել է Փարիզում՝ ԽՍՀՄ դեսպանատանը:

1926-ին Գուանճոուում գործող ԽՍՀՄ դեսպանատանը գեներալ Բլյուխերի ռազմական խորհրդականն է եղել հայազգի ռազմական գործիչ, ծնունդով արցախեցի **Վլադիմիր Քրիստափորի Թախրովը** (Ռուբեն Արտեմի Տեր-Գրիգորյան, 1894, Արցախ – 1938, Մոսկվա)[854]: Կրթությունը ստացել է Բաքվում և Կիևում: Ներքակալվել է սոցիալ-դեմոկրատների հետ համագործակցության համար, մասնակցել Ռուսաստանի քաղաքացիական պատերազմին: Թախրովը 1924–1927 թթ. Չինաստանում գործել է Տերունի անվամբ: Եղել է խորհրդային ռազմական խորհրդատուների հարավ-չինական խմբի շտաբի կոմիսար: 1935–1937 թթ. եղել է ԽՍՀՄ ներկայացուցիչը Մոնղոլիայում: 1938-ին, նախորդ երկու հայազգի գործիչների պես, նա ևս գնդակահարվել է[855]:

1930–1933 թթ. Չինաստանում խորհրդային հետախուզության հատուկ բաժնի ղեկավար է եղել խորհրդային բանակի քաղաշխատող

[854] Տե՛ս **Чудодеев Ю., Климов А., Наумов С.**, сост., На китайской земле: воспоминания советских добровольцев 1925–1945, Москва, 1977, էջ 138:

[855] Տե՛ս **Кочик В. Я.**, Советская военная разведка: структура и кадры, «Свободная мысль», Москва, 1999, № 84, с. 92-93. **Усов В.**, Советская разведка в Китае. 20-е годы XX века, Москва, 2002, էջ 374: **Лурье В. М., Кочик В. Я.**, ГРУ: дела и люди, Москва, 2002, էջ 130:

Հայկ (Գայ) **Ղազարի Թումանյանը** (1901, Թիֆլիս – 1971, Մոսկվա): 1929-ից աշխատել է Կարմիր բանակի հետախուզական բաժնում և գործուղվել է Չինաստան: Այստեղ զբաղվել է ագիտացիոն, հետախուզական, դիվերսիոն և պարտիզանական ակտիվ աշխատանքով: 1930-1940-ական թթ. Չինաստանում պաշտոնավարել են նաև հետևյալ հայ և հայազգի պետական և ռազմական գործիչները: 1934-ին Ուրումչիում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսն է եղել **Գեորգի Աբրահամի Ապրեսովը** (1890–1941): Նույն Ուրումչիում 1936–1938 թթ. որպես ռազմական խորհրդական է ծառայել **Գարեգին Մովսեսի Ծատուրովը** (1892, Խնձորեսկ – 1981)՝ Գեորգի Շանին անունով: 1937-ին Չինաստանում ճապոնական ներխուժման ժամանակ առաջին խորհրդային կամավորներից մեկը, որ մեկնել է չինացիների կողմից կռվելու, եղել է օդաչու, ԽՍՀՄ վաստակավոր փորձարկող-շտուրման Կոնստանտին Հովհաննեսի Մալխասյանը (1916, Մոսկվա – 2007, Երևան): Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր **Անդրանիկ Աբրահամի Ղազարյանը** (1904, Շուշի – 1992, Սիմֆերոպոլ) 1945-ին մեկ տարուց ավելի աշխատել է որպես Չինաստանի ազգային բանակի մարզիչ, ուսուցանել և փոխանցել է խորհրդային բանակի ռազմական փորձը: Չինական փոքր քաղաքներից մեկում տեղակայված նրա զորամիավորումը նաև պայքար է մղել լեռներում թաքնված ճապոնացի «մմբարկուների» դեմ՝ կարգուկանոն հաստատելով: Պարգևատրվել է ՉԺՀ-ի «Յոն-գույ» մեդալով[856]:

Հայազգի չինագետներ: Հայ-չինական կապերի մասին խոսելիս հարկ է հիշել, որ ռուսական չինագիտության զարգացման մեջ կարևոր ավանդ ունեն առնվազն վեց հայազգի գիտնական՝ պատմաբաններ և բանասերներ:

Ժամանակագրորեն խորհրդային հայազգի առաջին չինագետը հայ-լեհական ծագումով **Գեորգի Իվանի Սաֆարովն** է (Սաֆարյան, 1891, Պետերբուրգ – 1942): 1926-ին ուղարկվել է Չինաստան՝ «կուսակցական աշխորի»՝ նշանակվելով Չինաստանում ԽՍՀՄ մշտական

[856] Տե՛ս Сыны Армении в Манджурии, «Коммунист», Ереван, 26.11.1945:

ներկայացուցչության առաջին քարտուղար: Հրատարակել է «Չինական 1905 թվականը» (Լենինգրադ, 1925), «Դասակարգերը և դասակարգային պայքարը չինական պատմության մեջ» (Մոսկվա-Լենինգրադ, 1928), «Ակնարկներ Չինաստանի պատմության» (Մոսկվա, 1933) և այլ ռուսերեն աշխատություններ:

Հայկ Գեղամի Պապայանը (1901, Թիֆլիս – 1937, Կարելիա) 1920–1936 թթ. նա ուսանել է Մոսկվայի Արևելյան ինստիտուտում, 1933–1935 թթ. եղել չինական գրականության գրաքննիչ: 1930-ին Լենինգրադում լույս է տեսել Հայկ Պապայանի և Մ. Կոկինի «Ծին-ծյան. հին Չինաստանի ագրարային կազմը» ռուսերեն աշխատությունը:

1930-ականներին Մոսկվայի Արևելքի աշխատավորների կոմունիստական համալսարանի աշխատողներից է եղել թարգմանչուհի, չինագետ **Եվգենյա Ստեփանի Կևորկովան** (1907, Չինաստան – 1937), որը չինարեն գրվել է Են Դյու-յույ, Յան-Ճին-Յուն և Յան-Տյուն-Յուն անուններով: 1937-ին ձերբակալվել է և գնդակահարվել: Արդարացվելու վերաբերյալ տվյալներ չկան[857]:

Մոսկվայի Արևելքի ինստիտուտի չինագետներից է եղել **Յուրի Միսաքի Գաբուշյանցը** (1930, Բաքու – 2012, Մոսկվա), որը մասնագիտացել է 20-րդ դ. Չինաստանի պատմության և քաղաքական մշակույթի ուսումնասիրության մեջ: Ավելի քան 150 գիտական հոդվածների և հրապարակումների հեղինակ է: Չինարենից ռուսերեն է թարգմանել մի շարք պատմական փաստաթղթեր (Պի Դա-Չաոյի «Ընտիր հոդվածներ և ճառերը», Մոսկվա, 1965, նաև՝ «1919-ի մայիսի 4-ի շարժումը Չինաստանում. փաստաթղթեր և նյութեր», Մոսկվա, 1969 և այլն):

Պատմական գիտությունների դոկտոր **Ազեմ Վահագի Մելիքսեթովը** (1930, Մոսկվա – 1996, անդ) 1976-ից եղել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի պրոֆեսոր: Նա ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի հայտնի չինագետներից էր, Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի

[857] Տե՛ս **Васильков Я. В.**, Люди и судьбы: биобиблиографический словарь востоковедов – жертв политического террора в советский период (1917-1991), Санкт Петербург, 2003, էջ 198:

երկրների ինստիտուտի Չինաստանի պատմության ֆակուլտետի դեկանը (1989–1994 թթ. եղել է այդ ինստիտուտի տնօրենը): Դասավանդել է «Չինաստանի նոր պատմություն. 1644–1911», «Չինաստանի նոր պատմության աղբյուրներ և նյութեր», «Չինաստանի նորագույն պատմության աղբյուրներ և նյութեր», «Գոմինդանի սոցիալական և տնտեսական քաղաքականությունը (1927–1949)», «Գոմինդանի սոցիալական և տնտեսական քաղաքականությունը Թայվանում» առարկաները: Հեղինակ է «Բյուրոկրատական հաղթանակը Չինաստանում» (1972), «Գոմինդանի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը Չինաստանում (1927–1949)» (1977), «Չինաստանը ճապոնական ագրեսիայի դեմ պատերազմի ժամանակաշրջանում» (1988, համահեղինակ), «Չինական հեղափոխության հաղթանակը. 1945–1949» (1989), «Չինաստանի պատմություն» (1998, համահեղինակ) ռուսերեն գրքերի և այլ աշխատությունների: 1985-ից մինչ մահը Մելիքսեթովը եղել է չին-ռուսական բարեկամության ընկերության փոխնախագահը: 1989-ից եղել է «Կիտայովեդենիե» («Չինագիտություն») ռուսերեն հանդեսի գլխավոր խմբագիրը:

Ղրիմահայերից սերած ականավոր ֆիզիկաաշխարհագրագետ, տեղանվանագետ **Էդուարդ Մակարի Մուրզաևը** (1908, Սիմֆերոպոլ – 1998, Մոսկվա), որ Մոնղոլիայի աշխարհագրության մասնագետ էր, 1955-ին Մոսկվայում հրատարակել է «Հյուսիս-արևելյան Չինաստան. ֆիզիկա-աշխարհագրական նկարագրություն» աշխատությունը:

Օսեթիայի հայերից սերված բանասեր, լեզվաբան **Իրինա Տիգրանի Զուգրաֆը** (ծնյալ Բաբիևա, ծն. 1931, Մոզդոկ) աշխատել է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի արևելագիտության բաժնում: 1962-ին թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել 12-14-րդ դարերի չինարենի քերականական յուրահատկությունների մասին, 1979-ին դոկտորական՝ միջին չինարենի մասին: Չինարենից ռուսերեն կատարել է թարգմանություններ («Տասնհինգ հազար մետաղադրամ. միջնադարյան չինական հեքիաթներ», 1962, «Դասական կոնֆուցիականություն», հատոր 2,

2000), գրել բազմաթիվ գիտական աշխատություններ («Մոնղոլա-չինական ինտերֆերենցիա», 1984, «Պաշտոնական վենյաները», 1990 և այլն)[858]:

Հայազգի թարգմանիչ **Էդուարդ Վասիլիի Նիկողոսովը** (1933–1994) ռուսերեն է թարգմանել հին չինական փիլիսոփայական երկեր: Հետաքրքրական է, որ չինական «հարյուր դպրոցների պայքարի» ժամանակաշրջանի (մ. թ. ա. 6–3-րդ դարեր) Միճ ծյա ուղղության ճշանավոր երկերից մեկը՝ Հունսուց Լուի տրակտատը, ռուսերեն երկու անգամ թարգմանել են հայորդիներ՝ Էդուարդ Նիկողոսովը մասնակիորեն՝ 1973-ին և Արտյոմ Կարապետյանցը՝ 1974-ին: Վերջինս՝ Մոսկվայի պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտի գիտաշխատող, լեզվաբան, տեքստաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արտյոմ Միխայիլի Կարապետյանցը** (ծն. 1943, Մոսկվա), խորհրդային և ռուսական չինագիտական դպրոցի ականավոր դեմքերից է: Նա համարվում է հին Չինաստանի փիլիսոփայության և գիտության ինքնատիպ հետազոտողներից մեկը, որ ստեղծագործաբար կիրառում է չինագետ Վ. Ս. Սպիրինի՝ հին չինական տեքստերի ընթերցման և մեկնաբանման կառուցվածքա-ճշանաբանական մեթոդիկան: Հեղինակ է տասնյակ աշխատությունների[859]: 1997-ից Կարապետյանցը Հարավ-արևմտյան Չինաստանի մանկավարժական ինստիտուտի պատվավոր դոկտոր է:

[858] 1987-ին Երևանում տեղի ունեցած հայ լեզվաբանությանը նվիրված երկրորդ միջազգային գիտաժողովում Իրինա Զոգրաֆը հանդես է եկել «Ժամանակակից հայերենը և նոր հնդկաարիերենը (մի քանի կառուցվածքա-տիպաբանական համապատասխանություններ)» զեկուցմամբ, ամուսնու՝ ականավոր լեզվաբան Գեորգի Ալեքսանդրովիչ Զոգրաֆի (1928–1993) հետ համատեղ:

[859] Տե՛ս Временная организация китайского потока речи: Дис. канд. филол. наук., Москва, 1969. Изобразительное искусство и письмо в архаических культурах, «Ранние формы искусства», Москва, 1972. Древнекитайская философия и древнекитайский язык, «Историко-филологические исследования», Москва, 1974. Материалы по истории китайского языка. Москва, 1977. Китайское письмо до унификации 213 г. до н. э., «Ранняя этническая история народов Восточной Азии», Москва, 1977. Формально-лингвистический анализ однородности текста 'Чжуан-цзы', «Проблемы восточной филологии», Москва, 1979. Начало и фиксация стихотворной традиции в Китае. X научная конференция «Общество и государство в Китае»,

Ի դեպ, հատուկենտ չինացիներ էլ հետաքրքրվել են հայ ժողովրդով: Դեռևս 1929 թվականին Սորբոնի համալսարանի հնագիտության ուսուցիչ, չինացի պրոֆեսոր **Շենգ Չենգը** (հավանաբար՝ Շեն Ճեն) այցելել է Երուսաղեմ, ապա՝ Սիրիայի հայ համայնքները, ընկերակցությամբ Օննիկ Մազլումյանի: Նա տեսակցել է Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի հետ: Մտադիր է եղել այցելել նաև Կ.Պոլիս, Վիեննա և Վենետիկ՝ ուսումնասիրություններ կատարելու հայոց պատմության շուրջ[860]: Ցավոք, այս գործչի մասին այլ աղբյուրներից տեղեկություններ չենք հայտնաբերել:

ՉԺՀ-ՀՀ միջպետական կապեր: Հայ-չինական հարաբերությունների նորագույն փուլը ճշանավորվում է 1991 թվականին Հայաստանի Հանրապետության հռչակմամբ:[861] Հայկական երրորդ հանրապետության հռչակումից շատ չանցած դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել ՀՀ-ի և ՉԺՀ-ի միջև, նոր թափ են առել առևտրատնտեսական հարաբերությունները, որոնք օրեցօր ընդլայնվում են և ընդգրկում նորանոր բնագավառներ, մասնավորապես՝ տնտեսական, մշակութային և կրթական:

Չինաստանը 1991-ի դեկտեմբերի 27-ին պաշտոնապես ճանաչել է Հայաստանի անկախությունը: Չինական կառավարության ներկա-

Тезисы и доклады, чаасть 1, Москва, 1979, стр. 48-58. Формирование системы канонов в Китае, «Этническая история народов Восточной и Юго-Восточной Азии», Москва, 1981. Ба гуа как классифи-кационная схема, «XIII научная конференция «Общество и государство в Китае». Ч. I. М., 1982. К проблеме структуры 'И цзина'. «XIV научная конференция. Общество и государство в Китае», ч. 1, Москва. 1983. Учебное пособие по литературному китайскому языку, 1985. Чунь Цю и древнекитайский «историографический» ритуал, «Этика и ритуал в традиционном Китае», Москва, 1988. Древнекитайская системология: уровень протосхем и символов. М., 1989 (препринт). Проблема структуры 'Чжоу и'. «XXIV научная конференция 'Общество и государство в Китае», Ч. I., Москва, 1993. Теория 'пяти элементов' и китайская концептуальная прото-схема, «Вестник МГУ». Сер. 13. Востоковедение. 1994. № 1:

[860] Տե՛ս «Եփրատ», Հալեպ, 4.09.1929: Չինացի փրոֆեսորին այցելությունը հայկական շրջաններում, «Հայրենիք», Պոսթըն, 5.10.1929:

[861] ՀՀ և ՉԺՀ միջպետական հարաբերություններին դիվանագիտական, տնտեսական և կրթական դրսևորումներում մանրամասն անդրադարձել է Մ. Էրյանն իր «Հայ-չինական բարեկամության 20-ամյա փորձն ու հետագա համագործակցության հեռանկարները» մագիստրոսական ատենախոսության մեջ:

յացուցիչ և Ռուսաստանում Չինաստանի դեսպան Վան Ճանծինը և Հայաստանի արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանը 1992-ի ապրիլի 6-ին Երևանում ստորագրել են համաձայնագիր՝ երկու երկրների միջև դիվանագիտական կապեր հաստատելու նպատակով: Նույն տարվա հուլիսին Երևանում բացվել է Չինաստանի դեսպանատունը՝ առաջին օտարերկրյա դեսպանատունը Հայաստանում, և հուլիսին ՀՀ կառավարության և ՉԺՀ-ի միջև համաձայնագիր է կնքվել մշակույթի, կրթության, առողջապահության, սպորտի և զբոսաշրջության բնագավառներում համագործակցելու մասին, սկսել է գործել նաև ՉԺՀ առևտրատնտեսական ներկայացուցչությունը: ՀՀ-ում ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպաններ են եղել Ճան Սիդին (1993–1995), Յան Կեճունը (1995–1998), Ճու Ճաոշունը (1998–2002), Հունգ Ծյուն (2002–2007) և Ծյան Ճանճունը (2010-ից):

1992-ից սկսած ՀՀ և ՉԺՀ ղեկավարները պետական բարձր մակարդակով կատարել են ավելի քան 30 փոխայցելություն: Չինաստան են այցելել հայ քաղաքական այրերը՝ նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյանը (1996, մայիս), Ռոբերտ Քոչարյանը (2004, սեպտեմբեր), Սերժ Սարգսյանը (2010), փոխնախագահ և վարչապետ Գագիկ Հարությունյանը (1992, հուլիս), մշակույթի նախարարներ Հակոբ Սովսեսը (1993, ապրիլ), Արմեն Սմբատյանը (1997, մարտ), Ռոլանդ Ծառուկյանը (2000), Հովիկ Հովեյանը (2004, սեպտեմբեր), Հասմիկ Պողոսյանը, առողջապահության փոխնախարար Դումանյանը (1994, հունիս-հուլիս), ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը (1996, դեկտեմբեր), պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը (1998, հոկտեմբեր և 1999, օգոստոս), տարածքային կառավարման և ենթակառուցվածքների համակարգող նախարար Հովիկ Աբրահամյանը և գյուղնախարար Դավիթ Լոքյանը (2004, սեպտեմբեր), Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը (2000) և այլք: Չինացի պաշտոնյաներից Հայաստան են այցելել արտգործնախարար և փոխվարչապետ Ծյան Ծիցենը (1996, ապրիլ), Վան Քինգծիանը (1997, օգոստոս), Չինաստանի մշակույթի նախարարության պատվիրակությունը (1998, սեպտեմբեր), որը մասնակցել է Երևանում կազմա-

կերպված չինական մշակույթի օրերին, ՉԺՀ պաշտպանության նախարարության արտաքին կապերի գրասենյակի պաշտոնյաներ գեներալ-մայոր Ծյան Լիհուան (2004) և Դին Ծինգուոնը (2008), առևտրի փոխնախարար Ծուն Շանը (2010) և այլք՝ իրենց պատվիրակություններով: 1996, 2000 և 2004 թթ. ստորագրվել են հայ-չինական միջպետական համատեղ հայտարարագրեր: 1999-ից գործում է հայ-չինական միջկառավարական հանձնաժողովը, որի համանախագահն է Չինաստանի Առևտրի նախարարության եվրոպական վարչության պետ Սյու Տունկայը:

Սկսած 1999-ից, ՉԺՀ-ից ՀՀ իրականացվել են ռազմական տեխնիկայի մատակարարումներ: Չինաստանի ռազմական կրթօջախներում ուսանում են նաև հայաստանցիներ, իսկ երկու երկրների դիվանագիտական ներկայացուցչություններում գործում են ռազմական կցորդներ: Ռազմատեխնիկական ոլորտում այս համագործակցությունը ՉԺՀ-ի և ՀՀ-ի աշխարհաքաղաքական շահերից բխող ռազմավարական գործընկերներ լինելու հետևանք է:

21-րդ դարի սկզբին Չինաստանն աշխարհի գերհզոր պետություններից մեկն է, ածի տեմպերով առաջինն աշխարհում, ուստին պատահական չէ նրա տնտեսական տարեցտարի մեծացող ներկայությունը նաև Հայաստանում: Դիվանագիտական կապեր հաստատելու հենց սկզբից Հայաստանի և Չինաստանի առևտուրը 1997-ին կազմել է 370 հազար ամերիկյան դոլար, 1998-ին՝ 840 հազար դոլար: Հայ-չինական առևտրատնտեսական հարաբերությունները առավել ընդլայնելու, տնտեսական նոր գործընկերներ գտնելու նպատակով փոխայցելություններ են կատարվում երկու երկրների ներկայացուցիչների կողմից: Հիմնվել են հայ-չինական համատեղ ձեռնարկություններ՝ 2001-ին ստեղծված «Չինկան» ՍՊԸ-ն՝ Վանաձորի «Վ և Ն» ՍՊԸ-ի և Չինաստանի քաղաքացի Հուան Հոռն Յունի կողմից, որը համագործակցել է Չինաստանի խոշորագույն արտահանող ընկերությունների հետ՝ նպատակ ունենալով Չինաստանից ներկրել տեխնոլոգիական

սարքավորումներ և գյուղատնտեսական փոքր տրակտորներ[862], ինչպես նաև Երևանում 2012-ին հիմնված հայ-չինական «Անուշակ» համատեղ մեղվաբուծական ձեռնարկությունը. 2013-ին չինական Շանդուն նահանգի Ծինդաո քաղաքում բացվել է նրա մասնաճյուղը: Երևանում հիմնված «Հայ-չինական համագործակցության կենտրոն» հասարակական ոչ առևտրային կազմակերպությունը նպատակ ունի զարգացնել հայերի և չինացիների միջև գործարար, մշակութային, կրթական, տնտեսական և զբոսաշրջիկային կապերը[863]:

2002-ին Չինաստանում հյուրընկալվել է ՀՀ գործարարների պատվիրակությունը՝ ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատի նախագահ, ԱԺ պատգամավոր Մարտին Սարգսյանի գլխավորությամբ, նույն օրերին Հայաստանում էին Չինաստանի Սյիլին խոշորագույն նահանգի գործարարները՝ նահանգի առևտրաշրջանառության պատասխանատուների գլխավորությամբ: Չինաստանի տնտեսական զարգացման և սոցիալական առաջընթացի գործում ավանդի համար երկրի կառավարության որոշմամբ 2002 թ. մոտ 50 օտարերկրացի մասնագետներ պարգևատրվել են Քարեկամության շքանշանով: Պարգևատրվածների մեջ են եղել 19 երկրների, այդ թվում՝ Հայաստանի մասնագետները: Նույն թվականին ՉԺՀ և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 10-րդ տարեդարձի առթիվ Պեկինում լույս է տեսել փաստաթղթերի ժողովածու՝ չինարեն և ռուսերեն: 2013-ին ՉԺՀ և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 21-ամյակի առթիվ Երևանում լույս է տեսել «Չինաստանը հայերի աչքերով» 13 ակնարկից կազմված ռուսերեն ժողովածու[864]:

2006 թվականին Չինաստանից Հայաստան է ներմուծվել 112 միլիոն, 2007-ին՝ 197 միլիոն ԱՄՆ դոլարի ապրանք, իսկ նույն տարիներին Հայաստանից համապատասխանաբար արտահանվել է 463 հազար և 7,1 միլիոն դոլարի ապրանք[865]: 2006 թվականին Չինաստանից ներմուծվել է շուրջ 112 միլիոն ԱՄՆ դոլարի, 2007-ին՝ 197 միլիոն դոլարի ապրանք: 2004-ին ՀՀ-ից ՉԺՀ է արտահանվել մոտ 15 միլիոն, 2007-ին՝ 7,1 միլիոն դոլարի հանքանյութ: Սրանից բացի ՀՀ-ից ՉԺՀ են արտահանվում նաև հագուստեղեն, կոշկեղեն, մեքենաշինական, քիմիական արտադրանք, սարքավորումներ, շինանյութ, սննդամթերք: 2010-ին ՉԺՀ-ՀՀ երկկողմ ապրանքաշրջանառությունը կազմել է 436,7 միլիոն դոլար, 2016-ից Չինաստանից Հայաստան ներմուծվել է 357 միլիոն դոլարի ապրանք, այդպիսով ՉԺՀ-ն Հայաստանի երկրորդ գործընկերն է ներմուծման ոլորտում[866]:

2009-ին Երևանի «Նաիրիտ» գործարանը վերակազմավորվել է կառուցվի հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» քլորոպրենային համատեղ ձեռնարկության: Գործարանի արտադրանքը նախատեսվել է ամբողջությամբ սպառել Չինաստանում[867]:

Փորձ է կատարվել համագործակցել նաև գյուղատնտեսության բնագավառում. Չինաստանի Շանսի և Հեբեյ նահանգներում հաջողությամբ փորձարկվել են հայկական ծիրանը և խաղողը: 1999-ին ՉԺՀ Կունմին քաղաքում կայացած «Մարդը և բնությունը 21-րդ դարի շեմին» այգեգործական ցուցահանդեսում Հայաստանը շահել է արծաթե մեդալ: 1999–2007 թթ. ՉԺՀ-ի կողմից հատկացված անհատույց օգնության ծրագրերի շրջանակներում ՀՀ են տեղափոխվել 30 միլիոն յուան գումարի 169 տրակտոր, 51 կոմբայն և այլ տեխնիկա:

21-րդ դարում Երևանում նկատելի է չինական ներկայությունը՝ շնորհիվ ոչ միայն Չինաստանի դեսպանատան, այլև «Դրակոն», «Պեկին» և այլ չինական ռեստորանների, չինական արտադրության ավտոբուսների, «Ժու Գուանֆու» չինական բժշկական կենտրոնի,

[862] Տե՛ս Պանարմենիան էքսպո 2009, Երևան, 2009, էջ 27:
[863] Տե՛ս կազմակերպության կայքէջը՝ http://www.armeniachina.com:
[864] Китай глазами армян. Сборник очерков. Гл. ред. **Г. Э. Петросян**, Ереван, 2013.

[865] Տե՛ս **Սրբուհյան Ա.**, Հայ-չինական առևտրատնտեսական հարաբերությունները նորանոր բնագավառներ են ընդգրկում, «Ազգ», Երևան, 14.06.2008:
[866] Տե՛ս **Մարտիրոսյան Ա.**, Ի՞նչ, որքա՞ն, որտե՞ղ ենք արտահանում և ներմուծում, «Ազգ», Երևան, 17.02.2017:
[867] Տե՛ս Հայ-չինական կառուցվի գործարանը շահագործման կհանձնվի այս տարվերջին, «Ազգ», Երևան, 16.04.2009:

«Ծանհայ» վաճառատան, Բրյուսովի անվան լեզվագիտական ինստիտուտում չինացի մասնագետների կողմից չինարենի դասավանդման, Հայաստանում հյուրընկալվող չինական մշակութային խմբերի (2007-ին Հայաստանի տարբեր բնակավայրերում հանդես է եկել Ճանճունի Խամաճիկների թատրոնը), ինչպես նաև Հայաստանի բուհերում սովորող չինացի ուսանողների: Երևանում և այլուր աշխատող չինացիները մշտապես տոնում են իրենց տոները, մասնավորապես՝ Չուն ջիե (Նոր տարին, բառացի՝ գարնան տոն)[868]:

Ըստ Հայաստանի վիճակագրական պետական վարչության՝ 2000-ին Երևանում սովորել է չինաստանցի մեկ ուսանող, 2001-ին՝ 14, 2002-ին՝ 11, 2003-ին՝ 13: Չին երիտասարդների ուսումնառությունը հայկական բուհերում կատարվել է ռուսերեն և անգլերեն լեզուներով, սակայն կան նաև հայերենով սովորողներ: «*Ես՝ հայերը, և՛ չինացիները բարի ազգ ենք, արտասահմանցիներին լավ ենք ընդունում: Հայերն ավելի հյուրասեր են, քան չինացիները, բայց իմ ազգակիցներն ավելի աշխատասեր են*»,– ասում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության բաժնի ուսանող Ճանճուն Ճյանը, որի ուսումնառությունն անցնում է հայերենով[869]:

Երևանում հիմնվել է նաև «Ծանհայյան ակումբը», որի նպատակն է հայ-չինական հարաբերությունների խորացման անհրաժեշտության մասին հասարակական կարծիքի ձևավորումը: Հայաստանի տարբեր քաղաքներ (Երևան, Հրազդան) ժամանակավոր աշխատանքի են եկել տարբեր մասնագիտությունների մարդիկ Չինաստանից. մասնավորապես չինական «HPCC-3» ՍՊԸ-ն մասնակցել է Հրազդանի «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի չինարարական աշխատանքներին:

Հետաքրքրական է, որ չինական ներկայությունը թափանցել է մինչև անգամ Արցախ աշխարհ: 2005 թվականից սկսած ԼՂՀ-ի և

[868] Տե՛ս **Խաչատրյան Լ.**, Չինական Նոր տարին՝ Երևանում, «Առավոտ», Երևան, 13.02.2010:

[869] **Հարությունյան Տ.**, Հայաստանը՝ չին ուսանողի աչքերով. ըստ Ճանճուն Ճյանի՝ հայերը հյուրասեր են, հայերենը՝ խրթին, վարորդները՝ հայհոյող, ուսանողները՝ գլուխ պահող», «Առավոտ», Երևան, 1.11.2008:

ՉԺՀ-ի միջև ընթանում է առևտուր. 2007-ին ՉԺՀ-ից ԼՂՀ ներմուծվել է 137,2 հազար ԱՄՆ դոլարի ապրանք: 2009-ին երկրների միջև առևտուրը կազմել է 659,6 հազար ԱՄՆ դոլար: ԼՂՀ-ն ՉԺՀ-ից գնել է շինարարական տեխնիկա, քարամշակման և հիդրոէլեկտրակայանի կառուցման համար անհրաժեշտ սարքավորումներ: 2006-ից Արցախի Վանք գյուղում մի քանի տարով բնակվել են երեք երիտասարդ չինացիներ՝ Հուան Ճյուանը, Հուան Գոն և Հուան Քայ Թին, որոնց տեղացիներն անվանել են համապատասխանաբար Ջիվան, Գուրգեն և Անճա: Նրանք հայերեն խոսել են Ղարաբաղի բարբառով, աշխատել Վանքի «Էկլեկտիկա» հյուրանոցային համալիրին կից չինական ռեստորանում: Չինացի խոհարարներին Ղարաբաղ հրավիրել է ռեստորանի տերը՝ ռուսաստանաբնակ գործարար Լևոն Հայրապետյանը, ընկերոջ՝ Չինաստանում ապրող հայ գործարարի միջոցով[870]: Իսկ ներկայումս (2017) Արցախում տարածում է գտնում չինական մերսումը[871]:

Զարգանում են կապերը նաև կրթության ասպարեզում: 2002-ի մայիսի 2-ին Հայաստանի Արտասահմանյան երկրների հետ մշակութային համագործակցության կենտրոնում կայացել է հանդիպում, որին ներկա են եղել ՉԺՀ մշակույթի նախարարի հատուկ օգնական Չան Կեճենը, Ազգային ժողովի պատգամավոր, հայ-չինական ընկերության նախագահ Հենրիկ Գրիգորյանը և այլք, քննարկվել են հայ-չինական համագործակցության հեռանկարները: Ելույթ են ունեցել կոնսերվատորիայում սովորող չինացի ուսանողները[872]:

2005-ից Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում դասավանդվում է չինարեն: Հայ ուսանողների պահանջարկը չինարենի նկատմամբ բավական մեծ է: Չինական մշակույթի տարածման ու չինարենի ուսուցման նպատակով Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանին կից 2009-ի փետրվարին

[870] Տե՛ս **Մուսայելյան Լ.**, Չինաստանի համը Ղարաբաղում, «168 ժամ», Երևան, 7.09.2007:

[871] Տե՛ս **Ավագյան Ս.**, Չինական մերսում՝ Արցախի բնակիչների համար, «Ապառաժ», Ստեփանակերտ, 17-31.03.2017:

[872] Տե՛ս **Գաբրիելյան Ա.**, Հայ երիտասարդները Չինաստանում, «Հայաստանի հանրապետություն», Երևան, 3.05.2002:

հիմնադրվել է չինարեն լեզվի և մշակույթի կենտրոնը՝ Կոնֆուցիուսի ինստիտուտը (տնօրեն՝ Գոռ Սարգսյան), Չինաստանի կառավարության աջակցությամբ՝ 50 հազար դոլար սկզբնական գումարով: ԵՊՀՀ-ի Կոնֆուցիուսի ինստիտուտը կազմակերպում է ամառային ճամբար, չինարենի, չինական գեղագրության, ՉԺՀ կրթության և այլ դասընթացներ, տրամադրում ՉԺՀ-ում ուսանելու կրթաթոշակներ, թարգմանչական ծառայություններ՝ Չինաստանից ժամանած լավագույն մասնագետների կողմից, չինարենի ուսուցման նորագույն մեթոդների կիրառմամբ: Կենտրոնն իրականացրել է նաև բազմատեսակ լեզվաբանական, մշակութաբանական, երկրաբանական դասընթացներ՝ լեզվաբանական համալսարանի և չինական հեղինակավոր Շանս համալսարանի դասախոսների մասնակցությամբ, կազմակերպել մշակութային տարբեր միջոցառումներ, ինչպես նաև հրատարակել չինարենի դասագիրք[873], կազմակերպել համերգներ, ցուցահանդեսներ, ներկայացումներ[874]: 2010-ին Կոնֆուցիուսի ինստիտուտը առաջին անգամ նախաձեռնել է չինական երգի և պարի մրցույթ: 2011-ին ՀՀ և ՉԺՀ միջև հաստատված միջպետական հարաբերությունների 20-ամյակի առթիվ Կոնֆուցիուսի ինստիտուտը կազմակերպել է առաջին միջազգային չինագիտական գիտաժողովը Հայաստանում[875]: Կոնֆուցիուսի ինստիտուտի աջակցությամբ ՀՀ հինգ դպրոցներում չինարենը դասավանդվում է որպես հիմնական լեզու, իսկ ավելի քան տաս ուսումնական հաստատություններում գործում են չինարեն լեզվի և մշակույթի կենտրոններ, օրինակ, Երևանի Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում չինագիտության ամբիոնը գործում է 2011ից:

[873] Տե՛ս **Իվչենկո Տ., Գրիգորյան Ն.**, Սովորում եմ չինարեն. վարժությունների տետր, խմբագիրներ՝ Վանգ Լիմինգ, Լ. Ֆլոյան, համահեղինակ՝ Ա. Դուկասյան և ուրիշներ, Երևան, 2013, 262 էջ:

[874] Տե՛ս **Հարությունյան Հ.**, Չինարեն լեզվի և մշակույթի կենտրոն Երևանում, «Ազգ», Երևան, 28.11.2008:

[875] Տե՛ս **Ֆլոյան Լ.**, խմբ., Հայաստան և Չինաստան. 20 տարի համագործակցություն քաղաքականության, տնտեսագիտության, լեզվի և մշակույթի ոլորտներում: Առաջին միջազգային չինագիտական գիտաժողովի նյութեր ընդլայնված Հայաստանի և Չինաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյա հոբելյանին, Երևան, 2012:

2016 դեկտեմբերին Չինաստանի Կունմին քաղաքում Կոնֆուցիուսի ինստիտուտը արժանացել է 2016 թվականի լավագույն ինստիտուտի կոչմանը: Ինստիտուտի կայքէջն է՝ www.confuciusinstitute.am:

21-րդ դարի սկզբին համաշխարհային քաղաքական և տնտեսական ոլորտում վիթխարի կշիռ ձեռք բերած Չինաստանի ուսումնասիրությամբ զբաղվում են նաև ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողները: Պատմական գիտությունների թեկնածու, Արևելյան Ասիայի երկրների բաժնի ավագ գիտաշխատող **Աղավնի Հարությունյանը** զբաղվում է մասնավորապես Չինաստանի և Մերձավոր Արևելքի քաղաքական հարաբերությունների ուսումնասիրությամբ, հանդես է եկել այդ թեմայով անգլերեն մենագրությամբ (լույս է տեսել Գերմանիայում)[876] և բազմաթիվ հայերեն, ռուսերեն ու անգլերեն հոդվածներով և հաղորդումներով[877]: Նույն ինստիտուտի գիտաշ-

[876] Տե՛ս **Harutyunyan Aghavni**, China-Turkey Strategic Partnership in the Modern Period, Saarbrücken, 2013:

[877] Տե՛ս նրա աշխատությունները՝ Չինաստանը որպես մերձավորարևելյան էներգետիկ շուկայի նոր դերակատար, «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու)», Երևան, 2006, էջ 72-76: Նույնը, «21-րդ դար», թիվ 4 (14), Երևան, 2006, էջ 53-62: Չին-սաուդյան հարաբերությունների զարգացումը սկսած 1980-ականներից, Ձեկույցների թեզեր, «Մերձավոր Արևելք և Կովկաս» միջազգային գիտաժողով նվիրված Արևելագիտության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին, նոյեմբերի 5-6, Երևան, 2008, էջ 47-49: ՉԺՀ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը 1970-ականների վերջերին, «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», հ. V, Երևան, 2008, էջ 80-86: ՉԺՀ-Իրան միջուկային համագործակցության շուրջ Արևելասիական ուսումնասիրություններ, հ. I, Երևան, 2009, էջ 53-71, նաև՝ «Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ», հ. VI, Երևան, 2009,էջ 115-123: Չին-սաուդյան ռազմավարական համագործակցության շուրջ, «Արևելասիական ուսումնասիրություններ», հ. I, Երևան, 2009, էջ 72-91: Around China's Relations with the Gulf Cooperation Council (GCC), "Confucius Institute in Sofia," Bulgaria, 2010, pp. 157-167. ՉԺՀ-ի հարաբերությունները Պարսից Ծոցի Համագործակցության խորհրդի երկրների հետ, «Արևելասիական ուսումնասիր-ություններ», հ. I, Երևան, 2009, էջ 92-112: Չին-իրանական հրթիռային համագործակցության շուրջ, «Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXVII, Երևան, 2009, էջ 69-82: О китайско-египетских отношениях. «Модернизация и Традиции», XXVI международная конференция. Источниковедение и историография стран Азии и Африки, Санкт-Петербург, 2011 стр. 9-10. Չին-եգիպտական ռազմաքաղաքական համագործակցության շուրջ, «Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ», հ. VII, Երևան, 2011, էջ 149-158: Вокруг китайско-ливийских отношений, Африка в глобальном мире: прошлое, настоящее и будущее, в сб. «Мате-

խատող **Գոռ Սարգսյանը** 2013-ին պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Չինաստանի աշխարհաքաղաքական առանձնահատկությունները և հայ-չինական հարաբերությունները 1991–2010 թթ.» թեմայով[878]: Ի դեպ, 2016-ից Գոռ Սարգսյանը նախաձեռնել է Հայաստանի մշակութային կյանքի վերաբերյալ առաջին չինարեն կայքէջը (www.newsilkroad.am): Այսօր էլ հայ երիտասարդների մեջ կան չինագիտության տարբեր բնագավառներով զբաղվողներ: 2010-ին Գուանճոուի համալսարանի արտասահմանյան ուսումնասիրությունների բաժնում մեկ տարի ուսանել է Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի ուսանող **Անահիտ Աղաջանյանը**, որը համաշխարհային տնտեսության ամբիոնում մասնագիտացել է չինարենի և անգլերենի ուսումնասիրության մեջ: Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի մագիստրանտ **Արթուր Ղազանչյանը** 2013-ին Երևանում հանդես է եկել «Լեզվական տնտեսման միջոցները չինական բիզնես-հաղորդակցությունում» զեկուցմամբ[879], իսկ **Լուսինե Նուրբեկյանը**՝ «Արդիականացման չինական մոդելը տնտեսական և քաղաքական զարգացման համատեքստում» գիտական հոդվածով[880]: 2016-ին

риалы 10-й Школы молодых африканистов России», Москва, 2011, стр. 7-12. Չին-եգիպտական առևտրատնտեսական համագործակցության շուրջ, «Արևելագիտական ուսումնասիրություններ», h. II, Երևան, 2011, էջ 87-104: Ազատ Մարտիրոսյան, Հայկ Մարտիրոսյան, Չինաստանի էներգետիկ անվտանգության ռազմավարությունը և դրա նշանակությունը Կենտրոնական Եվրասիայում (7 քարտեզ, 5 աղյուսակ), Երևան, 2010, 198 էջ (գրախոսություն), «Արևելագիտական ուսումնասիրություններ», h. II, Երևան, 2011, էջ 127-131: ՉԺՀ-ի արդի միջազգային հարաբերությունների ակադեմիայի պատվիրակության այցը Հայաստան 2011թ. մայիսի 15-18-ը, նույն տեղում, h. II, Երևան, 2011, էջ 124-126: Չինաստան-Լիբիա հարաբերությունների շուրջ, «Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ», h. VIII, Երևան, 2012, էջ 224-237: Չին-սիրիական համագործակցության նոր դրսևորումներ, «Ժամանակակից Եվրասիա. Արաբական աշխարհ», հատոր 1 (2), Երևան, 2012, էջ 140-155:

[878] Տե՛ս նաև նրա հոդվածը՝ **Սարգսյան Գ. Գ.**, Չինական դասեր կամ նորանկատ դիվանագիտություն, ԼՀԳ, Երևան, 2011, թիվ 1-2, էջ 109-112:

[879] Տե՛ս **Казанчян А.**, Средства языковой экономики в бизнес-коммуникации (на материале китайского языка), «Сборник статей международной научной конференции, посвященной 500-летию армянского книгопечатания и 65-летию основания СНО ЕГУ», 4, Гуманитарные науки, Ереван, 2013, стр. 270-273.

[880] Տե՛ս ԼՀԳ, Երևան, 2015, թիվ 3, էջ 128-133:

Երևանում լույս տեսավ **Անուշ Անանյանի** «Տնտեսական զարգացումը Չինաստանի ժողովրդական Հանրապետությունում. պատմություն, միտումներ և մարտահրավերներ» գրքույկը:

Իզաբելլա Մուրադյանը (ծն. 1973) 2000–2001 թթ. եղել է Հայաստանում ՉԺՀ դեսպանատան իրավական խորհրդատուն և փաստաբանը: 2006 թվականից Հայաստանում գործում է Մշակույթի և գիտության չինական կենտրոն, որտեղ փոխտնօրենը, ապա՝ տնօրեն 2009-ից աշխատում է Իզաբելլա Մուրադյանը: Այս կենտրոնի նախաձեռնությամբ և հովանավորությամբ 2010-ի փետրվարին Երևանի պետական համալսարանի գրադարանում պաշտոնապես բացվել է Չինական անկյուն: Մուրադյանը վերլուծական հոդվածներ է գրել չինական Սինհուա գործակալության համար: Հեղինակ է «Համառոտ Չինաստանի մասին» գրքի (2009) և «Հայաստան-Չինաստան. զարնան տոնը» էլեկտրոնային գրքի (2015):

Չինաստանի էներգետիկ անվտանգության վերաբերյալ մենագրություն են հեղինակել հայր և որդի **Ազատ և Հայկ Մարտիրոսյանները**: Հայկ Մարտիրոսյանն ուսանել է Պեկինի ժողովրդական համալսարանի միջազգային հարաբերությունների (1998–2003) և Պեկինի Մանկավարժական համալսարանի միջազգային հարաբերությունների և օրենքի (2003–2009) ֆակուլտետներում և ստացել միջազգային հարաբերությունների դոկտորի կոչում[881]:

2009–2013 թթ. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում պաշտպանվել են մագիստրոսական թեզեր Չինաստանի վերաբերյալ՝ պատմության և միջազգային հարաբերությունների գծով[882]:

[881] Տե՛ս **Մարտիրոսյան Ա., Մարտիրոսյան Հ.**, Չինաստանի էներգետիկ անվտանգության ռազմավարությունը և դրա նշանակությունը Կենտրոնական Եվրասիայում, Երևան, 2010:

[882] Տե՛ս Սիրանուշ Տեր-Գրիգորյանի («Չինաստանի ռազմավարական հնարավորությունների գնահատականը ժամանակակից աշխարհում»), Ռեգինա Գալուստյանի («Հայաստանի Հանրապետության համագործակցությունը Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի «նոյակի» հետ») և Մարիամ Էրյանի («Հայ-չինական բարեկամության 20-ամյա փորձն ու հետագա համագործակցության հեռանկարները») մագիստրոսական ատենախոսությունները:

2012-ին **Էլեոնորա Մանանդյանի և Արմինե Սարգսյանի**՝ ռուսերենից կատարած թարգմանությամբ լույս է տեսել չինական դասական փիլիսոփայության հայտնի գործերից մեկը՝ «Ի Ծինգը»՝ թարգմանիչների մեկնաբանություններով: Մանանդյանը, որ նախագահում է «Նոր Հայաստան» հասարակական կազմակերպությունը, պարբերաբար այցելում է Տիբեթ և հետևում տեղի վանականների դասընթացներին, այնուհետև ստացված գիտելիքներն ու փորձը հաղորդում է իր հոգեբանական և հոգևոր դասերի ընթացքում:

2005-ից Չինաստանի Շանհայ քաղաքում գործող «Շանհայ էքսպո» միջազգային ցուցահանդեսում պաշտոնապես մասնակցություն է ունենում նաև Հայաստանը: 2010-ի ցուցահանդեսում նշվել է Հայաստանի անկախության օրը: Այստեղ Հայաստանը ներկայացրել է «Աշխարհի քաղաք» նախագիծը: Հայաստանի տաղավարը մեծ հետաքրքրություն է առաջացրել այցելուների շրջանում. ցուցահանդեսի ավելի քան հիսուներեք միլիոն այցելուներից երկու միլիոնը եղել է նաև հայկական տաղավարում[883]:

2012-ի նոյեմբերին Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում (ԵՊԼՀ) տեղի է ունեցել «Հայաստան և Չինաստան. 20-ամյա համագործակցություն քաղաքականության, տնտեսագիտության, լեզվի և մշակույթի ոլորտներում» խորագրով չինագիտական երկօրյա գիտաժողովը, որը կազմակերպել է ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտը: Հայաստանում կայացած առաջին չինագիտական գիտաժողովի աշխատանքները նպատակ են ունեցել սահմանել չինագիտության ժամանակակից իրավիճակը և դերը Հայաստանում, ամրապնդել Չինաստանի, Հայաստանի և արտասահմանյան չինագետների միջև համագործակցությունը, միասնաբար փնտրել համագործակցության նոր ուղիներ հայ-չինական քաղաքական, տնտեսական, լեզվական և մշակութային ոլորտներում: Ըստ ՀՀ-ում Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպան **Թիան Չանչունի**՝

[883] Տե՛ս **Ա. Մ.**, «Շանհայ էքսպո-2010»-ում նշվել է Հայաստանի օրը, «Ազգ», Երևան, 22.09.2010:

Չինաստանը Հայաստանին համարում է իր կարևոր գործընկերը Կովկասում և մեծ նշանակություն է տալիս երկու ժողովուրդների հարաբերությունների ամրապնդմանը պաշտոնական և հասարակական մակարդակում:

Հայ-չինական դիվանագիտական կապերի հաստատման 21-ամյակի առթիվ 2012-ին լույս է տեսել «Չինաստանը հայերի աչքերով» ռուսերեն պատկերազարդ գիրքը՝ Հայ-չինական համագործակցության կենտրոնի նախագահ Գրիգոր Պետրոսյանի խմբագրությամբ: Այն ակնարկների ժողովածու է, որի 13 հեղինակները ճանաչված հանրային և քաղաքական գործիչներ են, լրագրողներ և ուսանողներ:

Պետք է նկատի ունենալ, որ հայ-չինական տնտեսական համագործակցությունը միշտ հարթ չի ընթացել, որի պատճառը երկու ժողովուրդների միջև առկա մշակութային տարբերություններն են: Շանհայում մագիստրատուրայում ուսանող **Սոս Հարոյանը**, որ հաճախ որպես թարգմանիչ օգնում է Չինաստան այցելող հայ գործարարներին, նշել է երկու ժողովուրդների առանձնահատկություններն առևտրի ասպարեզում: «*Պետք է նշել, որ չինացիների համար ապրանքի գինը և որակը կախված են չափաքանակի ծավալից: Նրանք չեն կարողանում հասկանալ, երբ մեր գործարարները պատվիրում են, օրինակ, որևէ ապրանքի 10 հազար միավոր... Նրանք չեն կարողանում պատկերացնել մի երկիր, որտեղ ապրում է ընդամենը երեք միլիոն բնակիչ: Շանհայում, օրինակ, որտեղ ես ապրում եմ, բնակվում է 27 միլիոն մարդ: Չինացիների հետ գործ սկսելով շատ կարևոր է ոչ մի բանավոր պայմանավորվածություն չանել: Նաև կարևոր է, որ գործարան գա ձեր ներկայացուցիչը, որպեսզի չինացին ճշգրիտ իմանա՝ ձեզ ինչ է պետք, այլապես նա ձեզ կուղարկի այն, ինչ որ ինքն է անհրաժեշտ համարում: Լեզվի դժվարության պատճառով չինացիները նույնիսկ միմյանց են վատ հասկանում, էլ ինչ ասած արտասահմանցիների մասին*»[884]:

[884] Տե՛ս **Кулешова Ю.**, Национальные особенности армяно-китайского бизнеса. 14:03 24.05.2013 http://www.express.am/article/19_1018/view/nacionalnye-osobennosti-armjano-kitajskogo-biznesa.html (այցելությունը կայքէջ՝ 28.11.2014):

2010-ականների կեսին նկատելի աճել է Հայաստանից ՉԺՀ արտահանումը. Չինաստանը դարձել է ՀՀ-ի արտահանման հիմնական չուկաներից մեկը: 2011 թվականին Չինաստանը եղել է ՀՀ հետ առևտրային առաջին գործընկերը՝ շրջանցելով Ռուսաստանին: 2015-ի առաջին ութ ամիսներին Հայաստանից Չինաստան արտահանումը կազմել է 106 մլն դոլար, 2014-ի ութ ամիսների 81 մլն դոլարի համեմատ: Սա ՀՀ արտահանման ընդհանուր ծավալների 12,5 տոկոսն է կազմել, որը զիջում է միայն դեպի Ռուսաստան արտահանման բաժնին: 2014-ի տարեկան արդյունքներով Չինաստան է արտահանվել մոտ 171 մլն դոլարի հայկական ապրանքներ, նախորդ տարվա 69 մլն դոլարի դիմաց (2,5 անգամ ավելի), իսկ դեպի Չինաստան արտահանումը կազմել է ընդհանուրի 11,3 տոկոսը 2013-ի 4,7 տոկոսի փոխարեն[885]:

2013-ի մարտի 29-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությունում ՀՀ և ՉԺՀ կառավարությունների միջև վավերացվել է տեխնիկատնտեսական համագործակցության մասին համաձայնագիր[886]: 2013-ին ՀՀ կառավարությունը մոտ 3 մլն դրամ է հատկացրել ինուլինի արտադրության հայ-չինական ձեռնարկության ստեղծման ծրագրի իրականացման համար: Ըստ այդ ծրագրի՝ 3-4 հազար հեկտար հողատարածություն պետք է տրամադրվի գետնախնձորի՝ ինուլինի արտադրության հիմնական հումքի աճեցման համար: Ծրագիրը գնահատվել է 33 մլն դոլար[887]: Ցավոք, այս ծրագիրը չի իրականացվել տարբեր պատճառներով:

2013-ի օգոստոսին «Ազատություն» ռադիոկայանը տեղեկացրել է, որ Հայաստանը Չինաստանից ձեռք է բերել AR1A հրթիռային համալիրներ (ռուսական «Սմերչի» առավել կատարելագործված և հեռահար տարբերակը), ինչը նշանակում է, որ Չինաստանն ունի Հայաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցության հեռահար նպատակներ: Ըստ փորձագետի, «*Հայաստանը և Չինաստանը միջազգային ասպարեզում ունեն համագործակցության դրական փորձ, մասնավորապես Թայվանի և Ղարաբաղի խնդիրների համատեքստում: Այս հարցում Հայաստանը և Չինաստանը ցուցաբերել են փոստահելի և ազնիվ համագործակցության օրինակ: Չինաստանն ունի նաև «թուրքական» խնդիր, որի համատեքստում Հայաստանի միջազգային դերը՝ Թուրքիայի էքսպանսիայի զսպումը, համապատասխանում է Չինաստանի աշխարհաքաղաքական շահերին*»[888]:

Վերջին քսանամյակի հայ-չինական միջպետական հարաբերությունների վերաբերյալ այս և շատ ուրիշ իրողությունների առավել մանրամասն պատմությունը տվել է Նուբար Չալըմյանը իր հոդվածում[889]: Նա 1992–2009 թթ. պաշտոնավարել է ՀՀ-ում ՉԺՀ դեսպանությունում՝ ականատեսը և մասնակիցը լինելով երկու երկրների փոխհարաբերությունների զարգացման գործընթացին:

2014-ի փետրվարին գրվել է, որ Չինաստանը մտադրվել է վերակազմել երբեմնի հզոր տնտեսական ուղին՝ «Նոր Մետաքսի ճանապարհը» և համալրել նոր անդամներով: Այն սկսվելու է Չինաստանի արևմուտքից, անցնելու է Ռուսաստանով, Կովկասի ու Մերձավոր Արևելքի որոշ երկրներով ու հասնելու է Եվրոպա: Հայաստանը այս ճանապարհին է և կարող է դառնալ նոր տնտեսական ճանապարհի մի մասը, ինչի մասին հատուկ նշել է Չինաստանի կոմկուսի միջազգային կապերի պատասխանատու Ցոու Լին:

2014-ի հոկտեմբերին ՀՀ կառավարությունը հայտարարել է, որ հայ-չինական «Տեխնիկատնտեսական համագործակցության մասին» 2012-ին կնքված համաձայնագրերի շրջանակներում Երևանում ստեղծվելու է չինարենի խորացված ուսումնասիրությամբ միջնակարգ

[885] Տե՛ս **Մարտիրոսյան Ա.**, Չինական «պատուհան» Հայաստանի համար, «Ազգ», Երևան, 25.09.2015:
[886] Տե՛ս Հայաստանում չինական դպրոց կկառուցվի, http://www.lragir. am/ index. php/arm/0/country/view/80828 (այցելությունը կայքէջ՝ 10.05.2014):
[887] Տե՛ս **Մարտիրոսյան Ա.**, Հայ-չինական ինուլինի գործարան և գետնախնձորի ցանքսեր՝ 1300 աշխատատեղերով, «Ազգ», Երևան, 17.05.2013:

[888] Տե՛ս **Արամյան Հ.**, Չինական մատ ռուսական Սմերչին, "The Yerevan Times." Yerevan, 20.08.2013:
[889] Տե՛ս **Чалымян Н. Т.**, Постсоветские армянско-китайские отношения, «Армения-Китай. Очерки....», էջ 25-41: **Չալըմյան Ն.**, Հայ-չինական հարաբերությունները 1992–2007 թթ., նույն տեղում:

դպրոց, որի համար չինական կողմը պետք է կատարի մոտ 8 մլն դոլարի ներդրում՝ դպրոցի շենքը կառուցելու համար[890]:

2015-ի սկզբին Չինաստանի հյուսիս-արևմտյան Շանսյի նահանգի կենտրոն Սյիան քաղաքը բարեկամ քաղաք է դարձել Գյումրիի հետ: Իսկ սեպտեմբերից Չինաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ Պեկինի օտար լեզուների համալսարանում (ՊՕԼՀ) սկսվել է հայոց լեզվի դասավանդումը, որի գործը վստահվել է նույն բուհի ասպիրանտ, Չինաստանի հայկական ուսանողական միության գործադիր կոմիտեի անդամ **Մերի Կնյազյանին**: ՊՕԼՀ-ը օտար լեզուներ դասավանդող առաջատար բուհ է Չինաստանում, և հայերեն լեզվի ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել ուսանողների շրջանում: Ներկայումս հայերեն սովորում են բուհի 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողները՝ որպես 3-րդ օտար լեզու: Լեզվի հետ մեկտեղ, դասախոսությունների և ֆիլմերի միջոցով ուսանողներին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալու նաև Հայաստանի մշակույթին և պատմությանը:

Նույն 2015 թվականի դեկտեմբերի 9-ին ՉԺՀ Դալիան քաղաքի օտար լեզուների համալսարանում բացվել է Չինաստանում առաջին հայագիտության կենտրոնը՝ Երևանի Բրյուսովի անվան համալսարանի և Դալիանի օտար լեզուների համալսարանի համագործակցության արդյունքում:

Ներկա զարգացումները հույս են ներշնչում, որ մոտ ապագայում Չինաստանում հանդես կգան հայագետներ: Առաջին ծիծեռնակը պեկինցի **Յան Սյին** է (հայերեն նա իր անունը գրում է Յանգ Շի), որը երկու այլ չինացիների հետ 2006 թվականին հետևել է այդ տարի Պեկինի համալսարանում չինարևակ գործարար **Վահագն Վարդանյանի** կազմակերպած հայերենի դասընթացներին: 2010-ից նա հայագիտություն է ուսանել Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանում, ուսումնասիրել հայ-չինական պատմական կապերը և այնտեղ 2016-

[890] Տե՛ս **Ա. Մ.**, Չինարենի խորացված ուսուցմամբ դպրոց Երևանում, «Ազգ», Երևան, 31.10.2014:

ին պաշտպանել ատենախոսություն «Սայաթ-Նովան հանրային աշուղական ավանդույթի մեջ և հետմահու» թեմայով:

2017-ին լույս տեսավ Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների բաժանմունքի դասախոս **Լիլիթ Հակոբյանի** «Made in China» հայերեն-չինարեն-ռուսերեն բառարանը:

Այսպիսով, 20-րդ դարում հայերի և չինացիների միջև փոխշփումները հիմնականում ԽՍՀՄ-Չինաստան հարաբերությունների մաս են կազմել՝ շնորհիվ Խորհրդային Հայաստանում Չինաստանի վերաբերյալ տեղեկացվածության և պարտադրված բարեկամության, Չինաստանում պաշտոնավարող հայազգի գործիչների և խորհրդային չինագիտության հայազգի ներկայացուցիչների: ՀՀ հռչակումից հետո հաստատված միջպետական կապերի շնորհիվ որոշակի համագործակցություն է սկսվել տնտեսության, կրթության, մշակույթի բնագավառներում. կնքվել են մի շարք համաձայնագրեր՝ նպաստելով Հայաստանում Չինաստանի ներկայացվածությանը և առաջին քայլերը կատարելով Հայաստանում չինագիտության և Չինաստանում՝ հայագիտության զարգացման գործում:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՀԱՅԵՐՆ ԱՐԴԻ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

20-րդ դարի երկրորդ կեսին Չինաստանում հայերի քանակի վերաբերյալ ստույգ տվյալներ չկան: Ժողովրդական Չինաստանում մինչև ԽՍՀՄ փլուզումը հայեր գրեթե չեն ապրել: Պոլսահայ նկարիչ, Թուրքիայի կոմունիստական կուսակցության անդամ **Ժաք Իհմալյանը** (1922–1978) 1959–1961 թթ. ընտանիքով բնակվել է Պեկինում: Շուտով Ֆրանսիայից նրան է միացել եղբայրը՝ թուրքագիր գրող Վարդան Իհմալյանը: Նրանք միասին աշխատել են չինական ռադիոյի թուրքական բաժնում: Ժաք Իհմալյանը, ռադիոհաղորդավար լինելուց բացի, հաճախել է Պեկինի կերպարվեստի ակադեմիայի դասընթացներին, հետևել չինացի վարպետների աշխատանքին, ուսումնասիրել չինական դասական նկարչության ավանդական տեխնիկան: Նա գծանկարչական աշխատանքների մի շարք կատարել է չինական ավանդական կեպարվեստի ոճով, բրնձից պատրաստված թղթի վրա: Ինչպես չինացի շատ նկարիչներ, նա ևս ունեցել է սեփական անվանական կնիք: Չինաստանում մշակութային հեղափոխության սկսվելուն պես Իհմալյանները տեղափոխվել են Մոսկվա:

Որոշ ժամանակ Չինաստանում է բնակվել երևանցի ֆիզիկոս **Սիլվա Յանը** (Մաթևոսյան)՝ հայ թատերական բեմադրիչ Աշոտ Մաթևոսյանի (Աշմաթ) դուստրը: Մոսկվայի համալսարանի ֆիզիկայի բաժնում ուսանելիս ծանոթացել է ապագա ամուսնու՝ ծնունդով շանհայցի Յան Շիի (ռուսական ձևով՝ Եվգենի Անդրեևիչ Յան) հետ: Չինաստանում քաղաքական իրավիճակի սրվելուց հետո նրանք վերադարձել են ԽՍՀՄ: Յան Շին և Սիլվա Յանը 25 տարի աշխատել են Երևանի ֆիզիկայի ինստիտուտում: Յան Շին եղել է լաբորատորիայի վարիչ: 1986–2006 թթ. նրանք ապրել են Թայվանում, որտեղ Յան Շին եղել է Տամկան համալսարանում ֆակուլտետի դեկան և ֆիզիկայի պրոֆեսոր, իսկ Սիլվա Յանը հաղորդումներ է վարել «Ազատ Չինաստան» ռադիոկայանով: Այժմ (2017) ամուսինները բնակվում են Մոսկվայում, Յան Շին դասավանդում է չինարեն, ABBYY համակարգչային ճանաչման տեխնոլոգիաների ընկերության բաժնետեր է, զբաղվում է Չինաստանում այդ բիզնեսի զարգացմամբ: Կնոջ հետ միասին նա մշտապես սատարում է Երևանի «Այբ» ավագ դպրոցին: Նրանց ավագ որդին՝ Ֆրանսիայում բնակվող **Արթուր Յանը** (ծն. 1959, Պեկին), գրքանկարիչ է. մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայում, ցուցահանդեսներ է ունեցել Ռուսաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում, 1981-ին՝ Երևանում: Կրտսեր որդին՝ **Դավիթ Յանը** (ծն. 1968, Երևան), Հայաստանում ապրել է մինչև 1985 թվականը: Նա ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է, համարվում է «*համակարգչային հանճար*», տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առաջնատարներից մեկը համարվող ABBYY ձեռնարկության հիմնադիրն ու տնօրենների խորհրդի նախագահն է, տեքստերի ճանաչման Finereader համակարգի մշակող, Cybiko առձեռն համակարգչի հեղինակ, Lingvo էլեկտրոնային հայտնի բառարանի ստեղծող, գիտության և տեխնիկայի ասպարեզում Ռուսաստանի նախագահի մրցանակի դափնեկիր: Նա նաև Մոսկվայում ռեստորանային ցանցի սեփականատեր է: Դավիթ Յանը ևս սերտ կապերի մեջ է Հայաստանի նորագույն տեխնոլոգիաների մասնագետների հետ: Հայաստանում գործող «Այբ» կրթական հիմնադրամի հիմնադիրներից է:

Հատուկենտ հայեր, հիմնականում ժամանակավորապես, բնակվել են Հոնկոնգում և Թայվանում: Հոնկոնգում մինչ օրս գործում է «Արմենիա» հյուրանոցը (Ֆա-Յուեն փողոց, թիվ 63Ա-65): Ստեֆան Շինի՝ Հոնկոնգում նկարահանված «Սև կատու» (1991) ֆիլմում խորհրդավոր մարդասպանի դերակատարն է ներկայումս կանադաբնակ **Օհան (Հովիկ) Քորթիքյանը** (եղել է նաև նույն ֆիլմի արտադրիչի ընթերական):

1978 թվականից Չինաստանի տնտեսական բարեփոխումներն արտասահմանցի գործարարներին հնարավորություն տվեցին լայնածավալ գործունեություն ծավալել աշխարհի ամենամեծ շուկայում: Չինաստան ժամանած այդ միլիոնավոր գործարարների թվում էին նաև փոքրաթիվ հայեր: 20-րդ դարի վերջին ԽՍՀՄ փլուզումից և ՉԺՀ-

ի տնտեսական աճից հետո չինական տարբեր մեծ ու փոքր քաղաքներում հաստատվել են հայեր տարբեր երկրներից: Տարիներ շարունակ լինելով սակավաթիվ և միմյանցից կտրված՝ 21-րդ դարի առաջին կեսին, համացանցի և անընդմեջ ավելացող հայրենակիցների թվաքանակի շնորհիվ, ի վերջո նրանք ևս միավորվել են:

Չինաբնակ հայերի միավորման գործում կարևոր դեր է կատարել ՉԺՀ-ում ՀՀ դեսպանատունը: Պեկինում Հայաստանի Հանրապետության դեսպանատունը բացվել է 1996-ի օգոստոսի 10-ին. առաջին դեսպանն էր դիվանագետ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ազատ Մարտիրոսյանը (ծն. 1955), որ պաշտոնավարել է մինչև 2001 թվականը: 2001–2007 թթ. ՉԺՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան է եղել Վասիլի Ղազարյանը (ծն. 1946): 2007–2008 թթ. ՉԺՀ-ում ՀՀ դեսպանն է եղել Վահագն Մովսիսյանը (1961–2008), որ կյանքին վաղաժամ հրաժեշտ է տվել Պեկինում: 2008-ից ՉԺՀ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանն է Արմեն Սարգսյանը (համատեղության կարգով ՀՀ դեսպանն է նաև Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում, Կորեայի և Սինգապուրի Հանրապետություններում). 1999–2002 թթ. եղել է ՉԺՀ-ում ՀՀ ռազմական կցորդը: Պարգևատրվել է ՉԺՀ պաշտպանության նախարարության մեդալով:

Թորոս Թորանյանը Չինաստանի հայկական դեսպանատան մասին գրել է. «*Թէեւ յարմարութիւններով հարուստ չէ այս հիմնարկը, բայց ահա դեսպանութիւնը յաջողացուցած է Չինաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան ամսագիրին մէջ հրապարակել ընդարձակ յօդուած մը անոր 2000 թ.ի իններորդ ամսուան թիւին մէջ: Չինաստանի «Աշխարհի Երկիրներ» ամսագիրը իր 1998 թ.ի Փետր.ի թիւին մէջ տպած է դեսպանութեան կողմէ տրուած Հայաստանի տնտեսական օրէնքները բացատրող ընդարձակ յօդուած*»[891]:

1994-ին Հայաստանի Հանրապետության և Չինաստանի միջև բարձրագույն կրթության բնագավառում հաստատված համագործակցությունն առիթ հանդիսացավ, որ հայաստանցի երիտասարդներ

[891] **Թորանեան Թ.**, Ուղեւորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, էջ 112:

ուսանելու մեկնեն չինական տարբեր համալսարաններ: Արդեն 1995-ին Երևանցի նյարդախտաբան, ռեֆլեքսոթերապևտ **Շուշանիկ Նազարյանը** կատարելագործվել է Պեկինի Չինական բժշկության համալսարանում, 2001–2006 թթ. նույն համալսարանում անցել դոկտորատուրա՝ պաշտպանելով ատենախոսություն և ստանալով ՉԺՀ բժշկական գիտությունների դոկտորի աստիճան: Նրա գիտական աշխատություններից վեցը հրատարակվել են Չինաստանում:

Չինական բուհերում ուսանող երկու տասնյակի հասնող հայաստանցի երիտասարդները մասնագիտանում են կառավարման, տնտեսագիտության, քաղաքագիտության մեջ: Տարեկան 60 կրթաթոշակ է հատկացվում Չինաստանում ուսանող հայաստանցի երիտասարդներին: 2009-ի տվյալով Չինաստանում ուսանող տաս հայաստանցիների մեծամասնությունը մասնագիտացել է տնտեսագիտության, երկուսը՝ բժշկության մեջ: Չինաստանի և Հայաստանի միջև կնքված միջպետական համաձայնագրի շնորհիվ կատարվում է ուսանողների փոխանակում, Չինաստանի տրամադրած կրթաթոշակներով հայտարարվում է մրցույթ՝ այդ երկրում ուսումը շարունակելու համար, և տարեկան մինչև 90 հայ ուսանող է գալիս բարձրագույն կրթություն ստանալու Չինաստանում (Հայաստան, սակայն, շատ սակավաթիվ չինացիներ են գալիս ուսանելու): Նրանք ունեն իրենց սեփական՝ Չինաստանի հայկական ուսանողական միությունը: Ի դեպ, ժամանակի մամուլի հավաստիացմամբ, 2006-ին Չինաստանում սովորող օտար ուսանողների մեջ հայաստանցիները համարվել են լավագույնները[892]:

Հայերի թիվը Չինաստանում սկսեց աճել 2000-ականներից՝ հիմնականում Ֆրանսիայից, Կանադայից, Ավստրալիայից, ԱՄՆ-ից, Հայաստանից, Լիբանանից, Սիրիայից, Անգլիայից, Ռուսաստանից, Բուլղարիայից, Թուրքիայից, Արգենտինայից եկած հայերի: Չինաբնակ հայերը մեծ մասամբ ուսանողներ են կամ ընդգրկված են հանրային կյանքի տարբեր բնագավառներում՝ առևտրի (հատ-

[892] Տե՛ս **Պողոսյան Ռ.**, Սփյուռքի դպրոցներում հայ աշակերտների թիվը տարեցտարի նվազում է, «Ազգ», Երևան, 24.06.2006:

կապես ոսկու), փաստաբանության և այլն: Հիմնականում բնակվում են Պեկինում ու ծովափնյա քաղաքներում՝ Հոնկոնգ, Շենճեն, Գուանճոու, Շանհայ, Նինբո և Նանկին[893]:

1990-ական թթ. կեսին Նինբո քաղաքում սիրիահայ գործարար **Գաբրիել Չենքերջյանը** հիմնել է «Արկոլաբ» ֆիրման, որը զբաղվում է դպրոցների համար լաբորատորիական սարքավորումների պատրաստությամբ: «Արկոլաբն» այնուհետև ղեկավարել են **Արշավիր Ստամբուլյանը, Ռաֆֆի Ստամբուլյանը**, 2013-ից՝ **Հակոբ Օհանյանը**: Կրթությամբ ճարտարապետ-դիզայներ Արշավիր Ստամբուլյանը Նինբոյում ունի սեփական դիզայներական ընկերություն:

Սինչև 2010-ականներին չինաբնակ հայերի միավորման փորձերը՝ նրանց կարելի է բաժանել երկու խմբի. հայաստանցի ուսանողներ, որոնց ներկայությունը տարերային է (մի մասը մշտական հաստատվում է Չինաստանում, մի մասը վերադառնում է Հայաստան, մի մասն արտագաղթում է այլ երկրներ) և Սփյուռքի այլևայլ համայնքներից եկածներ (գործարարներ և պաշտոնյաներ): Սկզբնական շրջանում չինաբնակ հայերը միավորվում էին ըստ իրենց բնակած քաղաքների և նահանգների: Շանհայում հայերին միավորելու գործում որոշակի ներդրում է ունեցել **Վաչե Պետրոսյանի** ղեկավարած Շանհայի հայկական ակումբը: Պեկինի հայերը միմյանց հետ ծանոթանում էին ՀՀ դեսպանատան կազմակերպած միջոցառումների շրջանակներում: Հայերը հատկապես ակտիվ էին Չինաստանի հարավում՝ Հոնկոնգ, Գուանճոու, Շենճեն քաղաքներում[894], սակայն միավորված չէին, հանդիպում էին տոնից տոն, չկային ընդհանուր նպատակ և քաղաքականություն:

[893] Տե՛ս Armenian Community Center Opens in Hong Kong, "Asbarez," Los Angeles, 14.11.2013: Չափազանցություն է այն վկայությունը, որ «*Չինաստանում երկի մոտ 3000 հայ կա, սակայն որպես ակտիվ և մասնակցող անդամներ մենք ճանաչում ենք նրանցից մոտ երեք հարյուրին*» (տե՛ս http://www.itechnology.am/hy/interview-hy/interview-with-mihran-papazian-chinahay-community-member-2-hy/ այցելությունը կայքէջ՝ 30.11.2013. այժմ գոյություն չունի):

[894] Տե՛ս **Սահակյան Մ.**, Չինաստանի հայկական համայնքը մեր օրերում, «Գլոբուս», Երևան, թ. 5, 2014:

Իրավիճակը փոխվել է, երբ Շենճենում բնակվող ֆրանսահայ **Միհրան Փափազյանի** նախաձեռնությամբ 2006-ին ստեղծվել է չինաբնակ հայերի սոցիալական համացանցային հարթակը՝ ի դեմս Chinahay կայքէջի (http://www.chinahay.com), որը հնարավորություն տվեց համախմբել Չինաստանի հայությանը, իսկ 2008-ին՝ նույնանուն կազմակերպությունը, որը նախագահ է ընտրում երկու տարի ժամկետով: Ըստ 2015 թվականին «Չինահայի» նախագահ Հենրի Արսլանյանի՝ Չինաստանի հայկական համայնքն ունի երեք հիմնական նպատակ. 1. միավորել Չինաստանում բնակվող հայկական ծագում ունեցողներին, 2. աշխարհին ներկայացնել Չինաստանում հայկական ներկայության՝ հիշատակման արժանի պատմությունը, 3. ստանձնել Հայաստանը և Չինաստանը միավորող «բնական կամրջի» դերը: Համայնքը չունի քաղաքական կամ կրոնական պատկանելություն[895]:

Հիմնադրման տարեթվից սկսած՝ Չինահայ համացանցային կայքի միջոցով հայերը հավաքվում և նշում են հայկական տոները, կազմակերպում տարբեր միջոցառումներ: 2006–2016 թթ. բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել Հոնկոնգում, Գուանճոուում, Շանհայում, Շենճենում, Նանկինում և Պեկինում[896]: 2014 թ. մարտին լույս է տեսել Չինաստանի հայերի առաջին երկլեզու՝ հայերեն և անգլերեն տեղեկագիրը: Տեղեկագիրը պատմում է չինահայերի կյանքի և ծրագրերի մասին՝ տարածվելով Չինաստանում և հայկական համայնքներում: 2016-ին լույս է տեսել տեղեկագրի 6-րդ թիվը, որը ներկայացրել է համայնքի կատարած աշխատանքը, ծրագրերը, համայնքի ներկայացուցիչներին:

Չինաբնակ հայերը սերտորեն համագործակցում են Հայկական վիրտուալ քոլեջի հետ: Հոնկոնգի հայերը հնարավորություն ունեն Ջեք և Ջուլի Մաքսյանների անվան հայկական կենտրոնում մասնակցել հայերենի դասընթացներին, որոնք կատարվում են համացանցի միջո-

[895] Տե՛ս Չինաստանի հայկական համայնքի նախագահ Հենրի Արսլանյանի հարցազրույցը, հարցազրույցը վարեց Անահիտ Պարզյանը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13827 (այցելությունը կայքէջ՝ 2.02.2015):

[896] Տե՛ս **Սահակյան Մ.**, Չինաստանի հայկական համայնքը մեր օրերում…

ցով՝ հնարավորություն տալով մասնակցել նաև տարբեր քաղաքներում բնակվող հայերին: Կազմակերպվում է ամենամյա Հայկական գիտաժողով, որին մասնակցում են Չինաստանում բնակվող հայազգի հետազոտողները: Հաջողություն վայելող գիտաժողովի ընթացքում հայ հետազոտողները միմյանց հետ հաղորդում են գիտության բնագավառում առկա ձեռքբերումները, փորձում համագործակցության ուղիներ գտնել: Գործում են տարբեր մասնագիտական խմբեր. մեկը համախմբում է Ասիայի հայ ֆինանսիստներին, մյուսը՝ Չինաստանում սովորող հայ ուսանողներին[897]:

2014-ին ստեղծվել է Չինաստանի հայկական ուսանողական միությունը՝ 50 անդամով, նպատակ ունենալով համախմբել Չինաստանի հայ ուսանողներին: Նրանք մշտական կապի մեջ են wechat սոցիալական ցանցի միջոցով:

Չինահայության վերջին տասնամյակների վերաբերյալ տվյալներ է հաղորդում Թորոս Թորանյանն իր «Ուղեւորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան» գրքում: Ըստ նրա՝ Հոնկոնգի հայերի թիվը 2002-ին եղել է տաս հոգի, որոնց մեջ առանձնանում է իր հյուրընկալը՝ գործարար Ջեք Մաքսյանը (հայկական անունով՝ Հակոբ Մխսյան), որը բնակվում է Հոնկոնգում և Շանհայում և որին էլ նվիրված է գիրքը: Թորանյանը բազմիցս նշում է ծնունդով բեյրութցի Հակոբի և նրա չինուհի կնոջ՝ Ջուլիի մարդկային արժանիքները, թե ինչպես են նրանք կարողանում համախմբել իրենց շուրջը Ծայրագույն Արևելքի հայ բնակիչներին՝ Բանգկոկում, Հոնկոնգում թե չինական այլ քաղաքներում: «*Բարեկամս՝ Յակոբ Մխսեանը, գործատեղի մը եւ տուն մը ունի Հոնկ Քոնկի մէջ ֆիլիփինցի ծառայով: Սքանչելի չինացի հայասէր ու հայամօտ կին մը ունի, որ կը հասկնայ եւ քիչ մըն ալ կը խօսի հայերէն, նոյնիսկ հայերէն երգեր ալ գիտէ: Տուն մը եւ աշխատանքի այլ կեդրոն մը ունի Շանկհայի մէջ ու տուն մը՝ Լիբանանի: Բայց տուն մը չունի Հայաստանի մէջ: Իր ունեցածները ի՞րն են արդեօք. կը խորհիմք... ու կը յիշենք որ նոյն Յակոբը սքանչելի գրասենեակ մը ունէր Պէյրութի Պապ Խորիս պողոտային վրայ: Բայց առաւօտ մը արթնցաւ Յակոբ ու տեսաւ միայն աներակները իր հարստութեան....*

Բարեկամս՝ Յակոբը, մէկ հարստութիւն ունէր եւ ունի՛ այսօր ալ, անկապտելի հարստութիւն մը՝ իր աշխատասիրութի՛ւնը: Այլապէս զերոյէն սկսելով, Հոնկ Քոնկ մեկնելով նոր տուն ու աշխատավայր չէր կրնար ունենալ:

Յակոբը իր ունեցածէն տուած է ու կու տայ ազգին. շատ անգամ անհաշիւ կու տայ՝ հիմնաւորելով հայու իր կեցուածքը երկրին ու ափիւռքին համբէս»[898]:

Մաքսյանի եղբոր որդին՝ **Ռաֆֆի Մաքսյանը** կամ **Ռաֆայել Մաքսը** (ծն. 1977), աշխատում է Հոնկոնգի «Քի էնդ լոք սիսթեմզ» ընկերությունում: Տնօրինում է «Անուշ» անվամբ տպագրական ֆիրման: Կինը չինուհի Թրաղա Մաքսյանն է, ունի երկու դուստր՝ **Կալիստա Անուշ** և **Լուսին**:

Հոնկոնգաբնակ հայերի մեջ Թորանյանը հիշել է նկարչուհի **Սյուզան Անեմյան-Ջուին** (ծն. 1967, Բեյրութ): Սյուզանը 1985–1988 թթ. ուսանել է Լիբանանի Գեղարվեստի հաստատությունում: 1989–1991-ին Բեյրութում հաճախել է դիզայնի, 1992–1994-ին հեռակա՝ Լոնդոնի երգիծանկարչության դասընթացներին: Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Լիբանանում, Անգլիայում և ԱՄՆ-ում: Ամուսնացել է նկարիչ, Հոնկոնգի գեղարվեստի համալսարանի դասախոս Մուն Շիու (Քրիստոֆեր) Քուի հետ և հաստատվել Հոնկոնգում[899]: Թեև մանկուց հիվանդացել է ոտքերի անշարժությամբ, սակայն ոգեկան մեծ կորովի շնորհիվ կարողացել է մասնագիտանալ նկարչության մեջ, իսկ բարձր գաղափարականի տեր չինացի ամուսնու շնորհիվ ունենալ նաև անճնական երջանկություն:

Շանհայի հայերից Թորանյանը հանդիպել է Հայաստանից արտագաղթած **Արտաշ Հարությունյանին**, **Արմեն Մանասյանին** և **Ջոր-**

[897] Չինաստանի հայկական համայնքի նախագահ Հենրի Արպաճյանի հարցազրույցը...

[898] **Թորանեան Թ.**, Ուղեւորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, էջ 193:

[899] Տե՛ս նույն տեղում, էջ 71-78, 196:

ջին, բեյրութցի **Սարո (Սարհատ) Յուբյուկյանին**, որն աշխատում է տեղի առևտրական մի ընկերությունում և ծնունդով բաղդադցի **Ջոյչ Հայեք Ալամաճյանին**, որի ավագ դուստրն անգլերենի դասախոս է[900]: Պեկինի համալսարանի չինարեն լեզվի և մշակույթի բաժնի շրջանավարտ Արտաշ Հարությունյանը Շանհայում աշխատում է «Արարատ» անունով ռեստորան-կաբարեում[901]: Շանհայում ընտանիքով բնակվում է ինժեներ **Հովհաննես Մեսրոպյանը**, որը երկրաշարժակայուն շինարարության տեխնոլոգիաների մասնագետ է[902]:

Թորանյանը չինաբնակ հայերից հանդիպել է նաև հետևյալ անձանց՝ Հոնկոնգում բնակվող առևտրական **Արա Սապունճյան**[903], Գուանճոուում բնակվող մարաշցի ծնողների զավակ **Երջանիկ Սամոելյան** (ծնվել է Իտալիայում, ապրել Ֆրանսիայում, Լիբանանում և ԱՄՆ-ում), որը Գուանճոուում բացել է կոշիկի գործարան 980 չինացի բանվորներով[904], նաև Պեկինում բնակվող մի լուսանկարչի, որի հայրը եղել է բաղդադցի իտալացի, մայրը՝ երևանցի հայուհի **Թրվանտա Սարգսյանը**[905]:

Տաս տարի Չինաստանում է բնակվել հայազգի ֆրանսիական լրագրող, չինագետ **Ուրսուլա Գոթյեն** (Քյուրքճյան): Ծնունդով լիբանանահայ Ուրսուլան 1979–1989 թթ. չինարեն է ուսանել Պեկինի համալսարանում: Հայաստանի, Չինաստանի և Տիբեթի մասին հոդվածներով հանդես է եկել ֆրանսիական մամուլում: 1998-ին «Չինական հրաբուխը» հոդվածի համար արժանացել է «Օգյուստ Պավիե» մրցանակին: 2002-ին բնակչության շրջանում արյան վարակման բուժման համար Հենան նահանգում արժանացել է «Լույի Աշետ» մրցանակին: 2009–2015 թթ. եղել է «Նույվել լ'օբսերվատյոր» հանդեսի մշտական թղթակիցը Չինաստանում, մասնավորապես՝ Տիբեթում և Սինյանի շրջանում, 2008-ին նկարահանել է «Չինական ճեղքվածքը» և «Չինաստան. հաղթել առանց պայքարի» (Անտուան Ռուի հետ) վավերագրական կինոնկարները: 2015-ին Ուրսուլա Գոթյեն ստիպված է եղել հեռանալ Չինաստանից այն բանից հետո, երբ հոդված է հրատարակել Սինյանի ույղուրների մասին, որը չինական իշխանությունները հավաստության չեն արժանացրել՝ գտնելով, որ այն իրր սատարում է ահաբեկչությունը:

1986-ից Չինաստանում և 2004-ից նաև Մոնղոլիայում է աշխատում ֆրանսահայ գործարար **Ժիրայր Լուսինյանը**: Վերջինս մասնակցել է հայ-չինական առաջին միջպետական հանդիպմանը 1991-ին: Նրա դուստրը՝ չինացու հետ ամուսնացած **Կարինե Սյիեն**, աշխատում է Պեկինում Ֆրանսիայի դեսպանատանը՝ որպես տնտեսական առաքելության սպառողական միջոցների սեկտորային կցորդ[906]: Ծնունդով լիբանանահայ գործարար **Տիգրան Գյուլեքյանը**, որը բնակվել է Մոնրեալում, իսկ այժմ՝ Պեկինում, տնօրինում է «Արմենի ինքներնեշընգլ» ընկերությունը. այն ներմուծում է կանադական էլեկտրական ջերմացուցիչներ և այլ ապրանքներ: Ծնունդով Փարիզից **Միհրան Փափազյանը** 2006 թ. հայուհի կնոջ՝ **Թամարի** և **Նարեկ** որդու հետ հաստատվել է Չինաստանում: Շենճենում և Հոնկոնգում հիմնել է «Բիհուա գրուպ» առևտրական ընկերությունը: Կանադահայ **Հենրի Արպաճյանն** աշխատում է ֆինանսական ծառայություններ կատարող «UBS» ընկերության Հոնկոնգի մասնաճյուղում:

Չինական գիտության և կրթության բնագավառներում աշխատում են հետևյալ հայորդիները:

2003-ից Գուանճոուում է բնակվում ծնունդով երևանցի **Կոնստանտին Ալթունյանը** (ծն. 1979): Նա ավարտել է Պեկինի մանկավարժական համալսարանի պատմության բաժինը: 2005 թվականից Ալթունյանը փորձում է միավորել Չինաստանի հարավում ապրող ռուսներին. հիմնադրել և նախագահում է Գուանճոուի ռուսական ա-

[900] Տե՛ս նույն տեղում, էջ 134, 148:
[901] Տե՛ս նույն տեղում, էջ 134, 158:
[902] Տեղեկությունը՝ Վազգեն Էքսերճյանի (21.09.2007 թվակիր էլեկտրոնային նամակ):
[903] Տե՛ս **Թորանեան Թ.**, Ուղեորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, էջ 73:
[904] Տե՛ս նույն տեղում, էջ 109:
[905] Տե՛ս նույն տեղում, էջ 101:

[906] Տեղեկությունները՝ Ժիրայր Լուսինյանի և Կարինե Սյիեի (20 և 23.11.2006 թվակիր էլեկտրոնային նամակներ):

կումբը: Նա նաև Չինաստանի ռուս հայրենակիցների համադրող խորհրդի անդամ է[907]:

2003–2014 թթ. պարբերաբար Չինաստանում աճգլերեն է դասավանդել ամերիկահայ ուսուցիչ, բանաստեղծ **Րաֆֆի Մեթյանը**: Նա աշխատել է Շանհայի, Ծիսյինի, Ճանճուսի և հատկապես Ուհանի համալսարաններում: Սեթյանի շնորհիվ իր ուսանողուհիներ Ֆեյ Չանը և Սյիաոֆեյ Լուոն, հետաքրքրվել են հայ իրականությամբ, 2014 և 2016 թթ. մասնակցել են Վենետիկի «Պո-Արաքս» ընկերակցության կազմակերպած հայոց լեզվի և մշակույթի ամառային խտացյալ-դասընթացին:

2012-ին Նանկինի համալսարանի Միջազգային հարաբերությունների ինստիտուտի ասպիրանտ, 2016-ից Չինաստանի հայկական ուսանողական միության նախագահ **Սիեր Սահակյանը** ստեղծել է http://chinastan.org/ հայերեն կայքէջը Չինաստանի մասին: Ի դեպ, նրա մանկահասակ դուստրը՝ **Սաֆինե Սահակյանը**, 2015-ին չինարեն պատմություն պատմելու CCTV-ի հայտարարած մրցույթում նախ հաղթել է մանկապարտեզի իր դասընկեր չինացիներին, իսկ հետո դարձել քաղաքային մրցույթի հաղթող: 2016 թ. դեկտեմբերի 7-ին Չինաստանի Նանկինի համալսարանի Միջազգային հարաբերությունների ինստիտուտում Դոկտորանտների գիտական ֆորումին չորս երիտասարդ հետազոտողներ ներկայացրել են իրենց ուսումնասիրությունները միջազգային հարաբերությունների ոլորտում: Բանախոսների մեջ է եղել նաև նույն ինստիտուտի դոկտորանտ **Անահիտ Պարգյանը**, որը ներկայացրել է սեփական դիտարկումներն ԱՄՆ-ի կիբերքաղաքականության վերաբերյալ և ինստիտուտի կողմից պարգևատրվել է պատվոգրերով:

Ծնունդով գյումրեցի **Ալբերտ Ոսկանյանը** գիտահետազոտական աշխատանք է կատարում Հոնկոնգի համալսարանի ասպիրանտուրայում՝ նանոկառուցվածքային նյութերի ստացման վերաբերյալ: Երևանցի **Գևորգ Գրիգորյանը** (ծն. 1989), որն ուսանել է Նանկինի Հոհայի համալսարանում, 2012-ից աշխատում է Թի Սի Սի Նոր Էներգիայի և մեխանիզմների ընկերության Նանկինի մասնաճյուղում: Նույնպես Հայաստանից արտագաղթած **Սարգիս Սաքանյանն** ավարտել է Պեկինի համալսարանը: Դասավանդել է Պեկինի Միջազգային դպրոցում, 2013-ի տվյալով նա եղել է Սուճոուի էքոնհաուզ միջազգային դպրոցի փոխտնօրենը և միջին դասարանների համակարգողը:

2015-ի սեպտեմբերից Չինաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ Պեկինի օտար լեզուների համալսարանում (ՊՕԼՀ) սկսվել է հայոց լեզվի դասավանդումը, որի գործը վստահվել է նույն բուհի ասպիրանտ, Չինաստանի հայկական ուսանողական միության գործադիր կոմիտեի անդամ **Մերի Կնյազյանին**: ՊՕԼՀ-ը օտար լեզուներ դասավանդող առաջատար բուհ է Չինաստանում, և հայերեն լեզվի ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել ուսանողների շրջանում: Ներկայումս հայերեն սովորում են բուհի 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողները՝ որպես 3-րդ օտար լեզու:

Քուվեյթաբնակ գործարար **Աշոտ Գույումճյանը** Չինաստանի լավագույն համալսարաններից մեկը՝ Շանհայի «Չինաստան-Եվրոպա միջազգային բիզնեսի դպրոցում» ուսանել է վեց տարի, ավարտել գերազանցությամբ և վերադարձել Քուվեյթ՝ հոր հետ վարելու 34 տարի առաջ ընտանիքի հիմնած խոշոր արտադրական բիզնեսը: Ըստ Գույումճյանի՝ Քուվեյթ է վերադարձել նոր ու առաջատար գաղափարներով, քանի որ Չինաստանում վեց տարի ստացած ուսումն օգնել է բացահայտելու աշխարհի բիզնեսն ու արտադրությունը գրաված «չինական գաղտնիքը»:

Սակավաթիվ հայեր մասնակցել և մասնակցում են նաև չինական մշակութային կյանքին: 20-րդ դարի վերջին, 21-րդ դարի սկզբին Չինաստանում ուսանած հայաստանցիներից շատերը նկարահանվել են չինական ֆիլմերում: Ի տարբերություն արևմուտքցի ուսանողների, հայ (նաև ռուս) ուսանողները հաճույքով են ընդառաջել չինացի կինոգործիչների հրավերներին՝ եվրոպացիների դերերով հանդես գալու չի-

[907] Տե՛ս Русские в Китае, էջ 538:

նական կինոնկարների զանգվածային տեսարաններում՝ թե՛ վայելելու իրենց էկրանին տեսնելու բերկրանքը և թե՛ ազատ ժամանակ որոշ գումար վաստակելու համար: Հետաքրքիր է, որ եթե արևմտյան ֆիլմերում հայերը կատարել են մերձավորարևելցիների դերեր, ապա չինական ֆիլմերում հանդես են գալիս եվրոպացիների (հիմնականում՝ դրվագային) դերերով: Սակայն Չինաստանում ուսանած առաջին հայաստանցուն վիճակվեց աչքի ընկնող դերեր կատարել չինական հեռուստակինոյում: Երևանցի **Լիանա Եղիգարյանը** (ծն. 1976) մանկուց հետաքրքրվել է Չինաստանով, իսկ ոգևորությունը չինացի մարզիկ կինոաստղ Բրյուս Լիի կինոնկարներով նրա մեջ հույսեր է ներշնչել բեմ և էկրան բարձրանալու: 1994–1996 թթ. նա ուսանել է Պեկինի չինարեն լեզվի և մշակույթի համալսարանում: Երբ բակալավրի երրորդ կուրսում ուսանողներն առաջադրանք են ստացել, որ ամեն ազգի ներկայացուցիչ իրենց գրականությունից որևէ ճմռւշ բարգմանի, Լիանան չինարեն է բարգմանել Հովհաննես Թումանյանի «Ախթամարը»: Հետագայում չինարեն է բարգմանել Թումանյանի «Քարեկենդանը» հեքիաթը, Էլդա Գրինի «Ձեռքերը» պատմվածքը[908] և Հրանտ Մաթևոսյանի պատմվածքները (անտիպ):

1994-ին հայտնվելով Չինաստանում՝ ժամանումից իննն օր անց հմայիչ Լիանային արդեն նկարահանման առաջարկներ են արել: Առաջին անգամ հեռուստաէկրանին նա կատարել է օպերա դիտող եվրոպացի դեսպանի դստեր դերը: Չինարենի ուսուցմանը զուգահեռ Լիանա Եղիգարյանը նկարահանվել է բազմաթիվ չինական կինոնկարներում, մասնակցել թատերական ներկայացումների: Դրանց կոնկրետ թիվը և շատերի վերնագրերն ինքն էլ չգիտի, քանի որ դերերի մեծ մասը եղել է դրվագային կամ զանգվածային տեսարաններում: Օր է եղել, որ երեք տարբեր ֆիլմերում է նկարահանվել: «Մեծ ձեռք» կինոֆիլմում նկարահանվել է հոլիվուդյան հռչակավոր դերասան Դոնալդ Սաթըրլենդի հետ:

[908] Տե՛ս **Գրին Է.**, Ձեռքերը: Պատմվածք 35 լեզուներով, Երևան, 2010, էջ 122-123:

Վեց հեռուստատեսային ֆիլմաշարում Լիանան հանդես է եկել գլխավոր դերերով: Նրա առաջին մեծ դերը Գերմանիայի արքայադուստր Ֆելիսիան էր՝ բեմադրիչ Վան Չըն Լինի «Չինական դինաստիայի սուրհանդակը» 30-մասանի ֆիլմաշարում (1997): Այս կինոնկարում հանդես է եկել նաև Լիանայի քույրը՝ նույնպես չինական լեզվի և մշակույթի համալսարանի ուսանողուհի **Մարինա Եղիգարյանը**:

Լիանայի երկրորդ մեծ դերը Քեթին է՝ բեմադրիչ Չի Չըն Ֆրնի «Արտակարգ գործ» 20 մասից բաղկացած հեռուստասերիալում (1999): Նրա հերոսուհին ամերիկուհի ուսուհական է, որ գալիս է Չինաստան՝ հետաքննելու սպանության մի գործ: Նույն թվականին Լիանան կատարել է մեկ այլ ամերիկուհու դեր Յե Չին Սինի և Վան Յան Անի «Ճուն Գուան Յուն փողոցը» ֆիլմաշարում: «Թայվանցի հերոս Ճըն Չըն Գուն» (2000) պատմական ֆիլմաշարում Լիանան կատարել է հոլանդացի գնդապետի նշանածի դերը: Հաջորդ տարի Վան Լոնի «Հնամոտ կայսրը» 18-մասանի ֆիլմաշարում նա հանդես է եկել եվրոպական դեսպանի դստեր՝ Ջեսիի դերով: Լիանայի ամենամեծ դերը ամերիկուհի Ջենին է՝ Քայ Խոնի «Վաղ թառամած ծաղիկը» (2001) հեռուստաշարում: Ի դեպ, տարեց Ջենիին մարմնավորել է Սըչուանի համալսարանի ռուսաց լեզվի դասախոս, ծնունդով մոսկվացի **Սուսաննա Մալինինան**, որի մեծ հայրը հայ էր...

Այս կինոնկարներից բացի՝ Լիանան նկարահանվել է ու-շուի մի հատուկ ծրագրում: Օրը երեք անգամ չինական Սի Սի հեռուստակայանը ցուցադրել է պա-գուա-ճան կոչվող ու-շուի տարատեսակի մի հաղորդում, որտեղ Լիանան կատարել է իր չինացի մարզչի ցուցմունքները:

Կինոյում և թատրոնում Լիանա Եղիգարյանը հանդես է եկել չինացի մի շարք նշանավոր դերասանների հետ: Մակագրերում նա երբեմն գրվել է միայն իր անվամբ, որ չինարեն հնչում է Լիեննա: Հեռուստակինոյից բացի, Լիանան և Մարինան հանդես են եկել գովազդներում և հեռուստաշոուներում՝ որպես հաղորդավարուհի, ասմունքող, երգչուհի և պարուհի: Չինական և հայկական երգերի կատարումներով մասնակցել են բազմաթիվ միջոցառումների, որոնց ժամանակ

Լիանան նաև քանոնով կատարել է հայկական և ույղուրական մեղեդիներ: Նրանց Չինաստանում ճանաչել են որպես «*Յամենիյա ծիեմեյ խուա*», այսինքն՝ «*հայ ծաղիկ քույրիկներ*»... Մարինան հանդես է գալիս նաև չինական ծիծ-ծյույ կոչվող օպերայում: Չինական մամուլը բազմիցս գրել է Եղիգարյան քույրերի մասին: «*Չինարենի իր հրաշալի իմացությամբ Լիանան ներկայացնում է դերակատարման արտահայտման ոճ, կարողանում է իր դերերով պատկերել տվյալ երկրի աղջիկների (Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Ամերիկա, Ռուսաստան և այլն) կերպարներ*»,– գրել է «Չին ձի ըրն» («Քրոքեր») ամսագիրը[909]:

Ներկայումս (2017) Լիանա Եղիգարյանը պաղեստինցի ամուսնու և երեք զավակների հետ բնակվում է ամուսնու հայրենիքում, աշխատում չինարեն-հայերեն բառարանի վրա...

Երևանցի **Վանուշ Բաբայանը** (ծն. 1980) դասական և մոդեռն բալետ է դասավանդել նախ չինական Դալիան քաղաքի Սյուե Ռոն Հուա, այնուհետև՝ Պեկինի միջազգային պարերի դպրոցում, աշխատել որպես փոխտնօրեն և գլխավոր բալետմայստեր: Բեմադրել է վարիացիաներ և պա-դե-դեներ դասական երկացանկից և մյուզիքլներից, դասական և տարբեր ժողովուրդների ժողովրդական պարեր: Վանուշ Բաբայանը տարիներ շարունակ ունեցել է հայ, ռուս և չինացի բազմաթիվ աշակերտներ, որոնց մի մասը ընդիրվել է պրոֆեսիոնալ բեմին: Նրանց հետ եղել է Չինաստանի զանազան գավառներում՝ ներկայացնելով աշխարհի ժողովուրդների պարեր և բալետային համարներ: Ի դեպ, Սյուե Ռոն Հուա միջազգային պարերի դպրոցը Վանուշի շնորհիվ 2010-ից համագործակցում է Երևանի Մշակույթի համալսարանի հետ[910]: Երևանցիներ Կարեն Փոստիկյանը, Ստեփան Անդրեասյանը և այլք նույնպես կարճ ժամանակ Դալիանում աշխատել են որպես լատինամերիկյան պարերի ուսուցիչներ:

[909] Տե՛ս **Թոն Չյուն**, Կարիք չունեմ հովանավորի, «Չին ձի ըրն», 2001, թ. 8, էջ 59 (չինարեն):

[910] Նրա մասին մանրամասն տե՛ս մեր «Հայ պարուսույցը Չինաստանից» հարցազրույցում («Ազգ», Երևան, 13.02.2015) և «Հայերը համաշխարհային պարարվեստում» աշխատության մեջ (Երևան, 2016, էջ 226):

Թայվանում և Հոնկոնգում էլ որոշ ժամանակ դասավանդել է ԱՄՆ-ում բնակվող սպորտային պարերի կատարող և պարուսույց **Գրիգորի Սեդրակյանը** (Ալոնց, ծն. 1982, Երևան): 2014-ից «Հոնկոնգ բալե» խմբի կազմում որպես մենակատար հանդես է գալիս ծնունդով երևանցի պարող **Դավիթ Վարդանյանը** (ծն. 1987, Երևան), որը մինչ այդ աշխատել էր Գերմանիայի և Բելգիայի բալետային խմբերում:

Հայազգի ֆրանսիական մարմնամարզիկ, 2000 թ. օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր, հետագայում անշարժ գույքի գործակալ **Քենժամեն Վարոնյանը** (ծն. 1980, Նիս) ներկայումս բնակվում է Մակաոյում, որտեղ որպես ակրոբատ հանդես է գալիս «Արևային կրկեսում»:

Շանհայում 2008-ից գործող «Օփենֆինալ» անկախ կինոստուդիայի համահիմնադիր է կինովավերագրող, կինոդերասան, հետազոտող **Ռուբեն Գինին** (Գասպարյան, ծն. 1985, Երևան): Նա ռեժիսուրա է ուսանել Մոսկվայի կինեմատոգրաֆիայի ինստիտուտում: 2004-ից բնակվում է Չինաստանում, աշխատել է «Կուիյոու փրոդաքշըն հաուզ» միջազգային գովազդային ընկերությունում՝ որպես գեղարվեստական ղեկավար: Նկարահանել է ավելի քան 15 գովազդային հոլովակ «Պանասոնիկ», «Ասահի», «Մքդոնալդս», «Շիսեյդո», «Հոնդա», «Տոշիբա» և այլ միջազգային ընկերությունների համար: 2010-ից մասնակցել է մի շարք չինական հեռուստասերիալների և խաղարկային ֆիլմերի ստեղծմանը: Որպես անկախ լուսանկարիչ համագործակցում է «National Geographic» հանդեսի հետ: «Օփենֆինալ» կինոստուդիայում նկարահանվել են «Համազգային մշակութային ֆորումը» (2008), «Աշխարհի քաղաքները. Շանհայ» (2008–2011) և այլ ֆիլմեր: Իր եվրոպական արտաքինի շնորհիվ Ռուբենը նկարահանվել է վեց չինական հեռուստաֆիլմում (դերերից է ամերիկացի Չարլզ Թեյլորը՝ «Պաշտպանները» ֆիլմում): Ձայնագրվել է նաև Դիսնեյի երկու մուլտիպլիկացիոն կինոնկարների չինարեն կրկնօրինակման համար: Ռուբեն Գինին 2011–2014 թթ. նկարահանել է «Անդին. հայկական ճանապարհորդությունների տարեգրություն» լիամետրաժ վավերագրա-

կան ֆիլմը: 2016-ին Երևանում լույս է տեսել Գինիի «Անդին. պատմական ակնարկներ Չինաստանի հայերի մասին» ռուսերեն ժողովածուն:

Հեռավոր Արևելքի երկրներում պարային մեծ շոուների արտադրիչ է **Աբրահամ Կոստանյանը** (ծն. 1957, Հալեպ), որը տնօրինում է «Ակոստա արտիստ» ընկերությունը: Ավարտել է Երևանի պարարվեստի ուսումնարանը, 1983-ին Հալեպում ստեղծել և տաս տարի ղեկավարել է «Ազատ Ղարիբյան» ժողովրդական պարերի խումբը: Սինգապուրում և Հոնկոնգում բնակվող գործարար Բոբ Մաքսյանի հրավերով մեկնել է Հեռավոր Արևելք՝ շոու-բիզնեսում տարբեր նախագծեր իրականացնելու: Քսանհինգ տարի աշխատել է Մալայզիայում՝ «Գենթինգ հայլանդս» մեծ խաղատանը մոդեռն և ակրոբատիկ պարային մեծ շոուներ բեմադրելով: Այնուհետև տաս տարի զբաղվել է պարային և կրկեսային շոուների կազմակերպմամբ Հարավային Կորեայում (Սեուլ), ապա՝ Չինաստանում (Շենյան, Առմին, Հարբին): 2006–2007-ին Կոստանյանը Շենյանում աշխատել է «Ֆանտաստիկա» թատրոնում, իսկ 2008-ից՝ Հարբինի նշանավոր սառցե քանդակների փառատոնի ընթացքում երկու ամիս շարունակ, պետական աջակցությամբ, կազմակերպում է մեծ շոուներ (օրական երկու շոու՝ 3000 հանդիսատեսի ներկայությամբ): Դրանց մասնակցում են պարողներ և կրկեսի արտիստներ հարավային Չինաստանից, Ռուսաստանից, եվրոպական երկրներից:

Մոսկվայի մշակույթի և արվեստի համալսարանի ավագ դասախոս **Միքայել Հայրապետյանը** (ծն. 1984) որոշ ժամանակ աշխատել է Չինաստանում՝ ՌԴ-ի և ՉԺՀ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում՝ ներկայացնելով ռուսական և հայկական դաշնամուրային արվեստը: Չինաստանում գործում են նաև ծնունդով երևանցի ջութակահարներ **Աստղիկ Պողոսյանը** (չինացիները գործածում են նրա անվան թարգմանությունը՝ Սյին Սյին)՝ Շանհայից և **Սերգեյ Գևորգյանը** (դասավանդել է Գուանճոուի կոնսերվատորիայում), նաև՝ հեծանվասպորտի մարզիչ **Ալբերտ Սողոյանը**: Երևանցի բուժքույր **Նունե Միլի-**

տոնյանն իր աշխատավայրում ծանոթացել է չինացի Դեն Սյուցգանի հետ, ամուսնացել, ունեցել երկվորյակ դուստր, ապա տեղափոխվել Չինաստան: Ութ տարի նրանք բնակվել են Սյուցգանի ծննդավայրում՝ Ճանճյանգաան գյուղում (տիբեթյան Շանդունգ նահանգ): Այնուհետև ընտանիքը տեղափոխվել է Ջունչեն քաղաքը, որտեղ Նունեն բացել է իր անվամբ ռուսական ռեստորան-բար: Նունեի և Սյուցգանի (հայկական ձևով՝ Սուրիկ) երջանիկ սիրո մասին է պատմում Բենիամին Գևորգյանի «Հեռու-մոտիկ» վավերագրական կինոնկարը (2007, «Հայկ» կինոստուդիա):

2013 թ. ապրիլի տվյալով՝ Դիմագրքի (Facebook) չինաբնակ հայերի խմբում (Chinahay), ի թիվս որոշ վերոհիշյալ անունների, գրանցված են նաև երևանցիներ **Աննա Հովհաննիսյանը**, **Լուսինե Սարգսյանը** (Պեկին), ֆրանսահայ **Վազգեն Փափազյանը**, լիբանանահայեր **Վարուժ Քնջեյանը** և «Քրիեյթիվ փըրլ» ֆիրմայի աշխատող **Հակոբ Ջոզեֆ Ավիկյանը**, երևանցի **Էդգար Տերյանը**, մոսկվացի **Ռուզաննա Սարիբեկյանը** (Շենճեն), **Փիթեր Քասմաջյանը**, **Լարա Վարժապետյանը**, ամերիկահայեր **Ռամելա Ուզունյանը**, **Նիքոլաս Թոփջյանը**, վրացահայ **Սոֆի Բեժանովան** (Հոնկոնգ), **Արթին Գրիգոր Թոմաս Սարգսյանը**, երևանցիներ **Արևիկ Սարգսյանը** և **Ռուզաննա Մգերյանը** (Գուանճոու), **Սաշա Ասքիջյանը**, լուսանկարիչ **Ժիրո Չալիկյանը** (Շանհայ), քեսաբցի **Պետո Սեզյանը** (Յիվու, Ճենջյան), երևանցի **Դավիթ Քարտաշյանը** (Չանգշա, հարավ-կենտրոնական Չինաստան), ինչպես նաև երևանցի **Լուսինե Սաֆարյան Ֆոտո** և այլք[911]:

Ժամանակ առ ժամանակ Չինաստանում գործնական կապերով պաշտոնավարում են տարբեր երկրների հայազգի գործիչներ՝ գործարարներ, պետական գործիչներ, օրինակ՝ կանադահայ գործարար **Արփինե Մանուկյանը** (ծնունդով Պաղեստինից), Չինաստանում Թուրքմենստանի դեսպան, Թուրքմենիայի նախկին արտաքին գործերի նախարար, մոր կողմից հայ **Բորիս Շիխմուրադովը** (2001-ի տվյալով),

[911] Տես http://www.facebook.com/groups/chinahay/members/ (այցելությունը կայքէջ 30.04.2013):

որը տիրապետել է հայոց լեզվին և կապի մեջ է եղել Չինաստանում Հայաստանի դեսպանատան հետ[912]:

2016 թ. տվյալով՝ Թայվանում բնակվում է 20-30 հայ, մեծ մասամբ հայաստանցիներ, որոնք հիմնականում ներգրավված են գիտության և արտադրության ոլորտում: Հիշենք այդ անուններից՝ **Մխիթար Զարգարյան** (վաճառքի մասնագետ, մենեջեր, չինարենի մասնագետ), **Արտակ Մարտիրոսյան** («FM entertainment» ընկերության գլխավոր տնօրեն) և իր դուստրը՝ **Միլանա Մարտիրոսյան, Ռոբերտ Տեր-Հովհաննիսյան** (Z Moto LTD, LED լամպերի գործարանի տնօրեն, ավագ ճարտարագետ, գործարար), կինը՝ **Աննա Նազարյան** (նույն գործարանի մարկետինգի մենեջեր) և դուստրը՝ **Աբանա Տեր-Հովհաննիսյան**, **Դավիթ Բեյբության** (վաճառքի տեխնիկական աջակից), **Ալբերտ Զարգարյան** (շափյուղայի աճեցման ավագ ճարտարագետ, արտադրանքի մենեջեր), **Բենիկ Գրիգորյան** (շափյուղայի արտադրության մասնագետ, մենեջեր), **Վլադիմիր Հովհաննիսյան** (Թայվանի ազգային համալսարան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու), **Դավիթ Սահակյան** (Թայվանի ազգային համալսարան, տեսական ֆիզիկա), **Կարեն Պետրոսյան** («Ակադեմիա Սինիկա», ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու), **Կարեն Սարգսյան** («Ակադեմիա Սինիկա», կենսաբժշկական գիտությունների ինստիտուտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու), **Շուրա Հայրյան** (ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու), **Կարինե Մազմանյան** («Ակադեմիա Սինիկա», ասպիրանտ), **Վարդան Գասպարյան** («VG entertainment» ընկերության գլխավոր տնօրեն), **Գաբրիել և Էդգար Գասպարյաններ, Վարդան Ամիրյան** (կրկեսի արտիստներ), **Քնարիկ Սահակյան, Հասմիկ Բալայան-Հայրյան, Էլեն Չան** (տնային տնտեսուհիներ): Ի դեպ, Էլենի ամուսինը՝ թայվանցի

[912] Տե՛ս **Թորանեան Թ.**, Ուղեւորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, էջ 116: Բորիս Շիխմուրադովը 2002-ին Թուրքմենստանի պետական դավաճանության մեջ մեղադրվելով՝ դատապարտվել է ցմահ բանտարկության, որից հետո նրա մասին ոչինչ հայտնի չէ (ենթադրվում է, որ մահացել է բանտում):

Ճան Ցու Սոնը, նկարահանվել է հայկական «Քայլ ձիով» կինոկատակերգությունում (ռեժիսոր՝ Գառ Կիրակոսյան)[913]:

Թայվանում որոշ ժամանակ բնակված հայաստանցի բժիշկ **Գևորգ Թամամյանը** (ծն. 1987) 2016-ին հրատարակել է «Դրախտ օվկիանոսի մեջտեղում կամ Արտաղրված է Թայվանում» պատմվածքների ժողովածուն:

Անշուշտ, չինաբնակ հայերը մաս են կազմում երկրում բնակվող օտարերկրացիների համայնքի, ոչ ազգային փոքրամասնությունների (ինչպիսիք դարակեսին արդեն համարվում էին Չինաստանում ծնված ռուսները): Ի տարբերություն 1920-1930-ական թթ. չինաբնակ հայերի, 21-րդ դարում նրանց համար այլևս ոչ մի խնդիր չէ չինացիների (կորեացիների, ճապոնացիների) հետ ամուսնություն կնքելը:

2009-ի դեկտեմբերին Պեկինում Հայաստանի դեսպանատան ճախաձեռնությամբ տեղի է ունեցել չինաբնակ հայերի ընդունելություն-հավաք, որին մասնակցել են հայեր Պեկինից, Շանհայից, Հոնկոնգից և այլ քաղաքներից: Դեսպան Արմեն Սարգսյանը կարևորել է Չինաստանում ապրող հայերին միմյանց կամրջելը: Միջոցառումը եզրափակվել է համերգով, որի ընթացքում կատարվել են նաև հայկական երգեր ու պարեր[914]:

2010 թ. հուլիսի 9-ին Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ Չինաստանի հայերը իրենց բնակված երկրում ականատես են եղել պատմական կնունքի: Հրավիրվել է հնդկահայոց հոգևոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ հոգեշնորհ Տ. Խորեն արեղա Հովհաննիսյանը՝ կատարելու մկրտության խորհուրդը: Այն տեղի է ունեցել Հարավային Չինաստանի Շեն-ճեն քաղաքում՝ մոտ քառասուն հայորդիների մասնակցությամբ: Տեղի է ունեցել Ֆրանսիայից Չինաստան տեղափոխված գործարար ամու-

[913] 21-րդ դարում Թայվանում հայաստանցիներ ապրելու իրողությունն արտահայտվել է նաև հայ գրականության մեջ. «*...կարող է Լեհաստանից կամ Տայվանից (sic) կամ Լոնից կամ Բելգիայից թռոններիցս մնկը-երկուսը գան*»,– մտորում է Ալիս Հովհաննիսյանի պատմվածքներից մեկի երևանցի տարեց հերոսուհին (**Հովհաննիսյան Ա.**, Ամենակարգին մարդիկ և ագռավները, Երևան, 2016, էջ 92-93):

[914] Տե՛ս Չինաստանում հայերը հանդիպել են իրար, «Ազգ», Երևան, 16.12.2009:

սիններ **Հարություն Սերոփի** և **Լիզա Չաթիկօղլու-Սերոփի** զավակների՝ **Ընծայի** և **Սիսարոնի** մկրտությունը: Հայկական եկեղեցու չգոյության պատճառով Սերտ ընտանիքը մկրտության առիթով իր օջախը վերադարձել է եկեղեցու[915]:

2012-ի հունիսի 18-ին Շանհայում կայացել է միջազգային մեծ ճանաչում ունեցող բարեգործական հեղինակավոր գալա համերգ, որին մասնակցելու նպատակով Չինաստան է հրավիրվել Շառլ Ազնավուրը: Հունիսի 19-ին Չինաստանում ՀՀ դեսպանության նախաձեռնությամբ կազմակերպվել է Ազնավուրի հանդիպումն շանհայաբնակ հայության հետ: Դեսպան Արմեն Սարգսյանը հյուրին ներկայացրել է հավաքին ժամանած շուրջ 20 երիտասարդ հայերի, իսկ Ազնավուրը խոսել է Հայաստանի, հայապահպանման հարցերի մասին:

2013-ի նոյեմբերի 9-ին Հոնկոնգում տեղի է ունեցել «Ջեք և Ջուլի Մաքսյաններ» Հոնկոնգի հայկական կենտրոնի» բացման պաշտոնական արարողությունը: Միջոցառմանը մասնակցել է շուրջ 100 հայ տարբեր երկրներից: Արարողությանը ներկա Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը օծել է կենտրոնում տեղադրված Աստվածամոր սրբապատկերը և վեմ քարը, այնուհետև տեր և տիկին Մաքսյաններին պարգևատրել է «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո մեդալով: Մինչ Հոնկոնգ ժամանելը ամենայն հայոց կաթողիկոսը հայրապետական այց է կատարել Պեկին, Շանհայ եւ Գուանճոու քաղաքները, Պեկինում եղել ՉԺՀ-ում ՀՀ դեսպանատանը, ուր տեղի է ունեցել Հայաստանի վարպետների պատրաստած և ՀՀ Անկախության տոնի նախօրեին Պեկին տեղափոխված առաջին խաչքարի օրհնման արարողությունը[916]: Նոյեմբերի 10-ին Հոնկոնգում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը մատուցել է սուրբ պատարագ: Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Սեպուհ Ասլանյանը կարդացել է դասախոսություն Նոր Զուղայի հայ վաճառականների կողմից ժամանակին ստեղծված հա-

[915] Տե՛ս Պատմական կնունք Չինաստանում, «Ազգ», Երևան, 21.07.2010:
[916] Տե՛ս Հայկական կենտրոն Հոնկոնգում, «Ազգ», Երևան, 13.11.2013: Տե՛ս նաև Bientôt un centre arménien en Chine, «Նոր յառաջ Hebdo», supplément no 124, Paris, 4.07.2013:

մաշխարհային առևտրային ցանցի վերաբերյալ: Այնուհետև տեղի է ունեցել տարածաշրջանում առաջին հայ համայնքային կառույցի՝ «Հոնկոնգի և Չինաստանի հայ համայնքի» անդրանիկ նիստը, որի ընթացքում հաստատվել են կազմակերպության հիմնադիր արձանագրությունը և կառուցվածքը, ապա ընտրվել են ղեկավար մարմինները՝ նախաձեռնության հեղինակներից Հեների Արսլանյանի գլխավորությամբ: Ստեղծվել է համայնքի 13 անդամից կազմված գործադիր մարմին, որը ներկայացնում են Հոնկոնգի, Գուանճոուի, Նանկինի, Շանհայի, Պեկինի, Շենճենի հայերի շահերը: Համայնքն ունի Խորհրդականների խորհուրդ, որտեղ ընդգրկված են ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Հոնկոնգի հայկական համայնքների ղեկավար կազմից հայտնի մարդիկ: Խորհրդականների խորհրդի անդամ է նաև Չինաստանում ՀՀ դեսպանը[917]:

2014-ի ապրիլի 24-ին Չինաստանում ՀՀ դեսպանությունում տեղի է ունեցել հայոց Ցեղասպանության 99–րդ տարելիցին նվիրված հավաք-ընդունելություն: Ներկաներին ողջունել և ելույթ է ունեցել ՉԺՀ-ում ՀՀ դեսպան Արմեն Սարգսյանը, որը նաև ներկայացրել է Ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ նախատեսված հիմնական ծրագրերը: Ցեղասպանության 99-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ են անցկացվել նաև Շանհայում և Հոնկոնգում[918]:

2015-ին, Սիդնեյի մյուս հայկական համայնքների նման, Չինաստանի հայկական համայնքը նույնպես կազմակերպել է Ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումներ՝ չինացիներին հնարավորություն տալով ծանոթանալու հայոց պատմությանը և մշակույթին: Ցեղասպանության հիշատակմանը վերաբերող հիմնական միջոցառումները տեղի են ունեցել Նանկինում, որտեղ 1937-ին տեղի է ունեցել Նանկինի հայտնի կոտորածը, և այս համատեքստում որոշակի ընդհանրություններ կան հայ և չին ազգերի ողբերգությունների

[917] Տե՛ս Հայկական կենտրոն Հոնկոնգում, «Ազգ», Երևան, 13.11.2013:
[918] Տե՛ս Հայոց ցեղասպանության 99-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ Պեկինում, Շանհայում, Փարիզում, Ստոկհոլմում, http://www.report.am/news/society/99-pekin-stokholm-paris.html (այցելությունը կայքէջ՝ 6.07.2014):

միջև: Նանկինում ելույթ են ունեցել հայ արվեստագետներ, Շանհայում բեմադրվել է հայկական պար, Պեկինում ցուցադրվել է փաստագրական ֆիլմ, իսկ Հոնկոնգում՝ համայնքի անդամների հավաքույթ-քննարկում: Հայոց ցեղասպանությանը վերաբերող մի ֆիլմ թարգմանվել է չինարեն և տրամադրելի դարձել չինական սոցիալական ցանցերում: Անգամ թուրքական լրատվամիջոցներն էլ անդրադարձել են այդ գործունեությանը՝ ընդգծելով Չինաստանի հայկական համայնքի ակտիվությունը:

Հատկանշական է, որ չինաբնակ հայերը փորձում են միավորել նաև Հնդկաստանի, Բանգլադեշի, Մյանմայի (Բիրմա) և Հեռավոր Արևելքի՝ Հարավային Կորեայի, Սինգապուրի, Թաիլանդի, Մալայզիայի, Վիետնամի[919] փոքրաթիվ հայերին, փորձում են օժանդակել Մյանմայի և Բանգլադեշի հայկական եկեղեցիների պահպանման գործում: Ասիական երկրներում գործող հայկական համայնքների ղեկավարներն ամեն եռամսյակ քննարկում են անցկացնում, որոնց ընթացքում միմյանց տեղեկացնում են իրենց նախաձեռնությունների մասին:

Չինաստանի աննախընթաց տնտեսական վերելքը առիթ է տալիս համոզված ասելու, որ առաջիկա տարիներին նրա համեմատաբար երիտասարդ և արագ կազմակերպվող հայ համայնքն այնտեղ ևս մեծանալու է, թեև կառավարությունն օտարերկրացիներին քաղաքացիություն չի շնորհում... Տարբեր երկրներից եկած համայնքի անդամները օգնում են միմյանց մեծ մասամբ համացանցով հարաբերություններ ստեղծել ողջ Չինաստանի տարածքում ցրված հայրենակիցների միջև:

[919] Հայ-վիետնամական կապերի մասին տե՛ս հավելվածում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ամերիկացի պատմաբան Ռոբերթ Քոհենը սփյուռքագիտության տեսությանը նվիրված իր աշխատության մեջ տարբերակել է հինգ տեսակ սփյուռք՝ ա) զոհ (աֆրիկյանը, հայկականը), բ) կայսերական (բրիտանականը), գ) աշխատանքային (հարավ-ասիականը, հնդկականը), դ) առևտրական (չինականը, լիբանանյանը), ե) մշակութային (կարիբյանը)[920]:

Թերևս արհեստական չի լինի Չինաստանում դարերի ընթացքում հանդես եկած հայ համայնքների «տիպաբանությունը» հարմարեցնել Քոհենի սույն դասակարգմանը (բացառելով, անշուշտ, կայսերականը): 17–18-րդ դդ. Չինաստանի հայ սփյուռքն իր բնույթով առևտրական էր՝ մեծ մասամբ կազմված նավահանգիստներում մշտապես կամ ժամանակավոր բնակվող վաճառականներից: 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին Չինաստանի հյուսիսում հաստատված հայությունը ներկայացնում էր աշխատանքային Սփյուռք՝ կազմված մեծ մասամբ աշխատանքային պայմանագրերով այնտեղ հաստատված անձանցից: 1910-ականների վերջին, 1920-ականների սկզբին չինաբնակ հայերի մեջ արդեն մեծ թիվ էին կազմում թուրքերի իրականացրած Ցեղասպանության, ռուսական հեղաշրջման և կոմունիստական տեռորի հետևանքով փախստական դարձածները՝ զոհ սփյուռքը: Իսկ 1990-ականներին ձևավորված փոքրաթիվ համայնքը կարելի է աշխատանքային և որոշ առումով մշակութային անվանել, քանի որ այն կազմված է մեծ մասամբ ժամանակավոր աշխատողներից և ուսանողներից...

[920] Տե՛ս **Cohen Robert**, Global Diasporas. An Introduction, Routledge, 2008, էջ 1-4:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆԻՆ ՍԵՐՁ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Մոնղոլիա

Հայաստան ներխուժած մոնղոլ-թաթարների աճունը (նետողաց ազգ ձևով) բազմիցս հիշված է հայ պատմագրության և գեղարվեստական գրականության մեջ[921]: Որոշ պատմիչներ մոնղոլների արտաքինը հիշել են որպես գեղեցիկ, ոմանք՝ սարսափելի: Հատկանշական է, որ մոնղոլ իշխանների պալատում կրոնական դրվածքի մասին մահմեդական պատմիչները տեղեկություններ չեն թողել, ըստ այդմ՝ Դաուղի դաշտում կառուցված պալատի նկարագրությունը Մերձավոր Արևելքում մոնղոլների բուդդայական տաճարի մասին պահպանված միակ քիչ թե շատ ճշգրիտ հաղորդումն է: Կիրակոս Գանձակեցու և Վարդան Վարդապետի պատմություններում առկա են բուդդայականության վերաբերյալ եզակի և ուշագրավ տեղեկություններ[922]: Նոր ժամանակներում եղել են հատուկենտ առնչություններ: Կարնեցի Գալուստ Մահտեսյանը մինչև 1920 թվականը բնակվել է Ռուսաստանում, այնուհետև կնոջ և չորս զավակի հետ տեղափոխվել է Ուլան-Բատոր, այստեղ բացել «Կոստանդնուպոլիս» ռեստորանը: Սնանկանալով՝ 1930-ին ճամակով դիմել է Լոնդոն, «Մասիս» ամսագրի խմբագրություն՝ խնդրելով օգնել իրեն տեղափոխվել Անգլիա[923]: Մոնղոլիայից որոշ ուսանողներ սովորել են Խորհրդային Հայաստանում, կոնսերվատորիայում և անգամ՝ Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության բաժնում[924]: Նրանցից Բայարսայխան Դաշդոնդոգը զբաղվում է հայագիտությամբ[925], 2008-ին Օքսֆորդի համալսարանում

[921] Այս մասին տե՛ս Армянские источники о монголах. перевод, предисловие и примечания А. Г. Галстяна, Москва, 1962):

[922] Տե՛ս **Գիտագավա Ս.,** Հայ միջնադարյան գրականությունը բուդդայականության մասին, «Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով», Երևան, 15-19 սեպտեմբերի 1986, զեկուցումների դրույթներ, Երևան, 1986, էջ 92):

[923] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1358, թ. 1:

[924] Նրանց մասին տե՛ս՝ Ապագայ հայագէտ մոնղոլուհիները, «Յառաջ», Փարիզ, 16.11.1976:

[925] Տե՛ս նրա «Մոնղոլերեն փոխառյալ բառեր հայերենում» զեկուցման դրույթը, «Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով....», էջ 19:

պաշտպանել է «Մոնղոլա-հայկական քաղաքական հարաբերությունները (1220–1335)» թեկնածուական թեզը, 2011-ին Լեյդենում հրատարակել է «Մոնղոլները և հայերը (1220–1335)» անգլերեն աշխատությունը[926]: 1999-ի տվյալով Մոնղոլիայի մայրաքաղաքում բնակվում է մոտ 40 հայ, հիմնականում՝ Ռուսաստանից և Հայաստանից արտագաղթածներ, Ուլան Բատորի կամերային նվագախմբի ղեկավարն այդ թվականին եղել է Սերգեյ Կարապետյանը, մենակատարը՝ նրա որդի Կարեն Կարապետյանը:

Կորեա

Այս երկրի և մշակույթի հետ հայերի կապերը խիստ սակավաթիվ են: 1894-ին թիֆլիսահայ մամուլում լույս է տեսել Z. ստորագրությամբ հետևյալ հաղվածը կորեուհիների սոցիալական սարսափելի վիճակի մասին[927]: Առաջին հայը, որ եղել է Կորեայում, հավանաբար եղել է ռուսական բանակի գեներալ-մայոր և Հայաստանի առաջին հանրապետության բանակի գեներալ Հակոբ Քագրատունին (1879–1943), որը 1900-ական թթ. վերջին գաղտնի ռազմագիտական և պրակտիկ հանձնարարություններ է կատարել Կենտրոնական Ասիայում, Մոնղոլիայում, Տիբեթում և Կորեայում: Հայ-կորեական կապերի ամենաուշագրավ դրվագը կորեական պատերազմի օրոք 400 կորեացի որբերի տեղափոխումն է Հայաստան (այստեղից՝ Երևանի արվարձաններից մեկի «Կորեայի ձոր» անվանումը և խոսակցական լեզվում գործածվող «Կորեայի որբեր» արտահայտությունը): Նրանցից շատերը որդեգրվել են հայ ընտանիքներից և ձուլվել հայերին, ինչպես՝ երևանցի տիկին Անահիտ Լուսյանը[928]: Կան նաև հայաստանցիների հետ ամուսնացած հատուկենտ կորեուհիներ (օրինակ, երեք զավակի մայր կորեուհի Կլարա Վոնը[929]): ԱՄՆ-Կորեա պատերազմին մասնակցել են

[926] Տե՛ս **Bayarsaikhan Dashdondog**, The Mongols and the Armenians (1220-1335). Leiden, Brill, 2011:

[927] Տե՛ս Z., Կանայք Քորէայում, «Նոր-դար», Թիֆլիս, 12.10.1894:

[928] Տե՛ս **Վերդյան Ն.**, Կորեական ճակատագիր՝ հայկական ազգանունով, «Ազգ», Երևան, 21.12.2011:

[929] Տե՛ս **Шуваева-Петросян Е.**, Новый год: мечты человеческие, мечты бомжовые, «Новое время», Ереван, 27.12.2011:

նաև ամերիկահայեր, առաջին հայ գոհը եղել է 19-ամյա Գառնիկ Ա. Փորյազյանը (1931, Նյու Յորք – 5.09.1950, Տեգու, Կորեա[930]): Առկա են սակավաթիվ մշակութային կապեր: 1955-ին Փխենյանում տեղի է ունեցել Խաչատուր Աբովյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառում[931]: Հայ գրողներից կորեերեն առանձին գրքով բարգմանաբար լույս է տեսել Գևորգ Էմինի ընտրանին, իսկ պատմաբան Նիկողայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանությունը» կորեերեն թարգմանությունը լույս է տեսել 2011-ին: Կորեական երաժշտական մշակույթից օգտվել է ամերիկահայ երգահան Ալան Հովհաննեսը: 2004-ին Գերմանիայում կայացած կորեական երգի փառատոնմրցույթում առաջին և երկրորդ տեղերը գրավել են տեղացի հայեր Վարդենի Դավթյանը և Հայկ Դեհնյանը, որոնք նույն տարի ելույթներ են ունեցել նաև Կորեայում[932]: Կորեական բալետում որոշ ժամանակ աշխատել են բալետմայստերներ Վիլեն Գալստյանը և Ալբերտ Միրզոյանը: 2005-ին կայացել է Սերգեյ Փարաջանովի ֆիլմերի ցուցադրությունը Ջեոնջուի կինոփառատոնում, որի կատալոգում տեղ է գտել տողերիս հեղինակի հոդվածը՝ անգլերեն բնագրով և կորեերեն թարգմանությամբ[933], իսկ 2007-ին՝ Արտավազդ Փելեշյանի ֆիլմերի հետահայաց ցուցադրությունը նույն կինոփառատոնում: Մեր օրերում կորեերեն է դասավանդվում Երևանի Բրյուսովի անվան լեզվագիտական համալսարանում: 2009-ին Երևանում բացվել է «Մինա» ամուսնական գործակալությունը, որը օգնում է տեղացի աղջիկներին ամուսին գտնել Հարավային Կորեայում. երկու տարում կայացել է վեց ամուսնություն[934]: 2010-ական թթ. Կորեայում բնակվում է մոտ հարյուր հայաստանցի, որոնք աշխատում են «Սամսունգ» և այլ ընկերություններում: 2013-ի ապրիլի 15-ին Հայաստանում առաջին անգամ տեղի է ունեցել «Հայ-կորեական տնտեսական համագործակցության ապագա հեռանկարները» միջազգային գիտաժողովը: 2005 և 2014 թթ. Հայաստան է այցելել կորեացի լրագրող, պատմաբան Յանգսիգ Հան, որ երկու հոդված է հրատարակել կորեական մամուլում Հայոց ցեղասպանության մասին՝ «Ցեղասպանությունը ցեղասպանություն է, ճշմարտությունը՝ ճշմարտություն»[935] և «Մի՛ մոռացեք Հայաստանը»[936]: ՀՀ և Կորեայի Հանրապետության միջև առաջին անգամ դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1992 թ.: Ըստ ՀՀ-ում Հարավային Կորեայի պատվո հյուպատոսության՝ 2010-ականներին Հայաստանում մշտապես բնակվում է կորեական մեկ ընտանիք, իսկ մոտ 50 մարդ աշխատում է տարբեր կազմակերպություններում:

Վիեննա

20-րդ դ. սկզբին Վիեննայում մի հայ բացել է «Քաոտա» կոշիկի ֆիրմայի մասնաճյուղ[937]: Վիեննայի՝ Ֆրանսիայի գաղութը եղած ժամանակ որոշ ֆրանսաբնակ հայեր պաշտոնավարել են այնտեղ, ինչպես, 1920-ականներին Վիեննայի մայրաքաղաք Սայգոնի օպերային նվագախմբի գլխավոր դիրիժոր Գևորգ Յաղուպյանը (1890–1941), բնիկ ակնցի Գրիգոր Խերյանը, որը 1950-ի տվյալով, եղել է Սայգոնի իրավաբանական դպրոցի երկարամյա տնօրենը[938]: Վիեննայում 20-րդ դարի կեսին գոյատևած և ուծացած հայ համայնքի մասին մեզ ժամանակին հանդիպել է ափյուռքահայ մամուլի մի հաղորդում, ըստ որի այդ երկիր այցելած հայ զբոսաշրջիկների մի խմբի մոտեցել է վիեննական արտաքինով մի տարեց մարդ և հայերեն ասել, որ ինքը հայ է. կան ուրիշ հայեր էլ, որոնք ցանկանում են հեռանալ երկրից (սկզբնաղբյուրը, ցավոք, չենք նշել): 1969-ին Վիեննայում գոհվել է 17 ամերիկահայ զինվոր[939]: 1970-ականներին Հոշիմին վերանվանված

[930] Տե՛ս «Հայրենիք», Պսպրկն, 17.10.1950:
[931] Հայաստանի գրողների միությ. 80-րդ հանգրվանը (ժամանակագրություն), կազմ. Հ. Նազարյան, Կ. Մեսրոպյան, Երևան, 2014, էջ 77:
[932] **Օրդուխանյան Ա.**, Կորեական պաղլամենտը ծափահարում է Վարդենի Դավթյանին, «Նոր հորիզոն», Ուիսպա, 2004, թ. 2, էջ 21-22:
[933] Տե՛ս **Bakhchinyan Artsvi**, Maestro Sargis, Allegories of Resistance: Forbidden Films of the Soviet Union, 2005, Jeonju International Film Festival, էջ 91-98:
[934] В Корее появился спрос на армянских невест, 29.07.2011, www.epress.am/ru/2011/07/29/в-корее-появился-спрос-на-армянских-не.html (այցելությունը կայքէջ՝ 15.11.2011):
[935] «Հանկյորե 21» («Մեկ ազգ 21»), Սեուլ, 1.11.2000, թիվ 337 (կորեերեն):
[936] Նույն տեղում, 3.08.2005, թիվ 571:
[937] Տե՛ս **Alex Dalita I.**, The Prince in Switzerland: Legacy, Love and Pride, 2010, էջ 135:
[938] Տե՛ս «Հայրենիք», Պսպրկն, 15.10.1950:
[939] Տե՛ս 17 հայ-ամերիկացիներ զոհված են Վիեթնամի մեջ, «Ասպարէզ», Ֆրեզնո, 9.09.1969:

Սայգոնում հաստատվել է Հրաչ Հակոբյանը, երկու տարի այնտեղ աշխատել է Կլարա անունով մի հայուհի[940]: 2005-ի տվյալով՝ Վիետնամում ժամանակավորապես բնակվել է 12 հայ[941], որոնցից է բյուսելցի Գրիշա Սաֆարյանը:

[940] Տե՛ս Հայում վրայ չհաջող (sic) շուկը, «Այգ», Պէյրութ, 6.10.1971:
[941] Տե՛ս Численность армян в мире (за пределами Армении), http://ru.hayazg.info/ Численность_армян_в_мире_(за_пределами_Армении) (այցելությունը կայքէջ՝ 9.09.2007):

亚美尼亚和中国的历史与文化交往。

简　　述

中国人民与亚美尼亚人民是两个古老的民族。从遥远的古代就已经相互了解。在完全可信的历史文献中记载着在公元前亚美尼亚人就已到中国经商，并从那里运回丝绸和其他商品。那时，亚美尼亚的对外贸易是世界中转贸易的重要环节同时也包含了與中國的商業活動。一些学者研究发现,公元前四世纪亚中两国人民已建立了联系。公元五世纪时的亚美尼亚历史学家梅瑟 霍林那兹在自己的書中<<亚美尼亚历史>>已記載了 中国以及具有中国血统的马米高顿大公家族。中世纪早期,在中国的一些城市里分布着不大的亚美尼亚移民区。十三世纪,一位亚美尼亚富有的女人在广州修建了一座基督教堂。从十六世纪到十八世纪在中国的贸易史上,一些拥有自己商船和工厂的亚美尼亚人占据着那者的位置。最有影響是奧万奈斯或者仲耐斯 拉萨尔（十九世纪初）,他第一個將聖經翻譯成漢語。许多汉学家认为这是最好的中文译本。

在二十世纪中叶，在哈尔滨和上海曾居住過几百亚美尼亚人。与此同时出现了亚美尼亚人的社团和教堂。这个时期,还有一些亚美尼亚人分布在其他中国城市中:塔克金，长春，大连，天津，青岛，津常莱林等。这都是一些大夫，商人，律师和手艺人。二站时期,在中国的亚美尼亚移民也受到了战争的折磨。日本侵略者认为他们同样是自己的敌人,并将他们也关进了集中

亚。五十年代，在中华人民共和国成立后中国的亚美尼亚人基本上都移民去了美国或澳大利亚。

苏联时期的亚美尼亚,在苏维埃的体制允许下与中华人民共和国同样有着文化交往。在 1991 年亚美尼亚共和国独立后,中国承认了这個新国家,第一个在亚美尼亚开设了使馆。在亚中关系從此开始了经济·教育和文化交往的新时代。

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐ



Պարսից արքայազն Պերոզի և նրա նախարարների (որոնցից երկուսը՝ հայ) քանդակները Սյի Վան Չուան գյուղի մոտ:



Չինական կավե արձանիկ, որ ենթադրաբար պատկերում է գինով տիկ բռնած հայորդու, Արևմտյան Չինաստան, Տան հարստություն (618–907):



1287-ին ստեղծված Հովհաննես արքեպիսկոպոսի մանրանկարը՝ հագուստի վրա հինական վիշապի պատկերով:



Հայ պատվիրատուի կողմից Չինաստանում պատրաստված հախճապակե սպասք (17-18-րդ դդ.):



Սըր Փոլ Չաթեր (Խաչիկ Աստվածատրյան):



Դշխո Մեթի շիրմաքարը Հոնկոնգում:



Հովհաննես Լասսարի՝ Աստվածաշնչի հինարեն թարգմանության մի էջը:



Գրիգոր Կապանցը իր անունը կրող գիմու և նպարեղենի խանութի առջև, Հալեպ (մոտ 1915–1916):



КОПІЯ.

Подлинный уставъ утвержденъ Главнымъ Полицейскимъ Управленіемъ Особаго Района Восточныхъ Провинцій 11 Января 11 г Китайской Республики г. Харбинъ.

Заведывающій дѣлами Главнаго Полицейскаго Управленія Особаго Района Восточныхъ Провинцій (Подпись).

9 Февраля 1922 г.

Уставъ

Харбинскаго Армянскаго Общества.

Цѣль Общества.

§ 1.

Харбинское Армянское Общество учреждается для объединенія всѣхъ армянъ проживающихъ въ г. Харбинѣ и другихъ районахъ по линіи Кит. Вост. жел. дороги при чемъ главной и основной задачей О-ва является всемѣрная забота о распространеніи среди своихъ членовъ идеи армянскаго національнаго единства.

§ 2.

Преслѣдуя культурно-просвѣтительныя и благотворительныя цѣли О-во одновременно заботится о неприкосновенности личности, имущества и жилищъ и о всѣхъ вообще матеріальныхъ и духовныхъ нуждахъ своихъ членовъ. О-во ведетъ также

— 1 —

Հարբինի Հայկական միության կանոնադրության առաջին էջը (1922, Հարբին):





Հարբինի հայ համայնքի ուղերձը Ավետիս Ահարոնյանին (1930):



Հարբինի հայ համայնքի վարչության անդամների ստորագրությունները:



Հարբինի հայկական եկեղեցին (1930-ական թթ.):



Ասողիկ վարդապետ Ղազարյան



Հարքինի հայկական եկեղեցու երգչախումբը (1940):

Առաջին շարք. «Քեռի» Արտեմ, Արտյուշա Պոպով, Վերա Ալեքսանդրյան, Թամարա Ավետիքովա, Սեմիկ Ռոստոմյան, Կատարինե Քանանյան, Իզաբելլա Փաշինյան, Կոլյա Չոբանյան:

Երկրորդ շարք. Նունե Պսակյան, Եվա Սուրինովա, Միքայել Պողոսյան:

Երրորդ շարք. Հարություն Փաշինյան, Արամ Իշխանյան, Սենյա Կարաստելով (Սուրբ Նիկոլայ ռուս ուղղափառ եկեղեցու քահանան), Ասողիկ վարդապետ Ղազարյան, արքեպիսկոպոս Նիկանոր Վիկտորով (Սուրբ Նիկոլայ ռուս ուղղափառ եկեղեցի), պատվելի հայր Կուդրին (ռուս հնաղավանների եկեղեցի), Կարինե Պսակյան, Համբարձում Փաշինյան:



Հարբինի հայկական միության «Վարդանանց տոնի» ծրագիրը (1944):



Հարբինի հայկական եկեղեցու նամակը Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ին (1946):



Ժաք Իմմալյան, «Չինացի աղջնակ» (1961):



Ժաք Իմմալյան, «Չինացի տղուկ» (1961):



Նկարիչ Ծյան Շի-Լուն և Արարատ լեռը պատկերող իր նկարը:



Ֆու Չյունը և Լիանա Եղիազարյանը «Թայվանցի հերոսը» ֆիլմում:



«Հայ քույրիկ ծաղիկները»՝ Մարիցա և Լիանա Եղիգարյաններ:



Չինաստանում հայ աղջնակը կատարում է չինական պար:



Կինոօպերատոր Ռուբեն Գինի:



Պարուսույց Վանուշ Բաբայանն իր ուսանողուհի Յույին հանի հետ:



Վերանորոգված «Թաքթա» ռեստորանը Հարբինում (21-րդ դար):



Հայ մշակույթի փառատոն Թայվանում:



Չինաբնակ հայերի՝ 2009 թ. տարեկան հավաքույթի ազդը:



Պեկինի օտար լեզուների համալսարանի հայերենի դասախոս Մերի Կնյազյանն իր ուսանողների հետ:



Չինաբնակ հայերի կազմակերպության մի խումբ անդամներ:



Չինացի երեխաները՝ Հայաստանին:



2016-ին Հայաստանի Կոնֆուցիուսի ինստիտուտը ճանաչվել է տարվա լավագույն ինստիտուտը (Կունմին, Չինաստան, աջից երկրորդը՝ Գոռ Սարգսյան):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ձեռագիր

1. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 610:
2. ՀԱԱ, ֆ. 362, ց. 13, գ. 12:
3. ՀԱԱ, ֆ. 362, ց. 13, գ. 7:
4. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3712, 4706, 4709, 4712, 4714, 4716, 4717, 4722, 4723, 4724, 4728, 4732, 4736:
5. ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 356, 770, 1412:
6. ՀԱԱ, ֆ. 703, ց. 3, գ. 4, թ. 27:
7. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր թ. 1070:
8. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր թ. 1780:

Տպագիր

1. Անանիա Շիրակացի, Մատենագիտություն: Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979:

2. Գրիգորիս Աղթամարցի, XVI դ., ուսումնասիրությունը, քննական բնագրերը և ծանոթագրությունները Մ. Ավդալբեկյանի, Երևան, 1963:

3. Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղէմ, 1915, էջ 548:

4. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

5. Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հատոր Ա, Երևան, 1932:

6. Հեթում Պատմիչ Թաթարաց, Վենետիկ, 1842:

7. Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960:

8. Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցու Հաշվեմատյանը, աշխատասիրությամբ **Լ. Ս. Խաչիկյանի** և **Հ. Դ. Փափազյանի**, Երևան, 1984:

9. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի, Երևան, 1968:

10. Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, ժողովածուն պատրաստեցին Ա. Մնացականյանը, Շ. Նազարյանը, Երևան, 1951:

11. «Սասնա ծռեր», Երևան, 1936:

12. Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, Երևան, 20035

13. Ստեփաննոս Օրբելյան, Սյունիքի պատմություն: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող», 1986:

14. Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861:

15. Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885:

16. Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), երկու հատորով, հատոր 1-2, աշխատասիրությամբ **Հ. Սահակյանի**, Երևան, 1986-1987:

17. Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանց, Երևան, 1968:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերեն

1. **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Բ, Երևան, 1967:
2. **Ազարյան Լ. Ռ.**, Կիլիկյան մաճրանկարչությունը XII-XIII դարերում, Երևան, 1964:
3. **Ալեքսանյան Հ.**, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում, Երևան, 2014:
4. **Ալիշան Հ. Ղ.**, Հայապատում, Ա, Վենետիկ, 1901:
5. **Ալիշան Հ. Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893:
6. **Ալպոյաճեան Արշակ**, Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:
7. **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ գաղթականութեան. հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, հատոր Բ., Գահիրէ, 1955:
8. **Ամատյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:
9. **Ամատյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1926:
10. **Ամատյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երևան, 1948:
11. **Ամատյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951:
12. **Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դարերում, հ. 2, Երևան, 1964:
13. Արձանագրութեան տօմար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Պուէնոս Այրէսի մասնաճիւղ, 22 Յուլիս 1948:
14. **Բաղումյան սրկ. Տ.**, Արևմտյան Բենգալիայում բաղված հայ հոգևորականները, Երևան-Կալկաթա, 2007:
15. **Բամպուքճեան Գ.**, Յակոբ պատրիարք Նալեան (1701–1764), կեանքը, գործերը եւ աշակերտները, Ստանպուլ, 1981:
16. **Բայբուրդյան Վ.**, Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996:

17. **Բուռնության Զ.**, Հայ ժողովրդի համառոտ պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), անգլերենից թարգմանեց Արծվի Բախչինյանը, Երևան, 2012:
18. **Գալչյան Ռ.**, Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում. Հայաստան, Վրաստան և Աղրբեջան, Երևան-Լոնդոն, 2007:
19. **Դադայան Խ.**, Ակնարկներ հայ վաճառականության պատմության, Երևան, 2009:
20. **Դավթյան Հ.**, Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, 2015:
21. Դիւան Հայոց պատմութեան, գիրք Թ., Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մասն առաջին, 1778–1800, հրատարակեց **Աղանեանց Գ. ա. քհն**, Թիֆլիս, 1911:
22. Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԱ, մաս 3, Սիմէոն Կաթողիկոսի յիշատակարանը (1777–79), մաս III – վերջին, հրատարակեց **Աղանեանց Գ. ա. քհն**, Թիֆլիս, 1913:
23. **Զէքիեան Հ. Լ.**, Ինքնութեան խճանկար, Պէյրութ, 2015:
24. **Թորանեան Թ.**, Ուղեւորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, Հալէպ, 2004:
25. **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկէի եւ Ամերիկայի: Մաս առաջին, Ասիա, հատոր Դ, Վենետիկ, 1805:
26. **Լազարովիչ Պօղոս Պետրոս**, Ստորագրութիւն Կալկաթայ քաղաքի զոր արար պարոն Պօղոս Պետրոս Լազարովիչ Կոստանդնուպօլսեցի ի ճանապարհորդել իւրում յարեւելեան հնդիկս, Վենետիկ, 1832:
27. **Լիլոյան Հ. Յ.**, Սովետական ականավոր դիվանագետը, Երևան, 1978:
28. **Կապուտիկյան Ս.**, Խճանկար հոգու և քարտեզի գույների, Երևան, 1976:
29. **Կյուլպենկյան Ռ. Վ.**, Հայ-պորտուգալական հարաբերություններ, Երևան, 1986:
30. **Կոստանդյան Է.**, Սկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2008:

31. **Հակոբյան Հ.**, Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում, Երևան, 1997:
32. **Հակոբյան Ն. Գ.**, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX-XIII դդ.: **Ժամկոչյան Ա. Ս.**, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX-XIV դդ., Երևան, 1981:
33. Հայաստանի Ազգային պատկերասրահ, Երևան, 1992:
34. Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երևան, 2010:
35. **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957:
36. **Մակարեան Ա. Յ.**, Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սելանիկ, 1929:
37. **Մանուկեան Յ.**, Քէմանչիստ Ռուբէնի յուշերը, Պէյրութ, 1989:
38. **Մավյան Վ.**, Հայու բեկորներ, Երևան, 1967:
39. **Մատթէոսեան Վ.**, Հարաւային կողմն աշխարհի. հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, Ալֆիլիաս, 2005:
40. **Ոսկանյան Ն. Ա., Կորկոտյան Ք. Ա., Սավալյան Ա. Մ.**, Հայ գիրքը 1512–1800 թթ., Երևան, 1988:
41. **Չագըճեան Հ. Ե.**, Պատմութիւն հայոց Հայկազանց տէրութեան սկսեալէն մինչեւ մեր ժամանակը, Վիէննա, 1851:
42. **Պետրոսյան Հ.**, Գառնին IX–XIV դարերում, Երևան, 1988:
43. **Ստեփանյան Գ.**, Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010:
44. **Ստեփանյան Հ.**, Լուգինյան թագավորական տան հայ ժառանգները (հոդվածների ժողովածու), Երևան, 2016:
45. **Վարդանեան Ե.**, Անապատէ անապատ: Շար. «Վասպուրականի Նահանջ բիրոց»ին, Վենետիկ, 1923:
46. **Տուրունեն Արի**, Ինչ է, չգիտե՞ք՝ ես ով եմ. գոռոզամտության պատմություն, Երևան, 2014:
47. **Փանիկեան Օ.**, Լուսաբանութիւն, Երևան, 2006:
48. **Ֆլոյան Լ.**, խմբ., Հայաստան և Չինաստան. 20 տարի համագործակցություն քաղաքականության, տնտեսագիտության, լեզվի և մշակույթի ոլորտներում: Առաջին միջազգային չինագիտական գիտաժողովի նյութեր նվիրված Հայաստանի և Չինաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյա հոբելյանին, Երևան, 2012:

Ռուսերեն

1. **Аблова Н. Е.**, Дальневосточная ветвь русского зарубежья, Минск, 2007.
2. **Аблова Н. Е.**, История КВЖД и российской эмиграции в Китае (первая половина XX века), Минск, 1999.
3. **Александров Е. А.**, Русские в Северной Америке. Биографический словарь, Хэмден-Сан-Франциско-Санкт-Петербург, 2005.
4. **Аурилене Е. Е.**, Российская диаспора в Китае: 1920-1950-е гг., Хабаровск, 2003.
5. **Аурилене Е. Е., Потапова И. В.**, Русские в Маньчжоу-Ди-Го: «эмигрантское правительство», Хабаровск, 2004.
6. **Балакшин П.**, Финал в Китае, Сан-Франциско, т. 2, 1958.
7. **Ван Чжичэн**, История русской эмиграции в Шанхае, Москва, 2008.
8. **Вельгус В. А.**, Средневековый Китай. Москва, 1987.
9. **Гини Р.**, Andin: исторические очерки об армянах в Китае. Ереван, 2016.
10. **Глинка Сергей**, Обозрение истории армянского народа от начала бытия его до возрождения области Армянской в Российской Империи. Москва, 1832.
11. **Далин С. А.**, Китайские мемуары, Москва, 1982.
12. Дальный Восток России – северо-восток Китая: исторический опыт взаимодействия и перспективы сотрудничества: материалы международной научно-практической конференции, посвященной 60-летию Хабаровского края, 100-летию со дня начала строительства Китайско-Восточной железной дороги и города Харбина. Хабаровск, 1998.

13. **Дефо Даниэль**, Дальнейшие приключения Робинзона Крузо, Москва, 2006.
14. **Иванов П. М.**, Гонконг, Москва, 1990.
15. История монголов по армянским источникам, выпуск первый. Перевод и объяснения К. П. Патканова, С. Петербург.
16. **Казарян М.**, Армянские ковры, Москва, 1985.
17. **Карагезян Г.**, Роль армян в трансмиссии культур. Памятники французской литературы в контексте культурного обмена "Восток-Запад", Ереван, 2010.
18. Китайская Народная Республика в 1950-е годы, сборник документов в двух томах, под ред. **Мясникова В. С.**, Москва, 2010.
19. **Крушанов А. И., Ларин В. Л.**, Дальний Восток России в контексте мировой истории: от прошлого к будущему: материалы международной научной конференции, доклады и сообщения, состоявшейся 18-20 июня 1996 года: конференция посвящалась 25-летию института и 75 летию со дня рождения его создателя академика А. И. Крушанова, 1997.
20. **Манандян Я. А.**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954.
21. **Мелихов Г. В.**, Маньчжурия: далекая и близкая, Москва, 1991.
22. **Мелихов Г. В.**, Российская эмиграция в Китае: 1917-1924 гг., Москва, 1997.
23. Незабытые могилы, Российское зарубежье некрологи 1917-1997 гг., сост. **Чуваков В. Н.**, том 6, книга 2, Москва, 2006.
24. **Окороков А.**, Русские добровольцы, Москва, 2007.
25. **Поздняков И. А.**, Из Китая в Америку: историко-антропологический взгляд на русскую-эмиграцию (1920-1950-е гг.), Санкт-Петербург, 2007.
26. **Потто В. А.**, Кавказская война. Том 3. Персидская война 1826-1828 гг., Москва, 2000.
27. **Риттер К., Григорьев В. В.**, Землеведение: Восточный или Китайский Туркестан, Москва, 1869.

28. Русские в Китае. Под общ. ред. и предисл. **Хисамутдинова А. А.**, Шанхай, 2010.
29. **Соловьева Н. А.**, Печатные издания харбинской россики: аннотированный библиографический указатель печатных изданий, вывезенных хабаровскими архивистами из Харбина в 1945 году, Хабаровск, 2003.
30. **Тер-Мкртичян Л. Х.**, Армяне в Китае, XI научная конференция «Общество и государство в Китае». Тезисы и доклады. Ч. II., Москва, 1980.
31. **Усов В. Н.**, Последний император Китая: Пу И (1906-1967), Москва, 2003.
32. Устав Харбинского Армянского общества, Харбин, 1922.
33. **Фёдорова Н.**, Дети, Франкфурт-на-Майне, 1958.
34. **Хисамутдинов А. А.**, Российская эмиграция в Китае. Опыт энциклопедии. Владивосток, Издательство Дальневосточного университета, 2002.
35. **Хисамутдинов А. А.**, Русские эмигранты на Филиппинах, «Вопросы истории», 2003, но 7.
36. **Хисамутдинов А. А.**, Следующая остановка – Китай: из истории русской эмиграции, Владивосток, 2003.
37. **Чащин К.**, Русские в Китае. Генеалогический индекс (1926-1946). Нью Йорк, 2014.
38. **Чудодеев Ю., Климов А., Наумов С.**, сост., На китайской земле: воспоминания советских добровольцев 1925–1945, Москва, 1977.

Եվրոպական լեզուներով

1. **Adshead Samuel Adrian M.**, Material Culture in Europe and China, 1400-1800, London, 1997.
2. **Ahlenius Karl**, En Kinesisk vaerldskarta fraan 17de Aarhundrade, Band 8, Issue 4 af Skrifter, Uppsala, Akademiska Bokhandeln, 1903.

3. **Antony Robert**, Elusive Pirates, Pervasive Smugglers: Violence and Clandestine Trade in the Greater China Seas, Hong Kong, 2010.
4. Armenians in Australia and New Zealand, compiled by **Aramais Mirzaian**, Sydney, 1966.
5. **Aslanian Sebouh David**, From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, University of California Press, 2011.
6. Aspects of Armenian Art: The Kalfayan Collection, Temporary Exhibition June 11–October 10, 2010. Museum of Byzantine Culture, Thessaloniki, Greece, Athens, 2010.
7. **Baibourtian Vahan**, International Trade and Armenian Merchants in the Seventeenth Century. New Delhi: Sterling, 2004.
8. **Baladouni Vahé, Makepeace Margaret**, eds., Armenian Merchants of the Seventeenth and Eighteenth Centuries: English East India Company Sources. American Philosophical Society, Philadelphia, 1998.
9. **Barrow John Sir.**, Travels in China, Oxford, 1804.
10. **Block Alan A.**, Space, Time & Organized Crime, New Brunswick, 1994.
11. **Braudel Fernand**, Civilization and Capitalism, 15th-18th Century, Vol. II: The Wheels of Commerce, 1982.
12. **Buchanan Claudius Rev.**, Christian Researches in Asia: With Notices of the Translation of the Scriptures Into the Oriental Languages, 1819, London.
13. **Carswell John**, Charles J. F. Dowsett, Kütahya Tiles and Pottery from the Armenian Cathedral of Saint James, Jerusalem, Volume 1, 1972.
14. **Cary-Elwes Columba**, China and the Cross: Studies in Missionary History, London-New York-Toronto, 1957.
15. **Cheong W. E.**, The Hong Merchants of Canton: Chinese Merchants in Sino-Western Trade, 1684-1798, Routledge, 1997.
16. China in the Sixteenth Century: The Journals of Matthew Ricci: 1583-1610. Translated by Louis J. Gallagher, Random House, 1942.
17. The Chinese Repository, vol. IV, no 6, Canton, 1835.
18. **Cohen Robert**, Global Diasporas. An Introduction, Routledge, 2008.

19. **Cunningham John T.**, Made in New Jersey: the industrial story of a State, 1954,
20. **Defoe Daniel**, The Farther Adventures of Robinson Crusoe; Being the Second and Last Part of His Life, and of the Strange Surprizing Accounts of His Travels Round Three Parts of the Globe, London, 1719.
21. **Defoe Daniel**, La vita e le avventure di Robinson Crusoe: storia galante che contiene, tra gli altri avvenimenti il soggiorno ch'egli fece per vintott' anni in un isola deserta situata sopra la costa dell' America vicino all' imboccatura della gran riviera Oroonoca. Il tutto scritto da lui medesimo. Traduzione dal francese, tomo primo, Venezia, 1763.
22. Dell'Istoria Della Compagnia Di Giesu. La Cina. Terza parte dell'Asia. Descritta dal P. Daniello Bartoli della medesima Compagnia, Roma, Varese, MDCLXIII, 1663.
23. **Der Nersessian Sirarpie, Agémian Sylvia**, Miniature painting in the Armenian Kingdom of Cilicia from the twelfth to the fourteenth century. 1, Dumbarton Oaks, 1993.
24. **Dikötter Frank, Laamann Lars, Zhou Xun**, Narcotic Culture: A History of Drugs in China, London, 2004.
25. **Dunn H. H.**, Worms That Spin Colored Silk, "Popular Mechanics Magazine," volume XXXV, 1921.
26. **Fabricius Johann Albert**, B. Jo. Alberti Fabricii, Opusculorum historico-critico-literariorum sylloge: quae sparsim viderant lucem nunc recensita denuo et partem aucta Indice instruuntur, sumtibus viudae Felgineriae, 1738.
27. **Fedorova Nina**, The Children, 2005.
28. **Finstad Suzanne**, Natasha: the Biography of Nathalie Wood, New York, 2001.
29. **Gini Ruben**, Ormiane w chinskom Harbine. "Ormiane – 2015" (Calendar), Warszawa, 2015.
30. **Gosh Amitav**, River of Smoke: A Novel, 2011.
31. **Greenberg Michael**, British Trade and the Opening of China, 1800-42. Cambridge, 1951.

32. Guide to the Records of the Tinnevelly District, 1796 to 1835, Madras, 1934.
33. **Hamsun Knut**, Unter dem Halbmond, Münich, 1924.
34. **Hedin Sven A.**, Genom Persien, Mesopotamien och Kaukasien: Reseminnen, Stockholm, 1887.
35. **Hovannisian Richard G.**, The Armenian People from Ancient to Modern Times: Foreign dominion to statehood, vol. 2, 1997.
36. **Kant Immanuel**, Anthropologie in Pragmatischer Hinsicht, Königsberg, 1800.
37. **Kant I.**, Anthropology from a Pragmatic Point of View, Cambridge Texts in the History of Philosophy, ed. by Robert B. Louden, 2006.
38. Kavkaz: A Biography of **Yervand Markarian**, n. p., 1996.
39. **Lim Patricia**, Forgotten Souls: A Social History of the Hong Kong Cemetery, 2011.
40. **Lockyer Charles**, An Account of the Trade in India, 1711.
41. **Luisetto Frédéric**, Arméniens et autres chrétiens d'Orient sous la domination mongole: L'Ilkhanat de Ghâzân 1295-1304, "Orient Chrétien Médiéval", Paris, 2007
42. **MacFarlane Charles**, The Armenians. A Tale of Constantinople, vol. I, London, Saunders and Otley, 1830.
43. **Miller G. E.**, Shanghai, the paradise of adventurers, New York, 1937,
44. The Monks of Kûblâi Khân, Emperor of China: or, The history of the life and travels of Rabban Ṣâwmâ, envoy and plenipotentiary of the Mongol khâns to the kings of Europe, and Markôs who as Mâr Yahbh-Allâhâ III became Patriarch of the Nestorian Church in Asia, Religious Tract Society, London, 1928.
45. **Moréri Louis**, Le grand dictionnaire historique ou Le mêlange curieux de l'histoire sacrée et profane: qui contient en abregé les vies et les actions remarquables des patriarches, des juges, chez P. Brunel, 1740.
46. **Morse H. B.**, The Chronicle of the East India Company Trading to China (1635–1824), vol. 1-2, Oxford, 1926.

47. **Moule A. C.**, Christians in China Before the Year 1550, London, 1972.
48. **Nersessian Vrej Nerses**, A Catalogue of the Armenian Manuscripts in the British Library: Acquired since the Year 1913 and of Collections in Other Libraries in the United Kingdom, Volume 1, London, 2012.
49. **Nery Felipe B.**, The Transitions: A Novel, 2006.
50. **Noel-Buxton Noel**, Travel and Politics in Armenia. New York, 1914.
51. The Novels of **Daniel Defoe**: Life and adventures of Robinson Crusoe to which is Prefixed a Biographical memoir of Daniel De Foe, vol. III, Edinburgh, 1810.
52. **Oliphant Oscar Sir.**, China: A Popular History, with a Chronological Account of the Most Remarkable Events from the Earliest Period to the Present Day, 1857.
53. **Olson James S.**, An Ethno historical Dictionary of China, London, 1998.
54. **Palmer Frederick**, With Kuroki in Manchuria, New York, 1904.
55. **Po-chia Hsia R.**, A Jesuit in the Forbidden City: Matteo Ricci 1552-1610, 2011.
56. **Raphaelian H. M.**, Rugs of Armenia, Their History and Art, New Rochelle, N. Y., 1960.
57. **Redgate A. E.**, The Armenians, 2000.
58. **Rawlinson Henry Sir**, England and Russia in the East: A Series of Papers on the Political and Geographical Condition of Central Asia, 1875.
59. **Saeki P. Y.**, The Nestorian Documents and Relics in China, Tokyo, 1937.
60. **Saeki P. Yoshio**, The Nestorian Monument in China, London, 1916.
61. **Savary des Bruslons Jacques**, Dictionnaire universel de commerce, tome première, Paris, 1748.
62. **Saverio Francesco**, Dalle terre dove sorge il sole: lettere e documenti dall'Oriente, 1535-1552. Volume 10 di Volti della storia. Tradotta da Adriana Caboni, Roma, Città Nuova, 1991.

63. **Semedo Alvaro**, Historica relatione del gran regno della Cina: diuisa in due parti..., per Vitale Mascardi, 1653.
64. **Sergoyan E. G.**, The Gathering Place: Stories from the Armenian Social Club in Old Shanghai, Seattle, 2012.
65. **Seth Mesrob J.**, Armenians and the East India Company, Calcutta, 1926.
66. **Sinquist Scott W.**, ed. A Dictionary of Asian Christianity. Michigan-Cambridge, 2001.
67. **Skold Hannès**, L'Origine des Mamiconiens, "Revue des études arméniennes", Paris, 1925, Sér. I, V, 1.
68. **Solway Diane**, Nureyev: His Life, New York, 1998.
69. **Soucek Priscilla**, "Armenian and Islamic Manuscript painting: A Visual Dialogue," Mathews Thomas F., Wieck Roger S., eds. Treasures in Heaven: Armenian Art, Religion, and Society, New York, 1998.
70. **Van Dyke Paul A.**, Americans and Macao: Trade, Smuggling, and Diplomacy on the South China Coast, Hong Kong University Press, 2012.
71. **Wills Jr. John E.**, China and Maritime Europe, 1500-1800: Trade, Settlement, Diplomacy, and Missions, Cambridge University Press, 2010.
72. **Winkler Dietmar W., Li Tang**, Hidden Treasures and Intercultural Encounters: Studies on East Syriac Christianity in China and Central Asia, LIT Verlag Münster, 2009.
73. **Wolff David**, To the Harbin Station: The Liberal Alternative in Russian Manchuria, 1898-1914, 1999.
74. **Wright Nadia H.**, Respected Citizens: The History of Armenians in Singapore and Malaysia, Melbourn, 2003.
75. **Yule Henry**, Cathay and the Way Thither, Asian Educational Services, New Delhi, 2005.
76. **Zadoian Hratch**, Our Brother's Keepers. The American National Committee to Aid Homeless Armenians (ANCHA), 2012.
77. **Zekiyan Boghos Levon**, The Armenian Way to Modernity: Armenian Identity Between Tradition and Innovation, Specificity and University, 1997.

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. **Աբրահամյան Ռ.**, Չինաստան, Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 2, Երևան, 2003:
2. **Ամառեան Հ.**, Հարցականի ձեւերը եւ չինարէն մասնիկ մը հայերէնի մէջ, Թէոդիկ, «Ամենուն տարեցոյցը», Կ.Պոլիս, 1912:
3. **Գարագաշեան Մ. Յ.**, Հայք Ծ. Արեւելքի մէջ, «Լոյս», Նոր Նախիջեւան, 1911, թ. 45:
4. **Գևորգյան Թ.**, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ, 20, Լոռի (Տաշիրք-Ջորագետ), Երևան, 1999:
5. **Դավթյան Հ.**, Ովքե՞ր են և որտեղի՞ց են եկել առաջին Մամիկոնյանները, ՊԲՀ, 2015, թ. 3:
6. **Դարբինյան Ա.**, Մերձավոր Արևելքի ցպաստամատույց կոմիտեի մարդասիրական-քարոզչական քաղաքականության առանձնահատկությունները (1915–1930 թթ.), ՊԲՀ, Երևան, 2011:
7. **Դերենիկ եպիսկոպոս**, Չինաստանի հայ վաճառականներ եւ Յովհաննէս Ղազարեան, «Սիոն», Երուսաղէմ, 1959, թ. 11-12:
8. **Թումանեան Մ.**, Մի քանի նկատողութիւն Մամիկոնեանց գաղթականութեան մասին, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1911, թիւ, 9:
9. **Ժամկոչյան Ա. Ս.**, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX–XIV դդ., «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 10, միջնադարյան հուշարձաններ, պրակ III, Երևան, 1981:
10. **Ժամկոչյան Ա. Ս., Մեշինյան Ա. Ի.**, Չինական ճենապակու նմուշներ Գնդեվանքից, ՊԲՀ, 1996, թ. 1-2:
11. **Լ. Մ.**, Մամիկոնեանների չինական ծագումը, «Հայրենիք» ամսագիր, Պօսթըն, 1937, մայիս:
12. **Խաչիկյան Լ.**, Հայ պատմագրության անհայտ էջերից, «ՊԲՀ», 1972, թ. 4:
13. **Խաչիկյան Լ.**, Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1980, թ. 13:
14. **Հակոբյան Թ. Խ.**, Անի մայրաքաղաք, Երևան, 1988:
15. **Հայրապետյան Թ.**, Արևելքը հայ ժողովրդական հեքիաթներում, «Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, պրակ 3, 2011:

16. **Հայրապետյան Թ.**, Մետաքսի ճանապարհը առևտրատնտեսական և պատմամշակութային փոխառնչությունների ենթատեքստում (հայ ժողովրդական հեքիաթների հիման վրա), «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ», միջազգային գիտաժողովի նյութեր, 21-23 նոյեմբերի, 2011 թ., Երևան, 2012:
17. **Ճևահիրճյան Մ. Հ.**, Կիլիկիայի հայկական պետությունում հայ-վրացական հարաբերությունները, «Էջմիածին», 1998, թ. Ը-Գ:
18. **Մարտիրոսյան Պ.**, Հայերը Չինաստանում, Հայկական Սովետական հանրագիտարան, հ. 9, Երևան, 1983:
19. **Մարտիրոսյան Պ.**, Չինաստան, «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003:
20. **Մսըրլեան Զաւէն**, Նացի ցեղապաշտները եւ հայերը, «Շիրակ», Պէյրութ, 1987, թ. 5:
21. **Չաթըր Լ.**, Խաչիկ Պողոս Աստվածատուրյան. ո՞վ էր այս մարդը,. բոկոտն հնդկահայ որբը, «Հնդկահայք», աշխատասիրությամբ Ն. Դուրգարյանի, Կալկաթա, 2010:
22. **Չալըմյան Ն.**, Հայ-չինական հարաբերությունները 1992–2007 թթ., «Բաներ Երևանի համալսարանի», Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, թ. 130.6, 2010:
23. **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Սիբիրի և Հեռավոր Արևելքի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1919–1920 թթ), Երևան, 2006:
24. **Պետրոսյան Հ.**, Չինական խեցեղենը որպես մետաքսի ճանապարհի ցուցիչ, «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ»..., միջազգային գիտաժողովի նյութեր, 21-23 նոյեմբերի, 2011 թ., Երևան, 2012:
25. **Պէրպէրեան Հ.**, Հեթում Պատմիչ եւ չինական նկարչութիւնը, «Վէմ», Փարիզ, 1933, Սեպտեմբեր-Հոկտեմբեր:
26. **Պսակեան Հ.**, Հանդիպումներ եւ պատահարներ, «Հայրենիք» ամսագիր, Պօսթըն, 1963, թ. 1:
27. **Ջանփոլադյան Հ., Քալանթարյան Ա.**, Միջնադարյան Հայաստանի առևտրական կապերը VI-XIII դդ. (ըստ ապակեգործության տվյալների), «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 14, Միջնադարյան հուշարձաններ, պրակ VI, Երևան, 1988:
28. **Սահակյան Ռ. Օ.**, Փաստաթղթեր Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսահպատակ հայերի զանգվածային կոտորածների մասին, ԼՀԳ, 2012, թ. 4:
29. **Սվազյան Հ. Ս.**, Ճենները և «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների, ՊԲՀ, 1976, թ. 4:
30. **Սուքիասյան Կ.**, Հայկական աղբյուրների տեղեկությունները ջրասուզակության մասին, ԼՀԳ, 1981, թ. 6:
31. Վասն քաղաքաց Հնդկաց եւ Պարսից, «Բազմավէպ», Վենետիկ, 1882, թիւ 4:
32. **Վարդանյան Է.**, Կիլիկյան հայկական դրամ Չինաստանում, «Հայ արվեստ», 2002, թ. 2:
33. **Վարդանյան Ն.**, Չինաստանը կախարդական աշխարհի խորհրդանիշ, «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ», միջազգային գիտաժողովի նյութեր, 21-23 նոյեմբերի, 2011 թ., Երևան, 2012:
34. **Քիւրտեան Յ.**, Գրախօսական Յ. Մանանդեանի «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան», հատոր Բ., մաս Ա., Ե., 1957, «Բազմավէպ», Վենետիկ, 1959, Յունիս-Օգոստոս:
35. **Քիւրտեան Յ.**, Գուպլայ խանի վաճառականները, «Հայրենիք» ամսագիր, Պօսթըն, 1937, թ. 6:
36. **Քիւրտեան Յ.**, Հետաքրքրական վաւերաթուղթ մը, «Բազմավէպ», Վենետիկ, 1962, թ. 4-8, Ապրիլ-Օգոստոս:
37. **Ֆէյտի Ֆ.**, Հեթում պատմիչ, հեղինակ «Ծաղիկ պատմութեանց արեւելեան աշխարհի» գրքին, «Անահիտ», Փարիզ, 1938, Մայիս-Օգոստոս:

Ռուսերեն

1. **Абрамян Р.**, Армянский путеводитель по Индии XII века, «Բաներ Մատենադարանի», Երևան, հատոր 4, Երևան, 1958.

2. Арутюнян Б. А., Из истории армяно-китайских отношений. В сб.: «Армения-Китай. Очерки исторических, деловых и культурных взаимоотношений», Ереван, 2010.
3. Гини Р., Данные о местонахождении кайрака с армяно-сирийской надписью, ՊԲՀ, 2015, թ. 3, էջ 203-207:
4. Гини Р., К биографии профессора Лассара – автора первой Библии на китайском языке, «Հանդէս ամսօրեայ», 2016, թիւ 1-12, Յունուար-Դեկտեմբեր:
5. Гини Р., Китайская чаша Сюандэ из Гюмри, ՊԲՀ, 2013, թ. 3:
6. Гини Р., Путешествие в Китай Бенто де Гоиша и Исаака Армянина, «ՔաՆքեր հայագիտության», թ. 8, 2015:
7. Духовная жизнь Дальнего Востока России: материалы региональной научно-практической конференции, посвященной 2000-летию Христианства, Хабаровск, 24-26 октября 2000 г, ред. **Ципкин Ю. Н.**, Хабаровск, 2000
8. Жамкочян А., Производство фаянса в средневековой Армении, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում. զեկուցումների ժողովածու, հատոր III, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978:
9. Желоховцев А. Н., Из истории ознакомления китайской общественности с советской литературой (20-40-е годы), в кн. «Китайская культура 20-40-х годов и современность», Москва, 1993,
10. Звонкие монеты прошлого. Интервью Дианы Степанян с Жоржем Депейро, французским исследователем в области нумизматики, «Анив», но 3, 2009.
11. Кадырбаев А. Ш., Тюрки и иранцы в Китае и Центральной Азии XIII-XIV вв., Алма-Ата, 1990.
12. Кверфельдт Э. К., Керамика Ближнего Востока: руководство к распознанию и определению керамических изделий, Ленинград, 1947.
13. Китай глазами армян. Сборник очерков. Гл. ред. **Г. Э. Петросян**, Ереван, 2013.

14. Кречетова М. Н., Несколько китайских фарфоровых предметов с армянскими монограммами, "Труды Отдела Востока Государственного Эрмитажа", том III, Ленинград.
15. Крюков М. В., Малявин В. В., Софронов М. В., Этническая история китайцев на рубеже средневековья и нового времени, Москва, 1987.
16. Мартиросян А., Армянские источники о Китае и Индии, "На Великом шелковом пути", Ереван, Гитутюн, 1998.
17. Мартиросян А., Мировые пути через Армению и Переднюю Азию по карте Пейтингера, Ереван, 2003.
18. Мелихов Г. В., Белый Харбин: середина 20-х, Москва, 2003.
19. Минасян И., Китайско-армянские контакты http://bs-kavkaz.org/2012/03/china-armenia-contacts/ (այցելությունը կայքէջ՝ 5.06.2012):
20. Соболь Н., Торгово-экономические отношения Армении и Китая, http://husisapail.wordpress.com/2012/10/31/2012/10/31/наталья-соболь-торгово-экономически/ (այցելությունը կայքէջ՝ 21.01.2013):
21. Ставиский Б., О связях между Средней Азией и Арменией в древности и общих элементах в их искусстве, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում. զեկուցումների ժողովածու, հ. I, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978:
22. Токарский Н. М., Архитектура древней Армении, Ереван, 1946.
23. Хисамутдинов А. А., Русские в Дальнем-Дайрене, "Вопросы истории", 1998, но 1.
24. Шелковников Б. А., Художественная керамическая промышленность средневековой Армении, «Տեղեկագիր ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի», 1942, թ. 3-4:
25. Шефер Э., Золотые персики Самарканда. Книга о чужеземных диковинах в империи Тан. Москва, 1981.
26. Штифельман О., Крошка из Шанхая, http://www.russianshanghai.com/articles/post5340 (այցելություն կայքէջ կատարվել է 25.12.2011):

27. Чалымян Н. Т., Постсоветские армяно-китайские отношения. В сб.: Армения-Китай. Очерки исторических, деловых и культурных взаимоотношений, Ереван, 2010.

28. Юнхуа Чжао, Русская эмигрантская пресса в Китае в первой половине XX в. , «Вопросы истории», 2011, но 1.

Եվրոպական լեզուներով

1. **Agopoff Nil V.**, Les relations arméno-chinoises, www.crda-france.org/fr/6histoire/par_pays/chine.htm (այցելության կայքէջ՝ 20.11.2004).

2. **Aslanian Sebouh**, Trade Diaspora versus Colonial State: Armenian Merchants, the English East India Company, and the High Court of Admiralty in London, 1748-1752, "Diaspora: A Journal of Transnational Studies," Spring 2004, Vol. 13 Issue 1.

3. **Babkenian Vicken**, Cuba, China, Korea, Hawaii and the Armenian Genocide, Article taken from Armenian Weekly, http:// www. armenianweekly.com/2010/11/10/cuba-china-korea-hawaii-and-the-armenian-genocide/ (այցելության կայքէջ՝ 6.12.2010):

4. **Bacci Michele**, An Armenian Pilgrim in Medieval Italy: Cult and Iconography of St. Davinus of Luce, Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, զեկուցումների ժողովածու, Երևան, 2004:

5. **Bandini Francesco**, Origini del sacro e del pensiero religioso. "Origini del sacro e del pensiero religioso. Il dialogo interreligioso". Atti del convegno maggio 2009. Volume 14 di Quaderni di etnologia archeologia sacro, Alinea Editrice, 2010.

6. **Bedrosian Robert**, China and the Chinese according to 5–13th Century Classical Armenian Sources, "Armenian Review," 1981, Vol. 34, No.1-133.

7. **Chaudhuri Sushil, Kévonian Kéram,** Les Arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne, Paris, 2007.

8. **Cardona Raimond Giorgio**, L'India e la Cina secondo l'Ašxarhac'oyc', "Armeniaca", Mélanges d'études arméniennes, E. M., Ile *de* Saint Lazar-Venise, 1969.

9. **Chater Liz**, Armenian Graves, Inscriptions and Memorials in India. Dacca, 2011.

10. **Chater Liz**, Marble Hall Hong Kong - A Pictorial Review And Other Residences Associated With Sir Catchick Paul Chater, 2012.

11. **Chernolutskaia E. N.**, Religious Communities in Harbin and Ethnic Identity of Russian Emigres, "The South Atlantic Quarterly," vol. 99, no 1, Winter 2000.

12. **Colless Brian C.**, The Traders of the Pearl. The Mercantile and Missionary Activities of Persian and Armenian Christians in South East-Asia, "Abr-Nahrain," Melbourne 9 (1969-1970).

13. **Comneno Maria Adelaida Lala**, L'Armenie et l'Asie Centrale, «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը», պատ. խմբագիր՝ Պ. Մ. Մուրադյան, Երևան, 2000:

14. **Dauvillier Jean**, Les arméniens en Chine et en Asie Centrale au Moyen Age. Mélanges de sinologie offerts à M. Paul Demieville, II, Paris, 1974.

15. Dissertazione del cardinale Placido Zurla dei vantaggi recati dalla religione cattolica alla geografia e scienze annesse: sull'unità del soggetto nel quadro della trasfigurazione di Raffaele: sull'opere di religioso argomento di Antonio Canova; ora per la prima volta insieme riunite, Boulzaler, 1835.

16. **Doubrovskaya Dina V.**, The Russian Orthodox Church in China. In: Stephen Uhalley Jr., Xiaoxin Wu, ed. "China and Christianity: Burdened Past, Hopeful Future," 2000.

17. **Goldstein Jonathan**, The Jews of China: Historical and Comparative Perspectives, volume 1, M.E. Sharpe, 1999.

18. **Gulbenkian Roberto**, L'habit arménien, laissez-passer oriental pour les missionnaires, marchands et voyageurs européens aus XVIe et XVIIe siècles, «Revue des études arméniennes», Paris, nouvelle série, tome 25, 1994-1995.

19. **Hisasue Ryoichi**, Chinese Banking Business in Singapore: Background and Development in the First Half of the Twentieth Century, "Regional Routes, Regional Roots? Cross-Border Patterns of Human Mobility in Eurasia," edited by So Yamane, Norihiro Naganawa, Scientific Research on Innovative Areas "Comparative Research on Major Regional Powers in Eurasia," Slavic Research Center, Hokkaido University, Sapporo, 2014.
20. **Hovhannisyan Smbat K.**, Examination of Armenian Trade capital (16th-18th centuries) in Light of Fernand Braudel's Civilization Theory, "Armenian Review," volume 54, number 3-4 (Spring-Summer), 2014.
21. **Irvin Dale T.**, History of the World Christian Movement: Volume 1: Earliest Christianity To 1453 Volume 1 of History of the World Christian Movement, History of the World Christian Movement, Continuum International Publishing Group, 2002.
22. **Jaivin Linda**, Holiday on Ice: Linda Jaivin on Harbin, China, http://www.themonthly.com.au/linda-jaivin-harbin-china-holiday-ice-linda-jaivin-3279 (այցելությունը կայքէջ՝ 29.09.2012):
23. Journey of Armenian King Hethum to Mangoo Khan, Performed in the Year 1254 and 1255, and Described by the Historian Kirakos Kandtsaketsi. Translated from the Armenian, with notes. "The Asiatic Journal and Monthly Register for British and Foreign India, China and Australasia," Volume 10, Allen, January-April, London.
24. **Kauz Ralph, Yingsheng Liu**, Armenia in Chinese Sources, "Iran and the Caucasus," Volume 12, Number 2, 2008.
25. **Kurdian H.**, An Armenian Manuscript with Unique Mongolian Miniatures, "Journal of the Royal Society," April, 1947.
26. **Kévonian Kéram, Aghassian Michel**, The Armenian Merchant Network: Overall Autonomy and Local Integration, in: Chaudhury Sushil, Morineau Michel, eds. "Merchants, Companies and Trade: Europe and Asia in the Early Modern Era," Cambridge, 2007.
27. **Kévonian Kéram, Aghassian Michel**, Armenian Trade in the Indian Ocean in the Seventeenth and Eighteenth Centuries, in: Lombard Denys, Aubin Jean, eds. «Asian Merchants and Businessmen in the Indian Ocean and the China Sea», Oxford, 2000.
28. **Kévonian Kéram**, Un Itinéraire Arménienne de la Mer de Chine, in: Guillot Claude, ed. «Histoire de Barus Sumatra: le site de Lobu Tua: études et documents», Paris, 1998.
29. Kleiner mittelarmenische Texte. Herausgegeben, mit Einleitung und Glosser versehen von F. N. Finck, B. Teste, «Հաճդէս հայագիտութեան», Սպրպուրգ, 1902.
30. **Kouymjian D.**, Chinese Influences on Armenian Miniature Painting in the Mongol Period, "Armenian Studies/Études arméniennes: In Memoriam Haïg Berbérian," Lisbon: Calouste Gulbenkian Foundation, 1986.
31. **Kouymjian D.**, Chinese Motifs in Thirteenth-Century Armenian Art: The Mongol Connection, in: Komaroff Linda, ed., "Beyond the Legacy of Genghis Khan," Leiden, 2006.
32. **Kouymjian D.**, Chinese Dragons and Phoenixes Among the Armenians, «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մեսրոպի ճանապարհի պատմության մեջ», միջազգային գիտաժողովի նյութեր, 21-23 նոյեմբերի, 2011 թ., Երևան, 2012:
33. **Lahusen Thomas**, Harbin and Manchuria: Place, Space, and Identity, Duke University Press, 2000,
34. **Meltickian Virginia**, Pictorial History of the Armenians in China, 1919–1945, "Hye Sharzhoom," Fresno, December, 2003.
35. **Morse Hosea B.**, The Chronicles of the East India Company Trading to China 1635–1834 (Oxford, 1926–1929), vol. 2.
36. **Moule Arthur Christopher**, Christians in China Before the Year 1550, Taipei, 1972.
37. **Mouradian Khatchig**, China as Refuge for Armenian Genocide Survivors, "Armenian Weekly," 27.06.2016, http://armenianweekly.com/2016/06/27/china-as-refuge/ (այցելությունը կայքէջ՝ 29.06.2016):
38. **Neumann K. F.**, Die Sinologen und ihre Werke (Schluss), "Zeitschrift der Deutschen Morgenlaendischen Gesellschaft", Band 1, 1847.
39. **Rezun Miron**, The Soviet Union and Iran: Soviet Policy in Iran from the Beginnings of the Pahlavi Dynasty Until the Soviet Invasion in 1941,

Volume 8 of Collection de relations internationales/Institut universitaire de hautes études internationales, Université de Genève Institut Universitaire des Hautes Études Séries, 1981.
40. **Richardson H. E.**, Armenians in India and Tibet, "Journal of the Tibet Society," Vol. 1 (1980).
41. **Smith Carl T.**, An Eighteenth-Century Macao Armenian Merchant Prince, "Review of Culture," S. 3, no. 6 (2003).
42. **Smith Carl T., Van Dyke Paul A.**, Armenian Footprints in Macau, "Review of Culture," No. 8, October, 2003.
43. **Smith Carl T.**, Armenian Strands in the Tangled Web of the Opium Trade at Macau and Canton. Unpublished paper presented at the Hong Kong Historical Museum Conference, December 18-20, 1998.
44. **Smith Carl T., Van Dyke Paul A.**, Four Armenian Families, "Review of Culture," S. 3, no. 8 (2003).
45. **Van Dyke Paul A.**, Macao, Hawaii, and Sino-American Trade, in: Yufan Hao, Jianwei Wang, eds. "Macao and U.S.-China Relations," 2010.
46. **Victoir Laura A., Zatsepine Victor**, Harbin to Hanoi: Colonial Built Environment in Asia, 1840 to 1940, Hong Kong, 2012.
47. **Ter-Mkrtchyan L.**, Armenians in China (From Ancient Times to Recent History), The International Association for the Study of the Cultures of Central Asia: Information Bulletin, Vol. 4, "Nauka," 1983.
48. To the Harbin Station: The Liberal Alternative in Russian Manchuria, 1898-1914, 1999.
49. **Wong Frank**, Pirooz in China, www.chinapage.com/ minority / iran.html (այցելությունը կայքէջ՝ 21.01.2007).
50. **Yevadian Maxime**, Le Catholicos arménien Sahak III Dzoroporetsi et l'Église de Chine, L'apôtre Thomas et le christianisme en Asie, "Recherches historiques et actualité", Editions de l'AED en collaboration avec EEChO, 2013.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Նախաբան 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Հայ-չինական կապերը Մետաքսի ճանապարհին 14

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Գրական և մշակութային կապերը միջնադարում 42

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Հայերը միջնադարյան Չինաստանում 59

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
Չինահայերը 1900–1920-ական թթ. 108

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
Հայ եկեղեցին Չինաստանում 134

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
Չինահայությունը 1920-1950-ական թթ. 151

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
Չինահայ գործիչները 198

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
Մշակութային կապերը. 19-21-րդ դդ. 226

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
Միջպետական և գիտակրթական կապեր. 20-21-րդ դդ. 250

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ
Հայերն արդի Չինաստանում 284

ՎԵՐՋԱԲԱՆ 307

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայերը Չինաստանին մերձ երկրներում 308
Ամփոփում (չինարեն) 313
Պատկերազարդումներ 315
Օգտագործված աղբյուրներ 334

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ: ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

ARTSVI BAKHCHINYAN

ARMENIANS IN CHINA. ARMENIAN-CHINESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS

Էջադրող՝ Արմենուհի Մարանգոզյան
Սրբագրիչ՝ Հեղինե Մուրադյան
Տպագրիչ՝ Լևոն Մուրադյան

Ստորագրված է տպագրության 20.11.2017 թ.
Տպաքանակը՝ 120 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

9(53)
Բ-21
մ

Արծվի Հենրիկի Բախչինյան



Հայագետ, պատմաբանա-սեր, սփյուռքագետ, թարգմանիչ: Ծնվել է 1971-ին, Երևանում: 1988– 1993 թթ. ուսանել է Երևանի Պետա-կան համալսարանի բանասի-րական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում: 1996-ին պաշտպանել է թեզ և ստացել բա-նասիրական գիտությունների թեկ-նածուի աստիճան:

1996–1997 թթ. գիտական գործուղում է անցել Ուփսալայի (Շվեդիա) համալսարանի Աֆրո-ասիական լեզուների ինստիտուտում:

2009-ից աշխատում է ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատմության ինստիտուտի հայ գաղթավայրերի և սփյուռքի բաժնում:

1990-ից պատմաբանասիրական, սփյուռքագիտական, գեղարվեստագիտական, կենսագրական բնույթի հոդվածներով ու հրապարակումներով հանդես է գալիս Հայաստանի և արտերկրի գիտական ու զանգվածային մամուլում: Մասնակցել է միջազգային գիտաժողովների և փառատոների տարբեր երկրներում: Հեղինակ է տասնյակ գրքերի, որ վերաբերում են հայ ժողովրդի պատմամշակութային առնչություններին, ականավոր հայորդիների կենսագրությունների, հայության ներդրմանը համաշխարհային մշակույթին: Ներկա մենագրությունից բացի ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը հրատարակել է Բախչինյանի «Հայությունը սկանդինավյան երկրներում. հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը)» (2010) և «Հայ-ճապոնական պատմական և մշակութային առնչությունները» (2017) աշխատությունները: